Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

892

82
U-68

1861

2011

2003

Rosselmann sc.

# UHLSON

Imp. R. Cardon aînè, Ruе Montmartre, Paris.

Publié par Furne, à Paris.

82
Ս-68
Ա

# ՄԻԼՏՈՆԻ

# ԿՈՐՈՒՍՏ ԴՐԱԽՏԻՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1002
5983

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ԴԱՍԱՐ

1861

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ Գ
C.C.P.A. Публичная Б
7/XI 1922
Инвент. Масинкина
Ա. ՍՅԱՍԱՆԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ

182

Ա Ո

ՇՆՈՐՀԱՇՈՒՔ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

# ՎԻԿՏՈՐԻԱՅ

## ԴՇԽՈՅԻ ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

## ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԵՒ ԻՌԼԱՆԴԻՈՅ

Ա Յ Ս

ՁԱՓԱՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՐՍՏԵԱՆ ԴՐԱԽՏԻՆ ՄԻԼՏՈՆԻ

Ի ԳՐԱՒՈՐ ԲԱՐԲԱՌ ՀԱՅԿԱԿԱՆ, ՆՈՐԻՆ ՀԱՃՈՒԹԵԱՄԲՆ

ՄԵԾԱՐԱՆՈՔ ԸՆԾԱՅԻ

## ՅԻՒՐՈՒՄ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆՆ

ԲՈԼՈՐԱՆՈՒԷՐ ԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅԻՑ

ՅԱՌԲԱՅԷ ԵՒ Ի ՄԻԱՌԱՆԻՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ

ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ ՈՐ Ե ՎԵՆԵՏԻԿ

Sir Wm. Ross, R.A. E. Bacon.

TO

HER MOST GRACIOUS MAJESTY

# VICTORIA

QUEEN OF THE UNITED KINGDOM

OF GREAT BRITAIN AND IRELAND

THIS

METRICAL VERSION OF MILTON'S PARADISE LOST

INTO THE ANCIENT LANGUAGE OF ARMENIA

IS,

WITH PERMISSION, RESPECTFULLY DEDICATED

BY HER MAJESTY'S

MOST DEVOTED, HUMBLE SERVANTS

THE ABBOT AND BRETHREN OF THE MEKITARISTEAN SOCIETY

OF S.T LAZARUS AT VENICE.

# ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

Հարկ համարի ծանուցանել, զի ոչ հմուտ հանդիպեալ ինքն զժուարիմաց անգլիական լեզուի գերապանծ քերթուածոյս, յիսուալերէն եւ 'ի գալլիացի ստուգագոյն եւ գրեթէ բան առ բան թարգմանութեանց օժանդակեալ է յիւրն, համայն գոգցեալ միշտ, մանաւանդ 'ի մթին եւ յերկբայս, յանգլիացի բնագրին պահեալ զակն ըստ կարի, եւ խնամով քննեալ։

Ուր եւ երեւեսցի ինչ ուրեք 'ի սմա ոչ ըստ մերոյ կրօնիցս պատշաճի, շատ թուի գիտել՝ զի, թող զբանաստեղծական ցնորիցն աշխոյժս, հայր սորա չէր 'ի մերմէ ոճոյս. որպէս բաւական համարի ազգ առնել եւ Մաֆֆէի իտալացի՝ հաւատարիմ եւ քաջ թարգմանիչն աւուրցս, եւ զի բնագիր սորին չէ երբեք դատապարտեալ եւ արգելեալ 'ի մանկանց Եկեղեցւոյ։

Եթէ սք տեղեկութեան զքերթողէս եւ զքերթուածոյս, կամ ուրեք ուրեք հակիրճ մեկնութեան ինչ կարօտեսցի, ունի գտանել զպէտսն 'ի միւսում արձակ թարգմանութեան՝ 'ի մէջ 'ի լոյս ընծայելոյ 'ի 1824, եւ ոչ սակաւ սփոելոյ յաղգիս։

Անգլիացւոց մինչեւ ցայսօր ժամանակի են տաղք նոյնայանգք, են եւ անյանգք. Միլտոնի անյանգ չափովք է յօրինեալ զՎէպս զայս, եւ զպատճառսն ինքնին իսկ գրով աւանդեալ եւ 'ի պլուխ մատենին գրոշմեալ. զոր եւ մեք 'ի դէպ վարկաք յեղուլ 'ի մեր բան զթուեցեալն այնքանոյ առն, եւ տալ յառաջիկայդ բարբառել յունկն բանասիրաց մերազնէից։

# ՄԻԼՏՈՆԻ

## Յաղագս տաղաչափութեան

Անգլիացի դիւցազնական Տաղն է չափ անոյնայանգ տողից, որպէս Հոմերին 'ի յոյնն եւ Վիրգիլեայն 'ի լատինն: Յանգն ոչ է կարեւոր ինչ հանգամանք կամ ճշմարիտ զարդ քերթուածոյ կամ գեղեցիկ տաղից, մանաւանդ յերկայն քերթութիւնս, այլ գիւտ խժական դարու՝ առ բարեքել զնուաստ նիւթս կամ զկաղ չափս ոտից: Շուք առ արդարեւ յետոյ ուրեմն 'ի ձեռն անուանի քերթողաց ոմանց արդեաց, որոց սովորութեան հպատակեալ՝ վարեցան նովաւ, բայց 'ի մեծ տանջանս եւ 'ի չարչարանս եւ 'ի տաղնապ անձանց. եւ բաղում՝ ինչ այլազգ եւ յաճախ յոռեգոյնս քան զոր ասելոցն էին ասացին: Յիրաւի ապա բաղում՝ նախապատիւ քերթողք իտալացիք եւ սպանիացիք հերքեցին զնոյնայանգս յերկայն եւ 'ի կարճ եւս քերթածաց: Այսպէս տարազիր եղեւ վաղուց * յընտրելագոյն անգլիական ողբերգութեանցս՝ իբրեւ զոեհիկ ինչ ինքնին եւ անբաժ 'ի ստոյգ նուագաւոր հեշտութենէ ընտրող լսելեաց, որ լինի միայն 'ի բարեյարմար թուոյ եւ 'ի պատշաճ չափոյ վանկիցն, եւ յիմաստիցն պէսպէս 'ի միոյ 'ի միւս տող անցանելոյ, եւ ոչ թէ 'ի զընդզընդելոյ նմանաձայն յանգից. յորմէ արատոյ զգուշանային հանճարեղ Նախնիքն թէ 'ի քերթածս եւ թէ յամենայն պերճաբանութիւնս: Անյանգութիւն տաղից ոչ միայն թերութիւն ինչ չէ, թէ եւ ռամիկ ընթերցողաց այնպէս ինչ թուիցի, այլ մանաւանդ համարելի է իբրեւ առաջին յանգլիարէն բարբառ ընծայեալ օրինակ նախնոյ ազատութեանն անդրէն շնորհելոյ դիւցազնական վիպասանութեան, որով ազատանայ 'ի ծանր եւ 'ի նորահնար կապանաց յանգից:

---

* Յաւուրցն Շէյքսպիրայ յառաջագոյն թատերգակի Անգլիացւոց:

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

*ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ*

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջարկութիւն իրացն՝ առաջին յանցանք Մարդոյն եւ կորուստ Դրախտին, յայտ արարեալ ըստ նմանէ եւ զպատճառս անկման Մարդոյն՝ զօձն, նա մանաւանդ զԱստանայ յօձի անդ. որոյ ապստամբեալ յԱստուծոյ եւ զիւրեւ ածեալ զբազում դասս հրեշտակաց՝ հոսեցաւ իւրովքն 'ի խոր անդունդս յաստուածասաստ բարկութենէն։ Յետ այսր հարեւանցի յիշատակի՝ սկսանի Վէպն 'ի միջոյ իրացն՝ ցուցեալ զԱստանայ եւ զիւրսն դէռ այն ինչ անկեալս 'ի Դժոխս, որ ոչ համարի աստ 'ի միջակէտ երկրիս, — զի այնպէս հաշուի թէ երկինք եւ երկիր չեւ էին ստեղծեալ, եւ արդարեւ իակ չեւ էին անկեալ ընդ անիծիւք, — այլ 'ի խաւարն արտաքին՝ յարմաբազդիս Անդունդք կոչեցեալ։ Անդ անձին զգացեալ Աստանայի եւ ժողովեալ զիւրսն՝ միսիթարէ եւ յուսադիր լինի յաղթութեան, եւ հրաման տայ առեան գումարել 'ի խորհուրդ յաջողութեանն։ Թէ յառաջագոյն քան զերեւելի արարածս 'ի գոյ ելեալ իցեն հրեշտակք՝ կարծիք են բազմաց 'ի նախնի Հարցն սրբոց։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Զառաջին յանցանս Մարդոյն եւ զարդելեալ ծառոյն պըտուղ՝
Ոյր Թիւնաբեր Ճաշակացըն Ջամբ եմոյծ յաշխարհ ըզմահ
Եւ զամենայն ազէաբս մեր՝ արկեալ ըզմեզ յԱդին դրախտէն,
Մինչեւ Մարդ ոք գերազուն կանգնեալ ըզմեզ՝ անդրէն դարձոյց
Ի նոյն գահ երանութեան, երգեա Մուսայդ երկնաւոր.
Որ 'ի զանխուզ գաղաթանըն Փորեբայ կամ Սինայի
Դու շընչեցեր 'ի հովիւն որ նախ ուսոյց ընտրեալ առհմին՝
Զիարդ խակըզբանէ երկին ուերկիր եղ 'ի Վրէն։
Կամ թէ լեառըն Սիոնի եւ Սելովայ ջուրցըն վըտակք՝
Մօտ քերեալք ուղնինաձեմ առ դաբիրաւն աստուածախօս՝
Հեշտագոյն քեզ թըւիցին, անդուստ կարդամ զքեզ 'ի Թիկունս
Երգոցս յանդըգնութեան՝ ոչ ինչ մեղմով սաւառնելոց
Եւանեալ սրտանալ քան զԱռնեան բարձամբքն 'ի վեր,
Թեւակոխեալ ժամանեալ ուր բանք եւ տաղք չհասին երբեք։
Նա դու Հոգիդ, որ քան զտաճարս՝ ըզսիրտս զուղղեալ եւ սուրբ,
Ուստ ինձ, զի դու գիտես. դու 'ի սկըզբանց յաւիտենից
Մերձ կացեալ՝ ամենազօր քոյով թեւօքդ համապարփակ
Գըրդալով աղաւնակերպ յանհունս անդունդս՝ ածեր 'ի ծնունդ։
Ի խաւարս իմ ծագեա լոյս, ամբարձ ըզսրտս եւ զբացս,
Զի կարօղ անդ 'ի բարձունըս գտանիցիմ մեծ խորհրդոյս՝
Հաստատեալ զաստուածախնամ ըզտեսչութիւնն յաւերժական,
Եւ հանել յարդարութիւն ըզձանապարհս Տեառն առ մարդն։
Ասա նախ, զի ոչ երկինք, ոչ խորափիս ծոց դրժոխոց
Ցերեսաց քոց ծածկէն ինչ, աղէ ասա՝ յիմէ՞ շարժեալ

Յերջանկափառ վիճակին եւ յերկնաձիր շնորհաց պարգեւան
Եկին Նախածընողքս 'ի յԱրարչէն վըտարանքէ,
Ապահա ըզկամն արարեալ զմիոյ եւեթ պատուիրանին,
Ուր զի եւ տեսցք էին այլոց համագոյից տիեզերաց։
Ո՞ զնոսա հրապուրեցոյց յամօթալից յայն խեռութիւն։ —
Վիշապն անդընդային, որ չարութիւն խարդաւանող
Նախանձու քինու վառեալ՝ խաբեաց ըզմայրն աղգի մարդկան։
Էր զինքըն կործանեալ դառոզութիւն նա 'ի յերկնից
Բանակաւն հանդերձ նրով տպըստամբողն հրեշտակք,
Յոր խրախուսեալ, եւ տենչացեալ գլըել փառաք զհամապատիւն՝
Յուսացաւ հաւասարել Բարձրելոյն՝ ձեռն յանձին հարեալ,
Թէ 'ի կամս կացեալ ընդ նա ընդդիմացն պատերազմաւ։
Փառամոլ սըրտիւն արբեալ՝ դէմ միահեծան Էին դահու
Ամպարիշտ բորբոքեցոյց Ճակատամարտ անդ 'ի յերկինս
Եւ յոխորտ դուպարած, դէտակն 'ի յոյս կալեալ մնասն։
Գերազօր զօրութիւնն 'ի կամարաց զինքն արփեներց
Հրաբորբոք արկ գլըխիվայր, անկուն անարգ եւ բոցակէզ.
Անկաւ նա յանդատակ 'ի խորխորատն կորբստեան՝
Կալ անդէն 'ի հրոյ պատիժս յաղտամանդեայ պընդեալ շղթայս.
Ամենակալ Բարձրելոյն զի խիզախեաց ձայն տալ 'ի զէն։
Ինքեաց ըզչափ տըրնջեան եւ գիշերոյ մահկանացուաց
Ինքն եւ ամբոխ նրա սոսկալի պատեալ անկեալ գըներ տապատս
Հրաթաւալ 'ի վառ վիրապն, անմահութեամբքն նըշաւակ։
Բայց գառամնիք նրա պահէր ըզնա 'ի մեծ եւս բարկութիւն.
Զի խորհուրդք կըրկնադատք, երանութեանն յորմէ անկաւ
Եւ որ անդ անկէա առ ոտս նրա աղերսից, կըռափեն ըզնա։
Շուրջ զնրանս թաւալ ածէ մահադուշակ ականոցս
Նըկարեալս 'ի ցաւ անեղք, 'ի սըրատապս վըհատութիւն՝
Սալացեալ գառոզութեամբ խաւն եւ անոսա ատելութեամբ։
Մինով ակնարկելով, որքան սրանան հրեշտակք ազգ,
Տեսանէ զնրրթեն կայսերն խաթարեալ եւ ամայի.
Դըղեակ ահաւոր շուրջանակի բոլորաձոյլ՝
Իբրու հնոց մի ահագին հրատաբորբոք բոցավառեալ։
Ոչ ըլայս անգուստ 'ի բոցոյն, այլ մութ՝ խաւար տեսանելի
Զուտաութեանց սոսկ եւեթ հանէ տեսիլքս յերեւան.
Գաւառ տըրտմութեանց եւ տաղտուկք հեծեծագին՝
Ուր հանգըստեան չկք ուրեք տեղի եւ ոչ խաղաղութեան,
Զկք երբեք յուսոյ մուտ, այնմ՝ որ առ բնաւս հասանէ գոյ.
Այլ տանջանք անդ անվախճան, անդ հրահոսանք յորդահեղեալք
Ճարակեալք 'ի ծըծումբ անծախապէս հըրդեհեալսն։

Զայս յաւէժն Արդարութիւն պատրաստեաց վայր ապըստամբացն,
Ապա նոցին կարդեալ զընդան յանդոյս խաւարն արտաքին.

Զայս եւ նոցա բաժին յէին եւ յերկնաւոր լուսոյն բացեալ՝
Երիցս որչափ մէջ երկրիս կայ յերկնաբերձ գլխնէն 'ի տար։
Քանիցն՝ յորմէ երբեմն անկանն՝ օտար այս օթեւան։
Անդ անդէն նա զիւրումքն կործանման ընկերակիցս
Ամանէ անպէնդասոյզս 'ի հրակուտակ մրբրկեալ յորձանս.
Յորոց եւ մին հուպ առ երկի իւր 'ի հրատի անդ թաւալէր
Նախիշխան յետ իւր հրզօր, եւ առաջին իւր մեղսակից,
Աստ ուրեմն 'ի Պալեստին Բէելզեբուլ անուամբ յայտնեալ։
Առ որ մեծն ոսոխ, անդուստ եւ կարգացեալն յերկինս ՍԱՏԱՆ,
Խրոխտական բանիւք զահեղ լուծեալ լուութիւնն՝ այսպէս ասաւ.
« Եթէ այն ինչես դու, — ասկայն, ո՛հ, զի՛ շինիլատիտ,
Քանիցն ընդհատ յայնմէ՝ որ դերափայլ պրճնեալ փառօք
Յերկնային արքայութեան ճաճանչագեղ լուսոյն դաւառս՝
Ծածկէր ճառագայթիւք զբիւրուս բիւրուց պայծառ ոգւոց. —
Եթէ դու ինչես այն, զոր ընդ միմեանս կրեալ դաշինք,
Մի նոյն միտք եւ մի խորհուրդ, մի հաւասար յուսոյ վրստահ
Եւ նոյն վրստանգ 'ի շնչեղ ձեռնասրի երբեմն յիս զօդեցին,
Եւ արդ նոյն ազէտ 'ի նոյն զուգեաց ընդ իս 'ի կործանումն,
Ապաքէն տեսանես, յորմէ բարձանց յոր անկեալ վիհ.
Անչափ իւրով փայլատակամբքն ամենազօր ՆԱ. ցուցաւ։
Այլ՝ ցայնժամ ո՞ւմ էր ծանօթ ահեղ զինուցըն զօրութիւն։
« Հանայն յետ իւրոց շանթիցն եւ ամենայն պատուհասի
Զոր կարէ յաղթօղն յիւրում կատաղութեան թափել 'ի գլուխս՝
Զընչանամ ինչ ոչ երբեք, ոչ ինչ երբեք փոխիմ բընաւ։
Արտաքին թէպէտ տեսել փառացս ինչ ինչ փոփոխեալ,
Զանցողդողդ սահայն զայս միտս խախտեսցէ բնաւ եւ ոչ ինչ,
Ոչ զայս ծանրը ցասումն առ իրաւանցս զբրկելոյ,
Ոչ զոգիս զայս որ ամբարձ զիս ախոյեան Գերագօրին,
Յամենին վարեալ կրնիւ զրսպասառաքէն զօրս անհամար
Հոգեղենաց խիզախելոց յընչաց քերել զիւր տերութիւնն,
Որ քան զնա՝ զիս ընտրելով, ուահեղազօրն իշխանութեան
Իշխանութիւն գիմամարտ կանգնեալ 'ի խաղմ երկակրչիս.
Յասպարէզ երկնից դաշտաց՝ սասանեցին զաթոռս նորա։
« Զի՛ է թէ մարտս պարտեաւ, ոչ ամենայն կորեաւ ընդ նոյն.
Անընաձ կամք եւ վրնիժուց ձիգն եւ անմահ ոխութեան քէն,
Արութիւն անվրկանդ եւ յաւիտեան անընկճելի,
Զի՞նչ այլ ինչեն, եթէ ոչ անվանելի անյաղթութիւն։
Զայդ պարծանս ոչ կապտեսցէ յինէն զայրոյթ իւր ւոչ կրով.
Կորանամ ոչ, ոչ շընորհ յաղերսաւոր պաղատիմ ծունկս,
Եւ ոչ ըզգօրութիւն իւր առ աստուած կալայց երբեք,
Որ գեռ յահէ բաղկիս այս՝ յերկրայս եղեւ թագին իւրում.
Անարգանք, եւ քան զգլորելս յետին ամօթ ինչեն ուայպանք։

Այլ զի դից զօրութեան եւ երկնաւոր բնութեան գոյն
Զեք հընար կորընչել՝ 'ի հրամանաց Ճակատագրին,
Եւ զի ոչ մեզ ինչ ըզդէնս եցոյց մեծի հանդիսին փորձ,
Նա՝ յաւէտ ըզգուշագոյնք եղեալ՝ կարեմք բառնալ խրախոյս
Եւ դիմագրաւ խիզախել, թէպէտ նենգաւ, թէպէտ ուժով.
Յանընդէր յանհաշտ 'ի մարտ անդուլ անհետ պատերազմի
Ընդ հրպարտ ոսոխիս՝ որ յաղթանակ կանգնեալ այժմիկ
Խրախամիտ միահեծան ունի զերկնից գոռոզ գահոյս։»

Այսպէս հրեշտակն ապրստամբ, թէպէտ 'ի ցաւս, արկանէր Ճառ,
Բարձրաձայն նաղաբանեալ, այլ կեղեալ խոր անյուսութեամբ։
Եւ անդէն զովոլըն վէս դարձոյց անդրէն պատասխանի.

«Ո՛վ իշխան, ով դլուխ եւ պետ այնչափ անչափ Աթոռոց,
Որ ընդ ձեռամբդ ածեալ 'ի կռիւ զսրովբէադունդ Ճակատեալ ռազմ,
Անվեհեր 'ի հանդէս ահագնագղոցդ մարտամբոխից,
Ի վրանդ պաշարեցեր ըզմշտաընջեան երկնից արքայն,
Եւ ըզփորձ առեր զնորա զամենակալն զօրութեան,
Կորովմ՞ ինչ լցեալ տուլը, Ճակատագրին, եւ թէ դիպաց,
Ցեսանեմ կարի քաջ, եւ նրզոմեմ զարկածն ոդորմ՝
Որ դրժընդակ հարուածով եւ պարտութեանըս կորանօք
Մերժեալ ըզմեզ ընկեցեալ յերկնից դընտէն հան տարագիր։
Բանակդ հըզօր՝ ջարակոչիոՃ ահա բեկմանբ կայ խորասոյզ՝
Որչափ դից եւ բնութեանց ասուածեղէն գոյ կորընչել.
Քանզի միաբ եւ խորհուրդք անպարտելի կան եւ մընան,
Եւ կորով՝ փոյթ արծարծի, թէպէտ եւ փառքս լցեն չկնեալ
Եւ վիՃակս երանական յանհուն եղեան անդընդակուլ։
Այլ թէ յաղթողն մեր, — զոր հարկ է դաւանել ամենազօր,
Զի առանց այն զօրութեան՝ մերոյս պարտեալ չէր ինչ հընար, —
Ողջ 'ի մեզ թողացոյց զոգիսըս մեր եւ զկընդութիւն
Առ ստակալ ջարջարանացս եւ ժուժկալել արիապէս,
Զի բաւական դասնիցիմք քինախընդիր իւրում՝ ցասման,
Կամ զօրէն գերեաց մարտի՝ խիստ եւս հարցուք նրմին ըսպաս՝
Ըստ հաՃոյս իւր ասա 'ի վիհ սիրտ դրժոխոց Ճընդեալ 'ի հուր,
Կամ զպատգամըս նորա տարեալ 'ի սեաւ ամնդարամեաս,
Զինչ օգուտ մեզ յայնժամ գիտելս ըզմեր ոյժ անմիաբ,
Կամ զգոյիս յաւէրժութիւն՝ առ յաւիտեան կալ ընդ պատժօք։»

Առ այս մեծն հակառակորդ կրկնեաց անդրէն երագաբան.
«Քերոբդ անկեալ, եղկելի է տկարութիւն 'ի գործ ուն'ի կիր.
Այլ անշուշտ լեր, մեր բընաւ չիցէ բաժին առնել բարի,
Յամենայն ժամ չար եւեթ գործել լիցի մեր հեշտութիւն՝
Հակառակ վեհի կամացն որում կանգնեալ կամք ընդդիմակ։
Արդ թէ իւր հնարին խընամք՝ 'ի մեր չարեաց նիւթել բարիս,
Պարտ է գուն գործել եւ մեզ առ 'ի դերեւ ըզկամն առնել

Եւ չարի հնարիմաց լինել անդէն իսկ 'ի բարւոյն.
Յոր յաճախ յաջողեցիմք՝ մինչեւ խոցել զոսոխն 'ի խոր,
Եւ թէ ոչ սրխալեմ, նա եւ վերկալ կացուցանել
Ըզնսրին խորհուրդս իւր 'ի նրկատեալ տեսչութենէն։
« Այլ աղէ տես, սրբամրտեալ յաղթօղն առ դուրս երկնից կոչեաց
Յեռս անդրէն զհինահալած քինու վրիժուցն իւր պաշտօնեայս.
Տեղացեալն 'ի մեզ յանցեալ մրբրկին կարկուտ ծրծրմբաւառ
Զիկուցեալ ընդարատոյց ըզտոչորիչ կոհակաց դէզ՝
Որ յերկնից 'ի դարէն զդահավիժեալքս առընկալան.
Որոտումն՝ հրաշէկ փայլատակմիքքն թեւացեալ
Եւ մռեգին գազանութեամբ՝ թերեւս ընկեռցս իւր սպառեաց
Եւ լռեաց 'ի մրընչելոյն յանեզը յանդաւ սանդարամետս.
Մի անցցէ պատեհս ըզմեզ՝ զոր թշնամւոյն մեր քամահանք
Կամ իւրոյ կատաղութեանն յագուրդ բերեալ մեզ կարկառէ։
Նրշմարեա անդ 'ի բացեայ զդաշտագետինքն ցամաքուտ,
Թափուր եւ խոսան եւ բնակութիւն աւերանաց,
Անճանչ 'ի լուսոյ, յոր կապուտակ եւ սեաւ բոցոյս
Ծագէ լուկ ալօտ նրշոյլ սրսիռեալ տրմոյն եւ սոսկալի.
Անդր անկցուք 'ի ծրփանաց ասսի դիմեալ ալեաց հրեղէն,
Անդանօր հանգիցուք, թէ գոյ տեղի անդ հանգրստեան։
Ժողովեալ ըզցաւադին մեր գումարտակս՝ արկցուք 'ի խոյզ,
Զխարդ մեզ այսուհետեւ լցցի զոսոխքն մեր զրզուել,
Եւ զնարդ ըզտոյժքս մեր հնարել առնել խրամակարկատ,
Ահագին վրշտիս յաղթել. զոր 'ի յուսոյ հանել նրպատս,
Եւ թէ ոչ, զինչ արդեօք անյուսութեան վերջին խորհուրդ։»
Օրինակ զայս բարբառէր Սատան ցընկեր իւր մօտակայ՝
Ամարձեալ գլուխն 'ի յաչեաց կոհակն եւ աչք կայծակնացայտք,
Այլ անդամք մարմնոյն գառեալ 'ի մրկանունքս ծովակին
Ընդ երկայն, ընդ լայն տարած՝ տատանեին ձիգ տսպարէս,
Վիթխարութեամբ անճառնի՝ նրմին հանգոյն զոր առասպելք
Տիտանեան յորջորջեն առ անհեղեղ հասակին կոյս,
Կամ Երկրածին՝ որ ընդ դէմն Արամազդայ էտ պատերազմ,
Բրիարեւս եւ կամ Տիւփոն, զոր 'ի Տարսոնն հին՝ ցեղոյր այր։
Ի կըշիռ գայր Սատանայ եւ նրհանգին ծովակնի
Որ մեծայաղթ յարարածս Էին ստեղծաւ Յեւթանան՝
Փան ըզբնաւս որ մրխրրձեալ Լուղին ընդ հետս Ովկիանու։
Եւ յաճախ զի գազանն 'ի Կարուեղեան նրնրջ փրրփուրս,
Ղեկավար նաւակի մոլորելոյ 'նդ խոր աղջամուղջս
Ըզնա կրզգեակ ինչ համարեալ,— զբրոյցս այսպէս ասն նաւաստիք,—
Հարեալ զնարիսիքն վարսէ 'ի թեփամրրթ նորա պատեանս,
Առ կողիւք հանգչի նորուն, յայն ապատան հողմոյն ընդդէմ,
Մինչ ըզծով պատէ գիշեր եւ յասպաղէ զտինչալին այգ։

Սոյնպէս պէտն ոխերիմ՝ երկայնութեամբ սոսկալիթիւր
Կայր անկեալ շրջթոյակապ 'ի մրկանուն հրակէզ լաճին։
Յանհնարիցն յառնել կալ եւ կամ ըզգլուխն էր ամբառնալ,
Եթէ կամք եւ վեհ օճան բնաւին երկնից սընօրինի
Չէր ըզնա թողեալ ազատ յիւր 'ի խորհուրդսն խաւարինս,
Չի մեղացն կուտակօք բարդեսցէ յանձին դատակնիքս,
Մինչդեռ այն ինչ չարահնար եղեալ այլոց նիւթէր ոճիր.
Չի տեսցէ մոլեգին՝ թէ չարութիւն իւր ամենայն
Փայլեցոյց եւ թէ զանբաւ ըզբարութիւնն եւ զգրթութիւն
Եւ զնորհաց զեղուն 'ի մարդն հրապուրեալ առ 'ի նմանէ,
Եւ յանձն իւր երեքկին գրլեաց ամօթ, ցասուն եւ վրէժս։
Յարուցեալ ինքն 'ի լաճին կանգնէ անդէն զհասակն հուժկու,
Յաջմէն եւ յահեկէն բոցքրն վանեալք ձեռամբացն՝
Ընկրկեն ըզսուր սրլաքան, եւ իբր ալիս թաւալ առեալ
Թողուն վէհ 'ի միջի՝ հովիտ մի մեծ եւ ահագին։
Անդ յայնժամ սաւառնաթեւ ինքն 'ի բարձունքս նրկրրսի՝
Ծանրացեալ յօդքն մրռայլ՝ որ զգաց նոր բեռն ինչ անտոլոր,
Մինչեւ անց գրնաց անկաւ 'ի չորանուտ դաշտագետինն,
Թէ գետին էր որ վաւերքն թանձր հրրով մրշատոչոր,
Չոր օրինակ եւ ծովակրն բորբոքեր հոսանուտ հրով։
Յորժամ սաստ անդընդային մրրրիկ կորզեալ տապալէ զբլուր
Ի Պելորոյ կամ 'ի հերձ կողից Եսանէ որոտողի,
Չայն հարկանեն երանգ ընդեղքքն կիզանուտ եւ բոցավառ՝
Որ խանձ առեալ անդ 'ի հրոյ՝ թափով բոլոցն 'ի թեւս հողմոց
Արձակին յերկինս 'ի վեր, թողեալ յատակ մի խանձոտեալ՝
Թաթաւեալ 'ի թանձրամած ծուխս եւ 'ի մուր ու 'ի ժանտահոտ.
Այս հանգիստ էր նրզովեալ գարշապարաց ոտից իւրոց։
Մօտագոյն նրմին զոլոզ իւր ըզկրնի գրնայ նորա։
Երկոքեն 'ի Սատիւգեան ուղղեալ փախուստն պանծացեալք
Իբր յանձանց ուժոյ յաստիս աստուածօրէն կազդուրեալով,
Ոչ 'ի վերին վեհապետ իշխանութեանն ներելոյ։
« Ա՞յս է վայրն՝ ունկ՝ մարդ, ասէ հրեշտակապետն կորբստեան,
Ա՞յս ինչ մեզ փոխանակ ընդ արփայնոցն բնակութիւն,
Ա՞յս խաւար արիրաղգած երկնաւորի լուսոյն փոխան։
Քաջ է. քանզի որ այժմրս կոկոզեալն է Թագաւոր՝
Տալ իշխան է պատուէր, արդարութեան կարգել սահման։
Օ՜ն լաւ ինչ քաջ 'ի բաց անջրպետեալն առ 'ի նմանէ
Որ անկուշեալ զոյգ իրաւանց՝ բրռնի՝նդվրզեալ եղ զընկերոջն։
Ողջ մնասջիք, դաշտք երանեալք, ուր խընդութիւն բնակէ յաւէժ.
Ողջոյն ընդ ձեզ, արհաւիրք, ողջոյն՝ աշխարհդ անդընդային,
Խորայեալ եւ դու դրժոխք՝ ընկալ ըզքո նոր տանուտէր.
Միտք զոր ոչ դրրդուեցուսցեն ժամք եւ տեղիք՝ բերէ նա քեզ։

Ինքըն միաքն անձին իւրում է սեփական տուն եւ տաճար,
Ըզգրժոխս յերկին փոխել, զերկին 'ի գրժոխս յանձն իւր կարէ։
Զի՞ փոյթ թէ ուր, մինչ նոյն եմ միշտ՝ եւ զոր արժանն է ինձ լինել։
Ամենայն ինչ, թէ եւ փոքրը քան զոր շանթին մեծացոյց։
Ասա գոնէ աղաս լեցուք։ Ամենակալն ըզտեղիս զայս
Ոչ առ խանդալ ինչ կառոյց, ւոչ ասան զմեզ հալածեացէ։
Ասա կարօղ գոմք յանհոգս յապահովն թագաւորել։
Եւ ըստ իս, 'ի գրժոխս անգամ իշխելն է ցանկալի,
Լաւ 'ի գրժոխս է սիրել, քան թէ ծառայ լինել յերկինս։
« Իսկ թողցո՞ւք տախտապարեալ եւ պակուցեալ 'ի լիձն անցուշ
Զհաւատարիմ նիզակակից մեր բարեկամն ընդ մեզ անկեալս։
Ո՞չ կոչեցուք գալ ընդ մեզ հաղորդ լինել հէք կայանիս,
Կամ գունդ 'ի գունդս գուսմարտակ՝ փորձ միւսանգամ փորձել անդրէն,
Գուցէ՞ շահել ինչ յերկինս կամ 'ի գրժոխս կորուսանել։ »
Սամայէլ զայս ասաց, պատասխանի ետ Բէլզեբուղ.
« Լուսեղէն զօրացն պէտ, զորըս մատնել 'ի պարտութիւն
Չէր ինչ ոք բաւական, բայց թէ միայն Ամենակալն,
Գամ մի զձայնդ եթէ լըսէն՝ զանշուշտ յուսոյն առհաւատչեայ,
Զաղգեւորն 'ի հատանել ահափեսիցն եւ վրատանգաց,
Այն որ ըստէպ հընչեցեալ 'ի մեծ տաճնապ տարակուսին
Ի յետին վարանական սահման մարտիցն գոռալոյ,
Եւ նոցին անեղկեւան փողանըշան գուպարածի,
Վառեցին իսկ եւ իսկ անդրէն խնդալիք 'ի նոր խրախոյս.
Թէ եւ արդ ըքեալք հաչէն, կան բերանսեալք 'ի լեռ հրոյն,
Որպէս մեք սուղ ինչ յառաջ, անընդդիմեալք եւ շրատուցեալք։
Եւ զի՞նչ զարմանք հոսելոցն 'ի մահատասա բարձանց անտի։ »
Չեւ լըռեալ նա 'ի խօսից՝ Թրշնամին մեծ յափրն 'խաղայր
Զասպարն ըզծանր՝ երկնամուխ՝ Թանձրատարած եւ բոլորշի
Արկեալ ընդ ուս, լայնածիրըն պարուսակ կախեր զԹիկամբք
Զերդ լուսին՝ որոյ գունտն ընդ ապակի հեռադիտակ
Ի բարձանցն Փեսուլլաց կամ 'ի Հովտէն Ամոսական
Նըշմարի երեկուն 'ի տոսկացի ասաղադիտէն
Ի դատանել 'ի խայտաբղէտ անուին երկիր նոր, գետս եւ սարս։
Ի ձեռին իւրում նիզակն, — առ որով շանթն բարձրաբուն,
Զոր 'ի մեարբս Կորուեղեան Թաւուս լերանցն հարկանէն
Կայմ նաւու ծովակալն, չէր ինչ քան ծիլ մի եղեգան, —
Ցուպ նեցուկ է գեղեւկոս իւրում գնացից 'ի հրուտ գայրին,
Որ քանի են այլակերպք յիւրոց քայլեցն յերկնից կապոյտն։
Ցաւելու վերս եւ նահանգն բոցակէզ եւ հրակամար.
Նա սակայն ամենայնի տեւէ տոկայ մինչ հատանէ
Ի ծովեզերս ծովուն բորբոքելոյ, եւ անդէն կայ։
Զայնարկէ առ գունդս իւր, հրեշտակակերպ տեսիլք Թարշամբ,

Թանձրախուռն անկեալք տապաստ իբրեւ զտերեւս աշնանային
Որ սրփռեալ ծածկէն զերեսս Հովանաւոր – Հովտին վտակաց՝
Ուր Եփրատեան հովանիք բարձրակամարք յօրինեն հիլ.
Կամ զերդ ցիր ծրփեն մամուռք՝ մինչ Հայկ վառեալ բարկ մրրրկաւ
Կոծեալ տանջէ ալէսաստ ըղձովախուռնս Կարմիր ծովուն,
Ոյր կոհակք փլուզին զԲուսիր եւ զասպատակին մեմփիական
Ի վանել նոցա նենգող քինու զնրժդեհարն Գեսեմայ՝
Որ յանքոյթ եւ յանկասկած ափնէն տեսին 'ի հանդիպոյ
Զդիակունսն 'ի ծրփանի եւ ըզկառացն անիւս փշրեալ.
Կորիդլուխ այսպէս ըսփիւռ կորբասական զրնին բանակքն
Ընդ երեսս լըճին ցնորեալք յանարդ փոփոխմանէն:

Արդ նա ձայն մեծ ամբարձ՝ յոր հընչեցին խոսք զրժոխոց.
« Իշնանք, պեսք, ըսպառազէն զնեռորութիւնք, երկնից ծաղկունք,
Որ ձեր էր երբեմն, եւ կորուսեալ արդ աւանիկ,
Թըմբրութիւն այդպիսի անկանիցի զյաւերժ հոգւովք:
Կամ զտեղիդ զայդ ընտրեցէք՝ յեռ վտակաց պատերազմիդ՝
Ի հանդիստ եւ 'ի սփոփանս քաջութեանդ աշխատելոյ,
Առ քաղցրը քնոյդ՝ զոր ասա նընջէք իբր 'ի հովիտսն երկնաւորս.
Կամ երդուայք յանաղդ կերպիդ երկրրպագել յաղթականին:
Քէրովբէս եւ սերովբէս հայեցեալ նա նրկատէ արդ
Թաւալեալս 'ի վիրապիդ զնոսք զրօշուք խորտակելովք,
Մինչեւ ժիրքն պաշտօնեայք դէտակն յերկնից եղեալ դրրանց՝
Որսայցեն ժամ պատեհ, եւ խոյացեալ յասպատակի
Առաթուր ըզմեզ կոխան ըզպարտասեալքս հարեալ դիցեն,
Կամ վարսեսցեն շանթահար 'ի թափս արկեալ խորխորատիդ:
Օն զարթիք, արիք կացէք, կամ յաւիտեան անկեալ կացջիք:»

Լըսան, յամոթ եղեն եւ կանգնեցան կացին 'ի թեւս, —
Որպէս յորժամ ցայգապահք 'ի պաշտաման կիրթք 'ի հրսկէ՝
Ըմբրռնեալք 'ի ներհ քընոյ 'ի սալարէն յորմէ դոլան,
Յարուցեալ դանդաղեն երերապէն՝ չեւ ըսթափեալք, —
Ոչ անդէպք թրշուառութեանն յոր կան մասնեալ դասքն հոգեղէնք,
Կամ թէ համբուն անըզգայք քրատմընելեացքն տանջանաց,
Այլ երագ հնազանդեալք զօրավարին ձայնի անթիւք:

Զոր օրինակ մինչ որդւոյն Ամրամայ ցուալն մեծազօր
Ի չար ժամ եգիպտացւոյն ըզծովախմէն անցեալ 'ի Ճօճ
Եւ ձայն տըւեալ հրաւիրեաց ըզթըխտոխոլ ամպ մարտիոյ՝
Հողմավար յարեդ կուսէ սրփռեալ հանգոյն գիշերոյ յօդս
Ի վերայ տերութեան ամպարըշտին Փարաւոնի,
Եւ 'ի մութ առհասարակ զՆիլեան երկիրքն թաթաւեալ.
Այսպէսնակ անհամար երեւեցան հրեշտակքն չարք
Ի ներքոյ թեւապարեալ 'ի գրմբեթին դրժոխայնոյ
Ի բաց անդըր որ 'ի ստոր, որ 'ի վերոյ եւ որ 'ի շուրջ.

Մինչ 'ի նրշան արքային մեծի՝ ոիպին իւր ուղղաբերձ՝
ՀօՀելոյն առ 'ի զդէմսն յերիւրել՝ գան ի ջանեն
Թեւատարած 'ի ծրծումբն հաստատինդ, ընտուն ըզդաշան։
Ամբոխ՝ որում հանդոյն ոչ բնաւ Հիւսիսն մարդահոյլ
Ի սառնասեր հուեաց ծոցոյն անդր ըստ Հռենոս եւ ըստ Դանուբ,
Յորժամ որդիք իւր խուժդուժք հեղեղեցին զՀարաւակողմ՝
Ըստ արձանս Հերակլի մինչ 'ի Լիբեանն աւազ պարզեալք։
Իսկ եւ իսկ պեռք եւ սոյլարք գընդի գընդի վաշտու վաշտու
Դիմեցին ուր զօրագլուխ նոցին մեծ կայր առեալ ըզկայ.
Հասակաւ կերպարանօք աստուածաձիալք եւ գերաբուն,
ՊեռուԹիւնք արքայազարմք, Թագաժառանգ իշխանուԹիւնք,
Անդ ուրեմն երբեմն յերկինս աԹոռակալք գահուց վեհից.
Թէպէտ եւ ոչ յերկնից գիւան պահին անուանցն այժմ յիշատակք՝
Ի կենաց գերպրուԹենէն վասն հեստուԹեանն եղծեալ ջընջեալ։
Չեւ էին առեալ ըվնոր անուանն յորդիս մարն Եւայի,
Իսկ յորժամ յաստուածայնոյն 'ի ներելոյ մարդոյս 'ի փորձ՝
Երկրապարիկ լեալ, մանդաւ եւ պատրանօք ժանդացուցին
Ըզմեծ դէս ազգի մարդկան, ըստեղծուածոյն եղեալ 'ի մոի
Ըզհաստատին Աստուած Թողուլ, զաներեւոյԹ փառս Արարչին
Փոխեալ յաՀախս 'ի պատկեր անասնեղէն նըմանուԹեան՝
Ոսկեփայլ պերճ հանդիսից զըւարԹ կրօնիւք պաՀուՀելոյ,
Եւ գիւաց՝ իւր աստուածոց ամանց երկիր իսկ պագանել,
Անդ յայնժամ 'ի ծանօԹուն եկին մարդկան սէնսէս անուամբք
Եւ զանազան գրոշելովք՝ 'ի կռապարիշտ յաւիտենին։
Օ՞ն առ ասա ինձ, Մուսա, զանուանսն զայն ծանօԹս յայնժամ,
Ո՛ր առաջին, ո՛ր յետոյ՝ հրեղէն մահՀացն 'ի քնոյ զարԹեաւ
Ի կոչ անդր ինքնակալին. ո՛ր պեռք նըմին հուլ պարծանօք
Մի առ մի եկեալ կացեալ առ նըմա յեղբըն ապալեր,
Մինչ սենըքոր խաժամուժքն տակաւին կայր 'ի բացէ։
Այս այն են չարագլուխք՝ որ 'ի դժոխոց վեհ վերապէն
Եկեալ շըրջեալ յաւարել ընդ ծագս երկրի զնւրեանց ապուռ՝
Ժըպրհեցան յետուստ ուրեմն ինքեանց աԹոռ կառուցանել
ԱբընԹեր աստուածայնոյն, եւ առ սեղան նորին՝ բագինս։
Աստուածք առեալք 'ի պաշտոն ազգաց ազգաց շուրջանակի,
Ցանդրգնեալք հոլանեալք՝ գալ առ Էին ինակել ընԹեր՝
Որ տայ զորսան 'ի Սիոնիկ բազմեալ յաԹոռ քրովբէապար։
Նա՛ յաՀախ 'ի սրբբարանն իսկ կանգնեցին զնորանսն գարշ,
Պըղծեցին նրզովելովքն ըզսուրբ պաշտօնն եւ զանրս իւր,
Եւ խաւար իւրեանց իջեսեաց կալ առաջն լուսոյ նորին։
Յառաջեաց Մելքոմ արքայ զազիր յարիւն եւ յապաժոյժ
Մարդազէն ըսպանդից, եւ յարտասուս հարանց եւ մարց.
Թէպէտ 'ի ձայն գոփելոյ Թըմբկաց գոսից որոտագոչ՝

Հասանէր ոչ յուշեն իւրեանց ողորմ մանկանցըն ձիչ եւ գոյժ
Յանցանել նոցա զբոցով գրնալ առ կուռսըն ժահագէմ։
Պաշտեցին ամենացիք զայն 'ի Հռաբա եւ յիւրն 'ի մարդ,
ՅԱրդոլբ եւ 'ի Բասան եւ յԱնոնինայ ձոր հեռաւոր։
Ոչ շատեալ ժրպիրհ դրացեաքն՝ եւ զրզգոն սիրա Սոլոմոնի
Հրապուրեաց կանգնել նրանս տաճար հանդէպ տանն Աստուծոյ
Ի լերինքն ձաղանաց, նուիրեալ անտառ ուանդ մեհենի
Ձենոմնայ զբաբէթ հովիան որ կոչեցաւ անտի Թոփոթ
Եւ գեհեն գիշերագէմ, գրժոխոց տիպ օրինակեալ։

Եկն երկրորդ՝ Քամոս որդւոցըն Մովաբայ խրբտուիկ յայրատ
ՅԱրոյերայ ցրնաբաւ եւ ցանապատն հարաւախոր
Լերանցն Աբարիմայ, եւ յԵսեբոն եւ յՍրոնիմ,
Սեհոնի երկիր յայնկոյս քան ըզհովիտըն Սաբեմայ
Ձծաղկալից եւ զայգեւէտ, եւ յԵլեաղէթ, մինչ ցԱղտից ծով։
Կոչեցաւ եւ Փեգոր՝ երբ զԻսրայէլ յերան 'ի Նիլեայ
Մոլեցոյց 'ի Սատան՝ ձօնել նրանս լրկան նրէրս,
Որ պատճառք այնքան չարեաց եղեն 'ի գլուխըն կուռելոյ։
Զրգեաց անտի զբրբենի կրաղուցան 'ի բլուր անգրր գլորման
Մինչեւ մերձ 'ի մայրիս մարգարտոշոշըն Մելքոմայ,
Ըզլրպիրը վարաշուէթիւն զայգ ոսկակալ առելուէթեամբ.
Մինչեւ զնոսին Յովսիաս բարեպաշտն ամաց 'ի գոժոխս։

Եկին 'ի նոսա եւ որ յարմանցըն յորձանաց հինն Եփրատու
Յհեղեղատն որ զԱորիս յեղիպտացւոցըն բաժանէ՝
Հասարակ ունին զանուանարն Բահալիմ եւ Աստարովթ,
Ի որ սրու, է որ էգ, քանզի 'ստ հաճոյս ատնուն ոգիք
Ըզբնութիւն իւրաքանչիւր, կամ զերկոսին միանգամայն։
Ցայն ամենայն են նուրբ եւ պարզ նոցին վրճիտ սեռն էութիւնք,
Ոչ յօդակապ անդամովք խառնեալ աղխիւք եւ վարակեալ,
Ոչ յոսկերց ինչ 'ի կրթոտ ոյժ կառուցեալ թանձրամարմնիք.
Այլ յոր ընտրեն կերպարանս, անգայտ կամ հոծ, պայծառ կամ մայլ.
Չօրեղ են կատարել զդատեսակ մրտաց խորհուրդն,
Եւ յարդիւնս ածել զազգուն առելութեան կամ ըզսիրոյ։
Առ սոքաք ըզզօրութիւնքն կենդանի ըզքեն յաճախ
Զաւանն Իսրայէլեան եւ զնւր սեղանն օրինաւոր,
Պագեալ նրաստաբար անառնեղէն գիրքն երկիր.
Վասն որոյ եւ կոր 'ի գլուխս եղեալ 'ի մարտ պատերազմի՝
Վատթարագոյն թշնամեացն 'ի տէգ եղեն քամակաբեկ։

Պարակից ընդ Ջոկ սոցին եկ Աստարէթ երեւեցաւ,
Զոր Աստարտէ կոչեն Փիւնիկք՝ երկնից տիկին մահկիզէրբք։
Առ փաղփուն պատիրբ նորին մատուցին կոյսք սիգոնուհիք
Գիշերայն 'ի լուսանակի զնրուէրս ուխտից իւրեանց ուերդոց։
Նա եւ ոչ 'ի Սիոնէ անբաժ մընաց նա 'ի նուագաց,

Ուր սաղմոս նորա կանգնեալ կայր 'ի լերինն եղեռնութեան
Կառուցեալ յիշատակ 'ի Ճակաճան թագաւորէն,
Որոյ սիրտ, թէպէտ եւ լայն եւ ընդարձակ, այլ խոտորեալ
Ի գեղանի կռապաշտից, եպագ երկիր կռոց գարշելեաց։
Զհետ հաս Թամուզ՝ որոյ վէրքք 'ի Լիբանան ամ ըստ ամէ
Յորդորեաց ըզմանկամարդսըն Ասորւոց ջայլել զաղէտն
Ի գողտրիկ ողբոց մրմունջս ընդ տիւն ողջոյն ամենայնոյ,
Մինչ Ադոնիս խաղաղիկ 'ի բնակատուն զերծեալ ժայռէն
Թաւալէ զհոսանան 'ի ծով ծիրանանեարկ 'ի գոյն կարմիր
Իբր յարեանէն Թամուզի՝ ամի ամի վէրս առելոյ։
Վէպքդ այդ սիրաշարժ 'ի նոյն եռանդէն վառեցին
Ըզդըստերսըն Սալիմայ՝ զորոց տրուփանաքն հեշտասէր
Ի սրբասայր նուիրական դաւթին եռաս Եղեկիել,
Ուր տեսլեամբ առաջնորդեալ՝ յաին իւր անդէն եկին անկան
Մեպատարքը կռապաշտօնք գրուժանն Յուդայ խարդախողն։
Ըզկնիկ նորուն եկն էլ միւս՝ որ դառնապէս ըզալ էհար
Գերեվար մինչ տապանակն ըզբքթեալ դրօշն ընկէց ծայրատ,
Գլուխ եւ ձեռք իւր կոնծոպեալ անդէն յիւրում սրբարանին
Ըզսեմովքն անկեալ տապաստ՝ յատաթի իւրոց պաշտօնեից։
Դագոն անուն, մարդ 'ի վերոյ, ձուկն 'ի տորէ, նըշխանք ծովու։
Սակայն եւ այնպէս տաճար կանգնեալ նըմին բարձր յԱզովտոս,
Ահընկէց գրտաւ հանուր սալէստինեան ծովեզերաց,
Ի Գէթ եւ յԱսկալոն եւ յԱվկարոն առ հասարակ,
Եւս եւ անդր խակ մինչ 'ի գրեփրտ սահմանացն Գազայեաց։
Յաջորդեաց Ռեմոն՝ որ տուն հեշտից ջրքնաղն էր Դամասկոս
Յափշն բերրի ջինջ ուղեկցն Նաբանայ եւ Փարփարայ։
Եւ սա ինքն ժրմերտեալ գրտաւ ընդդէմ տանն Ասուծոյ,
Կորոյս գամ մի զբորոտն եւ շահեցաւ զայր թագաւոր՝
ԶԱբգար զիւր ըզխօթամիան աշխարհակալ, որում սագրեաց
Անգոմնել զնէն սեղան փոխանակեալ ընդ ասորւոյն,
Յոր բուրեաց ըզգարշ նըւէրսն, եպագ երկիր դից պարտելոյ։
Յետ սոցուն երեւեցաւ դասն որ 'դանուամբք հին համբաւուց,
Ոսիրիս, Իսիս, Հորոս, եւ զհետ տոգեալ նոցին ջուիր,
Խառնակերպք, ջատուկ կախարդք, զմոլեն 'ի հալբս արկ զԵգիպտոս,
Եւ զբըրմունս իւր 'ի խընդրել զաստուածս իւրեանց թափառականս
Ի գաղանաց ծրպտեալ 'ի կերպ քան 'ի տեսիլ մինչ մարդկեղէն։
Զասպրեցաւ Իսրայէլ 'ի պրղծալից շաղախմանէս՝
Երբ յոսկի մուրացածոյ ձուլեալ կրուեաց զորթն 'ի Քորեբ։
Ապրատամբ ալքայն կրկինեաց ըզմեղն 'ի Դան եւ 'ի Բեթէլ՝
ԶԱարիէ իւր 'ի պատկեր հանեալ եղեն արօտական,
Զկնն ասուած՝ որ զմի գիշեր յընթացս ոտինն ընդ Եգիպտոս
Ի մի տայր սրբոյ տապաստ արկ զանդրանիկան եւ զբնչջոյ դիս։

Բէլիար վերջին եհաս. ոգի անսուրբ ոգ քան ընկա,
Մեղասէր, սիրով ախտին արբեալ ժլատիրհ, չանկաւ յերկնից։
Ոչ մեհեան եկաց նրանս եւ ոչ բագին ՃԵՆՃԵՐԵՑԱՒ.
Այլ ո՞ քան զնա 'ի տաճարս եւ 'ի սեղանսը յաճախեալ,
Ուր քահանայն ինքն անասուած իցէ հանգոյն որդւոցն Հելեայ
Որ լցին պոռնկութեամբք եւ զզուանօք զտունն Աստուծոյ։
Ինքն նոյն եւ յապարանս եւ յարքունիս բրնակալք,
Ի խենէշ քաղաքս՝ ուր ձայնք թրշնամանաց եւ զեղխութեան
Գէր'ի վերոյ եւանեն քան զամենայն բարձր աշտարակս։
Եւ յորժամ հասեալ ցայգոյն ըղհրապարակս 'ի մութ պատէ,
Լրբութեամբ սոնք եւ զինեաւ յածին մանկունք Բէլիարայ։
Վրկայ փողոցք Սոդոմին եւ այն գիշեր գաբաացուց՝
Յոր հիւրասէր դուռն հան ըզկին՝ փրրկանս ժանտիէն առեւանգի։
Այսք էին նախաթոյք յիշխանութիւն եւ յաշխիճան.
Զայրն երկար լինի ասել՝ թէ եւ կարի քաջ անուանիք,
Դիք Յոնիոյ, զորս առ ասատուածս Յաւանայ կալան սերունդք,
Բայց քան զԵրկին եւ զԵրկիր՝ ըզպանծացեալ ծընողս իւրեանց՝
Դաւանեալ առժամայնք. յորոս Տիտան նախծին Երկնի՝
Ամարդիլ ազգատոհմիւն եւ իրաւամբք անդրանկութեան,
Զոր Կռոնոս՝ կրրոսերագոյնն քան ընկա յիւր վրատրեաց.
Որում չափ զոդ կրշռեցաւ յուժգնագունէն Արամազդայ
Յորդւոյն իւրմէ եւ Ռէայի, եւ այնպէս սա բրնակալեաց։
Ի Կրիսէ նախ եւ յԴգա ծանուցեալ այս դիք 'ի սկզբան,
Եւ անդուստ 'ի ձիւնեղէն գլուխ ցրրատայինն Ոլիմպոսի
Տիրեցին միջնոգոյն՝ բարձրագունի իւրեանց երկնին,
Կամ 'ի Ժայռքն գեղափական եւ կամ յաւանն 'ի Դոդոնէ
Եւ յամենայն 'ի դորացուց աշխարհին ծագս առհասարակ։
Այլք ընդ ծերոյն Կռոնոսի սրացան ընդ ծով ադրիական
Յեսպերեան անդաստանն, եւ ըստ Կելտացն անցեալ երկիր՝
Շրջեցան մոլորական միջ 'ի կրզգիս հեռաստանեայս։
Համօրէն սոքա եւ այլ բազումք եկին երամովն,
Սակայն՝ կորակնեալ արտօսրալիր աչք 'ի խոնարհ.
Այլ երեւէր 'ի նոսա նրշոյլ առկայծ զուարթութեան,
Զի զգընդին իւրեանց գրեին ըզզօրավար ոչ յուսակտուր,
Եւ զանձինս իսկ իւրեանց 'ի կորբստեան անդ անկորուստս։
Այս 'ի գէմս նորին ցոլացոյց մոյն խմբն նրաղ,
Այլ անդէն 'ի ձեռս առեալ զիւր ըզբնաւոր գոռոզութիւն,
Ճոռոմ բանիւք յորս ոչ ազգումն՝ այլ կերպարանք էին շքոյ,
Խրախուսէ մեղմով ըզսիրտսն վհերոս, փարատէ զահ։
Եւ հրամանն անդէն 'ի ձայն մարսի փողոց, գոռ շեփորից
Եղանեալ ամբառնալ ահեղազոր իւրում դրօշն։
Զայս պատիւ խրոխտասանիծ՝ իբր իրաւունս իւր պահանջէ

Աղաղէլ քրտոլք յաղթանդամ, եւ արձակեալ պարզէ 'ի բնոյն
Զփոքփոքեալ կայսերական նշանն որ պարծ եւ գոգ առեալ
Խաղայր շողայր վերդ վարսամ հողմածածան սահեալ ընդ օդս։
Ամանք եւ ոսկեշող ճոխապաճոյճ փայլատակունք
Զէնս 'ինամ նշկարէին եւ ախոյեանս սրտոլբեական։
Ուժգնաձայն յայնըմ վայրի գոչէ պրղինձն ըզմարտին դու,
Ա՛ռ որ բանակին համախումբ կրրկնէ բարբառ գանգս 'ի գանգիւն՝
Որ զդրժոխոց հերձու խոռոչս եւ անդրադոյն արկանէ ահ
Ի վրէին իշխանութիւն եւ հինաւուրցն Գիշերոյ։
Անդ ընդ մութն յական քրթթել երեւեցան բիւր խին դրօշք
Ամբարձեալք եւ ծածանեալք յերանդ երանգ արեւելից,
Ընդ նոսին եւ նիզակաց թանձր ահագին կանգնի անտառ,
Վահանք եւ սաղաւարտք կուռ ընդ իրեարս հոծեալք 'ի շար՝
Տոլք յայտնին խուռնախիտ կարգեալք 'ի ռազմ անդաւայրդ։
Նոյնհետայն դրրդին մարտիկք գունդ գումարտակ բռնանդակեալ,
Ի գորացի նուագ փողոց եւ սրրընդաց քաղցրաձայնից,
Որ հանէր զհին դիւցազուն 'ի վեհ բարձունս անդորրը հոգւոյ՝
Ի վառեալ նոցին 'ի զէն, եւ փոխանակ դազանութեանն
Օրինաւոր շնչէր կորով յահէ մահուն անդրդրդուելի
Ի փախուստ խուճապական կամ 'ի նահանջ ծաղածանակ։
Նուագաւոր այս մտան աղդոլ է զգօնական եղանակքն
Յամոքել եւ հանդարտել ըզխորհրդոց ամբոխից յոյզս,
Ի փարատել ըզտարտնապ, զերկուանս, զերկիւղ եւ զսրբատութիւն
Եւ ըզվիշտս մշտաց մահկանացուաց եւ անմահից։
Մինաշունչ զօրութեամբ 'ի նշկատեալ խորհրդոց դէմ
Գլոհ տային այսպէս սոքա լրեալ 'ի ձայն քաղցրը սրընդի
Որ զընթացսին ցաւագին սիսիէր զնոցա 'ի հրուան յատակ։
Եւ յառաջ կոյս մատուցեալ 'ի հանդիսի՝ զտեղի առնուն.
Ճակատ զարհուրելի, ահեղատպայ յերկայնութիւն,
Ի զէն փայլակնաձեւ, 'ինմանութիւն վաղուց զօրաց
Յատարար 'ի տեղ պարտածածկեալ, ակն 'ի հրատան հրզօր պեսին։
Անդ նորա 'ի սպառազէն կարգն արձակեալ զաչքն հրմեա՝
Տեսանէ խակոյն ընդ գունդն բռնանդակ խրմբեալ գումարտ
ԸզՇրշգրիտ յօրինուած զօրականին ռազմամբրան,
Զգիցատիպ դէմն եւ զհատակ, եւ զհանդիսին առնու հատար։
Ամրացեալ սիրտ իւր յայնժամ գոռոզութեամբ փրքոցուոյց
Եւ խրատացեալ, խրոխտալիր ընդ զօրութիւն իւր յոխորտայ։
Զի յետ մարդոյն լինելոյ՝ զոր այնպիսի խրմբեցաւ ոչ,
Որ առ սովաւ տարցի պարծանս քան ըզթշվկացն հեռեւազօրս
Ըզմանեալսն 'ի խորդուց, թէ եւ 'ինոյնքս յաւելցին
Եւ Փէլերեան ազգ ըսկայից ընդ դիւցազարմին ծընընդոց,
Որ 'ի կռիւ կաքաւեցին զվիսոնիւ եւ ըզթերեաւ՝

Ուր սասի անտի ատտուածք խառն 'ի գուսպար էին նրպասա,
Եւ զոր վէպք եւ առասպելք ոգեն զորդւոյն Ուլթելոյ՝
Զորով պար առնուին Բրիտան ասպեսք ուԱրմորիկեանք,
Նա եւ բնաւքն որ զկնի կացեալ էն կընքաւորք կամ անկընաւք
Արդնընկեցք յԱսպրամենտ, 'ի Մոնտալբան, 'ի Դամասկոս,
Ի Մարովք, 'ի Տրապեզունտ, եւ այլ յայմանցն լիբական
Հորդան եւ Բիզերտա, յորժամ բեկաւ Կարոլոս մեծ
Համագունդ աւազանեաւն առ սահմանօք Կանտաբրիոյ։

Այսպէս սոքին անկըշնոք ընդ զօրութիւն մահկանացու՝
Պատկառոտք կան ընդ ձեռամբ ահագնացայտ զրաւարին,
Որ 'ի հասակ սոսկալիթիսոր եւ 'ի Ճոխձեմ նազանս 'ի պերճ
Խրոխտաբար զամենեքուն մեցեալ քան զբուրդն համբարտակէր։
Շեւ թափուր էր կերպարանքն յառաջնաստեղծ լուսոյ փայլմանն,
Երեւէր ոչ ինչ 'ի վայր քան զկործանեալ հրեշտակապետ,
Եւ փառաց ինչ Ճոխութիւն՝ նուազեալ եւ եթ նրսեմասուեր։
Արեգակն որպէս յորժամ այն ինչ նորոգ ծագեալ յեզերս՝
Պարուրեալ 'ի Ճաճանչեցն ընդ օդս հայի մառախլապատ,
Կամ զրբէն մինչ յեսկուսէ առ 'ի թիկանց կացեալ լուսնին
Ի խոր անդ խաւարման սրտեւէ շառայլս աղօտանուաղ՝
Մահաշըշուկ գուժարկու զկնոսով մասամբ տիեզերաց,
Եւ ահիւ յեղափոխմանց ըզմիապետաւորն տաղնապէ։
Նոյն եւ նրսեմ հրեշտակապետքն գեր զընկերքն փայլակէր,
Բայց երեսք իւր ակօսեալ 'ի խորափոր ըսպիս շանթից,
Եւ զայտիւքն խրտուելովք անկեալ պատեր անձուկ վարան։
Ընդ յօնիւքն՝ անյաղթ սրտի եւ տոկ խրոխտից հրսկիեն վրրեժք։
Աչք գաժան, այլ 'ի նոսա նրշմար խրզճի եւ գորով
Յանկարկեն 'ի գործակիցսն, մանաւանդ թէ յարբանեակս
Իւրումն յանցից, զորս էր երբեմն յերանութեան տեսեալ 'ի շուք,
Եւ արդ բագորդ պարտաւոր ընդ իւր 'ի կոտուս յաւիտենից։
Բիւրք բիւրոց հոգիք ընդ իւր մեղայն 'ի տոյժ յերկնից սահեալք,
Եւ առ իւրումն հեստութեան յանապական մերժեալք լուսոյն,
Այլ սակայն հաւատարիմ եւ 'ի խամուր անդ կացեալ փառս։
Օրինակ ինն յորժամ հուր երկնից քշեսէ զկաղնիս մայրեաց
Կամ զերանց շոճ, խանձատեալ գրլխովքն բունն ահեղակերպ,
Թէպէտ եւ մերկ, 'ի բոցակիզ խարեալ ընդկն յոտին կայ։

Հանգերձի խօսել Սատան։ գունդք կըրկնակարգք թեւէ 'ի թեւ
Կարակնեալ կիսաբոլոր պատեն ըզնա 'ի ընդ աւազանուոյն։
Ուշ ունկան կարկէ զնոսա, նա սկիզբն առնել ձեռն արկ երիր,
Երիր յանկատրա վիսութեան՝ զեղուն յաչացն յորդ արտասուք,
Արտասուք՝ որպէս ինչ մարթ ինքուցանել է հրեշտակաց։
Հուսկ ուրեմն հատկըլեալ ձայնք հեծութեան անցս հորդեցին։

« Ո՛վ ոգւոց բիւրք անմահից, ո՛վ զօրութիւնք անզուգականք՝

Բայց եթէ 'նդ Ամենակալն. ոչ մեղ անփառ ինչ մարտս եղեւ,
Թէպէտ եւ իրացն ելք եղեռնաւոր եւ չարաշուք.
Վրկայ վայրս եւ սոսկալի այլափոխումն՝ 'ի բան դրժպէի:
Այլ որ այն մրտաց կորով յառաջատես կանխագուշակ
Անցելոյն եւ այժմուս խորաքննին խուզողութեամբ
Խիթալ մարթէր թէ այսքանի միահամուռ դից զօրութիւնք,
Դից ասեմ սոցին հանգոյն, վանեալ երբէք վրկանդեսցին:
Ո՞ եւ այժմ յետ խորատակմանս իսկ տակաւին հաւատայցէ,
Թէ այս գունդ հատաւաւուն, որոց աքսոր թափեաց զերկինս,
Ոչ յարիցեն ընդդրնել ըզհայրենի բնաշխարհ իւրեանց:
Իսկ զնեն՝ զերկնաւոր բանակս ողջոյն ունիմ վրկայ,
Թէ 'նդաձմանց այլակարծիք կամ 'ի վտանգաց ինչ իմ խուսափ
Ըզյոյս մեր 'ի դերեւ երբէք հանեալ տասալեցին:
Սակայն, այն որ յերկինս ինքնակալեալ Թագաւորն՝
Յաւաղոլոս կայր ցայնժամ բազմեալ յաթոռն իշխանապանծ,
Պահպանեալ հին համբաւով, սովորութիւ կամ թէ'ստ կամակս.
Ճոխայր ցանգ առ մեզք նաղէր տրքուանաձեմին պերճանօք,
Այլ բազկին ծածկեալ դրդեաց ըզմեղ 'ի փորձ՝ որով անկաք:
« Ցայսմ'հետէ ծանօթ են մեզ նորա եւ մերոս զօրութիւն,
Ոչ եւս այլ մեք 'ինորոգ ինչ դրդռեսցուք ճակատամարտ.
Իսկ թէ մեզ առ 'ինմանէն ինչ շարժեսցի, աներկիւղ եմք:
Որ մեզ մընայ խորհուրդ քաջ՝ գաղտնորոգայթն է դարանել,
Զի նենգով եւ արուեստիւք հասցուք ուր զոր ոչ ժամանեաց,
Եւ փարթամ հուսկ ուրեմն ուսեալ լեցի նա խեղամուտ,
Թէ որ յաղթէն բընութեամբ՝ 'ի կէս եւեթ պարտէ զոսոխ:
« Մինչեւայրքն անքաւ՝ դիտեն ծնանել աշխարհս նորանոր.
Աւ այս շրջունդ ինն ընթանայր զբոյց յերկինս համբաւի,
Եթէ 'նդ հուսկ Ամենակալն ունէր 'ի մտի ստեղծագործել,
Եւ կարգել յարարածի անդ իւրում ազգ մի առանձինն
Յանին առեալ 'ինմանէ զուտապատիւ ոգւոցն երկնից:
Գէթ անդր 'ի գիւտ եւեթ թերեւս հրոսեսցէ նախ մեր ապատակ,
Անդր, եւ կամ այլուր. զի այս վերապ անգընդայեղց
Ոչ կարցի բընաւ զոգիսս զերկնաւորս 'ի գերութեան,
Ոչ խորխորատ թաղեսցէ խորասուզեալ 'ի խաւարին:
Այլ արժան է խորհրդոցս 'ի քննութեան դալ հրապարակ.
Հաշտութեան՝ ոչ եւս այլ յոյս. ոչ երազն զհնազանդութիւն.
Մարտ ապա, մարտ համարձակ կամ 'ի ծածուկ, սահմանեսցի:»
Ասաց նա. եւ 'ինքեան հաւանութեան խօսից իւրոց
Թրուեան յօդքս բիւրք բիւրուց փայլակնացայտ շողեալ սուսերք
Մերկացեալք յաղդերաց ըսկայազօր քերովբէից:
Շողիւն յանկարծաթափ շուրջ մինչ 'ի խոր փայլէ դրժոխս,
Խաշիւն կատաղութեան բառնան ընդդէմ Բարձրելոյն դեւք,



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая
Ս. ՍՅԱՆԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1003
5903

Բուռն հարեալ դաղանաբար 'ի զէն՝ դասպարան ահեղադուռ
Հարկանեն մարտի շրջնդ՝ ձայն 'ի յերկինս տրւեալ կամարս։
Անոմ խուն ինչ 'ի բացէ կայր ամբարձեալ լեառն ահաւոր՝
Որոյ գլուխ հուր մերթ ընդ մերթ եւ ծուխ ժայթքէր ոլորտապտոյտ,
Միւս մասունքն առհասարակ պաղպաջէին 'ի քոս փայլուն,
Նշանակ աներկեայ՝ թէ անդ թաքուն կայր 'ի խորոչ
Ցընդերս լերինքն հրահալ նիւթոց ինչ ազգ, գործ ծրծըմեոյ։
Անդր 'ի թեւս երագութեան սլանայ գուգաղ մի բազմաձեռն,
Որպէս խումբքն ռահվիրայ զինեալ 'ինկոց եւ 'ի փայտատ՝
Յառաջեալ կարապետեն քան ըզբանակն արքունական
Ի պատել պատնէշ 'ի դաշտ կամ 'ի կանգնել հոզաստատուար։
Մամենն իւրեանց առաջնորդ, Մամենն հոգի յոյժ վայրաքարշ
Քան ըզբնաւս հոսեալս յերկնուստ. զի եւ 'ի վեր անդ 'ի յերկինս
Աչք եւ խորհուրդք իւր դէտակն ունէին միշտ 'ի խոնարհ կոյս,
Սըխրացեալ ընդ Ճոխութիւն երկնակառոյց պերճ յատակին՝
Ուր գարշապարք կոխեն զոսկի, քան եթէ 'նդ այլ ինչ սուրբ եւ վեհ՝
Յորըս գոյ վայելել յերանականն տեսութեան։
Նովաւ նախ եւ նորին խրատուք դիւթեալ եւ մարդկան զարմ
Ձերկրիս պորտ հարին աւար, եւ ամպարիշտ իւրեանց ձեռաք
Գերփեցին ըզմոր աղնս՝ դանձել զոր լաւ էր սուզանել։
Անդէն վաղվաղակի ձեռն 'ի գործ գունդքն մամենեան՝
Հար պատառեաց անդ 'ի կող լերինքն վեր մի լայնախոց,
Եւ բըրեաց յարգանդէ անոմ նորուն ըզձոյլս ոսկւոյ։
Մի լեցին զարմանալիք՝ թէ մեծութիւնք 'ի գժոխս աձեն.
Գետին է նա յանկագոյն մեծամեծար այնըմ թուոյ։
Որ պարծինն ընդ քակտելիս եւ սքանչացեալ պատմեն զԲաբել,
Եւ զօրինուածս հոյակապ՝ թագաւորացըն մեմիցաւոց,
Եկեսցեն ուսցին քանի հեշտիւ անցին ոգիք խոտանք
Զահեղ նոցին արձանաք անուան՝ ուժոյ եւ արուեստի։
Զոր արքայք ընդ դար 'ի գլուխ հաղիւ էն յանդ հանել ատակ
Անհանգիստ անդուլ ջանիւք, անթըւելի բազկաց մըրցմամբ,
Սոքա 'ի մի ժամ աւադիկ բովանդակեն հասեալ յամբովկ։
Անդրը հուպ 'ի դիւրոջն՝ 'ի պատրաստեալ բոլոր բաղուստ,
Յորս 'ի լըճեն ուրդ առեալ հոսէ թաքուն երակ լոյծ հրոյ,
Խումբ իմն այլ ըզթանձրը շանթան առեալ ձուլէ սքանչելարուեստ,
Զազգ ազգ իւրաքանչիւր ուրոյն ուրոյն մէն զատուցեալ
Եւ զաղբըղբուկ փրփրադէզ կրզկրզելոյ ձուլելոց ոսկւոյն։
Դաս երրորդ ձեւեն երագ պէսպէս 'ի կաւէն կաղապարս,
Եւ յեռանդուն քուրայիցըն նորաքանչ հանեալ առուս՝
Նովին նիւթոքն ընդուն զամենայն խորշքս խորամէջս։
Այլգունակ յերկնոնին՝ կազմածն ոչոյն կենդանանայ
Ի մի շունչ հոգոյ մաղեալ ընդ յոգնահոյլ փողոցքն կարգ։

Ամբարձաւ խսկոյն յերկրէ հանգոյն շոգւոյ վենուած ահեղ
Ի ձայն քաղցրաբարբառ եւ միաբան երգոց նուագաց,
Կառուցեալ երբեւ տաճար, եւ շուրջ զիւրեւ նեբքնախարխսիք
Եւ դորայլ սիւնք յորս յենուն վերնախարխսիք ոսկեաձոյլք,
Ընդ նոսին պլտակ եւ ծնօտ, պալարաձեւ քանդակագործք,
Եւ ձեղուն համակ ոսկի՝ գրոշեալ գերրուագ նրկարակերտ։
Ոչ Մեմփիս, ոչ Բաբէլն յամենայն փառս իւրեանց չհասին
Ցայն 'ի շուք մեծապայծառ 'ի զետեղել զաստուածս իւրեանց
Ըզբէ՛լ կամ զՍերապիս, կամ թէ զարքայն հանել 'ի գահ,
Մինչ Եգիպտոս ւասորեստան շուայլեալ 'ի դանձսն մերկեին։
Կուսակին գրմբեթարդ հաս 'ի շքքեղ բարձանցն աւարտ,
Եւ անդէն վարվարակի գրունք պրղընձի բացեալ դրանդեօք
Յանդիման առնեն 'ի ներքս անդ լայնալիր սրահս ընդարձակս
Ի յատակ հարթ հաւասար ողբկատարքը տարածեալ։
Ընդ լայնալիճ կամարաւն ամենահնար կախարդութեամբ
Կախին կարգ կարգ կանթեղաց ատղաճճանչք, եւ վառ ջահից
Որ բուծեալ 'ի նաւթ ու՝ 'ի ձիւթ՝ լոյս մեծ հեղուն արփւոյ նման։
Մբառանէ փոյթ ընդ փոյթ ամբոխն 'ի ներքքս հիացեալ՝
Գովելով կիսոց ըզգործն եւ այլ ոմանց զճարտարապետն,
Որոյ ձեռն եւ անդ ուրեմբն ծանուցաւ երբեմն յերկինս
Ի կառոյցքս բարձրաբերձ եւ յոգնաթիւ աշտարակեայս,
Ուր հրեշտակք նիստ ունէին մնական 'ի ձեռս բազմեալ իշխանք։
Զորս արքայն վեհապատիւ յայն բարձրացոյց իշխանութիւն՝
Կալ վարել միւսմ միւսմ յիւր դաս ըզգօրսն լուսեղէնս։
Նոյն ճարտար չէր անծանօթ՝ ոչ անպաշտօն առ Հելլէնօք,
Եւ որեարն Աւսոնական Երկաթամոք զնա ձայնեցին։
Բան ճառէր յառաստղէն՝ թէ դարահոս եղեւ յերկնից,
Զոր սրրամբաեալ Արամազդ ընդ բիւրեղեայ մարտկոցն ընկէց։
Ցայգուէ ցօր հասարակ, 'ի մէջ օրէ 'ի զով երեկս
Ըզմի տիւ ամարայնոյ ճախր առեալ նա թաւալգլոր,
Ընդ մուտս արեգական՝ պէս գունակ ասարդ մի թափեալ՝
Ուղղաձիգ էջ 'ի Լեմնոս՝ յԷգէական ծովուն կրզգլ։
Այսպէս զայս աւանդէին մարդիկ զբրոյց սրտապատիր,
Զի զանկումբն զոր սատմակ գլնդաւն անկաւ նա խուսվախուժ՝
Յոգումբք ժամանակաք կանխաւ յառաջ էր պատահեալ։
Այլ ջոգնեցին ինչ արդ նրմա բրրդունքքն բարձր յերկինս կանգնեալք,
Ոչ գամագիտ փրրկութեան եղեւ յիւրոց մենքեանցից,
Գրլխկայր վիժեալ ճարտար գլնդաւն երթալ չնել 'ի դժոխս։
Անդ թեւահերձ պատուիրակք յակնարկելոյ պեռականին՝
Ահաւոր կազմութեամբ եւ 'ի բարբառ գոչման փողոց
Ընդ ճամբարն ողջոյն ազգին ըզկոչ յատեան հրապարակի,
Որում կայր փոյթ հոլանել 'ի տաճար անդր Ամենազից՝

Յոստանն 'ի մեծ մայրաքաղաք Սամայե'ի եւ բարձակացան։
Այս հրաւէր յամենայն գինեղից դասուց ռազմամրոց
Կոչէ զարժանաւորսն աշուեճանաւ կամ քաջութեամբ.
Գան խիզոյն հարիւրաւորք հազարաւորք կապեալ ջոլիր։
Ամենայն առանցք խրցան, խրակեալ լոցան գրունք, լայն դաւիթք,
Մանաւանդ դահ'լիճն անբաւ, թէպէտ արձակ դաշտի հանդէս՝
Ուր սպառազէն քաջ ախոյանք էին սովոր երիսարել
Հանդէպ գահու խաքանին, ձայն տալ կարդալ անդր յասպարէզ
Ըզծաղիկ ասպետական հեծելութեան ուրուապաշտից
Ի մահու չափ 'ի դուպար եւ կամ յարշաւ նիզակախաղ։

Հոյլք ոգւոցն եռան զեռան խուռն ընդ երկիր, համայն եւ յօդն
Որ հերձեալ պատառի սրաձայն թեւոցն 'ի շաչելոյ։
Զերդ գարնայնի, մինչ արեւակ զոյդ ընդ ցերուն արփաձեւիկ,
Զվեթակաւն ողկուզօրէն սրփուեն մեղուք զանթիւ մանկանն,
Թրռչին այսր եւ անդր ընդ ցող առաւօտին եւ ընդ ծաղկունս,
Կամ յարուարձան կրկնակերտ քաղաքորմին՝ յողորկ տախտակ
Դեռադեռ օծեալ ռետնիւ՝ խորհին խօսին զաշխարհին իրս.
Այսպիսի խիտ խուռնեալամ եռայր շողայր գունդն օդեղէն,
Սերտագոյն ջուրբեալք մինչեւ 'ի կէտն ազդեցութեան։
Որ քան զբնկայսն երկրածնիս յաղթահասակ ցայժըմ թուէին,
Նոր նշան, արդ չքքոսի քան ըզդաշնաձնսն նրկնաձեւս
Անթիւ խրունին անհամար ընդ անձկադոյն եւ նեղ յարկաւ,
Նրմանեալք թրղկաց ազգին՝ որ հընդկային լերինն յայնկոյս,
Կամ Պարկայ՝ գիշերատոն խրախացելոց յելքս մայրեաց
Կամ աղբեր առընթեր, զորրս գեղջուկ անագանեալ
Տեսանէ կամ երազն թէ ինչ ուրեք տեսանիցէ,
Մինչդեռ կայ վերոյ գրկնոյն անցեալ լուսինքն դատաւոր
Եւ մօտագոյն առ երկրաւ քերէ շքրջան իւր դալկադէմ.
Իսկ 'ի խաղրս եւ 'ի պարս իւրեանց զբօսեալ նոցուն լամից՝
Խրտղեն զունկրն նորա քաղցրանրւադ երաժշտաց,
Երիկամունք իւր թընդան ուրախութեամբ եւ դողութեամբ։

Նոյն եւ ոգիքն անմարմինք զանչափ իրանն ամիսոփեցին.
Եւ անթիւն իսկ բազմութիւնք կացին յանդորր ընդարձակի
Ի սրահի անդ յայնմիկ դրժոխաբնակ ապարանիցն։
Այլ յաւուրս անդ 'ի նեռքին՝ 'ի հասակացն իւրեանց 'ի չափ՝
Սերովբէք եւ քերովբէք՝ աւագորեալ անայլայլակ՝
Եղանան ակրմբահոյլ հեռի ուրեք դալտ յառանձնոց.
Հազար կիսաստուածք յոսկիակուռ բազմեալ գահոյս,
Առեան մեծ բազմամբոխ եւ ծայրալիր հրապարակի։
Ըզկնի սուլ ինչ ըռուութեան եւ կարդալոյ հրաւիրակին՝
Հանդէս մեծ խորախորհուրդ հարցափորձին ըսկիզբն էառ։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի սկզբան խորհրդոյն 'ի քնին առնու Յատանայ՝ թէ արժան իցէ կրկին տալ պատերազմ՝ 'ի գրաւել զերկինս. կէսք հաւանին, այլք ոչ: Ընտրի այլ իմն առաջարկութիւն թելադրեալ նախ 'ի նոյն ինքն 'ի Յատանայէ, լուտեալոյ թէ կայցէ՞ ճշմարտիւ՝ ըստ երկնաւոր աւանդութեան՝ այլ իմն աշխարհ եւ արարած մի հաւասար հրեշտակաց կամ փոքր մի խոնարհագոյն: Յատանայ միայն յանձն առեալ զայս լուտեաւթիւն, յետ լուծանելոյ երախանին եւ ցրուելոյ այլոց յայլ եւ այլ զբօսանս, ինքն ելանէ 'ի գործ իւր, եւ հասեալ 'ի դրունս դժոխոցն՝ տայ բանալ դարապետացն, եւ անցեալ մեծաւ տագնապաւ ընդ անդունդս եւ ընդ Ալիւն՝ որ 'ի մէջ դժոխոց եւ երկնից՝ ժամանէ 'ի տես խնդրելոյն իւրոյ՝ նորոյ աշխարհին:

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Բարձրագահ՝ 'ի մեծ աթոռ արքայապանծ վայելչութեան,
Առ որով լքեալ ճանճանչ դանձուցն Հընդկաց եւ Հիւրմիւզի,
Կամ ելեալն ծագաց արփիսակիզբն Առաւօտուն,
Որոյ ձեռքն ճոխ տեղայ տեղ մարգարիտ եւ տեղ ոսկի
Յիւր 'ի վերայ խուժադուժ թագաւորաց, բազմի Սատան՝
Արժանեօք վերացեալ 'ի չարաշուք յայն բարձրութիւն։
Ամբարձեալ անյուսութեամբն յայնքան բարձունս 'ի վեր քան զլոյս,
Անդրադոյն ձրկտի՝ անյագ յուսայնաթոպ ընդ երկնից մարտ,
Եւ անխրատ յիւրոյն անցեալ, այսպէս զյոխորտ մերկանոյ միտս.
«Զօրութիւնք, իշխանութիւնք, աստուածութիւնք երկնակաճառք,
Քանզի չեք վեհ որ 'ի խորն արգելուցու զանմեռ ոգի,
Թէպէտ անկեալք եւ ՀՀմլեալք, ոչ մեզ անգիւտ կարծեմ զերկինս։
Ի դէրմանէ սասի թէ գամ մի կանգնեսցին զօրք երկնաւորք,
Առաւել քան զոչ անկեալսն փայլեսցեն շքեղ լահեղք,
Անկասկածք 'ի միւսանգամ վատահատարակ ճակատագրէ։
Նախ արդար իրաւունք եւ հաստատուն երկնից օրէնք
Կացուցին զնա ձեզ 'ի գլուխ, եւ ընտրութիւն ձեր կամակար
Յաւելեալ, եւ հանճարոյ եւ քաջութեան մարակից հանդէպ.
Արդ չարեացս մերոց գլուաւ օձան գէթ մասամբ չափ,
Այն զի զնա յառաւել աներկեւան հանին գահոյս
Զոր ոչ խանդոյ յինէն ոք, այլ մշտագիւր տացէ տեղի։

Անդ յերկինս երջանկափառն աշտեճանի երանութիւն
Ի մահանս ապաքէն դիտէ շարժել զրստորայինս.
Իսկ ասա՛ ո՞ բերցէ նախանձ ընդ ում՝ 'ի վասնդ մղէ վեհ բարձ՝
Իբր ըզձեր ինչ պատուար՝ ընդդէմ շանթից որոտողին,
Եւ մասնէ 'ի դառնագոյնսն տանջանացն անվախճանից։
Ուր չիք շահից ինչ մերցանք, չէ՛ եւ կորստեանց 'ի հենջնի կալ,
Ի դրժոխս ոչ զք անշուշտ թեկին ածիցէ նախանձառոց.
Որ փոքրու վիճակեցաւ մասին կարեացրս հասելոյ՝
Փառամոլ հոգւով երեալ ոչ տենչասցի մեծագունին։
Արդ օգտիւս այս զուգութեան եւ անդեղի մըտերմութեամբ
Եւ քան յերկինս անդեղեւուն դաշանց ուխտիւ միահոմեալք՝
Դառնամք արդ պահանջել զարդար ըզհին ժառանգութիւնս,
Քաջայոյսք 'ի բախտ յաջող՝ քան թէ բուն բախտն ինքն յուսադրէր։
Ո՞ր լաւ ինչ ճանապարհ, մերկագլուխ մարտ՝ թէ 'ի ծածուկ,
Ժամ 'ի քընին է մեզ առնուլ. թող որ գիտունն է՝ խօսեսցի։»
Նա ըռեաց, յարեաւ առ իւր Մելքոմ արքայ մանանակիր՝
Զօրագոյնն եւ ամենին յոգիս որ անդ յերկինս մարտեան,
Եւ զարդիս ամենագոյն դաղանացեալ անյուսութեամբ։
Այն էին նորա կամք՝ զուգիլ ուժով ընդ Անմահին,
Եւ քան նիզակ երեւել՝ զոչէութեամբքն քամահէր.
Ազատացեալ միանգամ առ 'ի հոգոց կենդանութեան՝
Յամենայն իսկ երկիւղէ կասկածանաց դոյր յապահովս.
Զ Աստուած եւ ըզդրժոխս, եւ քան զդրժոխս որ ինչ այլ չար,
Աւ ոչ ինչ համարէր. եւ այնպէս զայս բարբառեցաւ.
«Իմ խորհուրդ է յայանի ազգ. անփորձ նենգի՝ չարարծիմ ինչ յայն.
Ոյց պէտք ի՛ցեն՝ հնարեսցին, սակայն 'ի պէտս, ոչ առժամայս։
Զի մինչդեռ նըստիցին նոքա յերասան դաւադրութեան,
Արժա՞ն ի՛ցէ բիւրուց բիւր ոգւոց որ կանգ զին 'ի ձեռին
Եւ կրկնաթ կաթոգի են նրշանի դընդացն 'ի չու,
Թէ խամրեալ թառամեսցին ասա՛ 'ի յերկնից փախստականք,
Եւ հաճեսցին բնակել 'ի մայլ յանարգս յայս փայլ թըշնամանաց,
Ի բանտ բընաւորին որ հեղգութեամբ մերով իշխէ։
Քաւ 'ի մենջ. այլ մոլութեամբ եւ դրժոխոց վառեալ բոցով,
Միադունդ առհասարակ քան ըզպարիսպս երկնից 'ի վեր
Դիմադրաւ նահատակեալ՝ հորդեսցուք մեզ ուղ անխափան,
Զերաշխէպս 'ի զին փոխեալ ահեղ ընդդէմ հնարողին զայն։
Անդ յայնժամ ձայն առ ձայն ամենազօր իւրում շանթից
Լուիցէ զորոտ դրժոխոց, փայլատականց տեսցէ փոխան
Սեաւ ինն հուր եւ ահ ցայտեալ նոցին ասատիւ յիւր Զրարթունան,
Եւ զաթոռ իւր թաթաւեալ յանդընդային կուպը, յօտար բոց.
Ի մարթուչ հանճարոյ իւրմէ հնարեալ տանջանարանք։
Այլ թերեւոյս դրժուարուտ թուիցի ուղին եւ զառ 'ի վեր

թեւակոխել ելանել առ բարձրամուր զօղեալն ոսոխ։
Յիշեսցեն որ զայդ խորհին, — եթէ անցուշ լաճին բաժակ՝
Արբուսին թմբիրալից՝ չեւ է զնոսին զմոլեցուցեալ, —
Զի ընկիկ մերով շարժմամբ 'ի սեփականս համբառնամբ դահ.
Ըստորեալք եւ անկումն՝ 'ի մեղ չէ մնա ինչ, այլ ընդդէմ։
Ասա ուրեմն, այն ինչ գոռոզ վիրաւն անկաւ ոսոնհարուածեամբ
Ի բեկեալ վերջապահքս եւ ընդ անդունդս ըզմեզ վաներ,
Ո՞վ չառ ըզմորձ՝ քանիցն տագնապալեցեալ եւ բընաբար
Հաղիւ հաղ թէ թեւակուռ եղեալ 'ի ստորս ինքանեաք։
Յայտ ուրեմն է աւադիկ՝ զի հեշտագոյն են մեզ վերեալք։
« Բայց իրացն յելից կասկած . . . լցէ՞ արժան մեզ միւսանգամ
Գրգռեալ զՀրեղօրն 'ի չար եւրս հնարից խոյզ եւ խընդիր՝
Զոր կարէ սրբամբառութիւն իւր հայթայթել 'ի մեր կորուստ, . . .
Թէ կայցէ ինչ 'ի դրժոխս այլ եւս մեծի կորբստեան խէթ։
Զի՞նչ այլ չարագոյն քան զաստանօրըս բնակութիւն,
Վրատրեալ յերանութեանց, եւ 'ի վերասպս յայս սոսկալի
Յեղկութիւն ծայրապատար ըսպառբսպուռ դատապարտեալ,
Ուր եւանդն անչէջ հրատին յանյոյս վախճան փորձեսցէ զմեզ
Ըզծառայս բարկութեան, մինչ անողոք անհաշտ մըտրակն
Եւ ժամ խոշանդանաց կոչեն ըզմեզ 'ի պատուհաս։
Թէ քան զոր եմքս առաւել եղծանիցեմք, դառնամբ 'ի չեք,
Հարկ լցէ անշընչանալ, եւ զի՞նչ երկիւղ այնուհետեւ։
Ըզմի՞ թանգուզլցեմք զսասակի ցասումն իւր բորբոքել,
Որ 'ի մեծ բարկութիւն սրբամբառութեան թէ բըրդեցի,
Ծախեսցէ եւ կորուսցէ միանգամայն ըզմեր բնութիւնս.
Երջանիկ բաստ եւ նրսէհ քան զկեալն յաւէժ եւ չուառական։
Իսկ թէ բնութիւն արդարեւ ասատուածեղէն է մեր ւանեղծ,
Ի հեքագոյն ասատ պայմանիս յոյժ մեկուսի եմք յոչընչէն,
Եւ հրմուռք՝ զի բաւական եմք վերդովել զերկինրս իւր
Եւ անհետ հենիւ խառվել ըզմահահոտ դահն անմնասոյց։
Եթէ չէ այդ յաղթանակ, է դէթ սակայն վրէժխընդրութիւն։ »
Յանգ եհան պարբասեալ ըզյօնան, աչքն յայտնեին վրէժ յուսահատ
Եւ պատերազմ մահաշունչ առ որս 'ի վայր ինչ քան զասատուածս։
Ի միւս թերեն հնորհաշուք եւ բարեբար եղ Բէլիար.
Ձեք երկնից կորուսեալ քան զայս ջըքեալ ինչ արարած,
Ի պատիւ ստեղծեալ թըւէր եւ յարարուածրս մեծամեծս.
Բայց ամենայն ինչ 'ի նմա սրտապատիր էր եւ անոսի,
Թէպէտ կաթէր մեղր 'ի լեզուէն եւ բաւական դրատանէր
Նենդաւոր պատրանաք իբր հաւատաեաք դաւադրրժեալ՝
Շոդանել եւ վեր'ի վայր զհասուն խորհուրդս հարկանել։
Նրկնախոհ, յախտս հանձարեալ, իսկ 'ի վեհ դրծս էր վատ եւ յոյլ,
Այլ ամոք 'ի լըսելիս. եւ յորդորակ ձայնիւն ասէ.

« Ի գուսպար մերկանդամ էի մեռ յոյժ, ով զահակիցք,
Որպէս ոչ յեանեալ ինչ ոք եւ 'ի մասին ատելութեան,
Եթէ զլուխ իրաւանցն որ յանդանդաղ զբրդէն 'ի մարտ՝
Զէր մնաւանդ առաւել 'ի դէպ անտի հրաժարելոյ,
Եւ զբթուէր զելից իրացն ինձ համարէն զարագուշակ։
Որ 'ի գործ պատերազմի զանցուցանէ զամենեքուքեք,
Անվրատահ յոր խրատն տայ եւ յորում ինքն է վեհագոյն,
Յանցուսութիւն խիզախէ եւ 'ի բնաջինջ ոչէութիւն՝
Իբր 'ի կէտ նրպատակին յեռ դրժնէից ինչ վերիժուց։
« Այլ նախ որ այն վրէժք իցեն. երկնից խլունեալ են մահարձանք
Սպառազէն պահանորդաք որ զվայրն առնեն մեզ անմատոյց։
Գունդք նոցա բազում անգամ գան բանակին շուրջ զանդընդովքս,
Կամ թեւովք նրսեմասուեր՝ յուզեն ընդ լայն եւ ընդ երկայն,
Անկասածք յահէ մերմէ, զիշխանութիւնքս գիշերոյ։
Թէպէտ եւ հորդեսցուք մեզ Ճանապարհ ինչ բրնաբար,
Թէ եւ դրժոիք յաւնիցեն ըստ կրնի առհաւարակ
Մրրրկաւ մրուտութեան զերկնից վրճիռ պրղտոբել լոյս,
Մեծ ոսոխ մեր անվրթար մեռացէ յաթոռն անապական,
Եւ արփայենն էութիւն՝ բրծկանութեան անհրպեալ՝
Գիտասցէ նոյնհետայն փրչել մերժել ըզալն 'ի բաց,
Եւ սրրբել յաղթողաբար զերկինս 'ի հրոյն անդընդայեն։
Այսպէս վանեալք, մեռասցէ մերջին մեզ յոյս՝ նրկուն անյուսութիւն,
Եւ գրրգռել հասցէ հարկ ըզյաղթականն ամենազօր
Սպառել թափել ըզզայրուցն եւ կատարած ընդ մեզ առնել.
Փոյթ եւ ջան մեր եղեցի՝ յոչինչ լինել. եղկելի՛ ջան։
Զի ո՞վ ոք, ցաւոտ անգամ, կորուսանել յանձն առնուցու
Զէութիւն զայս մրտաւոր, եւ ըզնորհուրդքս զայսոսիկ՝
Որ շրջին ընդ յաւիտեանս յաւէժական, եւ կորընչել՝
Խորասոյզ անհետացեալ 'ի լայն ընդերս անդ եւ 'ի փոր
Անբստեղծ գիշերոյն, անրզդայեալ եւ անխրլրեր։
Եւ թէ այդ մեզ 'ի բարի պատահեսցէ եւ աջողակ,
Ո՞ գիտէ թէ թրշնամին մեր սրրամրտեալ՝ ելցէ կարօղ
Եւ կամիցի մեզ պարգեւել ըզյուսացեալն ոչընչութիւն։
Կարողէն՝ յերկեայս, իսկ ոչ բրնաւ կամէն՝ անկեղակարծ։
Խորագէան այն հաճեսցի զիւրոյ ցասմանն արձակել սանձ՝ —
Որ 'ի ցոյց սրկարութեան եւ կամ ընդ խաբս ինչ լինիցի, —
Զատելեացէն շնորհել խղճս, 'ի բարկութեան կորուսանել
Զորս պահէ սրրամրտութիւն իւր 'ի պատիժս յաւիտենից։
« Իսկ արդ զինչ արգելու զմեզ, ասէն խրատատուք պատերազմի.
Դատակընքեալ եւ զանձեալ պահիմք 'ի վայ անեղծական.
Յոր կոյս եւ դարձցուք՝ զինչ առաւել կայցէ կրրել,
Զինչ եւս այլ աղետագոյն ինչ մարթիցի ջարչարել մեզ։

« Իսկ զնոսա դ. Թշնամատաքին ուրեմն յաղէաս ինչ բնաւ
Ակամբեալ այսպէս յաստեանսն խորհրդոյ սպառազէն դունդ։
Իսկ զնոսա դ. մինչ փախստեայք եւ սատակեալս հալածականք՝
Վիրաւորք յորոտագոչ եղեռնաւոր շանթից երկնից
Կողկողեալք առ անդունդքս լինել մեզ ասպնջական,
Թշուէին զրժոխքս յայնժամ քաղցր ապաւէն 'ի հարուածոցն.
Կամ մինչ 'ի լեռն հրակէզ կապեալ կայաք՝ անշուշտ էր հիքագոյն։
Զինչ լեցի, եթէ շունչն որ բորբոքեաց ըզտրմոյն հուրս՝
Զարթուցեալ փրչեսցէ յայն՝ եօթնապատիկ գաղանութիւն,
Եւ զմեզ 'ի բոց անդր ամացեալ թօթափեսցէ միւսանգամ.
Կամ թէ որ անդ 'ի բարձունքն թողացեալ վրէժխնդրութիւն՝
Վերրսանն 'ի մեր կրկին վառեսցէ զոչ իւր ատրաշէկ։
Զինչ լինիցի, եթէ բնաւ փեռեկեսցին բարկութեան գանձք,
Թէ զժոխոց հաստատութիւն հեղցէ զսահանս իւր հրահոսանս.
Ահափեաք՝ մնատլուս ըսպառնացեալք 'ի գլուխս մեր
Անկանել յաւուր միում, անկումն ահեղ եւ քաքնելի։
Մինչդեռ մեք խորհիմք, խրատեմք 'ի գուշարած գիւցազնական,
Բոցավառ մրրրիկաւ յափշտակեալ մէն մի թերեւս՝
Ընկեցեալ վարսեալ 'ի ժայռ մի ծայրասուր՝ որս լինիցիմք
Եւ խաղալիկ փոթորկաց՝ որ ըզմեզ գէշ գէշ ճողքիցեն,
Կամ յաւէժ շրջեալ ոչ ոք ոչ ոք ոչ ոք ընկրուզեալ ծով։
Անդ կենաց մեզ կրցորդ կալցուք զհաչիւնս անզգաւականս՝
Անդուլ անկարելիս ընդ դարս դարս յաւիտենից,
Որոց չեք յոյս վախճանի. անդ ծանիցուք զողորմ պայմանս։
« Արդ 'ի յայս եւ գաղտ մարտէ քեզ զձեզ ձայնս համանգամայն.
Զի նենգ կամ ուժգնութիւն զինչ զորեսցէ նրմին դիմակ,
Եւ կամ ոմ այն բաւական հաղս ինչ լարել մրատց նորին՝
Ոյր 'ի մի ական թարթափ սեսանեն աչք իւր զամենայն։
Ի բարձանց երկնից զընեմ եւ ծայր առնեմ զընդվայր խորհուրդս,
Ոչ ինչ ընդհատ մեծազօր 'ի զդէմ ունել ուժոյ մերում,
Քան ճարտար 'ի ցցրել ըզհնարաւոր խելս եւ դաւանս։
« Իսկ կեցցուք այսպէս անարդք, զարմն երկնաւոր կացցէ՞ այսպէս
Ոանակոմ, վրատարանդ, մասնեալ 'ի կոտուս յայս ու՞ 'ի շրջեալս...
Լաւ է այս ըստ իս քան զայլ ինչ յայսմանէ վատթարագոյն,
Որ զն պարտեալ գրատնիմք յանեերեալն ճակատագրէն
Եւ 'ի բուռն հրամանաց, ըզկամս ասեմ յաղթականին։
Ի կրեալ եւ 'ի գործել՝ մեզ զօրութիւն է հաւասար,
Օրէնք որ այդպէս ինչ զայդ սահմանեցին, չէն անիրաւ.
Այդմ՞ 'ի սիրելանէ գայր մեզ արդեօք լինել հասու՝
Թէ 'ի կրուելոյ անդ ընդ ահեղ ոսոխն էաք խորագէտք,
Եւ մինչ դեռ ակնկալեալ չարիքն յերկեսայս կային անյայտ։
« Ծնծաղեմ ես մինչ յանդգնութիւն եւ որ խիզախքն են 'ինիզակ,

Ի նորա դերեւ լինել՝ նրկուն եղեալ եւ զարհուրին
Ցանձն առնուլ եւ տանել՝ զոր քաջ գիտեն թէ հարկ է գալ,
Աքսոր, դիսրով, տարիք, լրկանք, օրէնք իւրեանցըն յաղթողն։
Այս է մեր այժմու վիճակ, զոր թէ ստանձնեմք հրպատակել
Եւ ժուժել համբերատար, եւ դիմամարտ մեր ոխերիմ՝
Ո՛ գիտէ՝ քաղցրացուցցէ ժամանակաւ ըղբարկութիւնն։
Եւ թերեւս յերեսաց իւրոց յայսչափ մեծ հեռատան
Ձերեւեալ դրժոյրհիք, ոչ էաւ 'ի մեզ ինչ խորհեցցի,
Շատ համարեալ զպատուհասն յորում եւ կամքըս պատժաւոր։
Հրդեհրս բոցակիծ մեղմացցի մեզ այնուհետեւ,
Եւ թէ իւր ոչ էրս շունչ ըզբոց տրին արծարծեսցէ,
Պարզագոյն յայնժամ ընուիթիւնս յաղթող դրացի դրժնէ շոգւոյն,
Կամ թէ յայն տոնորեալ՝ զգայցէ ինչ ոչ յետ այնորիկ,
Կամ այլայլեալ հուսկ ուրեմն ըստ խառնուածոյն եւ ըստ գոյին
Եւ վայրացրս նրմանեալ, ընտանեբար ընդելացցի
Ընդ հրաբորբոք առչրմանս որ 'ի խոյթիկս մնասցէ թափուր։
Արհաւիրքս 'ի քաղցրութիւն, խաւարս 'ի լոյս փոխարկեսցին։
Թող ըզյոյսն՝ որ անընպատ սահանք աւուրց հանդերձելոց
Գիտասցէն մատուցանել մեզ փոփոխմունս եւ յաջողուածս
Փոխարէն նեղութեան երկայնամիտ ժուժկալելոյս։
Զի արդի բաժին մեր այս՝ յերանութեան կայ կողմանէն,
Թէպէտ եւ անբարի, սակայն եւ այլ յոռատցի ոչ,
Թէ միայն մի՛ մեք մեզէն գլեսցուք յանձինքս մեր չարիս։»
ԲեՀլար այսպէս 'ի խելքս բանաւորս կերպարանեալ՝
Թեքագրեր անարդ հանդիստ, նրբաստութիւն խաղաղաւէտ,
Եւ ո՛չ թէ հաշտութիւն։ Ըզկնի Մամոնն բարբառեցաւ.
«Պատերազմ տամք — թէ միայն առողջ խորհուրդ է պատերազմ—
Ցընկենուլ զերկնից աքքայն կամ հասանել հին իրաւանցս։
Ընկենուլ զաքքայն երկնից է մեզ արդեօք խրախուսելի,
Թէ յողդողդ բախտին ներբ Ճակատագիրն յաւէժակայ,
Եւ թէ Վիհն հինաւուրց կացցէ վիճիս այս դատաւոր։
Առաջնոյն մնասի յոյս՝ ցուցանել զմիւսն եւս ընդունայն.
Իսկ գուցէ՞ ինչ մեզ տեղն յարձականիսս երկնից սահմանս՝
Մինչ չեւ յաղթահարեալ զամենիշխան պետն երկնաւոր։
Գրեսցուք՝ թէ առ խոստումն ըզգծնամիտ հնազանդութեան
Ողբեալ, ներողամիտ գրտանիցի բոլորեցուն։
Որ՞ն աղէ երեսաք անաւագեալքս կարիցեմք
Կալ առաջի եւ ըզխրոխտ հրամանն առնուլ սատակապահանք,
Ի մերմունջս օրհնութեանց փառաբանել զաթոռ նորա
Եւ բրնի ալէլուս աստուածութեան իւրում երգել,
Ուր նա ինքն իշխանաբար նրստցի մեր տէր նախանձելի,
Ուր սեղան իւր բուրեսցէ անմահութեան հոտ անուշից

Եւ ծաղկունս անմահութեան, զծառայական մեր պատարագս։
Այս լեցի մեր սակ յերկինս, եւ փափկութիւնք մեր՝ այսոքիկ.
Ո՛վ տաղտուկ յաւիտեան՝ ծախեալ այսպէս հանապազօր
Առելոյն 'ի նուէր եւ 'ի պաշտօն երկրպագու։

« Մի ապա նշիրարեսցուք շոգել շրթել ուժգին զայն ինչ՝
Որ կամաւ իսկ մատուցեալ՝ չէ արժանի 'ի դատեալութեան,
Ի նոյն իսկ 'ի յերկինս, ըստրկութեան պատիւ շքեղ։
Այլ 'ի մեզ խընդրեսցուք՝ 'ի մեզ յաւէտ՝ ըստեր բարին,
Մեզ 'ի մեր կեցցուք դոյց, թէ եւ յոյս խոր անդունդս, ազատք,
Ոչ ումեք պարտականք համար տալոյ, եւ լաւ ընտրեալ
Զաղատութիւն խիստ քան զթեթեւ սրտիկոյ փառացոյն սամեռէս։
Այդ յայնժամ մեր մեծութիւնս երեւեսցի ակնյանդիմանն,
Յորժամ փոքրութիւնք մեծամեծս ինչ հայթայթեալ ստեղծանիցեմք,
Յորժամ 'ի վերնասուէ հնարեալ զոգուտ 'ի վեր բերցուք
Եւ վիճակ մի բարեբաստ 'ի ձախողակ պատահարէն,
Յորժամ՝ ուր եւ դէպ տայցէ՝ 'ի կախ մրտեալ մեր ընդ ջարին՝
Ի վերջաց հանցուք զհանդիստ երկայնամիտ աշխատութեամբ։

« Իսկ արդեօք զարհուրիցեմք ինչ յաշխարհէս խոր խաւարի։
Ո՞չ բաղում անգամ երկնից ամենատէրն իսկ հաճեցաւ
Թանձր 'ի թուխ բնակել միգի՝ տատանց ըստուտսին նուազելոյ,
Եւ ըզմեծ վայելչութիւն մրեթոյն պատել շուրջ զաթոռուն,
Ուստի խոր մանչէն որոտք միահամուռ սրտամրտութեամբ,
Եւ երկինք իսկ դրժոխոց յայնժամ թրւին նրմանեալ ենն։
Որպէս նա զմեր դիշերոյ նրմանութիւն օրինակի,
Զկարենք եւ մեք ըստ հաճոյս տրպաւորել ըզլոյս նորա։
Յամայի երկրիս ծածկեալ կան գանձք, ոսկի եւ ագամանդ,
Ի փայլել ըզնոցա փառս՝ արուեստս է մեր եւ ճարտարանք.
Եւ զինչ առաւել երկնից 'ի դէմս ածել կայցէ։
Ցանկանքս իսկ յերկարել ժամանակաց դարձցին 'ի բնոյթ,
Եւ տոչորիչ բոցս յայժմու սասակութենէն 'ի մեղմութիւն.
Արար մեր 'ի նոցայն փոխոխելով անվրէպ հարկաւ
Առ 'ի մէջ փարատեսցէ զկիրըս ցաւոցըս կրտատանաց։

« Այսուհետեւ ամենայն ինչ՝ 'ի խորհուրդ խաղաղութեան
Ըզմեզ հրաւիրեն եւ յօրինել կարգ անխախուտ։
Ի քընին մրացուք թէ իւ խցեմք կարօղ յանկասկածի
Մերովանն ըստ մարթելոյ մեզմել զայժմու մեր երաշխէպս,
Ուշ եղեալ յոր ինչ եմքս, եւ 'ի տեղիս ուրանօր կամքս,
Ի սպառ զմարտին թօթափեալ խոնձոնս 'ի բաց. իմ այդ են միտք։ »

Այն ինչ ըռեալ 'ի խօսիցն՝ յարեաւ մանչէն 'ի ժողովին.
Որպէս 'ի խոր մինչ անձաւս մրուտս հողմոց բեկանին ձայնք,
Որ զդիշերն ամենայն զհամատարածն ուռուցին ծով,
Եղեւեղք կերկերաձայնք ճօճեն զնաւազն ալքնաջան՝

Ոյր նաւ մերկեալ կամ կուր ընկէց բախեալ խարիսխ 'ի խորշ ժեռոտ.
Նոյնդուսակ Ճայթիք ըզհետ եղեն բանիցն Մատենի,
Եւ խօսքն հաճոյ լինէին 'ի հաշտութիւն համոզակերք։
Զի երկրորդ մարտի հանդէս երկիւղագին էր քան զգրժոխս
Ոգւոցն ապրստամբից սարսափելոցն 'ի կայծականց
Եւ 'ի սրոցն միքայէլեան որ դեռ 'ի սիրտսըն ապդէին։
Ոչ սակաւ եւ զանգրնդոցն խղճ լինէին կանգնել զաթոռ՝
Որ խելօք եւ հոլովմամբ ժամանակաց մարթիէր յառնել
Նախանձորդ ընդդիմակից երկնաւորի դահուն հանդէպ։
Իբրեւ այդմ ամենայնիդ ըզգաստ եղեւ Բէէլզեբուղ, —
Զիք ոք բաց 'ի Սատանէն 'ի բարձրագոյն ելեալ պատիւ, —
Յոտն եկաց մեծաշուք եւ զգօնական կերպարանօք,
Եւ 'ի կանգնելն թուեցաւ արքայութեանն հաստատեստ սիւն։
Խրնամք հասարակաց եւ անդաձմունք յիւրրն Ճակատ
Խոր էն գրոշմեալ, եւ խորհուրդ իշխանական 'ի շրքեղ դէմն
Երեւէր դեռ եւս, թէպէտ եւ աւերակ եւեթ էին։
Կաց յոտին՝ զուսքս իւր ցուցանելով առլանդական
Բաւականս 'ի բառնալ ըզբեռն հրզօր արքայութեանց։
Աչքն մոգէն զունկընդիրսն, եւ 'ի խօսելն գերէ զուշ
Հանդարտիկ որպէս գիշեր կամ միջօրէ ամարայնոյ. —
« Ամոռք եւ տերութիւնք իշխանապերճք, մանկունք երկնից,
Արփայեն զօրութիւնք, թագոյնք ուրեմն զայս անուանս
Եւ փոխեալ ըստ զուս յորջորջեցիմք պետք զրժոխոց։
Զի հաճոյք ժողովրդեանս հաւան թուի կալ ասասնօր
Եւ ասէն կառուցանել արքայութիւն մի բարդաւաճ.
Անշուշտ՝ յանուրջս մեր. եւ միթէ ոչ իցեմք տեղեակ՝
Թէ երկնից արքայն զտեղիս զայս 'ի զընդան մեզ հրամայեաց,
Ոչ յանքոյթ ապատան՝ ուր ոչ հասցէ բազուկն հրզօր՝
Զի կեցցուք ազատօրէն յերկնից 'ի բարձրր հրամանաց
Ի նոր ուխտ ընկերչակեալք առ 'ի հեճուկս իւրում դահուն,
Այլ 'ի կալ, թէ եւ հեռի յիւրմէ 'ի դուժ խիստ գերութեան
Ընդ լծոմ որ անփախուստ պահի գերեալ իւր խուժանին։
Իսկ նա ինքն, անշուշտ լերուք, յերկնից բարձունս կամ խոր յանդունդս
Առաջին եւ վերջին տիրեսցէ միշտ, միայն իշխան,
Մերով վատարանքութեամբս ոչ կորուսեալ ինչ 'ի թագէն.
Այլ դրժոխոցս 'ի վերայ կարկառեսցէ զիւր դաւազան,
Եւ ցըսով երկաթեաւ իշխեսցէ մեզ զոռոզահար,
Զոր օրինակ եւ ոսկւոնն երկնի բնակչաց թագաւորէ։
« Եւ էր ակուսքս 'ի խորհուրդ խաղաղութեան եւ կամ կրուոյ.
Ոչ ահա կացաք 'ի կռիւ, եւ վանեցաք յանդիման կորուստ։
Զեւ է ուրուք հաշտութեան խընդրեալ դաշինս եւ կամ ժրտեալ.
Զինչ գերեացքս շնորհեսցի մեզ հաշտութիւն, քան թէ բանտ խիստ,

Փուքք եւ պատիժ պատուհաս ըստ հաճոյից կամաց իւրոց։
Եւ մեք զոր փոխարէնս ընձեռիցեմք այնմ հաշտութեան,
Բայց զոր ունիմքս 'ի ձեռին, թշնամութիւն եւ ոխութիւն,
Անողոք տուելութիւն, եւ վրէժ քինու՝ թէպէտ եւ յամս,
Այլ ցանգ եւ հանապազ նրվին 'ի դաւ դաշնաւորեալք,
Ի հնարել՝ զի նուազագոյն քաղեսցէ հունձս աշխարհական,
Եւ մի յոյժ խընդասցէ յոր նիւթէն մեզ դրժնեայ տանջանս։
Ոչ պակաս մեզ պատեհ, եւ ոչ երբեք հարկ լինիցի
Վանդաւոր արշաւանաւ ասպատակել մինչեւ յերկինս,
Որոյ պարիսպք բարձրամուրք 'ի յարձակմանց զանգիտեն ոչ,
Ոչ 'ի պանտեղ պաշարմանէ, ոչ յանդրնդոցս գարանաց։
« Զիցէ հնար՝ գիւրապոյն ինչ գրատանել ձեռնարկութիւն։
Եթէ հին եւ կանխասաց աւանդութիւն երկնից չէ սուտ,
Է տեղի մի, այլ աշխարհ, բընակաւոր երանաւէտ
Նորակերտ արարածոյ՝ զոր ՄԱՐԴ անուն ասեն կոչեալ։
Զայսու ժամանակաւ ելցէ ստեղծեալ մեզ հանդունակ,
Թէպէտ եւ փոքր եւ խոնարհ ազնիւութեամբ եւ զօրութեամբ,
Բայց առաւել յանին առեալ որոմ իշխէին անդ 'ի բարձունս։
Այս են կամք Մեծազօրին յաստուածախուսքիս բարբառեալ,
Հաստատեալ եւ երդմամբ՝ որ գոլացոյց վերինից կամարս։
Ամենայն միտք եւ խորհուրդք մեր յայն 'ի կողմ անդր ընթացցին,
Ուսանել՝ զինչպիսի բնակեն յաշխարհն այն արարածք,
Զինչ բնութիւն, որ կերպարանք եւ յինչ ջնորհս զարդարեալ,
Որպիսի զօրութիւն նոցա եւ կամ արկարութիւն,
Ուժմոլ, եթէ նենգաւ ընկեցեմք յայնքս գամագիւտ։
Թէպէտ աղխեալ են երկինք, եւ վերհապէտ իւր հրամատար
Անցեալ բազմի աներկիւղն 'ի զօրութիւն անձին իւրոյ,
Հանդգրնուն այն նորագործ թերեւս ելցէ մեզ անխափան
Ի ծայրս ուրեք սահմանաց արքայութեան ինքնակալին,
Եւ թողեալ 'ի բնակչացն իւրոց եւեթ պահպանութիւն։
Անդ ո գիտէ մարթասցուք հանել 'ի գլուխ գործ մեծաշահ
Յեղակարծ գիմեցմամբ 'ինեքքս անկեալ հրով դրժոխոց
Աւերել աղարտել զարարչութիւնքն բովանդակ։
Եւ կամ ըզբանամբ զայն արկեալ իբրեւ ըզմեր ինչ բանացուած՝
Մեզ նրման վրատանդիս հանցուք զանգոր ժառանգաւորսն.
Եւ թէ ոչ, ըզմեզք ածցուք, մինչ Արարչին դառնալ յոսոխ
Եւ սարրջացեալ իւրով բազկաւ ըզյօրինածն իւր սատակել։
Անցանէ այս զանցանէ քան զՀատարակ վրէժխընդրութիւն,
Եւ կարձէ զյաղթողն ըզրնմբաութիւն ընդ մեր ձաղանս,
Եւ մեզ ծագէ խընդութիւն առ 'ինորուն զրընդրդմանէ,
Յորժամ որդիք իւր սիրուանք, դամ մ 'ի տանջանս ընդ մեզ հոսեալք՝
Անիծցեն զաղկաղկ ծընունդն, ըզբախտ թառամ՝ խամրեալ երագ։

Տեսէք ի՞նչ ինչ արժան 'ի Հրգնութեանս գալ ասպարէզ,
Թէ ասուէն 'ի խաւարիս կալ ընդդէմ ճեալ կարկամ կրծիկ,
Եւ նշատել անընչանալ ցընորական ալքայութեամբք։»
Օրինակ զայս Բէլզեբուղ արկ ըղհրամայրսըն դիւահոս,
Զոր նախ Սատանն խմացեալ՝ եւ էր ցուցեալ փոքր 'ի շատէ։
Զի յուսէ՞, քայց 'ի բոլոր չարեաց հօրէն մարթէր բըղխել
Խորհուրդ այսպիսի խորամանդեալ դրժնեութեան,
Տակակոտոր բըրել զմարդկան զարմ, եւ զդրժոխս յերկիր խառնել։
Եւ զայս ամենայն՝ հեծուկս առնել մեծ Ադարչին։
Այլ այս արհամարհանք գիւաց՝ 'ի փառս իւր յաւելցեն։
Հաճոյ յոյժ յանդուգն հընարքն 'ի դրժոխոց գրատաւ ստեան,
Զուարթութիւն փայլեաց յերեսս ամենեցուն եւ ընտրեցին
Միախոհ կամաց ձուլիւք։ Ըստ բանին թէր առ Բէլզեբուղ։ —
«Լաւ վարկեալ քաջ կընքեցէք զերկայն պայքարս, ով դից կաճառ,
Եւ մեծ իմն, ըստ արժանի ձեր մեծութեանդ, ընտրեալ կալայք,
Որ 'ի խորոցս անդընդոց բարձրացուցէք զմեզ միւսանգամ՝
Ընդ հենդրս բախտին՝ հուսալ անդր 'ի յարկ մեր վաղեմի։
Ո՛ գիտէ, 'ի լուսեղէնսն մատուցեալ մերձ 'ի սահմանս
Հանդերձեալք զնու զարդու՝ 'ի դէպ ժամու հինիւ դառթմամբ,
Եւ մըտեցն 'ի բուն յերկինս յոյս մեծ կայցէ յաջողութեան,
Կամ բնակելոյ գէթ անշուշտ 'ի մեղմախառն խրն դաւառ,
Ոչ անտեսք յերեսաց գեղածիծաղ լուսոյն երկնից։
Ընդ նըշոյլս արփւոյն ծագման ազատեսցուք 'ի խաւարէս,
Քաղցրասիք եւ հեշտաշունչ օդք բուրեսցին զևբեանոյ ռեաին
Հասանել ապաքինել զլափլեղ բոցոյս ըզկիզեալ խուռ։
«Այլ նախ զմի առաքեսցուք 'ի նորաշէն աշխարհին գիւտ.
Զմի 'ի ճահ եւ բաւական 'ի մեծ ձեռնարկդ այդ ընտրեցեալք,
Ո՞ր ոտք 'ի մութ յանկատակ անդունդս անհուն մրխեալ թափառ՝
Ընդ խաւար շօշափելին գրացէ զանկոխ զեւբ ճանապարհ.
Կամ ո՞ զթռիչն արձակեսցէ զոդապարիկս անխոնջ թեւօք
Վերամբարձ 'ի վերայ լայնածաւալ վախուտ վըհին,
Մինչեւ երթեալ ժամանէ 'ի կըզգի անդր երանական։
Ո՞ր արուեստ, զի՞նչ զօրութիւն անդ բաւական գրացի նըմա,
Կամ ո՞ր փախուստ գաղտագողի անցուցէ զնա յապահովեալ
Ընդ սպահակաց խուռն ամբոխ ու՞նդ յաքնաթիւ բանակեսեղս
Զբաւարթնոց հրեշտակաց շուրջանակի պահարկելոց։
Ասա նըմա պնոյ լեցին ըզգուշութիւնք իւր համբրէն։
Ոչ սակաւ եւ մեզ այժմիկ հանձարոյ պէտք են յընտրութեանս,
Զի վերջին եւ բնաւ յուսոյս բեռն՝ յոր յըղեմքս ապատան կայ։»
Զայս ասացեալ բաղմեցաւ, աչքն 'ի վարանս ակընկալեալ,
Եւ մընայր թէ յառնիցէ ոք օժանդակ կամ դիմագարձ,
Կամ որ զանձն յառաջ տայցէ 'ի վտանգաւոր բախտին հանդէս։

Կարկեալ նշանին համբէն 'ի վլուանդին խոր քննութիւն,
Եւ այր այր հիացեալ՝ կարդայ զլաքուն իւր յայլոց դէմս։
Ցընտիր ընտիր 'ի ծաղիկս երկնամարտիկ ախոյենաց
Ձիշիկ խընդրել զոր կամ յանձն առնուլ միայն զահեղ ուղին։
Մինչեւ հուսկ յեռոյ Սատան, զոր վեհաւէտ փառացին շուք
Էր յայնժամ ամբարձեալ գեր 'ի վերոյ իւր համհարզից,
Պեռական դառողութեամբ սանքացեալ յիւր մեծ քաջութիւն,
Խօսեցաւ հանդարտօրէն եւ անվեհեր օրինակ զայս։

« Ա՛Թոռք արիւնականք, երկնայեղիկ զարմ եւ զաւակ,
Ցիրաւի կամք պակուցեալ եւ պապանձեալ, Թէպէտ անահ։
Ձիդ եւ խիստ է Ճանապարհն որ 'ի դժոխոց հանէ 'ի լոյս,
Բանտս ամուր, եւ ահագին ամենածախ հրոյս կամար
Ինքնապատիկ պատի զմեզ, եւ դրունք հրաշէկք ադամանդեայք
Առաջի մեր ամրափակք՝ խընուն 'ի մէնջ զելս ամենայն։
Ա՛նցեալ ընդ նոսին, թէ հնար ումեք է անցանել,
Ա՛նտիպար գիշերոյն ունայնութիւն անդընդախոր
Լայնաբաց բերանացեալ՝ կրլեալ ընդա եւ ըսպառնայ
Բնաջինջ կորուսանել զսուղեալն 'ի վիշն անկերպարան։
Ճողոպրեալ ընդառեան անդուստ յանծանօթ կողմ ինչ կամ աշխարհ,
Զինչ մինոյ նրմա։ զանխուսել վլուանդք, փախուստ տաժանելի։
Ա՛յլ իմ չէր, առեներակք, զահուս այսմիկ ինչ պատշաճեալ
Ինքնակալ շքեղաշուք եւ քաջազին արքայութեանս,
Թէ տաղնապ կամ թէ վլուանդ առեռն ընտրեալ օգտի բաղմոց
Բաւական լինէին հարթուցանել զիս 'ի դործոյն։
Ա՛ւ ինչ յանձն էր առնուլ պատիւ եւ շուք արքունական։
Ընդհարժարեալ յիշեալոյ՝ եւ խորհեցիմ ըստանձնել յիս
Ըզմեծ եւ զծանրագոյն մասն վլուանդից եւ պարծանաց,
Որ անկ է իշխողին, եւ այնչափ եւրս վայելուչ,
Որչափ ինչ գեր 'ի վերոյն եկեալ բազմի քան զայլս 'ի բարձ։

« Արիք արդ, Ա՛Թոռք հրաշալք, երկնից զրմեալք, Թէպէտ անկեալք,
Երթայք հնարեցարուք 'ի տանս՝ ցորչափ տուն մեր է սա,
Ի՛ւ մեզմէ կարէք զաղէտս եւ ըզդժոխս հանել 'ի դիւր,
Թէ ելէ խնամք կամ բրժժանք 'ի խափանել կամ 'ի թոռել
Կամ յոլոզել ըզկրատանս տառապագին օթեւանիս։
Մի դրլայք հրսկել ընդդէմ դուռ թշնամւոյն որ արթուն կայ,
Մինչդեռ իմ սահեալ 'ի տար՝ յարիւնրս սեաւ ուէրածին՝
Գուն 'ի գիւտ գործիցեմ հասարակաց մեր փրրկութեան։
Յասպարէզ այսր ընթացիցս ոչ զոք ելցի 'ընդ իս միջամուխ։»

Ինքնակալն յայս բան յարեաւ՝ կարձեալ 'ի սպառ զոլատասխանիս,
Կասկածեալ խնամութեամբ՝ գուցէ եւ այլ պէտք խիզախեալ
Ա՛ւ յիւրմէ խրախուսելոյն, մնաչիցին յանձն առնուլ այժմիկ
Յորմէ նախքն ասրտեան, ոչ յերկուացեալ թէ մերժեսցին։

Եւ ապա նախանձընդդէմ ինչ թշուառին դէթ 'ի կարծիս,
Դիւրագնի ժառանգեալ ըղմեծանուն համբաւուն շուք՝
Զոր ինքն 'ի փոխարէն բիւր վըտանգաւքն ըմբոշխնիցէ։
Բայց ոգիքն ապըստամբք ոչ ինչ պակաս զարհուրելին
Ի ձայնէն որ սաստեաց արդեալ զնոսա, քան 'ի գործոյն։
Եւ նովին ինքեանմբ հանդերձ յարեան կացին միանդամայն։
Զոր յարուցին անդ խօշնուն միահամուռքն կանգնելով
Թընդից 'ի տիպ գոյր որոտման որ 'ի հեռուստ լինիցի լու։
Պատկառոտ մեծարանաւք զօրավարին պատեալ երկիր՝
Աստուածակերպ բարձրացուցին զինքն հաւասար Բարձրելոյն,
Որ բարձրըն է յերկինս ամենեցունց գեր 'ի վերոյ։
Այլ եւ յայտ խակ արարին 'ի գովութեանցն դըրուատիս
Զայրդ նորին, զի մոռանայր զանձն 'ի փըրկիտս հասարակաց։
Զի ոգիքն անարգութեան չէն յամենայն բարեաց թափուր,
Զի մի՛ չարք պանծացին ընդ առ աչք գործս 'ի յերկրի՝
Յոր ձրգէ անափառութիւն, կամ գաղտամեռ պերճութեան սէր
Շըպարեալ ըստքոլէ 'ի սին սընդոյրըս նախանձու։
Այսպէս յանդ եղեն նըսեմ եւ զաղվաղվուն խորհուրդք նոցա՝
Խաղալով խընդալով 'ի գլուխն իւրեանց անզուգական.
Որպէս յորժամ 'ի ծայրից լերանց ամպրոսպք աղջամըղնուք
Եղեալ տարածեալ, մինչ հիւսիսակ նընջէ 'ի քուն,
Կուտակեալ պատին ծածկեն ըզզուարթաղոյս երեսս երկնից.
Մինչդատարրքն բնութիւն հոսէ յերկիր մառախլատպատ
Ըզլեռնից կամ զձեան տարափ. խակ թէ յանկարծ արեւ պայծառ
Երկայնէ 'ի քաղցր ողջոյն ըղճառագայթս երեկորին,
Դաշտորայք կենդանեանան, հաւք ըղնըւագքն նորոգեն,
Եւ հօտից հոյլք 'ի բառաչ ըզցընծութիւն պատմեն զնուրեանց՝
Ըզբլուրս եւ ըղհովիտս առհասարակ հընչեցուցեալ։
Մարդկան ամենք երեսաց. 'ի դաշն անշարժ եկեալ յարի
Դեռ ընդ դեռ դատապարտ, մարդիկ եւեթ բանապաճոյձք
Յամենայն արարածոց՝ ոչ ինչ մարթեն միաբանել,
Մանաւանդ զի եւ զյոյս զաստուածատուր ունին ընդհաց։
Հաշտութիւն փոխէ Աստուած, նոքա կան յոխս, 'ի հեռ, 'ի կռիւ.
Անողորմ մարտիւ մրրցեալ վանդեն զերկիր՝ միմեանց յեղծումն,
Իբրեւ այն՝ թէ — որ 'ի կապ սիրոյ լինել պարտ խակ էր մեղ —
Ձեցէ մարդոյս բաւական դըժոխաշնեալ գունդն ոխակալ
Որ ըզցայգ եւ ըզցերեկ տըքնին համակ յիւր սատակումն։
Իբրեւ այսպէս լուծաւ անդընդայինն հոլեալ երասա,
Եղեն կարգաւ՝ դըժոխոց ատենակալքն մեծազօր.
Գնայր 'ի միջին իշխանքն մեծ՝ իբր ախոյեան երկնից յատուկ,
Ըստ նըմին եւ անդընդոց զարհուրագին սանդարապետ։
Ըզնովաւ ահեղաշուք աստուածատիպ վայելչութեամբ

Քրովբէից հոյլք բոցեղէն պարուն ակեալ շուրջ պար առնուն
Դրոշմաւոր դրօշու դրօշու եւ ահաւոր կազմեալ զինուք։
Յայնժամ հրաման եղ հարկանել յալքուն ձայն փողոց հրաչակ
Զընտրութիւնքն զայն ըզմեծ յեղս ակրմեի հրապարակին։
Ընդ ջրս հողմս ջրք քերովբք թեթեւք առնուն անդ 'ի բերան
Ըզպրղնիձն գոչաւոր՝ զորոյ գոռումն ահագնագղորդ
Քարոզէ թարգմանօրէն պատուիրակին ձայն բարբառոյ։
Ապրնդոց սանդարամետք լուան 'ի մեծ զայն հեռաստան,
Եւ բանակն դրժոխոց միահաղոյն կըրկնեաց ընդդէմ
Աղաղակ որոտընդոստ եւ մեծամեծ կայթս հրաձուանաց։
Ամոսի դիւր դրտեալ ոգւոց՝ եւ ինքնապանծ սնոսի խրախոյս,
Գունդք լաստեալք վարատեցան, եւ անձնիւր դեւ վարկպարաղի
Ալ ընդ այլ եմուտ շաւիղ ըստ հաճոյից կամաց իւրոց,
Կամ յոր յախուռն ընտրութիւն ըզստամանեալն առեալ ածէր։
Գընան յո թուի հաւաստի հանգիստ նօթեալ մերացն 'ի ծուփս
Եւ զաղտուկ ժամանն դրլեալ՝ մինչեւ դարձցի դրժոխապետ։
Կէսք ընդ տաւի կամ յօդս 'ի վեր թեւապարիկ կամ թէ սրավար
Հանդիսեն իբր 'ի ալեթեան դաշտ կամ 'ի խաղս ոլիմբական։
Ալք ոմանք զերիվարս իւրեանց հրեղէնս նըւաճեն,
Կամ թեթեւ թռուցեալ կառաք 'ի կիտադրեալ խուռեն վիմ,
Կամ ճակատ յարդարեն ըզհաղմամուտ գումարտակաց։
Որպէս յորժամ յաղթեցութիւն յաւանկայեղց քաղաքանուց
Պատերազմ ըզխռովայոյզ թըւի զերկինս պաշարել,
Գրոհ ընդ ամպս 'ի գոլպար տրուեալ հրոսեն զօրուց բանակք։
Մէն միոյ յառաջապահ զընդի հեծեալք օդախաղացք
Դիմադրաւ շահատակին 'ի վայր զաշէրն խոնարհեալ
Մինչեւ գալ եւ խրոնել ըստուարաձեռն ջոկատից։
Երկինք ծագաց 'ի ծագս արփւոյն՝ շողմամբ զինուցն հրրդեհին։
Եւ կէսք դրժնեադոյնք՝ յանչափ զայրուց տիւփոնական
Պատսառն բրլուրս եւ ժայռս, յօդս հեծանին փոթորկաբերս։
Հաղիւ դրժոխք հանդարտեն ահագնեռանդքն վերդովմանց։
Սոյնգունակ Ա՛ՀԿԻՔԷՍ ՅՆՔԱ՛ԼԻՈՅ դարձ արարեալ
Պրսակեալ յաղթանակաւ՝ սոռ զթունալից հանդերձին զաղդ։
Ա՛ւ ցաւոցն արմատաքի զթեռալ՝ական խրլեաց թեղջա,
Եւ յԻտալ սարոյն ընկէց յեւրիական ծով ըզ՝ հքաս։
Իսկ այլք հեզահամբոյրք 'ի ըլռանիսա մեկնեալ հովիս,
Ի տաւիղսն նրւադեն հրեշտակային հընչմամբ երգոց
Զդիւցային գուսպարածս անձանց եւ զհէք անիսաուութիւն
Կործանման իւրեանց յերկնից՝ պատերազմացն 'ի հրամանէ։
Բողք բառնան զի՝նդ հարկիւ կամ զաշացու պատահարաւ
Արկանէ ճակատագիր զարւորութիւն ազատական։
Մէն մի երդէր առանձինն, այլ դաշնակացն յարմարութիւն, —

Ում նիազ ինչ գոյր լինել յանմահ ոգւոցն դայլայլիկս, —
Ըզդրժոխս ըզբօսուցեալ՝ ածէր զամբոխն 'ի հիացումն։
Այլք 'ի բլուր ինչ մեկուսի բազմեալ՝ 'ի ճառընս քաղցրադոյնս, —
Զի բան պերճ զոգիս դերէ, արուեստականք զըզդայութիւնս —
Բարձրագոյն խօսին խմաստս եւ ըմբնամոց ճառեն պոռոտ,
Ըզկանուխս գիտութենէ, զկամաց Էնն եւ զՀրամանաց։
Հրամանք կապեալք, կամք ազատ, յառաջագէտ միտք տիրական՝
Նոցա բաւիղք են անեալք եւ աղամոլք՝ յոր կորընչեն։
Ըզբարւոյ եւ ըզչարէ փաստ ըզփաստիւ ճարտարմրտեն,
Զերջանիկ եւ ըզթշուառ ըսպառընթաց կատարածէ,
Ըզկարեաց, զանեսիտ ոգւոյ եւ ըզմիտաց եւ զամենոյ։
Հանճար ընդունայն, մտոտեղատեր ճարտարութիւն.
Սակայն հեշտ պաճուճանաք վայր մի թոռլէ զցաւս եւ զտագնապ,
Վասէ զոյս նոցին խաբուս, կամ զերջերիկ սիրասէն զրահէ
Յեռասիտ սլընդութեամբ՝ երբ եռահիւս պողոմատիւ։
Կէաք ջոկ 'ի ջոկ, խումբ առ խումբ եղեալ յանդուգն ասպատակաւ
Հետայոյզ են գըստանել 'ի բացակայս ժամտ աշխարհին
Դեռ մի թերեւս՝ որ կայան ինչ մատուցանէ հանդուրժական։
Ընդ ջորս առաջքս վարեն ըղթեւատուիս ընթացս իւրեանց՝
Դառոթ տըւեալ ըզդարափամբք քառեակ գետոց դրժոխայնոյ
Որ 'ի լեռն հոսեն հրավառ ըզորբխարական զիւրեանց ալիս։
Դարշելին ըՍոկքս՝ վրտակ մահահամբոյր առեւրութեան,
Տըրամագինն Ախերոն՝ խորայատակ թոռիս գետ ցաւոց,
Կոկիւտոս՝ դառն ողբոց ձայն՝ 'ի տխուր ջայլեալ կարկաջուն ջուրս,
Փլեգետոն հրաբոց ուղխիւք 'ի հրոյ հեղեղ մղեալ եռանդն։
Բացագոյն 'ի սոցանէ՝ յամբ եւ ըստին մի հեղեղատ,
Լեթէ գետ մոռացութեան՝ ծաւալէ զիւր նամէտ բաւիղ.
Որ զայն ըմպէ՝ զնախկին պայմանն անդրէն եւ զկեանս իւր մոռանայ,
Մոռանայ զանենդ եւ ըզցաւս, ըզհեշտութիւն եւ զտառապանս։
Զըզի ջրոյս յայնկոյս ցամաք պաղեալ, վայրագ եւ խաւարչուտ,
Մըշտակոծ 'ի մրբրկաց, 'ի փոթորկաց, յահեղ կարկաէ
Որ անհալ կայ 'ի գետնին կարկտակոյտ լեռնահանգէտ,
Նըմանեալ սաւերակաց վաղընջական ինչ շինուածոյ։
Այլուր՝ առհասարակ ձիւն թանձրախիտ, սառամանիք,
Խորխորատ անդընդայնն՝ Սերբոնական ճահճին հանդոյն՝
Որ 'ի մէջ Դամիատայ եւ հին լերինքն Կասիոս,
Ուր ոչքոյն իսկ բանակք անդընդասոյզ ընկղան անհետ։
Օդ ջորուս կիզու սառեալ, ցուրտ ըզհրոյ վրճարէ զործ։
Անդր ընդ ժամս ժամս ոգիքն դատապարտք բոլորեքեան
Բըռնաբար ընդ քարշ վարեալք 'ի հաւճապուրն Խուճապից,
Եւ զետէ զչափ անողորմն առնուն ծայրից դառն յեղյեղմանց,
Ըզծայրիցն՝ որ փոխոխմամբն եւրս քան զեւրս դաժանին։

Ի հրաղէղ անկողնոյ տարեալ 'ի չեղջ տառամանեաց՝
Ուր հատեալ նոցա տպաւի քաղցր արփայինքն ջերմութիւն,
Սարսռան վայր մի անշարժք, պաղեալ ձուլեալ շուրջանակի.
Անսի դարձեալ վերըստին հոսեալ 'ի հրատ անդր ընկենուն:
Յանցանել յերթեւեկսն մակուկաւ ընդ լեթեան կիրճ՝
Սաստկանան նոցա ըղկանք, զի փափաքեալ եւ դուն դործեն
Շրթքել ումեք մի անդ յանցին 'ի ցանկալի ջուրցն յորձանաց:
Ի մի կաթ անձկան զաղէաս խւրեանց եւ զվիշտս ընկրկմել
Յանուշակ 'ի մոռացօնս յական թարթափ անդ առ ափին.
Բայց հրամանք 'ի բաց մոցեն, եւ առ նոցուն ընդդէմ կալոյ
Պահէ զուխսն Մեղուսա՝ Գորգոնական ահընկեցիւք:
Յամենայն 'ի կենդանեաց շրթանց ծորանքն ինքնին տան խոյս,
Զոր օրինակ փախուցին եւ Տանտալեայ 'ի կոկորդէն:
Մոլորեալք այսպէս յարշաւ վարատական եւ վայրապար
Խաժամուժքն ձեռներեց, ահիւ սարսեալ եւ մահադէմ,
Աչք գրժնեհայեաց անդ զառաջինքն տեսանեն
Ըզվիճակն խւրեանց ողորմ, եւ գրտանեն ինչ ոչ հանդիսա:
Հատանեն անցանեն ընդ արխարազդեաց եւ ամայի
Խորաձորս յոգնաթիւս, յոլով նահանգքս ցաւալիցս,
Ընդ բազում սառնասառոյց լերինս եւ շատ եւրս հրեղէնս,
Ժայռս, անձաւս, լիճքս, ճահիճս, անդունդքս, փոսս եւ մահու ստուերս:
Աշխարհ մահու՝ զոր Աստուած յանիծանեն ըստեղծ զայն՝ չար,
Զարին եւ եւեթ վասն բարի. աշխարհ՝ ուր բնաւ մեռանին կեանք,
Եւ կենդանի է բնաւին մահ, ուր եւ ծնանի բնութիւն դրժնեայ
Զամենայն հրեշ եւ ճիւաղ զազրատեսիլ, անճառական,
Չար քան զոր ստեղծ առաստղեն եւ կամ երկիւղ ինչ խմացաւ,
Գորգոնայք եւ Հիդրայք եւ Քիմերունք սարսափելիք:
Իսկ Աստուծոյ եւ մարդոյն հակառակորդքն Սատանայ,
Բարձրամիտ խորհրդոյք բոցալառեալ սիրտ 'ի ծոցի,
Սրաթեւ 'ի դրուներս դրժոխոց դէմ միայնակ եդեալ դընայր:
Է զի'նդ աջ կողմն շրջի, է զի'նդ ահեակքն կաթելն,
Մերթ ըղթեւս հարթ տարածեալ՝ առ անդընդոց քերեալ ծայրիւք,
Մերթ 'ի սլաց սաւառնանայ 'ի գրմբեթարդ կամարն հրավառ:
Զոր օրինակ 'ի ծովու հեռուստ տեսեալ նաւատորմիղ
Կախի'նդ ամպս, եւ 'ի հողմոց զուգօրութեանցն ճեպելոյ
Պարզէ զառագաստն 'ի բենդալեայ կամ 'ի կրղզեաց
Տերնատայ եւ Տիդորի, ուստի թանգարք բերին զհամեմն,
Ընդ ալիս վաճառաշահ եւ'նդ մեծածուն եթոպացւոց
Ի բեւեռ կոյս գնան ցըՍարն՝ յաղթօղք ծովուն եւ գիշերոյ.
Թեւաղգեաց թըշնամւոյն բացուստ հանդոյն թըւի թըռչան:
Երեւի հուսկ դրժոխոց ծիր բարձրացեալ յահեղ կամարն,
Եւ երկոս երեքպատիկ յերիր պղընձի սախտակաց դուրք

Եւ յերկոց երկաթէից եւ յադամանդ երբեակ վիմէ
Կառուցեալք անեթափանցանց, պատանիշափակ պարուսակեալք
Յանծախական 'ի հրատէն որ պաշարեալ պատի զնոքօք։
Անդ առ դուրսն ասսի անսի նրասին կրկին դէմք սոսկալիք.
Մին միջով ջաւ 'ի կին կերպարանեալ գեղապարոյր,
Բայց զաղիր 'ի թեւիսամրեթ յաղթ անհեղեղ եւ լայն պատուածս
Երթայր յանդէր 'ի վիշապ՝ 'ի մնհաբեր զինեալ խայթոց։
Ըզպորտով իւրով զոհմակ շանց դրժոխոց անդուլ անհատ
Ի հաջիւն ահագին Կերբերոսեան խոր հագագայն
Հընչէին ահագնագոլորդ գոյժ եւ կառանչ քրստմընեալն։
Իսկ թէ յանկարծ խափանէր ինչ ընդոսա յաղաղակէն,
Էր նոցա մրտանեալ անդրէն 'ի սոր 'ի ճուապան փորն՝
Երբ եւ կամ լինէր նոցա, եւ կալ դարձեալ անդ որջասոյզ։
Բայց եւ անդ եւս հաջէին եւ ոռնային յանիերեւոյթս։
Աւաւել վայրենիրեսք էին սոքա յոյժ քան ըզշունն
Որ զԱկիլլայն տանջէին՝ 'ի ըզգանալ իւրում 'ի ծոցն
Ի Կալաբրիք բարժանին 'ի Տրինակրեան մբրնչօղ ափանց։
Զեն այսչափ դարշ ուղեկիցք ընդ ցայգացնոր շըրջեալ վըհկի,
Որ հրաւիրեալ թաքթաքուր՝ օդասարեալ գոյ հասանէ,
Հրասուրեալ եւ խանձեալ 'ի հոտ արեան մանկան տղայոյ,
Խաղալիկ վերտեալ 'ի պարս ընդ կախարդացըն Լապտնեայց,
Մինչ լուսինն 'ի մեծ տագնապ առ 'ի նոցուն թաքչի հմայից։
Միւս տեսիլն, եթէ տեսիլ օրէն լցէ զայն անուանել՝
Ում չէին ինչ յայտ անդամք, ոչ խաղաքիք եւ ոչ յօդուածք,
Կամ թէ կոչել գոյացութիւն զըստուերարկերպ ինչ լցէ մարթ, —
Զի բերէր սա յանձին զերկաքանչիւր նրմանութիւնս, —
Սեւագէմ էր զերդ գիշեր, մոլ քան զտասն Կատաղիս,
Ահագին խրբեւ զդրժոխս, եւ ճոճէր տեգ մի սոսկալի.
Կարծեցեալն իւր գլուխ կրբեր զաղքայական թագին տեսակ։
Գայր մերձենայր Սամայէլ, եւ 'ի նրասոյն կանգնեալ ճուապանն
Ընթացաւ նոյնպէս հասզճեալ՝ զարհուրելի 'մին սրընդելով.
Դողացան 'ի քայլափոխս ոտից նորին սանդարամեաք։
Հայեցաւ թըշնամին անպարտելի՝ զարմանալեօք
Թէ զինչ լցէ. ափշութիւն կալաւ ըզնա, երկիւղ ինչ ոչ։
Թող զԱստուած եւ զիւր Որդին՝ անահ զհամայն խոտէ ստեղծուածս,
Եւ Ժըպիրհ արհամարհոտ ակամբ նախ ինքն առ բարբառել.
« Ուստի՞ եւ զինչ լցես դու, ժանտատեսիլըդ կերպարանք,
Որ իշխես, թեպէտ ահեղ՝ խորշոմերես, բերել կանգնել
Զանգեղեայդ ճակատ կըրճիմ ճանապարհիս 'ի դրունսդ յայդ։
Անցանել կամիմ, անշուշտ լեր, եւ 'ի քէն չնընդրեմ օճան։
Ի բաց, կամ թէ 'նդ կառափըն քո հանեմ դիմարութիւնդ.
Ծրնունդըդ դրժոխոց, փորձիւ ուսեալ հրմուս ընկիր

Զելանել 'ի հակառակս ընդ երկնային հոգեղենաց։»

Առ որ էա հոգեդէշն զայրագին պատասխանի.

«Դո՞ւ լցես տիրադրուժ հրեշտակըն, դո՞ւ ձեռներէցն այն
Որ ելոյծ ըզհաշտութիւն եւ զուխտ երկնից՝ ցոյնժամ անքակս,
Եւ 'ի սեգ ստամբակութեան զենուց մարտի՝ զէտ իւր ձըգեաց
Զերիր մասն որդւոց երկնից դաշնաւորաց դէմ Բարձրելոյն։
Վասն որոյ դու եւ նոքին 'ի յերեսաց Էին անկեալք՝
Կայք աստէն դատապարտեալ սպառել զաւուրս յաւիտենից
Ի կրտուարս տանջանաց եւ չարաչար թշչուառութեան։
Եւ դու զքեզ երկնաւոր հաշուիս ոգի, բաժ դրժոխոց,
Եւ դու փո՞ւք եւ խրոխտ շընչես՝ ուր էաս իշխեմ արքայարար,
Նա՝ եւ հորձիցդ յերդիծումն, ուր տերդ իսկ եմ եւ թագաւոր։
Յե՞տս երթ՝ 'ի.քո պատիժ պատուհասիդ, սուտ փախըստեայ.
Յաւել թեւս յերագութիւնդ, գուցէ կարճաք ձեպեցուցից,
Կամ 'ի մի տիպիս հարուած պաշարեսցիս յահ անընդել
Անհնարին տաղնապի՝ զորոյ չկցես առեալ ճաշակ։»

Զայս ասաց տրժգոյն Սատանան, եւ յասել անդ եւ 'ի սպառնալ
Տաքնպատիկ ահաւոր դարձաւ տեսին եւ ձառագէմ։
Իսկ անդուստ ջեռեալ Սատան սրտմտութեամբ՝ կայր աներկիւղ
Ի տիպ վառեալ վարսամի որ բորբոքէ բոցածաւալ
Զասպարէս սոսկալիթիսար Օձակալին՝ յԱրջոյն երկինս,
Եւ 'ի ծամիցն ահեղից թօթափէ մահ եւ պատերազմ։
Երկոքին կըշռեն մարտիկքն 'ի գլուխս միմեանց հարուած մահու,
Աչ խրեանց օրհասաբեր ոչ էաւ կըրկնել հաշուի զզարկուածն,
Եւ զաչացն ահընկէց յիրեարս ըղտեղարն արձակեն.
Որպէս յորժամ կըրկին թուխ ամպ՝ հրձգրդութեամբ երկնից զեղուն՝
Մրըրկալից մրոմրոալով գայցեն 'ի ծով կասբիական,
Ըզտեղի առեալ ճակատ առ ճակատ վայր մի կան 'ի կախ,
Մինչեւ հողմք հընչեսցեն նոցա զընդշան պատահելոյ
Ի մէջ օդոյն ընդ միմեանս 'ի խաւարուտ բախման խրեանց։
Այնպիսեաւ խոժոռ ակամբ բուռն ախոյանքն հային յիրեարս,
Զի դրժոխք եւրս քան զեւրս թաթաւին 'ի խոր խաւար
Ի քաղաքել յուռնից նոցին. ցոյն դիմամարտդ էին նրման.
Զի ոչ մին եւ ոչ միւսն հանդիպեսցին այլ յայսմհետէ՝
Բայց ըզմի եւեթ նրաւոք՝ այսքան հրզօր մեծ թշնամւոյ։
Եւ անդ ահեղ լինէր գործեան 'ի դրժոխոց դղորդումն ոստոյն,
Թէ վըհուէն օձախառն՝ առ դրժոխոց նրստեալ դղրունս,
Որ զդաւոր փականսն ունէր, չէր ահաբեկ կանչիւք վաղեալ
Եւ խարոյց երկոցունց մարտուցելոյն անկեալ 'ի մէջ.

«Զի՞ խընդրէ, հայր, ձեռքն քո 'ի միածին որդւոյ քումմէ.
Զի՞նչ այս քո մոլեգնութիւն, որդեակ, որ զքեզ խրթեալ տանի
Ի գլուխս հօր քոյ զաշտեդ դարձուցանել զօրհասական։

Եւ գիտցիս թէ վասն ոյր. այնմ որ նըստին անդ 'ի բարձունս
Եւ ըղբեւ ծիծաղի զեւրով գերեաւն՝ ում կընքեցաւ
Կատարել որ ինչ ցասումն իւր, զոր կոչէն արդարութիւն,
Տացէ հրաման քեզ, ցասումն՝ որ եկեսցէ օր մի յաւուրց
Զի զձեզ զերկոսեանդ համանգամայն սատակեսցէ։»
Ասաց նա. եւ ժանտաժուտ դըժոխական ցընորքն յայն բան
Առ ըզկայ. յայնժամ Սատան զայս էտ նըմա պատասխանի.
«Այլանդակ ճիչ քո եւ խօսք այնպէս ըզմեզ բաժանեցին,
Զի կառեաւ անդէն բաղուկս, եւ զոր խընդրէն՝ սիրէ ջասել
Տակաւին քեզ արդեամբք. կամիմ գիտել 'ի քէն յառաջ,
Զինչ եղեւ դու երկիրպիդ, եւ 'ի դժոխոցս յայս խորաձոր
Առաջին ինձ յակն անկեալ՝ հիմ հայրակոչ ընկա դու ինձ,
Եւ ընդէր զերեւոյթ պատկերդ որդի անուանեա իմ։
Ես ըզքեզ ոչ ճանաչեմ, եւ մինչեւ ցարդ չէք իմ տեսեալ
Քան ըզդա եւ քան ըզքեզ խոհերական ինչ եւ զաղիր։»
Դարապետն դըժոխոց դարձաւ անդրէն կըրկնեաց առ նա.
«Մոռացար զնա ուրեմն, եւ սոսկալի յաչսըդ թըւիմ
Ես որ յերկինս երբեմն քեզ ջըքնաղագեղ երեւեցայ։
Յառեկի եւ յանգիման սերովբէից՝ քոց դաշնակցացդ
Ի յանդուգն երդումն ուխտի թագաւորին երկնից ընդդէմ՝
Յաւ սատանիկ դառնութեան յանկարծակի հարեալ 'ի քեզ,
Մըթագնեալ եւ շըլացեալ աչքդ 'ի խաւար ողողեցաւ.
Իսկ գըլուխ քո զգայուեալ երագասուր բոց թանձրահոծ՝
Հերձաւ լայնասպատաւ յահեկակողմն քոյ կուսէ։
Քեզ նըման կերպարանաք եւ 'ի պայծառ շուք երեսայ՝
Յայնժամ ըլուսաճաճանչ փայլեալ 'ի դեղ աստուածային
Եղի ես 'ի դիրքնայդ աստուածուհի զինաղարդեալ։
Հիացումն կալաւ զերկնից ոմանցն զենուորութիւնս.
Զարհուրեալ ընկըրկեցան նախ եւ զնա ՄԵՂՔ անուանեցին,
Եւ յետ՝ իբր 'ի հընայս ինչ հայեցան ջարդուշակ։
Այլ փութով ընդելեալ ընդ նա՝ հաճոյ գրաւ նոցա,
Եւ գեղջ խոյ հրապոյրք յետ յանկուցեալ ածին զինեւ
Զիմ առաւել ատելս, եւ զքեզ ինքնին իսկ մատնաւանդ։
Նըկատեալ բաղում անգամ զպատկեր քո յետ ճըշդըրատգոյն՝
Հարար յետ, եւ զայն վայելը ընդ նա գաղանի ճաշակեցեր
Որ զընդերս իմ այտուցին արկեալ 'ի նոյն բեռն ահեցուն։
«Անդ գուժեաց պատերազմ եւ մըղեցաւ մարտ յերկնից դաշտ։
Ոսոխըն մեր հարուստ, — եւ էր ինչ մարթ այլազգ գիտել, —
Տարաւ ջըքեզ յաղթանակ, իսկ հերձուածոյն մերոյ կողման
Մընաց տոյժ եւ տուգանք ընդ ամենայն երկինս երկնից։
Գըլխեվայր դարավէժ յերկնից բարձանց անկան մեր դունդք,
Ի վայր, 'ի խոր յայս անդունդս, ես ընդ նոսին հանուրց հոսմամբ։

Յայնժամ յանձն 'ի ձեռս եղէն փականքս ամուր, սրբեալ պատուէր
Փակ ունել եւ աղխեալ հանապազօր ըզդուրքըս զայս,
Զի մի երբեք ոք անցցէ, բայց միայն ես թէ բանայցեմ:
« Մենաւոր նրստայ 'ի հոգս, այլ ոչ բաղում ինչ ժամանակ.
Առեալ փորս 'ի քէն զբեղուն եւ հեռվհեռէ սնկքացեալ յոյժ՝
Նոր խըզբրանց ամ ըզվորձ, եւ զնայթատուր ծնընդոց երկանց:
Հուսկ ապա ժըպիրհ բոզբոզդ 'ի քէն բըղխեալ՝ զոր տեսանեսդ,
Ուժգին հատեալ իւր ճանապարհ՝ պատառոտեաց զաղխն իմ,
Ոյց յահէն եւ 'ի ցաւոցըն դալարեալ եւ ոլորեալ՝
Յայս դարձաւ ժանդատեսիլս ոչնոյն ատորին մասն մարմնոյս:
Իսկ դա 'ի ծնել ոխորիմն՝ 'ի լոյս եկ էին երեւեցաւ
Ճօճելով զօրհասաբեր գեղարդն իւր սատակչական:
Փախուցեալ ճիչ բարձի՝ ՄԱՀ. եւ յայդ անուն սարսափելի
Դողացեալ դըժոխք հեծեաց՝ կըրկնեաց 'ի խոր անձաւաց՝ ՄԱՀ:
Փախըստեայ երթայի էս, սակայն խուճապդ ըզհետ եմուտ
Տըրփանօքըն շամբեալ, որպէս թըւէր, քան սրընթաւթեամբ,
Եւ սրընթաց քան զնա եհաս ինձ մոր իւրում պակուցելոյ:
Ի մոլի եւ մրծրընեայ շաղապատումն ընդ իս անկեալ,
Ահա յայդմ առեւանդէ հաղողականքդ էլնն հըրեշք
Որ զնեւրս պատին մշտակարկաչ աղաղակաւ,
Որպէս դուդ խակ տեսանես, ժամէ 'ի ժամ նոր յըղացեալք
Եւ ծընեալք ժամ 'ի ժամէ անհընարին խմբով երկամբք:
Երբ կամին՝ դառնան յարդանդն մրտանեն ուստի մնանին,
Կաղկանձեն եւ կրծեն ըզփորոտիս, զնրբանց խրախուտս,
Եւ ապա վերրստին 'ի դուրս ելեալ պաշարեն զնա
Սատկի դողութեամբ, ոչ դուլ դադար ինձ տանելով:
« Նրստեալ աչացս առաջի սոսկալին Մահ դէմ յանդիման՝
Իմ որդին եւ Թըշնամին՝ դրրդեալ ըզբունսդ դրրդրուէ.
Եւ զմայր իւր զնա վաղ էր կրլեալ առ 'ի չգոյէ այլում որսոյ,
Բայց գիտէ թէ եւ ինքեան հատանիցէ վախճան ընդ իս.
Գիտէ՝ զի ընդ նրմա պատառ դառնաթորմի
Եւ թոյն դառնաթոյն՝ եթէ երբեք ժըպրհիցի յայն.
Զի այս կամք ճակատագրին դատավճռաւ է սահմանեալ:
Այլ դու, հայր, քեզ աղդ առնեմ, 'ի մահացու տիդէն փախիր,
Մի 'նդ քո ջինջ պատենաղէն զրահիւք, թէպէտ եւ երկնամուխ,
Ի նանիր յուսացես անխոցելի գընալ ատուստ:
Զի եւ չեք, բայց թէ միայն որ անդ 'ի վեր թագաւորէն,
Օրհասաբեր սրընթերն ընդդէմ ունել ոք բաւական: »
Լըռեաց նա. եւ սուր վերպան անդէն զնրատուն ուսաւ օդուտ,
Քաղցրացոյց զնիզն եւ ուշիմ ըզգօնութեամբ արար դարձուած.
« Դուստր իմ սիրելի, քանզի դու զնա քեզ կամիս հայր,
Եւ ինձ ցուցանես զորդեակս իմ զայս ըզդեղեցիկ, —

Զհեշտութեանցն առհաւատչեայ եւ արբեցաբս յերկինս ընդ քեզ,
Եւ ըղքաղցրը բերկրութեանց՝ որոց արդ դառն է յիշատակ
Յանողոք վերդովմանէս յանդէտս յանկարծ մեզ հասելոյ, —
Գիտասջիր՝ զի ոչ հեռիւ ինչ գամ առ ձեզ, այլ 'ի փերկել
Ի տրխուր եւ յահաւոր պատժարանէդ զերկոսին զձեզ.
Զորդին իմ եւ ըղքեզ եւ զերկնաւոր ոգւոցն երամ,
Որ ըստ արդար երաւանցրս զէն առեալ ընդ մեզ անկան։
Ի նոցունց առաքեալ մրնիմ միայն յայս նոր արշաւ,
Փոխանակ ամենեցուն եղեալ ըզգլուխ իմ 'ի կրշնաւ՝
Երթամ կոխել զանունչ անգունդրս մենաւոր դարշապարօք,
Եւ 'ի խոյզ թափառոտ յուղել յանհուն ունայնութեան,
Եթէ գուցէ՞ ինչ արդեօք ուրեք տեղի կանխասցիկ,
Որ ըստ պէսպէս նշանացն համանգամայն 'ի քնին առեալ,
Ըստեղծեալ ելցէ զարդիս՝ բոլորաշէն եւ ընդարձակ,
Գըրդաբան փափկութեան հրաշակառոյց 'ի ծագս երկնից,
Աստղնչական ուղղաբերձ հասակագեղ արարածոց,
Որ կարդեալ թերեւս ելցեն լընուլ ըզմեր տեղիս թափուր։
Ա՛յլ 'ի բացէ կացուցեալք, զի մի գուցէ խրոնեալ երկինք
Ամբոխիս հարբստայեցց՝ յարուցցէ նոր խմբն ժրխոր։
Թէ այս ելցէ, թէ եւ ինչ այլ գաղտնածածուկ՝ գընամ գիտել.
Մերկացեալ գամ մի գաղտնիքն՝ եկից այսրէն վաղվաղակի,
Եւ տարայց ըզձեզ անդր՝ ըզքեզ եւ զՄահն՝ 'ի բնակութիւն,
Ուր կացջիք յանդորրու, եւ անդ 'ի վեր եւ 'ի խոնարհ
Թեւածեալ լըռելեայն անտեսաբար սուսանեալքք
Ի սիք քաղցրաշունչ խընկեալ 'ի հոտ անուշաբոյր.
Անդ կերիջիք, զմայլեսջիք, ձեզ ամենայն ինչ լեցի յորս։»
Լուա եկաց, զի երկոքին տեսիլքն ուրախ եղեն յանչափս,
Եւ Մահրն սոսկալի կընձռեաց ըզդէմն 'ի ծաղր ահեղ,
Ըստուգիւ առեալ 'ի միտ եթէ քաղցուն լեցի յաղուրդ.
Օրհնեաց ըզվերան ում մընայր աւատութեանն երջանիկ ժամ։
Մայր նորա չարակընձիռն ոչինչ ընդհատ խընդամըտեալ՝
Օրինակ զայս բարբառոյ կալաւ խօսել ընդ հօր իւրում.
«Պահեմ ես ըզփականրս վերապես դըժոխայնոյ
Իրաւամբքս եւ հրամանաւ ամենակալ երկնից պետին.
Նա զիս արդէլ չըբանալ ումք ըզդրունքս ադամանդեայս,
Մահ ամենայն բընութեան պատարաստ ունի զաշտէն ընդդէմ՝
Ամենասած թէ պարտեսցէ զնա կենդանեաց ինչ ուժգնութիւն։
Սակայն զի՞ կայ իմ բընաւ եւ հրամանի վերին ատտից
Յերեսաց այնորիկ որ զնան առեայ ու'իբաց ընկէց
Մընլեալ այսր 'ի խոնարհ 'ի տուեալքս խոր Տարտարոսիս՝
Կալ նըստել ատանօր 'ի չանարդի յայս պաշտամանն,
Ատանօր վրտարանդի, ես երկնաբնակս եւ երկնածինս,

Առատնօր յանկէտ տապնապ խորասուզեալ, եւ պաշարեալ
Արհաւրօք եւ կառանչիւք աղէկերացս իմ ծընընդոցս։
Իմ դու հայր, դու իմ ծընօղ եւ դու ինքնին իմ կենատու,
Բայց 'ի քէն ուր անապրեմ, ուր այլ ուրեք երթայց ըզհետ։
Դու 'նդ հուպ զիս յերանութեան 'ի լուսաձեմ աշխարհն 'ի նոր
Տարեալ հանցես յաստուածոցն հանդերստուէս կենդանախումբս,
Ուր հեշտալից ընդ աջմէ քումմէ յաւէրժ թագաւորեալ
Բաղմեցայց ըստ արժանի քոյոյ գրստեր եւ քում սիրոյդ։»
Ասաց եւ սա 'ի կրչտէն ըզբանալնսն մահաւոր,
Անօթ չարաշուք առհասարակ մերս աղետից,
Եւ ընդ քարշ 'ի դուռն ածեալ զդաղանեղէն իւր քընթրընոց՝
Ի նոյն բառնայ զդրանդն ահագին, զոր ինքն եւ թ կարէր բառնալ,
Եւ ոյժ բոլոր գրժոխոց խախտել ըստ չէր բաւական։
Ապա 'նդ էմն ըզբանալն խառնեալ 'ի յաղխսն պատուածոյս՝
Անաշխատ թափէ զնիգան եւ ըզսողնակս եւ պարզունակս
Յերկաթոյ ձուլածոյս եւ յորձանքար ապառաժէ։
Փեռեկեալ թրուչն անդէն ուժգին 'զոստմանբ յահուր Ճրանչ
Դրժոխոց դուրքն 'ի ծրնանին որոտացեալ յարեկ բոմբիւն՝
Որ զնեբքն խոր խաւարն դրընբրդեցոյց զանդընդոց փաղ։
Մեղքն եթաց ընտոտ, բայց 'ի փակել չեք նորա կար,
Կան մընան մեծաբաց. բանակ մի մեծ թեւաստարած
Խաղացեալ պարզեալ դրօշուք՝ կարող ընդ այնս էր անցանել
Երիվարօք եւ կառօք արձակ արձակ կարգեալ 'ի ռազմ.
Այնպէս լայն էն այն դրունք, եւ բերանոյ հնոցի հանգոյն
Ժայթքեն մրրրկածուփ ծուխ բարդ 'ի բարդ եւ բոց հրաշէկ։
Յաչսն երեւի տեսիլ յանկարծ, ծեր անդընդոց գաղանածածուկք,
Խաւարչտին Ովկիանոս անեղ՝ անչափ եւ անսահման,
Ուրանօր երկայնութիւն եւ լայնութիւն եւ խորութիւն՝
Ժամանակ եւ տեղի՝ հեռակորոյս կան ընկրուզեալ.
Ուր ԳվՀեր անգրանիկ եւ Վ.ԻՀ՝ բնութեանցն նահապետք՝
Պինդ ուռնին անտեսրջութիւն յաւէժակայ՝ խառն 'ի շրջունդ
Անզբաւ մարտամբոխից, եւ շրփոթիւքն պահպանին։
Ջերմն եւ ցուրտ, խոնաւն եւ չոր, անսասանելի ջրք ախոյեանք,
Գուն գործեն միապետել՝ կուտեալ 'ի կռիւ զանկազմ տարերս։
Որ զկողմանցն դրօշուք եւ ըստ գընդի գընդի իւրեանց
Ծանրը զնեալք կամ թեթեւ, սուր կամ թէ բութ, շոյտ կամ դանդաղ,
Խրմբեն զիւրեանց անթիւ խուժան իբրեւ զաւազ Մարմարիկայ,
Կամ հանգոյն մանրամանր հրակէզ փոշոյն Կիւրենական՝
Որ յառնիցէ մարտակից լինել այսոց մաքառելոց,
Կամ կրշնոտ տալ ծանրութեան թեթեւաթռիչ թեւոց նոցին։
Զորով խրնին յոքնաթիւք, առ ժամանակ մի նա իշնէ։
Նըստի Վ.ԻՀն իրաւարար, եւ դատակնիքք իւր խառնակեն

Առաւել քան զառաւել ըմբռռով շքփոթն որով ակրէ ։
Ըստ նրմանէ վէհ դատաւոր բնաւից վարիչ է Պատահար ։
Յայս անարդ անդունդս, արգանդ բնութեան, թերեւս եւ կափա-
Ուր ոչ ծով ամենեւին է, ոչ երկիր, ոչ օդ, ոչ հուր, [ըում, —
Այլ բովանդակն համբրէն, ոյց խառնիխուռն յիրեար շաղեալ
Ի պատճառսն ծնընդական, հարկ է նոցա եւ կրռուել ցանդ,
Եթէ ոչ Արարիչն ամենազօր ածցէ 'ի կարգ
Ըշնիւթսն խաւարինս 'ի յօրինուած նոր աշխարհաց, —
Յայս անարդ անդունդս՝ ուշիմ եւ խորագէտ վերաքն ոսոխ
Կացեալ յեղբր դրժոխոց դէատակն ունի վայրկեան ինչ սուղ,
Ուշ 'ի կուրծս առնէ զուշդոյն, զի զոր հերձուլ կայ չէ խուն կիրճ ։
Ականջք իւր խրլանան յուժգին ձայնիցն եւ յեղծագործ,
Յոչինչ պակաս բրնդանունից, — ըստեծն ընդ փոքր համեմատեալ, —
Քան ըզդուս որոսընդոսաբս փոթորկացն Նոեմովայ՝
Մինչ կանգնէ զանթրնկէց անօթս 'ի բրել զոսան ինչ մեծ ։
Կամ ոչ նայն լինէր դրդրդ՝ երկնի կաւոյդ եթէ փլանէր,
Թէ խլէին խեռեալ տարերք զանչարժ երկիր յիւր սընտակէն ։
Ի թռիչս եւայց նա հուսկ ապա զթեւան 'ի չարք լայն առագաստից,
Զոան 'ի վերայ տրոփեալ գետնոյն եւ յերկնապող սլացաւ 'ի ծուխ ։
Ընդ բաղում ասպարէս՝ ելրեւ 'ի կառս ամպոց վարդեալ՝
Վէրանայ քաջայանդուգն, այլ՝ վաղ զերծեալ բաղմոյն յիւրմէն՝
Դիպի լայն ուռայնութեան, եւ հիացեալ, զուր թեւածեալ
Անկանի որպէս կապար 'ի խորասոյզ բիւր գրրկաչափ ։
Եւ զեռ ցայժմ եւս անկանէր, թէ դրժպատեհ ինչ դիպուածոմ
Բարկացայտ ամպոյ ձայնիւն հրով բորակաւ մրրրկելոյ
Զեր անդրէն միւանդամ նոյնչափ 'ի վեր պարսեալ մղոնս ։
Այս մրրրկի խափուցեալ եկաց 'ի խրուտ ինչ սրկանան
Որում չէին ոչ ծովուց ինչ ախտարակք, ոչ ցամաքի ։
Անդ գոգչես ընկլուղեալ՝ ընդ խակ բնութիւնն անցեալ դընայ
Մերթ հեսի, մերթ 'ի թիս, ոլորն նրմա թիք ուառագաստք ։
Զերդ Կորճառիւծ յանապատն ընդ սար ընդ ձոր ծրմականիսա
Թեւակուռ 'ի կերթ անկեալ սուրայ խընդրէ զԱրիմասպիկ,
Որ մանկաւ շոպեաց յիւրմէ սկողութենէն զոսկեղոյն մրեթերս,
Նոքին փութոյ ալընդութեամբ վարէ վերապէն զիւր ընթացս
Ընդ ճահիճքս՝ վախս եւ կիրճս, ընդ բիրտ տարերս, ընդ սերտ ուանդայս,
Գրլխով, ձեռաք, թեւովք, ոտիւք, 'ի լիւղ գընայ, մրիսրճի,
Ընդ հուն նեղուցս անցանէ, սողուն զեռայ, թրսիչս առնու ։
Նոր ինն հուսկ ապա շրջնդ յամենուստ խուլ խառնակ ձայնից
Ի մրեթից խորոցն հընչեալ՝ ուժգին բախեաց զունկրն նորա ։
Ցայն կողմ ըստեծուն աներկիւղ դարձոյց երեթալ ժաման լինել
Ցինչ եւ է զբրութիւն կամ թէ ոգի խոր անդընդոց՝
Բնակացեալ անդ 'ի չբշուին, առ 'ի ընա զինքն հարցանելոյ

Թէ յորմամ գրացին կողման սահմանագլուխ եղէք խաւարի
Մօտաւորք եւ հուպ առ հուպ 'ի կիցս արփւոյն Թեւակոխեալք։
Եւ ահա Վրէին աթոռ եւ մրթապատ խորան նորա
Յարկեալ անբաւութեամբ տեսաւ զաւէր խոր անդնդովք։
Սեաւ սամոյր արկեալ Գիշեր՝ բազմեալ 'ի գահն առ Վրէին հուպ,
Դուստր էից անդրանիկ, արքայութեանն ամոլակից.
Առ նոքաք Պ'ուտոն, Հատէս եւ ահանուն Դէմոգորգոն,
Ապա Շաւնդ եւ Պատահ, Շրմոթ, Շրմոր խառնախուժան,
Եւ բիւրաշուրթն այլազայն Կագ։— Առ որս Սատան դարձեալ խիզախ.
«Դուք ոգիք եւ զօրութիւնք, ասէ, խորոցս այս անդնդոց,
Վիհ եւ Գիշեր հինաւուրց, զրգամ զբարես թաքնախորհուրդ՝
Ըզծածուկս արքայութեան ձերոյ դիտել կամ թէ խորվել։
Այլ հարկէն անկեալ մոլոր ընդ անապատդ աղջամղջուտ՝
Ճեմքս առ լոյսն՝ ընդ լայնատարածս ձեր աշխարհ զես վարեցին։
Միայն, անառաջնորդ, եւ կորուսեալ ինն աւասիկ՝
Խնդրեմ զկարճոյ Ճանապարհ որ մինչեւ ցայն վայր տարցի զես,
Ուր մրթին սահմանագլուխք ձեր ընդ երկինս հուպ խառնիցին։
Կամ եթէ այլ ինչ տեղի դրաւեալ 'ի ձեր տերութենդ
Հուսկ ուրեմն եմուտ կալաւ արփիաբնակին Թագաւոր,
Յայն նրկրրսի ժամանել ընդ խոր անդունդս իմ Ճանապարհս։
Առաջնորդ լերուք հետոցս, որ թէ ուղիղ հարթ ընթացցին,
Ոչ թէ դոյզն ինչ բերկցեն ձեզ փոխարէնս շայեկանս.
Թէ 'ի դերեւ աշխարհէդ 'ի սպառախստուտ քերքեալ զբրոշոյ՝
Դարձուցից զայն յառաջին իւր աղուութիւն ու'ի ձեր մեկան, —
Եւ ոչ այլ ինչ է եղեալ ուղղոյս խոյ կէտ ընթացից, —
Կանգնեցից անդ վերբստին զհինաւրէին Գիշերոյ դրաշ։
Զեզ օգուտքս այս ամենայն, ինձ վերիժուց քինու խնդիր։»
Զայս Սատանն. եւ զայս նրմա ծերն անիշխան պատասխանել
Եւ խեղաթիւր երեսաք դարձոյց անդրէն պատասխանի.
«Ճանաչեմ ըզքեզ, հիւրդ. իշխանն հրաշք ես հրեշտակաց՝
Որ երկնից պետին նորոգ եղեալ ոսոխ՝ կործանեցաւ։
Ցեսի ես եւ լուայ, զի այն ըստուար զօրաց դրուագն
Զանցանէր լուս փախչաստիս հատեալ զանդունդքս զահագին,
Աւեր յաւեր յաւելեալ եւ խորտակումն 'ի խորտակումն,
Եւ աղմուկ չար շփոթի քան զամենայն խառվ խազմական։
Երկնի դրունք զհետ հոսեցին հաղարաւոր բիւրքս բիւրոց
Գունդագունդ յաղթական գումարտակաց 'ի հալածել։
Յարուցեալ եկի այսրէն՝ բազմել 'ի ծագս իմ սահմանաց.
Այժս հաղիւ բաւեաց բոլոր՝ պահել զսակաւդ որ ընդ ձեռամբս,
Եւ անտի եւքս կրծէ տակաւին ձերդ ընտանի հեռ՝
Որ կնատ զգաւազան իշխանութեան հին Գիշերոյ։
Նախ դրժոիք, զընդանին ձեր, տարածեցաւ անդր ընդ ոտիւքս

Ընդ երկայն եւ ընդ լայն, եւ ասա ուրեմն հուսկ ապա
Երկին՝ երկիր, միւս եւս աշխարհ, կախին վերոյ իմ նահանգիս
Յոսկեւտող կապեալ շղթայ յայն կողմ երկնից ուստ անկան խուսքքդ։
Եթէ քոյդ արշաւան ընդ այս կրթի գնալ Ճանապարհ,
Ձեւ հեռի յայնմմ մարդէ, եւ հուպ առ ոտսդ բուսցի վասնդ։
Երթ, փութա, քանդմունք՝ աւերք եւ կապուտք իմ են կողոպուտք։»
Լքուեաց նա. իսկ Սամայէլ չքկայ բընաւ առնել դարձուած,
Այլ բերկրեալ՝ զի մեծածով իւր դրսանէ եղը ինչ եւ ապառ,
Նորահրատ եռանդեամբ եւ կաղդուրեալ յոյժ ուժ կորով
Սլանայ յանհուն ասպարէսն իբրեւ ըղբուրդն ինչ հրակերպեան.
Ընդ տարերցըն բախս 'ի կռիւ պաշարելոցըն զնուրեւ շուրջ
Ընթանայ զՃանապարհն՝ 'ինեալ անկեալ եւ 'ի վրասնդ
Առաւել քան զնաւն Արգոյ մինչ անցանէր ընդ Բոսպոր կիրճ
Ընդ մէջ քարաժայռից որ ընդ միմեանս բաբախէին,
Առաւել քան զՈդիսեւս՝ որ 'ի խուսեալն 'ի Քարիբդեայ,
Ի շրջելն 'ի միւս կոյս՝ վարէր զնաւն յայլ յորձանուտս։
Այսպէս նա յառաջ խաղայր Ճրգամբք եւ դառն տաժանմամբ.
Ճրգամբք եւ տաժանմամբ, բայց գամ մի 'նդ այն անցեալ ուղի,
Ընդ մարդոյն անկանել՝ զի՞նչ նորագործ անդ կերպարանք։
Մեղք եւ Մահ 'ի խանաթ անկեալ երթեալ ըզհետ նորին՝ —
Այն վերին էր կամաց ակնարկութիւն՝ — հարին յատակ
Լայն եւ կուռ պողոտայի զնաւարային խոր անդընդովքն.
Ոյր յորձանք եռանդնապոյտ յանձին կալան համբերատար՝
Զի կամուրջ մի ահաւոր երկայնանիստ արկանիցի
Ի դժոխոց ցարտաքին ոլորտս ապիւն գընեսի երկրիս։
Դիւրահուպ միջնորդաւս ոգիքն ջաքք դան եւ գընան
Ի փորձել կամ 'ի տանջել զմահկանացուս, քաւ յայնցանէ՝
Զորս Աստուած եւ սուրբ հրեշտակք յառանձին շնորհս պահպանեն։
Հուսկ ուրեմն ըսկըսանի նըւիրական լուսոյն ազդումն,
Եւ նըշոյլ մի յերկնից պարըսպաց ծայր արձակէ ձիգ
Ի ծոց անդր աղջամըղջին գիշերոյն յայդ աղօտածադ։
Անդանօր ըսկիզբն առնուն հեռատահման ընուութեանն առաջք,
Նահանջի Վիշն խբ յիւրոց ամբարտակաց, պարտեալ ոսոխ,
Ընկըրկեալ դոյզն աղմկաւ եւ դուն դղրդիւ ասպատակի։
Սադայէլ ոգի առեալ 'ի վաստակոցն, արդ եւ գիւրով,
Յաղօտանուաղ նըշուլից առաջնորդեալ՝ սահեալ սուրայ
Ընդ հաշտ ալիս, եւ զերդ նաւ մի յամպրոպայ մըրրկածուփ
Ջուանաբեկ թեւակոտոր 'ի հանդրրուան մրտանէ զուարթ։
Յօդագոյն 'ի սին վայրին զթեւաբեն կրշուէ նա զհոլանթեւս՝
Ի հեռուստ եւ պարապով կալ 'ի զընեն հրեղեն արփւոյն։
Ան մեծի նդարձակութեանն անբաւական է յընտրութիւն՝
Թէ արդեօք չորեքկուսի, թէ բոլորակ ինչ լցէ այն։

Աշտարակք՝ բազմագունի ակամբ ՝ինմա, եւ մահարձանք
Ի կենդանի պըճնեալ շափիղ, երբեմըն տուն իւր հայրենի.
Եւ աշխարհս յսակի ջըղթայ կախեալ ընդ օդս անդանօր հուպ՝
Նըման մանու ինն ասաեղ՝ կից ընդ լուսնին երեւելոյ։
Ամբոր յայն կոյս վըքացեալ եղեռնաւոր քինու վըիժուց՝
Ամիծեալ եւ յանիծեալ ժամու՝ հաղճեալ փուլթայ սրավար։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Աստուած Հայր՝ ցուցեալ Որդւոյն զԱստանայ դիմեալ յաշխարհ, եւ գուշակեալ զպարտութիւն մարդոյն, անբասիր կացուցանէ զարգարութիւն իւր եւ զիմաստութիւն՝ ազատութեամբ մարդոյն։ Բայց կարեկցեալ ընդ պատրանս նորա՝ խոստանայ նմա շնորհս թողութեան, սակայն ոչ առանց հաւուցման առարդարութիւն իւր։ Որդին արկանէ զանձն 'ի փրկանս մարդոյն, ընդունելի լեալ՝ քարոզի եւ պաշտի ընդ Հօր 'ի հրեշտակական դասուցն երգովք արուեստականօք։ Հասեալ Սատանայի յարտաքին կամար տիեզերաց, եւ անցեալ ընդ Լիմբոս Ունայնութեանց՝ ժամանէ առ դուրս երկնից, անտի 'ի գօտի արեգական, ուր ծպտեալ դիմաք տեղեկանայ յՈւրիէլ հրեշտակապետէ բնակութեան մարդոյն, եւ անդր խաղայ։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Լոյս սուրբ, ողջոյն ընդ քեզ, անդրանիկ դու երկնից ծընունդ,
Եւ կամ՝ մշտընջենին յաւէտակից դու Ճառագայթ,
Իցէ՞ ինձ անբասիր 'ի դոյն ըղքեզ կարդալ անուն։
Փանղն լոյս է ինքն Աստուած, եւ ոչ բնակեալ յաւիտենից
Բայց 'ի լոյս անմատոյց, 'ի քեզ ապա բնակեաց եւ ելեթ,
Ի քեզ, ծագումն զուարթ անեղական զուարթ էութեան։
Կամ թէ լաւ եւրս սիրես ջինջ արփենի կոչիլ վրտակ,
Ո՞ զաղբերակնըդ պատմեսցէ. քան զարեգակն եւ քան զերկինս
Էիր դու կանուխ, եւ յէական ձայնին բարբառ
Ծածկեցեր որպէս օթոց ըզտիեզերս, որ ելանէր
Ի խաւարուտ յանդընդախոր 'ի ջուրց 'ի դուրս երեւեալ,
Յանապարոյր եւ յանկազմ ունայնութեան ծոցոյ ստացուած։
Խրոխտագոյն թեւոք 'ի տես քո վերըստին այժմ այսրէն գամ՝
Հուսկ ուրեմն աւասիկ 'ի դրժոխոց զերծեալ ըզձէն,
Թէպէտ եւ ընդ երկար 'ի մըթադին վայրն ըմբռնեալ։
Մինչ 'ի թուչս իմ վարեի՝նդ միջին խաւարն ու՝նդ արտաքին,
Ըզվիհն երդեցի եւ ըզդիշերն յաւերժական
Աչլաձայն նուագք մատանց յորսիական 'ի փանդուռանէն։
Երկնային ուսոյց Մուսա զնա յանդրընել յեկեղն մրոյալ
Եւ գալ այսրէն ելանել. դորձ նորացոյց եւ տագնապոյ։
Ճողոպրեալ գամ՝ մի անդուստ՝ դառնամ առ քեզ 'ի քոյդ տեսիլ,
Եւ քո ջահ կենդանարար եւ տիրական լոս արծարծի։
Իսկ դու բնաւ չըդառնաս առնել աչացս այսոցիկ այց,
Որ 'ի զուր թաւալին հանդիպել քոյ սուրբ նըշուլիցդ,

Եւ ջրգոտեն աշարուշ. այնպէս 'ի խոր ջնջոյց խաւար
Շրջուելիւն զանկապիմն եւ կամ սքողեաց Ճայրոտ մթեր։
Ա՛յլ ես ոչ դադարեմ ըզմուսաՃեմ փարել վայրօք,
Յաղբերս ականակիոս, 'ի հովանուս մայրեաց անոտաս,
Եւ 'ի բլուրս արեգաւէտս, 'ի սեր զմայլեալ սուրբ նրւագաց։
Բայց դու, Սիոն, մանաւանդ, դու եւ վերտակբդ ծաղկազարդ
Որ թանան զտոլս քո սուրբ եւ ընթանան կարկաչահոս,
Ոչ ապախտ առնեմ ըզձեզ՝ գիշերայած ջրջել ըզձեօք։
Ոչ եւ զնրմանս ինձ յաղէտքըս յայսոսիկ մոռանամ ինչ, —
Ո՛ տայր ինձ եւ 'ի փառս պարծանացն հաւասարել, —
Ջերկոսին մահկանացուս, զմէոնեան կոյսն եւ զկոյր Թամիր,
ՋՏիրեսիաս եւ զՊինեուս, ըզհինաւուրցն մարգարէս։
Խմասս յայնժամ որոՃեմ՝ որ չափս ինքնին ասն նուագարարս,
Որպէս հաւրն զուարթուն եղանակէ զերգսն 'ի մրթան,
Սաքրեալ 'ի թաւ հովանոց գիշերային գեղգեղէ ձայնս։
Ա՛յսպէս տարեաւ գառնան ժամք, սակայն առ իս տիւ չառնէ գարձ.
Ոչ եւս ըզքաղցրը եկս այգուն տեսանեմ ոչ զերեկոյին,
Ոչ ըզծաղկի գարնայնի, եւ ոչ ըզվարդ ամարայնոյ,
Ոչ ըզհօտս եւ զանդեայս, զաստուածագիծ ոչ մարդոյն դէմս.
Ամպք եւ աղջամուղջ մշտագիշեր զիս պաշարեն։
Որոշեալ 'ի մարդկան զբարՃալից Ճանապարհայ,
Մատեան ջրքնալ հրմոուելեանց հսմակ սպիտակ ինձ ներկանի,
Ուր բնուելեան ջրնջեալ են գործք եւ կամ քերեալ վասն իմ 'ի սպան,
Եւ բնաւ ըստ մին 'ի մրտեցն խմասուելիւն յինէն փակեալ։
Վասն որոյ, լոյս երկնային, ծագեա 'ի ներքս յիս մանաւանդ,
Յամենայն 'ի զօրութիւնս ոգւոյս մրացեն քոյ Ճառագայթք.
Ամն 'ի հոգւոջըս հաստեա, բարձ փարատեա զմէգս 'ի նմանէ,
Զի զմեռոտ աչաց տեսից զաներեւոյթս՝ եւ խօսեցայց։
Հայրն ամենակալ՝ յերկնից բարձանց 'ի սեռն արփւոյն,
Ուր բազմեալ հանդչի յաթոռ դեր 'ի վերոյ հանուրց բարձանց,
Խոնարհեալ էր զաչքս իւր՝ հայել միով ակնարկութեամբ
Յամենայն յիւր արարածս եւ 'ի նոցին գործս համօրէն։
Ըզնովաւ կային հոլեալ բոլոր երկնիցն սրբութիւնք
Զաստեղաց իբրեւ ըզբոյս, եւ 'ի տեսիլ իւր ընդուին
Զմայլական երանութեամբ քան զամենայն 'ի վեր ըզբան.
Մինծին Որդին յաջմէն նրստէր՝ փառացն ուղիղեան պատկեր։
Եսեւ նախ յերեսս երկրի զնախածընողս մեր զերկոսեան,
Ջերկոսին եւեթ էակս մարդկեղէն բնութեան առհմս
Ի փափկութեան եղեալ դրախտին յանմահ պտղոցն 'ի վայելս
Ուրախութեան եւ սիրոյ. յուրախութիւն յարտաքսեալ
Եւ 'ի սեր անյաչաղ յերջանկաւէտս առանձնութեան։
Եւ զգրժոխսն եսեւ եւ զմին որ 'ի միջին անջրպետեալ.

Եւ զԱստան որ առ երկնիցն պարբսպոք քերեալ զբրջեր
Յայսմ կուսէ գիշերին 'ի բարձրութեան մրուայլ օդոյն՝
Վաստակեալ թեւոքն 'ի ձեռ անժոյժ ոսին մերձ յիջանել
Ի վերայ ցանգրուտ կերպարանաց այսր աշխարհիս՝
Թուեցեալ երկիր գընդաձեւ հաստուն առանց հաստատութեան,
Եւ յերկրայս տարակուսի՝ թէ յօդս իցէ թէ 'ի ծովու։
Նայեցեալ Աստուծոյ բարձրահայեաց ակամբն 'ինա,
Որով մերկ տեսանէ զներկայն՝ զանցեալն եւ զապառնին,
Եւ կանխատես նշկատմամբ առ Միածին իւր ասէ զայս.
« Միածինդ իմ, տեսանե՞ս՝ զսոսին մեր որ մոլէ կրտղուց.
Ոչ սահմանքն հաստատեալք, ոչ դրժոխոցն դրընտիպակք,
Ոչ կուսեալք 'ինա կապանք, ոչ խոր վրէին անհուն խրամատ
Ձեն նրմա լեալ խափան, այնպէս թափով թրուի դրրդեալ
Ի վրէժ յուսակորոյս՝ որ 'ի խեռեալն իւր դարձցի դլուխ։
Խորատակեալ զկապանան ողջոյն՝ այժմ ոչ հեռի թեւէ յերկնից
Ձեզբրքք լուսոյն՝ դէպ ուղիղ 'ի տեսեզերսն նորատեղծ,
Եւ առ մարդն որ 'ինմա՝ կորուսանել զայն բընաբար,
Կամ եւրս ջար՝ զառաջել նենգապատիր իւրք հնարիւք։
Եւ զառաջել. լուիցէ մարդն խաբեալ հրապուրանացն,
Եւ ընդ փոյթ՝ գիւրամէտ անցցէ զմիով պատուիրանաւս
Որ նորա հնազանդութեանն է մի եւեթ առհաւատչեայ,
Եւ անկեալ կործանեսցի նա եւ նորա զարմն անկուշող։
« Ո՞յր իցէ մեղ, եթէ ոչ՝ նրմին եւեթ. ապահատաւոր.
Զոր էրն ինչ մարթ՝ ունէր յինէն, արդար ուղիղ ստեղծագործեալ,
Բաւական 'ի կալ յաստուծոյ, թէ եւ գլորել կամակարող։
Այսպէս իմ հաստեալ ողջոյն ըղձորութիւնն արփիաձեմն
Եւ զոգիս ամենայն, եւ որ կացին եւ որ անկան,
Կամակար կացին որ կանս, նոյն եւ անկան որ կանն անկեալ։
Թէ չէին անձնիշխան, զինչ ունէին նրշան անիաք
Ի հանդէս սեռն եւ սերտ հնազանդութեանն յանդիմանել,
Աղյողդող հաւատոցն եւ մրաբիմ սիրոյն իւրեանց։
Թէ հարկաւ գործէին, եւ ոչ կամաց յօժարութեամբ,
Ո՞ր գովեստ մընայր նոցա, զո՞ր հաճութիւն գրատանէի
Յայնպիսում ես հրլութեան, ուր կամք եւ միտք զուր եւ նանիր —
Զի եւ միտք են ընտրութիւն — մերկ կողոպուտ յաղատութեանցն,
Երկոքին ընդ նուաճութեամբ՝ հարկին ծառայք էին, ոչ իմ։
« Յայս օրէնս հաստատեալք, որպէս արժանն էր եւ իրաւ,
Ունին մեղ անսուտ գընել հատուցին իւրեանց կամ թէ բնութեան,
Կամ իւրեանց ճակատագրին, իբրու սիրեալ կամաց նոցա՝
Վարեսցէ զայն հրաւիրանն իշխանաբար դատաւորաձեւաւ,
Կամ վերին անկողմն կանխանրկատրն գիտութեամբ։
Նոցուն է սահմանեալ ըղհետութիւն իւրեանց, ոչ իմ.

Թէ եղէ յառաջատես, կանխաժամանն իմ գիտութիւնս
Ոչինչ ազդէ 'ի յանցանն, որ թէ եւ չէր նախածանօթ՝
Ոչ ընդհատ ինչ եւ յայնժամ էր նա նոյնպէս անվրիպական։
Արդ առանց ինչ դրդիչոյ եւ կամ փոքու ստուերի հարկին,
Կամ բնաւ իմիք անվրէպ նախատեսութեանցս՝ մեղանչեն,
Ինքեանք ինքեանց՝ եւ յոր դատին եւ յոր ընտրեն՝ նախահաւակք։
Իմ զնոսա ստեղծեալ ազատս, եւ յամենայն յազատութեան
Մինչ չեւ ինքեին ինչ առեալ անձամբ յանձինս իւրեանց կապանս։
Իսկ թէ ոչ, հարկ էր փոխել ինձ գրլխովին զնոցա բնութիւն,
Յետս անդրէն դարձուցանել ըզբարձր անկեալ յաւերժ հրամանն՝
Իւ կընքեցաւ ազատութիւն. զանկումն ինքեանք նիւթեցին։
« Սկզբնաբար վրիժապարտքն անկան յանձանց արբեալ հրապոյրս,
Զառածեալք յանձանց իւրեանց, անձամբք յանձինս ապականեալք.
Գլորի մարդքն պատրանօք չարահաւակ մեղապարտից.
Վասն այնորիկ գրացեալ մարդքն շընորհս, այլք ոչ երբեք։
Գրեթովք եւ իրաւամբք՝ յերկինս յերկրի՝ բարձրացին փառքս.
Ա՛յլ առաջին եւ վերջին՝ մեծ եւս ողորմ իմ փայլեցեալ։»
Ի խօսելն Աստուծոյ՝ բուրումն անոյշ անմահութեան
Զամենայն ընտրյալ զերկինս, եւ յերջանիկ ոգիսն ընտրեալ
Ծաւալէր նորաղուարճ ուրախութիւն անճառելի։
Երեւէր Աստուածորդին 'ի շքեղ փառս անհամեմատ,
Ճաճանչէր 'ի նոմա բոլոր Հայրն էութեամբքն արպագեալ։
Գորով աստուածեղէն յերեսս իւր յայտ նրկարեցաւ,
Ընդ նրմին սեր անընապաւ եւ շնորհ անչափ եւ անպայման՝
Զորս 'ի դէմն ած Հօր իւրում զայս ինչ առ նա բարբառելով.
« Հայր, պատգամ ողորմութեան եղեւ վախճան դատակընքիդ.
ՀԱՅՑԷ ՄԱՐԴՆՆ ՇՆՈՐՀԱՑ. վասն բանի հրամանիդ այդ
Հրաչակաւ քարողեացին երկինք երկիր զքո գովութիւնս
Յանթիւ արուեստական երգոց սրբոց եւ օրհնութեանց,
Որ պար առեալ զաթոռովդ հընչեցացին զքեզ յաւերժ օրհնեալ։
Եւ իցէ զի մարդն անդիւտ կորընչեցի. մարդ՝ քո ստեղծուած,
Զոր դեռ այնչափ սիրէիր, կըրոսերագոյնն յորդիսն քո,
Անկցի հաղիւց պատրանօք, թէպէտ հանդերձ անմեղութեամբն։
Քաւ 'ի քէն, Հայր, քաւ 'ի քէն, որ դու միայն ես դատաւոր
Ամենայն եղականաց, եւ դու եւեթ դատես ուղիղ։
Կամ ոսոխն հասցէ՞ յիւր կէտն եւ վրիպեսցէ զքեզ 'ի քոյոյդ,
Լրցուսցէ՞ զիւր չարութիւնն եւ զբարութիւնդ դիցէ՞նդ դերեւս,
Կամ դարձցի՞ դերախանչ, պատուհասիւ թէ եւ չարաւ,
Եւ սակայն զոխսըն թափեալ, ձրգեալ ըզհեռ իւր 'ի դրժոխս
Զազգ մարդկան առհասարակ զաւ յինքեանէն աղաւաղեալ։
Կամ կամիցի՞ 'ի պատճառս թըշնամւոյն բառնալ ընաջինջ
Զարարածդ եւ եղծանել զոր 'ի քո փառս հաստեցեր։

Բարութիւնդ եւ մեծութիւնդ անկցին թերեւս այդպէս յերկիրայս,
Եւ հայ հուէ անկցին առանց ուրուք ջատագովի։ »

Եւ այս՝ մեծն Արարիչ պատասխանի կըրկնեաց նըմա.
« Ո՛վ Որդեակ, հոգւոյս խմոյ դու հեշտութիւն նախամեծար,
Որդեակ իմ ծոցածին, Որդի եւ Բանդ իմ միական,
Դու իմ իմաստութիւն եւ ազգական զօրութիւն իմ,
Ամենայն բանքդ ըստ մըտիս'ս անժամանակ կարգի կամայս։
Ոչ կորիցէ մարդն ողջոյն, այլ փրկիցէ որ կամիցին,
Սակայն ոչ իւրով կամաւ, այլ ձրիատուր իմով շնորհիւ։
Միւսանգամ նորոգեցից ըզզօրութիւնս իւր ըզհատեալս,
Թէպէտ եղեռնաւորս եւ 'ի մեղաց վարեալ դէրի
Ի տուռունս իւրոց անխուզ եւ պըղծալեցըն ցանկութեանց։
Յարուցեալ նորա ինեւ՝ դարձցի անդրէն կացցէ կանգուն
Ի նըմին ասպարիսի յորում ասոխն իւր ոսկերիմ։
Ինեւ կանգնեալ՝ զի ծանիցէ զսրկարութիւն տրխեղծ բախտին,
Յիս՝ ոչ յայլ ոք կըրթեսցէ զիւրում անձինն ըզփրկութիւն։
« Ընտրեալ է իմ առանձին շնորհօք զոմանս 'ի նոցանէ,
Զատուցեալ ընտրանաւ 'ի վերս քան զայլս. այս են իմ կամք։
Լըսիցեն այլք զիմ հրաւէր եւ խրատեսցին յանձամ՝ խորհել
Ի մեղային պայման իւրեանց, եւ վաղագոյն ածել 'ի հաշտ
Ըզցասումն ասատուածութեան, ուր շնորհ առձեռն ազդէ նոցա։
Քանզ'ի խաւար ըզգայութեանցն ըստ արժանի ծագեցից լոյս,
Զապառաժ սիրտս հալեցից՝ զի կարասցեն յաղօթս կալ,
Զըղջանալ եւ ինձ հարկել ըզհրաւութիւն զօրինաւոր։
Ի պաղատանս՝ յապաշաւ՝ 'ի սարտական հնազանդութիւն՝
Զոր անենեղ սրտի մըտօք եւ ուղղութեամբ խընդրեսցէ ոք,
Ունկն իմ ոչ լեցի խուլ, ոչ փակեսցին աչք իմ երբեք։
Ըզմիջնորդ իմ տաց նոցա եթէ առաջնորդ, ըզմըտաց խոնշ.
Թէ կամիցին նըմա լըսել, լուսոյ 'ի լոյս լեցին ժաման,
Զոր յարդեալ եւ ժուժկալեալ 'ի սպառ՝ հասցեն 'ի կէան անքոյթ։
« Որ զիմով երկայնամիտ ներողութեամբ, զաւուրբ շնորհացս
Արարեալ անփոյթ առ ոան հարցեն, եղցեն տարաբաժին.
Խըստասիրտըն սալասցի, եւս առաւել կուրասցի կոյրն,
Եւ անդէն գեղեւեալ՝ 'ի խոր եւս թափըս գըլեսցին։
Ոչ զոք՝ սոցին արտաքոյ՝ 'ի գթութենէս հանեմ 'ի բաց։
« Բայց եւ այսպէս իսկ սակայն՝ ոչ ամենայն ինչ առ վըճար։
Մարդ՝ 'ի ստունդանելն ըմբռստացեալ եւ ուխտադրուժ
Յերկնաւոր 'ի գերագահ իշխանութիւնըն մեղանչէ.
Զատուածութեան թեկն ածեալ, եւ կորուսեալ անդ զամենայն,
Ոչ թողու դուրս ինչ բընաւ առ 'ի զդրրժանալն քաւելոյ.
Այլ 'ի կորուստ նուիրեալ նըզոմ ինքն եւ սերունդն են պարտ մահու։
Պարտ է նըմա մեռանել, ասլ՝ եթէ ոչ՝ արդարութեան,

Եթէ ոչ ոք մրատգիւր անձնանբւէր գրացի հերկք
Փոխարէն ճշդիւք ըստարատն հատուցանել, մահ ընդ մահու։
« Աչք արդ, զոյք երկնագումար, յո գտանիցեմք սէր այսպիսի.
Ո՞վ 'ի ձէնջ լեալ մահացու, զմահացու մեղս առնու զմարդոյն,
Եւ ո՞ր այն անմեղ արդար՝ որ զանիրաւն ապրեցուցէ.
Այսքանի գուլթ գորտոց միթէ համբաւն բնակի՞ յերկինս։ »
Նա զայս հարցարանէր, խակ համախուռմբ դասք երկնաւորք
Համբացեալ կարկեալ մնացին, եւ լրուութիւն յերկինս էր մեծ։
Ոչ ոք մարդոյն 'ի թիկունս եկաց պաշտպան, ոչ բարեխօս,
Թող թէ բնաւ իշխէր ինչ ոք յանպարտականն առնուլ 'ի գլուխ
Ըզդատակնիք պարտեաց մահուն եւ ըզփրկանաքն փոխատրել։
Յայնժամ ազգ մարդկան ողջոյն անիրկանակ գնայր 'ի կորուստ
Անաչառ վրէնամ 'ի մահ դատապարտեալ եւ 'ի դժոխս,
Ատուածոյ եթէ Որդին, ատուածեղէն սիրոյն լրումն,
Այսպէս զնւր ըստանկալն չէր նորոգեալ միջնորդութիւն.
« Հայր, հատեալ է քո վրէնամ, թէ զի ԳԻՏՑԷ ՄԱՐԴՆ ՇՐՆՈՐՀՍ.
Իսկ արդ ո՞չ շնորհն եւ հնարս ինչ փրկութեան հայթայթիցէ,
Այն որ գէր քան զթեւաղուարթ պատգամաւորդ երդաթուիչ՝
Գրատանէ ինչ իւր մուտս՝ արարածոց քոց առնել այց,
Հատանել առ ամենայն անառես անհայց եւ անխընդիր։
Երանի է մարդոյն՝ առ որ ըստ այդմ կանխեսցէ։
Իսկ կորուսեալ մեռեալ 'ի մեղս՝ ոչ կարդասցէ զայն յօգնութիւն.
Պարատապան եւ ապաւէնն՝ ոչ տալ փրկանս ունի, ոչ զոհ։
« Արդ աւասիկ ես փոխանակ իւր նրւիրիմ, կեանք ընդ կենաց.
Արկ զնեաւ ըզբարկութիւնդ, զնս 'ի տեղն մարդոյն դիր՝ զնս։
Թողից առ սէր իւր ըզծոցդ եւ մերկացայց յորդորամիտ
Ջոր ընդ քեզ փառս՝ եւ մեռայց նորա փոխան սերս հաճոյիւք։
Թող զնւր զամենայն մեղանութիւն թափիլ յիս մահ,
Ընդ խաւարին զօրութեամբն ոչ մընացից պարտեալ յերկար.
Դու ինձ կենաս անվախճան ետուր ունել յանձին խմուտ,
Կենդանի եմ ես քեզ, թէպէտ անկեալ անդ ընդ մահու.
Յամենայն որ ինչ է յիս մահկանացու՝ բաժին եմ իւր։
« Այլ դամ մի զպարտս հատուցեալ, ոչ թողուցուս դու զնս նրմա՝
Լինել որս առ եւ ապուռ նեխաշաղիղ դերեզմանի.
Անարատ եւ անշաղախ ոգւոյս խմուտ ոչ տացես թոյլ
Բնակել անդ անբաժան ընդ երր եւ մեց մինչեւ 'ի սպառ.
Այլ յարեայց յաղթողաբար եւ զնմ պարտիչն ընդուզնեցիս
Կողոպտեալ հարեալ աւար զկապուտ նորա յոր պանծանայր։
Ընկալցի յայնժամ Մահ զհաստոյր հարուածն մահացու,
Սողեսցի անարդաբար՝ 'ի մահաբեր կապտեալ տիզէն։
Իմ մեծ ընդ օգտ յաղթանակաւ գերի վարեալ բրանի զդժոխս՝
Ըզզօրութիւնսն խաւարի կապտեալ ցուցից նրշաւակ։

Զուարճացեալ քո յայն տեսիլ, ակն 'ի խոնարհ յերկիրս արկեալ
Ժըմտեսցես. ես բարձրացեալ քեզ արարիչ զոսոխս յամոթ,
Եւ զՄահ՝ յետին, եւ կըմախիւքն իւրով զշիրիմն յագեցուցից։
Յայնժամ պար զնեա առեալ ըղիրիկելոցը յողնախուռնք՝
Յերկինըս դամ մըտանեմ յետ տարագնաց երկար եղից։
Եկից, Հայր, տեսանել զերեսըս քո՝ յոր վայցեմ այլ
Յաստան մեզ, այլ անընդոստ խաղաղութիւն եւ հաշտութիւն։
Յայնմ հետէ ոչ եւս այլ սրբամըտութիւն երեւեսցի,
Այլ առաջի քո կեցցէ ուրախութիւն լի պատարուն։»

Ասա կացին բանքն, այլ երեսքըն խանդակաթ դեռ խօսէր լուռ,
Եւ շընչէր անմահական սէր առ մարդիկ մահկանացուս,
Քան զոր 'ի վեր հըլութիւնն եւեթ ծագէր որդիական.
Մատուցեալ զանձքն յօժար 'ի զոհ՝ մընայր կամացքն Հօր։
Զարմանք զերկինըս կալան 'դանկաս խորհուրդսն պակուցեալ,
Եւ թէ յինչ յանդիցին։ Ամենակալն յաւել անդէն.

«Ո՛վ, յերկինս եւ յերկրի, միայն դրսեալ դու հաշտութիւն
Վասն ազգի մարդկան՝ որ կայր ընդ բարկութեան անմուէր ցասմամբ,
Դու միակ իմ հաճութիւն, դիտես զանչափ սէրս առ իմ գործս,
Ոչ պակաս եւ առ մարդն՝ արարածոց թէպէտ վերջին.
Յոյր 'ի պէտս արձակեցից ըզքեզ յաջմէս եւ 'ի ծոցոյս,
Զի վայրկի քո կորըստեամբ կեցուցից զազգն կորուսեալ։
Մինչեւ կարօղ լիցս փըրկութիւն խառնեա զնորայն 'ի քո բնութիւնդ,
Եւ լեր մարդ յերկրի 'նդ մարդկան, մարմին 'ի կէս ժամանակաց,
Ի կոյս արգանդէ զարմանալոյ ծնընդեան ծագումն։
Ազգի մարդկան, թէպէտ որդի, լեր գլուխ փոխան հօրդ Ադամայ։
Զոր օրինակ կորընչէն 'ինձա մարդիկ առհասարակ,
Նոյն 'ի քեզ, որպէս յերկրորդ ինն արմատոյ, նորոգեսցին
Ամենեքեան՝ ոչ այդ պահի, առանց քո բնաւ եւ ոչ ոք։
Նորա մեղքն յանցաւոր դընեն զհանուր որդիս նորուն,
Քոյդ երախտիք համարեալ նոցա՝ զնոսին արձակեսցեն
Որ յուրասաստ լեալ 'ի գործոցն իւրեանց յարդար եւ յանվրաս,
Տընկակից 'ի քեզ կեցցեն եւ նոր 'ի քէն ընկալցին կեանս։
Այսպէս մարդն ըստ իրաւանց տացէ զմարդոյն ըզփոխարէնս,
Դատեսցի եւ մեռցի, եւ 'ի մահուն անդ յարիցէ,
Եւ յարուցէ յարութեամբն ընդ իւր զեղբարսն համօրէն
Ըզգընեալսն 'ի փըրկութիւն արեամբ իւրով պատուականաւ։
Այսպէս սէր երկնահանդէս պարտեսցէ զոխսըն դըժոխոց՝
Վարեալ 'ի սպանդ եւ մեռեալ առ 'ի թափել յոյժ մեծադնի
Զոր հեշտիւն եդ 'ի կորուստ ատելութիւն դըժոխահեռ,
Եւ զոր ոչ դադարեսցէ կորուսանել եւ յայնոսիկ՝
Որ յորժամ կարողքն իցեն՝ տայցեն ինչ ոչ տեղի շնորհայ։

«Բայց ոչ 'ի խոնարհել քում 'ի բնութիւն մարդահասակ

Կրեալդես ինչ ըզքոյդ, ոչ 'ի պատուոյն ինչ արկանես։
Զի Թէպէտ վրսեմագոյն երանութեան բաղմեալ յաթոռ,
Հաւասար Աստուծոյ, յաստուածեղէն բաստից վայելս,
Այլ զհամայն ըզքեզ՝ փրրկեալ զաշխարհ 'ի սպառ կորբասէնէն։
Զի վասնակքզդ առաւել քան թէ ծնողդեան քո երաւունք
Արժանի արարին ըզքեզ լինել Աստուածորդի,
Բարութեանդդ զանցուցեալ ըզմեծութեամբ եւ զզօրութեամբ։
Եւ զի քան զվերոյ ուռճալիր զեղաւ 'ի քեզ սէր յորդառատ,
Ամբարձեալ խոնարհութիւնդ ըզմարդկութիւնդ ընդ քեզ յայս դահ։
Աստ նրատցիս մարմնազգեցիկ՝ թագաւորեալ Աստուած եւ Մարդ,
Աստուածորդի Որդի Մարդոյ, ակեզերաց օծեալ Աբբայ։
« Տրեալ քեզ զամենայն իշխանութիւն առ 'ի յինէն,
Թագաւորեա յաւիտեան՝ ըզդեցեալ փառս ըստ արժանեացդ։
Ընդ քեւ հնազանդեմ իբր ընդ գրլխով վերագունիս՝
Զամենայն ամենա եւ զպետ, ըզզօրութիւն եւ զտէրութիւն։
Ամենայն քեզ կորացեալ կրկնեացի ծունր երկրրպագու՝
Որ յերկինսն էն, որ յերկրի եւ որ 'ի խոր սանդարամեաս։
Իսկ մինչ ընդ ամպրս շրքեզ երկնագումար պարակցութեամբ
Երեւեալ առաքեացս հրեշտակապետս՝ ըզքո փոդարս՝
Ազգ սոնեալ ակեզերաց զահնալուր քո դատաստանդ,
Ի չորից հողմոց անդէն առեալ զհրաւէր քո կենդանիք,
Եւ մեռեալք զառանցելոցն յաւիտեանց կոչեալք 'ի գուրս,
Ճեպեացին ասդնապաս 'ի համառօտս հասարակաց։
Ընդոսաուցեալ զնոսին 'ի քնոյ իւրեանց բարբառ ահեղագոչ։
Դատեացիս անդ յատենի սրբոց ըզբարս, մարդ եւ հրեշտակ,
Եւ եղեալ ափիբերան՝ վրճռաւոր յանդունդս սուզեացին,
Դրժոխք ըզցեալ խուժանաւորն փակեացի այնուհետեւ։
Յայնժամ յաճիւն լուծցի աշխարհ, եւ 'ի մեխրոյն նոր յարիցեն
Երկին վերկիր՝ ուր արդարոց լեցի դասուցին բնակութիւն։
Յետ երկար անձկութեանց սեացեն աւուրս ոսկեղենիկս՝
Ոսկի գործոց հանդիսիւք արդասաւորս եւ բարդաւաճս,
Խընդութեամբ, յաղթող սիրով եւ գեղեցիկ ճրշմարտութեամբ։
Դիցես դու յայնժամ 'ի բաց ըզգաւազան քո զարքունի։
Զի արքունի գաւազան ոչ եւս ինչ այլ լեցի պէտոյ,
Ամենայն յամենայնի լեցի Աստուած։ Բայց դուք հրեշտակք,
Այնմ որ 'ի լրումն այսոցիկ զմահ ճաշակէ, պագէք երկիր,
Օն երկիր պագէք Որդւոյ, փառատրեցէք զինքն որպէս զնս։ »
Իբրեւ այն ինչ 'ի բանից ասսի լրեաւոյ Ամենակալն,
Հրեշտակաց հոյլք բազմերամ մեծաբարբառ աղաղակաւ՝
Որպէս յանթիւ ամբոխից, իբրեւ 'ի ձայն սուրբ քաղցրանուագ՝
Ցընծութեան հարին խրախոյս, հընչեաց երկին յոգեվնաւ,
Եւ բարձրաձայն ոլանոցք լցին զկոլմանս յաւիտենից։

Զարմանութիւնքդն շրջով առ երկոսին խոնարհեալ դահն՝
Հանդիսիւ պատին երկիր, եւ 'ի յատակ անդր ընկենին
Զոսկեհիւս եւ զանթառամ ծաղկօք բոլոր պրսակս իւրեանց։
Անթառամ ծաղիկ անմահ, որ 'ի դրախտին երկրաւորի
Փրթթիել երբեմն ըստ բարս՝ ծառոյն կենաց հուսալ առընթեր։
Այլ անդրէն, նոյնհետայն ըզկնի մարդոյն ոՀիր մեռաց
Փոխեցաւ դարձեալ յերկինս ուր բուսանիցին յառաջագոյն,
Եւ դեռ անդ առՀ ծաղկեալ, հովանացեալ կենաց աղբերն
Եւ ապանց դարեւանդկց Երջանկութեան յորդ վրտակին՝
Որ զբիւրեղ ալիսն դէզ զելիսական ծաղկամբք յերկինս։
Անխամուր եւ անթառամ սոքին ծաղկօք ոգեքդն սուրբ
Արտախուրէն զգեղգեղափայլ վարսս իւրեանց ճանճանչահիւս։
Իսկ այժմիկ այս պրսակք բարձեալ ցըրուեալ կան ընկեցեալ
Ընդ պայծառ եւ ջինջ յատակն որ ներք յատակս ծով շողշողեր,
Եւ ժըպտեր ծիրանեբիսեալ երկնաւորօք խուռնն վարդիւք։
Պրսակեալ անդրէն Զարմարթունքն առնուն ըզքնարսն ոսկիափայլս,
Յաւէժ բարեյարմարս, կապարՀօրէն կախեալս ընդ մէջ.
Միաձայն քաղցրանըւագ շարժեալ ըսկիզբն մըրմընջիւք
Ըզկնի կըցեն զերգսըն սուրբ՝ հեացուցեալ զմիտս 'ի բարձունս։
Ոչ մի ձայն լըռէ եւ չիք ձայն 'ի նիւաղան անեւրաժիշտ.
Այնպիսի միահաւան ձայնակցութիւն է անդ յերկինս։
« Ըզքեզ, Հայր, երգեցին նախ, ամենակալ, անկեղծուկ,
Անմահ, անբաւելի, յաւէժափառ դու թագաւոր,
Էից էակ, աղբիւր լուսոյ եւ 'ի շողիւն փառաց անտես՝
Ուր յաթոռ անմատոյց բարձրագահից բազմեալ հանդչիս։
Եւ 'ի նուաղելդ իսկ զառատ ըստրշուլիցդ քո հոսանս,
Ընդ ամպն ըզքեւ բակ առեալ խորանաձեւ ոսկեՀաՀանչ՝
Երեւի քաղցրագ հանդերձիցդ յանչափ շողիցն յաղօտ նըշմար.
Շրջանան սակայն երկինք, եւ գերարփին սրովբէագունդ
Հուսկ մատչել չիշխեն մինչ չեւ կըրկին թեւօք զաչս ըսքողեալ։
« Ապա զքեզ երգեցին՝ քան զարարածս ամենայն նախ
Ծընեալ Որդի, կերպարան աստուածային յոյր սեռն 'ի դէմս
Ամենակալ ծագէ Հայրն՝ երեւելի անչափանդաղ,
Յոր այլազգ ինչ ակնարկել ոչ ոք մարթիր յարարածոց.
Ի քեզ Ճրշգրտատիպ պատչէկ փառաց նորա ընակէ,
Եւ 'ի քեզ ծաւալեալ հանգչի Հոգին իւր համատիպ։
Քեւ ըստեղծ զերկինս երկնից եւ զոր 'ի նմայն զոլոր համարին,
Եւ քեւ հոսեաց դահավէժ ըզպէտութիւնսն փառամոլ։
Ոչ խնայեցեր այն օր դու 'ի Հօրդ ահեղ փայլատակունս,
Զարգելեր զմայլակնացայտ որոտաբնեթաց կառացդ անիւս՝
Որ թընդեալ դղրդրդէին զյաւիտենից երկնից խորանն
Յանցանել կոխել քո զվիզ վայրավանեալ խեռ հրեշտակացն։

Ի դարձիդ 'ի վանեալս՝ սուրբք քո ձայնիւ անդաւ գոչմամբ
Բարձր արարին միածին ըղքեզ Որդի Հօր զօրութեան,
Վրէժխնդիր եւրում քինու սասոց ցասմանն 'ի թշնամեացն։
Բայց ոչ այսպէս ընդ մարդոյն. ոչ նոյն խրատիւ դատապարտեր
Զանկեալն 'ի դաւանացն չարութեան սատանայակ ոգւոց,
Հայր ընդհաց եւ գրթութեան, այլ ես յօժար եւ մէտ յոլորմ։
Իբրեւ եռես սիրելի եւ միածին Որդիդ ըղկամդ՝
Ոչ նովին խրատութեամբ ընդ ապիկար մարդն եղեալ դատ,
Այլ 'ի գութ խանդաղատեալ, առ 'ի ցցասուցիչդ հաշտ ածել
Եւ զբաւ առնել մարմնին՝ որ ընդ ոլորմ եւ 'ի գ իրաւունս
Յերեսաց քո երեւէր, ոչ առեալ ակն երանութեանն՝
Յոր առ քեւ աթոռակից բազմեալ ընդ քեզն վայելէր,
Մասնեաց զանձն իւր 'ի մահ՝ մեղաց մարդոյն քաւութեան զոհ։
Ո՛վ սէր անկրչելի, սէր սեփական սատուածեղէն։
Ողջոյն ընդ քեզ ով Աստուածորդիդ Փրկիչ մարդկան,
Անուանդ քո յայսմհետէ լեսի երգոյս յորդոր նրագ.
Յաւիտեան խնա տաւիղ մի մուսայսդ զքո գովութիւնս,
Մի եւ 'ի Հօր քոյ երբէք 'ի գովութեանցն մեկնեսցէ։»

Այսպէս սոքա յերկինս 'ի վեր քան ըզկամարն աստեղազարդ
Զերանեակ ժամանն գրեն 'ի ցընծութեան եւ յերգս օրհնից։
Իսկ ինքեալ 'ի սկզնդ նրահեմ գունս բոլորակ այսր աշխարհիս
Ընթանայ Սամայել՝ ընդ պարունակն առաջաւոր
Որ պատեալ բոլորեալ զնոնարհագոյն շրջանակաւքն
Անջատեալ զայնս 'ի Վրէին եւ 'ի հինեկ հին Գիշերոյն։

Ի բացուստ՝ դընտաձեւ ինչ երեւէր այն պարունակ,
Ի մեջոյ՝ թրւի անբաւ ցամաք անեզր եւ խաւարչուտ,
Ամայի եւ խոպան, աբխրագիշեր, անաստեղուն,
Մասնեալ 'ի ապառնալից Վրէին մրրիկս՝ որ շուրջ գոռայ։
Երկին անագորոյն, բայց միայն յայնմ երկնից կուսէ՝
Ուր պարիսպն էր նորա, թէպէտ եւ այն յոյժ հեռաւոր.
Անդ խաղան սրպրդեն խուն ինչ ապտ նրշուվից ցոլք՝
Ոչ այնչափ աղմրկեալք 'ի մանչական մրրիկ անտի։

Ասա ընթանայր ըստ մրտին ոսոին 'ի դաշտ մեծատարած։
Յորժամ անդրդ սընեալ 'ի սարաբարձրքն յԵմաւուն, —
Որոյ գագաթն ձիւնեղէն զրապէ զխոյժգուժքն թափառուռս, —
Լրքանեն զանորս գաւառ՝ երթալ շուայտել շաղղով գառանց
Կամ ուղուց սարեւորաց 'ի խաշնաւէտ դաշտս բրբուրս,
Սըլացեալ յաղբերակունքս Գանգիսի կամ Հիդասպայ՝
Հընդեկ գեսոց, ինչանեկ յուղղոջ յանբոյս Սերայ երեկն՝
Ուր ձենք 'ի հոգմ եւ յառաջասա վարեն զթեթեւ սայլն եղեգնեայս։
Ըստ գրմին օրենակիդ ընդ հոգմակոծ ծուին աւազուտ
Այսր եւ անդրբ միայն շրջէր վիրագն յորսոյն խընդիր։

Միայնակ, զի չընչաւոր եւ կամ անշուքնչ ինչ արարած
Չեւ եւս ուրեք գրասեներ 'ի տեղւոջ անդ, դեռ ոչ յայնժամ,
Բայց անդր ապա եղեն յերկրի՝ եթէ օգաթեւ ինչ գոլորշի՝
Ամենայն ունայնաւոր ինչ սընոտիք եւ ցընդելիք,
Ըստ մարդկան գործս յորժամ մեղք ունայնութեամբ փրքացուցին։
Թշուառան անդր առհասարակ եւ սընոտիք ոչընչաբերեալք,
Եւ որ հինեն 'ի մոտս վրստահութեամբ ըստ յոյս փառաց,
Չտեւական համբաւոց, զերջանկութեան յայս կամ յայլ կեանս։
Ամենեքին որ յերկրի ատուն ըզվարձսն՝ փոխարէն
Ճրգնական սին խրատանաց եւ վրէժխնդիր կոյր նոխանձու,
Ոչ յայլ ինչ ակն եդեալ՝ բայց 'ի մարդկան եւեթ գովեստ,
Արժանի 'ստ գործոցն՝ ունայն ատ հատուցումն ժառանգեն։
Ամենայն գործ անկատար ձեռին բնութեան, վիժած արդիւն,
Այլանդակ եւ խաւնախորթ, յետ ցընդելոց յերեսս երկրի,
Փախուցեալ այսր ասատանդին մինչ 'ի յեռին հուսկ աւերած։
Ի մոտ լուսնին անցանեն ոչ, ըստ որում կէաք յերաղեցան.
Բնակիչք այնր արծաթափայլ դաշտացն 'ի դէպ է թէ ինչեն
Սուրբք փոխեալք եւ կամ ոգիք միջինք ընդ մարդ եւ ընդ հրեշտակ։
Ի վաղընջուց աշխարհէն յառաջագոյն այսրը հասին
Ուսերաց եւ դրսեերց զաւակք խառնիլ անօրինաց,
Հրկայքքն զրավաստակք, թէպէտ եւ յայնժամ անուանիք։
Ըզկնի հասին՝ Բաբելոյ շինողքն 'ի դաշտին Սենասր,
Որ սնեցեալ ցանգ 'ինանիր խորհուրդս խրեանց՝ դեռ շինեին
Բաբելոս նորանորս, եթէ առ ձեռն ունէին նիւթ։
Այլք եկին մի 'ստ միոջէ. որ առ ընդ դիսին դասելոց
Կամակար վաղեաց 'ի բոց Եռանէ լերինն՝ Եմպեդոկլէս,
Որ զանձն 'ի ծովն առ Պլատոնեանն Եղիսեայ գիւտ՝ արկ Կլէոմբրոտ։
Զայլսն ասել՝ երկայն է յոյժ, զանազկար գէմքն եւ զասուշ,
Զլեռնախոյսս՝ ըզծակասոյսս խայտախարիս եւ զնոցուն խաբ։
Ասա յածին նրժգեհեալքն 'ի Գաղաթան՝ մեռեալ խընդրել
Ըզկենդանին 'ի յերկինս. ատ եւ որեարքն գրասնկ
Որ 'ի յոյս արքայութեանն առ օրհասաւ զկենուն զկոզբս
Այս այն անուն աբեղանց, եւ սրբերդել կարծեն ծրպտեալ։
Զէօթնեքբուքբ մոլբակօք եւ զանխաղաց ասատեղատամբք
Անցեալ գեր 'ի վերոյ, եւ զասպակի պարուռնակատն՝
Որոյ ՀՕՀ գործէ զթբրթռումն զորմէ շատ սնկեալ կան ճառք,
Անցանեն եւ զերկնատն որ առաջին գրասաւ շարժուն։
Պահեին առ դրան երկնի սպասել եկեցն Թուի՝ փականք 'ի ձեռս,
Իսկ սոքա 'ի ատրեւ կացեալ երկնեցն սանդղոց՝

---

410. Իմա՝ ոչ գոյս երջանկութեանն, այլ որ հինեն զայն 'ի մոտս։

Աւասիկ՝ արդ 'ի վերեալս ոան ամբառնան · սակայն տեսէք :
Հոգմ ուժգին շընչեցեալ խոտորնակի յերկուց դմանց՝
Ընկենու զնոսին յորսայս 'ի բիւր փաղասխ ընդ ծուփս օդոյն :
Անդ յայնժամ գոյ տեսանել կընդուզ վեղար եւ քուսեթայ
Պարեգօտ եւ որ կըրեն՝ տարաբերեալս եւ քըՀքըՀեալս,
Խըրխոլք եւ համարիչք, ներողութիւնք եւ թողութիւնք,
Փաւուութիւնք եւ կոնդակք, համայն հոգմոցըն խաղալիկք :
Այս ամենայն՝ Ճախր 'ի բարձունս առեալ բացէ 'ի բաց թըռչին
Ըզթիկամբք տիեզերաց 'ի մեծ եւ լայն անըլս կայանն՝
Որ ըզկնի ուրեմն ապա Դրախտ յիմարաց յորդորջեցաւ :
Տեղի՝ սակաւուց առ 'ի յապա դարս անծանօթ,
Իսկ զայնու ժամանակաւ՝ ոչ ընակաւոր, ոչ հորդ եւ կուռ :
Թըշնամին զՃանապարհայն եգիտ զայն գունս խաւարարգել·
Ընդ երկար 'ինամս շըրջեալ, ապա նըշոյլ լուսոյ ծագման
Դարձոյց Ճեպ 'ի Ճեպոյ յայնկոյս ըզքայլն ընթանալիս :
Տեսանէ 'ի հեռուստ շինուած մի մեծ բարձրակառոյց
Հրաշակերտ աշտիՃանեալ 'ի վեր մինչեւ յերկնից պարիսպն :
Ի գլուխ աշտիՃանացն՝ երեւելի կանգնեալ գործուած
ՃոխապատՃոյՃ՝ նըմանեալ ապարանից արքունի դրան,
Ցօրինեալ ադամանդեայ եւ ոսկեՃոյլ պերՃ Ճակատու :
Գաւիթն՝ արեւելեան լուսապայծառ ակամբք շողայր
Անեղման օրինակաց կամ ստուերագիծ գըրչաց երկրի :
Հանդուսնակ ելեն այնոցիկ էին սանդուղքս՝ ընդ որս երթեմն
Եսեւ Յակովբ զի հրեշտակք, պարեկապան գունդ երկնահոյլ,
Եկ եւ էջս առնէին, մինչ յերեսաց ինքն Եսաւայ
Փախուցեալ երթանայր 'ի Միջագետս Արամացւոց,
Եւ բացօթեայ 'ի դաշտ լուզայ՝ տեսիլ Եսեւ գիշերական,
Եւ զարթուցեալ ձայն եղարձ · « Այս աւասիկ է դուռն երկնից : »
Մէն միւսմ իւրաքանչիւր յաշտիՃանացն էին խորհուրդք ·
Եւ սանդուղքն յոգնորոշ ջրկայր անդէն զոր հանապազ,
Այլ մերթ ընդ մերթ ընդ երկինքս վերառեալ ծածկէր թաքուն :
Ընդ նոսաւ ծրփէր պայծառ ծով յասպիսեայ կամ ըլծ ուլանց,
Ընդ որ ըզկնի եկեալքն յերկրէ, առաջնորդեալք 'ի հրեշտակաց,
Նաւէին կամ թըռչէին ընդ ծովակին մրկանանց ծուփս
Ի կառս ուրեք յափըշտակեալք՝ զոր ձըգէին ձիք հրեղենակք :
Ինչանէր յայնժամ սանդուղքն 'ի հրապուրիչ խանձ ոսոխին
Առ գիւրին ելեն եւս անդրէն, կամ թէ թերեւս 'ի մորմոքել
Ըզթըշուառ տարագրութիւն իւր 'ի դրանդեացն երանութեան :

---

445. Ըստ օրէնս հաւատարիմ թարգմանչի անխոտ զընագիրն պահեալ, չկարեմք լռել զի ըստ Բողբքական հաւատոցն են բանքդ :

Դէպ ուղիղ դէմ յանդիման սոցին՝ կրչեալ գեր 'ի վերոյ
Երջանիկ վայրաց Դրախտին երեւելին վայրէջք յերկիր,
Լայնաձիգ քան զոր յապայս՝ թէպէտ եւ յոյժ մեծատարած՝
Գայր 'ի Սիոն լեառն եւ յերկիրն աւետաւոր աստուածաղուարձ,
Ընդ որ յայց գեղանըսիւ ցեղեցն՝ յաշխարհ երթեւեկօք
Հրեշտակք՝ վերին հրամանաց պատգամաբերքք անցանէին։
Զուարթագին ակամբ հայէր Բարձրեալն ինքնին 'ի ցեղսըն յայն
Ի Պանեայ՝ յաղբերականց Յորդանանու ցԲերսաբէէ,
Ուր յԵղիպատոս եւ 'նդ Արաբայ խառնի ափունս երկիրըն սուրբ։
Հանգոյն ինն երեւէր լայնափողոց անցին վայրէջք,
Ուր սահման կայր խաւարին որպէս փականք ալեաց ծովուն։
Անդուստ հասեալ Սամայէլ 'ի յետին մասըն սանդղոցն՝
Որ ոսկի սանդղամատամբք վերելակէր 'ի դուռն երկնից,
Պըշուցեալ 'ի վայր՝ պակնու 'նդ յանկարծ տեսիլ տիեզերաց։
Որպէս մինչ դէտ վրատանդաւոր ընթանայցէ զգիշերն 'ի դըլուխ
Ճանապարհս հատեալ անցեալ աղջամղոջինս եւ ամայիս,
Ի զարթնուլ զուարթարար առաւօտուն գնայ ելանէ
Ի դիտակ բարձրագագաթն եւ առապար գահաւանդի.
Եւ ահա յանդիման լինի յանկարծ քաղցր հայեցուած
Նորատեսիլ օտար երկրի, եւ կամ ոստան ինչ հոյակապ
Զարդարեալ պայծառափայլ աշտարակօք եւ յուրանօք,
Զորս արեւակն յելքս իւր յոսկի ներկէ Ճառագայթիւքն.
Այսպիսի հարաւ յապուշ՝ եղծաւ ոգին եղեւնաւոր,
Թէ եւ տեսեալ զերկինս երբեմն. այլ՝ առաւել քան զհիացումն
Էր նախանձ իւր ընդ տեսիլ ջրքնաղագեղ այսր աշխարհի։
Շուրջ հայէր ընդ ոլորտսն, — եւ դիւրովն եւս յաջողէր՝
Ի բարձու կացեալ 'ի վեր քան զբոլորշի խորանայարկ
Ահագին երկայնաձիգ լայն ըստուերին գիշերայնոյ, —
Ի յարեգ կուսէ Կըշռոյն ցրգեղմնաբարձն աստեղատուն
Որ զԱնդրոմեդ տանի յայնկոյս ծագաց երկրի 'ստ աստղանդիկ ծով։
Բեւեռէ 'ի բեւեռ ընդ լայնութիւն դիտեալ ապա,
Այնուհետեւ անցապաղ վերուստ 'ի վայր թռիչս արձակեալ
Ի գաւառ աշխարհին 'ի մօտաւոր իւր խոյանայ։
Դիւր գիմէ 'ի շեղագնաց ընթացս ընդ օդ բիւրեղանման,
Ընդ անթիւ արփիոց կաճառս՝ որ 'ի հեռուստ թուէին աստեղք,
Եւ սակայն 'ի մօտայ՝ միւս այլ աշխարհք գային 'ի յայտ։
Այլ աշխարհք են այնոքիկ կամ այլ կրկնք երանաւէտք՝
Երեկորինեան պարտիզացն հանգոյն առ վաղս հրաչակերց.
Երջանիկ մարգագետինք, մայրիք, հովիտք ծաղկածաւալք,
Կրկնք երիցս երանեակք. այլ՝ ոչ օթեր անդ բարեբաստ։
Ոչ եկաց յամեաց նա յոլալ 'ի դոյն խոյզ եւ խընդիր։
Քան ըղձնաւ աստեղս արեւն ոսկեճառանչ երկնահանդէս

Խրատէ զակն, եւ նա 'ինա կոյս ընթանայ 'ընդ անդորը երկինն.
Իսկ թէ 'ընդ վեր, թէ 'ի խոնարհ, ընդ մէջն, 'ի շէջ եւ կամ ընդ լայն,
Դրժուարին է զայն ասել։ Յայն վայր խաղայ յառաջագէմ՝
Ուստի մեծին լուսաւոր բաշխէ զլուսոյն հոսանս հեռուստ
Ի ստորին 'ի յոգնաթիւ արփաւորաց դասակցութիւնան,
Որ բացեալ վայելչապէս կան յականէ տեառին իւրեանց,
Եւ 'ի ձեմանն բոլորին զասաղաղրսակ պարուցին ջափս՝
Որ զաւուրս կրշռեն զամիս եւ ըզշրջանսին տարեւորս,
Ճեպեալք 'ի փոյթ կատարման յեպեղընթաց շարժման իւրեանց
Առ նոյն ջահ կենդանարար, կամ հիւ եկեալ շրջանակին
Մաղնիսաղօր իւրով շողիւ՝ իւ սիեղերք տաքին մեղմիկ,
Որ մինչեւ յալուցս 'ի խոր թաքուն շնորհիւ թափանցական՝
Արձակէ անեղեւոյթ ինչ զօրութիւն ցանդընդոց թափս.
Յայնպիսի սքանչելաղօր կարգեալ եկաց 'ի գիր պայծառ։

Անցեալ երթեալ ոսկերիսին ժամանէ անդր յիւրին կէտ.
Աստղագէտ թերեւս երբէք ընդ հայեցիկ ապակեղէնն
Ի փայլուն գունս արեւուն ոչ նշմարեաց բիծ այնպիսի։
Ըզտեղին զայն եդիտ 'ի վեր քան զբան ճառանչագեղ
Առ բոլոր երկրաւորօքս, որ քրիստեան եւ որ յականց։
Ամենայն կողմանք նորա չէին նման զոյգ համեմատ,
Բայց համակ թափանցշոյլ ճառանչաւէտ հարթ հուստաւ,
Որգունակ ատորոյական շանթ երկաթոյ հրաշէկ վառեալ։
Թէ հրահալ, մասամբ ոսկի ասես՝ մասամբ ինչ զուտ արծաթ.
Թէ զոհար, կայծ կամ ոսկեակրն կամ արպաղ եւ կամ յակինթ,
Նա համայն երկոտասանքն յահարոնեան փայլեալքն 'ի լանջս.
Կամ թէ քարն որ 'ի ցենորս յաճախ տեսեալ, եւ ոչ արդեամբք,
Ում յերկար զուր 'ի խընդիր անկան յերկրիս ախատարակայք,
Թէպէտ հրզօրն արուեստիւ պրկեն պընդեն զէերմէս թրուչուն,
Ի ծովէ հանեն զանկատ զբաղմակերպն ծերրն Պրոտեւս՝
Մրզեալ փոխեալ ընդ թորանոց 'ի ընիկ նախնին իւր կերպարան։

Զինչ ապա զարմանք լցեն՝ թէ դաշտորայքն այն եւ գաւառք
Շընչեն սուրբ շոգի վրձիս, գեռք թաւալեն ոսկի արբուն,
Ուր ըսկով հրպամամբ եւեթ մեծ տարրդեան՝ անի արեւու՝
Յայնքան հեռաստանէ 'ի խոր մրթան ատա ծընանի
Խառն ընդ երկրիս հիւթանիւթ այնչափ անչափ պատուական գոյս
Գոյնագոյն երանգովք վառխառեալս եւ հրաշագործս։

Ատա դեւն ոչ ինչ շրրատուցեալ՝ պատահէ նոր ըսքանչելեաց։
Զօրէ անի 'ի հեռաստան, զի չիք խափան եւ ոչ ըստուեր,
Այլ ընդհանուր է արեւ. զոր օրինակ ըզմիջաւուրբ
Բարձրածայրեալ ճառագայթքն յերկնամիջանն հաստատեան
Անկանին 'ի կաւատակէ անտի կրշեն ուղղով յերկիր,
Ոչ ուրեք շուրջանակի ստուեր ինչ ձգեալ նրսեմ տարերց։

Օգ յլասակ քան զամենայն կորովեր զբիբան յասպարէս ձիգ,
Նշմարէ յակինաեսի անդէն շքքեղ ուղղորդ կանգուն
Զուարթուն զոք՝ զոր եւ երբեմն եառես Յովհան յարեդական։
Կայր դարձուցեալ ըղթիկունսն, այլ փառք նորա չէին զեղչեալ։
Խայր ոսկի արփաճաճանչ արտախուրեր ըղգլուխ նորա,
Վարսք ոչ ընդհատ լուսագեղք՝ ծածանեին վէտ վէտ գանգուզք
Ըզպայծառ ծրփեալ ուսովքն ուր թըուչարանք թեւոցն յօդին։
Թըւէր զբօսեալ 'ի մեծ ինչ գործ, կամ՝ 'ի խորին սուղեալ խորհուրդս։
Ուրախ եղեւ այսրն սիրոյ յուսով գիւտի առաջնորդին,
Որ 'ի դրախտն երկրաւոր զմտքոր թըուիչս իւր ուղղեսցէ՝
Ի մարդոյն յերջանկաւէտ 'ի գըրգարանքն փափկութեան,
Կէտ իւրոցն ընթացից, մերոցս ըսկիզբքն վրսանգաց։
Բայց սակայն նախ ուշ 'ի կուրծս առնէ ծրպտեալ ըզկերպարանսն,
Գուցէ զըմտալ եւ կամ ոձիրս ինչ վընասուց արկցէն զնւրեւ։
Նայնժամայն փոխէ զանձն 'ի քերովբէ մի պատանեակ,
Ոչ 'ի դասուցն առաջնոց, սակայն յերեսս իւր ծիծաղեր
Երկնածաղիկ մանկութիւն, եւ շնորհ գեղոյ վայելչութեան
Յամենայն սրփոէր անդամն։ այնպէս կեղծել գիտէ ձարտար։
Հերք ընդ փոքու թագաւ գըլխոյն խոսոսեալք յայտարն խաղային,
Թեւքն էին երփնազարդ դունեղ փեսուրք ոսկեձամուկք,
Պատմուճան հանդերձաձեւ 'ի սուր ընթացքս պատշաճեալ,
Եւ 'ի ձեռին՝ ըզպարկեշտ ձեռնոք ոտին՝ արծաթի ցուպ։
Աղդ եղեւ գալուստ նորա լուսապայծառ Զուարթնոյն ունկան,
Եւ 'ի գալ մտեալ նորին դարձոյց զերեսան արփխափայլ։
Յայտ եղեւ իսկոյն զի էր հրեշտակապետն Ուրիէլ մեծ,
Մի յեօթանցն որ Աստուծոյ կան առաջի եւ յաթոռն հուպ՝
Պատրաստք 'ի սպասս հրամանին, որ եւ յաւէրժ էին են աչք։
Ընդ հանուր շըրջին երկինս, եւ կամ յերկիր այսր 'ի խնամարհ
Բերեն վաղվաղ ըզպատգամսն ընդ չոր ընդ նայ 'նդ ծով ընդ ցամաք։
Ա՛ռ սա մատուցեալ Սամայէլի ասէ այսպէս.
« Ուրիէլ, ո՛վ դու յեօթանց շքքեղափայլ ոգւոց անտի՝
Որ կան առաջի աստուածութեան բարձրը գահու,
Դու թարգման մեծի կամացդն զոր սովոր ես տանել նախ
Ի բարձունս երկնից ուր մնան որդիք նորա հրեշտակութեանդ։
Աստ եւս անշուշտ 'ի վերէն հրամանք զնոյն կրբես պատիւ,
Եւ իբր ակն իւր այց յաձախ առնես նորոգ արարչութեանցս։
Յանկութիւն անպատմելի տեսանելոյ եւ գիտելոյ
Ըզնորա հրաշակերտս, եւս առաւել ըզմարդն յատուկ
Ըզյաւէտ փայփայեալ եւ ըզգըդուեալ իւր սիրելին՝
Որում՝ զայս ամենայն զարմանութիւնս է հրամայեալ,
Ըզքրովբէին եւս ինձ թողուլ զակուռ եւ ասա շըրջել միայն։
Ո՛վ գերարփիդ սրովբէից, ապէ ասա՝ յորմ՝ եդաւ

Ի փայլուն գլխոց այսի մարդոյն անշարժ իւր բնակութիւն.
Կամ թէ անտուն՝ յոլ կամի բնակէ 'ի բնաւ գունտս ուղիաձեմս։
Օ՛ն ճառէա, յո՞ գտանիցեմ, ո՞ւր տեսանել լիցի զնա ինձ
Թաքթաքուր հիացմամբ կամ յանդիման զարմանալեօք՝
Ում Արարիչն եհեղ զաշխարհքս, յոր եւ զբոլոր սրփռեաց շնորհս։
Երկոքեանս այնուհետեւ, թէ 'ի նրմա եւ թէ 'ի բնաւս,
Կարասցուք ըստ արժանի զամենեցունցն օրհնել Հաստիչ,
Որ իրաւամբք թօթափեաց յանդգնդախոր դրժոխոց վիհ
Զապրստամբ ըղթշնամին, եւ փոխանակ տուժիս այսմիկ
Զնորաթեք եւ զերջանիկ ըզզարմըդ զայդ ըստեղծ մարդկան
Ընտիր ծառայս իւր. հանձարեղ են ամենայն ճանապարհք իւր։»

Օրինակ զայս խօսեցաւ՝ սուտ պաճուճեալքն յանծանօթս.
Զի ոչ մարդ եւ ոչ հրեշտակ ընտրել գիտեն զպատիր կեղծիս.
Այս ժանտ յերկինս եւ 'նդ երկիր, յաստուածութեանն ներելոյ,
Ինքն եւեթ զանխուսալ շրջի, յաստուածայնոյն քաւ երեսաց։
Բազում այն է զի թէպէտ եւ հրսկիցէ Իմաստութիւն,
Կասկած առ դրանքն ներհեալ՝ Պարզմտութեան թողու զիւր սպաս.
Ուր ջրթուի ջար ինչ լնել՝ Բարեմտութիւն ոչ խորհի ջար։
Այս խաբեաց մի անգամ եւ զՈւրիէլն արեգչիսան
Եւ սրատես հատարեալ յերկնաւոր դասս հոգեղինաց։
Առ նենդոտ մեղմեխրն պիղծ՝ պատասխանեաց իւր ռռնութեամբն.
«Հրեշտակիդ գեղեցիկ, խղճիդ 'ի գիտել զդրծս Աստուծոյ
Առ 'ի զմեծ ճարտարապետն այնուհետեւ փառաւորել՝
Ոչ ըստ չափ եւանեն՝ մեղադրութեան ինչ փաստաւոր.
Նա 'ւանիկ ըստ սաստկութեանն՝ եւ դրբոտաց են արժանի,
Որ զի զքեզ միայն ածեն այսր յարփային օթեւանէդ՝
Հաւատել աչքք զոր կէսք շատ խակ թերեւս հատարեցան
Լրսել եւեթ 'ի յերկինս ըզպատմութիւն զուցայ նոցին։
Զի Բարձրելոյն ձեռակերտք ըսքանչելի են արդարեւ,
Գեղեցիկ 'ի ճանաչել եւ հատարեն արժանաւորք
Անմուտաց եւ հեշտալից սրտիւ յաւէրժ յիշատակի։
Ո՞ր միտք եղական արկանիցէ զայնս 'ի համար,
Կամ լինիցի խելամուտ անչափակալ իմաստութեանն
Որ ծընաւն ըստնոսին, խակ ըզպատճառան 'ի խոր թաքոյց։

«Տեսի ես, յորժամ բանիւ Նորա զանգուածն անկերպարան
Տիեզերաց կաղապար զգալի՝ գլխատեալ կուտակեցաւ,
Թոհ եւ բոհ լուաւ ըզձայնն, եւ խառնիխուռն անսաց Խրատով
Մրատնել ընդ օրինաք, Անհունն անբաւ գիտաց ըզչափ։
Յերկրորդել բանին խաւարն հալածեցաւ, լոյսն ծագեաց,
Ծրնաւ կարգ յանկարգութեան։ Երագասալաց անգէն եւ անդ
Փութացան յանձնիւր տեղիս տարեքք թանձունք՝ հող, ջուր, օդ, հուր։
Նըրբանիւթ երկնից մասունք արփաթեւեալ թըռեան 'ի վեր,

Կերպս 'ի կերպս ոգի զգեցեալ ոլորտացեալ բոլորաձեւ՝
Յանհամար դարձան աստեղս, որպէս եւ դուն իսկ տեսանես.
Մէն մի 'սա շարժմանն ըզգընացս եւ զնրկատեալ կալաւ տեղին,
Իսկ մընացորդն աւելորդ՝ պարիսպ պատի զոիեզերօք։
« Աղէ հայեաց 'ի խոնարհ՝ 'ի գունտն որ յայսմ կողմանէ
Լուսալիր փայլէ ծագմամբ շողից աստի ցոլացելոց.
Այն վայրն է աւանիկ երկիր՝ մարդոյն տուն ընակութեան։
Լոյսն այն տիւ է երկրին, յորմէ թափուր եթէ մընայր՝
Եւ զայս կէս գընտին գրաւէր գիշեր մրթին որպէս ըզմիւսն։
Այլ մեր լուսինն — անուն չը-քնաղ հանդիպակաց մոլորակիդ —
Նրպատաստ 'ի պէտսըն լինի, ամսօրէիւք ճախր առեալ շուրջ,
Միշտ մաշեալ եւ ցանգ նորեալ զերեքկերպեան երեսըս իւր
Յերկնընթաց ասպարիսին՝ ատտուստ առեալ լուսոտն յանօթ,
Իւ ընտու եւ թափի առ լուսատու լինել յերկիր,
Եւ տիրէ գիշերոյ տրիսրատեսիլ իշխանութեամբ։
Գէզգ այդ՝ զոր ցուցանեմս քեզ՝ դրբախտն է Ադամայ,
Մեծաբերձ հովանիդ՝ է տաղաւար իւր եւ խորան։
Անսքնալ է ճանապարհդ, եւ խմն առ իս կարդայ հրաւէր։»
Ասաց եւ դարձաւ. Սատանն երկիր պագեալ խոնարհ
Վեհագոյն հոգեղենին՝ որպէս կըրօնք են այս յերկինս,
Ուր չառնէ զք անփոյթ զօրէն պատուոյ մեծարանաց,
Հրաժարեալ եւ զանձն հոսէ յափն ինչ երկրի 'նդ խաւարման ծիր։
Ծրըրացեալ 'ի յոյս ելեցն ըշտասէ զթռիչքն դէպ ուղիղ
Վերուստ 'ի վայր շաղնչանան օդեղենի շըրջեալ հանգոյն,
Եւ զտեղն առեալ եւեթ ուր էջն 'ի սար Նրպատական։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի սեսիլ Ադինայ ալէկոծեալ Սատանայ 'ի պէսպէս կիրս՝ եւ հաստատեալ 'ի չարն՝ խաղայ 'ի Դրախտն, եւ մոռեալ լսեսեալ զամենայն՝ սքանչանայ ընդ Ադամ եւ Եւա եւ ընդ բախտ նոցին. եւ 'ի խօսից նոցա 'ի միտ առեալ զարգելս ծառոյն գիտութեան՝ զայն առնու պատեհ փորձելոյ զնոսա։ Ուրիէլ ազդ առնէ Գաբրիելի պահպանապետի Դրախտին զերեւումն ոգւոյն չարի եւ զէջն 'ի Դրախտն, եւ նա խոստանայ գտանել զնա։ Ադամ եւ Եւա յաղօթս կացեալ 'ի գիշերին՝ զնան յառաւաստ 'ի քուն։ Գաբրիելի պարեկապանս հանեալ այսր անդր, գտանեն զՍատանայ առ Եւայի՝ փորձել զնա անբջոյք, տանին առ Գաբրիել. եւ 'ի կամել իւրում 'ի վսեր ընդ նմա գալ՝ պակուցեալ յերկնաւոր նշանէ՝ հալածական զնայ։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ՁՈՐՐՈՐԴ

Ո՛հ, զի՞ ոչ հընչեաց ազգարար ձայնն՝ որ լու եղեւ
Տեսողն Յայտնութեան՝ յորժամ կըրկին վանդեալ վիշապն
Յարձակեցաւ մոլեգին առնուլ վըրէժ 'ի մարդկանէ.
Ձայնն ուժգին բարբառոյ յերկինս՝ թէ Վայ բնակչաց երկրի։
Զի գեռ եւս 'ի ժամու նախածնողացս ըզդաստ լինէր
Զխրեանց վերագին ըզդաղտասոյր դալըստեան.
Թերեւս այնպէս ապրէին 'ի մահահոտ որոգայթէն։
Քանզի այժմ, այժմ իսկ Սատան դաղանացեալ սըրտմըտութեամբ
Էջ նախ յերկիր՝ փորձիչ ազգի մարդկան մինչ չեւ լեալ ջարախօս.
Եկն հանել ընդ անմեղ եւ 'նդ ապիկար մարդն ըզպատիժս
Առաջնոյ մարտին բեկմանն եւ փախըստեան իւր 'ի դըժոխս։
Այլ թէ խրոխտ եւ ամեհի՝ չէ ինչ ուրախ 'ի շտապ իւր ՃԵպ,
Զկիր պատճառաք պարծանաց 'ի ձեռնարկել զոճիրն ահեղ։
Խորհուրդք նորա մերձ յերկուսս յուզին եռան 'ի խառով սըրտին,
Եւ դիւագին ինչ իբր անօթ ընդ կրուկ դառնան յինքըն բեկեալ։
Սոսկումն եւ տարակոյս գերլուն ըզմիտսըն պըզտորեալս,
Եւ զդըժոխս յանդընդոց անտի զդայռեն 'ինմա 'ի վեր.
Զի զդըժոխս յանձին կըրէ եւ շուրջ զնրեւ շուրջանակի,
Ոչ կարէ փախչել յանձնէն՝ տեղն փոխեալ 'ի տեղւոջէ։
Մըտացըն խիղճ ըզթըմբրեալն յարուցանէ զանյուսութիւն,
Քրքքրէ զուշն 'ի յիշատակըս դառնութեան, որ ինչ եղեւն,
Որ ինչ էն եւ որ յապայս ինչ առաջոյ է լինելոց։
Աղարուածք դըժնեպագոյնք՝ հատուցեն մեծ եւս պատուհաս։
Մերթ յԵդեմ կոյս որ զարդիս կայ տարածեալ իւր առաջի՝

Տրամադրին զաչքն յառէ կողկողագինս, եւ մերթ յերկին,
Եւ յարեւելս՝ յայնժամ շողեալ 'ի բարձրը բուրգն իւր միջոցեայ։
Զամենայն լեալ մըտախոհ՝ զայս հեծութեան արձակեաց ձայն.
«Ո՛վ, որ գերապանծ փառաց 'ի դլուխս կապեալ պըսակ՝
Ի բարձանց այսի քոյոյ միանձնական ըշխանութեանդ
Ակնարկես իբրեւ զաստուած նորանորոգ տիեզերացս,
Յոյր երեսացդ համբրէն ծածկեն աստեղք ըզդոյզն գլուխս,
Աւ քեզ գոչեմ, սակայն ոչ սիրոյ բարբառ, ձայնեմ զանուանդ,
Ո՛վ արեւակն, յերեսդ ասել՝ զի աստեղն յոյժ են շատայլքդ
Որ ինձ յուշ ըզկարգն ածեն յորմէ անկայ՝ եւ զփառսըն մեծ
Յոր երբեմըն գերակայ քում կամարիդ ամբառնայի։
«Գոռոզութիւն զիս ընկէց եւ փառամոլ զահու տենչումն,
Ընդ երկնից գերագոյակ արքայեն անդ էաու Ճակատ։
Ո՛հ, ընդէ՞ր. այնպիսում փոխարինիս չէր պարտաւոր,
Որ ըստեղծն որ ինչ էիս զիս 'ի կարգին վերհագուցի.
Ըզբարիսն ինձ չերախտէր, ծառայութիւն իւր չէր ինչ խիստ։
Զի զի՞նչ մեծ էր օրհնութիւնս հանել նրմա 'ի հեշտ պաշտօն,
Եւ կամ զի՞նչ դոհութիւնս ըստ արժանին մատուցանել։
Սակայն յիս՝ բարեաց համակ չարիս ծընան եւ չարութիւն։
Յայն բարձունս ամբարձեալ՝ զընկեցի զլուծ հնազանդութեան,
Կարծեցի թէ միւս եւս ոան առեալ՝ լեցիմ Բարձրեալն ինքնին,
Եւ վայրիկ մի եւ ահա զերծանիցիմ յանբաւ պարտուց
Անվախճան հնարհակալեաց. ծանրը պարտիք եւ անվերջաւոր,
Հանապազ հատուցանել, եւ կալ մընալ ցանդ ընդ պարտեօք։
Մոռացօղք ինձ լինէին զոր 'ի նմանէն առնուի միշտ.
Ի միտ չառի թէ հոգի գոհաբանող՝ է պարտ անպարտ,
Զի անդուլ հատուցանել, միշտ պարտապան, ցանդ հատուցող։
Իսկ արդ բեռն ինչ լցէ այս. աւաղ, զնա՞րդ հրամանն հրզօր
Զիս հրեշտակ չարաբ ստորին, դեռ եւս էի արդ երջանիկ.
Յոյս մի անսահման զփառաց ծարաւ ոչ ծընանէր։
Այլ՝ սակայն՝ առ ինչ ոչ. թերեւս այլ մեծ ինչ զօրութիւն
Այդուհանակ փառասիրեալ՝ յինքն արկանէր զիս ըզոբրուպս։
Բայց այլքն վեհ զօրութիւնք չանկան, այլ կան անդրդուելի
Նեբքոյ եւ արտաքոյ զինեալ ընդդէմ հրապուրանաց։
Իսկ քո չէր նոյն անձնիշխան կամք՝ նոյն կորով կալ 'ի կայիդ։
Էր. արդ զուա՞ք եւ զնա՞ք լցէ լինել քեզ ամբաստան,
Բայց զաղաս սիրոյն Երկնից՝ որ հարթ սրփռեալ յամենեսին։
«Ընդովք ուրեմն այնրմ սիրոյ. քանզի ահա յիս հաստակ
Առելութիւն եւ թէ սէր՝ ածեն յաւերժ թշուառութիւն։
Ոչ այդպէս. անիծեալ դու. զի քո կամաւդ իւրումն ընդդէմ
Կամակար ընտրեցեր զոր յերաւի զրջանաս արդ։
Վա՜հ ինձ թշուառիս, ընդ ո՞ր գրտից փախրատի հեռս

Յանդասպառ բարկութենէն եւ յանդասպառ անյուսութեանց։
Ամենայն ճանապարհ յոր փախնուցում՝ դըժոխք են այն.
Ես ինքնին խակ եմ դըժոխք, ուր 'ի խորին անդունդս անդ՝
Խորագոյն անդունդք են լայն բերանացեալ, սպառնացեալ ցանգ
Կլանել զիս, առ որ դըժոխքն յորում ըլլիմն՝ երկինք թըւին։
« Ո՛հ ինձ, սրդ թուլացա. չիք ինչ ուրեք թողեալ տեղի
Սարսղանաց, ոչ թողութեան... ոչ, բայց միայն հնազանդութեամբ...
Զայդ բարբառ՝ գոռողութիւն իմ եւ երկիւղ ծանր ամենոյ
Առաջի սորին ոգւոց՝ 'ի բաց մերժեալ կարձեն յինէն։
Ոչ այս այն են աւեալք՝ որով զնոսայն հրապուրեցի,
Եւ ոչ այս խրախուսանք էին յայնժամ հնազանդութեան՝
Մինչ կայի խիզախեալ՝ զԱմենակալն առնել նըկուն։
Զեն նոքա տեղեակ, աւաղ, զինչ ինչ արժէն ինձ սին պարծանքս,
Ընդ որում կըստանոք հաշիմ մաշիմ ես 'ի նեերքուստ՝
Մինչ դեռ 'ի գահ դըժոխոց երկիր նոքա ինձ պատանեն։
Ամբարձեալքս վերհպոյն 'ի դաւազան եւ 'ի պըսակ՝
Դան ըզբնուս անկայ 'ի վայր՝ վայրք եւեթ բարդաւաճեալ.
Զայդ աւադիկ ըմբռնեսցեն ուրախութիւն՝ փառաց տըսփուսին։
« Այլ դիր թէ դամ յապաշաւ, առնում ընորհիւ զկարդս առաջին.
Աշխատանին բարձրութիւն ծընցի անդէն միտքս բարձուցս,
Փոյթ ընդ փոյթ զառաջեացի երդուսին առ աչքս նըւաճման,
Վ ըշտեցըն փոփոգանք յուրաստ ըլցին յուխտից ցաւոցն՝
Ա՛ռ ոչինչ զայնս համարեալ եւ ըրընտարար կորզեալս եւեթ։
Չիք երբեք ամենեւին չիք հաշտութիւն անկեղծաւոր
Ուր խրղնայթք մահուշափ առելութեան խոր ճարակին։
Այդ 'ի չար եւքս դըրժանս՝ 'ի ծանր եւս զիս արկցէ անկումն,
Մեծաղնի տուժեցայց կըրկին պատժովք ըզսուղ հանդիսան։
Զէ զանխուղ այդ 'ինմանէն որ զպատուհասն ածէ զինեւ,
Ի հաշտ դալոց ցայն է օտար՝ ցորվայր եւ ես 'ի մուրալոց։
Ի խըզել ըբնաւ յուսոյն՝ փոխան մերժեալ տարադրելոցս
Ահա զմարդն է ստեղծեալ, ըզնորատնուդ իւրըն դըրգանս,
Եւ առ 'ի պէտս մարդոյն՝ ըզտեղերս այս ամենայն։
Արդ ուրեմն ոչ երթ՝ յոյս, եւ ընդ յուսոյն ոչ երթ՝ երկիւղ,
Ոչ եւ դու երթ՝ խիղճ մըտաց, կորեաւ վասն իմ բարին ըմնաւ։
Չար, ելը իմ բարին, կալայց քեւ գէթ ըզտերութիւն
Բաժանեալ յերկուս՝ ընդ իս եւ 'նդ երկնաւորըն թագաւոր.
Դեւ քան զկէս տիեզերաց յիմում ձեռին ըլցի թերեւս։
Զայս հուպ ընդ հուպ ուսանիցին մարդ եւ աշխարհս այս նորակերտ։»
Ի խօսելն անդ մէն մի կիրք ածէր 'ի դէմսն շափառուկ
Յերրադարձս անյուսութեամբ՝ տըմոյն ցասմամբ եւ նախանձու,
Որ զերեսքս պաճուճեալ կերպարանացն աղճատելով
Մատանէին զնենդըն պատիր՝ թէ դոյր ոք անդ ակն տեսող.

Զի միշտ ոգիքն երկնաւորք ազատ են յայս քարուտականաց։
Զոր յուշ ածեալ՝ ծածկեաց ըզծուփսն անդէն յանդորրս վերիվերոյ։
Պատրանաց հայր ինքն նախ ըզսրտութիւն առ իւր 'ի կիր
Սրբական պատճառանօք՝ առ առագաստ արկանելոյ
Խորամանգ չարութեանն որ կայր թաքուն յոխիցն քէնս։
Սակայն չէր էր քաջ հրմուտ 'ի հնարիմաց իւր արուեստին
Ի խաբել զՈւրիէլ, որ եւ լեալ այն ինչ իրաղեկ՝
Ուշ եդեալ դէտսին ունէր ընդ ճանապարհն ընդ որ երթայր։
Ի լերինն ասորեստան եռեալ ըզնոյն այլանդակեալ
Որպէս ինչ էր վայելուչ երջանկազարմ հոգեղենի.
Զմոլեգին ծանեալ շարժմունսն եւ զնօրական գնացիցն կերպ,
Մինչդեռ նա՝ միայն կարծէր զինքն աննրկատ անհետացեալ։

Այսպէս ոահ յառաջ գործեալ՝ յադինային մերձի սահմանս։
Փափկութեան դրախտն հեշտավայր՝ յոր մտ հասեալ էր նա յայնժամ՝
Կանաչ ցանկովքն սրբակէր զերդ պատնիշաւ ինչ դաշտական
Ըզգաղաթեն սարահարթ երկնակատար առանձնոցն։
Թանձրախիտ կողք ամայեացս 'ի թաւաթուփ խոզանացեալ
Վայրենեալ շռայլեալ ըստ կամս՝ յարդարէին զայն անմատոյց։
Ագէին 'ի գլուխ նորա յանհաս բարձունս, անտառատուն,
Բարձրաբուն մայրք եւ շոճք, արմաւենիք եւ եղեւնիք.
Խուռնախիտ հոծեալ կարգաքն հովանի կուռ 'ի հովանի,
Կազմեն թաւոր ինչ մայրեաց հրաշատեսիկ, վեհինաձեմ։
Այլ քան զդիտակս իւրեանց 'ի վեր կանգներ դրախտին դալար ոստած՝
Որ պարզէր նախահօր մերում տեսիլ ծայրածաւալ
Շրջանափիս 'ի պարագայ կոմմանս իւրում իշխանութեան։

Բարձրագոյն քան զոստածն որ ընդ իւրեւ պարայածէր՝
Երեւէր ընտիր ընտիր գեղեցկապտուղ տունկոց պլսակ,
Ծաղկունքն եւ մրգք ոսկեշող յօրինեալն երփնից կիտուած։
Արեգակն սրբատակաթ զայն համբուրէր ճառագայթիւք
Քան թէ զամս երեկորոյ զգեղապարոյր յերկնից կամար,
Կամ զաղեղնն խոնաւուտ մինչ առոգէ Աստուած զերկիր։
Այսպիսի էր սիրաշարժ տեսիլ գեղոյ զբաթ վայրին։

Ըստ մտեալ՝ 'ի սուրբ օդոյ էր անցանել 'ի սրբագոյն՝
Սրբատեղեաց եւ գարնային ուրախութեամբք հոգեպարար,
Զօրաւոր մերժել ըզնաւ թախիծ, բայց ոչ զանյուսութեան։
Հեշտաշունչ սիքք թօթափեալ ըզնրնկաբոյր ըզթեւս իւրեանց՝
Հոտ սրփոէին անոյշ 'ի բնէ, պէսպէս վայրացն եղեալ գուշակ
Յորոց շրջեալ ածէին զաւարսն զայն ըզնրնկաւէտ։
Որպէս նաւազք առնրթեալ ըստ սարաւանդն Բարեյոյս
Եւ անցեալ ըզՊասոնիս, հոլմք հիւսիսի մինչ անդր 'ի ծով
Ըզնաբայ բերեն բուրմունս 'ի խընկաբեր ափանց անոր
Երջանիին Արաբայ, եւ ընդ յամէլն հեշտացեալք

Մըտադիւր ծանրանաւէն, եւ հինաւուրցըն Ովկիան
Զուարճացեալ 'ի հոան անոյշ ցըմեռ փարախըս ծիծաղի.
Նոյն եւ այն շոգիք քաղցունք հարկանէին 'ի Թըշնամին,
Որ գայր Թունել զայնոսիկ, Թէպէտ յաւէտ յայնս հեշտանայր
Քան Աղմոդ 'ի ծուխ ՀՐկանն՝ որ հալածեաց ըզտարփաւորն
Ի Տոբիթեան սրդոյն հարանէ, զքենու շատպեալըն փախ 'ի փախ
Ի Մարաց մինչ յԵգիպտոս՝ ուր եւ արկաւ 'ի խիստ կապանս։
Մըտախոհ եւ յամրաշարժ ընդ մացառուտ եւ սեպացեալ
Կողըս բըլրոյն եվ Սատան, այլ չեգիտ այլ եւս արահետ.
Ոլորք փըշոց ցանկապատ եւ մորենեաց շրջայլութիւնք
Ի մարդոյ եւ յանասնոյ զանցըս խրնուն ճանապարհին։
Մի եւեթ էր դուռն անդէն՝ զեմ յարեւելս 'ի հանդիպոյն,
Զոր տեսեալ վերագին, ըզբուն մըտիքըն քամահեալ,
Եւ 'ի մի վազ թեթեւ անկուշելով ինն եւ ընդոստ
Ըզցանկով բըլրոյն եւ զբարձր որմոնն անկաւ 'ի ներքս յոտին։
Որպէս գայլ հուրկահարու սովալըլուկ զհետ նոր որսոյ՝
Զմակաղատեղս հովուաց յանքոյթ բակս ընդ երեկս 'ի դաշտ գիտեալ
Դիւրաւ ոստնու զվանդակաբ 'ի փարախ անդրըս միջամուխ.
Կամ զերդ գող հրոսեալ 'ի գանձ ճոխ մեծատան յառ եւ յապուռ,
Ոյր դուրքն ըստուար՝ հաստ յամրափակ նիզ ջերկընչին 'ի յարձակմանց,
Ընդ պատուհան կամ ընդ երդ մագլէ սողայ գամըս դասանել,
Նոյն նախնի մեծն յելուզակ յաստուածեղէնն հրոսէ գաւիթ,
Նոյն եւ ըզկնի գրոհ եռուն յեկեղեցի իւր զեղն վարձկանք։
Նա սլացեալ 'ի կենաց ծառն՝ 'ի բարձրաբերուն 'ի տեղւոջ անդ,
Նըստաւ յայն իբր հողամաղ, ոչ ճըշմարտին հասեալ կենաց,
Այլ կենդանեաց նիւթէ մահ, չածէ զմըտաւ զկենաստուին ոյժ՝
Եւ զի էր 'ի բարեղք պէտս՝ անմահութեան առհաւատչեայ.
Այլ գործի առ զայն եւեթ 'ի հեռարձակ իւր տեսութիւն։
Ոչ զք անշուշտ, թող զԱստուած, գիտէ զբուն յարդ ներկայ բարւոյն.
Նա եւ պէտք լուսագունից վարին յումպէտ կամ զեղծանին։
Ի ներքոյ իւր տեսանէ նոր հիացմամբ յանձուկ վայրի
Զամենայն գանձս բնութեան 'ի հեշտ մարդոյն ըզգայութեանց,
Նա մանաւանդ զերկինս յերկրի. վասն զի դրախտն երանաւէտ
Աստուծոյն էր ձեռաստունկ պարտէզ յԵդեմ ընդ արեւելս։
Եւ Եդեմ ընդարձակէր ընդ արեգ կոյս 'ի Աւրանայ
Ցաշատարական արքունաշէնն Ցունաց մեծին Սելեւկիոյ,
Կամ մինչեւ ցանդր ուր որդիքն Եդեմայ նախ բընակեցին
Ցերկարեալ յառաջագոյն ըզժամանակն 'ի Թելասսար։
Էնն յանուշակ աստ վայրի զչքնաղ պարտէզ իւր նրկարեալ՝
Ցարդաւանդ երկրէն բուսոյց զազգ ազգ ընտիր ընտիր տընկոց,
Ըզտոհմիկս ազնըւագոյնս 'ի տես, 'ի հոտ եւ 'ի ճաշակ։
Ի նոցին կայր 'ի միջի ծառն կենաց ամբարձաձիգ՝

Գեղեցիկ խայծեալ պրտղոնն անմահութեան ոսկեբողբոջ։
Հուպ 'ի կենանէս մահն մեր՝ գիտութեան ծառն աճէր 'ի բոյս,
Բարւոյն հանձար՝ մեծագնի գրնեալ ջարին ծանօթութեամբ։
Ի հարաւ կոյս ընդ Եդեմ անցանէր գետ լայնածաւալ
Անխոտոր ընթացիւք, բայց ընդ լերամն անաառախիտ՝
Երկրասոյզ կորընչէր. արկեալ էր զայն լեառն Աստուծոյ
Իբրեւ թումբ ինչ ամբարտակ 'ի պարտիզն շտապ յորձանիցն։
Ուիքն ընդ երակս յաջնավրտատ երկրին ախորժ ծարաւութեամբ
Ի վեր ծրծեալք՝ բրղնեին ակնավրձիտ ցրտին աղբիւր՝
Ըզպարտէզն առոգանել առուս առուս սրփռեալ վրտակս,
Այց անտի խուսմբ առեալ եւ խուռնընթաց անկեալ 'ի վայր
Ընդ խոխոմն ինչ առատպար՝ հանդիպէին անդէն գետոյն
Որ եղեալ ընթանայր 'ի մընթասոյզ ալից իւրոց։
Անդ յայնժամ 'ի ջրոս առաջրս բաժանեալ 'ի մեծամեծս,
Յայլ եւ այլ կոյս արշաւեալ՝ փորէ 'ի փոր թափառէին
Եւ 'նդ տերութիւնս անուանիս, զորոց ընդ վայր է ատտ ճառել։
Ասասցուք մանաւանդ, թէ արուեստն ինչ ելեալ հնար,
Ի՛բր յաղբերէս շափիղեայ ոլորտապտոյտ գրնան վրտակք
Ընդ աւազ ոսկեհատակ եւ 'նդ մարգարիտս արեւելեան.
Ի՛բր 'ի շրջրջան մանուածապատ ընդ գետնասող հովանեաք
Ըզծորանսն ծաւալեն յայց ու՝ 'ի խընդիր մէն մի տընկոյ,
Եւ 'ի անուանդ երփներանգ դրախտավայել գունոց ծաղկանց,
Զորս ոչ նուրբ ինչ յօրինեաց արուեստ 'ի կարգ, 'ի փունջ ջրքնալ,
Այլ՝ առատն եհեղ բնութիւն ընդ բլուր, ընդ մարդ եւ ընդ հովիտ,
Ուր արեւ վաղորդայնի ջեռուցանէ զդաշտավայր նախ,
Ուր սաղարթք թանձրախիտք ածեն մայրեաց մութ մէջօրեայ։
Այսպիսի էր տեղին, ասպընջական երանելի,
Հովասուն, զարմանազան 'ի կերպակերպ դիմաց տեսիլ։
Անտառակք՝ որոց ճոխ փայտք ցօղեն ուռեին եւ հոյզ անոյշ,
Դարաստանք՝ որոց պրտուղք ոսկեկեղեւ եւ ոսկեփայլք
Առ 'ի կախ ճօճեալ ճեմին, սիրափափագք, քաղցրաճաշակք,
Երեկոյնեայ սառդ առասպելք, որ թէ լցեն՝ ատտ են միայն։
Ի մայրենն անդ ցան եւ ցիր կան դիւրք եւ մարդք անօսրագեղք,
Եւ հօտք եւ անդեայք ճարակաւորք յարօտ դալար,
Կամ բրլրակք ամբառնան արմաւենեօք լի տընկախիտ։
Ծաղկաւէտ ծոց ջրբասուն ինչ ծործորոց սրփռէ զկիր գանձս՝
Երփնազարդ ծաղկանց երանգս, եւ գեղափթիթ ըզվարդ անփուշ։
Յայլ ինչ կոյս՝ այլք եւ անձաւք հովանաւորք, զով առանձնոցք,
Եւ այգի՝ զայնս օթոցիս պատեալ իւրով տարածանէ
Զծիրանի ոզկոյզն՝ առատ սողոսկելով գեղեցկուղէշ։
Կարկաչոտ միանգամայն ալիք սահեալ ընդ բրլրոց շեպ
Ճասպաղն, կամ ժողովն 'ի մի զհոսանս իւրեանց 'ի լիճ

Որ ծաւալ առեալ պարզէ զասպակեղէն զնուր հայելին
Առ դարեւանդ խոտորկլուսուր ափանց 'ի մուրա պրսակելոց։
Հաւք 'ինուագսըն պարապէն, որոց սրղոիք դարնանաշարժք
Զանուշկց շնչեալ բուրմունս անդաստանաց եւ ըզմայրեաց՝
Ի մի ձայն միաբանեն ըզծածանեալ դողդոջ տերեւս,
Մինչդեռ Պան համաբոլոր ամենավար անցեալ 'ի սար
Ընդ Շընորհս եւ ընդ ժամս ածէ գարուն յաւէտաղուարճ։
Ոչ Երենայ մարդ գեղեցիկ, ուր ծաղկաքաղ Պերսեփոնէ՝
Ինք ծաղիկ գեղեցկագոյն՝ խլեցաւ 'ի Թուխ Սանդարպետէն,
Դեմեարէ տառապագին ընդ համաշխարհ խընդրեաց ըզնա,
Ոչ հեշտասուն անտառակրն Դափնէի առ Որոնտեաւ,
Եւ ոչ հոգիաշունչն 'ի Կաստալեայ բըղխեալ աղբիւր,
Ի կըշխա ինչ մրտանել կարէ 'նդ գրախտին եդեմական,
Թող թէ կրղձակրն Նիսէ՝ զորով Տրիտոն պատ առնու գեա,
Ուր հինաւուրցն Քամ՝ Ամմոնն կարդացեալ հեթանոսաց
Եւ Արամազդ Լեւոցի՝ առեալ Թաքոյց զԱմալթեա,
Եւ զորդին ծաղկափթիթ ըզպատանին Սպանդարամետ,
Ի բաց տարեալ մեկուսի յաչաց Ռէայ մօրուն իւրոյ։
Ամար լեառն՝ ուր Թագաւորք եթովպացւոց պահեն զուսաերս,
Թէպէտ եւ կարծեցեալ ոմանց բուն դրախտն իսկ Ճըշմարիտ,
Ընդ երկնաւն եթովպական՝ առ Նիլոսին աղբերակամբք
Ի փայլուն պատեալ ժայռէ յոր թէ ելցէ զօրն ոք ցերեկ,
Նա իսկ համբուն չէ ինչ մօտ յասորնականքս դարաստան,
Ուր վիրաշն եռես զՀամայն հեշտանս առանց ինչ հեշտանաց,
Զամենայն շունչ կենդանի՝ նորատեսիլ եւ շնաշխարհիկ։

Երկուք 'ինոցանէն ազնըւակերպ հասակագեղ
Վրսեմաբերձ աստուածանման՝ զնուրեանց բընիկ փառան ըզդեցեալք,
Ի մեծ շուք մերկամարմին՝ ամենայնին թըւեցեալ տեալք,
Եւ պատուոյն պարծանաց երեւելին արժանաւորք։
Յաստուածային աչս իւրեանց ծագէր պատկեր վեհ Արարչին
Ուղղութեամբ եւ հանճարով եւ սերտ եւ սեռն սրբութեամբ.
Սեռն եւ սերտ, սակայն 'ի ստոյգ որդիական ազատութեան՝
Որ նօթձէ 'ի մարդիկ ըզՀրշմարիտն իշխանութիւն։
Զեն հաւասար երկոքեան, որպէս բնութեամբ իսկ չեն հանդէս.
Այլն եղեալ 'ի մրտաւոր խմաստութիւն եւ յարութիւն,
Կինն 'ի դըրգանքս քընքշանաց, 'ի շնորհ անոյշ սիրայորդոր.
Այր միայն վասն Աստուծոյ, կին Աստուծոյ եւ առն իւրում։
Գեղեցիկ եւ լայն ճակատ մարդոյն եւ աչք բարձրահայեաց
Զգերագոյն իշխանութիւնքն գուշակեն յայտ յանդիման.
Յակընթեայ խոպոպք վարսիցն յերկուս ջոկեալ 'ի ճակատուն՝
Տատանին ողկուզօրէն եւ առնացի վայելչութեամբ,
Սակայն ոչ 'ի խոնարհ քան զկորովն ուսոք իւրոք։

Կին ոսկի պրոլեալ հերովք՝ որոց ի ջեալ ցիր եւ անվարդ
Մինչեւ 'ի մէջն փափուկ՝ պէսպէս ծրիին գեղագանգուլք
Զերդ խաւարծի որթոյն 'ի խիղճս որոյ՝ նրշան կապոյ հլուլթեան.
Զոր ըզգոն եւ մեղմական պահանջեալ առնին տերութիւն,
Եւ շնորհեալ 'ի կնոջէն, եւ յառնէն լաւ եւս ընկալեալ.
Ինքնարդոյ հնազանդութեամբ եւ պատկառոտ շնորհեալ խրոխտով,
Քաղցրախորժ գիմամարտիկ սերատենչակ դանդաղանոք։
Զեւ 'ի պարկեշտ անգամոց մարմնոյ նոցին էր ինչ թաքուն,
Զի դեռ եւս առ նոքօք ամօթ մեղայ չէր 'ի միջի։
Ամօթ՝ անվայելուչ գործոց բնութեան, շուք անպատիւ,
Ծրնանդ մեղայ, քանիսն աղմրկեցեր դու զմարդկան աղդ
Սին առ աչքս պաճուճեալ անբծութեան կերպարանոք.
Ի կենաց մարդոյն մերժեր զերջանկաւէտ կեանքս նորա,
Զպարզութիւն սեռն եւ սուրբ եւ զանարատ անմեղութիւն։
Այսպէս զոյգն անցանէր մերկ, ոչ յերեսաց ինչ խորշելով
Ոչ յԱստուծոյն, ոչ հրեշտակաց, զի չածէր չար ինչ ըմբռնաւ.
Այսպէս ձեռն 'ի ձեռն արկեալ գնային ամոլքն ամենագեղ
Յորս խցեն երբեք զօդեալ 'ի գերկախառն համբոյր սիրոյ.
Ադամ՝ ամենալաւն 'ի մարդկանէ, յորդւոց իւրոց,
Եւա՝ չքնաղագեղն յազգքս կանանց, իւրոց դրստերց։
Ընդ թաւաթուփ հովանեաւ որ քաղցր 'ի սեզ շրջէր կանաչ՝
Բաղմեցան առ ափին ականակիտ բղղեալ աղբեր,
Ի վաստակ գեղածիծաղ պարտիզին այնչափ աշխատեալք,
Որչափ հարկ էր յանուշել ըզզովարար օդոցն սիք,
Առ 'ի քաղցր ըզքունն առնել, զծարաւ եւ զքաղց՝ առողջարար։
Քաղեցին անձամբ զնայրեա երեկորին ընթրեաց իւրեանց,
Պրտուղք ախորժահամք զոր ոսոք առ ձեռն ընձեռէին,
Մինչ ինքեանք 'ի կողմ եղեալ ողն առնուին առ 'ի հանգիստ
Ի փափկիկ սիզաբուսակ ծաղկանըկար 'ի քաստեռունս։
Ծրծէին զանուշակ ուղիղ մրրդոցն, եւ ծարաւեալք՝
Ըմպէին 'ի կեղեւս նոցա զվրտակն աղբերահոս։
Ցայս խընջոյս ոչ պակասէր՝ ոչ աղու բանք, ոչ մեղմ ժըպիտ,
Ոչ աշնոյժ գրգռանք՝ կայտառ այնց ամուսնացն սեփականք
Զուգելոցն յերջանիկ հարսանեկան սիրոյն 'ի կապ,
Եւ զի էին առանձին. պաճարք երկրի կայտառէին շուրջ,
Որ ապա վայրենացան, եւ հալածին յամենեցունց
Ցանապատ անշէն, յանտառս եւ 'ի պուրակս եւ քարանձաւս։
Առիւծքն խայտալով յառնէր կանգնէր 'ի թաթս ոտիցն
Եւ առեալ 'ի ճիրանունքն տատանէր զամիկ մատաղ։
Արջք, վագրքք, ինձք եւ յովազք, ոստոստէին դէմ յանդիման,
Կոպտարանձքն փիղ 'ի դբօս նոցին զբոլոր իւր զօրութիւն
Ի հանգիստ գործ արարեալ՝ զճապուկ պատիճքն շրջշրջէր։

Խորամանդ օձն առընթեր սլսպրդելով խրթեալ սողսկ՝
Ի հանդոյց գալարեր Գորգեան զոլոտանքն քընթըռնոցս,
Եւ անծանօթ տայր ցոյցս խրո

Պատիւս եւ սէրութիւնս որ առնեցէ վրէժխնդրութեամբս
Ի գրաւելս ըղնորս աշխարհ, բրնդաղատեն զիս վրնարել
Զատելին ինձ առանձին, թէպէտ եւ անձն եմ դատապարտ։»
Զայսոսիկ բարբառեալ ջարավիրապէն Թըշնամի,
Եւ հարկին պատճառանօք՝ բրնդաւորաց պատրուակաւն՝
Ի ջրքմեղոս լինելոր գիւահրնար ժամս խորհրդոցն։
Ի բարձանց անտի ուր կայրն 'ի մեծ ծառոյն փութացաւ էջ
Ի կոյտառ երամ երամ բոյլս երկոց ջրքոտանեաց,
Ինքն իսկ մի յայնցանէ եղեալ՝ մերթ այս եւ երբեք այն,
Որպէս ուրուք ինչ 'ի դէպ իւրում մրատցըն թուէր դիտակ։
Տեսեալ զոլոն իւր 'ի մօտոյ՝ հետաղօտէ զանխրլաբար
Զոր ինչ մարթն է խմանալ զբախտն զուգիցըն կենակցաց
Ի խօսից անտի նոցա կամ 'ի գործոց ինչ հանդիպէ։
Ըզնոքօք 'ի ձեռն գընայ՝ փայլակնացայտ աչօք առիւծ,
Զհետ կըրթի որպէս վագր՝ որոյ գրաեալ ըստ գիսուածոյ
Զոյգ եղինքս գեղեցիկս 'ի շրջակայս ինչ անտառի
Ի բերանս հարեալ 'ի սող գընայ 'նդ գետինն, 'ի վեր վազէ,
Ըստէպ ըստէպ փոփոխէ զդարանատուս իւր թաքըստոց։
Թըշնամեայ ինն հանդոյն ընտրէ զտեղին՝ ուստի գիտեալ
Մէն մ'ի ձիրանան անվրէպ արկցէ զմատաղ եղնորթսըն զերկոսին։
Նախամարդն Ադամ յԵւա յառաջին կինն արկեալ զայս բան՝
Ունկըն համակ կացոյց ըզգէն 'ի լուր խօսից նորոյ ելգուի։
«Զուգակից իմ միակ, մէն այս հեշտից ընդ իս կըցորդ
Եւ սիրուն քան զամենայն, մեր արարողն զօրութիւն,
Որ եւ 'ի մեր վրան ըստեղծ զաշխարհըս զայս մեծատարած,
Հարկ ապաքէն է թէ ելչ անեղծական անբաւ բարի,
Ըստ բարութեանն եւ առատ, 'սատնբաւութեանն եւ անձնիշխան։
Ի հողոյ զմեզ հան 'ի գոյ եւ եդ ատ յայս երանութիւնս,
Որ չէաքս ինչ արժանի պարգեւաբաշխ իւրում ձեռին,
Եւ չունիմք ինչ անկարօտ ապէնիաղ բնութեանն առնել։
Զպահանջէ 'ի մէնջ բայց զայս պաշտօն հեշտին ունկընդրութեան,
Յամենայն ընկոց դրախտս պըտղաբերաց պէտպէս համոց
Զեռընպահ 'ի գիտութեան եւ թէ փայտէն լինել պատրաստ՝
Որ առ ծառոյն կենաց ընկեալ։ այսպէս առ կեանս հուպ առնէ մահ,
Որ զինչ եւ էն, ահաւոր ինչ անեղիցոյ։ դու իսկ գիտես՝
Զի ուսել 'ի գիտութեան ծառոյն է մահ, Աստուած կընքեաց։
Աւադիկ միայն հանդէս հնազանդութեան մեզ պատուիրեալ,
Յեռ այսչափ զօրութեան եւ պետութեան շնորհելոյ մեզ
Եւ սերութեան յարարածս որ 'ի յերկրի, յօդս եւ 'ի ծով։
Խիստ ինչ մի այսուհետեւ թուեսցի թեթեւ հրամանին սատ
Մեզ յորոց պէտս՝ ազատ եւ ձոիս պարգեւեցաւ ամենայն ինչ,
Եւ ամենայն մեզ յընտիր եղեն հաճոյք անչափութեամբ։

Ա՛յլ յաւէժ զէնն օրհնեսցուք, բարեգթութեանն հանցուք փառս,
Անդադար ըստէպ կացցուք 'ի զուարճալի սակ պաշտամանս՝
Յառանել ըզՅովացեալ առնկոս, ըզծաղկունսն մշակել,
Որ թէ 'ւէր տարժանելն՝ քաղցրահամբոյր ընդ քեզ լինէր։»

Պատասխանի էտ Եւա. «Դու վասն այր եմն ես ըստեղծեալ,
Յորմէ եղեալ իսկ 'ի գոյ, 'ի քո մարմնոցդ առեալ մարմին,
Եւ առանց քո էութիւնս իմ անհոլոհուրդ է վայրապար,
Ո՛վ առաջնորդ իմ եւ գլուխ, իրաւ եւ ստոյգ են ասացեալքդ.
Հանապազ օրհնել արժան է զմէր Հաստիչն եւ գոհանալ,
Ինձ յաւէտ՝ ում բարեմասն եւս էլ բաժին ղքեզ ժառանգել,
Զվերհագոյնդ անզուգական՝ որում հանգէտ չիք ինձ ընկեր։

«Զօրըն զայն յիշեմ ըստեպ՝ յորում զարթեայ նախ 'ի քընոյս
Հանգուցեալ 'ի ծաղկունս ընդ հովանեաւ եւ զարմացեալ,
Անդէտ թէ զինչ էի եւ ուր, ուստի եւ իբր ածեալ յայն վայր։
Ոչ հեռի անտի խոխոջ ջուրց վըտակաց բըղխէր յայրէ,
Եւ ծորանքըն ծաւալեալ ծով սրփոռէին լայնակայլակ՝
Խաղաղիկ՝ յըստակ եւ ջինջ իբրեւ զերկնի մաքուր պարզուած։
Իմ անդրը հեռեւեալ անփորձական ինչ խորհրդիւ՝
Զդալարս ափամբն ընկողմեցայ հայել 'ի լիճն հարթ եւ վըճիտ,
Որ աչաց իմոց միւս այլ ինն երեւէր երկրորդ երկինք։
Խոնարհեալ 'ի նկատել զնա, ահա կըշիռ 'ի հանդիպոյն
Կերպարան մի երեւեալ անդէն 'ի նշոյլ ջուրցն ապակւոջ՝
Կարկառէր հայել յիս. յայնժամ ես յեռս ընկըրկեցայ,
Ընկըրկեցաւ եւ նա յեռս. անդէն դարձայ ես սըխրացեալ,
Սըխրացեալ դարձաւ եւ նա վաղվաղակի անդրէն առ իս
Խանդակաթ եւ սիրալիր ականողեացն հայեցուածովք։
Տակաւին աչքս անթարթիւ յառեալ մնային 'ի նոյն պատկեր
Եւ հաշեալ մաշէի յունայնավար ցանկութենէ,
Եթէ ձայն ինչ բարբառոյ չէր յիս ազդեալ օրինակ զայս. —
Զոր դուդ տեսանես, ո՛վ արարածդ գեղեցիկ,
Զոր այդրդդ տեսանես՝ դու ես, նա քեզ գոյ եւ գինայ։
Օ՜ն զիմ հետ արի տարայդ ըղքեզ ուր ոչ ըստուերք է սոսկ
Որ սպասէն քում դալըստեան եւ աղուական գրկակցութեանդ։
Որում դուն ես պատկեր՝ վայելեսցես 'ի նոյն անբաժ,
Մանկաւայ հոյլ խուռնեալսմ՝ քեզ նըմանոյ՝ տայես նըմա,
Եւ անուն յորջորջեսցի քեզ նախամայր զարմի մարդկան։ —

«Զինչ գոյր առնել քան գնալ ըզհետ՝ անտեսալար առաջնորդեալ։
Տեսի զքեզ ընդ սօսեաւ՝ հասակագեղ, վայելչատիպ,
Սակայն ինձ ոչ թըւեցար իբրեւ զփափուկ ջըղէն պատկերն
Երփնագեղ, սրբատաշուկիչ 'ի շնորհ ո՛չ սեր քաղցրախորժակ։
Ես ընդ կրուկ նահանջիմ, դու զհետս պընդեալ ձայն արկանես. —
Դարձիր, Եւա ջըքնաղագեղ, դարձիր, յումեմ փախչիս 'ի բաց.

Յորմէ փախչիդ՝ ես ծընեալ, նորա մարմին ես եւ ոսկերք։
Ի ծընունդ քո ես յիմմէ կողէ ստեղ եաւ քեզ փոխ
Ըզմարմնիդ եւ ըզկեանդ, 'ի մերձաւոր սրբոխս մասնէ,
Լինել միշտ ինձ կողակից, անմեկնելի քաղցր ըսփոփանք։
Զքեզ խընդրեմ, հոգւոյս հատոր, ըզկիսամասն իմ պահանջեմ։ —
Ինուշակ քոյով ձեռամբդ կալաց զիմս, ընդ քեզ զինքս։
Յայնմ օրէ գիտեմ քանի յաղթէ գեղոյ շնորհ առնացի,
Եւ ըզգոն խնամութիւն՝ որ ստոյգ միայնն է գեղեցիկ։»

Զայս խօսեալ ամենեցուն մօրս եւ աչք խանդակաթեալ
Ի գութ ամուսնասէր ընդունական սուրբ հարսանեաց,
Անձկաբեկ զանձն հեղեալ ըզնախահարքն 'ի կէս փարի։
Պատարուն եւ մերկ լանջացքն կէս՝ աքողեալ հերով իւրով,
Որ 'ի գանգուրս ոսկեհիւս խիզեալ ծրփեալ ծաւալանայր,
Երթեալ հանդիպէր հուժկու կըրծից առնքն իւրոյ.
Որ հրաշացեալ ընդ գեղ նորին եւ 'նդ անձնատուր վայելչութիւնս՝
Ժրմտեցաւ վրսեմական սիրով հանդոյն Զեւս առ Հերա,
Զամպս յորժամ բեղնաւորէ զծաղկատարափս Ահեկանի,
Եւ համբուրեաց սուրբ ողջունիւ ըզնախամօր կուսին շրթունս։
Մախացօղ թըշնամին դարձոյց զերեսս իւր առ խանդալ,
Բայց ժրպիրհ եւ չարակնոտ աչք նայէր 'ի կողմանէ,
Եւ անձամբ անձին բողոք ունէր լուծեալ յայս ինչ սրբոտունչ.

«Ո՛վ տեսիլ դրժալրհի, ո՛վ երեւոյթ նորակրօտս.
Աչյապէս ուրեմն երկոքեան սոքա 'ի դրախտ գըրկաց միմեանց
Յերջանիկ գըրգեալ Ադեմն՝ նրսեհ 'ի նսեհ կացին զերուն,
Իսկ իմ 'ի գժոխս ընկեցեալ՝ ուր ոչ բերկրանք, ոչ սէր բընաւ,
Այլ բուն խղճ, 'ի խոշտանգանս անդ 'ի մեր ոչ թեթեւադոյնն,
Որ երբեք չառեալ յադուրդ՝ անդ 'ի կարեացն հաշն տագնապ։

«Սակայն ոչ մոռացայց զոր 'ինոցուն շրթանց լըսայ։
Ոչ ամենայն ինչ նոցա թուի. է ծառ մի ասա ամբարձուղէջ՝
Անուանեալ ծառ գիտութեան, յորոյ վճարեալ են Ճաշակաց։
Գիտութիւն 'ի հրաժեշտի... խեթալի սասա եւ ապիրատ.
Հիմ խանդայցէ տէր իւրեանց ըզգիտութիւն 'ինոցանէ.
Մեղք էին գիտել ինչ. ինքնին իսկ մա՞ն էին արդեօք.
Տըգիտութեամբ եւեթ կեցին, աչն երանիքն լցին նոցուն
Եւ հանդէս հնազանդութեան իւրեանց առ տէրն եւ հաւատոց։
Զի՛ աչող արիեալ հիմն՝ առ 'ի զնոցին շինել զաւէր։
Վառեցից այսուհետեւ 'ի սիրտ նոցա զանշէջ ծարաւ
Գիտելոյ եւ զնախանձոտ պատուէրն առ ոսն հարկանելոյ,
Որ հնարեալն է յընդոսանել զոր գիտութիւն հանրառնայցէ
Յաստուածոցն բարձրութիւն. սովին սրոփմամբ կերեալ մեռցին։
Զինչ քան զայդ հաւանական. բայց մանրախոյզ ընթացուք նախ,
Մի թողցուք խորշ անդրնին՝ հետազօտեալ 'ի պարտիզս։

թերեւս դէպք ինչ, դէպք եւեթ, տարցին զիս անդր ուր դատեցեմ
Ըզմի յերկնից զք ոգւոցն ըզբօսացեալ զտիտմբ աղբեր,
Կամ մեռացեալ 'ի թաւութիս անտառախիտ հովանաւորս.
Ի նմանէն ուսեալ՝ եղէց այլ եւս երաց ինչ խելամուտ:
Արդ կեցէք՝ ցորչափ կարէիք, ամոլքըդ դեռ երանալեցք,
Վայելեցէք, մինչեւ դամ, 'ի հեշտութիւնսդ համառօտեալս.
Աղէտք թշուառութեանց գայցեն ըզհետ երկարաւէտք:»

Զայս խօսեալ՝ այլուր ըզդնացսըն խրոխտ շքրջեաց քամահաբար,
Բայց չարարուեստ ըզգուշութեամբ, եւ զքրմնութեանն ըսկրսաւ յոյզ
Ընդ անտառս եւ ընդ բըլուրս, ընդ դաշտավայրս եւ ընդ հովիտս:

Ի խրթնին ծագս՝ ուր երկին դիպի ծովու եւ ցամաքի,
Արեգակըն խոնարհեալ 'ի մայրըն յամր յամր ելանէր
Եւ երեկուն ուղիղ շողիւք բախէր զարեգ դուռըն դրախտին,
Որ էր կուռ ապակեղէն, երկար մինչ յանգս, հեռատեսիլ:
Շաւիղ ոլորտապտոյտ՝ յերկրէ կուռ դիւրամատոյց՝
Տանէր հասուցանէր 'ի բարձրաւանդ մուտս ինչ դրան.
Միւս մեռացեալ կողմանքն էին ժայռ ուղղաբերձ եւ սեպագեալ
Ամբարձեալ 'ի բարձունս, ընդ որ ելի չէր ինչ աղագ:

Ի մէջ երկուց խարըսխաց կըռնին նըստեալ կայր Գաբրիէլ՝
Հրեշտակագունդ պահպանաց պէտ, ակրն կալեալ գիշերայնոյ.
Երկնից մանկտին անդէն գնովաւ դիւցազնային խաղային խաղս:
Առ նոքօք աստուածամուխ զէնք, զրահք, ասպարք եւ սաղաւարտք
Եւ նիզակաց խուրձն 'ի կախ՝ ականց ւոսկւոյ ցայտէին բոց:
Անդր ընդ երեկս էջ Ուրիէլ սահեալ ընդ շող արեգական
Իրրեւ զաստղս սրաթռիչ թափեալ ըզցայգ աշնանային՝
Բոցաշաւիղ շողոլիք յորժամ զեռեալ զօդըս ցելուն,
Որ խրատէ զնաւաղն յորմէ կուռ պատկառ կալ 'ի մրբրկաց:
Ուրիէլ առ Գաբրիէլ զայս ասաց բան շութափելով.

«Գաբրիէլ, աշխեճանիդ գործ պաշտաման այդ եւ վիճակ,
Աղթուն կալ զգուշութեամբ՝ զի մեռատակար ինչ մի մրցցէ
Եւ մի բնաւ իսկ հուպ լիցի յերանաւէտ այս օթեւան:
Յայսմ աւուր 'ի բարձրագէտ միջօրէի հաս յիմ կամար
Ոգի մի տարփատենչ, որպէս թըւէր, ուսանելոյ
Այլ ինչ եւս յոլովագոյնս յարարչութեանց Ամենատեառն,
Առաւել եւս ըզմարդ՝ զԱստուածութեան վերջին պատկերս:
Զառ 'ի թափ ցուցեալ զուլին՝ դէտ օդաչու կայի գնացիցն:
Այլ 'ի լեռան որ զԱդենայ կայ զՀիւսիսիւ, ուր նախն եկաց,
Անդ անդէն տեսի զաչացն իւր հայեցուածս յերկնից օտար,
Վասամոլ չարչարանօք կրկցըն կարեաց նըստմացեալ:
Եղի դէտ ամն 'ի վերայ, բայց ծածկեցաւ ընդ հովանեաւ:
Խիթամ՝ թէ 'ի գընդէ տարագրեալցն զք յանդըզնեալ
Ի նոր աղմուկ եկ յանդընդոց. քեզ անկ ըզնա է զբաանել:»

Թեւազուարթ ըսպառազէնն արար Նըմին պատասխանի.
« Ուրիէլ, չեն ինչ զարմանք՝ թէ քո յարփւոյն պայծառ գընակ
Անվրթար բիւրք ձրգիցին 'դերկայն եւ լայն մեծ ասպարէս :
Զուարթնոցս 'ի պահ ասա կարգեալ, ոչ ոք ընդ այս անցանէ դուռն՝
Որ չկրէ անդրսանն յերկնուստ եկեալ քաջածանօթ :
Յետ ժամուն միջօրէի՝ ոչ ոք անդուստ երեւեցաւ.
Թէ 'սա բանիդ հոգի օտար անց ընդ պատանէշս այս խորհրդով,
Դրժուարին է, գիտես, խափան լինել հոգեղինի
Արկեալ կըրճիմ մարմնաւոր. իսկ թէ յորմէ դարաստանիս
Սըպըրդեալ յորոց ասեգ, որով եւ է կերպարանօք,
Թագուցեալ կայցէ ոք ասա, ընդ այդս ընդ լոյսն գիտացից : »
Այսպէս բան ետ Գաբրիէլ, եւ Ուրիէլ դարձաւ յիւր կարգն
Ընդ նոյն լուսանըկար արեգականն կանթեալ շող,
Որոյ ծայրն արդ բարձրացեալ՝ առեալ տանի զինքն առ 'ի շէջ
Ի խոնարհ կոյս յարեգակն ընդ Աղօրեան կըղզեօքն անկեալ :
Առաջնու

Եւ Աստուած ոչ ունի զմարկպարաղն գործոցն համար։
Այլգուց, չեւ զուարթարար առաւօտուն յելից մարդէ
Զառաջինն ազգ արարեալ ընտրամուտ լուսոյն գալուստ,
Պարտ է մեզ վաղայարոյց 'ի հեշտակիր կանխել վաստակս։
Մեզ մինան անդ հովանոցքդդ ծաղկավարս առ 'ի սրբրել,
Եւ փողոցքդդ դալարուտք՝ միջօրէի մեր ճեմարանք,
Զորս ոստոցն անտառամոլք 'ի խեղդ արկեալ հեղձուցանեն.
Ծփծաղեն զանբաւական մրշակութեամբս, եւ ըղձանան
Զեռս առաւել քան ըղմեր՝ քրշտել զմոլին շրջայլութիւն։
Ծաղկունքդ իսկ այդոքիկ եւ հոյզք կաթեալ՝ հոլեալ զընին
Երկրաքարշք, գեանաթաւալք, գրձճատեսիլք եւ խորտաբորբք.
Հարկ է քաղել ըղդոսին, թէ սիրիցեմք հեշտի ճեմել.
Այժմ՝ ըստ կամրս բնութեան՝ գիշեր հրաման տայ մեզ զհանգիստս։»
Եւայն ամենագեղ շնորհաղարդեալ՝ կերկինեաց անդրէն.
«Նախասակիղբն իմ եւ իշխան, քո հրամայեալ՝ հնազանդիմ ես.
Աստուած այսպէս պատուիրէ, նա քեզ օրէնք է եւ դու ինձ։
Զրգիտեալ ինչ աւելի՝ փառք են կընոջ, ուղիղ հանճար։
Խօսակից ընդ քեզ եղեալ՝ ըզժամանակն մոռանամ,
Յեղանակք եւ յեղյեղմունք նոցին համակ ինձ քաղցրանան։
Քաղցր է շունչ առաւօտին, քաղցր է ծագումն առաւօտու
Ուրախարար նրբագոյն առաւօտեալ հաւուց պարուն.
Հեշտ է արեւ 'ի սրփռեալն 'ի բոյս դալար փափուկ դրախտիս
Ի տունկս 'ի միրգս եւ 'ի ծաղկունքս փայլ 'ի փայլ ցոլոլ լցեալս.
Յետ կակուղ ջուրց անձրեւաց երկիր պարարտ է քաղցրաշունչ.
Քաղցրը գալուստ է խաղաղ եւ շնորհաշուք երեկորոյ,
Եւ անդ գիշեր լրատեր՝ հրոչակելի թրոչնով իւրով,
Եւ լուսնիւրն գեղեցկաւ եւ դոհարոքն երկնաւորոք
Որ կազմեալ զիւրսն յօրինեն զաստեղախուռն յուղարկաւորս։
Բայց ոչ շունչ առաւօտին մինչդեռ ծագեալ ելանիցէ
Ուրախարար նրբագոյն առաւօտեալ հաւուց պարուն,
Ոչ արեւ 'ի սրփռեալն 'ի փափկութեան դարատատանիս,
Ոչ դալարիք, ոչ պլտուղք եւ ոչ ծաղկիքն ցօղափայլք,
Ոչ բուրումն յետ անձրեւաց, ոչ շնորհաշուք հանդարտ երեկ,
Ոչ գիշեր լրատեր հրոչակաւոր իւրով թրոչնովն,
Ոչ ճեմելիք 'ի լուսնակի կամ 'ի դողդոջ փայլս աստեղաց,
Զունեն ամենեւին ինչ քաղցրութիւն . . . առանց քո։
«Բայց ազէ՝ առ ինչ աստեղքդդ փայլակեն զգիշերն 'ի գլուխս.
Ո՞ւմ լցէ շքքեղ տեսիլդ՝ ուր կափոյց քուն զաչս ամենայն։»
Կահապետս հատարակաց դարձոյց անդրէն պատասխանի.
«Դուստր Աստուծոյ եւ մարդոյն, ամենագեղդ իմ կատարեալ,
Յերեկորեայ յայգ լընուն աստեղք զընթացս իւրեանց զերկրաւ,
Ի ծագաց մինչեւ 'ի ծագս մրտանեն եւ ելանեն՝

Բաշխել ըզբոյն 'ի պատրաստի ազանց որ չեւ էն ծընեալ գեւ.
Զի մի խոր կալցի խաւար զհին տէրութիւնն 'ի գիշերոյ,
Եւ շինուցէ կենդանաւ ըզհամանգոյս եւ ըզընութիւն:
Զափաւոր եւ մեղմախառն բոցքըդ ոչ լոյս տան եւեթ,
Այլ յամեք 'ի բաղմազօր շողիւնս տածեն, ջեռուցանեն,
Անուշեն, սնուցանեն, կամ զարփայլին աղդեցութեան
Արկանեն մասն յամենայն 'ի զարմանալն էից բնութիւնս՝
Որ առնն յերեսս երկրի, եւ պատրաստեն առ ընդունել
Ըզբուն իսկ կատարումն յարեգականն 'ի բարի շողից:
Արդ ոչ ընդ վայր փայլեն դոքա՝ թէ եւ չտեսեալք 'ի խոր գիշեր:
Մի ասեր ընդ միտս քո, զի թէ բնաւ չէր մարդ 'ի միջի,
Պակասէր երկնի նկատող եւ օրհնութիւնք Աստուածութեան:
Բիւրք բիւրուց հոգեղենաց շըրջին 'դ աշխարհս. անդրեւոյթք
Յարթմընի մեր եւ 'ի քուն, անընդհատ օրհներգութեամբք
Գովեն զգործս իւր 'ի զընեն կացեալ ըզցայգ եւ ըզցերեկ:
Զիցէ՞ մեր յանտառս յաշխարհ կամ ձայնատու բըլրոցն յեմակս
Երկնաւոր ըլուեալ բարբառս ըզգիշերոյն հաստատաւ,
Որ երգեն զմեծն Արարիչ մեն մի միայն կամ փոխ առ փոխ:
Բաղումանգամ գունդառ գունդ հրեշտակ զուարթունք կամ ցայգապահք՝
Ի նուագերգող աղբեաթս երկնահանդէս կրընդոցաց
Խառնեն 'ի մի յարմարութիւն հրեշտակերամ զերգոցն ձայնս՝
Որ զցայգն 'ի պահս հատանեն, կամ ամբառնան ըզմիաս յերկինս:»
Զայս խօսեալ, եւ ձեռն 'ի ձեռըն մրատանեն մէն միայնուկ
Յերջանիկ տաղաւարն իւրեանց, որ էր ընտրեալ տեղի
Ի վեհէ տընկագործէն՝ յորմէ հեռէ ստեղծագործեաց
Զամենայն ինչ յօրինեալ 'ի զուարճութեան մարդոյն 'ի պէտս:
Կամար նորին թաւախտ յարկածածուկ հովանաւոր
Էր հիւսեալն մանուածոյ 'ի սարդենեաց եւ մրրտենեաց,
Եւ որ եւս առնուաճիւղ՝ 'ի խընկենեաց թանձրը կոսերց.
Ատի անտի ականթ եւ թուփք անուշահոտք եւ ոստախիտք
Պարիսպ ամբարձեալք դալարագեղ կանաչազարդ.
Ծաղկին հոյլ վայելչաւառ, երփն երփն հիրիկ, վարդ եւ յասմիկ,
Ծիլ ծիլ 'ի վեր փրթթենազարդ՝ պէսպէս ճամուկ նրկարակերտ.
Առ ոտս յակինթ՝ մանիշակ՝ քըրքում՝ 'ի ճոխ նարօտանեարկ
Կրկին զերկիր դունեալ քան զմեծագին քարանց դրրուագ:
Այլ ինչ արարած, ջրբոտանի՝ հաւ՝ բզկզ՝ զեռուն,
Զիշխէր մուտ անդր ունել՝ առ 'ի մարդոյն մեծարանաց:
Ոչ ուրեք, եւ ոչ 'ի կեղծս առասպելեաց պատճուճելոց
Յառաւել նուիրական եւ զերծ խորան ինչ հովանուս
Նընջեցին Պան եւ Սիլուան կամ օթեցան պայք եւ Հարսունք:
Ի սրբակապան ծաղկապատ ծաղկազարդ՝ 'ի բոյր բուսոց
Հարսնացեալն Եւա պըճներ նախ զանկողին ամուսնական,

Եւ երկնաւոր պարերգակք զառաջատոն նուագեցին երգս։
Այն օր Հրեշտակն Հարսանեաց առեալ առ Հայր մեր ած զԵւա
Ի մերկիկ գեղեցկութեան անդ զարդարեալ եւ ցանկալի
Քան զՊանդորա զոր օժտեցին դիք պարգեւօքն ամենաշնորհ, —
Աւաղ, յոյժ նրմանակիր նրմին՝ ողորմ պատահարաւն, —
Երբ 'ի ձեռն Հերմեայ տարեալ առ Յապետի պանդոյր որդին՝
Վարանեաց զաղբս մարդկան 'ի լար աչացն գեղեցկաց,
Առ 'ի զԴիայ վերէժ հանել՝ յորմէ խորհեաց զանիրականն հուր։
Հասեալ այսպէս յիւրեանց 'ի տաղաւարն հովանաւոր
Երկոցուն 'ի միասին, եւ անդանօր զտեղի առեալ՝
Դարձան կացին 'ի բացօթեայ երկնիւք՝ պագին Էին երկիր,
Արարչին երկնից, օդոյ, երկրի, արփւոյն յոր հայէին,
Լուսաձեմ լուսնին գլնտի եւ աստեղեայ վեհ կամարաց։
« Դու հաստեցեր եւ զդիշեր, Արարչագեղադ ամենակալ,
Դու եւ զոլիւ՝ զոր 'ի գլուխ հանաք 'ի սպաս սակեալ գործոցս,
Երանիք յընթերակայ միմեանց նրպատաս, 'ի սէր միմեանց՝
Որ պրսակ երջանկութեանս է առ 'ի քէն հրամայելոյ։
Դու եւ զայս՝ մեծ յոյժ ըստ մեզ՝ ըզգերդարանս յօրինեցեր,
Ուր պակասեն լեռութեանն հաղորդք, ընդ վայր թափեալ յուսալէտ։
Բայց դու մեզ խոստացար սերունդ 'ի մէնջ զարմ եւ զաւակ,
Որ զերկիր ընուցու, եւ զանբասպառ քո բարութիւնդ
Ընդ մեզ փառաւորեսցեն եւ 'ի զարթնուլս եւ 'ի խընդրել,
Որպէս եւ արդ 'ի ժամուս, զհանգիստ քընոյ՝ զքոյին պարգեւագ։»
Միաբան զայս ասացեալ՝ ջարկին օրէնս ինչ այլ 'ի գործ,
Բայց երկիր եւեթ պագին՝ Տեառն 'ի պաշտօն հաճոյագոյն։
Զձեռանէ միմեանց առեալ՝ մրտին յալուց հովանոցին,
Եւ անաշխատք 'ի թօթափել զոր մեքս կրեմք ծանր այլակերպս,
Առ իրեարս կողմնեցան։ Կարծեմ թէ ոչ զարձաւ Ադամ
Ի գեղեցիկ ամուսնոյն, եւ ոչ Եւա ինչ զըլացաւ
Զխորհրդակիր կրօնից օրէնս հարսնականի սիրոյն սրբոյ,
Որ զինչ եւ բանք պատճառելեացքն բարրեսցեն զարբեութենէ,
Ըզտեղւոյն, զանմեզ կենաց, սիրոյ բասրելով զարբեաւն Էին,
Զոր կիսոց եւ հրամայէ, զոր եւ տայ թոյլ ամենեցուն։
Արարիչքն մեր հրաման տայ մեզ աձել եւ բազմանալ.
Ո՞վ այն խափան, բայց մարդատեացն՝ ոսոխ մարդոյն եւ Աստուծոյ։
Ուրախ լեր, Սէր հարսնադեղ, խորհրդական օրէնք եւ կարգ,
Սեռն աղբիւր սերընդոցս մարդկայնոյ, ստացուած յատուկ
Ի դրախտին՝ ուր ամենայն հասարակաց Էին բարիք։
Քեւ յօտնական վարար մարդոյգ հալածեցան 'ի մարդկանէ
Տարագիր վրստարանդեալք 'ի պաճարացն անասուն ջոկս։
Քեւ հիմնեալ 'ի մտերմութիւն սուրբ եւ արդար՝ սիրոյն կապանք,
Եւ հօր, որդւոյ եւ եղբօր աղապատանք դորովագութ

Ի լոյս եւ 'ի ծանօթս եկին անդէն նոսա զառաջինն։
Քաւ յինէն ընդ մեզս երբեք դրբել ըզքեզ կամ ընդ ամենի,
Կամ ընդ միտ ածել թէ չէս ինչ վայելուչ վայրի սրբութեամ,
Աղբերակինդ մըշտաբուղխ ընտանեսուն անուշութեանց,
Որ մահիճքդ քո պարկեշտ քարոզեցաւ եւ անարատ
Առ այժմուս եւ 'ի հնումն, յոր եղին սուրբք եւ հայրապետք։
Ասա Սէր զոսկեղէնն արկանէ զնեռոս իւր 'ի կիր,
Ասա ըզքեզն անշէջ վառեալ եւ սաւառնի ծիրանաթեւ,
Ասա տիրէ եւ զուարճանայ, չիք 'ի ժըմիտ վարձկան բողից՝
Յոր չիք սէր, ոչ խընդութիւն, ոչ փարելի լինել իւիք։
Ի հասեւխած չիք վայելն, ոչ յարքունեացն սիրուհիս,
Ոչ 'ի խառնն կաքաւս, ոչ 'ի խենէշ խաբեայ դիմակս,
Ոչ 'ի մէջ գիշերի պար, ոչ 'ի ցայգերգս տրոփոտի
Զոր նուադէ անսրտաղ առ տարփածուն իւր դեղապանծ,
Զոր լաւ եւս էր՝ ընդ վայր թէ հարկանէր քամահաբար։
Արդ սոքա երկոքին 'ի սոխակաց երգս որորեալ՝
Քունեին միմեանց 'ի գիրկս, յորոց մարմինքն մերկանդամս
Ծաղկալից գրմբեթն հոսէր վարդս որոյ զոյժ նորոգէր այդ։
Ղընջեցէք, ամոլք օրհնեալ, ով յամենայն ժամ երանեակք,
Թէ չիրնդրէք երջանկագոյն կեանս եւ գիտէք չգիտել ինչ այլ։
Գիշեր զընթացն հասարակեալ էր կոնաձեւ մթին ստուերաւն
Ի կոհակն բարձրածայր՝ լայն կամարին որ ընդ լուսնով։
Քերովբէք 'ի փղոսկրեղէցն եղեալ դրբանց յօրինի ժամն՝
Ի ձակատ մարտի կարգեալ՝ վառեալ կային 'ի ցայգասպահս։
Առ յայնժամ Գաբրիէլ առ հրպագոյնն յիշխանութեան.
« Ուղիղ, ըզկէս գընդիս զոլորահատոյց քեզ արարեալ
Երթ պատեա զհարաւով ամրապահեսա ըզգուշութեամբ,
Միւս կէս դարձցի զհիւսիսիս, պարեկքս 'ի մուտս հանդիպեացուք։»
Ճեղքեցան երբեւ ըզբոց, կէս յասպար՝ կէս 'ի սեգ շըրջեալք։
Կոչեցեալ Գաբրիէլն զոյդս զուարթնոց որ առ իւրեւ՝
Ճարտարս եւ կորովիս, զայս ինչ պատուէր եւ հրամանի.
« Ի թուրիէլ եւ Զեփոն, բոլոր թեւոցդ երագութեամբ
Շըրջեցայք ընդ պարտէզդ եւ մի թողջիք խորշ անընկնի,
Մանաւանդ ուր երկոքեան բնակին ջըքնաղ այն արարածք,
Որ թերեւս արդ ըզքընով անկեալ դընին անկեթ չարի։
Ա՛յսօր, ընդ խոնարհել արեգական եկն եհաս ոք,
Եւ զբոյց՝ տեսեալ ոգի մի գժոխական յայս կոյս դիմեալ, —
Ո՞վ կարէր զմըտաւ ածել, — յանդընդոյին արդեւանաց
Ելեալ փախուցեալ անշուշտ դաւօղ որոգայթիւք։

---

725. Ա՛յս Է՝ կէսն յահեակ՝ յոր վահանն է, եւ կէսն յաջ յոր տեգն։

Յոր վայր եւ գտանիցէք՝ ձերբակալ այսրը մատուսջիք։»
Զայս ասացեալ՝ ընթանայր 'ի գլուխ պայծառ գընդին Իւրոյ՝
Որ զուսանակն խաւարէր։ Անդէն Զէփոն ուԻթուրիէ՛
Գնան դէպ ուղիղ 'ի սրբակապանն առ որոնել զոր խընդրէին։
Գրեին զայն կըծկեալ գոգոշ՝ առ Եւային զողեալ ունկամբ,
Դիւահնար արուեստիւն մատուցեալ փորձ ուԻթեթուս՝
Հասանել յամեն ցնորիցն եւ ըստ մրոի նիւթել պատրանս
Խուճապիւք եւ անբրջոք, եւ կամ թէ զթոյն իւր շընչելով
Զկենդանական ապականել հնարէր զոգիս մարդուր արեանն՝
Հանդոյն ծրխեալս անոյշ շոգեաց ցոլացելոց 'ի սուրբ ուղիղց։
Բրղխեացեն թերեւս անտի գտնել սատակ մտք եւ սրբատունջք,
Սընոտի յոյսք եւ խոճանջք նանրախորհուրդք եւ տուիք զոշոսք՝
Ուռուցեալք բարձրամտութեամբ որ երկնեսցէ զգոսոզութիւն։
Մինչ նա յայս կայր ուշ եղեալ, ծայրիւ տիգին Իթուրիէ՛
Հրպի մեղմով ելեն 'ի նա, զի եւ ոչ մի խաբկանաց նենգ
Երկնամուխ շօշափելոյ զնոսուն զորէ ինչ հանդուրժել,
Այլ՝ հարկաւ փոխի անդրէն 'ի նմանութիւն իւր բնակաւոր։
Ի յայտ եկեալ պակուցեալ անդէն 'ի վեր ընդոստնու նա.
Որպէս կայծ մի անկեալ բորակային փոշւոյն 'ի կոյտ
Կաղմ առ կարաս՝ 'ի մթերել 'ի շտեմարանս առ մարտի բօթ,
Հատքն սեաւք յեղակարծ ճայթմամբ ցընդեալ զոդս հրդեհէն,
Նոյն օրինակ եւ վերագն ընդոստ պայթեաց յիւր կերպարանս։
Երկոքին կայտառ զուարթութիւնքն քայլ մի յետս ընկրկեցան՝
Ոչ սակաւ զարմացեալ յահեղ պետին տեսիլ յանկարծ,
Բայց զարհուրեալ եւ ոչ ինչ, մատեան անդէն բանիւքս յառաջ.
«Ո՛վ ես դու յոգւոց անտի դրժոխամրկէժ ապրստամբից
Փախստեայ եկեալ բանտէդ. իսկ առ իմ՞ փոխակերպեալ
Իբր ոսոխ դարանամուտ զողեալ նրստեալ կաս 'ի քրմին՝
Տրքնելով ատատնօր սոցուն 'ի նարս որ 'ի քուն կան։»
«Իսկ արդ ո՞չ ճանաչէք զիս, կրկնեաց ընդ հենգին Սատայէ՛,
Զիս ո՞չ ճանաչէք. բայց այլ երբեք ծանեայք զուք զիս՝
Ոչ ձեզ ընկեր, այլ բազմեալ անդ, ուր չիշխեիք զանձն ամբառնալ։
Զըճանաչելոդ զիս՝ ըզձեզ խոստովանել է անծանօթս
Եւ յանարգ եւ 'ի տրուպ տասդասելոց գընդի ձերոյ։
Իսկ եթէ զիս ճանաչէք, ընդէր է ձեզ դալ 'ի հարցփորձ
Եւ ումպէտ օրինակաւ առնել ըսկիզբն պաշտամանդ,
Որ եւ այն նոյնպէս յամբոյր եւ առուիր վըճարեսցի։»
Զէփոն հենգն ընդ հենգնին փոխանակեալ՝ յաւել անդէն.
«Մի կարծեր, ոգի ստամբակ, թէ նոյնպիսի մնացեալ ձեւիդ
Եւ կամ ոչ իւիք նուազեալ փայլիցդ՝ եւ այժմ լցեն ծանօթ
Որպէս մինչդեռ կանգուն կայիր յերկինս ուղղորդ եւ սրբաբայլ։
Այն փառք՝ ընդ անկանել քո 'ի բարեաց՝ զերծան 'ի քէն.

Արդ Նրմանն էս դու մեղացդ՝ եւ խաւարին բնակարանիդ
Մեղացդ 'ի մուր մրրձոտելում. այլ արի, հարկ է անհրաժեշտ
Քեզ համար տալ առաքչիս՝ ում յանձն է զվայրս անխորհ պահել,
Եւ յամենայն արկածից չարաց՝ Սոցունց ըզդուշանալ։»
Զայս խօսեցաւ քերովբէն, եւ կրշտամբանքն խոցոտիչ
Անաչառ 'ինորափթիթ ծաղկի առոյգ պատանութեանն՝
Հրքեղաշուք զարդարէր ըստ 'ի շնորհս անընդդիմակ։
Յափշտութիւն դեւքն պարտեաւ. տեսանէր յանձն իւր, խմանայր
Քանիսն պատկառելի է ուղղութիւն, եւ քանիսն
Առաքինի լաւութիւն 'ի կերպարանսն իւր սիրելի։
Տեսանէր, յանձն իւր հեծէր՝ զի էր անկեալ առ 'ի նմանէն,
Եւ առաւել զի գիտաց թէ ծանուցեալ էր յայտնապէս
Ի փայլումն իւր մեայլ եկեալ, բայց դեռ թըւէր յանձնապատասան։
«Թէ կըռուել պարտ է, ասէ, լցէ ելեսան ընդ ելեսանի,
Ընդ յոլելն, ոչ ընդ յըղեալ, կամ թէ 'նդ բընաւս առհասարակ.
Մեծ եւս անուն կապեսցի, եւ կամ նիպաղ լեցին կորանքս։»
«Խէթ սըրսիդ, քաջայանդուգն ասէ Զէփոն, խնայեսցէ զմեզ
Ի փորձոյ հանդիպիդ, յոր եւ 'ի մէջ կըրսերազդոյնն
Ինքն եւեթ կարօղ է 'նդ քեզ, այ չար՝ վասն այն եւ ապիկար։»
Ոչ յաւել թըշնամին՝ 'ի զայրանացն հեղձամղձուկ,
Այլ խըրոխտ երիսարի հանդոյն առեալ դանդանաւանդս՝
Ընթանայ բարձրաւելզ ծաքեբլով զեւր երկաթին սանձ.
Ոգորել կամ 'ի փախուստ աճապարել՝ ունայն թուեցաւ,
Վերին ինն ահափեռք ընկճեալ էին ըստ սրան անահ։
Արդ սոքա մերձենային 'ի տեղն անդր արեւմըտից
Ուր կէս եւ կէս դունդ պահնորդաց հասեալ կային միմեանց հանդէպ,
Եւ 'ի մի խուռն ջոլոբեալ՝ ակն ունէին նոր հրամանի։
Գաբրիէլ զորապետն 'ի ճակատու ռազմին գոչեաց.
«Զայն լըսեմ, սիրելիք, թեթեւ ոտին ընդ այս դիմեալ,
Եւ 'ի շտոյդ արդ Նրշմարեմ զԼթուրիէլ եւ ըզՉէփոն
Ի սաուերացդ անդ 'ի միջն. եւ դայ երրորդ զը ընդ նոսին
Անձն ազբայակերպ, սակայն գունատ փառօք թարշամ։
Ի գնացիցն եւ 'ի վայրագ ոճոյն թըւի գըժոխապետն,
Որ կարծեմ չմեկնեսցի ատսի առանց ինչ խաղմութեան։
Պինդ կացէք, զի մառախլուտ երեսքըն ձայն տան գալ 'ի վէդ։»
Այն ինչ քանքն 'ի բերանն էին՝ Զէփոն ուԼթուրիէլ
Հասանեն պատմեն հակիրճ թէ զսվ ածեն եւ ուր գըտեալ,
Յինչ կայր, յոր կերպարանս եւ յորպիսի գառեալ 'ի գիրս։
Յայնժամ ասէ Գաբրիէլ սաստողական սիգօք աչաց.
«Էր ըստ սահմանն եդեալ քոյոյ ստամբակութեանդ ելեր, Սատան.
Զի վերդոմեալ գաս 'ի գործոյն զանմիաբանս ընդ քեզ 'ի մուռտ։
Այլ նոցա՝ իշխանութիւն եւ իրաւունք են կոչելոյ

Զքեզ 'ի փուրսիչ՝ տալ համար ըզքոյ յանդուգն այսքր մլուկ՝
Ուր հատանել հնարել թըւխ ըզքաղցքը քունն եւ խուճապել
Զորս Աստուած եդ 'ի տեղւոջս յայսմիկ բնակել յերանութեան։ »
Սամայել արհամարհոտ քըստեալ յօնիւք պատասխանեաց.
« Գաբրիել, դու խնամատուն ոմն համարեալ էիր յերկինս,
Նոյն եւ յաչս իմ թըւէիր, այլ զնս հարցուածդ յերկբայս առնէ։
Թող կեցցէ 'ի դըժոխս՝ այն որում քաղցր են տանջանք իւր.
Ո՞ չկամիցի ճողոպրել, թէ հնար դըտցէ, 'ի դըժոխոց,
Թէպէտ 'ինոյն գատապարտեալ. դու ինքն անշուշտ յայն փուԹայիր,
Խիզախեալ յոր եւ է կոյս 'ի քըքուանացըն բացադոյն,
Ուր ակն ինչ ունէիր փոխել ըզցաւադ 'ի հեշտութիւն,
Եւ 'ի տեղն ըզկանացդ ըզքերկրութիւն ածել ընդ հուպ.
Այսմ ըզկետ եկի ես այսր. եւ ոչ իրաւ ինչ ասեմ քեզ
Որ զբարին եւԹԹ գիտես, եւ չիք ընդ փորձ անցեալ ջարին։
Ածիցես ինչ ինձ 'ի դէմս ըզկապտղին մերոյ հրամանն.
Թող պընդադոյն 'ի պահ պատանեաց ամրացուցցէ զդրունսն երկաԹիս,
Թէ 'ի մուԹ դէհենն ըզմեզ աղեալ կամի զընդանարդել։
Շատ լեցի այդ առ հարցումդ, այլն ամենայն է հաւատամ.
Անդ դրանն զնս ուր ասենն, այլ չիք ասա զեան, ոչ բըմնութիւն։ »
Զայս ասաց անգոսնելով. հրեշտակապետն ըսպառազէն
Սըրամբեալ, քամահանօք ժըպտեալ ընդ քիմն՝ յաւել ասել.
« Ո՛հ, զի մեծ կորուստ երկնից է դատաւորդ խնամատուԹեան՝
Յորմէհետ գլորեալ անկաւ Սատան իւրով անմտութեամբն։
Այժմ եկեալ կայ 'ի բանտէն փախըստական տարակուսեալ՝
Թէ կալցի առ խնամատուն արդեօք զնոսին որ հարցփորձենն,
Եթէ որով ժըպրհութեամբ անհրաման այսքը հատեալ կայ՝
Վաղեալ զանդընդափակ դրժոխարդել իւր սահմանօքն։
Այսպէս նա խոհական զառ 'ի վըշտաց կարծէ փախուստ,
Եւ զվերծանելն 'ի պատժոց որով եւ է օրինակաւ։
Ա՛յ աղաջուր, կաց դու մընա 'ի դոյն կարծիս՝ մինչեւ ցատուն
Որ եհաս քեզ 'ի փախչելդ՝ եօԹընպատիկ եղեալ 'ընդ առաջ
Քում փախըստեանդ, եւ մըտրակ 'ի կուշտ վարեալ 'ի խոր դըժոխս
Դարձուցցէ զնմատութիւնդ, որ չեւ է քեզ ուսուցեալ քաջ՝
Թէ չիք ցաւ հաւասար անհուն վըիժուն յարուցելոյ։
Բայց ըզմէ միայն կցես, վասն էր դըժոխք միահամուռ
Զեկն ընդ քեզ կապակոտոր. չիցեն ճորտիցդ երաշխիկք նոյն,
Ո՞է փախըստի արժանիք, կամ անժուժկա՞լ դու քան զնոսա։
Պէտք արի, յառաջեալդ 'ի զերծանել 'ի տանջանաց,
Թէ ճառեալ էր քո ըքեալ գընդիդ զպատճառսըդ փախըստեան,
Ապաքէն ոչ միայնակ եղանէիր դու փախըստեայ։ »
Առ որ ետ պատասխանի պարըստեալ ոսոխն ահեղակերպ.
« Քաջ գիտես, ոանհար հրեշտակ, եթէ յինէն պակասէ ոչ

Սիրտ արի՝ տանել վըշտաց, եւ ոչ ուրեք ինչ խուսափիմ։
Իմ յընչաց խակ է քերեալ ըզքոյին մեծ սրբամտութիւնդ.
Երբ 'ի մարտին Թուխ ասպատակք որոտընդոստ փայլատականց
Հասին քեզ փոյթ 'ի Թիկունսըս չահադին զենուդ նըպատաստ։
Իսկ քո բանք վայրապարք վարկպարազի, որպէս եւ միշտն,
Յայտ առնեն զանհրմտութիւն անդից անենդ զօրագըլխի
Յեռ դաժան ճաշակաց եւ անցելոյն ձախող ելից։
Զէ զընաւն 'ի փորձ արկանելի վըտանգաւոր Ճանապարհաց՝
Ում ինքնին չեղէ ծանօթ. վասն որոյ ես նախ ձեռն արկի
Սըտնալ սոսկ յանդունդս ամայ, դատանել զաշխարհս այս նորատաւղծ,
Զորմէ ոչ եւ 'ի դրժոխս համբաւաբեր ըլուեայ հրուչակ։
Իմ այսր յուսով է եկեալ՝ լաւ եւս ինչ օթ դրատանելոյ,
Կարգել յերկիր կամ 'ի միջնոգդ ըզզօրականն իմ վըշտատես,
Թէպէտ մեզ 'ի գիւտ նորին կայցէ կըրկին առնուլ ըշկամ՝
Զինչ ընդդէմ մեր դու ինքնին եւ զուարթադէմ դունդդ իշխիցեն։
Գործ հեշտագոյն դոցա զիւրեանց Տէրն է պաշտել յերկնից բարձունս,
Օրհնելդել առ աթոռոնն, եւ զմիջոցաք յօրինելովք
Պատանել նըմին երկիր, քան Թէ 'ի կռիւ ինչ կաքաւել։»
Հրեշտակըն զօրավար եւ խակ եւ խակ պատասխանի.
« Ասել եւ զքանն եղծանել, զփախուստ վըհիժուց ունել առ խելս,
Եւ ապա զգողացիկ խոստովանել ըզրաեսութիւն,
Ոչ զիշխան ոք դուշակէ, այլ զհաւատի սուտ խաբէբայ.
Եւ ժըպրհին պանծալ յանուն հաւատարիմ եւ անխարդախ։
Ո՛վ անուն, անուն սուրբ հաւատարմին՝ ընդ աղբ ածեալ։
Հաւատարիմ, եւ առ ո՞վ. առ քո խուժանն ապըստամբօղ,
Բանակ ուխտանենդաց, պատշաճ դըլխոյ պատշաճ մարմին։
Ա՞յս էին ձեր հրահանգք, ա՞յս ձեր հաւատ երդմընակուռ,
Ա՞յս եւ ձեր հրապատակ հնազանդութիւն զենուորական,
Մըտերմութեան դրժեալ դաշն առ Վեհապետն վըկայեալ։
Եւ դու, նենգող խաբուսիկ, ազատութեան այժմ ախոյեան,
Ո՞ քան զքեզ շընթեաց երբեմն, եւ խոնարհեալ ըստրըկաբար
Եպագ երկիր ահաւոր Թագաւորին երկնաւորի.
Եւ առ ինչ, քան Թէ 'ի յոյս՝ զի գնա մերժեալ տիրեացես դու։
Բայց արդ լուր խմում խրատուս. ծն ատի եվ դու փախըստեայ
Ուստի փախեարդ. 'ի ժամն ատի Թէ դու բնաւ երեւիս
Ի սահմանս յայս նուիրական, կապեալ ըզքեզ արկից ընդ քարշ
Ի վերասն անդընդային, եւ կընքեցից այնպէս ըզքեզ՝
Զի այլ մի անկուշեացես զդիւրանցիկ դրունըս դըժոխոց,
Որպէս արդ, վերը 'ի վերոյ ինչ ամրացեալ վարկպարազի։»
Օրինակ զայս նա սպառնայր. խակ Սատանայ չառնէ ինչ փոյթ
Սատից պատուհասին, այլ առ մոլի զայրուցան յաւել.
« Յորժամ քո եղէց գերիդ, վէս դու քերովբդ եղերական,

Յայնժամ խօսեա զկապանաց • բայց նախ քան զայդ՝ դու ինքնին դու
Սատանակոծ ծանրութեան յաղթող բազկիս ակն կալջիր,
Թէպէտ երկնից իսկ արքայն 'ի թեւս քո ձիաւորի,
Եւ դու քոյդ ամենասիրեալ 'ի սամեռեան մուղ եւ հրահանգ՝
Մըտեալ յառեղն ձրգես ըղյաղթական նորուն անիւս
Յարշաւելն ընդ աստղակուռ սալայատակ երկնից շաւիղս։»

Ի խօսել նորա զայս՝ հրաշէկ փայլեաց հրեշտակախումբն •
Ի մահիկ սըրեալ եղջերս զերկոսին ծայրս իւրեանց ռազմին՝
Դրըդեցան նիզակ 'ի վեր առեալ 'ի յեց՝ պատեալ ըզնա։
Այսպէս 'ի դաշտ Դեմեարի ատոր 'ի հունձս եկեալ հասեալ
Խոզանեալ անտառ հասկաց վէտ վէտ յալնս Ճօճեալ Ճեմի
Յոր կոյս եւ հողմ մրըրկիցէ • կայ երկրագործ հայի հոգած,
Գուցէ օրանն՝ յոյս իւր՝ 'ի կալն ոչ թողուցու բայց յարդ եւեթ։
Սամայէլ խուռեալ անդուստ, յանձն իւր ըզզօրըն ժողովեալ,
Համբարատակեալ կայ կանգուն, տիպ Աղ'ատոյ կամ Նիւտրեայ •
Գլուխ յերկին կըցեալ եւ ահ 'ի սաղաւարտըն վառեալ վերջք,
Թրուէր ունել 'ի ձեռին որպէս մըկունդ ինչ եւ վահան։

Արարուածք սարսափելիք անկանէին արդեօք 'ի մէջ,
Ոչ միայն դրախտն 'ի դղրդին, այլ՝ ասուեղեայ երկնից կամար,
Կամ գէթ տարերք համբրէն թերեւս հոսեալ խորտակէին՝
Խուճապեալք եւ բըրդըղեալք յուժընդակի մաքառմանէն,
Թէ Որէն՝ 'ի խափանել ըզսոսկալի բըռնչոն ամպրոպ՝
Ձէր 'ի դուրս անդէն կախեալ զոսկի կըշեռն իւր ընդ երկինս,
Որ երեւի 'նդ Ատրեա եւ ընդ Կարձին նըշան ցայսօր։
Յայս կըշեռ նախ զամենայն կըշռեաց Հաստիչն զարարածս,
Ջգընդաձեւ երկիր 'ի կախ՝ օդո

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ընդ առաւօտն Եւա պատմէ զցաւալից երազ իւր Ադամայ. մխիթարեալ ելանեն, օրհնելով զԱստուած, 'ի վաստակս իւրեանց։ Աստուած, առ անպատասխանի առնելոյ զմարդն՝ առաքէ զՌափայէլ հրեշտակապետ խրատել զնա 'ի հնազանդութիւն անձնիշխան կամաքն, եւ զգուշացուցանել յոսոխէն, եւ պատմել նմա սէր այն ոսոխն ի՛նչ է եւ ընդէր եւ զինչդ։ Ռափայէլ հիւրընկալեալ եւ պատուեալ սեղանով, կատարէ զպատգամաւորութիւն իւր՝ ճառելով Ադամայ զվտարանդութիւն ապստամբեալ հրեշտակացն՝ իւրոցն թշնամեաց։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Առաւօտն յելից մարզէ վարդակարմիր ՃեմՔն եկեալ
Ցանէր մարգարիտ արեւելեան յերեսս երկրի։
Զարթեաւ Ադամ 'ի քընոյն, սոսկորութիւն այս էր նորա,
Զի օդային նիրհ իւր անօսր՝ հեշտին հալմամբ սուրբ Ճաշակացն
Եւ անոյշ եւ քաղցրախառն օդահոտովք անհատ պահեալ,
Փոյթ 'ի խոխոջըս վարատէր շոգիամեղ առուոյց եւեթ,
Ի խարշափ սաղարթուց՝ Առաւօտուն հովահարաց,
Ի թրուչնոց յայգորելն աշխոյժ սրուիչս 'ի ջրովս ջրով։
Զարմանայր յոյժ զի Եւս տակաւին չեւ էր զարթուցեալ,
Հերք խառնիխուռն եւ այսք կարմիր երբեւ 'ի քուն անդրհական։
Յարուցեալ կիսովին, եւ յեց յարմուկն 'ինա կրքեալ՝
Ներկատէ խանդաղակաթ եւ ակնարկմամբ սեռն սիրոյ
Ի գեղ անդր, որ թէ 'ինինչ թէ յարթմընի էր շնորհափայլ։
Յայնժամ գոլորը բարբառոմ երբ 'ի ծաղկունս սիք հեշտաշունչ,
Մերձեցեալ մեղմիկ 'ի ձեռն նորա՝ զայս մրմընչիկ ձայնս.
« Զարթիր, նմն ամենագեղ, հարան իմ՝ վերջին գլուեալ բարի,
Գերագոյն քան զամենայն ինձ երկնաւոր յետին պարգեւ.
Յանկաղիդ իմ միշտ նորոգ, զարթիր, ծագէ այգն աւասիկ,
Եւ զբաւարթ եւ ցօղագին մեզ անդասան կարդայ հրաւէր։
Ըստուընչեան երախայրիս կորուսանեմք, զայցելոյ ժամ
Թէ զնարդ բողբոջեցեն տունկք առ 'ի մինչ խնամով սրնեալք,
Կիսարոնուան որպէս ծաղիկ, ուստի տարաշխին կաթէ ծորան
Եւ զոր ռեանին մրզէ ծիլ, որպէս ընուութիւն ըզգոյնան երփնէ,
Ի՛բր 'ի ծաղկին հանդչի մեղու ծրծէլ ըզլայծն անուշութիւն։»

Այսպիսի մրրմընջովք զարթոյց ընկնա, իսկ նա յԱդամ
Ասէ նմին արկեալ ահաբեկս, եւ գերկեսանն եղեալ ասէ.
« Ո՛վ դու իմ միայն հանգիստ մրտաց, իմ փառք եւ կատարումն,
Զի՞ խընդամ 'ի տեսանել զերեսս քո եւ զդարձ այդուն։
Զայս գիշեր, որպիսի չեք ինչ անցուցեալ իմ այնպիսի,
Երազ տեսի, թէ երազ էր. ոչ եթէ զքեզ, որպէս յաճախն,
Ոչ ըզգործս երեկին, ոչ զհանդերձեալսն վաղորդեան,
Այլ՝ մեղք եւ ծուփք՝ զանխուլ 'ի մտաց յառաջ քան զայս մրզեկուս
Թրուէր ոք յունկն իմ մերձեալ, եւ հրաւիրեր ողոք ձայնիւ, [գիշեր։
Կարծեցեալ թէ քոյդ ինչ է. ասէր. — Ընդէ՞ր նընջես, Եւա,
Աւասիկ ժամ գեղեցիկ, նորաղբաբեր, խաղաղաւէտ.
Հատանէ զլրտութիւնսն հաւն եւեթ գիշերերդակ՝
Որ արդէն զարթուցեալ քաղցրանրւադքս գեղգեղէ
Զերդքս իւր սիրտակարկաջ. տիրէ լուսին՝ դուստ ուռճալիր,
Եւ յախորժ փայլ նրկարէ զտարերաց դէմս 'ի հովանոց։
Այլ՝ 'ի զուր՝ ուր չեք տեսող. բոլոր աչք հրսկեն երկինք
Առ 'ի զո՛վ նրկատել, բայց եթէ զքեզ՝ բնութեան տարփուն.
Ի տեսել քո համբրէն զուարճանան էք՝ ձրգեալք 'ի գեղդ
Առ 'ի 'նդ այն հրաշանալ յաւէժաբար զարմանալեօք։ —
« Յարուցեալ երբ 'ի քո ձայն, այլ՝ ըզքեզ ոչ ուրեք գրտի.
Յայնժամ ըզկնի քո շրջեալ՝ թուեցայ միայն գընալ ընդ հեռս
Որ ածին զնս նոյնհետայն առ գիտութեանն արդէնեալ ծառ,
Գեղեցիկ, եւ քան 'ի տուէ գեղեցկագոյն թուեցեալ 'ի ցնորս։
Մինչ հիացեալ հայեի, տեսիլ ինչ մօտ կայր թեւաւոր
Երեւեալ կերպարանօք մին 'ի տեսլեանցն երկնաւորաց։
Ցօղաթուրմ գէսք բուրեին զանմահութիւն, պիշ ինքն 'ի ծառն
— Ո՛վ գեղեցիկ տունկ, ասէր, առատ պտղովք ծանրաբեռնի,
Ո՞չ ոք հաճի զբեռնդ բառնալ եւ զքաղցրութիւնդ ճաշակել,
Ո՞չ Աստուած եւ ոչ մարդ. այսչափ անարդ է գիտութիւն.
Նախանձ ինչ արդեւոր, թէ զգուշութիւն՝ չուտել 'ի քէն։
Թող որ կամին արդեւոր. զնս ոչ եւս այլ զբրկեսցէ ոք
Ի բարեւոյդ պարգեւաց. իսկ եթէ ոչ, ասա առ ինչ կայ։ —
« Ասաց, եւ ոչ եկաց. ժրպիրհ ձեռամբ կորզեալ եկեր։
Գիտամեռեցայ 'ի ցուրտ սարսուռ ընդ այն բարբառ յանդգնութեան՝
Հաստատեալ յոխորտ գործով. նա ցընծութեամբ կայառեալ ասէ. —
Ո՛վ պտուղ աստուածային, ինքնին անոյշ, եւս առաւել
Այսպէս կրթեալ. արդեւեալ թրփս ասա դու իբր անպատեհ
Այլում ումեք՝ բայց աստուածոց եւեթ, սակայն եւ բաւական
Ըզմարդիկ յաստուածութեան փոխել բնութիւն. եւ ընդէ՞ր ոչ.
Զի բարին ըստ հաղորդելն յաւէտ յորդեալ առատանայ,
Եւ սրտին ինչ ոչ վնիպէ, այլ՝ առաւել փառաւորի։
Ե՛կ, երանեակ արարած, գեղեցկագեղ հրեշտակդ Եւա,

Եվ եւ դու լեր հաղորդ. զի երջանիկ թէպէտ խլես,
Մարթի քեզ եւս քան զեւս յերանութիւն բարգաւաճել,
թէ եւ չիք լինել քան զայդ քեզ արժանի երջանկութեան։
Կեր ըզսա, եւ յայսմ հետէ անց ընդ ասուրածս ասուածուհի,
Ոչ եւս յերկիր արդեւական, այլ մերթ ըստ մեզ օդաձեմ,
Մերթ յերկինս վերամբարձ՝ ըստ արժանի անձինդ քոյ՝
Անդ տեսցես զասուածոց կեանս, եւ դու կեցցես նոցին հանդոյն։ —
« Զայս ասելով մերձեցեալ, ըզպարաղոյն մասն զոր խլեաց
Եւ ունէր 'ի ձեռին՝ մատուցանել մինչ յիմ շրթունս։
Հոտ անոյշ եւ ախորժակ այնպէս շարժեաց 'ի ցանկութիւն,
Զի անհնարին թըւեցաւ 'ի ճաշակացն ինձ ժուժկալել։
Իսկ եւ իսկ ընդ նրմին 'ի վեր ընդ ամպրս սըլանամ,
Եւ 'ի նեղքոյ տեսանեմ պարզեալ զերկիր անբովանդակ.
Տեսիլ ըզքանչելի, 'ի դարձակատարը եւ բազմադէմ։
Մինչ կայի յանբաւ բարձունսն ափշեալ ընդ թռիչս իմ եւ փոխումն,
Առաջնորդս յանկարծ լինի անհերեւոյթ, եւ թըւիմ ինձ
Դարահոս վերուստ 'ի վայր, եւ ըզքընով անկեալ գրնիմ։
Այլ ով քանի խընդամիտ գրտայ մինչդեռ սթափեալ 'ի քնոյս՝
Տեսանեմ զի ամենայն անուրջք եւեթ են, ոչ այլ ինչ։ »
Այսպէս Եւայ զայդն իւր պատմեալ, Ադամ արդարում զայս ինչ
« Իսկագոյն պատկեր անձինս եւ կիսամասն իմ սիրակից, [կըրկնեաց.
Ծուփք մրտացդ ընդ գիշերիս քուն՝ իբր ըզքեզ եւ զիս խառնէ։
Ոչ կարեմ սիրել զերազդ կրցկրտուր եւ, յոյժ խիթամ,
Զարահոս. եւ սակայն ուստի գայցեն չարիքն յառաջ.
Զիք չարն ուրուք 'ի քեզ ընտանութիւն, արարած սուրբ։
Այլ ծանիր, զի են յոգւոջս զօրութիւնք բազում սատրինք
Որ 'ի հարկի կան բանին ծառայութեան իբր խլսանի։
Ի նոսա ցընորք մրտացս ըզգըլխաւորն հարկանեմ սպաս.
Յամենայն 'ի գրուստ իրաց՝ զոր աղգեն հինգ արթուն զգայունք,
Առեղծուածս ըստեղծանեմ եւ կերպարանս ինչ օդեղէնս,
Զոր բանին յօդեալ 'ի մի կամ բաժանեալ՝ կաղմի նոքազք
Զամենայն զոր հաւանեալ յանձին ունիմք եւ կամ ժրխտեմք։
Զոր եւ մեր իսկ անուանեմք մրտաց կարծիս կամ գիտութիւն։
Մինչ բնութիւն 'ի քուն կայցէ, բանն 'ի նեղքին մեկնի սենեակն,
Ի խուսել նորա՝ ցընորքն որ սիրեմ յայն կերպարանիկ,
Բաղում անգամ արթուն հրսկիմ՝ զնորայն առնուլ նրմանութիւն։
Բայց յանձին, ըզկերպարանսն խառնիխուռն կըցկրցեալ,
Մանաւանդ յերազն, յառաջ բերմ ինչ այլանդակ,
Անդէպս հիւսեալ բան եւ գործ անցեալ վաղուց կամ դեռադեռ։
« Արդ ըստ իս՝ նրշմարանս ինչ գրտանեմ յանուրջքս քո
Զերեկի յետին իսօսիցս, այլ անհեղեղ յաւելուածով։
Բայց մի՛ տրրտմիր. չարն երթայ եւ գայ յիշին միտս եւ մարդոյն

Առանց նոցին հաճուլթեան, եւ չարկանէ բիծ կամ ըսդիւտ։
Այս եւ զիս քաջալերէ՝ թէ զսոսկալիդ յերազ քընոյդ՝
Ոչ երբեք 'ի զգաստուլթեանդ յանձն առնուցուս բերել 'ի գործ։
Մի անկցի արդ քո սիրտ, մի այդ աչիւնք խոժոռեսցին
Զբաւարլթունքքն բնուլթեամբ՝ սրբբատեսիլ եւ լուսագեղք
Քան զնախկին ժրպիտ չքնաղ վաղորդայնոյ յերեսս երկրի։
Օ՛ն յարիցուք 'ի նոր զբօսանս ընդ անտառակս եւ ընդ աղբերս,
Ընդ ծաղկունս՝ որ արդ բանան ըզծոց իւրեանց խընկապատար
Յանոյշ բուրմանց՝ որ դանձեալ 'ի գիշերոյ եւ պահին քեզ։»
Խրախուսէր այսպէս ըզհարանքն գեղեցիկ, եւ նա սիրտէր։
Բայց լըսիկ յաչացն երկուք կաթեցին շնթք քաղցր արտասուաց։
Զընկեաց զայն հերով իւրով, եւ այլ կըրկին անգին արտօսր
Երեւէր անդէն եւ անդ յաղբերակունսըն բիւրեղեայս։
Զեւ անկեալ՝ առ սրբբեաց Ադամ զնոսին 'ի մի համբոյր՝
Իբր ըզգուշակ շնորհագիւտ՝ ապերասկան մշտաց խըղճի
Եւ պարկեշտ պատկառանաց առ 'ի մեղայ զարհուրելոյ։
Արդ ըրիջացաւ ամենայն եւ 'ի գաշտ անդրը փուլթացան։
Իսկ ելեալ ըստ կամաբ տընկատաղարթ հովանոցին,
Յանարգել գրատն տեսիլ այդուն ծագման եւ արեւու,
Որ դեռ ելեալ՝ անուօք կառայն առ եզերօք քերեր ծովուն,
Եւ յերեսս երկրին ընդ լայն ըզճառագայթսըն ցօղախառն
Արձակեալ՝ մերկանայր յանպարագիր դաշտավայրի
Զարեւելս ողջոյն գրախտին եւ զբաղմերան մարգս Եդեմայ։
Խոնարհեալ պագին երկիր եւ աղօթիցն ըսկիզբն հառուն՝
Որ այդուն այդուն մատչէր ըստ արժանի յոմ կերպակերպ։
Զի ոչ ոմ նորանոր եւ ոչ հառանգքն սրբբանուէր
Պակասէր նոցա յօրհնել զՀասատիչն իւրեանց 'ի սերտ նըւագս,
Որ 'ի թիւ խօսեալ բարբառ եւ որ երգեալ յանպատրաստից։
Պերճ եւ արագ 'ի շրբթանցըն խաղային բանիցն հոսանք
Հեռեւակ կամ 'ի չափով տունս յօրինեալ գեղգեղաձայնս,
Անկարօտաս տաւղի եւ կամ փանդռան քաղցրերգուլթեան։
« Քոյ են այս հրաշակերտք, ծընող բարւոյն, Ամենակալ,
Քոյ է այս տիեզերացըս յօրինուած չքնաղագեղ։
Զի՛ սքանչելի դու ինքնին իցես Էակդ անճառելի՝
Որ 'ի վեր քան զերկինս նըստեալ հանգչես աներեւակ,
Կամ ընդ աղօտ ինչ նըշմարեալ մեզ 'ի տըրուպս արարածոցդ,
Որ եւ անդր իսկ քաջ 'ի բաց քան զամենայն մշտաց հասուն
Ըզքո փայլեն բարուլթիւն եւ զզօրուլթիւնդ աստուածեղէն։
« Որ հրմուտ եւս էք 'ի բան, որդիք լուսոյ, դուք հրեշտակք,
Խօսեցարուք։ քանզի զնա տեսանիք դուք, եւ խուսմբ առեալ
Բոլորեալ կայք զաթոռոն յերդ պարարտ հընչմանց յերկինս,
Անդիշեր եւ բերկրալից տուընջեան 'ի լոյս մեծապայծառ։

« Ըզնա յերկրի արարածք փառաւորեացեն համաբոլոր,
Զ'ինքն առաջին, զինք վերջին, զինքըն միջին, զինքն անվախճան։
« Դու յաստեղսն ամենազեղ, ցայգոյն լեռնիդ յուլարկաւոր,
Եթէ ոչ առ աշալուշին պատշաճիս դու մանաւանդ,
Տրւընկեանն առհաւատչեայդ, որոյ բոլոր քո լուսալիր
Զայդ պրսակէ գեղածիծաղ, ըզնա գովեա 'ի քում շրջանդ
Յելս անդ առաւօտուն, յայն նախընծայ ժամ գեղեցիկ։
« Արեգակն, աչք եւ հոգի մեծամարմին տիեզերացս,
Եւ դու զնա մե՛ծ ծանիր քան զքեզ, եւ զգոլութիւնսն բարձրացս
Յարշաւանդ յաւէժընթաց, 'ի վերանալդ յերկինս 'ի վեր,
Ի բարձունսդ ժամանել 'ի միջօրէ, եւ կարճատել։
« Դու լուսին, որ հանդիպես հապ յարեգակն ընդ արեւելս,
Հապ փախչես անշարժ արփեաքն 'ի սրավար ճախրըն պընդելով,
Օ՛ն եւ դուք միւս հընդէքին մոլորահետ բոյք թափառիկ,
Որ յօրինէք խորհրդաւոր պար ինն անխուլ գեղայարմար,
Երգեցէք զնորին գովեստ որ զլոյս կոչեաց 'ի խաւարէն։
« Օդք եւ տարերք, անդրանիկք ծոցոյ բնութեան չորեքդիմիք,
Ընթացեալք քառահոլով 'ի շրջանակ յաւերժական,
Ո՛վ դուք բազմակերպիք, որ զբնաւս յօդեալ եւ մուցանէք,
Յեղմունքդ անզլաւ՝ փոփոխեացեն մեծի Հաստչիս նոր նոր գովեստ։
« Եւ դուք մեգ եւ շամանդաղ, որ յայս կէտ թուխ եւ խրլթնեբանդք
Ի բոլորոց ու՛'ի ծրխաշունչ լաճէն եղեալ վերասլանայք,
Մինչեւ արեւ՝ ոսկեգոյն ներկանէ զծոպոզդ ասրակերպ,
Հապ՝ ծն արքք 'ի պատիւ տիեզերաց մեծ Արարչին։
Եւ ցկէ զի թէ յարկիքք ամպովք զերկին այլագունեալ,
Կամ ցկէ թէ արբուանիքք զերկիր պապքեալ 'ի տեղ տարափ,
Յելանելդ եւ յիջանելդ հանիքք յաւէժ զնորա գովեստ։
« Զգովեստ նորա, դուք 'ի քառից ծագաց երկրի շընչեալ հոլմունք,
Հընչեցէք մեզմ կամ ուժգին, խոնարհեցէք ըզգլուխսդ, շոճք,
Տունկք ազգի ազգի, եւ դուք ճօճեցարուք յերկրըպագեալ։
Դուք եւս, ազգերք յընթացս ձեր կարկաչասահք, քաղցր 'ի մրմունջ
Օ՛ն առեալ 'ի ձեր խոխոջսդ պատմեցէք զնորա գովեստ։
« Խառնեցէք ըզձայնդ 'ի մի, առհասարակ շունչք կենդանիք,
Թրռչունք որ երդ 'ի բերան յերկնից 'ի դրունսըն վերանայք,
Ի ձեր թեւս եւ յօրհնութիւնս բարձր արարէք զնորա գովեստ։
« Որ 'ի ջուրսըն զեռունք, եւ որ յերկիր շրջիք 'ի ձեմ,
Որ կոխէք զայն սիգապանծ եւ որ սողիքդ նուաստաբար,
Վրկայ լերուք զի չլռեմ, ոչ վաղորդայն, ոչ ընդ երեկս։
Բոլորոյն զբարբառս իմ կամ հովտին, եւ աղբերաց կամ հովանւոյն
Տամ 'ի փոխ, եւ եղանակքս ուսուցանեն զնորա գովեստ։
« Խընդա, տէր տիեզերաց, լեր միշտ բարեաց առատաշնորհ.
Եւ թէ գիշեր գուսարեաց եւ կամ թաքոյց ինչ չար, ցրրուեա,

Զոր օրինակ ըղնաւարն աւասիկ արդ հալածէ ըզս։»
Անբծութեամբ կացեալ յաղօթս եւ խակ եւ խակ խորհուրդք իւրեանց
Յանվերջով խաղաղութիւն եւ 'ի բնաւորն ելին անդորր։
Ճեպեցան 'ի դաշտական վաստակս իւրեանց յառաւօտինն՝
Ընդ ծաղկանց եւ ընդ շաղոյ թաթաւեալ տեղ ցօղատարափ,
Անդր ուր կարդ ինչ մերդաբեր փայտից 'ի ծղօտ անտառախիտ
Ըզթաւ ոստսն սրփուէին, ձեռին կարօտ որ քեցեսցէ
Զանծրնուն խառնելս նոցուն. առ իւր կընձնին հարան ածեն զորթ,
Որ եւ ինքն ամուսնացեալ փարի զնովաւ հատուն բազկօքն,
Եւ օժիտ մատուցանէ նրմա զոլկոյզս իւր յորդեղերս
Առ 'ի զարդ վայելչութեան ամուլ արուգ սին սաղարթուցն։
Թագաւորն երկնից հրաման՝ դորովալիր ակնարկելով
Ի զբաղեալն այսպէս 'ի մեր նախածնողս, առ իւր կոչէ
ԶՈտփայէլ ընդեղ հոգի՝ որ ընդ Տուբեայ յանձն առ երթալ,
Եւ նրմա զեօթնանկողին կուսին հատուեաց ըզհարսանիս։
«Ոտփայէլ, ըլաւ, ասէ, զոր ամբոխուն յերեսս երկրի՝
Փախուցեալ 'ի դրժոխոց Սատան ընդ խորսն խաւարուտ՝
Յարոյց 'ի դրախտին. եւ թէ զնարդ 'ի դիշերիս
Վրդովեաց զմարդկան ամոլ, եւ զի հնարն յանձինս նոցա
Բռնանդակ 'ի մի հարուած ըստարդկային սատակել աղդ։
Երթ ուրեմն, եւ զկէս աւուրքս խոսեաջիր ընդ Ադամայ
Զերդ բարեկամ ընդ բարեկամ. դրացես դու զնա 'ի խորանի
Կամ ուրեք ընդ հովանեաւ 'ի միջոցեայ ածթոյն մեկնեալ՝
Հանդչել վայր մի յառօրեայ 'ի վաստակոցն 'ի ճաշ կամ նինջ։
Ճառեա բանս յուշարարս երջանկաւէտ իւրոց կենացն
Եւ բախտին՝ յանձնակամ աղատութեան եւ յարձակ կամին,
Ի կամին՝ որ զի թէպէտ եւ ինքնիշխան, սակայն յողդոդ.
Միաբս դիր ըզդոյշ լինել ջրատերիւրել յանդգնութեամբ։
Ասա նրմա մանաւանդ զիւրոյ վանդին խէթ եւ թէ յուստ։
Պատմեսջիր՝ զինչ ոք ոսոխ, այն ինչ դեռ ինքն յերկնից անկեալ,
Ընկենուլ այժմիկ յողոյ զայլս 'ի նրմին երանութեանց։
Իսկ բրանի արդեաք, քաւ, քանզի մերժէր հալածական,
Ա՛յլ մանկաւ եւ նենգաժէտ դաւադրժող սուտ պատարանաք։
Ուստ նրմա զայս ամենայն. գուցէ կամաւ յանցուցեալ՝
Պատճառեսցի 'ոդ խաբս ինչ լինել՝ երբեւ անազդ եւ անրդաստ։»
Զայս Հայրն ոգեալ յաւիտենից՝ ելից ողջոյն զարդարութիւն։
Ընկալեալ սուրբ թեւաւորն ըզպատուիրանն՝ ոչ յապաղեաց.
Ի միջոց բիւր երկնաւոր բոցեղենաց ուր կայր սքողեալ
Պանծալի թեւաքն՝ յառնէ թեթեւ թռուցեալ ընդ մէջ երկնից։
Հրեշտակացքն դասք մեկնեալ յայսկոյս յայնկոյս՝ կազմեն փողոց
Սքրաւոր երգութեանն ընդ ամենայն ուղս արփայեն,
Մինչ 'ի դրունս եհաս երկնից, որ ինքնին լայն փեռեկեցան

Յոսկեկուռ շրջեալ ծրինիս , վեհ Ճարտարին չքնաղ կերտուածք :
Անարգել աչքն 'ի յամպոյ ու'ի միջամուտ ինչ ատեղէ՝
Ցեռանէ եւ զդոյզն երկիր 'ի տիպ այլոց լուսերփն արփոյ ,
Նշմարել զդրախտն Աստուծոյ նոռնեալքսակ գեր զհամայն բլուրս :
Ա.յգունակ , այլ ոչ անվրէպ , Գալիլէացեան ջինջ ապակին
Դիտէ զցայդ 'ի լուսնի երկիրս եւ մարդս ուրուատեսիլս .
Եւ նաւաստ 'ի Կիւիլիադայս զԴէլոս տեսեալ նախ եւ զԱմոս ,
Առ մրթարս ունի վնոսին երկնի ամպով Ճայրատելոց :
Անդ 'ի խոնարհ ըղբաթեւ ՃեպՃեալ զթրուչան իւր Ռափայէլ՝
Յաշխարհաց վարգի յաշխարհս ընդ արփային երկինն անբաւ :
Ի ուրեք զի թեւքն անշարժ՝ բեւեռային վարի հողմովք ,
Ի զի զոդ բախեն թաղուն թեւքն՝ հովահարքքն կենդանիք ,
Մինչեւ եղեալ վերացեալ 'ի բարձրութիւն արծուոյ սլացիչ՝
Փիւնիկ ինն երեւի օդապարիցն ամենեցուն ,
Աբանչելի յայտնեալ նոցա իբրեւ ըղհաւրն զայն միակ ,
Սաւառնեալ մինչ արձակէ թռիչս 'ի թեբէ եղիպտական՝
Ըզնրշխարան իւր աւանդել յարեգական շքեղ տաճար :
Խոյացեալ ինքեալ անդէն յարեւելեան ծագս դրախտին՝
Ունու զիւր կերպարանքն՝ սերովբէ թեւաղարդիսկ :
Երկնագեղ անդամոցն 'ի շուք վեցեակ թեւք են նորա .
Զայդք մի զմէն մի լայն թիկունսն 'ի զարդ պՃՃեալ արքունական՝
Դան փարին ասսի անսի շուրջ ըզանչքն իբրեւ լոգիկ :
Զայդք մի զմիջոցն իբրեւ կամար տատեղաղարդ պատէ զհատակն ,
Ըզթիկնամէջսն եւ զաղդերսն ըզդեցուցեալ ոսկեփեսուր
Ի փափիկ աղուամազ՝ 'ի դոյն երկնիցն տոգորից :
Զայդքն յեռին հովանի ոսկեն առնեն գարշապարաց
Ի պՃՃղանցն եղեալ հանդոյն երկնագունից վերս վերս փեսրոց :
Ի նմանութիւն որդւոյն Մայեայ՝ յոտքն կացեալ թօթափէ զթեւսն ,
Որ երկնային ընտուն բուրմամբ ըզշրջափակ վայրսն համապիսս :
Իսկ եւ խսկ ծանեան ըզնս զոքք անմարմնոց պահակերաց ,
Եւ 'ի շուք աշխՃանին եւ պաշտամանն մեծի՝ յարեան ,
Գիտացեալ եթէ վեհից է հրամանաց պատգամաբերք :
Ընդ պայծառ վրանսն անցեալ՝ երթայ մրեսի յերկնային մարդն
Ընդ պուրակ զմրմնենեաց , ընդ ծաղկաբուխ հոտս կասեայ ,
Նարդոսի բասրաասամի . զանխուլ մայրի անոյշ բուրմանց :
Աստ խայտայր բնութիւն կայտառէր 'ի նորաբոյս իւր մանկութեան ,
Եւ խաղայր ըստ հաճոյս 'ի կուսական ոգւոյ զբօսանս ,
Առատազեղ յանուշանալն գեղ վայրի եւ անպաՃոյՃ
Գեր քան զօրէնս եւ քան զարուեստս . երանութիւն անպայման :
Յանցանեալ նորա 'նդ անտառն խընկաբեր՝ ետես Ադամ՝
Որ նըստեալ էր առ գրան հովանաւոր տաղաւարին ,
Մինչ արեգակն 'ի միջօրէն շեշտեր զՃՃաՃանչքն հրախաղաց

Ի խորին ընդերս երկրի հասուցանել ըղձերմութիւն,
Տօթագին տապ շողացեալ 'ի վեր քան զվէտսն Ադամայ։
Եւա 'ի ներքս 'ի խորանին՝ յիւր ժամն անվնասպ ճաշ յօրիներ
Բղջղտուղս անուշահամս քաղցր 'ի քիմն իսկ ախորժից,
Ոչ առանց փափաքելոյ երբեմն երբեմն առ ըմպելիս
Անուշից զոր կամէն եւ հատք եւ կամ ողկոյզ մատուցանէր։
Ադամ առ նա ձայն առնէ. «Հա՛մ՝ այսր արի ճեպեա, Եւա,
Եկ ծն եկ, տեսանիցես ինչ արժանի աչացըդ քոց.
Յարեւելս 'ի մէջ ծառոց տես զինչ տեսիլ շքեղաշուք
Գայ 'ոգ ուղիդ, եւ նոր իմն այդ թըւի ծագեալ 'ի միջօրեայ։
Թերեւս այդ պատգամաւոր մեծ ինչ առ մեզ յերկնից հրաման
Առեալ բերէ, եւ մինչեալ առ մեզ ըզտիւս հաճեսցի հիւր։
Այլ երթ շոյտ, եւ որ ինչ կայ 'ի մատանիդ՝ ած այսրը զայն,
Հեղ առատ յարժան պատիւ եւ մեծարանս երկնից հիւրոյն։
Մարթի մեզ մատուցանել զպարգեւս իւրեանց որոց շնորհէնն,
Եւ զհոխաբար պարգեւեալսն մեզ՝ սրփռել առատապէս՝
Ուր բնութիւն ուռճաղարդ զեղուս 'ի բերան արգասաւոր,
Եւ 'ի ծախսն՝ եւս յորդէ, խրատեալ ըզմեզ՝ ջատնել խընայ։»
Առ այս զայս օրինակ դարձոյց Եւա պատասխանի.
«Ադամ, սուրբ կերպարան, ատուածաշունչ հողոյ զանգուած,
Խուն ինչ պիտոյ են մըթերք՝ ուր յամենայն ժամ այդ համբարք
Հատուն են առ 'ի պէտս՝ յոսարս տընկոյ կախեալ պատրաստ,
Բայց միայն՝ որ 'ի պահեստ ժուժկալութեան հիւթով ընտուն
Առ 'ի սնունդ, եւ մըզին 'ի յաւելորդ տամկութենէն։
Այլ ճեպիմ յամէն ոտ՝ ծիլ, թուփ եւ խաւարտ պարարտահամ,
Եւ քաղեմ ըզտիր ընտիրսն՝ առնել խընջոյս հիւր հրեշտակիս,
Զի տեսեալ վըկայեսցէ՝ թէ եւ ասասէն իսկ ընդ երկիր
Ի ըցեսալ է Աստուծոյ զիւր բարութիւնն որպէս յերկինս։»
Զայս ասէ եւ սըլանայ ճեպ ըզճեպի փութիկոտ աչքք
Զըմխաղեալ ընկըղմեալ 'ի հիւրասէր սրբոյն խորհուրդս,
Ի՞նչ ընարեսցէ զվտիկագոյնս, կարգ զի՞ր կալցի՝ ջնաւնել զճաշակս,
Եւ 'ի շար անվայելուչ միմեանց ըզկնի մի արկանել,
Այլ համոյ՝ համ քաղցրախորժ յաղորդեսցէ հեշտ փոփոխմամբ։
Ի գողտրիկ բընոյ 'ի բուն դիմեալ կրթէ զոր ընծայէն
Ամենաբեր մայրն երկիր յելից հընդիկան եւ 'ի մրտից,
Զոր յափունսն 'ի միջոցի, զոր 'ի Պոնտոս, յեղը 'ի Փիւնիկ,
Կամ ընդ ծագս որ տեսին զԱլկինոյոս թագաւորեալ։
Պըտուղք ամենազանք՝ բերտ 'ի կեղեւ կամ լերկ 'ի մաշկ,
Ամիսոփեալ 'ի բուճաճ կամ 'ի փոճոկ, զոր ժողովեալ
Դիզանէ 'ի սեղանն առատաձեռնն լնութեամբ։
Անվընաս յողկուզոց քամէ գինի՝ համեղ յարբուն,
Հատս ազգի ազգի ջաղեսէ, եւ 'ի քաղցրիկ ճշնեալ նըշոյ

Կալմէ սեր ինչ խաղաբուղն. անօթք նրմին ոչ պակասեն
Ջինք եւ սուրբք՝ պատկանաւորք օշարակացն խառնարանք։
Ապա ցանէ վարդ ընդ յատակս, եւ ըղթրմոց անոյշ բուրմունս՝
Որ 'ի հուր ոչ հոտոտեալ՝ սրփռեն զոգիսն քաղցրաշունչ։
Նախահայրն յայնժամ եղեալ 'ի խորանէն գնայր ընդ առաջ
Երկնաւոր հիւրոյն խրոյ՝ սոսկ ուղեկցաք խրով շնորհաքն։
Ամենայն պերճութիւն արքայական էր յանձն իւր,
Առաւել մեծահրաշակ քան զառաղտկալն հանդիսին շուք՝
Զոր իշխանք ձրդեն ըզկնի՝ մեծափարթամ երկայնաձիգ
Գունդ պարակից մանկլաւկաց ոսկեձամուկ ճաճանչելոց,
Նրժոյգք 'ի ձեռն հեռավարեալք, տեսողք ափշեալ բերանաբաց։
Յանդիման եղեալ մեծի Զուարթնոցն Ադամ, թէպէտ անահ,
Բայց հրաշ հպատակութեամբ մատչի եւ զգոն պատկառանաքք,
Եւ խոնարհ յերեսս երկիր վեհի բնութեան պագեալ՝ ասէ.
« Ծընունդ երկնից, զի բաց յերկնից չիք այլ ուրեք փառաց տեսիլ,
Ի վերին նախաթոռացն քանզի գամ մի սառորիկեալ՝
Յանձն առեր զերկիր վայրեկ յերջանկաւէտն կայենից
Եւ ըզսա մեծարել, ծն եկ ընդ մեզ երկուս հաճեաց,
Որ թէպէտ չիք այլ աւելի, բայց դերագոյն առեալ պարգեւս՝
Ժառանգեմք 'ի սատացուած ըզմեծանիսա երկիրս զայս.
Հաճեցիր ազէ հանդիսել ընդ հովանեաւ տաղաւարիդ։
Եկ նիստ ասա, եւ ճաշակես զընտիրս 'ի բերրս պարտիզիս,
Մինչեւ անցցէ տօթ միջօրեայ, խոնարհեսցի արեւն 'ի հով։»
Զօրութիւնն հրեշտակային ետ քաղցրութեամբ պատասխանի.
« Այդորիկ իսկ աղագաւ հասեալ կամ ես այսր, Ադամ.
Այնպիսի է քո ստեղծուած կամ բնակութեանդդ քում այս տուն,
Որ գիտէ սակս հրաւիրել զերկնից անգամ ոգիսն 'ի տեղ։
Ա՛ծ արդ ազէ՝ զկս 'ի խորան անդր հովանուս տաղաւարիդ,
Ի միջօրէ ժամէս ցեղս երեկորոյ տրեալ են ինձ։»
Հասին յարին անտառախիտ, որ 'սա Պոմոնայ մեծանոցին
Ի զարդ ծաղկանց ծիծաղէր եւ աքանչելի անոյշ բուրմանց։
Իսկ Եւային անպաճոյճ՝ բաց 'ի բրընիկ անձին զարդուէ, —
Գեղեցկադեղ սիրելի քան զյաւերժհարան անտառասուն,
Կամ քան զչքնաղն յերեցունց առաստղելին աստուածուհեաց
Որ մերկանդամ մրրցեցան զմիմեանքք եղեալ յԴէս լերին, —
Կայր յոտին սպասահարիկ հիւրոյն իւրում երկնաւորի։
Ըսքողեալ անմեղութեամբն՝ ոչ կարօտեր պատրաւակաք,
Ոչ խորհուրդք ինչ խօթամիտք այլայլեին զայսրս նորա։
Եւ նրմա հրեշտակն ողջոյն, մնրւիրական զայն ողջունակ՝
Որ յապայս առ Մարիամ տրաւ օրհնեալն, երկրորդ Եւա.
« Ողջոյն, մայրըդ մարդկան, որոյ քո ծոցդ արդասաւոր
Լցցեն զաշխարհ զաւակաքդ, որ յոգնահոյլ յաճախեսցեն

Քան զմերկոց ազգ ազգ զոր Ծառքն Աստուծոյ յայս սեղան դիպին։»
Սեղան նոցա էր դարակ, բարձր 'ի գետնոյ եւ սիզուէտ,
Զորով շուրջ բոլորեալ կային մանուռս Թաւ Նրատարանք։
Ցընդարձակ ջրեքկուսի երեսքս իւր ծայր 'ի ծայր
Աշունքն բոլանդակ կայր ակաղձուն միահամուռ.
Թէպէտ դարուն եւ աշուն՝ անդ ձեռն 'ի ձեռքն պարէին։
Ըզքանիւք անկան Ադամ եւ Զբաղթունն առ Ժամքս ինչ,
Ոչ բընաւ կասկածելով Թէ ցերտասցին ինչ համադամք.
Եւ նախ հայրքն մեր ըսկիզբն արար սովին օրինակաւ.
«Երկնաւորդ հիւր, քեզ հաճոյ լեցի զբարիքքս Ճաշակել՝
Զոր դարմանիչ մեր՝ համայն գերակատար բարութեանց հայր
Եւ անչափ պարգեւատու՝ երկրի հրաման եւ ընդհել մեզ
Ի մնունդ ու'ինչեղս. Ճաշակ անհամ հոգեղենաց թերեւս 'ի քիմն։
Զայս եւեթ գիտեմ զի հայրն երկնից է տուօղ բոլորեցուցց։»
Պատասխանի եւ հրեշտակն. «Ապա զոր ինքքն պարգեւեաց, —
Մինչ օրհնութեանց նրմա երգք, — մարդոյդ 'ի կէս հոգեղենի,
Մարթի՝ թէ եւ աննիւթ ոգւոց չկցէ ջամբ անհաճոյ։
Եւ բնութիւնք խմանալիք սընտնդ խընդրեն ըստ բանեղենագ.
Երկոցունց են զօրութիւնք ըզգայութեանց խոնարհագոյնք,
Յորս է լուր, տես, հոտոտել, շօշափական, քիմք 'ի Ճաշակ։
Ճաշակելիքքն զքանեն, հալեն, փոխեն 'ի նմանութիւն,
Եւ առեալ ընդհանրեղէնն յանհանութիւն դարձուցանեն։
Գիտեա զի բնաւ սահմանակն մընդեամբ կարօտ են պահպանել.
Որ յախընթացքն են 'ի տարերքս մնուցանեն ըզպարզականս,
Հող ըզծով բուծանէ, հող եւ ծով զոգ, օդ զարփին բոցս,
Եւ նախ ըզբուսինն՝ իբր ըզնոնարհ իւր մերձաւոր։
Անդուստ 'ի գընտատեւ դեմս են նորուն այն գեղութիւնք՝
Գոլորշիք ջեւ պարզեալք, ջեւ 'ի բնութիւն փոխեալ նորին։
Եւ լուսին յիւր ցամաքէն խոնաւական՝ ցընդէ սընտնդ
Ի վերին դունսս, եւ արեւակ՝ բնաւից լուսոյն մատակարար,
Ընդունի յամենեցունց ըզդարմանիչ իւր փոխարէնն
Ի սըղոխ շոգեամէջ, եւ յերեկունն ըզծով ընթրէ։
Թէպէտ ծառք կենաց յերկինս անմահութեան բերեն պտուղ,
Եւ այդիք ըմպելիս մատուցանեն աստուածեղէնս,
Եւ Թէպէտ այդուն այդուն կրթեմք յոստոց ըզցօղ մեղու,
Եւ զդեղինն գրասանեմք մարդըրատակիչ հատուկ ծածկեալ,
Սակայն ասա՝ յայնքան երանդքս փափկութեանց յեղյեղ Աստուած
Զիւրական բարութիւնս, զի դրախտս՝ երկնից օրինակի.
Եւ զիս մի խորշել կարծէր 'ի պարգեւացքս Ճաշակաց։»
Ապա նոքա երկոքեան բազմեալ մրխին 'ի կերակուր.
Եւ հրեշտակն ոչ առ աչքք եւ ուրուագէս ինչ եկեր անդ
Ըստ հասարակ աւանդից աստուածախօս բանարարաց,

Այլ սասարկ հայրենասիրաց ընտրեալ քաղցի եւ ջերմութեամբ
Ի հալել եւ փոխարկել. իսկ աւելորդն ինչ յայնցանէ
Դիւրածախ ընդ Հոգիսն անցեալ ցընդեալ 'ի դուրս փրչի։
Զի արժան զարմանալ, եթէ 'ի թուխս ածխոյն հրաշ
Հրմնաւարժքն տարբալոյծ գիտէ կամ հնար կարծէ փոխել
Զբերրատգոյն անգամ հրահալս յոսկի մաքուր իբր ըզբովուց։
Իսկ Եւա՝ մերկ հոլանի սպասաւորէր 'ի սեղանին,
Եւ անոյշ օշարակաքն ըզփերփերագեղ նոցին բաժակս
Ըստ դասարկել պատարէր. ով ամբծութիւն դրախտավայել։
Եթէ որդւոյն Աստուծոյ՝ էր 'ի տրուփից կալ անբասիր,
Այն էր ժամ, այն էր տեսիլ. այլ տիրէր սէր սուրբ 'ի միտս անդ,
Եւ զնախանձ ոչ գիտէին՝ զթշնամանեալ սիրոյն գրժոխս։
Իբրեւ առանց պարպատելոյ զբնութիւն՝ լցան 'ի կեր եւ յուսով,
Խորհեցաւ անդէն Ադամ՝ մի զայնքանոյ խօսակցութեանն
Ապախտ առնել ըզպատեհ ուսանելոյ զքան զինքն 'ի վերս,
Հայցելով զերկնաբնակաց՝ զորոց հայէր գերազանութիւն
Վէր 'ի վեր զեւրեւ երկեալ, այց կերպարանք լուսաճաճանչ —
Ճառագայթ աստուածեղէն — եւ զօրութիւնքն վեհափառ
Ցոյժ գըլեալ անցանէին բացէ 'ի բաց քան զմարդկեղէնս։
Արդ բան զայս ըղնոհական ասէ ցերկնիցն պաշտանեայ.
« Դու բնակիցդ ընդ Աստուծոյ, քաջ ճանաչեմ զքո քաղցրութիւնդ
Այժմ՝ 'ի պատուի ասա առ մարդն՝ որոյ 'ընդ յարկաւ խոնարհութեան
Մրատանել հաճեցար եւ ճաշակել յերկրիս բերոյ,
Որ թէ չէն բոյծ հրեշտակաց, բայց քեզ եղեն ընդառնելն,
Մինչ զի թուխս՝ ոչ 'ի խրախուսս երկնից սընեալ մեծամեծարս.
Սակայն զինչ նրմանութիւն։ » — Կըրկնեաց իշխանն թեւաւոր.
« Ո՛վ Ադամ, մի է միայն ամենազօրն Ամենակալ՝
Յորմէ բըղխեն ամենայն, եւ վերըստին դառնան 'ի նոյն,
Եթէ բնիկ բարութիւն ապականեալ չկցէ նոցին։
Ամենայն ինչ նրմանակ են արարեալ ըստ կատարմանն,
Ամենայն 'ի միոյ եւեթ նախկին նիւթոյ ստեղծեալ,
Առեալ պէսպէս կերպարանս, գոյացութեան զանազան չափս,
Եւ կենաց՝ յայն ամենայն ինչ որ կրրկ զկենդանութիւն։
Սակայն այդ գոյացութիւնք՝ ըստ առ Աստուած հուպ մատչելոյ
Առաւել նուրբ եւ անօսր են՝ պարզական եւ հոգենիւթ,
Կամ մտաել յայն նրկրրտին իւրաքանչիւր յիւրում կարգի՝
Որ արաւ նոցա յաղդել, մինչեւ մարմնոն յոգի ելցէ
Ըստ ազգի ազգի չափուն միում միում պատշաճելոյ։
Ըստ այսմ՝ յարմատոյ բըղխէ դալար ստեղն թեթեւ,
Անուն ցըցուն եւս օդային տերեւք, ծաղիկքն կատարեալ
Ի փրթիթս եկեալ ապա՝ բուրէ զոգիսն անուշահոտ։
Ծաղկունք՝ միրգք, մարդոյն սընունդ, գամ քան ըզգամ անօսրացեալք՝

Զրկանն յոգիս կենսաբերս, 'ի շնչաւորս, յիմացականս,
Եւ սան միահաղոյն կենդանութիւն եւ զգայութիւն,
Ըզգընորս եւ ըզմիս՝ յորմէ առնու հոգին ըզբան։
Բանն էութիւն է հոգւոյն, եթէ խօսունն եւ թէ մնաւոր.
Խօսունն յաճախ ձեզ յատուկ, մեզ մշտաւորն է սեփական,
Աշխարհանք եւեթ ընդ մէջ են, իսկ տեսակքն միաբուն։
Ապա մի զարմացջիք, թէ զոր Աստուած գիտ ձեզ բարի,
Ոչ մերժեմ, այլ ձեզ նման յեմ փոխարկեմ գոյացութիւն։
Եկեսցէ թերեւբս ժամ՝ յորում մարդիկ կրցորդ լեցին
Բնութեան հրեշտակաց, յորում այլ ոչ գլուխնիցեն՝
Ոչ անպատկան կերակուր եւ ոչ սընունդ անբաւական։
Ո՛ գիտէ, մարմինքդդ ձեր 'ի հիւթանութեթ սընեալ խիւսոյ՝
Փոխեսցին հուսկ ուրեմն 'ի հոգի պարզ ամենեւին,
Եւ հասեալ ժամանակաւ 'ի կատարումն, եւ թեւս առեալ
Սըլացցին ըստ մեզ յարփին, եւ կամ ըստ կամս բնակեսցեն
Աստ կամ 'ի դրախտն երկնաւոր, եթէ հնազանդ գըտանիցիք,
Թէ պահէք անայլայլակ ըզսէրն անխոռ եւ անյողդողդ
Ի հոգիս ձեր առ այն՝ որոյ սերունդք էք եւ որդիք։
Աւաժամայս՝ վայելեցէք յայդ ամենայն երանութիւն
Զոր ձեր բախտդ տանի՝ առ վեհագոյնն ապաժաման։»

Ազգի մարդկան հայրապետն անդրէն կրկնեաց պատասխանի.
«Ո՛վ հոգի սիրական, մարդասէր հիւր, ուսուցեր մեզ
Ճանապարհ որ ուղիղ առաջնորդէ 'ի գիտութիւն,
Եւ զորոշս բնութեան որ 'ի միջոց գընան 'ի շուրջ.
Անդուստ էիցս քընութեամբ ոսն ոսն յԱստուած վերանայցեմք։
Բայց ասէ բեր ասա ինձ, զոր յաւելերըն զինչ է խրատ,
Թէ հնազանդ գըտանիցիք. եցէ՞ ինչ մարթ ըստուգանել,
Կամ հեսաել մեզ 'ի սիրոյ զմեզ 'ի հոգոյ ստեղծագործին,
Զորս եւ եդ յայս բաստ անչափ՝ գեր'ի վերոյ քան զամենայն
Ցանկութիւն սրրտի մարդկան կամ զնմաստից մշտաց հասուն։»

Եւ հրեշտակն ասէ ցնա. «Երկնից որդիդ եւ երկրի՝ ըւր.
Երջանիկ յԱստուծոյ ես. իսկ 'ի դրմին տեւել՝ քեզ անկ,
Փուտ ասեմ ունկընդրութեան. կաց դու 'ինամին. իմ այս էր խրատ,
Պահեա զայն. Աստուած ըզքեզ եդ կատարեալ, ոչ անփոփոխ.
Արար բարի, բայց իշխան եթող ըզքեզ յամել 'ենոյն։
Հրաման կարգեաց քոց կամացդ ազատ լինել 'ի բնէ իւրմէ,
Ոչ անհրաժեշտ ճակատագրի, ոչ անողոք հարկի հպատակ։
Կամաւոր ծառայութիւն եւ ոչ բռնի խընդրեմ 'ի մէնջ,
Որ նման չէ ինչ հաճոյ եւ ոչ երբեք լինել մարթէ։
Զի բռնաղբօս սրրտից գործել կամաւ թէ ոչ՝ ի՞նչ լեցի յայս,
Որ յանկամն հարկին կամել յոր ստգնապէն կապեալ հրամանք,
Եւ ընորոյ խիք իշխան լինել եւ տէր չեն ձեռնհաս։

Եւ ինքնին եւ ամենայն հրեշտակախումբ գինդից բանակք,
Որ տեղոյն Աստուծոյ կամք առաջի դէմ յանդիման,
Բարեմասին մեր նրսէ, որպէս եւ ձերդ, 'ի հլութեան կայ,
Եւ բնաւ չիք այլ ինչ առ մեզ անշուշտ յուսոյ երաշխաւոր:
Կամակար կամք 'ի պաշտօն, զի եւ սիրեմք իսկ կամակար,
Որպէս է իսկ յանձնիշխան 'ի կամքս մեր սիրել կամ ոչ,
Եւ այդիւ կամք մընամք անդրդուելի, կամ անկանիմք:
Եղեւ ոմանց գրչրել, քանզի գթեցին 'ի հեստութիւն,
Որով գլեցան յերկնից բարձանց մինչեւ 'ի խոր ստորամեաս:
Ո՛վ անկումն, յորմէ բարձանց երանութեան յոր եղկութիւն:»
Նախահայր մեր մեծ յաւել. «Եղեալ բանից քոց մրատիր,
Վարդապետդ աստուածային, զբարձախառն ունկամբ լուայ
Առաւել քան զքրովէէիցն արուեստականս 'ի հուպ բրլոց՝
Ուստի զցայդ արձակեն օդանրաւդ երգոց հընչմունս:
Գիտէի եթէ ստեղծուած ազատ 'ի կամն եմ եւ 'ի գործս.
Անմոռաց կացցուք 'ի սէր հաստչին մերոյ եւ 'ի հլութիւն,
Որոյ մի եւեթ պատուէր՝ յոյժ իսկ արդար՝ տրեալ է մեզ.
Անդեղեւ միտքս են վրկայ եւ հանապազ վրկայեացեն:
Սակայն անգք զոր յերկինս ասես անցեալ՝ արկ յիս յերկրաւանս
Եւ անձուկ յոյժ լսելոյ, թէ հաճեսցիս, ըղձկոն ողջոյն.
Նոր ինն ելցէ եւ չրքնալ, արժանալուր սուրբ լրուութեան:
Աւուր դեռ չնա կայ եւ հազիւ ըստ կէս ընթացս անց արեգակին,
Ըզմիւս կէսն այն ինչ հազիւ սկըսեալ 'ի մեծն երկնից կամաբ:»
Այս հարցումն էր Ադամայ. իսկ Ռափայէլ՝ եղեալ հաւան
Եւ սակաւ մի դադարեալ՝ ըսկիզբն արար խօսել այսպէս.
«Որպիսի գընեա խընդիր ինձ առաջի, նախդ 'ի մարդիկ,
Տաղնապող սակ եւ դըժնեայ. ինձ նրիարել զնաիրդ ելցէ
Զդայնոց մարդոյ զպատերազմեալ ոգւոց հանդէսս անեբեւայթ.
Զնաիրդ անկարելիսը պատմել զանկումն անթիւ Զուարթնոց՝
Որ պատարունք եւ փառաւորքն էին երբեմն 'ի մոերմութեանն:
Եւ զնաիրդ հոլանել զդաղանիս այլում ինչ աշխարհի,
Զոր թերեւս ոչ հրամայի հանել 'ի վեր եւ մերկանալ:
Բայց սակայն առ քում օգտիդ ներեալ է մեզ ամենայն ինչ:
Որ 'ի վեր ինչ գրատնի քան զմարդկեղէն ըզգայութիւն,
Հնարեցայց ըստ մարթելոյ նրկարագրաւ բերել 'ի դէմս՝
Զհոգեղէն հանգամանսն ընդ մարմնաւորս համեմատեալ:
Թէ երկնից է ստուեր երկիր, եւ եղելոցն անդէն եւ ասա
Զիցէ՞ հնար նրմանել քան զոր յերկրի ասա կարծիցի:
«Մինչ չեւ էին տիեզերք, ուր այժմ երկինք շրջեան առնուն,
Ուր երկիր կայ զարդիս եւ ինայ կըշեռ յիւր միջակէտ,
Անդանօր համօրէն տիրապետէր անկազմն Վիհ:
Ի մի յաւուրց, — զի ժամանակն, եւս եւ յանկէտ յաւիտենին,

Ի շարժումն եկեալ չափէ առհասարակ զամենայն ինչ՝
Որոց է տեւողութիւն յայժմուս՝ յանցեալս եւ յապառնիս, —
Ի միում յաւուրց անսկ՝ զոր բերէ մեծ տարին երկնից,
Երկնաւոր բանակք Զուարթնոց՝ 'ի բնաւ ծագաց երկնից ձայնեալք
Վերնական հրամանաւ՝ գումարեցան յանթիւ ժողով
Առաջի գահոյից Ամենակալ գերազօրին
Մէն մի 'նդ եւրով իշխանաւ 'ի գասակարգ լուսապայծառ։
Բիւր նշանք արձակեալք եւ սաւառնեալք մատեան յառաջ,
Դրօշք եւ վառք յառաջապահս՝ 'ի վերջապահս ծածանեալք՝
Յայտ ըզդասս առնէին, զնշխանութիւնս եւ զաշխարհանս։
Կամ յանկուածսն փոփոխեալս նրկարէին սուրբ յիշատակք,
Ազատուածք նախանձաւորք եւ սիրաբուռնք, շքեղ աւանդ։
Մինչ գունդք յոլորտս անհնարին ընդածաւալս ման 'ի ման
Կանգնեցան կացին սնշարժ, հայրն անսահման՝ որում մերձ կայր
Բազմեալ Որդին իւր 'ի ծոց երանութեան՝ էառ խօսել
Ի բարձանց գոգոյն լերին ջահավառեալ բորբոքելոյ,
Ոյր հրացայտ բոցք ըզդազաթն անտես յաչացս ծածկէին։ —
« Ունկնդիք ամենեքեան, որդիք լուսոյ դուք Զուարթունք,
Աթոռք եւ տերութիւնք, իշխանութիւնք եւ զօրք երկնից,
Լուարուք զանցեղ հրամանս։ այսօր ծընայ ես ըզսա
Զոր իմ Որդի միածին յայտ արարեալ ձեզ քարոզեմ,
Եւ 'ի սուրբ լերինս օծի՝ զոր տեսանիք դ յաչմէ խմմէ։
Կացուցի զսա ձեզ գլուխ եւ եղէ յանձն իմ երդմամբ՝
Զի ամենայն որ յերկինս կրկրկեսցի ծունր 'ի խոնարհ
Առաջի սոցա, եւ Տէր եղեսցի զնոքն խոստովան։
Միաբան կացէք 'ի ցուսալ արքայութեան մեծ փոխանիս՝
Ի մի շունչ անքակտելի յաւէժարար երջանկափառք։
Որ սրմայն հեստէ՝ հեստէ լնէ եւ խրգէ զմիութեան կապ,
Նոյն օրին յԱստուծոյ, յերանական տեսութենէն
Ընկեցեալ՝ եւ յարտաքին խաւարին խորս անկեալ սուզի։
Այն նրման տեղի կարդեալ անիբրկանակ եւ անվախճան։ —
Զայս ասաց Ամենակալն, հաւան Թուեցան ընդ բանսն հանուրք։
Թուեցան առհասարակ, սակայն չէին ամենեքին։
« Զայն օր, իբրեւ ըզմի յերեւելի աւուրց այլոց,
Անցուցին յերկս եւ 'ի պարս երեքսրբրեան սեթոռայն շուրջ։
Խորհրդաւոր պար՝ զոր կամարն աստեղապարդ՝ մոլորակացն
Եւ արփիցն անիսալացեալ յիւր 'ի բոլոր պարբերութիւնս
Հրպագոյնս նրկարէ ոլորտապատոյտ խուրով բաւղք։

---

330. Ակնարկութիւն 'ի բան Սաղմոսին՝ Ես այսօր ծնայ զքեզ, եւ 'ի ժամանակաւոր ծնունդ Փրկչին։

Որ եւ են՝ մէջ 'ի միջոց խոտոր եղեալ, մանուածապատ,
Եւ ուր անցեալ թըւին 'ստ օրէնս՝ անդ առաւել օրինաւորք։
Եւ 'ի ձեռն իւրեանց նըւազն երկնահանճար գեղայօրէն
Ցայն անուշէ զգեղգեղեալ քաղցրաբարբառ հընչմունըս իւր,
Զի եւ ունկն ասասուածեղէն սիրէ լըսել ախորժաբար։

« Մերձենայր երեկոյն. զի են եւ մեր երեկ եւ այգ,
Ոչ թէ բնաւ ինչ առ հարկի, այլ հեշտութեան զանազանակք.
Յետ պարուցըն ցանկացան անմարմնականք անոյշ ընթրեաց։
Եւ զի կայրն 'ի շըրջանըս բոլորեալ բոլորեքին,
Ուղղեցան անդէն սեղանք հրեշտակական կերակրոցք լի։
Օշարակն յակընթադոյն, գեղաղըւարճ այգեացըն բեր
Որ յերկինքն բուսանին, յորդախաղաց բըղնէր ուխիւք
Ի բաժակըս մարգըրտեայս, յագամանդեայս եւ յոսկեձայլս։
Ընկոզմեալ ըմծաղիք եւ ալբասակեալ զըւարթ հիւսիք՝
Ուռեն եւ ըմպեն, եւ 'ի համբոյրս ընտանութեան
Աբրեհան յուսալ երկար՝ անմահութեամբ եւ խընդութեամբ։
Աւելեաց չեք ինչ խէթ, անչափութեան ուր սահման լոկ
Ի չափ զեղուն՝ առաջի բոլոր բարեաց Պէտականին,
Որ առատ ձեռամբ հեղոյր նոցա՝ նոցին հրճուիւք բերկրեալ։

« Երկնային զիշերն ամպոտք բուրեալ բարձու լերինն Տեառն,
Ուստի դան արեւ եւ ստուերք, փոխեալ զերինկ էր ջինջ երեսս
Ի զեղ լուսոյ երեկորիդ, զի ցայգն անդ չէ քան զայգ արխուր,
Եւ սիր 'ի բոյոր ցօղեալ վարդից՝ զամենեսին յանկոյց 'ի ներսէ,
Բայց յաջացն ասասուածեղէն որ ոչ երբէք նընջեն բընաւ։
Յընդարձակ դաշտի ուրեք քան զլայնալիր երկրիդ բոլոր
Թէ 'ի գիւր հարթեսցի, — այսչափ դաւիթքն են Աստուծոյ, —
Բանական հրեշտակերամ սըփռեալ 'ի վաշտս եւ 'ի կարգս
Ըզձամբար իւր տարածեալ առ կենդանի ջուրց վըտակք
Ի կենաց ծառոցն 'ի մէջ. դըրօշք անթիւ կանգնեալք անդէն,
Խորանք երկնաբնակք՝ ուր Զըւարթունք դընին 'ի նընջ
Գրգռեալք 'ի սիք զոլարար, բայց 'ի նոցունց որ զցայգն ողջոյն
Փոփոխեն կարգ ըստ կարգէ քաղցր օրհնութիւնս ըզմեծ դահուն։

« Այլ ոչ այսպէս ըսկէր Սատան. այս է նորա կոչումն այժմիկ,
Ոչ եւս զանուն առաջին առնու յերկինս ոք 'ի բերան։
Սա 'նդ առաջինս, եթէ ոչ եւ առաջին հրեշտակապետ,
Մեծազօր, շնորհափառ, գերադոյակ, սակայն սա ինքն
Ըմբըռնեալ նոսխանձու՝ դիմակայել Աստուածորդւոյն՝
Զոր յայնմ աւուր պատուեաց Հայր եւ քարոզեաց Օծեալ Աբբայ,
Խրոխտով տեսլեանն ոչ ժուժեաց, զանձն 'ի փառաց կարծեաց անկեալ։
Վասն որոյ՝ ըզցեալ քինու եւ խորամանգ դըժնեայ չարեաք,
Անդէն ըզմէջ գիշերաւ 'ի հասանել նըսեմ ժամուն՝
Որ առաւել յոյժ սիրելին է հանգըստեան եւ լըռութեան,

Եդ 'ի մոի վարանջել գինդոլք իւրոլք նրշկահելով,
Եւ զվեհ դահն արհամարհեալ՝ Թողուլ զպաշտօնն եւ զհրլուԹիւն։
ԶարԹոյց ըզմեծն 'ի հրպատակս իւր եւ ասէ դաշն ձայնիւ. —
« Նընջեա դու, սիրուն ընկեր. որ քուն կարէ զաչքդ խընուլ.
Ո՞չ եւս յուշ քեզ երիկեան լինի հրամանքն մեծատաստ
Հուսկ ուրեմն 'ի շրջրԹանց զերծեալ երկնից ինքնակալն։
Ըզխորհուրդս քո սովոր ես դու միշտ ինձ 'ի մեր բերել,
Եւ ես զնմանս յայտնել քեզ. մեք մի եւեԹ եմք յարԹուԹեան,
Իսկ զիարդ քուն քո զարդիս առնիցէ զմեզ անմիաբանս։
Տեսանես օրէնքս նոր՝ եդեալ ահա 'ի մեր վերայ.
Նոր օրէնք իշխողն՝ գիտեն ծնանել եւ 'ի ծառայքս
Իմաստ նոր եւ նոր խորհուրդ 'ի խորտակել զբախտն արկածս։
Ոչ անվրանանդ ինչ լինիցի ասա առաւել ինչ բարբառել։
Արի զվեհտարն Ժողովէա զբիւրաւորացս որոց իշխեմք,
Դողջիր թէ Թուխ մրԹին գիշեր զրատուերս ամպոց չեւ փարատեալ,
Հրաման հատեալ հարկ է ինձ փուԹալ ՀՀեպել բոլոր գընդիւք,
Որ արձակեալ ատատանեն ընդշանս իւրեանց ընդ իմ ձեռամբ,
Ըշտապել սլանալ ուր մեր հիւսիսայինքն են բնադիրք,
Կազմ յօրինել զամենայն առ 'ի զարքայն մեր ընդունել
Զօծեալն մեծափառ, եւ զպատուիրանն նորատուր։
Անցանել կամք են նորա վաղվաղակի յաղԹանակաւ
Ընդ դասս հանուրց պետուԹեանց եւ տալ նոցա հրաման զօրէնան։ —
« Այսգունակ խօսեցեալ հրեշտակապետն նենգախեռ՝
Թափեաց Թոյն դառնուԹեան 'ի սիրտ շամբուշ նիզակացին,
Որ գուսարեալ միահամուռ կամ մի առ մի զհրամանատարս
Որ ընդ իւրեւն իշխէին՝ ասէ ցնոսա 'սա պատուիրելոյն,
Թէ Բարձրելոյն հրամանաւ, չեւ խոր գիշեր յերկնից մեկնեալ,
Մեծ նշանն պետական եկեալ խաղալ գընդացն 'ի գլուխ.
Եւ զպատՀառելն զոր ուսաւ՝ ասաց եւ արկ 'ի մէջ նոցա
Զայնս երկեսայս եւ նախանձուկս՝ 'ի փորձ մըտաց կամ 'ի հրապոյրս։
Ընդ ծանօԹ նրշանակաւելն կարգեցան ամենեքեան՝
Անսացեալ վրսեմական ձայնի իւրեանց մեծ իշխանին։
Զի մեծ իսկ էր անունն եւ աշխՀան իւր բարձր յերկինս.
Նըմանեալ առաւօտին ասատեղ որ զբոյլս արփիցն ածէ
Դէմք նորին եւ կերպարան՝ զնոսա կարԹեաց, եւ պատիրքն իւր
Զերերս մասն բանակին երկնից ըղՀեա իւր ձրգեցին։
« Իսկ էին ակն որ 'ի խորս երկամանց անցանէ Թափ,
Ի բարձանց լերինքն սուրբ եւ 'ի միջոց ջահիցն ոսկեաց,
Որ վառեալ բորբոքին զդիշերն ողջոյն իւր առաջն,
Ետես առանց նոցին լուսոյ զդեռահաւակ սատմբակուԹիւնն,
Ետես յամ հնարէր եւ ոչպէս Հարակեր յորդիս տուընջեան,
Ո՛ր խուժան ըղՀեա միտէր՝ վեհ հրամանին իւրսամ գիտակ.

Եւ Ժրմտեալ՝ առ միածինքն իւր Որդի բարբառի զայս. —
« Որդեակ, յորում ըղձառս իմ տեսանեմ ամենալոյս,
Հաճոիցն դու զորութեանդս ժառանգորդ, հասանիս մեզ
Ամենակալ կարողութեան մերում այժմիկ առնել հանդէս,
Եւ զնուռ՝ զոր վարիցեալք 'ի պահպանել զաստուածութիւն
Եւ զտերութիւն զոր ունիմք 'ի վաղընջուց յաւիտենից:
Ախոյեան յանդնէ 'ի դէմս ընդդիմանթռու մեզ կանգնելոյ
Ընդ ամենայն ընդարձակ եւ լայնատարածք հիւսիսի.
Նա 'ւանիկ մարտիւ փորձել խորհի զմեր զօրս եւ զերաւունս:
Յուշ արդ 'ի վանդա՝ հաւաքեսցուք փոյթ ըզմնացորդ զօրականիս
Ի Թիկունսդ մեզ՝ զի մի յանըզգաստից ինչ կորուսցուք
Ըզբարձրս մեր բարձրագահ, ըզդաբիրայս եւ զնեառնս մեր: —
« Եա Որդին պատասխանի, հանդարտ 'ի դէմս եւ սրբաբերայլ,
Անձառ, անքննուեր, եւ լուսանեղկ աստուածութեամբ. —
Ամենակալ Հայր, յերաւի դու զթընչամիս քո խաղ առնես,
Ծիծաղեալ յաստահովի զունայնամիտքն խորհրդովք
Եւ զամբոխիս նոցա զրաջոն, պատճառս փառաց եւ պարծանաց
Զոր ինձ քէնն իւրեանց բերցէ, յորժամ տեսցեն յիս աւանդեալ
Զաղքայական դաւազանն 'ի խորտակել զեղջիւր նոցին
Եւ արդեամբք ուսուցանել՝ կարօղ իցեմ ընկճել զնեռեալս,
Թէ յետին զք յերկինս արժան իցէ զիս համարել: —
« Զայս Որդին բարբառեցաւ. իսկ Սատանայ զօրոք իւրովք
Յառաջեալ 'ի թեւակուռն էր արշաւան, բանակ անթիւ,
Իբրեւ զարտիս գիշերոյ, եւ կամ զաստեղս առաւօտու՝
Զչիթս ցօղոյ՝ զորս արեգակն 'ի մարգարիտ դարձուցանէ
Ի տերեւսն եւ 'ի ծաղկունս: Անցին գնացին ընդ շատ գաւառս
Հրզօր իշխանք սրովբէադունդք, պէտք եւ Ամոռք 'ի կարգ երրեակ.
Գաւառք՝ առ որովք չէ ինչ մեծ, Ադամ, քո տերութիւնդ
Քան զպարտէզս այս առ երկրաւ եւ առ ծովուն համատարած,
Աւ ողջոյն իսկ աշխարհաւս՝ եթէ 'նդ երկար ծաւալեսցի:
Զորովք անցեալ ժամանեցին ասպա 'ի ծագս հիւսիսոյ,
Եւ Սատան յիւր արքունիս բարձրակառոյց 'ի մտարս լերին,
Լուսաբաձակ 'ի հեռատատանս՝ իբրու զլերամբ լեռանն կուսակ,
Բերդամբք, աշտարակաք՝ հատեալ յահանց քարահատից
Եւ 'ի ժայռից ոսկեզնեաց, Արուսեկին մեծի տաճար, —
Այս կոչումն է շինուածոյն 'ի մարդկեղէն լեզուաց բարբառ, —
Զոր սակաւ մի յետոյ, զաստուածութեան թեկն ածելով,
Ի տիպ լերինն՝ ուր յանդիման երկնից Օծեալն հրաշակեցաւ,
Լեառն ուխտի կոչեաց նա. զի միահոյլ զիւրան անդր հոմեաց՝
Հրաման եկեալ տեսլով, առ 'ի խորհուրդ մշտանելոյ՝
Յընդունել մեծապայծառ զարքայն իւրեանց մերմ 'ի գալուստ.
Եւ զասասաբ ճշմարտատիպ նենգաս թովեաց զականջս այսպէս. —

« Ամոռք, Տէրութիւնք, Իշխանութիւնք, Զօրք զօրութեանց,
Եթէ կան տակաւին անուանքքս այս մեծամեծաքք
Եւ չէն սին ձայնք սընոտիք, յորմէ հեաէ նոր հրամանաւ
Ա՛յլ ոք ելեալ կայ բովանդակ իշխանութեամբ ուռուցեալ,
Եւ ըզմեօք արկեալ խաւար անուամբն Օծեալ Թագաւորի։
Վասըն իւր տագնապեցաք 'ի շտապ յայս չու զմէջ գիշերաւս
Խառնիխուռնն դուռնարեալք ասա 'ի խորհուրդ նորոց պատուոց,
Որով զինքքն մեծաշուք ընդունիցիմք 'ի գալն առ մեզ
Առնուլ զհարկ ծընդաց 'ի մէնջ՝ չեւ հատուցեալ, անարգ կորանք։
Շատ իսկ էր առ մի ոք, իսկ երկպառիկ՝ ինքր հանդուրժեմք,
Աւ մին այն, եւ առ պատկեր իւր դեռ եւս այժմ քարոզեալ։
Սակայն զի փոյթ է, բարձունք մինչդեռ խորհուրդք 'ի սիրաս ելեալք
Մինչս տան զընկենուլ բացէ զսամիս ըստոյս 'ի բաց։
Կամիցինք վիզ կարկառել, ընարէ՞ք կըրկնել ծունր՝ 'ի գուռ կալ։
Քաւ, օն անդր 'ի ձէնջ, թէ յոյս անշուշտ է իմ գիտել ըզձեզ,
Կամ թէ դուք ինքնին զանձինսդ հաւատաւաւ Ճանաչիցեք
Բնաշխարհիկ որդիս երկնից՝ զոր նախ քան զձեզ ոչ ոք կալաւ։
Թէ համօրէն չեմք հաւատար, սակայն ազատ բոլորեքեան՝
Եւ ազատ եմք միապէս. զի բարձք պատուոց եւ դահուց կարգք
Ձեն ոսոխ ազատութեան, այլ՝ ընդ նըմին հաւանընկեալք։
Իսկ արդ ո՞վ արդարապէս եւ իրաւամբք գրաւել կարէ
Զինքնակալ տէրութիւն յորս իրաւամբք հաւասար կեան՝
Թէ եւ ոչ յիշխանութեան եւ Ճոխութեան, դէթ յազատ կամս։
Եւ ո՞վ այն, որ օրէնս եւ հրովարտակս հանցէ 'ի մեզ՝
Որ եւ առանց օրինաց ամենեւին սրխալեմք ոչ,
Թող թէ դա դիպան գըտցի մեզ տիրանալ եւ պահանջել
Ըզմեզ իւր երկրրպագուս յեղծումն անուանցս իշխանական,
Որ վըկայ են թէ յիշեալ ծընեալ եմք, ոչ 'ի տարբկանալ։ —
« Մինչեւ ցայս վայր ունին եղին ժըպիրհ խօսիցն անընդդիմակ.
Եւ ահա 'ի սերովբէան անդ Աբդիէ՛ղն ջերմադոյն
Ի պաշտօնն Աստուծոյ եւ հրամանացըն կամարար՝
Յարեաւ եկաց, եւ յանաչաւ նախանձումն հուր բոցալեզու
Զդէմ կալաւ ըստորա մոլեգնաձաւ ուղխիցն այսպէս. —
Ո՛վ հայհոյիչ, զըրադատ, ամբարհաւաճ բանից վիժանք,
Զոր եւ ոչ ուրուք ունկըն ակն ունէր լըսել յերկինս՝
Ոչ իսկ յայլմէ ուսքէ, թող թէ 'ի քէն, ապախտաւորդ,
Որ դու ինքն այդչափ 'ի վեր ես ամբարձեալ քան զհամարնեայս։
Իցէ՞ հնար քեզ ամպարիշտ խոտորութեամբ դատապարտել
ԶԱստուծոյ զարդար հրամանն որ եւ պատուէր եւ երդուաւ իսկ,
Զի առաջն միածնի իւրում Որդւոյն՝ որում շնորհեաց
Եւ 'ի ձեռս իրաւամբք ըզգաւազանն արքունական,
Ամենայն յերկինս հոգիք կըրկնեսցեն ծունր երկրրպագու,

Եւ բնիկ արքայ դաւանեսցէն օրինաւոր սովին պատուով։
Անիրաւ է, ասես, ամենեւին իսկ անիրաւ
Կապել զաղատին յօրէնս, եւ զուգակցին տալ թոյլ տիրել
Ի վերայ զուգականացն, եւ մանաւանդ միւսմ միայն՝
Աւելեսեաւ իշխանութեամբ զոր ոչ զք այլ պայազատէ։
Քո՞ ինչ իցէ տալ օրէնս Աստուածութեան, եւ ժողովհիցիս
Ի պայքար մրտանել զաղատութեանն հանդամանաց
Ընդ այնմ՝ որ զքեզ արար զինչ էսդ, որ զզօրութիւնս երկնից ստեղծ
Որպէս իւր հաճոյ թուեցաւ, եւ եդ նոցուն էութեան ջամ։
Եւ սակայն ըզփորձ առեալ խրատեալ գիտեմք զնա բարութիւնն,
Ըզնամոց նորին փոյթ 'ի մեր օգուտ եւ 'ի պատիւ,
Եւ զի զմեզ նրկուն առնել հեռի է բնաւ յիւրոց մրտացն,
Որ ցանկայն մանաւանդ բարգաւաճել ըզբանալս մեր՝
Ցօդելով ըզմեզ սերտիւ 'ի մի գրլուխ իշխանական։
Բայց տրեալ եւրա քեզ՝ թէ անիրաւ է հոմանզին
Տիրանալ եւ համանգեաց ինքնակալել. համարիցիս
Թէ եւ գոնէ ինքնին մեծդ եւ փառաւոր, կամ եթէ բնաւ
Եւ բնութիւնք հրեշտակականք 'ի մի եկեալ միահամուռ
Ունիցին հաւասարել ինչ ծոցածին իւրում Որդւոյն,
Որով Հայրն ամենակալ որպէս բանիւն՝ ըզբնաւս հաստատեաց,
Եւ զքեզ ինքնին գրլխովին եւ զամենայն երկնից հոգիս
Հաստատեալս 'ինմանէ յիւրաքանչիւր շրքեզ կարգի,
Պըսակեալըս փառօք եւ կոչեցեալ առ 'ի պատիւ
Աթոռք, Տէրութիւնք, Իշխանութիւնք, Զօրութիւնք, Պետք։
Զօրութիւնք էականք, ոչ յայրքունին ստուերացեալ ցուպ,
Այլ յաւէտ պայծառացեալ, զի գլուխըն մեր 'ի սոյն պայման
Լինի մի առ 'ի մինչ, օրէնքն իւր մեր իսկ են օրէնք.
Պատիւ եւ փառք հատուցեալ նրմին՝ ողջոյն առ մեզ դառնայ։
Արդ յամարիլա մոլութենէդ կարկեա եւ մի զդասս փոփէր,
Փութա փութա հաշտ առնել ըզյաստուն հօր, զՈրդւոյ զայրոյթ,
Ի ժամու՝ մինչդեռ հայցեալ ընդունելի ներումն իցէ։ —
« Հրեշտակքն ջերմադութ օրինակ զայս բարբառեցաւ,
Բայց նախանձ իւր անդոմնեալ՝ կընքեցաւ նոր՝ վէս՝ տարաժամ։
Ընդ որ խընդաց ուխտադրուժն եւ խրոխտադոյնս ած ըզնովմբ. —
Ըստեղծուածս ուրեմն ասես դու զմեզ եւ գործ երկրորդ ձեռին՝
Սակ արկեալ աւանդեալ առ 'ի հօրէ իւրում Որդւոյն։
Բարբառ նոր եւ օտար. գիտել կամիմք՝ ո՞ւր ուտար զայդ,
Ո՞վ գրտաւ ականատես արարածոյս մերոյ սկզբան,
Դու զլինելդ յիշես, եւ երբ ած Արարչէդ ըզքեզ 'ի գոյ.
Մեզ չէ ինչ յայտ ժամանակ յորում չէաքս որպէս եւ այժմ,
Ոչ զք գիտեմք նախ քան զմեզ. 'ի մէնջ ծընեալք, բըղխեալք 'ի մէնջ
Կենդանի մեր զօրութեամբս, յորժամ կարդումն հարկի բանանն

Բոլորեաց զեւր պարունակ, եւ մեր ծընունդ եհաս 'ի ջափ,
Մեք մեզէն 'ի բնիկ երկնէս ծընաք որդիքս արփիական։
Մերս 'ի մինչ է զօրութիւն, եւ աջքս մեր ուսուցէ մեզ
Արութեանց ջքնաղ հանդէս 'ի փորձ մերոյ զուգականին։
Անդ տեսցես թէ 'ի հաշտ երբեք եկեալ աղերսիցեմք.
Ի պաշարումն թէ յողբ ինչ պատիցիմք ըզվեհ գահուն։
Զայս պատգամ եւ զայս զբոյց երթ առ Օծեալդ տաբ Աբբայ,
Եւ մինչ չեւ ինչ քեզ վրանդ հասեալ խոսիան՝ ձեզ տուբ զերծիր։—
« Ասաց նա, եւ դոգ գոչումն յորձախսոր ջուրց՝ ընդդէմ հընչեաց
ԽրՀուրդսին կոկորդախօս անթիւ զօրուն բանիցն 'ի գով։
Բոցանիշ սերովբէն, ոչ ինչ ընդհատ յանհոգս անահ,
Թէ եւ լոկ եւ յոսոխաց պատեալ, կրկնեաց արիաբար.—
Ո՛վ Աստուծոյ տարագիրդ, ով նրզվեալդ դու հոգի,
Ցամենայն բարեաց թափուր, զանշուշտ անկումիրդ տեսանեմ.
Եւ ջուառականդ այդ խուժան 'ի դաւաճանսրդ քո շաղեալ,
Ի մեղացդ ըմբռնեալ ժանտ, եւ 'ի պատիժս քո մրացէ։
Մի եւս 'ի հնարքս թարթափիր զՏեառն Օծելոյն թօթափել լուծ,
Ոչ եւս այլ լքսելի նեղողութեան լցին օրէնք.
Այլ ինչ ազդ ընդդէմ վրՀիւք քեզ արձակեալ դան անհրաժեշտ։
Զոր մերժեաց ոսկի մական՝ արդ դաւազան է երկաթի
Ի ջաղնել եւ խորտակել ըզնեռութիւնդ 'ի սպառքսուռ։
Բարեաց խորհրդական եղեր դու ինձ, փախչիմ ահա,
Այլ՝ ոչ թէ քով ինչ խրատուն, ոչ յերեսաց քո սպառնալեաց։
Փախչիմ 'ի մեղաւոր վրանաց ասսի յանարդելոց,
Գուցէ ցասումն մոտալուտ եւ բոցարշաւ յանկարծաթափ
Շառնուցու ինչ սին ուսմք՝ յախերական լափեալ յամբայր։
Կաց 'ի կառափնդ առնուլ ըզհրատոչոր շանթին ճայթումն.
Անդ յայնժամ հեծեծելով զքո զԱբարին տացես 'ի միտ,
Յորժամ զայն ծանիցես՝ որ զքեզ յոչինչ դարձուցանէ։—
« Զայս Աբդիէլ խօսի սերովբէն՝ յուխտանենդաց հոյլս ուխտապահ,
Յանհամար 'ի դրժադաւս անդ մի միայն հաւատարիմ,
Անատան, անդեղեղուկ եւ անհրապոյր եւ աներկիւղ,
Պահեալ զեւր միամտութիւն, զմշտերմական սէր եւ զնախանձ։
Շաղդեաց ոչ խուռն, ոչ օրինակ դրդուեալ ըզնա 'ի ճշմարտէն,
Կամ յողդողդեալ զպընդութիւն մրտաց նորա՝ թէ եւ միակ։
Մեկնեցաւ 'ի ճամբարէն, եւ ընդ երկայն ինչ պողոտայ
Ընդ դրսրով թըշնամեաց անցեալ համբեր՝ վեհ քան զայպանս։
Անվեհեր 'ի բըռնութեանց եւ փոխարէն քամահելով
Դարձոյց թիկունս 'ի խրոխտ բըրդունալընդելիրեալս յանդոյր վախճան։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պատմէ Ռափայէլ զպատերազմն Հրեշտակաց, յորում պարտեալ Սատանայի՝ հնարի նոր մենքենայս ի բեկումն Հրեշտակացն սրբոց, որոց զօրացեալ՝ խորտակեն զբանակս նորա եւ զգենան։ Այլ յոչն լռել դղորդմանցն զաւուրս երկուս՝ յերրորդումն արձակէ Աստուած զՄրդին իւր զՕձեալ իւրով զօրութեամբն, որով երթեալ նորա եւ խորտակեալ զհակառակորդս իւր եւ հոսեալ ի դժոխս՝ դառնայ յաղթանակաւ առ Հայրն իւր։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ Վ. ԵՑԵՐՈՐԴ

«Հրեշտակքն քաջասիրտ յերթ անարգել ըղձայդն 'ի գլուխ
Յառաջ զընթացսքն վարեաց ընդ լայնատիւռ երկնիցքն դաշտ,
Մինչեւ Այդն 'ի ժամուցքն զարթուցեալ Ճախրագայից՝
Վարդամատքն ձեռօքն եբաց ըղդրուն լուսոյն ծագման:
Ընդ լերամքն Աստուծոյ եւ հուպ յաթոռն իւր է անձաւ,
Ուր ագանին եւ գլնան մեմեանց ըղկնի լոյս եւ խաւար
Անդադար կարգաւորութեամբ, որով յերկինքս կատարի
Գեղեցիկ փոփոխութիւն հանգոյն տուընջեան եւ գիշերոյ:
Յելանել լուսոյն՝ ընդ միւս դուրս մրտանէ խաւարն հրլու
Մինչ 'ի ժամն յորում եղեալ պատեալ զերկինս ըսքողեցէ.
Բայց նրման է անդ խաւարն ասսել լուսոյդ երեկորին:
«Առաւօտն յայնժամ ծագէր, որ զենչ եւ էն յերկնից բարձունս,
Արփենի սլաձնեալ ոսկւով, եւ յերեսաց ելից եւրոց
Փարատէր գիշեր հարեալ յարեւելեան ճառագայթից:
Դաշտն ողջոյն անդէն եւ անդ կուռ շողշողուն գընդօք ծածկեալ
Կարգելովք 'ի պատերազմ, փայլակնացեալ զենուք, կառօք
Եւ հրեղէն երիվարօք, ցոլս 'ի ցոլից փայլատակմամբք
Դիպաւ յաչս Աբդիելի, որ առ 'ի միտ ըզպատերազմ
Կազմ 'ի ռազմ, եւ զոր տալ կարծէր զըրոյց՝ եգիտ ծանօթ:
Խընդագին անց խառնեցաւ 'ի սիրելեաց զօրութեանց դասքն,
Որ ցընծութեամբ եւ անբաւ աղաղակաւ ողջունեցին
Զմիայն դարձեալն ողջանդամ 'ի բիւր բիւրուց կորուսելոց:
Բարձրահրաչակ գրրուատեօք տարեալ ընդ 'ի լեառն սուրբ՝
Յանդիման կացուցանեն բարձրագահից վեհագունին:

Յոակի ամպոյն 'ի ծոցոյ քաղցրաբարբառ լու եղեւ ձայն. —

«Պաշտօնեայդ Աստուածութեան, յոյժ իսկ բարւոք դոցծեցեր զայդ,
Ըղբարւոք պատերազմին քաջապէս պատերազմեալ,
Պաշտպանեալ ճշմարտութեան՝ ապրստամբից ամբոխի 'նդդէմ,
Զօրագոյն գլուեալ 'ի բանսրդ քան նոքա 'ի զէնս իւրեանց:
Եւ 'ի տալ ճշմարտութեան վրկայութիւն՝ յոչինչ գրեցեր
Զեպերուն հասարակաց՝ դրժոխքմբեր քան զբրնութիւն.
Զի մի եւեթ էր քեզ փոյթ՝ հաճոյ դառնել յաչս Աստուծոյ,
Թէ եւ աշխարհք համբէն առ անզգամս հայցեն ըզքեզ:
Յաղթանակ մի գիւրագոյն արդ կայ մինոյ քեզ առաջի,
Զի զբանակդ սիրելեաց՝ նիզակակից առեալ թիկունս,
Քան զատեւեացդ 'ի գալդ եպեր՝ զքեզագոյն դարձցիս անդրէն՝
Նուաճել ուժով ըզհեստեալսն յօրինաց արդարութեան,
Յուզղագատ իրաւանց եւ յՕծելոյ թագաւորէն,
Որ կայս թագաւորեալ ըստ իրաւանց իւր արժանի:
Օ՛ն արի, Միքայէլ, երկնակաճառ զօրուցս իշխան,
Եւ զիւր հետ՝ երկրորդդ 'ի գործ պատերազմի՝ դու Գաբրիէլ,
Առէք տարոյգք 'ի դուպար զանպարտելի զիմ ըզմանկիսս,
Ածէք զբանակս իմ սուրբ լաստեալ հազար եւ բիւր բիւրոց 'ի մարտ
Զուգաթիւս ապրստամբօղ եւ անաստուած ամբոխին այնմ:
Յարձակեալ անվեհեր 'ի հուր 'ի սուր ախոյենաց
Եւ վանեալ 'ի ծագս երկնից՝ հալածեցէք զնոսա մերժեալս
ՅԱստուծոյ եւ 'ի բաստից մինչ 'ի տեղի պատուհասին՝
Տարտարոսին յանդունդս 'ի խոր, որ եւ արդէն լայնափեռեալ
Բանայ զվեհ իւր հրախաւար 'ի ժողովել զանկումն իւրեանց: —

«Զայս ձայնն ասաց մեծասաստ, եւ զլեառն ամպոց ծածկեաց մշուայլ,
Եւ ծուխն եղեալ մշրրբկեալ ողբատապտոյտ թուխ բարդ 'ի բարդ
Ժայթքէր ըստ ինքնագոր՝ զարթուցելոյ ցասման գուշակ:
Ոչ ընդհատ ինչ ահագին խրոխտահընչակ փողն երկնաւոր
Ի բարձանց գոչել սկըսաւ. յայն հրաման զոլոր զինուորութեանց
Ախոյեանք երկնից կարգեալք 'ի պընդակազմ չորեքկուսի՝
Ամրակուռ՝ անվանելի, վարեն ըզսին զգունդսն պայծառ
Յարուեստական ձայն նուագաց քաջարութեանց խրախուսական,
Ընդ անմահ զօրավարսք, 'ի վերայ Տեառն եւ Օծելոյն:
Խաղան անվրկանդ եւ անխախուտ ռազմի ճակատ.
Ոչ ներանց բարձունք, ոչ ձորք խոխոմանիդ, անտառք կամ դետք
Զյօրինեալ կարգն ինչ օգտեն, զի վերամբարձ դառոթեն յերկրէ.
Օդ ինքնին հրպատահեալ՝ թեթեւ ոսիցն առնի յատակ:
Որպէս ազգ ազգ հաւուցըն տարմատարմ սաւառնութեաւ
Կոչեցան կարգաւ յԵդեմ առնուլ անուանս 'ի քէն, Ադամ,
Նոյն՝ դումարտակք ընդ երկինս հատին անցին ճոխ ասպարէսս,
Գաւառս հարուստ՝ տարընպատեկ որչափ զերկրիս երկայնութիւն:

« Ի բացէ ապա 'ի ծագս անդ հիւսիսոյ եւ յերեւան
Ծաւալ ծայր 'ի ծայր առեալ, որպէս բանակ, աշխարհ մի հրոյ։
Ընդ մտեալս 'ի յայտ եկին զօրք դաշնաւորք Սամայելի,
Հոծեալք անթիւ ճաճանչիւք անկրքելի ձաղկ աշտեղոց,
Սաղաւարտք ապուցեալք առհասարակ, վահանք պէսպէս
Նըկարէնք յոխորտ դրրուագս։ Եւ մոլեգնոտ արշաւասոյր
Ցաղնապաւ ձեպէին, խիզախական բարձեալ խրախոյս,
Ըմբռնել այն օր կրուտով կամ թէ դաւով զլեառն Աստուծոյ,
Եւ յաթոռ նորին հանել զգահուն իւրոյ վէս նախանձորդ։
Այլ 'ի կէս ուղւոյն խորհուրդքըն ծանուցան խօլ եւ նանիր։
Նորանըշան նախ թըւեցաւ մեզ հրեշտակի մարտ ընդ հրեշտակ,
Գալ պատահել իրերաց մոլեգնաբար ոսոխութեամբ՝
Ոյց սովորքն էր հանդիպել յաճախ 'ի ծոնրս ցընծութեան
Եւ մրտերիմ սիրոյ՝ 'ի տիպ որդւոց միոյ տեառնն մեծի՝
Երդել զՀայրն յաւիտենից։ սակայն խաղին ամբարձան գոռք,
Եւ բախմանց մրռուտ խօշիւնն եհատ 'ի սպառ զաղուական միտս։
« Պատեալ յիւրոցն ապըստամբն եւ բարձրացեալ աստուածակերպ՝
Կայր բազմեալ յարփիափայլ կառսն՝ պատակեր աստուածապանչ,
Բոցանիւթ ցանկեալ քրովբիւք եւ տապարօք ոսկիաձոյլ։
Իշ անդէն 'ի պերճ գահէն, զի 'նդ մէջ երկուցին բանակաց
Խուն եւեթ կայր տապարէս՝ ահագնագին ինն անկրպտեա,
Ահեղ ճակատ առ ճակատ կացին յանծայր երկայնութիւն։
Ի մրթին յաւաջապահս ըզկարծրակուռ ելիւք զրնդից,
Ձեւ յերեարս հասեալ, Սատանն համբարտակեալ ահագնաքայլ
Յոխորտընթաց գայր վառեալ յոսկիազէն ականակուռ։
Ձհանդուրժեալ Աբդիէլի տեսլեանս, որ կայրն 'ի խռան քաջաց
Կազմ 'ի մեծ շահատակիւն, այսպէս զանխէթ սիրտ իւր եհարց։ —
« Ո՛վ երկինք, այսպիսի նըմանութիւն ընդ Բարձրելոյն
Մընայցէ՞ տակաւին՝ ուր չիք հաւատ, ոչ ոդնութիւն։
Զի՞ եւս անդ կայցէ զօր՝ ուր լաւութիւն եւ 'ի դերեւ,
Կամ ըզմի՞ յանձնապատան չիցէ անզօր վատախտարակ։
Երեսաք թէպէտ վերին՝ նա երեւեալ անպարտելի,
Իմ սակայն 'ի զօրավիգքն խրախուսեալ ամենակալ՝
Խիզախեմ դիմադրաւ նահատակել 'ի փորձ բազկին,
Զորոյ կանխաւ զերաւունսն ցուցի սուտ եւ զըլխագար։
Ո՞չ ապաքէն որ 'ի պայքար ճըշմարտութեան առ մըրցանակ,
Հարցէ զինուք զախոյեանն՝ յերկոսին մարտս զոյգ յաղթօղ։
Եթէ խօլ է եւ ծանակ՝ ուժոյ մըրցել ընդ իրաւունս,
Եւս առաւել իրաւանց տանել արժան է զյաղթութիւն։ —
« Զայս խորհեալ՝ 'ի սպառազէն համահարզելոյն ոստնու դիպան,
Պատահէ 'ի կէս գնացիցն յոխորտապանծ ախոյեանին,
Որ տեսեալ ըզդիմագրաւն իւր՝ մոլեգնի եւս առաւել։

Սա ձայն տալեալ՝ խրախուսեալ բարբառով այսպէս խիզախէ. —
Գլուխս սէգդ ամբարտաւան. ակն ունիցիս անընդդիմակ
Հասանել 'ի բարձրութիւնն յոր կրկնաթեռ՝ յաթոռ Էնն,
Գլուխալ զայն անպահապան եւ ընկա ինքն անպատրաստը
Առ ահի քում սատակութեան կամ կորովն լեզուանութեանդ։
Այ շամբուշ, ջածեր զմրտաւ՝ քանի զլաչան է եւ ունայն
Յոխորտալ դուռալ զինուք ամենակալ աչքն ընդդէմ,
Որ եւ յեւրս դուշնաքեայց գիտէ անդրաւ յարուցանել
Անբսպառ անթիւ բանակս 'ի խորտակել զքո մոլութիւնդ,
Կամ ձեռամբ եւեթ իւրով անգրբ քան զքնաւ հասեալ սահմանս՝
Ի մի սոսկ միայն հարուած անօգնական զքեզ սատակել,
Եւ թաղել ըզգումարտակդ 'ի խոր խաւարն անդընդակուլ։
Բայց առնուս ինչ դու 'ի միտ. չէն քո զկրնի ամենեքեան.
Էն էն, որ լաւագոյն զառ Էնն հաւատս ընտրեն եւ զսէր,
Թէպէտ ոչ տեսանիցիս՝ երբ ամբոխիդ թուեցայ մոլար,
Մինչդեռ ես աւելոց եղի միայն յայլոց մրտաց։
Տեսանես արդ զիմ կողմ, ուստի այժմիկ յոյժ անագան,
Չի ուր պատրին բիւրաւորք՝ ոմանց լինել դոյ խմաստուն։ —
« Մեծն ասես՝ արհամարհող եւ խոթոտեալ ակամբ յաւել. —
Ի քո չար ժամ, բայց 'ի ժամին ցանկալի վերիժուց քինուս,
Չոր քան ըզքնաւս խընդրեի՝ դարձեալ դաս դու 'ի փախրատէդ,
Հրեշտակ կաղազարթոյց, զի 'ներունիցիս զարժան տրիտուրդ։
Ըզբազկիս՝ զոր յարուցեր՝ ըմբոշխնեսցես զառաջին համ,
Ոյր լեզուդ կոկոզական ընդդիմախօս ժրպրհեցաւ նախ
Հակառակ երիր մասին կալ ատուածոց ակընթելոց
Ի կանգնել հաստակառոյց զատուածութեան իւրանց աթոռ։
Ոչ յոք կարեն դաւանել զամենակալ կարողութիւն։
Սակայն քո փառասիրեալ խրլել փետուրս ինչ առ յինէն՝
Խրոխտեալ եւանես յընկերակցացդ ինձ նահատակ,
Գուշակ լինել յաջողուածոյդ՝ համայնաջինչ մեր կորընաեան։
Յապաղեմ վայրկեան մի սուղ, — դուցէ երբեք պանծացցես ինչ,
Թէ չառեր զպատասխանիդ. — ուսուցանել կամիմ քեզ զայս։
Չաղատութիւն եւ զերկինս՝ երկնահուելոց հոգւոց մի նոյն
Կարծեցի ես 'ի սկզբան, բայց տեսանեմ այժմ աւադիկ՝
Չի բազումք առ վատութեան սիրեն յաւէտ ըստրկանալ.
Մինք սրտուէք ծառայականք՝ մէաք 'ի հանդէս ասնկոց եւ յերդս։
Այդ են ահա զինուորեալքդ, երկնից դուռանք, ծառայազունք,
Գերեկոյտ 'ի կռիւ եկեալ 'ի հարկանել զաղատութիւն։
Թէ դոցա զինչ գործք լցեն՝ այսօր 'ի կշեռս փորձեսցին։ —
« Աղդիէն ահեղակերպ՝ արար վրէժիւ պատասխանի. —
Ակընատամբ, 'ի խաբս ես դեռ. 'ի Ճշմարիտ Ճանապարհէն

Գամ մ'ի բաց անկեալ՝ այլ ոչ կացցես յընդվայր մնըրելոյ։
Զոր Աստուած կամ բնութիւնն օրինադրէ սպաս հրամանի՝
Զայն դու զուր տարապարտուց ըստրկութեան անուամբ հենդնես։
Աստուած եւ բնութիւն ընդոյն պատուէր հրամանի տան,
Մինչ իշխողն արժանադոյնն է եւ 'ի վեր քան զինադանդեալս։
Գերութիւն է ծառայել խոթամըսի, կամ այնպիսում՝
Որ ընդվզեալ անկուշեաց զարժանաւորն քան զանձն իւր։
Որպէս արդ աւադիկ քոյնիդ ընդ քեզ կան հրպատակ,
Ընդ քեզ՝ որ չես ազատ, այլ դրլխովին դու քեզ դերի։
Եւ ժրպրտիս դու ըրբաբար ոանհար լինել մեր պաշտամանս։
Երթ 'ի դժոխս 'ի քում աշխարհ ապքայութեան թագաւորեա,
Թոյլ լինած տուր պաշտել յերկինս զԱստուածութիւն զօրհնեալն յաւէժ,
Սպաս հարկանել աստուածակամ արժանալուր պատուիրանաց։
Բայց մի թագաց 'ի դրժոխան, այլ կապանաց ունիջիր ակն
Ի դարձող փախրտակէս, որպէս դուդ արդ խակ ասէիր։
Աւ այժմ ընկալ յանօրէն կառափնիդ զայս դրրկացս ողջոյն։ —

« Ընդ բանին ամբարձ հարուած մի պանծալի որ չեկաց յօգս,
Այլ էջ փոթորկաբար 'ի խրոխտ գագաթն Սատանին։
Ոչ աչք, ոչ սրրաթեւ մըտաց սրլացք, թող թէ վահան,
Զմարթացան պահել ըզգոլրդն։ յետս հարեալ տան ահագին քայլ,
Ի տասնին անկեալ 'ի գուռն՝ 'ի ստուարաբանն յեց կայր 'ի մկունդ,
Իբր յերեսս երկրի թէ այսք սանդարամեալք եւ կամ թէ ջուլքք
Բրոնաբար յանցս երկնապող մրդեալ հանեալ ելեն առ շեղ
Լեռանն մի յիւրոց կայլոյն համայն շոճիւքն կիսասոյզ։
Ահ կալաւ զԱթոռան ըմբոստ, սակայն եւ մեծ խրն զայրուց,
Յորժամ տեսին տապալեալ զահեղազօրն իւրեանց այնպէս։
Իսկ մերքն ցընծալեցք եւ եռանդնուտք 'ի գուսպարեալ,
Զաղաղակ հարին ուժգին՝ կանխադուշակ յաղթանակի։
Հարկանել տայ Միքայէլ ըզվերականն աւադաթող,
Հընչեն որոտաձայնքն յոլորտս երկնից լայնածաւալ՝
Եւ ոլսանոյ Բարձրելոյն երգն հրեշտակքն ուխտապահք։
Գունդք անդուստ ընդդիմակացք ոչ 'ի զընին մեզ յամեցին,
Ոչ նըւազ ահադնացայտ մածեալ դիմեալ յահեղ խառնուրդ։
« Անդամոր բորբոքեցան սըրամըտութիւն մըրրկալից
Եւ կանչինք՝ որպիսի չեր յերկինս երբեք լեալ լսելի։
Զէնք ընդ զրահըս կոփեալք՝ Ճայթիւն հանեն խուժ ուահաւոր,
Պըղընձի կառաց անիւքն զայրագին մոլեալ մըրնչեն։
Սոսկալի են խաղին գոռք։ զմերով գրլխովքըս սրլանան
Սուր շըչինք հրաղէն նետիցըն բոցաթռիչ սաւառնաթեւք,
Եւ բանակ 'ի բանակէ հրաղեղ կապեն կամար 'ի սիլն։
Ընդ հրակուտակ գրմբեթաւն 'ի կուիս Ճակատքն հրոսեին
Մահասասս յարձակմամբ, մոլեգնութեամբ անչիջանուտ։

Թընդէին երկինք բոլոր, եւ եթէ գոյր յայնժամ երկիր,
Դղրդ առեալ առհասարակ մինչեւ 'ի սիրտ իւր սասանէր։
Եւ ելցէն ինչ զարմանք, ուր յերկոցունց անտի կողմանց
Ամոյեանք գազանացեալք մարտ մղէին, բիւր բիւր հրեշտակք,
Յորոց մին, եւ անաւադ, գիտէր տանել բերել զտարերս,
Եւ բնաւ նոցուն նահանգաց բոլոր ուժով սպառազինել։
Քանիսն ասպա կըրկին բանակք 'ի վսեր եկեալ միմեանց՝
Աւաւել զօրէին վառել զահեղ մարտին հրդեհ,
Վըրդովել, թէ ոչ յաւեր դընել ըզսուրբն հայրենի,
Թագաւորն յաւիտենից ամենազօր թէ պինդ կալեալ
Ի ձեռին զերկինս՝ չնչեսէր եւ բըռնութեան դընէր սահման։
Բազմութեամբըն մին մի գունդ թըւէր բանակ մի բազմաձեռն,
Ուժգնութեամբըն մին մի ձեռն 'ի զէն արժէր գունդ մի ոջոյն։
Վարեալ 'ի կռիւ՝ զօրագլուխ թըւէր մարտիկ իւրաքանչիւր,
Եւ զօրագլուխըն՝ մարտիկ. հրմուռք 'ի կալ եւ 'ի խաղալ,
Սայթաքել ըզթափ խազին, բանալ փակել զժանտ ռազմին կարգ։
Ոչ վարան փախըստի, ոչ նահանջման, ոչ գործ անձահ՝
Երկիւղն նըշանակ. այր այր հարեալ ձեռքն յանձին՝
Իբր յաղթութեանն յիւր բաղուկ կախեալ կայցէ մէտ ապատան։
« Յաւերժից յիշատակաց գործք արժանիք ելին 'ի գլուխ,
Բայց անթիւք. զի պատերազմն յանդուգն ոգեպէս ընդարձակէր։
Մերթ կըռիւ անընդոստ 'ի հաստատամ գեռնոյ յատակ,
Մերթ հրըզօր սաւառնացեալ թեւօք եւ զօդըս տանջելով.
Եւ յայնժամ առհասարակ օդքն թուէր հուր զինամարտիկ։
Ի նրժարքս զուգակշիռ ճակատամարտն եկաց երկար.
Մինչեւ Սատան հիացօրն երեւեալ այն օր 'ի հանդէս,
Ազգրտեալ 'ի զէնքս զոք իւր ախոյեան զուգապատիւ,
Ընթացեալ ընդ ռազմամուտ սրովբէին ահեղ խառնամբոխ խազմ՝
Եռես ուր սուր Միքայէլն հընձէր տապատ արկանէր գունդս։
Երկոքումբք կալեալ ձեռօքն սնհընարին սատակահարուած
Եւ ընդ օդքս շողացեալ սոսկալին սայր գայր ինքանէր
Յահագին աւերած. ընդ այնքանոյ սատակման դէմ
Ամապարեաց եւ ինքն արկ միքայէլեան խարբին հանդէպ
Զանթափանց բոլորակն ադամանդեայ զտասընթերթեան,
Զասպար իւր զանարի, շըրջանակ մեծ լայնածաւալ։
Ի մեռեալ նորուն եկաց 'ի մարտավար շահատակմանցն
Հրեշտակապետքն մեծ՝ յուսով բերկրապատար զքաւ առնելոյ
Անդ անդէն ընտանի երկնագըզրդ պատերազմին,
Ըզվիրագքն մեծ պարտեալ կամ կալ եւ կամ վարեալ գերի։
Քրմնելն զյոնսն քուրատեալ՝ բոցատեսիլ գոչեաց նախագոյն. —
« Զարին հայր, որ յառաջ քան զնեռութիւնդ էր անծանօթ
Եւ անանուն յերկինս, իսկ այժմ յորդահեղեալ. եւ քեզ վըկայ՝

Դըժպըհի գործեան կըռուոյս. ամենեցուն խակ դըժպըհի,
Արդարադատ Թէպէտ չափմամբ ըզքեզ յաւէտ կըռսիկ եւ զքոյդ։
Ի՞նչ յերկնից դերերջանիկ խաղաղութիւն արկեր ժրխոր,
Եւ ածեալ 'ի բնութիւն մուծեր զաղէտ թըշուառութեան՝
Զանէակն յառաջագոյն քան զկեստութեանդրդ դասն ոճիր։
Քանի բիւրըս հրեշտակաց քով ժանտութեամբդ թունեցեր,
Որ երբեմն ուղիղք էին եւ մըտերիմք, այժմ ուխտադրուժք։
Բայց կալցես մի ակն ասուստ վըտարելոյ զխաղաղութիւն.
Յամենայն սահմանաց իւրեանց քերբեն ըզքեզ երկինք.
Երկինք՝ օթարան երանութեան՝ ոչ հանդուրժեն
Աղտոց հարըստահար գոռոզութեան եւ մըրցանաց։
Հա՛մ 'ի բաց ասի, եւ չարն ընդ քեզ ելցէ քոյին ծընունդ
Ի չարին կաղաղ 'ի դժոխս ընդ քեզ եւ քում թիւր խուժանիդ։
Անդըր երթ ապշոպս յարս, մինչ չեւ սուսերս այս քինահան
Սկիզբն եդեալ դատակընքոյդ, կամ այլ վըրէժ յանկարծահաս՝
Առեալ յէն թեւս եւ կըրկին ցաւովք հոսեալ զքեզ դարաւէժ։ —
« Զայս ասաց հրեշտակապետ, հակառակորդն ըզկնի կըցեաց. —
Մի կարծեր սպառնալեացըդ փըքովք այնմ արկանել ահ՝
Յոր եւ ոչ երկեղուկս ինչ քաշուութիւնդ ազդել գիտէ։
Միթէ զմի ոք 'ի փախուստ 'ի փոքրըրկանցըս դարձուցեր.
Կամ թէ բուռն եղեր գլորել՝ ոչ կանգնեցան անյաղթականք։
Ա՞կն ունիցիս, այ ժըպիրհ, ընդ իս դիւրեաւ եւս յաջողել
Եւ քոյով սպառնալեօքդ հանել ասսի հաւատական։
Մի խաբիր. վախճան ոչ այդպէս ինչ լիցի պատերազմին՝
Զոր դու չար կոչես, փառաց մեք յորջորջեմք զայն ասպարէզ։
Յուսամք յաղթել, կամ՝ 'ի դըժոխս՝ զոր բանկնարկեա՝ փոխել զերկինս.
Ասա ազատ գունէ կեցցուք, թէպէտ եւ ոչ թագաւորեալք։
Արդ ես 'ի քո մեծ ուժոյդ, թէ եւ յանուան Ամենակալն
Ինչպէ քեզ 'ի թիկունս, ոչ փախեայց ծն եւ օն ուրեք.
Ի մտոյ եւ 'ի հեռուստ ընդ ամենայն զքեզ խընդրեցի։ —
« Լըռեցին 'ի խօսից՝ կազմեալք 'ի մարտ սոճառական։
Ո՞վ լիցէ, թէպէտ լեզուաւ հրեշտակայնով, որ պատմիցէ.
Ի՞մ իմիք համեմատել յերկրէ ասսի յերեւելեաց՝
Յամբառնալ ըզմարդկեղէն միտս եւ տանել 'ի բարձրութիւն
Աչնպիսում զօրութեան որ չէր ընդհատ յաստուածայնոյն։
Զի զօրավարքն երկոքին, թէ յընթանալ, թէ յանշարժ կալ,
Հաստակաւ, շարժուածովք, զենուք էին աստուածակերպք,
Ի մըրցել զերկնից մեծի սէրութենէն պատկանաւորք։
Սուսերք նոցին բոցաճաճանչք՝ ճոճեալ ընդ օդըս ծըրագրեն
Շըրջանակըս սոսկալիս, եւ կըրկին յաղթ արեգակունք
Դէմ ընդ դէմ շողան վահանք, ակըն կալեալ Յոյս կայ 'ի դող։
Հրեշտակացն ասսի անսի խոյս առ ամբոխըն ատենապետ։

Ի տեղւոջէն ուր յառաջ խառնուրդք էին յաճախագունդք,
Եւ Թողին ասպարէս լոյն մեծատարած, ոչ անվրդանդ
Յերեսաց օդոյն յայնքան դրոշորդմանէն սօսափելոց։
Հանգոյն խոնն, փոքրումբք ըզմեծամեծս 'ի դէմս ածեալ,
Զոր օրինակ Թէ դաշնք բնութեան լուծեալ տապալեցին
Եւ 'ի կամաւս ասատեղաց խանձիցի մարտ պատերազմի,
Մոլորք կրկին՝ ժանտ ազդմամբ ահագնասատ հանդիպութեան՝
Ի գուռաբ գայցեն յարփին եւ խառնիցեն զվերրոդ շրջանն։
« Երկոքին պէտք ամբառնան 'ի նոյն զբաղուման ընդառնալոց,
Կորովիս խոնն դոգցես ամենակալ աջոյն հանդէս։
Կշռեն հարուած մի բաւական 'ի վրճարել զամենայն ինչ,
Անկարօտ կրկինելոց, եւ յայտարար իշխանութեան։
Յոյժ ասատեաց եւ 'ի ժրութիւն՝ այլագունակ ինչ էրեւեն.
Սակայն սուր Մեքայէլի յերկնից առեալ զինանոցէն՝
Յայնպիսի մուխ ջրդեղեալ եւ մատուցեալ էր 'ի ձեռս իւր,
Զի այլք 'ի շեշտ կամ 'ի շեղք ոչ բաւէին սայրին տոկալ։
Պատահեալ Թրոյ Սատանին 'ի զարկուած բուռն յանկարծաթափ,
Կոճռակեալ զայն ընդ մէջ՝ ոչ անդ կառչի, այլ Թափանցանց
Խորամուխ հարուածով հերձու զկուշտ աջ հրեշտակ պէտին։
« Յայնժամ նախ զառաջին ըզփորձ էառ ցաւոց Սատան,
Եւ այսր անդրը գեղեալ եւ գալարեալ ճապատեցաւ.
Այնչափ հատու նրանն 'ի մի վէր ճեղքեալ ընդ անձն անց անողորմ։
Բայց արփայինն ոչ յերկար բաժանելի գոյացութիւն՝
Միացաւ, եւ բուխ վրտակ նմն երկնային օշարակի
Յայտեցեալ 'ի վերէն, ծաւալացեալ արիւներանդ,
Որպէս հոսել ինչ մարթի երկնացեղիկ հոգեղինաց,
Շաղախեաց զբաղատաղինաղն պաղպաղուն մինչեւ ցայնժամ։
Իսկ եւ իսկ յամենատատ դիմեալ հասեալ իւր յօգնութիւն
Գունդագունդ հուժկու հրեշտակք մլեան կացին նրմին պաշտպան,
Մինչ դեռ այլք բարձեալ յասպարս իւրեանց ընդառ տանին յիւր կառս՝
Ուր եկաց մեկուսացեալ 'ի ճակատ գուպարածին։
Հանգուցին զինքն անդէն, որ զատամունս կրրձէր առ ցաւն,
Աւ զայրուկս, առ ամենոյ՝ զի ոչ գրտաւ անզուգական։
Ի կորանաց ատսի նրկուն գոռոզութիւնն եղեալ էր իւր,
Յոյժ 'ի վայր քան ըզկարծիսն զուգեալ 'նդ Աստուած ուժով։
« Սակայն շատ ապաքինեաց. զի հոգիք՝ կեանք բոլորաւէտ՝
Կեան ողջոյն 'ի բնաւ մատուցս, եւ ոչ որպէս ըզմարդ աղկաղկ՝
Յանանդանս 'ի սիրտ 'ի դլուխ յերիկամունսն եւ 'ի լեարդ.
Ուստի չկարեն մեռանել՝ բայց Թէ յոչինչ լուծանիցին։
Զանուն վէր մահացու 'ի յանկուածոցն լոյծ մածուած՝
Իբր օդ Թաղուն հոսանուտ. կեան բոլոր սիրտ, բոլոր գլուխ,
Բոլոր ակն, բոլոր ունկն, բոլոր միտք, բոլոր զգայունք։

Անդամն առնուն ըստ հաճոյս, եւ ըզդենուն երանդ պէսպէս,
Կերպարանս եւ հասակ զոր ախորժեն՝ սեղմ կամ անօր։
« Քաջութիւնք նոյնպիսիք՝ յիշատակաց արժանաւորք՝
Եւ այլուր կատարէին, ուր զօրութիւն Դաւթիանի
Ի կռիւ նահատակէր եւ խրոխտընթաց դրօշուքն հերձոյր
Զթանձրակոյտ գումարտակսն Մէլքոմայ խօլ արքայն,
Որ ձայն տրէաւ ըստաւնայր կապէլ յիւրոց կառացն անիւս
Եւ ընդ քարշ տանել ըզնա. եւ ոչ յերկնից Միութիւն Սուրբ
Ամն ածեալ խնայէր լեղուն հայհոյական հրեշտակիս այս։
Բայց նոյնժամայն պատառեալ մինչեւ 'ի մէջն, զբահաբեկ
Եւ ցաւոք դառնակրակիծ մրընչելով գնաց 'ի փախուստ։
« Ուրիէլ եւ Ռափայէլ յերկոսին թեւս ասի անսի
Պարտեցին ժողովրդ ոսոխս, զԱդրամելէք եւ զԱզմոդեւս,
Վիթխարիս եւ կուռ վառեալս ապառաժիւք ադամանդեայ,
Զերկուս Աթոռան ամենից՝ որ դիցն 'ի կարգ դնէին զանձինս։
Փախուստ իւրեանց ուստոյց նոցա փոքրը մի զմիասն խոնարհել,
Զաղխեալք ահեղ հարուածովք ընդ զրեհսն՝ ընդ վերասն պահպանակս։
Աբդիէլ ոչ մոռացաւ զգունդն անապատուած առնել աշխատ.
Ի զարկուած կըրկին տապաստ արկ զԱրիէլ եւ զԱրիովք,
Եւ զբռնութիւն Ռամիէլի գրձձեալ գրեալ հրդեհակիզ։
« Գոյր ճառել զայլոց բիւրուց եւ ընդ աշխարհ զանուանան հանել
Յաւէրժ անմահ, այլ հրեշտակքն այն ընտրականք՝ շատ համարեալ
Զհամբաւոյն երկնից հրաչակ՝ փառաց մարդկան չէն 'ի խընդիր։
Իսկ այլքն՝ ուժգնութեամբ եւ քաջութեամբ զարմանալիք
Եւ ծարաւիք պարծանաց, սակայն վրճռաւ ջընջեալք յերկնից
Եւ 'ի սուրբ յիշատակաց, թողցուք զնոսին կալ անանուն
Ի սեաւ մոռացութեան. զի սասակութիւն հատեալ անկեալ
Յիրաւանց արդարութեան, եւ անարժան գովասանաց,
Կըշտամբանս եւ դիսրով ժառանգեացեալ յոյժ վայելուչ։
Սակայն՝ անապարծիկքն ժըմերտեալ՝ փառաց ցանկայ,
Եւ անուամբ չարաւ հնարն ջըրդի լինել հրաչականուն.
Լքութիւն յաւիտենից լեցի նոցուն մասն եւ բաժին։
« Եւ արդ իսկ բընտադոյն զօրագրքնացն 'ի տապալել՝
Ընկճեցաւ Ճակատ նոցին բազմահարուած ջախջախանօք.
Բեկումն անդր ամենալից եւ խռով դրժնեալ Ճարակեցան,
Ասպարէս մարտին ծածկէր խորտակելովք զենուք զարդուք,
Կառք եւ կառավարք, ձիք բոցաշունչ փրրփրատեսիլք
Կործանեալ շեղջաշեղջ անկեալ կային լեռնակուտակ։
Որ յոտին կայ՝ հատակեալ 'ի Սատանին նշանջի Ճամբար՝
Որ եւ այն նուաղեալ հազիւ թէ զդէմ ունել միայն զօրի։
Մահադէմ ահիւ հարեալ, զայս տապալին նըւազ եւեթ
Անդ յայնժամ հարեալ ահիւ եւ 'ի ցաւոցն տանջանաց

Այն հրեշտակք անարգաբար խայտառակեալ առին փախուստ,
Յայն չարիս անկեալ մեղքն ըստամբակեալ անսասուութեան.
Ոչ երկիւղ ցայնժամ, ոչ ցաւ եւ ոչ փախուստ ճանաչէին։
« Ոչ նոյնպիսի եւ հանդէս անեղծական սրբբազանին.
Խուսմբ առեալ չորեքկուսին՝ ազատաբայլ արշաւէին
Անվրթարք, անխոցելիք, անգրծելի վառեալ զինուք,
Յանչափրս զօրացեալք անմեղութեամբ քան զթրչնամին։
Անարատք 'ի յանցանաց եւ ոչ երբեք ըստունդանեալք,
Անաշխատ կային 'ի մարան եւ ոչ վերայ ինչ նշաւակք,
Թէ եւ ուժգին բրանութեամբ յիւրեանց կային ինչ խախտէին։
« Աւժամայն գայր հասանէր գիշեր, պատեալ զերկինս 'ի մութ
Հրաման տայր լրոութիւն, եւ գրժընդակ խազմին դադրդմանց
Դուլ եւ դադար անուշակ. ընդ ամպայարկ իւր ծածկութիւն
Յաղթականն եւ յաղթեալքն վերջոսանեալ տաւաղէին։
Մինքայէլ ընդ հրեշտակացն ասպարիսի մարսին սիրեալ,
Բանակեալ անդ՝ դէտ հանեն շուրջ բոցաձոյ քրովբէադունդ։
« Իսկ անդուստ Սադայէլ ապրստամբքն եղեն անհետ՝
Քաջ 'ի բաց յաղնամրդչին մեկնեալ 'ի ստուերս եւ տալարեալ։
Անհանգիստ գիշերայն յատեան կոչեալ զհրզօր իշխանան՝
Անվեհեր 'ի մէջ նոցա զայս բարբառի արիաբար. —
Ո՛վ այժմ՝ 'ի վանդ զինուց փորձք, այժմիկ յայտնեալ աննուաճելիք,
Ընկերք իմ սիրայինք, ոչ թէ միայն արժանաւոր
Երեւեալք ազատութեան՝ որ գոյն եւեթ է ցանկութիւն,
Այլ ոյց յաւէտն ըղձանամբ՝ պատուոյ բարձի փառաց անուան,
Դուք ըղխիւ մի ողջոյն ըղդէմ կալայք յերկրայ մարսի, —
Եւ թէ զսիւ մի՝ առ իմ՞ ոչ եւ զաւուրս յաւիտենից, —
Յարձակման զօրագունաց զոր Տեառն երկնից դայր արձակել
Ընդդէմ մեր անդրսին 'ի պարեկաց իւրում գահուն,
Բաւական զայնս համարեալ գերել ըզմեզ 'ի կամրս իւր։
Բայց չեղեւ ինչ դամագիտ. այսպէս թըւի 'նձ այսուհետեւ,
Ցիմասա հանդերձելոց՝ առ սրխալոտս ունել ըզնա,
Ուր զի ցայժմ ընդ հակառակս ամենագէտ էր կարծեցեալ։
Առ զինուց տրկարութեան՝ ապաքէն խուն յեանեալ գրասք,
Յաւոց ինչ ժուժկալեալ որ ցայնժամ մեզ չէին ծանօթ.
Այլ ընդ յայտնելն անդոտնեցան, որ զ'ի վերայ հասեալ եմք արդ,
Թէ արփենի կերպարանքս 'ի մահադիթ երկանց ազատ՝
Ըստ նրմին է եւ անեղծ. թէպէտ վերօք ինչ խոցեացն,
Նոյնհետայն կրցեալ մածնու՝ յախտարակացքն բրժըշկեալ.
Առ թեթեւ ինչ կիրս ախտից տեսէք քանի դիւրին դարման։
Սատակագոյն թերեւոյս զէնք եւ կարծրակուռ զրահից վառուածք
Ուժգնագոյն զմեզ կացուցցեն յատաջիկայ կրուոյս դուպար,
Վատթարեալ ըղթրշնամիս կամ զանհանգիստս հաւասարեալ,

Զի բնութեանց ինչ չեք խրատիր. կամ եթէ այլ ինչ գաղտ պատճառք
Յաղթականս եդին զնոսա, ցորչափ առ մեզ են միաբանք մեր
Եւ ողջ խելս 'ի գլուխս կրեմք, միախորհուրդ ինչ քննութիւն
Եւ ժրաջան խոյզ եւ խնդիր 'ի վեր բերեալ հանցեն 'ի լոյս։ —

« Բազմեցաւ նա, եւ յերասան յարեաւ Նիսրոք եշխանապետ,
Կանգնեցաւ որպէս մարտիկ մի ճողոպրեալ յանհաշտ կռուոյ,
Յաւագին 'ի խոցուածոց, զէնք եւ զբարձք իւր կոչնճեալ՝
Պատառեալ, մանրեալ յօշ յօշ մինչեւ յեղծումն կորբատեան.
Թալծագէմ կերպարանաւք զայս խօսեցաւ պատասխանի. —

« Դու փրկիչ՝ որ ըզմեզ 'ի նոր տերանցն ապրեցուցեր,
Աւանջնարդ յաղտ վայելս սատուածարուն մեր երաւանցս,
Աստուածոց անգամ է խիստ եւ անտրման երեւի մեզ՝
Յաւաղնոտ անձամբ ընդդէմ անհամեմատ զնուց կռուել,
Եւ ընդդէմ անցաւաց եւ անչարչար տխոյեանից։
Այս վընաս՝ յանհրաժեշտ 'ի կործանումն եղեցի մեզ.
Զի զինչ օգուտ քաջութիւն եւ կամ կորով, թէ եւ անզոյգ,
Ճնշելոցն 'ի ցաւոց որ զամենայն առնեն նրկուն,
Եւ ըզձեռս արիագոյնս անգամ գիտեն լքուցանել։
Իցէ թերեւս անտրտունջ ըզհեշտալիս կարճել կենաց
Եւ ապրել դոհութեամբ, որ ինքն է կեանք հանգրստաւէտ.
Իսկ ցաւք ծագ են աղեաց եւ 'ի չարիս դաժանագոյնն,
Եւ թէ 'ստ չափ եղանիցէ՝ զէն զամենայն ժուժկալութիւն։
Արդ թէ ոք բընտագունի հնարից հասցէ լինել մարթուչ,
Հարկանել խոցել վերոք ըզթշնամիս մեր դեռ անվէրս,
Կամ ըզմեզ նոցին հանգոյն պատեհագէն զրահաւորել,
Ոչ ընդհատ ինչ 'ի փրկիչէն մերմէ նա յաչս իմ եղեցի։ —

« Սամայէլ յարդարուն կերպարանաւք ած ընտվլոմ. —
Զանցայտ օճառդ, զոր կարեւոր ուղիղ դատիս 'ի յաղթանակ,
Բերեմ ես քեզ։ Ո՞վ 'ի մէնջ նրկատելով զյատակ պայծառ
Երկնային դեմնոյս յոր կեամքս, ըզայնաստարը երկնիս ցամաք
Զարդարեալ ծառովք՝ մրրգաբ՝ անուշաբոյր ծաղկանց երմնիւք,
Ոսկեալ եւ ակամբք, վեր'ի վերոյ հարեւանցեալ
Զառնու 'ի միտ, թէ ուստի բըղխեն 'ի բոյս 'ի խորս երկրի՝
Թուփ եւ խակ նիւթք են հրեղէն եւ ոգեառանդն խմն փրփրոյ,
Մինչեւ օծեալ եւ արբեալ երկնայնոցուղ ճառագայթիւք՝
Բոլբոջն գեղեցկափթթիթ 'ի շըրջապատիս լուսոյն պարզուած։
Զայս սերմանս 'ի մթին արգանդն՝ տացեն մեզ սանդարամեաք
Պատարունքս բոցով դրժոխայնով, որ եւ կրակաք
Ի կաղմածքս գոգաւորս երկայնաձեւս եւ բոլորչս,
Եւ ըստնչս 'ի միւս բերանն, ընդ որ եւ զհրոյն լուցկիս առեալ՝
Որոտագոչ ճայթմամբ 'ի բաց ընդոստուցցեն 'ի մեր ոսոխս
Անօթքս սատակման 'ի խորտակել յապականել

Զամենայն ընդդիմակաց, մինչեւ խիթալ իսկ Թրշնամւոյն՝
Թէ զորատոյն ինքնին կապտեալ իցեմք յահեղ միակ զինեն։
Վասակս ոչ յերկարեսցէ, ակընկալեալս ելցէ 'ի գլուխս
Նախ քան զելս առաւօտուս. բայց առ տեղեաւս առցուք ոգի,
Մերժեսցուք յանձանց զերկիւղ. զի զօրութեան եւ հանձարոյ
Չիք ինչ ուրեք դրժուարին, Թող Թէ անյոյս, զայդ խորհեսցուք։ —
« Ասաց եւ բանքըն յակընկոր դէմս նոցին ծագեցին լոյս,
Եւ զշիջեալ անկեալ սրտիկս նոցուն ըղձոյն արծարծեցին։
Հիանան առհասարակ ընդ հնարագիտս ճարտարութիւնն,
Եւ այր յանձն իւր զարմանայ՝ զի ոչ նախ ինքն խնդասցաւ զայն։
Այնչափ գիւրին երեւի, յետ միանգամ 'ի լոյս գալոյ,
Որ ինչ չէր եւրս գրտեալ՝ յանհընարից Թշուէր սակի։
Ո՛ գիտէ, 'ի հանդերձեալ աւուրս տաղտնք Թէ զեղուցուն,
Թերեւս ոք 'ի քո զարմէդ, Ադամ, միտեալ 'ի չարութիւն
Կամ սադրեալ 'ի խորամանգ եւ գիւազգի ոգւոյն շնչմանց,
Գլացէ գործի մի այսպուսակ 'ի սատակումն որդւոց մարդկան
Դրդիչելոց մոլելոց մեղք 'ի մարսելս եւ յարիւն։
« Յատենէ անտի անդէն սլանան 'ի գործ անդր անյապաղ.
Ոչ յամեաց ոք 'ի խօսս, 'ի սպատրաստի կան ձեռք անթիւ։
Պատառեն յական քրթթել խոր լայնակօս ղերինից յատակ,
Տեսանեն յալլս նեղքին զտարերս բնութեան ծընունդս անկարգ։
Ծղծղմեալ գրտեալ փրփուրս եւ բորակի՝ խառնեն զնոսա,
Եւ սրամիտ նուրբ արուեստիս խարակեալ զայնպս եւ Թրջեալ՝
Ի սեաւ սեաւ հատ մրդեղեն եւ մրթերեն յամէարանոց։
Կէսք պեղեն զծածուկ երակս հրահալից եւ ըղքարանց, —
Նման ընդեղք են երկրիս, — գրտանել անդ զիւրեանց օձառն,
Եւ զգինատակսն՝ հրեշտակս աւերածոյ եւ սատակման։
Այլք ոմանք եղեգունս հրալուցիկս ինչ հայթայթեն՝
Հրպեղով միայն հրոյն եղեռնաւոր սատակչական։
Այսպէս գալս, յառաջ քան զայգն, եւ գիշերոյն լուկ գիտելով
Յանդ հանին զամենայն, եւ անշրջունչ ըղձութեամբ
Կարգեցան կազմեցան 'ի ռազմ անաղդ եւ անրդասս։
« Մինչ գեղեցիկ վաղորդայնոյն անկան յերկինս արեւածայրք,
Յարեան հրեշտակքն յաղթականք եւ երգեաց փող առաւօտին
Ի զէն 'ի զէն, եւ ոսկի սպառազինօք անցին 'ի կարգ
Ճակատ ճաճանչաւէտ 'ի թօթափել ական ռազմեալ։
Ի ծագաց առաւօտեալ լերանց ոմանք գէտ կան 'ի շուրջ,
Եւ լրտեսք մեկնակազէնք ընդ հանդերն յածին կողմանս
Ըստ բանակի բանակի՝ գիտել զոսոխսն հեռաւոր,
Գիտել ուր 'ի ակիզ դրծեաց կամ խոյս տալեալ երթ փախստեայ,
Ի կամ արգեաք խաղայցէ, Թէ զեղոյ առեալ հարցէ բանակ։
Եւ ահա տեսին ընդ՝ զի գայր դրօշուք սաւառնելովք,

Գումարտակ յամրաշարժ՝ սակայն ըստուար՝ մըղեալ յառաջ։
« Յայսրէն դարձ Զոփիէլ Թեթեւաթռիչ Թեւ 'ի քրովբիմ՝
Անհնարին սուր սըլացեալ դայ եւ դոչէ յօդոյն միջոց. —
Ի ղէն, զօրականք, հապա 'ի ղէն 'ի կռիւ մարտի.
Հասեալ կայ Թըշնամին. զոր 'ի փախուստ կարծէաք մեք՝
Խնայեսցէ զմեզ այսօր յերկայն 'ի ձիգ ասպատակէ։
Մի խիթայք Թէ փախչիցի. ամպոյ նըման դայ Թանձրախուռն,
Եւ 'ի դէմն տեսանեմ՝ անոստ եւ պինդ միտք եւ խիզախ։
Այլ ամենայն առցէ զանձամբ ըզվարպանն ադամանդեայս,
Ադուացէ զգրլանոցն, եւ զլայնածիր խուր վահանէն
Բուռն հարցէ արիաբար՝ եթէ 'ի վայր եւ Թէ 'ի վեր։
Զի այսօր, եթէ մընացս իմ հաւանիմ, ոչ անկցի մեզ
Մանրացօղ, այլ շառաչուռ մըրբկատարափ հրաղէն նետից։ —
« Խրախուսէր այսպէս Զոփիէլ զորրս կայենն ինքնին պատրաստ.
Անխափան անվըրդով կարգեալ 'ի ռազմ՝ աճապարեալ
Խազմական դիմեալ գոռիւք խաղան յառաջ 'ի պատերազմ։
Եւ ահա բանակն ոսոխ դոյզն ինչ բացեայ դայր ծանրաքայլ
Մերձենայր կուռ եւ ըստուար, ձրգեալ 'ի խոր ջրբէքուսաջ
Ըզկազմածսն գիւահոտ՝ պարածածկեալ շուրջանակի,
Թանձրախիտ գումարտակքն ըղնարդաւանսըն Թաքուցեալ։
Ճակատքն երկդքին յանդիման լեալ՝ առ վայր մի կան.
Ոստնու Սատան յանկարծուստ յառաջն իւրոց դասականաց,
Եւ եղեւ լըսելի՝ զի բարձրագոչ հրաման տայր զայս. —
« Բացէք բացէք, յառաջապահք, յաջ եւ յահեակ ըղձեր Ճակատ,
Ատելիք տեսցին զնարդ խաղաղութիւն հայցեմք եւ հաշտ,
Քանիսն ի՞ցեմք պատրաստ գրբկատարած փարել զնոքօք,
Թէ 'նդունին զգոգոյս սրփոռումն՝ ոչ լեալ խեռիւ Թիկնադարձոյց,
Ընդ որ խիթամ. եւ սակայն՝ վըկայ երկինք, Երկինք՝ յայս ժամ
Լէր վըկայ՝ զի մոռերմաբար զեղումք ըզսիրտ մեր առ նոսա։
Արդ գուք ե՞ն կարդեալքդ 'ի սպասն որ յատին կայք՝ հարէք զպաշտօնդ,
Օ՞ն ձեռն 'ի գործ յոր ակնարկեմքըս՝ սուղ եւ բարձր հանուրց 'ի ըստ։ —
« Այն ինչ դեռ բանքն 'ի բերան էին խաղղ եւ երկդիմիք,
Փեռեկի Ճակատն ընդ աջ եւ ընդ ահեակ՝ անցեալ 'ի Թեւսն։
Ցաչքս մեր նորանըշան երեւի գործ եւ այլանդակ.
Երեքիկին կարգք պըղընձի սեանց, երկաթի եւ վիմէղէն,
Հարըստեալք յանիւս. զի յոյժ սեանց հանդուռնակ երեւէին,
Կամ կաղնի եւ եղեւնեայ ինչ անօթոց գոգացելոց՝
Փըշտեելոց նախ յանտառի կամ 'ի լերինըս տապալեալ,
Թէ հանդէպ մեր բերանոցըն խառոչեալ սոսկալի ծերպք
Ոչ կային լայնաբաց՝ դուշակաւորք սուտ հաշտութեան։
Ի Թիկանց անօթոցըն կանգնեին մին մի սերովբք՝
Մի մի եղէգըն հրավառ ճօճեալ 'ի ձեռս, իսկ մեք կայաք

Ի վերանալս միահոյլ եւ 'ի խորհուրդս մեր զբօսեալ։
« Ազգանդաղ անդէն եւ անդ բոլորեքեան առհասարակ
Կարկառեալ զեղեգունսն՝ հրպին մեղմով 'ի ծակ մի նուրբ։
Նոյն ընդ նոյն երկինք համայն դարձաւ 'ի բոց հրդեհակէզ,
Այլ խկոյն նոյնհետայն եւ 'ի ծրխոյն կալաւ խաւար։
Բոց հատեալ փորատեալ 'ի խորափոր մենքենայիցն,
Որոց մընչիւն դղրդրդէր ահեղասասա թընդմամբըն զօդս,
Եւ զընդերսն հերձեալ ժայթքէր գրժոխաբարկ յորդահեղեղս,
Վէրտեալ շանթս որոտընդոստ եւ երկաթի գընոց կարկուտ։
Արձակեալ 'ի գունդն յաղթօղ գան հարկանեն մղեալ թափով։
Յորս հասանենն՝ անդեղեւուն յակաստանի ոչ կարեն կալ,
Թէպէտ ալինդ եւրս կայցեն քան զաստառաժ վէմ հաստահիմն։
Հաղարք անկեալ, հրեշտակապետս ընդ հրեշտակի թաւալգլոր,
Եւ դիւրաւ եւս յառնաղէն պատեհնաղէն կուռ վառուածոցն։
Թէ անդէնք էին՝ հեշտեաւ իբրեւ հոգիք փոյթ խուսէին
ՀալՀեալիս կրծկելով կամ ոստուցեալ 'ի տեղւոջէն։
Այլ 'ի ժամանն՝ բրանի բեկումն եղեւ եւ ցիր ամօթապարտ։
Օգնեաց նոցա եւ ոչինչ ըղհաստատկինդն անօսրել կաղմն։
Եւ զինչ այլ էր առնել։ յարձակ յարձակ խաղալ յառաջ։
Միւս եւս կոփիւն հարուածոց, կրկին գլորումն անվայելուչ՝
Յաւելցեր զարհամարհանս եւ 'ի քրքքիչ շարժէր զոսոխս։
Զի կարդ մի այլ սերովբիմ երեւէր կազմ եւ ձեռն 'ի գործ
Ի ցայտել ոստուցանել զերկրորդ շանթիս փայլատականց,
Եւ ուխտակալ հրեշտակաց քան զամենայն էր առեալն
Հարուածովքն ընկրկիլ։ եռես Սատան զնոցա տաղնապ,
Եւ ձայն զայս առ ընկերսն արկեալ ասէ այպանելով։ —
« Բարեկամք, զի՞ չմատչին ամբարտաւան յաղթօղդ յառաջ։
Քան զսակաւ մի նախ խիզախ դիմեալ խրոխտով խոյանային,
Իսկ յորժամ Ճակատ եւ սիրտ բացեալ պարզեալ 'ի սէր իւրեանց, —
Եւ զինչ այլ դոյր առնել, — արկանեմք ձայնս հաշտութեան,
Ցանկարծոյն փոխելնան, եւ փախուցեալ զնան անկանին
Ցանհեգեգ խելագարանս, իբրեւ 'ի սար ինչ անցանել։
Այլ փոքրը մի այլանդակ եւ վայրենի թուին 'ի կաքաւ,
Ո՛ գիտէ առ խայտալոյն ընդ հաշտութեանս ընծայութիւն։
Բայց կարծեմ՝ զի թէ լեցին միւս հաղ նրւէրքրս լքսելի,
Ըստիպել 'ի փոյթեռանդն յանձնառութիւն զնոսա մարթեմք։ —
« Անդուստ եւ թէ'լիար նոքին ոճով ծաղրածութեան։ —
Հաշտութեան զոր առ նոսա յըղեցաք բանք, ո՛ սպարտպետ,
Կըշռաւորքք էն եւ ձոյլք եւ զօրաւորք 'ի վճար գործոյ,
Մինչ հանուրց զուարճանալ, բազմաց զըմբրիկ՝ որպէս տեսաքս։
Որ 'ի դէմն ընդունի զայնս, հարկ է նըմա յոտից ցըվուիս
Խելամուտ նոցին լինել։ իսկ թէ 'ի միտ ինչ չառնուցուն,

Օգտեն զէթ առնել մեզ յայտ՝ երբ Թըշնամիք սրխալակին։ —
« Օրինակ զայս 'ի խանդից լըրջմըտութեան առնեն ալինաղ,
Բարձրամըտեալ 'ի խորհուրդս իւրեանց յանշուշտ յոյս յաղթութեան,
Դիւր իմն Աստուած Զօրութեան կարծեալ՝ հնարիւքն հաւասարել,
Իբր անդոնել ըղձանթիսն եւ ծաղր առնել զնորա բանակ՝
Մինչ դեռ կայրըն խռովեալ. այլ ոչ յերկար բաւեալ 'ի նոցն՝
Հուսկ ուրեմն յուխտապահաց գունդ վառեցաւ սրբամըտութիւն,
Եւ եգիտ զէն դիմամարտ դըժոխահեռ եղեռնութեանն։
Իսկ եւ խսկ, — զարմացիր ընդ մեծութիւնն եւ զօրութիւն
Զոր ալինեալ է Աստուծոյ 'ի հաստատուն հրեշտակս իւր, —
Ընկեցեալ ըղձենն 'ի բաց եւ ըստ զեռալ փայլատականց
Թեթեւ թռուցեալ ընթանան առ կուտակեալ լերանց կոհակս, —
Զի երկիրդ յերկնից ունի զախորժ գունակս հովտաց՝ բըլրոց, —
Ի հիմանց անտի գոլորդեն՝ շարժեալ զնոսա յայս կոյս եւ յայն,
Եւ զլերինն հաստակառոյց խըլեալ սարուքքն բովանդակ՝
Ժայռիւք գետովք անտառօք, եւ բուռն հարեալ կորովաբար
Զվարսագեղ գըլխոց նոցին՝ առեալ ածեն 'ի ձեռս իւրեանց։
Զարմանք մեծ, անշուշտ լեր դու՝ զի եւ սարսուռ առ զըստամբական,
Երբ 'ի դաշն առ նոսա զարհուրադին սասանութեամբքն՝
Հայեցեալ տեսին զարոցն ունչս 'ի բարձունս 'ի վեր շըրջեալ.
Մինչեւ պարսեալք 'ինդոլեալ յերեքկարգեան մանգլինից շարս,
Եւ սոքա եւ Թըշնամեաց միահաղոյն խիզախ խրախոյան
Ընդ լերանցն անարի բեռամբ 'ի խորըս Թաղեցան.
Վանեցաւ ապա յեւոյ հալածական եւ Թըշնամին։
Թըռչէին զգըլխովք նոցուն յաղթամարմին սարաւանդք՝
Որ անցեալ գնային ընդ օդս արկանելով լայն հովանի,
Եւ բանակս ըսպառազէնս ոչնչոյն 'ի կոր կործանէին։
Զբահք նոցուն պատենազէնք յաւելուին 'ի ցաւս իւրեանց,
Ի միջն անդ գոյութիւն նոցին փակեալ՝ Հըմէր ջաղխեր,
Անողորմ 'ի վերայ հասուցանել նոցա տանջանս,
Եւ հանել հեծութիւնս 'ի նոցանէ դառնակոչս։
Մըրցեցան յերկար Հրգունս ընդ անարդիկ բիրտ կուտակօքն՝
Հաղիւ բաւեալք զերծանել շրջետեսակ՝ յայնըմ բանսէ,
Որ թէպէտ եւ հոգիք 'ի պարզական էին լուսոյ.
Պարզական երբեմն, իսկ այժմ առ 'ի մեղայ Թանձրադանդաղ։
« Միւս զովոլք նոցին ընդ մեզ բերեալ նախանձ՝ յափըշտակեն
Ըզնոյն զէնս եւ նոքա՝ զընթերակայ կորզեալ բըլրոս։
Արդ լերինք յօդս ընդ լերինս աստի անտի բուռն արձակեալք
Երթեալ բախին, մինչ զի 'նդ երկրաւ յահաւոր մուԹ էր գուսպարած,
Բոմբիւն թըմբիւն՝ դըժոխատիպ. առ դըղորդիւս այս սոսկալեաւ
Պատերազմունք խաղ Թըւին քաղաքօրէն ելեն հանդիպից։
Վըրդով ըղձըրդոլիս զարհուրելի հասեալ պատեաց,

Եւ երկինք համբէն չարախտավատ չարակոչիոճ
Յաւերակսն խաղաղէր, թէ որ էն Հայր ամենակալ՝
Բազմեալն յերկնից յանմատոյց ամրածածուկ սրբբարանի,
Զեղեալցն կրշռելով միահամուռ ըղհանդամանս՝
Զէր կանխաւ նրկատեալ զապշռալն զայն եւ տրւեալ թոյլ
Ի լրումն մեծ խորհրդոյն, փառաւորել զՕծեալ Որդին՝
Ըզվրէժն հանեալ յոսոխացն, եւ ցուցանել յայս յանդիման՝
Թէ ամենայն զօրութիւն նրմին ինքեան էր պարգեւեալ։
Առ Որդին այն դահակից իւր օրինակ բարբառի զայս. —
« Լայս փառաց իմոց Որդի, Որդեակ իմ սերա եւ սիրարուն,
Յորոյ 'ի դէմն յայս երեւի՝ զինչ եմս անտես յաստուածութեանս,
Որոյ ձեռնդր կատարէ զոր ինչ գործեմն ես հրամանաւ,
Աջ երկրորդ ամենակալ, աւուրք կրրկին անցին գնացին, —
Աւուրք կրրկին՝ որպիսի համարեմք մեք զաւուրս երկնից, —
Յորմէ հետէ Միքայէլ խաղաց դրնաց զօրօք իւրովք
Նրաւաճել ըղսեռեալսն. եղեալ է կռիւ սաստկահարուած,
Որպէս եւ էր իակ կարի հաւանութեան թէ լինիցի,
Մինչ այնպիսի բանակք կրրկին ռազմ ընդ միմեանս բախեցին
Յինէն չօգնեալք. եւ գիտես՝ զի հաւասար յինէն ստեղծան,
Մեղք միայն անկաւ խլտիր, որ եւ ազդէն իակ յանըզդայս՝
Ձեւ տրւեալ ըղդատակնիքս. արդ յանդրրաւ ճակատամարտս
Հարկ է մնալ նոցա 'ի սպառ, եւ չիք վրճար առնուլ ուսանէք։
Կատարեաց խոնջ պատերազմ յոր պատերազմն էր ձեռընհաս,
Եւ արձակ երասանակ դրրդեաց ղյահուր սրրամրտութիւն,
Զէն 'ի ձեռս առեալ զերինս, գործ անազդակ՝ յերկինս անլուր,
Եւ բնութեան առհասարակ եղեռնային վրտանգաւոր։
Արդ աւուրք անցին երկու, երրորդն է քոյ, քեզ պահեցի,
Համբերեալ ցարդ՝ զի մեծի յաղթանակին փառք քեզ կոցցեն,
Զի եւ բաց 'ի քէն այլում ումեք զայն չիք տանել 'ի դլուխ։
Ի քեզ հեղեալ առ յինէն շընորհք անբաւ եւ զօրութիւն,
Զի յերկինս ամենեքին եւ որ 'ի խոր սանդարամետս
Ի միտ առնուցուն ըղքաջութիւնդ անզուգական։
Ի սահակ խաղին ըռեալ՝ յայս եղիցես արժանապարտ
Պայազատ ամենայնի, միայն Ժառանգ եւ Թագաւոր
Օծութեամբըն սրրբով, որ պարծանացդ են իրաւունք։
Երթ ապա, 'ի զօրութեան քում ծընողիդ ամենաղօրդ,
Եւ 'ի կառս իմ վարեա զսուր անիւս՝ հիմանց երկնի դղրդիչս,
Տար բոլոր զիմ պատերազմ, ըղլայնալեռն իմ եւ զորոտս,
Արկ զիմ զէնս ամենաղօրս, կապեա զսուսերս յարի ազդերդ։
Վանեա զորդիս խաւարի՝ վարեալ մերժեալ ըսպառըսպուռ
Յամենայն ծագաց երկնից յանդընդախոր վիհն արտաքին.
Անդ ըստ քիմն ուսցին խոտել զէնն եւ զՕծեալն իւր Թագաւոր։ —

« Ասաց, եւ լի ճաճանչք իւր դէպ ուղիղ յՈրդին ցոլան.
Ընդունի նա զՀայրն 'ի դէմն անճառաբար Ճշդերտագիծ,
Եւ որդեկանն աստուածութիւն այսպէս արար պատասխանի. —
Ո՛վ Հայր, ով զահոյիցն երկնաւորաց վեհապէտ,
Առաջին, ամենաբարձր ամենասուրբ ամենաբաւ,
Դու հնարիս հանապազ ըզքո զորդիդ փառաւորել,
Եւ ես ցանգ 'ի փառաւոր առնել ըզքեզ ըստ արժանի:
Այս իմ փառք, այս բարձրութիւն, երանութիւն այս բովանդակ՝
Զի հաճեալ յիս ըզկամացդ կատարումն առնիցես յայտ.
Զայն առնել է համբէն անձին խոց երջանկութիւն:
Պեռութիւն եւ գաւազան՝ ըզքո պարգեւարդ՝ ընդունիմ,
Եւ խընդամիտ քեզ դարձուցից՝ մինչ յաւիտեանցն 'ի կատարած
Դու լցիս ամենայն յամենայնի, եւ յաւիտեան
Ես 'ի քեզ, եւ յիս նոքա բոլորեքեան զորբս սիրես:
Իսկ զոր դուն ատեաս՝ ատեամ, եւ զքոյդ կարեմ ապանել զահ,
Որպէս զոլորմ քո զգենում՝ յամենայնի ես քո պատկերս:
Զօրութեամբ քով վառեալ՝ զհետատեալն յերկնէ Թափեցից փոյթ,
Արկեալ զնոսա 'ի տեղին վաստակարակ 'ի պատրաստեալ.
Մատնեցին 'ի կապանսս խաւարինս եւ յորդն անմահ,
Անոպաչքն ըստամբակեալք 'ի պարտական քո հրութենէն՝
Որում ծագ երանութեան է 'ի հարկի կալ հրապատակ:
Սուրբքս յայնժամ զբաւեալ մաքրեալ առ 'ի պրղծոցն եւ անապակք,
Պար ըզսուրբ առեալ լերամբդ՝ երգեսցեն քեզ սերս ալէլուս,
Բարձրահրաշակ օրհնութիւնս, եւ ես նոցուն գլուխ ընդ նոսին: —
« Ասաց, եւ խոնարհեալ յեց 'ի մական իւր յարեւաւ
Յաջմէ փառացն ուր բազմի, եւ առաւօտն սուրբ երրորդ
Թափանցիկ ընդ երկինս ըսկիզբն առնոյր լուսածագել:
Ի շաւիղն մրրրկաշառաչ անդէն 'ի մէջ անդր ոստուցեալ
Գայլին կառքն հայրական աստուածութեան փայլակենացայտք,
Անիւ զանուամբ ոչ ձրդեալ, այլ շընչաւոր ինքնասլացիկ,
Ի ջրից սպասաւորեալ քրովբէատիպ կերպարանաց:
Մի մի իւրաքանչիւր քառադիմի զարմանապքանչ,
Իրանք նոցին համակ եւ թեւքն բազմաչեայք աստեղակերպ:
Են են աչք եւ յանիւսն որ 'ի վանեալց բիւրեղ ականց,
Եւ յընթացս իւրեանց հրացայտ բոց փայլակեն շուրջանակի:
Ի վերայ գրլխոց նոցին հաստատութիւն սառնանշման,
Անդ աթոռ շափիւղեայ բազմագունի մաքուր ակամբ,
Եւ 'ի թօնուտ ազեղանն երփներանգ թոյրքս նրկարէն:
« Երկնային զինուք հրափայլ աստուածագործքն Ուրիմայ
Սպառազէն անդէն սարեալ հեծնու 'ի կառսն անդ Որդին,
Յաղթութիւն բազմի յայնմէն արծուաթեւօքն հոլաթեւեալ:
Առ երի նորուն կախեալ կան լայնալեռ իւր եւ կապարձք

Երիւք լցեալ քառասայրեան սլաքօք շանթից փայլատականց.
Եւ զիւրեւ փոթորկաբար մղեալ վարդն մրրիկ ծրխոյ,
Բոյք մարտի բորբոքախառն եւ կայծակունք ահագնացայտք։
Տան հազար արբանեկեալ սրրբովք խաղայ յառաջագէմ,
Եկեալն իւր շղան հեռուստ, եւ երկու բիւր աստուածակառք, —
Իմ խակ լուեալ զթիւ համարուն, — ասի անսի տեսան նորա։
Ինքն 'ի թեւերս քրովէից բարձեալ դընայ 'նդ բիւրեղ երկինս
Ի շափիւղեայ դահաւորակ բացուստ 'ի բաց լուսակարկաջ։
Այլ զինք նախ իւրքն տեսին անակընկալ ուրախութեամբ
Ի ծագել հրեշտակիր մեծի դրօշու Տեառն Օծելոյն,
Նշանի իւրում յերկինս. զորով հաղթեալ խրմբէ գուամարտ
Միքայէլ ըզգունդս իւր ըզտարածեալն յերկոսին թեւս,
Եւ 'նդ Գրլեսնէ իւրեանց 'ի մի բովանդակին միայն բանակ։
« Զօրութիւնն աստուածեղէն զուշն առաջի հորդէր Որդւոյն,
Ի հրաման նորա դարձան խրլեալ լերինքն յիւրեանց տեղիս,
Ունկընդիր ձայնին եղեալ՝ ելին գնացին հպատակօրէն։
Երկին նորոգեալ զգեցաւ զնախնի իւր կերպարանս,
Եւ բըլուրք եւ հովիտք ծիծաղեցան զուսարթածալիկ։
« Տեսին զայս թշուառական ընդդիմամարտք, այլ խրատացան,
Եւ 'ի մարտս պատերազմի խուսք արարին ըզզօրս իւրեանց,
Մըտակոյրք եւ ապիմակք՝ յանցուսութեան խրախուսեալ յոյս.
Այսքան յոգիսն երկնաւորքս չարութիւն որջանացէք։
Այլ զինչ օգնեն սքանչելիք յաղթահարել զամարհաւաճն,
Եւ կամ ո՞ր ըզկամակորն ընդդըճեսցէն զարմանալիք.
Որովք պարան էր 'ի հաւան դալ՝ առաւել յամառեցին։
Ի խոր խոցեալք ընդ փառս Որդւոյն՝ 'ի տեան եղեն նախանձաբեկ,
Տենչացեալ 'ի բարձրութիւն իւր՝ կազմեցան յոխորտ 'ի կռիւ,
Խիզախեալ յոյժ կամ 'ի նենդ յաջողութիւն դասնել անձանց,
Հուսկ ուրեմն 'ի պարտութիւն մատնել զԱստուած եւ զՕծեալ իւր,
Կամ 'ի հուսկ յետին անկումն համանդամայն խորասուզել։
Հանդերձին այնուհետեւ պատերազմին առնել վըճիռ,
Ըմբոստացեալք մի փախչել, մի վատաբար դառնալ ընդ կրուկ։
Յայնժամ մեծ Աստուածորդին առ իւր բանակ միահամուռ
Բոլորեալ յայմն իւրմէ եւ յահեկէ՝ ձայնարկեաց զայս. —
« Կացէք, սուրբք, մնացէք անխոով յաւէժ 'ի դոյն կարգ դեղեցիկ,
Դուք հրեշտակք վառեալք՝ կացէք ասա հանգերուք սերկ 'ի մարտէ,
Ռազմական կենցաղդ՝ անսենդ եւ Աստուծոյ գրաւ հաճոյ,
Անվնասելք յիրաւունս արդարութեան մարտի նորա՝
Զոր առէքն հաստատեցէք յանցաղթելն մրտեալ հանդէս։
Իսկ գընդիս նըզովելոյ՝ բաղկի այլում անկ պատուհասն,
Իւր են խընդիրքք վըրիժուց, կամ ում արարն ինքն ապատան։
Ոչ թիւ, ոչ բազմամիտիք չեն կոչեցեալ յայսր աւուր գործ,

Անասցէք միայն տեսէք զաստուածասաստ ըղբարկութիւնն
Հեղեալ առ 'ի յինէն յամպարիշտացն 'ի կառափունս։
Անդանեցին ոչ ըղձեալ, այլ զնս, ընդ իս չարանեցին,
Յիս նոցա մոլին զայրուկք, զի Հայր՝ ում փառքն եւ զօրութիւն,
Ի վերին արքայութեան երկնից պատուեաց զիս ըստ հաճոյսն։
Վասն որոյ եւ զդատաստան նոցա համբուն յիս յանձն արար,
Զի հասցեն ում իսկ լինին՝ ընդ իս մարտի դալ 'ի հանդէս,
Փորձ փորձել տեսանել՝ թէ ո՞ քան զի՞ ելցէ հրզօր,
Նոքա՞ համուռ լինձ ընդդէմ, թէ ես միայն ընդդէմ նոցուն։
Ամենայն ինչ առ նոսա քանզի զինու զօրու չափի,
Ոչ ընդ այլ ինչ խանտան մեծամեծար աւադութիւն,
Եւ ոչ փոյթ ինչ է նոցա՝ թէ ոք այլազգ ինչ զանցանէ,
Թող եւ ինձ ընդ նոսին մերբցանակ այս կացցէ եւ թ։ —

« Զայս խօսեալ Որդւոյ՝ փոխեաց զերեսս իւր յահարկութիւն
Դրժնէաեսիլ խոժոռադէմ, դիմեալ յոսոխսն բարկացայտ։
Զորեքկերպեան կենդանիքն 'ի միասին սաւառնանան
Ատալոց թեւոքն իւրեանց՝ ըստուեր ահեղ արկեալ անհատ,
Եւ անիւք հրաբոց կառացն հոլովեցան մեծաշառաչ
Իբր յաղթաչուր ուղղեցց դղրդրդ կամ յոգնախուռնն բանակաց։
Սըլանայ ինք դէպուղեալ յառաջ յոսոխսն իւր անօրէնս
Դիւերոյ հանգոյն մրնայլ. ընդ հրաբորբոք անուաք իւրովք
Անասան արփին դղրդեալ՝ ծագէ 'ի ծագ տատանեցաւ,
Բաց յաթոռոյն Աստուծոյ. եհաս անդէն նա 'ի նոսա,
Յաջում բիւր փայլատակունք զորս առաքէ իւր կարապետս՝
Հոգւոցն խոցոտիչս տպրստամբիցն ընդվզեալոց։
Պակուցեալ սրրտաթափեալ՝ 'ի սպառխպուռ կան 'ի կրուոյ,
Թօթափին զէնքն անօգուտ, Օծեալն անցեալ խաղայ գլնայ
Ի վերայ վահանաց, սաղաւարտից եւ կառափանց
Տապաստ անկեալ Աթոռոց եւ կաշեմբուռքն սրովբէից,
Որ յայնժամ ըզձանան զի վերբստին անկցին լերինք
Ի վերայ իւրեանց՝ ծածկել 'ի ցատմանէ սրրտամբուելոյն։
Ոչ սակաւ մրրկատարափ նետք յերկոցունց կողմանց իւրոց
Ցընդին ճապաղեալ 'ի յոգնաչեայ քառակերպիցն,
Արձակեալք 'ի կենեղուտ անուոց անտի բաղմակայնց։
Վարեր զանիւսն հոգի, ամենայն աչք փայլակէին,
Կայծակէին յանիծեալսն եղեռնական բոց սատակիչ՝
Թառամել զկորով նոցա, խամրել ըղձկնալսն բնակակիրս,
Եւ թողուլ ոգեսպառ եւ սրրտապախ անկեալս անյոյս։
Եւ չեւ եւս արկ 'ի գործ Աստուածորդին զկէս զօրութեանն,
Այլ արդեալ կարձեաց ըղձանեցսն կիսաթռիչ, զի ոչ կամեր
Սատակել համաջնջոյ, այլ 'ի յերկնից բերել խրել։
Նա՝ յարոյց իսկ զանկեալսն, եւ իբր հօրանս ինչ նոխազաց

Զոլորեալ կամ՝ զերդ Ճահուկ մի վատասիրտ, փախստական
Վարէր հանդէպ իւր հալածեալքս յարհաւրոց եւ 'ի վրիժուց
Յերկնից մինչեւ 'ի ծագս, եւ 'ի պարիսպն բիւրեղեայ։
Բանան երկինք, եւ Թաւալ 'ի նեռքս առեալ՝ մերկ ցուցանեն
Ընդ խրատատ լայնատիեռեկ զանդարամեասքն խառատեալս։
Այս տեսիլ այլանդակ՝ ահակոտոր արար զնոսա,
Յեռս յեռս երթան, բայց սոսկումն ահեղազոյն վանէ յետուստ.
Գրլխիվայր հոսեն զանձինս 'ի սպառուածոյ ծագաց երկնից,
Բորբոքի ցասումն անչէջ ըզկետ նոցին յանցատակ խորս։
Լրաւ դրժոխք զահաձնաստատ խառնախուժան գուժին շրջինդ,
Եռեալ դրժոխք զերկնադղորդ ըզկործանումն երկնից յերկնից.
Սարսափեալ փախչէր սրդէօք, այլ անողոք կապեալ հրամանքն
Հաստաբէստ յանդունդս էին կրեալ զհիմունսքն խաւարուստս։
« Զաւուրս ինն անկան նոքա, մընընչեաց Վիհն վերդովեալ,
Եւ եռեալ տասընպատիկ յանձին ժրխոր յանկման նոցին՝
Յանցանեն ընդ վայրենի անտէրչութեան իւրոյ խոպան.
Այնպիսի աւերակս ամաց 'ի նա ջարդոցն անբաւ։
Դրժոխք բերանացեալ՝ զամենեսին մահամուռ
Եկուլ հուսկ ուրեմն, եւ 'ի վերայ խրփաւ նոցուն,
Դրժոխք՝ նոցին տուն արժանի՝ անչէջ հրդովքն շանթացեալ,
Օթեւան չուառանաց եւ դառնակատուտ տանջից ցաւոց։
Երկինք թեթեւացեալ եւ ըսփոփեալ ուրախ եղեւ,
Խրամակարկառ արար զպարիսպն՝ անդրէն դարձեալ ուստի հատաւն։
« Մենակիս գուպարոյաղթ՝ յեռ ոխերմացքն վանելոյ
Յեռս անդրէն դարձոյց Օծեանն ըզկատարն իւր յաղթողական։
Սուրբք նորա համագումար՝ ակամառեաքքն ըռեալեայն
Ամենազօր գործոց նորին՝ բերկրասատատ եղին 'ի առաջ,
Եւ յընթացսն արմաւենի սպակք ուռովք շքաստաձոյձ
Մէն մի պայծառ դասակարգ ըզմերոյանակքն նրատէր.
Զինքն երգէր զԱբքայն յաղթող՝ Որդի եւ Տէր եւ Պայազատ,
Տէրութիւն տրեալ նրմա, մէն արժանւոյն ազգայութեան։
Հրաչակաւ յաղթանակին ընդ մէջ երկնից յառաջ անցեալ
Ի դաւիթս եւ 'ի տաճար ամենակալ Ծնողին իւրոյ,
Ամբարձեալ 'ի գահոյս՝ ընդս 'ի փառսն ընկալաւ Հայր,
Յորում եւ կայն խակ այժմիկ յաջմէ բազմեալ երանութեան։
« Ահայսէս ահա զերկնաւորսն ընդ երկրաւորքս կրշռեալքմ
Բստ խընդրոյ քում, Ադամ, ու՝ 'ի զգուշութիւն քո յեղելոցն,
Յայտնեցի քեզ զոր թերեւս յաղագ մարդկան մեայնի թաքուն,
Ըզհեռ եւ զնաղմ հանդիպեալ յերկինս 'ի զօրս հրեշտակականս
Եւ զնոր անկումն փառամոլ ստամբակելոցն ընդ Սատանին։
Նա զարդիս մախայ 'նդ քո բաստ եւ հնարի ջերդ դարանամուտ
Սատերիւրել եւ ըզքեզ 'ի հրութենէ, զի եւ դու՝ 'նդ իւր՝

Մերկացեալ զերանութիւնդ՝ տացես զնոր վերէժս յաղէտ անզրաւ։
Այն ինչ ի՞նչ մերթեթար եւ քէն ոխից, թէ մարթասցէ,
Ամենակալ Բարձրելոյն հասուցանել ինչ երգիծանս՝
Առնելով զամ մի խրոմ թշնաառութեան զքեզ բաժանորդ։
Այլ մի՛ ըսեր հրապուրանացն, եւ խրատեսջիր զարկարագոյնդ.
Ցես՝ յահեղ օրինակէդ զմեռստութեան ուսիր արիաւոր.
Էր նոցա կալ, այլ անկան. յուշ քեզ, երկիր 'ի յանցանաց »։
829



# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

## ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ըստ խնդրոյն Ադամայ պատմէ Ռափայէլ զարարչութիւն տիեզերաց, թէ յինչ պատճառս եկն Աստուած յայն ստեղծագործութիւն, եւ որով օրինակաւ 'ի կատարումն ածեալ. եւ զի երգովք օրհնութեամբք փառատրեցին հրեշտակք զգործն զայն, եւ այնպէս դարձաւ ամբարձաւ Որդին յերկինս։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Էջ յերկնից, Ուրանիա, թէ 'սա արժանի կոչես անուամբս.
Աստուածայնոյ ձայնիդ ըզկնի սլացայ քան զլեառն ոլ'ևմբական,
Քան ըզԹռիչս Թեւոց Պեգասոսին դեր'ի վերոյ։
Ոչ զանունդ, այլ ըզխորհուրդ այդբը անուան կարդամ առ իս.
Զի չես դու մի յենըն Մուսայց, կամ բնակ ծայրից հինն Ոլիմբեայ,
Այլ ծընունդ երկնաւոր՝ քան զերեւել բըլրոց յառաջ
Եւ քան զբըղխել աղբերաց, ընդ միշտին Իմաստութեան
Կեցեալ՝ ընդ քեռդ Իմաստութեան, եւ ընդ նրմին խաղայիր դու
Առաջի ամենակալ Հօրն որ խընդայր յերդդ երկնային։
Ամբարձեալ քեւ եւ մինեալ յերկինս երկնից ես հիւրս երկրի՝
Շընչեցի զարփիաբուղս սիքն առ 'ի քէն քաղցրաբառնեալ։
Արդ նովին ըզգուշութեամբ առաջնորդեալ ինձ 'ի խոնարհ,
Բէր դարձո զս 'ի բնակից տարբրս՝ զի մի 'նկեցեալ եւ իմ
Յանանձաթռիչ անդրուվարէս, Բէլերոփոն որպէս երբեմն
Ի գաւառս մի զնջագոյն ՅԱՎէականն անկայց 'ի դաշտ,
Մոլորական շրջել անդ՝ ընդվայրահար անխնամելն։
Կէս երգոցս՝ ինձ առաջն կայ մընայ դեռ առ 'ինուագել,
Այլ 'ի զգալն տուընջենային պարունակիս յանձուկ սահման։
Ոան յերկրիս, ոչ քան զնորանն երկնից 'ի վեր յափրշտակեալ,
Անվեհեր խրախուսեցից մահկանացու երգել ձայնիւ,
Որոյ չեք կերկերեալ եւ կամ կարկեալ ինչ համրութեամբ,
Թէպէտ եւ ինձ եկին ահա ժամանեցին չարեաց աւուրք.
Ինձ չարեաց ժամանեցին աւուրք 'ի ժպիրհ չարալեզուաց,
Խաւար, ամայութիւն, եւ վրանգից պաշարեալ վարմք։

Բայց չէմ միայն՝ ուր դու ինձ այց առնես 'ի քուն գիշերոյ,
Կամ Աստուծոյ մինչ զարեւելքս նեբկանէ ծիրանափայլ:
Լեր տաղնչքս յամենայն ժամ առաջնորդ, Ուրանիա,
Եւ գիտ 'ի գէպ ունկընդիրքս թէ եւ յոյժ սակաւաւորս:
Այլ 'ի բաց ըզդուժ խրատոսն հերքեա զնրաւագ Սպանդարմետն,
Եւ զտոնակից սիրելեացքն շամբչելոյ խուժանին զարմ՝
Որ վերդիջքն թրակացի գիշատեցին առ Ռոդոպեաւ,
Ուր մայրեաց եւ ժայռից ընթանչացեալ կային ահանգք,
Մինչեւ կառանչքն վայրագ ընկղոյզ ըզքնարն եւ ըզբարբառ:
Ոչ կարաց պահպանել Մուսայն զարդին. ոչ նոյնպէս դու
Թողեալ ընթանիցես զայն որ առ քեզն աղաղակէ.
Զի դու երկնային, եւ նա երաշ ուրուացընոր:
Գոգջիր, աստուածուհիդ, որ ինչ եղեւն ըզկնի խրատուն
Զոր հանբոյրն եւ մարդասէր հրեշտակապետարն Ռափայէլ
Մատոյց Ադամոյ 'ի զգուշութիւն ստահակութեան
Անդրանն օրինակաւ անցեալն երկնից ընդ ապրստամբս,
Զի մի 'նդ Ադամ եւս եղցեն եւ ընդ որդիս իւր 'ի դրախտին,
Որոց պատուէր մի հուպ լինել 'ի ծառն եդաւ հրաժարելի,
Թէ խոտեալ սատանանիցեն ըզմին եւ եւթ զայն պատուիրան՝
Հեշտանկաքն յառատ զեղումն այլոց ընտիր ընտիր հատոց
Ախորժից 'ի ճաշակ պէսպէս քրմացն յօժարելոյ:
Պատուութեանն ընդ ամուսնոյն Եւայի միտ եդեալ նորա՝
Հիացեալ կայր զարմացմամբ եւ 'ի խորհուրդս ընկղմեալ խոր
Ի լրսեն ըզբարձրագոյնսն, անդրը քան զմիտս, եւ հրաշալիս.
Յերկինս ոիք, զանդոյր գահիւն Աստուծոյ խազմ յերջանկութեան,
Եւ այնպիսի վերդոմամբ. սակայն վաղվաղ մերժեալ չարին
Դառնալ անկանել հեղեղասաստ 'ի գլուխ նոցա
Յորոց բրղխեաց, չունելով զուգապարել յերանութիւնսն:
Աւժամայն արգել Ադամ զիւրոյ զմրտաց սարակուսանսն,
Եւ շարժէր, դեռ եւս անյանց, 'ի ցանկութիւն հասանելոյ
Յըղձալիսն իւր՝ թէ զնարդ արդեաք աշխարհս այս ըզգալի,
Երկինք եւ երկիր, լինելութեան առեալ ըսկիզբն՝
Ե՛րբ եւ ո՞ւստ եկն յեանալ եւ յինչ պատճառս, եւ զինչ եւս իրք
Գործեալ յԵդեմ եւ արտաքոյ, հանդերձ այնուք զոր ածէրն յուշ:
Իբրեւ ոք՝ զի չեւ զպասուք իւր յափուցեալ՝ զէտսին ունի
Ի գնացքս վրատակին, որոյ խոխոջք խոնաւականք
Բորբոքեն՝ յականջալուրս եկեալ՝ ծարաւ կրրկնապատիկ,
Սկըսանի այսպէս եւ նա հարցաբանել զՀիւրն երկնաւոր.
« Մեծամեծս եւ սքանչելիս՝ օտարոտիս յերկրաւորացս
Յայտնեցեր յունկըն մեր, պատգամաւորդ աստուածային,
Առաքեալդ յարփւոյն շնորհէ 'ի գէպ ժամու մեզ ազգապար
Վըստանգի կորըստեանս՝ եթէ թաքուն մընայր 'ի մէջ,

Որ զի էր մարդկեղէն խմաստութեան անհասական։
Շնորհս անմահ անբաւելոյ բարեգթութեան խոստովանիմք,
Ընկալեալ յայտ յանդիման անդրդուելի մշտոջ ըղձրան՝
Ի լնուլ աներկիւղ ըղձիրական կամաց նորուն
Ցոյր աղագս եւ բաստեղծաք։ բայց քանզի քեզ հաճոյ թուեցաւ
Քաղցրութեամբ Ճառել 'ի խրատ մեզ զերկրաւոր մշտաց անհասս,
Պիտոյս մեզ՝ որպէս վերին խմաստութեանն 'ի դէպ դառեալ,
Ե՛կ արդ աղէ զէջ 'ի խոնարհ, եւ զայն ինչ եւս պատմեաջիր մեզ՝
Ում թերեւս ոչ ինչ պակաս օգուտ իցէ լինել հրմուտ։

«Ե՞րբ ըսկիզբն առին երկինք՝ զոր դիտեմք յոյժ հեռի եւ բարձր,
Ի շարժուն եւ յանհամար Ճառնանչագեղ բոց զարդարուն։
Զ՞ինչ է ոփիռ օդրս որ տայ՝ կամ զամենայն լընու՝ տեղի,
Համատարած, գրրկապատ ըղծաղկաւէտ փարեալ երկրաւս։
Զ՞ինչ շարժեաց զԱրարիչն՝ 'ի յաւիտեանց սուրբ հանդըստեան՝
Անագան ուրեմն 'ի շէն դալ, 'ի Ա՛ՐՀն ձեռակերտել,
Եւ զնո՞ր ձեռնարկեալն 'ի գլուխ եկ գործ փութանակի։
Եթէ չեք ինչ քեզ արդեալ՝ կարեւս յայտնել ըզխընդրելիս,
Ոչ 'ի քընին ծածկութեանց յաւէտահրաշ իշխանութեանն,
Այլ հրմտորէն եւս քան զեւս ըզգործըս իւր փառաւորել։

«Եւ մեծի ջահի տուընջեան դեռ ասպարէս շատ կայ ընթաց։
Թէ եւ մերձ 'ի խոնարհել, 'ի կախ կապեալ ձայնիւդ յերկինս՝
Բարբառոյդ լուիցէ զօրեղ, եւ ցրմեծ ժամն առնուցու զկայ՝
Ունկրն դնել պատմելոյդ զրսկիզբն իւրում արարչութեան,
Եւ ըզԲնութեանն յարդանդ աներեւոյթ անդրնդոց ելս։
Իսկ թէ 'ի լուր քեզ փութասցին լուանն եւ ասել երեկորոյ,
Գիշեր ընդ ինքեան առեալ բերցէ զնոր լուութիւն։
Քունն 'ի լուր քո սկեսցէ, կամ թէ հրաման տացուք նրմա
Ցյանդ երդոյդ մեկնել 'ի բաց։ եւ քան զծագել այգուն գնասցես։»

Այսպէս յաղերս ած Ադամ ըզմեծաշուք զնիր ինքեւոր,
Եւ հրեշտակն ասուածատիպ զայս էտ ոլոք պատասխանի։

«Խոհական խմաստութեամբ խընդրեալ հայցուածք քո շնորհեցին։
Բայց ո՞ր բան, ո՞ր լեզու սրովբէագոյ գրացի բաւակ
Զամենակալ Բարձրելոյն պատմաբանել ըզհրաշակերտս,
Կամ ո՞ր միաք մարդկեղէն իցէն առակ զայն խմանալ։
Այլ յոր դուդ իցես հասու, եւ որ օգուտ ինչ եւ պիտոյ
Ի փառատրել զԱրարիչն եւ յաւելուլ յերջանկութիւնդ,
Ոչ զանխուլ ինչ եւ թաքուն 'ի լրսելեացդդ դողասցի։
Ցանձն է ինձ 'ի վերուստ ըզգիտութեան խղճալդ լընուլ,
Բայց չափով։ անդրը քան զայն մի ժրտիցես հարցանել ինչ։
Մի յանցայտ թաքնութեանց լինիր 'ի յոյս ցընորակոծ,
Զոր միայն ամենագէտ անտեսն Արքայ զօրեաց 'ի մութ,
Անծանօթս ամենեցուն որոց յերկրի եւ որ յերկինս։

Շատ իակ ինչ՝ Թող զայնոսիկ՝ մինան 'ի խոյզ եւ 'ի գիտասա։
Բայց սակայն կերակրոյ ինն հանդունակ է հրմնուԹիւն,
Կարօտի ժուժկալուԹեան 'ի ակտս ուղիղ ախորժանաց
Եւ 'ի կրշռել ըմբոստացն տանելոյ չափ վայելուչ.
Թէ ոչ, Ճնշեալ աւելորդ տրհալ բեռամբն, երագ չըրջի
Իմասան 'ի մոլուԹիւն, որպէս խորտիկք 'ի փուք ուռ'ի ծուվս։
«Արդ գիտաս. մինչ Արուսեակն,— այսպէս առեալ կոչումն անուան՝
Զի քան զաստղդ առաւել փայլէր երբեմն 'ի ԶուարԹնոց խումբս,—
Հոսեցաւ յերկինից հրակէզ գընդաքն 'ի տեղն իւր ընդ անդունդս,
Եւ Որդին քաջայաղԹ իւրով սրբբովքն անդրէն դարձաւ,
Ամենակալ յաւիտենիցն Հայր հայեցեալ յիւրմէ գահէն
Ի նոցին բաղմերամն՝ յՈրդին բարբառ զայս արձակեաց.—
«Թրշնամին մեր յաչալոտ գէԹ 'ի խորհուրդս իւր խաբեցաւ,
Որ հանդոյն իւր ապրստամբքս վարկուցեալ զամենեսեան,
Ամն ունէր բազկակցուԹեամբ նոցին ըմբռնել դամ մի մերժեալ՝
Հասանել ըմբռնել զանմատչելի զբարձրքս դրդեակ՝
ԶաԹոռ վեհափառ աստուածուԹեան տիրականի։
Հրապուրեաց յոգունս յիւր նենգ՝ զորս ատ տեղիքն ոչ եւս գիտեն,
Բայց տեսանեմ զի բազմագոյնք անշարժ զիւրեանց ունին ըզկարգ.
Երկինք տակաւին բազմաժողով լի է բնակչօք
Բաւական 'ի խրոնել ըզպէտուԹիւնսն արձականիստ,
Ի խրմբել բարձր 'ի տաճարս օրինի տօնքս պաշտամանց։
Այլ զի մի ոձիր գործոցն փրքասցի ատելոյն սիրտ՝
ՏեղաԹափ եղեալ զերկինս, զոր ինձ անմիտն համարի տոյժ,
Վնասուդ յիմ ձեռս է դարման, Թէ ինաս ելցէ կորուսանել
Զոր ինքնին գնաց 'ի կորուստ։ Այլ 'ի վայրկեան ստեղծից աշխարհ,
Ի միոյ մարդոյ սերունդ եւ ազգ մարդկան անԹըւելի,
Բնակել անդ, ոչ ատատնօր, մինչեւ տակաւ արժանի լեալ
Երկար հլուԹեան հանդիսիւ, եւ վերացեալ հորդէն անձանց
Ըզշաւիղս այսրը եղից, եւ փոփոխեալ երկիր յերկինս
Եւ երկինք 'ի յերկիր՝ եղիցին մի արքայուԹիւն,
Անբասպատ ուրախուԹիւն եւ անքակ սէր մըտերմական։
Աւժամայս՝ դոյզն ինչ անօսր եղիջիք դուք, զոր երկնահայլ.
Եւ դու Բանդ իմ եւ ծընունդ Որդի՝ ես քեզ կատարեմ զայս։
Ասա, եւ եղիցի. յըղեմ ընդ քեզ զիմ ԶօրուԹիւն,
Եւ զՀոգիս Թեւապարփակ հովանաւոր զհամագոյիւք։
Երբեմ հրաման տուր անդընդոց լինել երկին ուերկիր յիւր չափս.
Ասահման են անդունդք եւ անոլորտ, քանզի Ե՛Մ ԵՍ՝
Որ ընդում զանբաւուԹիւն, եւ չիք ուրեք ինչ վայր Թափուր։
Ապարդոյրս յանձին խմում անպարագիր՝ ամփոփեմ զնա,
Եւ ոչ տարածանեմ ընդ ամենայն ըզբարուԹիւնս՝
Որ աղտան եւ ինքնիշխանն է 'ի գործել եւ կամ Թէ յոչ։

Հարկ եւ դէպք յիս ոչ մերձին, զոր կամիմ այն են բախտաբաշխք։ —
« Զայս ասաց Ամենակալն, եւ ըզպատգամն Բան Նորա՝
Որդեկան աստուածութիւն՝ 'ի գլուխս տարաւ եւ կատարեաց։
Անխորհրդոց են գործք Էին՝ երագ քան զժամ եւ ըզարժուն,
Այլ 'ի լուր մարդոյ ճառել չէք՝ բայց 'ի կարգ արկեալ խօսից,
Եւ զի միոք հոգանութեաց բաւել տանել զայն մարթասցեն։
« Յաղթանակ մեծ յոյժ եւ մեծ եղեւ յերկինս ուրախութիւն,
Յորժամ այս ամենազօր ծանուցաւ կամք, եւ երգս առին։ —
Փառք 'ի Բարձրեալն, հաճութիւն 'ի հանդերձեալ ազգդ մարդկան,
Եւ անդորր 'ի բնակութիւն իւր անվերդով խաղաղութիւն։
Փառք Նմին՝ զոր վերէժխընդիր ցասումն արդար մերկեալ ելեալ
Հալածեաց յաչացն ըզչար եւ յարդարոցն խորանաց։
Փառք Նմին եւ գովութիւն՝ որոյ հանճար հրաման եհան
Ի չարէ զբարի ստեղծուլ։ Ժանտից հոգւոցն փոխանակ՝
Զարմ ընտիր եւս 'ի թափուր նոցա տեղեաց կարգեսցի,
Եւ բարութիւն իւր զեղուցու յաշխարհս ու'ի դարս անկատարած։ —
« Զայս երգեցին դասակարգք, յարեաւ Որդին 'ի մեծն հանդէս
Ամենակալ զօրութեամբն առեալ շուրջ բակ եւ պըսակեալ
Լուսահրաշ ճառագայթիւք էական մեծ վայելչութեան։
Իմաստութիւն, սէր անբաւ եւ Հայր համակ փայլէր 'ի նմա։
Ըզկառոք Նորին հոսեն անթիւ քերովբք, սերովբք, Աթոռք,
Պատուութիւնք եւ զօրութիւնք, թեւեալ հոգիք, կառք թեւասպարք
Աստուածեան զենանոցին, որք 'ի հընմէ վաղընջենէ
Բիւրք բիւրուց զետեղեալք 'ի մէջ կըրկին պղընձի լերանց՝
Ի պահեստ կային պատրաստք աւուր մեծի ոտնականի,
Ամենայն կաղմիւք սարեալ հեծելութիւնք երկնագումարք։
Արդ շարժին դան ինքնակամ, զի կենդանի են հոգեկիրք,
Շքքոյ սպաս հարկանել՝ արքանեկիր Ցեառն իւրեանց։
Եբաց երկինք զիւր դրրունսն յաւիտենից՝ բոլոր ընդ լայն,
Շրջելով յոսկի ծրինիսքն նուագաւոր քաղցրը հընչմամբ,
Ինչպս տալ թագաւորին փառաց 'ի Բանն իւր գերազոր
Եւ 'ի հոգին, որ երթայր աշխարհս նոր նորակերտել։
« Կացեալ յերկնից յատակի՝ տեսին յայնմէն զանդունդն անբաւ
Ծովածուփ խրթին խանգարք վայրենիներս եւ հինանիկ
Ի մերկոց մոլեգնելոց, յալեաց ուռոյց լեռնակուտակ
Կոհակեալ 'ի պատ առնուլ եւ պաշարել զերկնից բարձունս,
Եւ խառնել կորուսանել ըզմիջավայրն ընդ դրմբեթին։ —
Լուռ լերուք, կոծեալ ալիք, խաղաղեցիր՝ անդունդք եւ դու, —
Ասաց Բանն ամենարար, — կարկեցարուք 'ի խեռելոյդ։ —
« Ոչ եկաց, այլ ամբարձեալ 'ի քրովբէիցն հոլաթեւս՝
Հայրենի փառաց շքքոնն իւր թաթաւուչ 'ի Վիհն եմուտ
Եւ յաշխարհն դեռ անե, զի լուսաւ Վիհն ըզձայն նորա։

Պարակից հրեշտակերաին ըղձեա երթայր պայծառ հանդէս,
Տեսանել զարարչութիւնն եւ զղօրութեանն ըսքանչելիս։
Կացոյց յայնժամ ըղձրախաղաց անիւն, յոսկի բաւն հար կարկինն
Հանդերձեալ յաստուածեղէն յաւիտենիցն գանձատուն,
Ի գրծել ըղծրաբոլոր տիեզերաց եւ համեից։
Ըղմի ոտն կարանինն կառուցեալ անդ 'ի միջակետ,
Եւ ըղմիւսն դարձուցեալ 'ի լայն եւ մեայլ 'ի խորան՝ ասէ. —
Ցայդ վայր տարածեաց, քո մինչեւ ցայդրը գնան սահմանք.
Այդ ահա լեցի, աշխարհ, ճշգրտատիպ քո չրջապատս։ —
« Այսպէս էն ստեղծագործեաց զերկինս եւ այսպէս խակ զերկիր,
Նիւթ անարդ եւ ունայն, եւ խոր խաւար ծածկէր զանդունդս։
Այլ ըղթեւս իւր զհայրական 'ի խաղաղ ջուրցն մրկանունս
Տարածեալ աստուածեղէն Հոգւոյն՝ եհեղ ոյժ կենսակիր
Ընդ զանդուածոն խոնաւուտ, եւ ջերմութիւն կենդանարար։
Բայց ընկղոյզ 'ի խոնարհ ըղմրուրքն սեաւ տարտարոսեան
Սառնասեր դրժոխային՝ զկենդանութեանն ոսոխ վերագ։
Անդ յայնժամ միահամեալ, գընդեալ յայնժամ ընդմանս 'ի նմանս,
Եւ բաշխեալ զայլն 'ի տեղիս տեղիս՝ սրփռեաց զոգն ընդ տարերս.
Եւ երկիր անձամբ յանձին ճոճեալ՝ յիւր կէան եկաց զեռեղ։ —
« Լիցի լոյս, — ասաց Աստուած. նոյնհետայն լոյսն արփեհաճեմ՝
Նախասկիզբն էից վերնիա բնութիւն՝ ծագեաց 'ի յանդընդոց,
Եւ եղեալ յարեւելից իւր խանձարրոցն՝ էառ գընալ
Ընդ մըռայլն օդատեսակ, յամել գընտաձեւ ծրարեալ փայլուն.
Քանզի արեւ չեւ էր, առ ժամն ինչ յամսրայարկն անդ օթեցաւ։
Եռեւ բարի զլոյսն Աստուած, եւ մեկնեցոյց կնսագընտովք
Ըզլոյսն 'ի խաւարէն, եւ անուանեաց ըզլոյսն տիւ,
Եւ զխաւար՝ գիշեր. եւ այդ եւ ցայդ եղեւ օր առաջին։
« Ոչ անց այն անտանելի՝ չերդեալ 'ի պարարն երկնախումբ,
Մինչ տեսին զնախծինն յերկից ցոլացեալ լոյս 'ի խաւարէն,
Օր ծնընդոց երկնի ուերկրի, զսիեղերաց ըլցին ոլորտս
Ի ձայն մեծ ցընծութեան եւ յաղաղակ բարեբանեալ,
Զոսկեղէնն հարին տաւիղս օրհներգութեամբք փառատրելով
ԶԻնն Աստուած եւ զգործըս իւր, զինքն երգեցին Արարչապետ,
Երբ նախկինն եղեւ երեկ եւ մինչ եղեւ նոսս վաղորդայն։
« Միւսանգամ՝ ասաց Աստուած.— Լիցի՝ մէջ ջուրց հաստատութիւն,
Եւ ընդ ջուրս եւ ընդ ջուրս եղիցի նա յանջրպետեալ։ —
Եւ արար զհաստատութիւնն Աստուած՝ պարդեալ յօդ տարրեղէն
Լայծ յրստակ թափանչշյ՝ ըսփիւռ տարած ոլորտապատ
Մինչ 'ի գոդրս հեռաձիգ կամարն մեծ պարունակին.
Կրըճիմ սեղմ եւ անխախուտ՝ արոհել զնեղբին ջուրսն 'ի վերնոց։
Զի զաշխարհ, որպէս զերկիր, կառոյց 'ի ջուրրը հեղասահս,
Յովկիան մի սառնորակ ծայրածաւալ, զերծ բացաձիգ

Ի պառաստող ամբոխից Վ ըհին, զի մի խորտաբորտ ծագքն
Յար եւ կիցք ընդ աշխարհի՝ զկազմածն ոգջոյն եղծցեն զսորա։
Եւ կոչեաց յօրինելոյ հաստատութեանն անուն՝ երկին.
Այսպէս ընդ այդ եւ 'նդ երեկոյ նուագեաց պարին զօրն երկրորդ։
« Ըստեղծեալ կայր երկիր, բայց խակակութ սաղմ խին դեռ՝
Ի խորոց ջուրցն անդընդոց ծրարեալ յարգանդ աներեւոյթ.
Ովկիան յերեսս երկրի ի ծաւալէր՝ ոչ պարապորդ,
Զի ծնընդադործ եւ ջերմահոտ խոնաւութեանքն տամկութեամբ
Զգունտ երկրի կակղեալ յեռանդն ածէր ըստ մայրն հասարակաց,
Զի թրրմեալ 'ի կենադործ հիւթ նոյական՝ առցէ յղենալ։
« Անդ յայնժամ ասաց Աստուած.— Որ 'ի ներքոյ երկնիցդ ջուրք՝
Ժողովեսցին 'ի մի վայր, տարրքն դամբք ելցէ 'ի վեր։ —
Նոյնժամայն երեւեալ յառնեն լերինք յաղթահատակք,
Ուսք եւ թիկունք նոցին լերկ եւ ապալեր կուտակեալ յամպս,
Եւ գրլուխք նոցուն կանգնեալ բարձրայօնակ մինչեւ յերկինս։
Որչափ 'ի վեր ամբարձան կոհակեալ բլուրք, նոյն 'ի խոնարհ
Գոգացաւ ծոց խորափոր եւ լայնարձակ, ջրամբար մեծ,
Յոր զեռան խայտալից վիժեալ սահանք թաւալադլոր,
Իբրեւ շիթք 'ի փոշոյ երաշտութեամբն ոլոռնացեալք։
Կէսք 'ի ջուրց անտի հասցեալ 'ի սառնաշէն ձուլին պարիսպ,
Կամ 'ի լեառնն սեպացեալ. այնքան առեալ երդութիւն
Ի մեծէ հրամանէն շուտասաղաղ գնացից ալեաց։
Զերդ բանակք 'ի կոչ փողոց, — քանզի լրաւ դու զբանակաց, —
Գումարտ խրմբին ըզդրօշուքն, այնպէս դրոյթքն լուծականք
Կոհակ առ կոհակ ընդ որ դառնին ելս հոլովին
Հեղեղատ սատիկ ուղղեալ 'ի շեպս առ լեփ առ 'ի թաւալ,
Իսկ 'ի գիւր դաշտ հովտաձեւ՝ հեղեհամբոյր սահեալ վրտակ։
Ոչ սարք, ոչ քարաժայռք ոռնակապին զհոսանսն զայն,
Այլ ընդ երկրաւ եւ կամ յերկայն ման զգալարուն վարեալ պրտոյտս՝
Հորդեն անձանց ճանապարհ, եւ 'ի կաւեայն յատակընթաց
Լայնակօսս պատառեալ եւ խորամէջս հատանեն ուրդս.
Որ գիւրին խին էր մինչ չեւ էր հրամայեալ երկրի Աստուած
Սարատեղ՝ բաց 'ի ձորոցն ընդ որս այժմ ուիք գետահեռեն
Աղնստղնեալ ձրգեալ անդուլ ըզդումարտակսն խոնաւուտս։
Եւ կոչեաց Աստուած երկիր ըստորանուտս տարրքն ցամաք,
Եւ ըզմեծն ըշտեմարան միաժողով ջրոցն՝ ծով։
« Տեսեալ բարի զայն՝ ասաց.— Բղխեսցէ զնոսա դալար՝ երկիր,
Ըզբանջար սերմանաւոր, եւ զծառատունկն պտղաբերք՝
Իւրաքանչիւր ըստ ազգի, որոյ յերկրի անդ սերմն 'ինքին։ —
Զայդ ընդ բանին՝ եւ երկիր մինչեւ 'ինոյն ժամ մերկատարք,
Ամայի եւ երիզուտ, անզարդ՝ տրմոյն յաչաց տեսիլ,
Արձակեաց սեզ փափուկ պրճնեալ զերեսսն բովանդակ

Դալարագեղ կանաչով. յայնժամ եւ տունկք երփնատերեւք
Աւժանայն փրթթեալ ծաղկեալ յերանդ երանգս նրկարէն՝
Զծոց իւր զբաւարթ արարին յանուշաբոյր պարարեալ հոտ։
Որոց այն ինչ գոյնք վառեալ՝ ծաղկեաց այգին ողկուզալից,
Սողոց դրդումն ուռուցիկ, եւ ցորենոյն ծիլ ծիլ ցոլումն
Խումբ առեալ կարգեցաւ 'ի պատերազմ յանդի իւրում,
Մորենի խոնարհ եւ թուփք զմացառախիտ խառնեցին հերան։
Այ՛ անդէն զերդ պարաւորք յարեան կացին ծառք գեղապանծք,
Եւ ձրգեալ պարզեցին ըզբազկարձակ կողերս իւրեանց
Մըրգաւէտ ծանրաբեռնիս կամ ծաղկահիւս մարգըրտայեռս։
Բարձրուղէշ անտառոք պրսակեցան բըլրոց գըլուխք,
Հովիտք եւ աղբերք 'ի թաւաթուփ փունջըս մայրեաց,
Գետք 'ի ծոցս վերջաւորս յընթացան ողջոյն ժապաւենեալք։
Յայնժամ երկիր երկին թուեցաւ, արժանաւոր աստուածոց տուն,
Հեշտավայր Ճեմարան՝ զբօսանուէ 'ի սուրբ իւր հովանիս։

« Սակայն չէ՞ էր տեղացեալ դեռ Աստուծոյ զանձրեւ յերկիր,
Եւ չէ՞ եւս էր մարդ՝ որ զարտորայն հերկագործէր.
Այլ բըղխէր 'ի գետնոյ ցօղատարափ խիզն շոգի,
Որ թանայր զերկիրն ողջոյն եւ զհամայն տունկս անդաստանաց,
Զորս յառաջ քան ըզլինել իւրեանց յերկրի արար Աստուած,
Եւ ըզբոյսըս հասնորին՝ մինչ չէ՞ աճեալ 'ի ծոցս կանաչ։
Հայեցաւ եռեռս Աստուած՝ զի էր բարի այն ամենայն,
Եւ երեկ եւ առաւօտ փոխերդեցին զօրքն երրորդ։

« Յաւէլ ասէ Ամենակալն. — Յերկնից 'ի բարձր ասպարիսին
Եղեցին լուսաւորք՝ մեկնել ընդ տիւ եւ ընդ գիշեր,
Ժամանակաց լինել նշան, աւուրց, տարեացըն բոլորմանց,
Եւ յերկնից հաստատութեան եղեցին ջահք ըստ հրամանիս՝
Լուսատու լինել յերկիր։ — Եւ այսպէս այս եկն 'ի լրբրումն.
Եւ արար լուսաւորքս մեծամեծս Աստուած երկուս, —
Մեծամեծս յօգուտ մարդոյ, — զմեծըն տուընչեան իշխանական,
Եւ ըզփոքրըն՝ գիշերոյ, փոխանակաւ. եւ ստեղծ զաստեղս
Եւ եդ յերկնից հաստատութեան՝ ծագել յերկիր, վարել զցերեկ,
Վարել զցայգ 'ի կարգս իւրեանց, մեկնել ըզլոյսն 'ի խաւարէն։
Ահնարկեալ Աստուծոյ 'ի գործըն մեծ՝ եռեռս բարի։

« Զարեգականն՝ գունս հրոցն՝ նախ յերկնաւորսն հաստատեաց մարմնոս,
Ի սկզբանն անլուսաւոր, թէ եւ բնութիւն արփենական։
Ապա զլուսին գընտաձեւ ըստեղծ եւ զընտաւ աստեղս հասակս,
Եւ ցանեաց համապիտ զարփիսն յերկինս իբրեւ 'ի դաշտ։
Հան ըզմեծ մասըն լուսոյն յամպածածուկ իւր խորանէն,
Ա՛ռ տարաւ եւ փոխադրեալ արկ զայն յանօթ արեգական,
Որ խորշիւք էր վրտարօք՝ յըմպել ծրծել ըզլոյսըն ըլոյ,
Կուռ եւ սեղմ՝ առ 'ի զնըշոյլսըն հաւաքեալքս պինդ ունել։

Այժմ է մեծ տաճար լուսոյն, ուստ այլ աստեղք իբր յաղբերէ
Դարմանին՝ առեալ լցեալ լոյս յոսկեձոյլ սափորս իւրեանց,
Անսի յոսկի մոլարն այդաստղ օծանէ զիւր մահիկեղէնս։
Ի տոգորս եւ կամ 'ի ցոլս ըզգուն ատացուած իւրեանց աձեն,
Թէպէտ հեռի յականէ մարդոյն նիաղ տեսանիցին։
Զառաջինն յիւր արեւելն երեւեալ ջահըն մեծափառ
Տուընջեանն իշխան՝ ըզդեցոյց լուսաթաղանթ ըզսիեզերս,
Խընդալից ձիգ ատպատակեալ բարձր յատպարէզն երկնից յիւր մուտս։
Յօրինէին պարս առաջի իւր Աշարուշ նրեալ եւ Բոյլքն,
Հոսելով յընդհանուրս ազդեցութիւն քաղցրաձայնալ։
« Աղօտաջահ քան ըզնա հանդէպ 'ի մուտս հարթակշնոր՝
Յօդս 'ի կախ լուսինն ականն արեւու կայր հայելի,
Ի նմանէն առեալ ըզլոյսն 'ի բոլորս դէմս իւր ուռճալիր։
Յայն 'ի գիրս հայեցուածոյն ոչ կարօտէր ինչ այլ լուսոյ,
Եւ եկաց մընաց 'ի տար նովին չափով մինչ 'ի գիշեր։
Յայնժամ լուսափայլեալ ծագեաց եւ ինքն ընդ արեւելս,
Կատարեալ զիւրքն շրջան յերկնից 'ի մեծն առանցից սեռն,
Եւ տիրեաց 'ի մասընմուտ բաժին իւրում իշխանութեան
Բիւրուք մանրը մանր արփեաք, բիւրաւորաք բուլից աստեղց,
Որ երեւեալ սրփուեցան՝ ոսկեկիսուած յօրինեալով
Զկիսագունսն երկնից զոր նախ զառաջինն անդ զարդարէին
Զահաք նոցին լուսաճաճանչք, էր որ 'ի մուտս եւ էր որ յելս։
Զլուարթ երեկն եւ այդ զլուարթ պրսակեցին զօրքն ջորրորդ։
« Եւ ասաց Աստուած։ — Հանցեն ջուրքն զեռուն բազմասերունդ
Արարած կենդանացու, եւ թռիցեն հաւք վերոյ երկրի
Ի նեղքոյ 'ներդաձակ երկնից հաստատութեան սաւառնաթեւք։ —
Եւ արար վիշապաձկունս Աստուած եւ զկնաւ շունչ կենդանւոյ,
Զամենայն կայսատ 'ի ջուրս եւ որ անդուստ էան ազդ ազդ։
Ըստեղծ եւ ըզթռչունսն թեւաւորս մին մի 'ստ տոհմից։
Եւ ետես զի էր բարի, եւ ընտսին օրհնեալ ասէ։ —
Աճեցէք, բազմացարուք, լցէք ըզջուրսդ ծովածիրս,
Ըզլճացդ եւ ըզգետոց, եւ բազմացին թռչունքդ երկրի։ —
« Իսկ եւ իսկ նեղուցք եւ ծովք, ծոց ամենայն, ամենայն խորշ
Եռացին յանթիւս սերունդ 'ի լուզակաց խուռն յոգնահոյլ,
Ոյց թեւոքն եւ ջինջ թեփովք ընդ կապուտակըն կոհակաք
Սող առեալ վրատս վրատս խութ եւ խրրուտս 'ի ծով գործեն։
Կէսք մենակեացք կամ ընդ ընկերս ըզբուտ իւրեանց ճարակին ջուռ,
Եւ շերջին յայրըս բրստոց, կամ խաղալով, փայլակըն սուր,
Ցուցանեն արեգական զվէտ վէտ շապիկսն ոսկեձամուկ։
Այլք հեշտիս 'ի գաղտակուր խեփոր մընան տամուկ խայծին,
Կամ 'ի զրահ պատեհաղէն սպասեն որսոյն ընդ խարակաւ։
Կորաքամակ դեղինիք եւ որթք ծովու խոպան 'ի խաղաղ ջուրս։

Ինարի, անձնանի եւ ահագին վիշապ ձրկունք
Թաւալեալ յաղթահարեալ ըղմեծածոլին՝ յուզեն մրրրիկ։
Անդանօր Լեւիաթան, սոսկալիթիսարն 'ի կենդանիս,
Ի միանունս անդընդոցըն տարածեալ իբր հրրուանդան՝
Կայ 'ի քուն կամ դնայ 'ի՛ լիլիս, ծրփին ցամաք ինչ թըւեցեալ,
Ամանչքն 'ինեբբրս ձրգեն, քթափողք ժայթքեն ծով մի ողջոյն։
« Մեղմախառն անձաւք՝ ճահիճք՝ ափունք հանեն զանթիւ ձագունս
Ի ձրւոցն որ նոյնհետայն բեկեալ 'ի դէպ ջախջախանօք՝
Յուցանեն ըղմերիանդամ մանկանն, որ փոյթ փեարազգեցիկ
Եւ 'ի թռիչքս պատրաստեալ թեւօքն եղեալ վերասլանան,
Եւ կանչիւք յաղթանակօք սաւառնացեալ յօդըս վերին՝
Քամահեն զերկրաւ՝ սեսեալ զոյն 'ի հեռուստ ընդ բարձր ամպով։
Ասա արծուին եւ արագիլ 'ի քարակտուր ժայռս ափափայս
Եւ 'ի գիտակըս մայրեց կառուցանեն ինքեանց դադարս։
Ոմանք հոլաթեւեն յոխորտաբար յօդոյն գաւառ,
Խմաստնագոյն կէսք 'ի ձեւ մրտեալ՝ համուռ գրծեն շաւիղս.
Խեղամուռք ժամանակաց՝ ըղկարաւանսըն զօդաչուս
Արձակեն, որոց յերկրի եւ 'ի ծովուց վերայ թռուցեալ՝
Օժանդակեալ միմեանց թեւօք դիւրին գործեն զիւրեանց փախուստ։
Խոհական խորդոցըն սուք՝ այսպէս 'ի հողմս վերելեակք
Ամի ամի զհետսըն ուղղեն, յանցին 'ի ծուփ ծածանին օդք
Մաղեալք եւ հոսեալք անթիւ փեարովքն եւ անհամար։
Իսկ թըռչնիկք ոստ 'ի յոստոց զսուրակս երդովքն առնեն ուրախ,
Թօթափեալ զոլրն ցերեկ ածեալ ըղթեւսըն նրկարեն.
Եւ անդէն խակ պանծալին ծիծառնուկ ոչ լըռէ յերգոյն՝
Գեղգեղեալ ըզցայգն 'ի բուն զողբանրբագ զիւր հեծուլթիւնն։
Այլք յարծաթի ծովակ՝ 'ի գետս 'ի՛ լիլիս լուսանան զմանրաթեւ լանջս.
Իսկ կարապ՝ կարակնակերտ ուլամբ՝ յերկուս լուսափայլ թեւս,
Ի ըդիկ շրքեղաշուք, թեւճակաձեւ լայնչն թաթիւք
Մրսիրճ հարեալ շուրջ ածէ 'ի ըդարանս ըղպերճանս իւր.
Ըզլսոնաւ տարրըն ըքքեալ բաղում անգամ թեւատարած
Եղանկ վերանայ 'ի միջնաբերձ օդոյն գաւառ։
Այլք երկրակոս գեանաղնաց յոտիցն 'ի ճեմըս պարծ շրջին,
Աբաղաղ՝ ցրցունաղարդ փղակարդաց լրանն ժամուց,
Եւ միւսն այն՝ դեղատարուն փաղփեալ 'ի գոյն սեպագէս երմենից
Ծիրանի ծիածանին եւ աստղախառն ականողեաց։
Օրինակ զայս ջուրք ըցեալ ձրկամբք եւ օդք թըռչնոց տարմիւ՝
Վաղորդայնն եւ երեկոյն ըզհինգերորդ ասնեցին օր։
« Հուսկ ուրեմն վեցերորդ եւ վերջին օր արարչութեանն
Ի հընչիւն երեկորնեայ եւաւուտին տաւրաց ծագեաց.
Եւ ասաց Աստուած. — Հանցէ երկիր ազգ ազգ շունչ կենդանի,
Հօտ, անդեայ եւ սողուն, գազան երկրի զարմանազան։ —

Լաւաւ երկիր, եւ անդէն բացեալ զարգանդն արդասաւոր՝
Ծընաւ միանգամայն սրարածոց կենդանի հոյլս,
Կատարեալ կերպարանօք՝ անդամոցատ եւ բարգաւաճս։
Ի հողոյն՝ երբ յերբ խրշտեաց՝ երեվայրի եւ կանգնեցաւ
Ի բնիկ կայսն յանտառ անկոխ, 'ի թուփ՝ թաւուքթ կամ 'ի քարայր։
Զայդ առ զոյգ ընդ ծառովք յարեան կացին եւ ընթացան,
Նախիրն 'ի դաշտ մարգագետին, կէսք ցիր ընդ ցիր առանձնակեաց,
Ալեք երամ երամ հոլեալ հաւանրնկեր արօտականք,
Եւ բըլնեալք 'ի գեանոյն 'ի յոգնախուռմբ տողեալ ջոլիր։
Ի ուրեք զի հողակոշտք պարարտաբօտ՝ ծնանին զերինջ,
Եւ է՝ զի կիսանձնեայ երեւեալ շէկ առիւծ մագլէ
Ելանել զերծուցանել ըզկեսակողմ իւրոյ մարմնոյն։
Եւ գոգցես 'ի կապանոց ինչ ճողոպրեալ, եւ ոստուցեալ
Կանգնի կայ եւ թօթափէ զնայատաբէտ բաշանն գեղապանծ։
Ինձ, վագր եւ ընծառիւծ յայտուսին եղեալ խըլբրդաբար,
Սահեալ զանձամբք ընկենուն ըզիրարեալ հողն կոյտ 'ի կոյտ։
Երագտան եղջերու բառնոյ յերկրէ զգլուխն ոստախիտ,
Բեհմոթ, յաղթանդամն յորդիս երկրի, հաղիւ զբրէ
Զվիթխարն հասանն հանել թափել յիւրմէ կաղապարէն։
Գեղմնաբարձ եւ բառաչոտ խաշն որպէս տունկքս բուսանի։
Գետաձի, թեփոտ տիտեռն երկմիտք ընդ ծով եւ ընդ ցամաք։
« Ամենայն սողուն երկրի, որդն եւ ժիժմակ ծընան համայն։
Են որ զձագուսկ հովահարան ըստ օրինի շարժեն թեւոց,
Եւ զմանրիկ ըզբարեջափ սրճնեն պատկերսն յերանդ երանդ
Եւ 'ի թոյրքս ճոխուքթեան տերճապայծառ ամարայնոյ,
Ի խայտուց ոսկեճամուկ, կապոյտ՝ կանաչ եւ ծիրանի։
Եւ են՝ որ խրեւ գիծ մի 'նդ քարշ սանին զերկայն իրանս՝
Յերկրի զչեռսն դրոշմելով ման ըզմանիւ ոլորտապտոյտ։
Սոքին ոչ ամենեքեան են 'ի նուաստից բնուքթեան 'ի կարգ։
Կէսք յօձից, տոհմ սոսկալի երկայնուքթամբն եւ թանձրուքթամբ,
Գալարեն ըզքընթըրնոցսն կամակոր, եւ յարեն թեւս։
« Զեռայ նախ մերջինն սնօրէն՝ հանդերձելոց կանխագուշակ,
Սիրտ մի մեծ ընդգրկեալ 'ինքնաձեւ դոյզն հասակի։
Օրենակ թերեւս յապայս իրաւակիրնոցն զուգուքթեան,
Տաւալէ յուխտ միաբնակ ըզտոհմաթիւս խառնաղանձին։
Ըզկնի մեղուն խգաբուն երեւեցաւ եւ գունդագունդ,
Այն որ զիւր այր դատարկապորտ՝ սընուցանէ քաղցրաճաշակ,
Որ շինէ զերբջաց խրցկունսն մոմակերտս մեղրաբուխս։
Ալեք անթիւ են եւ քեզէն բնուքթեան նոցին ես խելամուտ,
Եւ անուանս եդիր նոցա՝ զոս աւելորդ է երկրորդել։
Եւ օձին չես անհրմուտ՝ խորամանդին ճրճեաց վայրի,
Որ է զի է անհեղեղ, յաղթամարմին, պլղընձակնեայ,

Թաւարաշիւք քասքնելի, Թէպէտ եւ քեզ անիծասակար՝
Ձիշնէ ինչ մեղանչել, լուեալ կոչդդ եւ գայ հրլոս։
« Արդ երկինք 'ի փառս իւրեանց Նշոդլեին համասպայծառ,
Եւ Թաւալ առեալ գնային ըստ հոլովմանց բուռըն բաղկի
Մեծաղօր սիրդբնաշարժին արկելոց նախ յընթացս իւրեանց։
Եւ երկիր բոլանդակեալ 'ի հանդերձան Ճոխապաճոյճ
Ծիծաղէր զուարթածաղիկ, օդ՝ ջուր՝ երկիր էին խրատեալ
Ի Թրուչուն հաւ՝ 'ի լողորդ ձուկն՝ յանասուն երկրահոլով.
Եւ օրրն վեցերորդ չեւ տակաւին էր եղեալ յանդ։
Պակասէր զլլուս գործոցն, արարածոցն ողջոյն աւարտ,
Ըստեղծուած ոչ վայրապակ, ոչ ըստ այլոց պաճարամիտ,
Այլ սրբբուԹեամբ բանին պրճնեալ՝ կանգնելով զնաբ ուղիղ հասակ,
Եւ պայծառ Ճակատուն, անձին ծանօԹ, ուղղեսցէ զայլս.
Եւ մեծանձն՝ ասսի՝ նդ երկինս հաղորդակից, այլ՝ ինորհատոյց՝
Ճանաչել եւ խոստովան լինել զնաբոց բարեացն աղբիւր,
Եւ սիրա ձայն աչք անդր ուղերձեալ՝ եւանդնալից երկրբպագել,
Եւ պաշտել զԱստուած բարձրեալ՝ որ զլուս եդ զինքն իւրոց գործոց։
Անդ Հայրն անեղ ամենակալն յաւիտենից, — եւ ոչ էջ նա, —
Առ որդին իւրական յայտնաբարբառ զայս խօսեցաւ. —
Ե՛կ ըստ մերում պատկերիս եւ նմանութեան արասցուք մարդ,
Հրամատար ձրկանց ծովու, Թրուչնոց երկնից եւ անասնոց,
Եւ երկրի եւ ամենայն սողնոց զեռնոց յերեսս երկրի։ —
« Զայս ասացեալ՝ ըստեղծ ըզքեզ, Ադամ, ով մարդ՝ հոգ երկրի,
Եւ փրչեալ յընդունելս քո զկենացդն շունչ՝ արար ըզքեզ
Ի պատկեր իւր ըստ Ճշդրիտ աստուածեղէնն պատկերին,
Եւ եղեր շունչ կենդանի. հաստեալ ըզքեզ յարու բնութիւն՝
Զկենակիցդ՝ եդ հաստատեաց առ 'ի սերունդս զաւակի։
Եւ օրհնեալ անդ առ նոսին ըզմարդկութեան ազգ եւ ասէ. —
Աճեցէք, սերեցարուք, լցէք զերկիր եւ նուաճեցէք,
Տիրեցէք ձրկանց ծովու, Թրուչնոց երկնից եւ կենդանեաց
Որ խլբրտին սողին յերկրի՝ ուր եւ ուրեք ստեղծեալ կայցեն. —
Զի չէս են տակաւին տեղիք անուամբ նշանակեալ։
« Անտի զքեզ, որպէս գիտեաղ, 'ի փափկութեանդ ած դարատան,
Յաստուածատունկ դրախտիդ 'ի ծառս ակնահաճոյ եւ քաղցրաբուղս,
Եւ շնորհեաց քեզ Ճոխաձիր զնոցին խայրիս 'ի կերակուր։
Այս են 'ի մի վայր համբրէն ազգ ազգ երկրի, անբաւ գունակ,
Սակայն ծառն որ զգիտութիւն ջամբէ զբարւոյն եւ ըզչարի՝
Զեռնպահ լինիր պրտղոյն. որ օր ուտես՝ զմահ Ճշմարիտ։
Պատուհաս եղեալ է մահ, ուղղեա զգուշեաւ զքո զսխորժակ,
Գուցէ քեզ հասցէ մեղք եւ սեւագէմ սպասեակ իւր՝ մահ։
« Կատարեաց ասս Աստուած, եւ յամենայն յոր եւ արար
Դարձաւ հայեցաւ, զհամայնն եռես համակ բարի.

Եւ երեկոյ եւ առաւօտ ըղձեցերորդն յանդ հանին օր։
Բայց 'ի նմին եւ Արարիչն 'ի յանաշխատ իւր վաստակոցն
Հանգուցեալ դարձաւ 'ի վերս անդր 'ի բարձունս՝ յերկնից երկինս
Ի վեհավայր իւր խորան առ 'ի նկատել անդուստ զաշխարհս,
Զնորակերան յաւելուած 'ի տերութիւն իւր ինքնակալ,
Ցեսանել՝ իբր 'ի բացուստ երեւոյի յիւրմէ գահէն,
Զի բարի, զի վայելուչ՝ մեծի մրատոյն իւրում նրման։

« Ամբարձաւ 'ի ձայն գոչմանց եւ քաղցր երգովք տաւղաց բիւրից
Հրեշտակամբոխ նուագածութեանց, երկիր ընդդէմ հընչէր եւ օդք։
Ցիշեա եւ դու՝ զի լուար։ երկինք՝ եւ բնաւ աստեղաց դասք
Որոտացին, եւ մոլորք կացին 'ի կայան յունկընդրութիւն
Ի շքեղ ածնուստ հանդիսին հրաշակաւ եղան, որ երգէին։ —
Բացեք դրունք յաւիտենից, երկինք բացէք զկենդանի դուրսդ,
Զի մտցէ մեծն Արարիչ յիւրմէ գործոյն դարձեալ փառաք,
Ցիւրոց անտի վեցօրէ աշխարհասատեղծ արարչութեանց։
Հա՛պա բացեք, եւ ասասի յառաջ բացջիք յաճախութեամբ,
Զի բերկրեալ Աստուածականն հաճեսցի ասէպ եղանել յայց
Բնակութեանց արդար մարդոց, եւ յանդ՚ղակի անդրը խառնուրդս
Ցըղեսցէ զթեւոտ հրեշտակս վեհից շնորհացըն պատոդամաք։ —

« Փառացի զայս պարակիցքն 'ի համբառնալըն նուագէին։
Ինքն ընդ երկինս՝ որ մեծաբաց ցելոյր ըղդրունսն արփիափայլ՝
Այց 'ի յարին ասասուածառեմ յաւէժափառ գնացեալ զուղղորդն։
Արահետ ըսյն ընդարձակ՝ որոյ փոշի իւր ոսկեհատ,
Եւ յատակն՝ յարփից հարեալ, որպէս աստեղք երեւին քեզ
Ընդ Յարդդոյն՝ ընդ կաթնածիրըն պողոտայ՝ զոր նշմարես
Գիշերայն իբրեւ կամար արփիախուռն ընդելուզեալ։

« Իսկ յերկրիս՝ երեկն յայնժամ եօթներորդ եղեալ յԵդեմ։
Զի արեւն 'ի մայր դարձեալ, եւ կարապետըն գիշերոյ
Յարեգ կուսէ գայր Խաւարակ։ եւ անդ ահա 'ի լեռանըն սուրբ,
Բարձրագահ երկնից դագաթն, աստուածութեանն արքեան աթոռ
Անասան յաւիտեան, ամրակառոյց եւ անկասկած,
Զօրութիւնն որդիական հաս բազմեցաւ ընդ մեծի Հօրն,
Այն որ 'ի նմին կացեալ տեղւոջ՝ ամենավայր իւրով աղդմանքն
Էր երթեալ յաներեւոյթս յարարչութիւնքն պատուիրեալ,
Որ եւ ինքն իսկ է սկիզբն ամենայնի եւ կատարած։
Եւ անդ լրեալ 'ի վաստակոցն՝ օրհնեաց սրբեաց զօրն եօթներորդ,
Զի այն օր դադարեալ յամենազան գործոցն հանդեաւ։
Այլ ոչ թէ սուրբ լրութեամբ ածնեցաւ այն։ գործ հաս տաւղի,
Եւ չլրեաց։ ծանրը սրբենդ, թրմբուկ եւ բնաւ իսկ երգիոնք
Մասնափոխ քաղցրերգեանց, եւ ամենայն ձայնք ալէբանք
Եւ որ 'ի քնարս ոսկեթելքս, զուդեցին 'ի մի խառնուած
Բզնբաւդսն պարակից կամ միաձայն քաղցրահընչակս։

Ամպ խընկոց յոսկի բուրվառաց ծըխելոց ծածկեաց ըզլեառն,
Ապարչութիւնն եւ արարածքն վեցօրեայ՝ յերդ արկան. —
« Մեծ են գործք քո, Տէր Որդեդ, եւ անսահման՝ քո զօրութիւնդ.
Ո՞ր միաք հասցեն 'ի քո չափ, եւ ո՞ր լեզու պատմեսցէ զքեզ:
Մեծ եւս արդ 'ի քում դարձիդ քան յեւ մարսի սկսյեց Զուարթնոց.
Յայնմ աւուր՝ շանթիք քո զքեզ պանծացուցին, բայց մեծ եւս է
Սաեղծանել քան վասնել զեւս. ով այն որ քեզ կարէ սանանել,
Թագաւոր ամենազօր, կամ կէտ դընել քում տերութեանդ:
Վանեցեր դիւրեաւ զզոռոզ գուպար հոգւոցն սալըստամբից,
Եւ զուռայն ցրեցեր խորհուրդս յուսացելոցն յամպարիշտ սիրտ
Նուաղել ըզքեզ եւ 'ի քէն զերկրրպագուացդ հանել գումարս:
Որ զքեզ զերկել նրկրրսի, իւրում մրտացն ընդ հակառակս
Առաւել յերեւան 'ի փայլ ածէ զքո զօրութիւնդ:
Դու զաղութիւն ոսոխացդ 'ի ձեռն առեալ՝ հանես բարիս,
Նորակերտ աշխարհս վրկայ, նոր ինն երկինք ոչ բացական
Կառուցեալ 'ի դրանց երկնից եւ 'ի տեսիլ աչաց հանդէպ
Ի վերայ սառնատեսակ ապակեղէն սեռին ծովուն,
Գոգ յանբաւաս լայնածիր ասահեղալից արփիապարդ:
Եւ մեն մի աստղ է Թերեւս աշխարհ կարգեալ 'ի բնակութիւն,
Այլ դու զնոցա գիտես Ժամ. յորոց միջի կայ եւ երկիր՝
Տուն մարդկան հեշտավայր եւ գրդռարան համբուրելի,
Խորանիստ ծովոնին հանդերձ շուրջանակի ծայրածաւալ:
Ո՛վ երկրս մարդիկ ւորդիք մարդկան երանելք,
Զորս Աստուած այնպէս սիրեաց՝ ըստ պատկերի ստեղծեալ իւրում
Անդ օթեալ, պաշտել ընդնա եւ փոխարէն թագաւորել
Ի վերայ ձեռակերտաց իւրոց յերկիր՝ 'ի ծով կամ յօդս,
Եւ սերել երկրրպագուաց տոհմ եւ ծընունդ սուրբ եւ արդար:
Արդարոք երրերջանիկ՝ թէ ծանիցեն զնւրեանց նրսիհ
Եւ տոկ 'ի տեւս պինդ կայցեն յիրաւասէր արդարութեան: —
« Երգեցեն զայս եւ արփին հընչէր գոչէր ալելուս.
Զայս օրինակ սրրբեցաւ նրւերական օր շաբաթուն:
« Ծայրալեր այսուհետեւ կարծեմ խընդրոցըդ հատուցեալ,
Որ ըզծին տիեզերաց եւ զհանդամանս հարցեն զեկց,
Եւ որ ինչ այլ միանգամ քան զկիշատակդ քո նախկ,
Զի ուսեալ քեւ ապայք եւ հրահանգեալ առցեն 'ի միտ:
Թէ քո եւ այլ ինչ է հարց ըստ մարդկեղէն չափոյ՝ խօսեաց: »

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

*Հարցանէ Ադամ զԻսայիայէ զշարժմանց երկնային մարմնոց, եւ յետ տարաստամ պատասխանւոյ՝ խրատի կարեւորագունից ՝ի խնդիր լինել։ Իսկ նորա ցանկացեալ յերկար վայելել ՝ի հիւրն երկնաւոր՝ պատմէ նմա զլինելութիւն իւր, եւ զանդրէն իւր ընկեր ՝ի միայնութեանն, եւ ընդունել զնա. եւ զկնի այլոց ինչ բանից զնմանէ, կրկին խրատեալ զնա հրեշտակին՝ վերանայ։*

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Վախճանեայ Զբաւութիւն, եւ այնպիսի քաղցրը բարբառ
Եթող յոտնին Ադամայ, զի դեռ կարծեալ թէ խօսիցի՝
Առ վայրկեան մի եւս անշարժ 'ի լուր նորա կայր տակաւին։
Հապա երբ այն ինչ զարթուցեալ՝ երախտագիտութեամբ սրտիւ ասէ.
«Զո՞ր շնորհս բաւական, կամ զո՞ր արիտուր զուգակրչեմ
Ունիցեմ քեզ՝ վերստանդ ստուածային՝ մատուցանել,
Որ զգիտութեան զեմ պատուք այդչափ առատ բաշխեմք հարեր,
Զիմեալ սիրողաբար Ճառել ինձ զերս անբընական,
Այժմ եկեալս յանկարծուրս ինձ 'ի զարմանս եւ հեշտութիւն,
Եւ 'ի տալ փառս արժանիս առ վերհատուն Արարչապետ։
Այլ դեռ կան ինչ խընդրականք՝ զոր քո եւեթ է լուծանել։
«Երբեւ յայս աբանչելարուեստ կազմած՝ յաշխարհս յայս ակնարկեմ
Յօրինեալ յերկնէ՝ յերկրէ, եւ մեծութեանցն առնեմ հանոր,
Առ երկնիւք՝ երկիրս է նիշ մի մանրատանգ փոշւոյ հատիկ,
Առ ասաեղքք իսկ մի առ մի՝ որ հիւ գալ թուին յանպարզոյր ծիրս, —
Ում վրկայ՝ հեռակցութիւնն եւ առօրեայ դարձն է երագ, —
Առ 'ի զոյս միայն եւեթ ծագել ընդ տիւ մի եւ գիշեր
Ըշնաբեմ հողագնտովս եւ զմանրատանիր այսու կիսիւս,
Ումեկս յայլ ինչ ըսպաս 'ի ընդնալիր կալ տեսչութեանն։
Զարմանան միաք իմ յաձախ, զնարդ բնութիւն զգաստ ուխտատուն՝
Այսպիսս արկեալ ինչ չափ եւ պայմանս անհամեմատ,
Ճոխ ձեռամբ 'ի գեղեցիկ մարմնոց արարսն զբաշխեալ,
Յայդ պէտս եւեթ, որպէս թերւի, բազմացուցեալ ըզմեծամեծսն,
Եւ այսպիսս կարդեալ գընտիցն անդուլ շրջանս օրըստօրէ։

Իսկ երկիր, որում դիւրով եւս էր դառնալ ընդ սուլ բոլոր,
Ի նիստ հանդերստեան՝ յաղնուապուռնէն առեալ պաշտօն՝
Ունի զիւր պէտս անխաբելիս, ընկալեալ լոյս եւ Ջերմութիւն,
Իբրեւ զհարկ ինչ անոլորտ անապարագիծ արշաւանին՝
Ածեալ մատուցեալ անհիւթական խնն հապճեպով.
Հապճեպ սուր՝ առ որ նիստ են թիւք անթիւք 'ի հաշիւ։»

Զայս նախահայր մեր խօսեցաւ, եւ կերպարանքն յայտ արարին
Զի եմուտ յուսրմնատենչ մրատացութեւ բարձանցըն խոկ։
Ում Եւա լեալ իրազեկ՝ ուր մեկուսին նրատէր 'ի տես,
Մեծաշուք գեղեցկանալ եւ շնորհաւէտ անձին ձեմիւք
Որ տային տեսողին խանդաղութեալ զի անդ կացցէ՝
Յարուցեալ հետեւեցաւ 'ի միրգըս իւր եւ 'ի ծաղկունս,
Տեսանել՝ եթէ բողբոջք եւ փթթիք ծաղկանց՝ իւր ձեռատունկք՝
Բարգաւաճ արդեօք լցեն. որ եւ յոսին իւր բղխեցին,
Եւ 'ի սիրուն ձեւին հրպեր՝ զբարձախառնն զարդացան։

Ոչ զի բանքն 'ի քիմիս իւր ոչ քաղցրացան՝ եւ եւ գինաց,
Կամ թէ իւր բարձրագունից անպաւական էր լրսելիքն,
Այլ թողցեր զայն հեշտութիւն՝ զի յԱդամայ լուիցէ միայն,
Պատմական նախամեծար քան ըզհրեշտակն ընտրեալ զիւր այր։
Առաւել մրատանել սիրէր ընդ իւր 'ի հարցուփորձ,
Գիտելով զի արտուղի եւ յանուշակ ինչ ելցէ նա,
Եւ գրգռանօքն ամուսնական լուծանիցէ զբարձրը խրծրիծան.
Առն իւրում ոչ լոկ բարբառ շրթանցն էր իւր քաղցրահամբոյր։
Ո՛հ, ո՞ւր այժմ ելցէ գտանել զուգից ամոլ խնն այպտունակ՝
Սիրով ընդ միմեանս եւ վայելուչ կապեալ շրքով։
Մեկնեալ հեռացաւ Եւա 'ի ձեռն ատտուածուհւոյ.
Զէր միայն, զի գրշնոյն հանգոյն առ իւր ընթացակիցք՝
Անաժին կան միշտ շընորհք սիրահրաւոյլք սրբատաճոյք,
Եւ զիւրեւ շուրջ ընթացեալ յամենայն աչս անձկայրեաց նեսք՝
Ըզձակերտոլս առնէին անդ անմեկին մրնալ նրմա։

Եւ Ռափայէլ բարեեր եւ հեշտալուր՝ առնէ այժմիկ
Հարցուածոյն Ադամայ՝ զորոս մատոյց՝ պատասխանի. —
«Ոչ բասրեմ ինչ ըզքեզ վասն խնդրոյդ եւ քննութեանց.
Զի աշխարհս իբրու մատեան է Աստուծոյ բաց առաջիդ,
Ուր կարես ընթեռնուլ ըզհրաշակերտան եւ ուսանել
Զյեղանակս իւր եւ ըզժամն, զաւուրս՝ զամիս եւ ըզտարիս։
Առ դոցին կալ 'ի վերայ, յուլիզ հաշիւ թէ մատուցես,
Զէ ինչ փոյթ թէ երկինք եւ կամ երկիր գայցեն 'ի շուրջ։
Մեծն այն ճարտարապետ խմաստութեամբ զայլսն թաքոյց
Ի մարդոյ եւ հրեշտակէ, եւ ըզգաղտնիս իւր չմերկացաւ
Ի խոյզ նոցին՝ որոց արժան է մանաւանդ ըզքանչանալ։
Իսկ թէ կամք լցեն նոցա համարձակել ինչ 'ի կարծիս,

Զ յօրինուածն երկնից տրւեալ է 'ինոցուն բանից պայքար,
Զի զծաղու Թերեւս դայցէ 'նդ նրբրին Թրւիան եւ զաղիպզիուն,
Մինչ երբեմն առցեն ձուլել զերկին, Թրւել զասատեղաց բոյլս:
Քանիսն ըզշինուածն հաստահարուստ ձեռագիրեն,
Որպիսիս կառուցեն եւ քակեսցեն, եւ հնարիցեն
Բարեբեալ ըզկերպարանան. ոչպէս տայցեն զգլնտիւրն շուրջ
Բոլորակս մի զմիով կարակնահատ ուարտաւազիկ,
Շրջանակ, մակաշրջան, շաւիղ զշաւղաք ծրրեալ 'ինման:
Զայս 'ի քո բանիցդ հանեմ՝ որ առաջնորդ կացցես Թոռանցդ,
Եւ համարիս Թէ մեծամեծքն եւ լուսաւոր ջարտին մարմնիք
Հարկանեալ փոքունց ըստաս եւ անլուսից, եւ ոչ երկինք
Հատանեալ անցանեալ ընդ այնպիսի մեծ ասպարէս,
Ուր լոկ 'ինիստ երկիր անշարժ յայնր ընթացից վայելէ շնորհ:
Խորհեա նախ, զի մեծութիւն եւ փառք ջեն կից աղնիւութեան.
Փոքր եւ անլոյս առ երկնիւք երկիր ունի սերտ լաւութիւնս
Առաւել քան զարեգակնն լուսաւոր՝ բայց անբեղուն,
Ոյր ասալքն անգործ յինքեան՝ ազդեն յերկիրս այս արգաւանդ.
Այսր հասեալ շոլն ապիկար ըզգենու զիւր կար զօրութեան:
Նա 'ւանիկ ջահքդ լուսարփիք եւ ոչ երկրի կան ինչ համբուն
Ի հարկի ծառայութեան, այլ քեզ եւեթ երկրաբնակիդ:
« Իսկ երկնից անեղը ոլորտք՝ ըզբարձր ըզմեծ վայելչութիւն
Պատուեսցեն զԱրարողն, որ կառուցեալ մեծատարած՝
Զբզեաց ըզծերն յայն հեռատան՝ զի մարդ 'ի միտ առնուցու,
Թէ բնակութեան չէ այն իւր տուն՝ շինուածքն մեծ եւ լայնատարը,
Զոր ընուլ ոչ բաւէ՝ բնակեալ յանկեան ուրեք փոքու:
Զայլոց պէտս յոր ըստեղծան՝ լաւ եւս գիտէ ամենատէրն:
Ըզպրընթացս անթիւս անուտ՝ գէր զօրութեան գրեալքիր Էին,
Որ կարօղն է տալ նիւթոյ երաղութիւն ինն հոգեպէս:
Դու մի դանդաղ զիս կարծեր, որ յայգանալ ժամուն մեկնեալ
ՑԱտուծոյ գահէն՝ յերկինից, նախ քան զմեջօր հասի յԱգեն,
Ասպարէս անչափելի՝ անուանելի Թուոց համարոյ:
« Զայս ասեմ՝ ըզբարժուն երկնից եղեալ ինչ հաւաստի՝
Առ 'ի ցոյց խարխուլ հիմանց կարծողական քոյդ երկուանաց,
Ոչ Թէ զնոյն հաստատիցեմ, Թէպէտ եւ այնպէս Թուիցի քեզ՝
Որում՝ ասա յերկրիս վերայ վիճակ հասեալ է բնակութեան:
Արարիչն, առ 'ի մեկնել զիւր Ճանապարհն 'ի մտաց մարդոյ,
Ցայն զերկինս անչատ յերկրէ, զի յանդրգնեալ ակն հողեղէն՝
Կորիցէ 'ի բարձրաթռիչս իւր յանօգուտ եւ առաւիր:
« Իսկ զինչ, Թէ արեգակն 'ի մէջ կայցէ տիեզերաց,
Եւ այլ աստեղք ձրգեալ յիւրմէ եւ կամ յանձանց ինքնին դզրդեալ՝
Պարիցեն ըզնովաւ 'ի շրջրջաբերս յեղանակեալս:
Ի վեցեակ ահա մոլարսքն նրշմարես խոտոր ընթացս,

Է զի բարձր, է զի խոնարհ, երբեմն անխուլ, յառաջադէմ,
Յեռախաղաց կամ դադարուն. զինչ թէ երկիր եւս եօթներորդ,
Թէպէտ եւ թըւեցեալ համակ կայուն եւ անխըլիրտ,
Շարժիցի յանըզգայս երբեակ շարժմամբք զանազանիւք։
Զի թէ ոչ, դու զարժմունսն ընծայեացես պէսպէս գօտեաց
Դիմելոց ընդ հակառակս՝ հատանելով ըզնէզ կամարս.
Կամ զական արեւու հատանիցես զաշխատութիւն,
Եւ զճախրասլաց տուընջենային եւ ցայգականսն շրընչանան,
Կարծեալ անտես՝ քան զասեղս 'ի վեր՝ ցայգոյ եւ տուընջեան ուղ։
Այլ՝ քեզ ոչ եւս այդմ իցեն կարծեացըդ պէտք, եթէ երկիր՝
Ինքնօրէն հնարագիւտ՝ խընդրիցէ զոյս գնալով ընդ եւս,
Եւ միւսով կիսագընթաւն յետոյ նշուլից արեգական
Գիշերոյ հանդիպիցի, յորժամ մինչդեռ միւս կիսագունա
Թաթաւեալ կայցէ 'ի լոյս տուընջենային պայծառապայլ։
Զինչ դարձեալ, եթէ եւ լոյսն այն ցոլացեալ առ 'ի յերկրէ
Ընդ թափանցիկ մեծատարած միջնօդն՝ իցէ երբեւ զասեղ
Յերկրագունսն լուսնին՝ լուսաւորել ըզնա 'ի տուէ, —
Որպէս նա ինքն զերկիրս ջահաւորէ 'ի գիշերի, —
Փոխարէն նըմին՝ թէ են եւ նորա հող, դաշտք եւ բընակք։
Ցեռանեա դու 'ինմա հանդոյն ամպոց ինչ գեղուեթիւնս.
Ամպք լինին անձրեւաբերք, անձրեւք կակղեալ զնորա գետին՝
Տոհմականս արդիւնատրին վիճակելոցն անդրէն 'ի ստունդ։
« Եւ գլացես այլ եւս արդեօք արեգակունսը լուսնաւորս,
Հաղորդել առ իրեարս զարական լոյսն եւ զնգական։
Այս կըրկին սեռք մեծամեծք հոգի են բնաւ տիեզերաց՝
Ոյր ըզեալ թերեւս են գունաք կենդանակիր արարածովք։
Զի մեծայաղթ բնութեան թափուր 'ի կենդանի լինել չընչոց՝
Ամոյն ըզքեալ՝ եղեալ փայլել եւեթ յայնքան բարձանց
Եւ հաղիւ գընդի գընդի հատուցանել ըզհարկ լուսոյն,
Կայծ մի դոյն առաքելով 'ի ստոր՝ 'ի գունաս յայս հեռաւնակ,
Որ ըզնոյն լոյս վերբստին անդրէն առ նա դարձուցանէ,
Այդ անընպատ պայքարմանց լեցին պատճառք յաւերժական։
« Այլ՝ թէ այս ամենայն իցէ կամ ոչ զայս օրինակ,
Թէ յերկիր արեգակնըն ծագիցէ՝ իշխանն երկնից,
Կամ երկիր թէ ծագիցէ յարեգական պայծառ երեսս,
Թէ հրախաղաց նա գնացիցն յարեւելից առնիցէ սկիզբն,
Կամ թէ սա յարեւմտից ըզլուսն ընթացսըն վարեսցէ
Անվրատանգ ճահ ճեմելեօք, ներհեալ 'ի սեռն իւր 'ի հանդարտ,
Մինչդեռ դիմեալ հարթ ընթացիւք առեալ տանի զքեզ մեզմովին
Ընդ օդոյդ երկրածըրար ամպախաղաց պարուսնակի,
Ըզգաղանեացս այսցանէ աշխատ ինչ մի զմիտըդ առներ,
Թող վերին Աստուծոյ, զնա պաշտեացես եւ երկիցես։

Ընդ այլ սահեցուածս արասցէ՝ սա իւրում կամացն ուր եւ իցեն.
Դու՝ ի տուրս իւր ներ ուրախ՝ ի գեղեցկիդ Եւա ու՝ ի դրախտդ.
Ի քէն բարձր են յոյժ երկինք, անդ եղելոցն ոչ հասանես:
Լեր խոնարհ խմաստուն, քեզ միայն միտ դիր եւ քոյոցդ.
Մի այլ աշխարհս երազեր, մի արարածս անդ կենդանիս,
Եւ թէ յոր կարդ վիճակեալ, յինչ հանգամանս եւ աշխիճան.
Յարդ քեզ յայտնեաքն՝ ոչ լուկ զերկրէս, այլ եւ զերկնից բարձանց՝ զոհ
Ադամայ տարակուսանքս այս փարատեալ՝ կըրկնեաց անդրէն. [լեր:»
« Իբրեւ զի լի եւ լի հաճեալ ըզսիրտ իմ հանդուցեր,
Ո՛վ մաքուր միտք երկնաւոր, անապական զուարթուն հրեշտակ.
Եւ որպէս աղատեալ՝ ի սահեցմանց՝ ծանուցեր ինձ
Առ՝ ի կեանս ըզճանապարհն դիւր եւ հոդդ, եւ ուսուցեր
Հատանել վարանական ցնորիւք զկենացս քաղցրութիւն,
Յորմէ հրաման էին՝ ի բաց մերժեաց՝ ի սպառ զհոգոց տաղնապ՝
Առ՝ ի զմեզ ջամբոխելոց, թէ ոչ մեզէն զայն խնդրիցեմք
Զբահեա վարեալ խորհրդովք եւ վայրապար հեատազօտիւք:
Սակայն միտք եւ կամ ցընորք մեր են յանապատ մոլորութիւն,
Զիք վախճան աստանդելոյն, մինչեւ խրատեալ կամ զիտրձ առեալ՝
Խելամուտ լինիցի՝ թէ առաջին յիմաստութեան
Ոչ լայնագոյնն է ճանաչել զմեթին նրբբինս՝ առ ձեռն յոչ պէտս,
Այլ՝ որ առ ոտս ինչ կայցէ՝ ի կենցաղուս հանապազօր:
Այլք ծուխ են կամ մտոտիք, կամ խելայեղ բանդագուշանք,
Եւ անհըմուտ՝ ի կարեւորն առնեն ըզմեզ եւ յարածուփս:
Արդ ինչուք՝ ի բարձանց անտի հարթեալ զձեւ թըռչանացս,
Եւ զերաց պետոյից մօտաւորաց մեզ ճառեացուք.
Յորոց թերեւս եւ գայցէ պատեհ ըզքեզ հարցանելոյ
Ինչ ինչ ոչ տարաժամ, շնորհիւ սովոր քում հաճութեանդ:
« Լըսայ՝ ի քէն պատմելոյդ ըզկանխագոյնս քան զիշատակս,
Արդ ըզճառս խոց անցից լուիցես՝ զոր ոչն արդեաք գիտես:
Դեռ աւուր կայ, եւ մինչ ցայժըմ տեսանես զնարդ հնարիմ
Ունել ըզքեզ հրաւիրմամբքս կալ վեպացս ունկըն դընել.
Ընդ խօլ ապաքէն՝ թէ չէր՝ ի յոյս պատասխանուցդ:
Զի ցորչափ նըստիմ ընդ քեզ՝ զանձն իմ յերկինս համարիմ,
Բանքդ յունկն իմ քաղցր են քան զհամեղ միրգս արմատոյ յետ վաստա-
Ի քաղց իմ ու՝ ի ծարաւ՝ ի հեշտալի ճաշաժամուն: [կոցս
Սոքա յագուրդ եւ նոյն հետայն տաղտուկ բերեն, թէ եւ ախորժք.
Իսկ՝ ի քէն ճառեալքդ բանք՝ աստուածեղէն ըլցեալ շնորհիւ՝
Զածեն ինչ յափրութիւն ընդ քաղցրահամին ճաշակաց:»
Կըրկնեաց անդրէն Ռափայէլ քաղցրաբարոյն երկնահանգէտ.
« Ոչ անշնորհ ինչ են ջրթունքդ, հայրըդ մարդկան, ոչ եւ լեզուդ
Առանց ճարտարութեան. զի ճոխաբար եհեղ Աստուած
Ըզպարգեւս իւր արտաքոյ եւ՝ ի ներքոյ զքոյովդ անձամբ՝

Զիւրով պայծառ պատկերաւ, որ 'ի խօսելդ եւ 'ի լռելդ
Ամենայն վայելչութիւն եւ շնորհք ընդ քեզ են անմեկին,
Եւ զամենայն բան եւ շարժուած քո յօրինեն գեղապատշաճ։
Ամդ յերկինս իսկ մեզ ըզքեզ գիտեմք յերկրի ծառայակից,
Եւ 'ի մարդոյդ մշտագիւր ըզճանապարհս Էին քննեմք։
Քանզի ահա տեսանեմք, զի Աստուծոյ պատուական ըզքեզ՝
Արկ 'ի մարդոյն զուրգասէս խանդաղատեալ ըզգութիւն սիրոյն։
« Խօսեաց արդ. զի յաւուր յորում եղեր՝ չէի ես անդ,
Դեպ եղեալ ինձ գրանեալ 'ի դրժընդակ եւ մեայլ ուղղոջ
Հեռի ուրեմն յարշաւան ուրեք 'ի գրուելոս գրժոխոց։
Զորեքկուսի գունդ բռնանդակ, — այսպէս առ մեզ հասեալ հրաման, —
Ըսկեցաք՝ զի մի ըրեսս ոք կամ վիրաց եղլիս անդուստ՝
Մինչ 'ի գործն իւր կայր Աստուած, գուցէ յանկարծ թէ սրրամբտեալ
Ընդ յանգուշն հէն՝ խառնիցէ յարարչութիւն անդր ըզկորուստ։
Ոչ թէ հոգիքն ապրստամբք առանց նորուն ինչ օգնեմ
Իշխէին ինչ, այլ ըզմեզ՝ 'ի հաստատեալ ըզմէհ պատգամն՝
Առաքեաց երբեւ արքայ միահեծան 'ի հրամանս իւր,
Եւ 'ի կիրթ մեզ վարժութեան յերագանգիոյթ հնազանդութիւն։
Ամրափակ պլնդեալ գրաբք մեք ըզգրանդիսն սոսկալիս,
Հաստատեստ արկեալ կրճմոմ, աղխեալ 'ի նիզ կարծրակառոյց։
Ա՛յլ մինչ չեւ անդրր հասեալ՝ յառաջագոյն յոյժ 'ի հեռուստ
Լրաբք 'ի նեղրքս անդ խօշիւն, ոչ ձայն պարուց եւ նրւագաց,
Ցանկանս եւ բարձրաձիչ գոյժ եւ մանրնչիւն գաղանութեան։
Լուսոյն 'ի մարդ ուրախ դարձաք՝ չեւ շաբաթուն երեկացեալ.
Ա՛յսպէս էր պատուէրն առ մեզ. բայց եկեսցուք արդ 'ի քո վէպ.
Ա՛յնքմ մինամ՝ զուարճացեալ 'ի բանքս քո իբրեւ դու յիմն։»
Զայսոսիկ բարբառեցաւ աստուածազանցն զօրութիւն,
Եւ ըզկնն՝ մեր նախահայր. — « Խիստ է մարդոյ 'ի բան ձրգել
Թէ զիարդ յառաջնորմէ կեանք մարդկային ըսկիզբն էառ,
Զի ոմ այն՝ որոյ գիտուն ի՞նչ եղեալ անձին ծագման.
Իրգ՞ք 'ի յամէ այլ եւս 'ի բանս ընդ քեզ՝ խօսել զիս յորդորեն։
« Որպէս այն ինչ զարթուցեալ 'ի խոր քնոյ՝ գրսի ես զիս
Ընկողմեալ հեշտաբար 'ի դալարիս ծաղկածաւալ,
Ի քիրսն հարեալ խընկապատար՝ զոր արեգակն ցամաքեաց,
Իւրով ճառագայթիւքն ըզծրխաշունչն արբեալ խոնաւ։
Դեպ ուղիղ ընդ երկինս յածեցի զաչս իմ հիացեալս
Եւ վայրիկ մի հայեցայ 'նդ լայնատարածն հաստատութիւն,
Մինչեւ ասպ յարուցեալ 'ի ընկ բերմամբ ոստեայ 'ի վեր
Իբր 'ի փոյթ անդրր եղլոյ, եւ կանգնեցայ կացի յոտին։
Շուրջ զինեւ տեսի բլուր, հովիտ եւ ծառս հովանաւորս,
Դաշտավայրս արեգաւէտս եւ լայծ սահանս ջուրց խոխոջից։
Տեսի ստեղծուածս անդ կենդանիս՝ շարժուն գնայուն եւ կամ թռչուն,

Ի թաւ ոսաբս ծառոցն՝ հաւուց երամ բիբեալ ՃՐՃռեալ.
Ամենայն ինչ ծիծաղէր, սիրաս ողողէր 'ի խինդ ուրիխունկ։
Յայնժամ ընդ անձն իմ ասացի, զընտեցի յօդ առ յօդ զիրանս,
Մերթ գնացի, մերթ ընթացայ դիւրադարձիկըս խաղալեօք,
Որպէս զնարդ եւ վարէր կենդանաւէտ զնս զօրութիւն.
Բայց ոչ էի, ուր եւ յորմէ եկեալ 'ի գոյ՝ գիտէի ոչ։
Ի խօսել փորձ փորձեցի, եւ նոյն հեատայն բարբառեցայ.
Հրպատակ գրաւ լեզուս եւ բաւական կարողապէս
Ի յօդել արագ արագ զանուանս իրաց որ առ ական։
Արեգակն, ասացի, գեղեցիկ լոյսդ, եւ դու երկիր
Ի նմանէ լուսազարդեալ, դալարազուարճ, գեղածիծաղ,
Դուք բոլորք եւ ծործորք, դուք գետք, մայրիք, մարգագետինք,
Եւ դուք ջրքնաղ արարածք որ 'ի նոսին կեայք եւ շրջիք,
Ասացէք, ծն ասացէք, եթէ տեսեալ ինչ լոյծ ձեր,
Ո՛րպէս յայս կերպարանս եկի, զնարդ կամ ասասնօր։
Ապաքէն ոչ ինձէն, ապա 'ի մեծ ոմն արարչէ
Գերաբուն եղելոյ 'ի բարութեան եւ զօրութեան։
Պատմեցէք ապէ զնարդ ինձ Ճանաչել լինիցի զնս,
Զոր պաշտօն մատուցանել՝ յորմէ շարժիմս, կեամ ուխմանամ
Եթէ գոմ առաւել քան զոր գիտեմս երրերջանիկ։
« Մինչդեռ այսպէս ձայնէի մոլորեալով ոչ գիտեմ յով,
Ի բացէ 'ի տեղւոջէ անտի ուր նախ զօդ շընչեցի
Եւ տեսի զառաջինն ըղձալսրս զայս երանաւէտ,
Շընկալեալ ինչ ուստեմն համբուն դարձուած պատասխանուոյ՝
Նրստայ մբտայոյզ 'ի տախտ ուրեք կանաչազարդ
Թանձրախիտ հովանացեալ եւ շրուայլեալ 'ի ծաղկանց հոյլս։
Անդանօր նախ զառաջինն անկաւ զինեւ քուն մի անոյշ
Եւ քաղցրիկ ծանրութեամբ զթրմբրեալ զդայուն իմ նրաՃեաց,
Սակայն ոչ եւ աղմկեալս, թէպէտ 'ի միտս իմ թրւէի
Գնալ անկանել յանրզդայուն նախնի պայմանս եւ կորընչել։
Եւ ահա յեղակարծուստ եկն 'ի մարդոց եկաց խմոց,
Որոյ յիս նեբքին տեսին յանկոյց մեղմով զբրտիս խորհուրդս՝
Հաւատալ թէ գոյր յիս գեռ եւս էութիւն եւ շունչ կենաց։
Կարծեմ, թէ եկին ոմն աստուածակերպ եւ ասէ ցիս. —
Տեղիդ քո քեզ ակն ունի, արի, Ադամ նախաստեղծ մարդ,
Որում կայ նախահայր լինել տոհմի անթիւ մարդկան։
Աւ 'ի քէն կոչեցեալ՝ աւասիկ գամ քեզ առաջնորդ
Ի պարտէզն երանութեան՝ 'ի պատրաստեալ քո բնակութիւն։ —
« Ընդ բանիցն բարբառել ըզձեռանէս կալեալ յարոյց,
Եւ ընդ դաշտս եւ ընդ ջուրս անքայլ թբր յօդ սաղապաՃեմ՝
Ա՛ռ տարաւ զնս կացոյց 'ի լեռանն մի անտառախիտ
Եւ սարահարթ, ցանկապատ գեղեցկատունկ եւ յօրինեալ

Յանտառակս ու՛ Ճեմելիս, մինչ զի զոր իմ տեսեալ էր ինչ
Ընդ երկիրս յառաջագոյն՝ հաղիւ թէ թուէր ակնապարար։
Ծառք լցեալ ջրքնաղ պըտղովքըն զաչս 'ի Ճոճ զոշոտելով՝
Ածէին բուրմն 'ի տենչանըս քաղելոյ եւ ուտելոյ։
Եւ անդէն զդաստաց եալ՝ գըտի արդեամբք ակն յանդիման
Զոր Ճըշդիւս էր երազոյն կենդանագրեալ ինձ 'ի պատկեր։
Այս ըսկիզբն առնոյր անդրէն Թափառականն իմ մոլորումն,
Եթէ որ իմն էր ուղեցոյց կարապետեալ մինչեւ յայն բլուր՝
Զեր երեւեալ 'ի ծառաստանն անդ ինձ, տեսիլ աստուածեղէն։
Խրախամիտ եւ պատկառոտ իմն երկիւղիւ առ ոտն անկայ
Ի խոնարհ երկրըպագութ։ Նորա կանգնեալ՝ ասէ հեղիկ։ —
« Զոր խընդրեաց՝ ես եմ, Հաստիչ ամենայնի զոր տեսանեսդ
Ի վերոյ քան ըզքեզ կամ շուրջ ըզքեւ կամ 'ի ստորեւ։
Բեզ տամ ըզդրախտս, առ քոյս կալջիր՝ 'ի մըշակել եւ պահպանել,
Եւ վայելել 'ի պըտղոցն։ Իշխանաբար եւ զուարթամիտ
Կերիցես յամենայնէ որ 'ի պարտէզդ բուսեալ ծառ։
Ի սոսոյ մի զանգիտեր։ բայց 'ի փայտէն որոյ Ճաշակ
Գիտութիւն ածէ զբարւոյ եւ ըզչարի՝ յինէն տընկեալ
Գրաւական ունկընդրութեանդ եւ հաւատոց՝ 'ի պարտիզդ
Առ ծառոյն կենաց, քեզ յուշ պատուիրանիս կացցէ խըրատ,
Զգոյշ լեր անտի մի Ճաշակել, եւ ապրեացիս 'ի դառն արդեանցն։
Ուշիմ լեր։ յորում աւուր ըստուգանեալ զայս մի հրամանս
Ուտիցես 'ի նմանէն, առ օրին լեալ մահկանացու՝
Անհրաժեշտ մեռանիցիս, եւ կապտեսցիս 'ի պերճ բաստէդ՝
Վ բարեալ աստուստ յաշխարհ տառապանաց եւ ապերոց։ —
« Զայս առանց ակնառութեան բարբառեցաւ խիստ դատակնիք՝
Որ հընչէ տակաւին 'ի լըսելիսս ահագնալուր,
Թէպէտ եւ յիս չանկանել 'ի պատուհասն ապաստան կայ։
Բայց էառ դարձեալ անդրէն ըզզուարթադէմ իւր կերպարանս,
Եւ զայս օրինակ 'ի քաղցրախօս բանն ըսկրսաւ։ —
« Ոչ զայս գեղեցիկ որմած եւ եթ ցանկապատիս,
Այլ եւ զերկիր համօրէն պարգեւեալ քեզ եւ զաւակիդ,
Զեզ լեցի որպէս տերանց՝ ինքն եւ բոլոր 'ինմա կենդան,
Կամ 'ի ծովս զեռուն կամ յօդս, երեսոց ջոկք, լուղակք եւ հաւք։
Ցոյր 'ի ցոյց՝ ահաւասիկ քեզ զանասունս եւ զթըռչնոց տարմ
Իւրաքանչիւր ըստ ազգի՝ բերեմ առնուլ անուանս 'ի քէն,
Եւ մրտանել ընդ քեզ յուիտ ու՛ 'ի հարկ խոնարհ ծառայութեան։
Նըմին ակն կալջիր եւ 'ի ձրկանց՝ 'ի ջրայարկ տունսն,
Որոց ոչ է հրաւիրեալ գալ այսր յատեան՝ զի ոչ կարեն
Անցանել յայլ ինչ տարր եւ չընչել օդ անօսրագոյն։ —
« Մինչդեռ խօսէրն՝ ահա պաՃարք եւ հաւք գային երկու երկու,
Ի քըծինըս կըրկնելով ջրքոտանեաց ծուռնր 'ի խոնարհ,

Օդասար Թրուչուն հաւուց՝ 'ի հոլանեաւն ինքանելով։
Ըստ նոցուն գալ անցանել եւ ես զանուանսն կոչէի՝
Բնութեանցն եղեալ խելամուտ. այնպիսի մեծ էր յիս հանճար
Զոր շնորհեալ էր յԱստուծոյ յանկարծագիւտ խնացութեանս։
Այլ որպէսզի ինձ գեռ Թռչէր յարարածս անդ, զայն ոչ գրտեալ՝
Առ տեսին երկնաւոր յանդրդնեցայ յայս ժիտ բարբառ. —
Ո՛հ, յինչ ըղձեղ կարդամ անուն, զի՛ստ ամենայն այս արարածս
Անցանես, ըստ ազգ մարդկան եւ ըստ բարձունս քան զմարդկան ազգ,
Զանցուցեալ զամենեքումբք որ ինչ անուն անուանելի։
Ինձ զնարդ է զքեզ պաշտել զոլեղերացս արարչագործ,
Եւ զբարեացս ամենայնի՝ մարդոյն եւեթ պարգեւելոց,
Յոյր հանգիստ՝ առատաձեռն եւ անննախանձ տարար խրնամ։
Սակայն ոչ զոր տեսանեմ ընդ իս նոցին հաղորդակից։
Եւ իցէ՞ ինչ ուրեք երջանկութիւն 'ի մենութեան,
Ո՞վ միայն վայելիցէ, կամ ո՞ր հաճոյք 'ի բնաւ վայելն։ —
« Իմ յայս բանսըս ժըպրհեալ, յայնժամ տեսին՝ երբ ընդ ժըպիտ՝
Առաւել զուարթաճառնանչ, այսպէս դարձոյց պատասխանի. —
Զի՞նչ կոչես դու մենութիւն. ո՞չ ապաքէն երկիր եւ օդ
Հոծեալ են զանազան կենդանազգեաց արարածովք,
Եւ չիցեն 'ի հրամանիդ՝ գալ համբրէն խաղալ ըղձեւ։
Մինթէ չիցես խելամուտ լեզուի նոցա եւ բարոյից.
Է խմասա եւ 'ինոսին, եւ ոչ անարդս ինչ խոնարհին։
Տես ընդ նոսա զբոսել, տիրեա նոցա եւ մեծ է պետութիւնդ։ —
« Զայս առաց ամենատէրն եւ տալ Թուեցաւ պատգամանի։
Աղերսիւ ժըտեալ օձան բարբառելոյ՝ յաւելի զայս. —
Իմ մի ծանր ինչ քեզ Թուեցին բանք, երկնաւորըդ զօրութիւն,
Հեշտալուր լեր, Արարիչ իմ, եւ քաւեա զիս 'ի խօսելս։
Ո՞չ ապաքէն փոխանակ եդիր զիս քո 'ի վայրըս յայս,
Եւ սատրին արարածոցս եռուր տեղն յոյժ 'ի խոնարհ։
Կենակցութիւն որպիսի՞նդ անհաւասարս, ո՞ր յօրինուած,
Զի՞նչ սեռն եւ սերտ հեշտութիւն պատկանեսցին գեղապատշաճ։
Որ հասարակ ինչ է՝ արդար ջափով տացի եւ ընկալցի,
Իսկ յանզգոյդ բախտն թէ մին բարձր իցէ, միւսն միշտ խոնարհ,
Ոչ յիրեար քաջ պատշաճին, այլ վաղ դառնան միմեանց տաղտուկ։
Որպիսի ես ինչ խրնդրեմն ընկերութիւն՝ յայն հային բանքս,
Բաւական 'ի բանեղէն բնաւից հեշտից կրցորդութիւն,
Յորոս չիք անբանին ընկերակից լինել մարդուս։
Անբանք զուարճանան խաղաքանչիւր ընդ սեռս իւրեանց,
Առիւծն ընդ մատակին, այնպէս 'ի ճահ 'ի քէն զուգեալք։
Առաւել անմիաբան ջրաբոտանիքն են ընդ Թրուչունս,
Ձուկն ընդ հաւս, կապիկն ընդ եզն, եւս առաւել ուրեմն ապա
Մարդ ընդ գազանս, եւ այս քան զայրն ամենեսին անհնարաւոր։ —

« Աւ որ ոչ ինչ դրժգրմեալ Ամենակալն՝ արար դարձուած. —
Տեսանեմ ըզքեզ, Ադամ, զի յընտրութեան կենակցութեանդ
Կէտ եղեալ հայիս յաղնիւ երջանկութիւն եւ 'ի փափուկ,
Եւ ջերմացես ինչ հեշտութիւն մենակ 'ի գիրկս անդ հեշտութեան:
Իսկ արդ զինէն եւ զնմանէ պայմանէս զինչ խորհիցես դու.
Թըւեցիմ քեզ բաւական ունել թէ ոչ երանութիւն,
Որ միայնս եմ յամենայն յաւիտենից, զի չգիտեմ զոք
Ինձ երկրորդ եւ ոչ հանդէս, թող թէ համբուն զոք զուգական:
Արդ ո՞ւմ լեցիմ կենակից, բայց թէ խմում արարածոց,
Որ քան զիս անարդք՝ քան զիս եւ ի՛նքանեն յանբաւս 'ի սոր,
Քան թէ այլք յարարածոյն 'ի քէն եւ անդր անկեալք 'ի բաց: —
« Լուա եղեւ, եւ զբանիցս ըզթեզ առի ես ցածութեամբ. —
Ամենայն ինչ մարդկեղէն կարճ են խորհուրդք 'ի հասանել
Բարձրութեան եւ խորութեան Ճանապարհացդ յաւիտենից,
Էից տէրդ ինքնակատար, ապենիալ յամենայնէ:
Իսկ մարդ՝ ոչ դոյնպիսի, զի ոսն առ ոսրն զարգանայ.
Վասն որոյ եւ փափաքէ համաբնեիցն ընկերութեան՝
Օգնական եւ մշիսիթար դառնել իւրոյ կարօտութեանց:
Սերընդեան ոչ ինչ են պէտք բոլորաւէտ քեզ անբաւիդ,
Որ եղդ 'ի թիւս համբրէն 'ի միութեանդ անդ պատարուն:
Իսկ մարդոյս է թուով յայտնել ըզթերութիւն անձին իւրոյ,
Եւ զնման իւր 'ի նմանուոյ իւրմէ ծնանել, բազում առնել
Ըզպատկեր կերպարանացն՝ 'ի միութեան թերակատար,
Յոր պիտի սէր հաղորդական եւ կամոգի մտերմութիւն:
Դու 'ի քում թաքնութեանդ, թէպէտ եւ մի, բայց քեզէն քեւ
Անպայման ընկերակցեալ՝ կենակցութիւն չիրնդրես ինչ այլ:
Բայց թէ քեզ հաճոյ թըւէր, յանհընարկ ինչ ոչ էր քեզ
Ամբառնալ զքո զարարածն 'ի բարձրութիւն աստուածամերձ
Միութեան կամ թէ ասել կըցորդութեան՝ զոր կամիցն:
Իսկ ես զանգանարդ կորակոր՝ չմարթեմ ուղղել կենակցելով,
Ոչ ըզկամս իմ եւ զհաճոյս 'ինոցա զնացսն գրտանել: —
« Խօսեցայ զայս համարձակ՝ առեալ կամաց դուշ եւ պատուէր,
Եւ բանիցս մուտ գրտի. վասն այնորիկ եւ ընկալայ
Պատասխանի այսգունակ յաստուածաշնորհ 'ի բարբառոյն. —
Մինչեւ ցայս վայր, Ադամ, փորձել էին իմ կամք ըզքեզ,
Եւ տեսի՝ զի Ճանաչես, ոչ զանասուն պաճարս եւ թէթ՝
Որոց 'ի դէպ եղիր անուանս, այլ եւ ըզքեզ իսկ գրլխովին.
Յայտ 'ի քեզ արարեալ զաղատ ոգիդ՝ զիմիս պատկեր,
Որ չքաւաւ անբանին, ուստի եւ իւր ընկերութիւն
Չունի քեզ պատշաճել. արդար էին քո իրաւունքդ
Ի մերժել զայն պարզերես. այդ եղիցին միշտ 'ի քեզ միտք:
Չեւ քո խօսեալ՝ զի չէ բարւոք մարդոյդ միայն կալ գիտեի.

Զոր յայնժամն ականէիր կենակցութիւն՝ չէր քեզ կարգեալ.
Ի փորձ եւեթ յանդիման արարի քեզ զայն ամենայն,
Տեսանել՝ զինչ խորհիցես դու զարդարոյն եւ զպատշաճէն:
Իսկ զոր այժմ ածից առ քեզ՝ լեցի հաճոյ քեզ՝ անշուշտ լեր.
Քոյ է նա նրմանութիւն, դէպ օգնական, այլ ոմն դու,
Անձկալեզ կատարեալ ըստ ցանկութեան սրտի քոյոյ: —

« Դադարեաց, կամ թէ չեղեւ ինձ ըսելի բարբառ նորա.
Զի հողեղէնս իմ տարնտպեալ առ 'ի նորայ երկնաւորէն,
Յորմէ կայրէն վերառեալ հարուստ մի ժամ 'ի բարձրութիւն
Աստուածեղէն եւ վրսեմ տուրեւառիկ բանից վէհից,
Որպէս յորժամ դեր 'ի վերոյ ինչ անցանէ քան զաղդելոս,
Շըլացեալ եւ սպառեալ, ընդարմացեալ՝ դարման խընդրեաց
Ըզքընոյն, որ բնութեան հրաւիրելով իբր 'ի թիկունս՝
Եկն եհան նոյնժամայն, անկաւ զինեւ եւ փակեաց զաչս:
Փակեաց զաչս իմ, բայց 'ի բաց եթող զսենեակ ցնորից մըտացս,
Զնեղքին ակն՝ որով ափշեալ խմն հանդոյն 'ի հիացման՝
Տեսի, որպէս թուեցաւ, 'ի ներսի քընոյս ուր գընէիս,
Տեսի զտեսիլն յաւէժափառ ում յարթմընի երեսեցայ:
Որոյ յիս խոնարհեալ՝ զահեկակողմն իմ եբաց կուշտ,
Ա՛ռ եհան անտի կոյ մի ջերմանջերմ ոգւովք սըրոխս,
Եւ կենսաբուսլն արեամբս առոգ կայլակելով առ 'ի նմանէ.
Լայն էր վերն, այլ նոյն ընդ նոյն ըստաւ մարմնով եւ եղեւ ողջ:

« Նորա զկողն առեալ լամեաց ձեռօք իւրովք եւ կերպացոյց.
Մարդաձեւ իմն արարած 'ի հաստիչ ձեռանն կազմեցաւ,
Բայց այլասեռ, եւ այնպիսի ակնահաճոյ գեղեցկութեամբ,
Զի որ այլ ինչ գեղանի թուէր յաշխարհս՝ վատթարէր անդ,
Կամ 'ի նոմա երեւէր համադումար եւ միաձոյլ,
Ի նմա բովանդակեալ եւ յաչքս իւր՝ որ յայնմ օրէ
Քաղցրութիւն հեղեն 'ի սիրտ իմ անծանօթ մինչեւ ցայն ժամ.
Տեսն յամենայն ինչ շընչեաց հոգի սիրոյ, սիրոյ գըրգանս:
Այլ՝ եղեւ անհերեւոյթ եւ զնս եղեալ 'ի խաւարի.
Զարթեայ 'ի զայն գրաւանել, կամ 'ի զկորուստն ողբալ յաւէժ,
Եւ յուրասոյ 'ի հրաժեշտի յայլ ամենայն կալ բերկրութեանց:

« Մինչ անցոյս էի բնաւին, ահա նա ինքն ոչ ինչ հեռի
Որպէս տեսի յերազիս՝ պատճուճաղարդ ամենայնիւ
Զոր երկիր կամ երկին զեղոյր շընորհ սիրահարուստ:
Յերկնաւոր իւր Արարչէն ածեալ լինէր յանհերեւոյթս
Եւ ձայնիւն առաջնորդեալ առ իս, եւ չէր ինչ անհրմուտ
Սըրբութեան հարսանեաց եւ օրինաց ամուսնութեան:
Յամենայն 'ի քայլերն իւր շընորհք էին, յաչկունսն՝ երկինք,
Յամենայն 'ի շարժմունս անձինքն՝ սէր եւ պերճութիւն:
Այլ յայլմէ լեալ ցընծութեամբ՝ ձայն առի բարձր աղաղակաւ. —

Արդ զարժանն հատուցեր, արդ ըզնոստու�դ ածեր յարդիւնս,
Արարիչ աղատամիտ եւ մարդասէր առատագութ,
Պարգեւատու բոլոր բարեաց, իսկ այս 'ի ձիրարդ գեղագոյն.
Եւ դու զայդ անենանանձ առ 'ի յինէն ոչ խանդացար:
Զիմոցս ոսկերաց տեսանեմ արդ զոսկր աւադիկ,
Ըզմարմին խոց մարմնոցս եւ բնաւ իսկ զնս ինքն յանդիման:
Կին անուն է դորա, յառնէ անտի առեալ հանեալ:
Վասն որոյ՝ Թողեալ ըզհայր եւ զմայր 'ի կինն յարեսցի այր,
Եւ լեցին երկուքն 'ի մի միայն մարմին, սիրտ եւ հոգի: —
« Ըզբանս իմ լուաւ նա. եւ յաստուածուստ Թէպէտ ածեալ,
Սակայն՝ անմեղութիւն եւ կուսագեղ պարկեշտութիւն՝
Որ իւրն է շնորհ լաւութեան, եւ գիտութիւն յարդի անձինն, —
Զոր հայցելն է եւ ոչ՝ մինչ չեւ խընդրեալ՝ պարգեւելն.
Զի Թէ զանձն ոչ մատուցէ, եւ ոչ գիւրաւ տացէ 'ի ձեռս,
Ըստ չափոյ հրաժեշտին եւ ցանկալն լեցի նոյնչափ. —
Եւ հակիրճ ասել, բնութիւն ինքնին 'ի փիծ իսկ մրտաց սուրբ՝
Զայն ինն ինչ ազդեաց 'ինձս, զի տեսեալ զնա՝ 'ի բաց դարձաւ:
Զհետ չոգայ ես նրմին. նա խեղամուտ գլուխեալ պատուոյ՝
Հրաւուական նազանոք՝ խոց բանիցս եկն ըզհետ:
Ի խորանն առագաստի մատուցի զնա շինեալ իբր այդ:
Երկինք առհասարակ եւ բարեփառ աստեղաց դասք
Հոսեցին 'ի ժամուն ըզքաղցրագոյնս յաղդեցութեանց.
Երկիր եւ բլուրք իւր ետուն նրշան՝ խայտալ խընդակից մեզ,
Կայտառեցին հաւք, զուարճին սիրք եւ հոգմունք թեթեւաթեւք
Զայն յանտառս մայրեաց շրշընջեցին ամենատութիւն.
Եւ թեւք նոցին թոթափեալք՝ 'ի մեր վերայ ցանեցին վարդ,
Ցանեցին 'ի թանփոցն խընկենեաց հոտս անուշից,
Մինչեւ երգեաց հաւ գիշերոյն սիրաձայն զերգն առագաստի,
Եւ հրաման գիշերավար աստեղն արար՝ փութալ ճեպել
Ի կատար բլրոյն իւրոյ վառել ըզջահն հարսանեկան:
« Աւադիկ քեզ զրուցեալ ըզհանգամանս իմ զոմենայն,
Մինչեւ 'ի ծագ երկրաւոր երջանկութեանն յոր վայելեմ:
Վրկայեմ՝ զի ստոյգ եւ յայլս ինչ գրատանեմ ես հեշտութիւն,
Բայց ճաշակեալ թէ անճաշակ, չփոխեն ըզմիտս, ոչ տենչ ածեն.
Զգրգռանացն ասեմ քրմաց, զաչաց, ականջաց, բուսոց, պրտղոց,
Զծաղկոցաց, ըզճեմելեաց եւ զքաղցրաձայն նուագաց հաւուց:
Իսկ ատ այլ ինն ազդ համբուն. բերկրապատար հայիմ 'ի սա,
Շօշափեմ բերկրապատար, ատ ըզսիրոյն կրեցի նախ խանդ,
Ամբոխումն հիահրաշ. յայլ ամենայն հեշտից վայելս
Անպարտելի եւ անխառով, գտանիմ միայն ատ ապիկար
Առաջի կախարդանաց հարբատարուն աչաց գեղոց:
Կամ բնութեան յիս արիաբեալ եւ Թողեալ մնան ինչ անհրաժանգ

Եւ ժուժալ այսմ հանդիպի, կամ զոր կորզեալ հան 'ի կրչուէս՝
Առաւել ինչ քան զարժանն լցէ Թերեւս յինէն բարձեալ։
« Առաւել անշուշտ առ կինն է Ճոխացեալ 'ի պաճուճանս,
Անարիսեղծ արտաքոյ, իսկ 'ի ներքոյ Թերակատար։
Առնում 'ի միտ՝ զի 'սա նախնի մըտաց բնութեան ատրին է նա
Ըստ հոգւոյ եւ ըստ ներքին կարողութեանց գերագունից.
Արտաքոյ եւս երեւի ոչ 'ի Ճշդրիտ հաստչիս պատկեր,
Զբերէ քաջիկ զիշխանութեանն յայլ արարածս որ 'ի մեզ գրոշմ։
Եւ սակայն՝ մինչ 'ի հրապոյրս իւր հուսալ մատչիմ՝ Թըւի նա ինձ
Անարատ եւ կատարեալ եւ յիրաւունս իւր քաջակիրթ։
Եւ զոր խօսին կամ գործէն՝ խնամատուն Թուի քան զամենայն,
Առաքինի, հանճարեղ եւ 'ի լաւացրն լաւագոյն։
Գիտութեան բոլոր բարձունք՝ իւր առաջն անկեալ հարթին.
Խնամատութիւն՝ Թէ բանիւք մըտանիցէ 'նդ իւր 'ի պայքար,
Կորընչի տարակուսեալ, եւ երեւի յիմարութիւն։
Իշխանութիւն եւ իրաւունք 'ի հետ անկեալ երթան նորա,
Որպէս Թէ ինքն առաջին ծընեալ լցէ 'ի խորհրդոյն,
Եւ ոչ յիւր 'ի կարգն երկրորդ ըստ պատեհի ածեալ 'ի գոյ։
Համայն ասել, ազնըւութիւն՝ մեծանձնութիւն 'ինման գընին
Զգեղեցիկ զիւրանց գաղարս, եւ ըստեղծուն ընդոսաւ շուրջ
Մեծարանս երկիւղածան՝ իբրու Զուարթնոց պահպանութիւն։»
Հրեշտակին պյծնալն քաղաքեալ՝ արար անդրէն պատասխանի.
« Մի զընութիւն բամբասեր. նա զոր իւր անկն էր՝ վրճարեաց.
Արա զքոյդ, եւ մի 'մըտաց ըզգծնութեան լինիր անոյս։
Ոչ Թողցէ նա զքեզ երբեք, եթէ գու զնա չհանցես 'ի քէն
Յամենայն 'ի կարեւորս առ քեւ ընդոյն պինդ ունելոյ,
Ուր զիոքունս առ մեծս ունիս, որպէս քեզէն իսկ տեսանես։
Իսկ ընդ ո՞ր ինչ զարմանաս, զի՞նչ է որ զքեզն յարիշտակէ.
Վերին երեսք. արդարեւ գեղեցիկք յոյժ եւ արժանիք
Գորոյդ՝ մեծարանաց եւ սիրոյ քում, ոչ գերութեան։
Ընդ կընոջ ըզքեզ 'ի կշիռ դիր եւ ապա կալջիր համար.
Բազում այն է զի չիք շահ մեծ քան զանձին մեծարոյ վարկ
Խնամով վարեալ եւ հիմնեալ յարդարութիւն եւ յիրաւունս։
Խորագէտ լեր յայս հանձար, եւ զքեզ ընկերդ իւր կալցի զլուս.
Զամենայն զիւր երեւոյթս արկցէ 'նդ ոտիւք Ճշմարտութեան։
Այն պըՃնիւք յօրինեցաւ նա զի յաւէտ քաղցրասցի քեզ,
Յայն 'ի շուք՝ զի կարասցես պատուով սիրել զքո զամուսինդ,
Որ յորժամ խնամատութիւն պակասէ քեզ՝ 'ի միտ առնու։
« Իսկ Թէ քեզ ջոչափելիքդ՝ որով սերի մարդկային ազն՝
Հեշտութիւն համարիցի քաղցրատենչիկ քան զամենայն,
Տես զի նոյն է եւ անգոյ շնորհեալ պարգեւ ըզգայութեան
Եւ մեն միում յանատոց. որ ոչն արդեօք յայտնէր նոցա,

Եւ չլինէր հասարակաց՝ թէ դոյր 'ինմա ինչ արժանի
Գերելոյ զոգի մարդոյն կամ շարժելոյ զինքն 'ի տրտիմանս։
Զոր ինչ վեհ եւ յանկուցօղ, քաղցր եւ արդարին գրատնեա
Ի կենցաղ ամուսնոյդ՝ սիրեալիր զայն յամենայն ժամ։
Ի սիրել՝ բարւոք գործեա, ոչ 'ի տրտիսելն եւ հեշտախտել,
Որ զի չէ խակ այդ սեռն եւ ճշմարիտ սէր սրբատակաթ։
Սէր սրբեալ պարզէ զմտաց խորհուրդս, ըստիրա ընդարձակէ,
Ունի զնեատ իւր 'ի բանն, եւ զգօնամիտ է հանճարեղ։
Սանդուղք է նա՝ իւ կարեա յերկնաւոր սերն վերանալ,
Թէ չկցես 'ի մարմնաւորեալդ վաւաշուութիւնքն խորասոյզ։
Ա՛յդ խակ է՝ յեր սակս յերեսս ոչ ոք գրատաւ քեզ զուգակից։»
Ադամ, ամօթալից խմբն գոգցես, կրկինեաց անդրէն.
« Ոչ վերին երեսք կընոջ գեղատպաճոյճ, ոչ հանդամանք
Սերընդեանցս հասարակ ազգաց ազգաց իւրաքանչիւր, —
Թէպէտ իմ զամուսնական անկողնոց բարձր են յոյժ խորհուրդք՝
Եւ բազում խորհրդական պատկառանաց մեծարանօք, —
Զեն ինձ քաղցր 'ի կողակցիս՝ որպէս դէնայք իւր ընտրհաղարդք,
Բիւր եւ բիւր վայելչութիւնք 'ի խօսքս իւր մշտամաւալք
Եւ 'ի գործսն սիրալիս՝ բարեբարոյս եւ քաղցրանոյշ,
Որ սերտ զոգ մշտաց յայտնեն կամ յերկոսեան հոգի մի սոսկ,
Քաղցր ամուսնաց զուգութիւն՝ ախորժագոյն յաչաց տեսիլ
Քան թէ ձայնք արուեստականք 'ի լուր ունկան քաղցրանալագ։
« Բայց այդոքիկ ինձ ոչ սիրեն. բանամ ես քեզ զոր յիսքն կրի.
Ոչ թէ այնուք ինչ պարտիցեմ՝ որ նրկատեմքս բազում ինչ
Գունակ գունակ երեւեալ եւ պատկերեալ 'ի զգայութեանցս,
Սակայն միշտ ապատիչեան՝ հաճիմ ընդ լաւն, ընտրեմ զհաճոյն։
Դու զսերեալս ոչ եպերեա, զի սեր, ասես, յերկինս հանէ,
Ա՛յն է նորա ճանապարհ եւ առաջնորդ միանգամայն։
Արդ օրէն եթէ լցէ զոր հարցանեմս՝ համբեր դու ինձ.
Ո՞չ սիրեցեն երկնաւոր հոգիք, զիարդ յայտնեն ըստեր,
Հայեցուածո՞վք արդեօք եւեթ, թէ զլոյսն իւրեանց ճաճանչագեղ
Խառնիցեն զօրութեամբ կամ թէ ազգմամբ շօշափելով։»
Զուարթունն 'ի ժամի, որ զերկնաւոր վարդեց վառէր ծիրանիս՝
Ըզբնաւոր երիսն սիրոյն, դարձոյց նրմին պատասխանի.
« Շատ լցի գիտել քեզ, թէ եմք խակ մեք երանաւէտ,
Եւ զի չիք բընաւ ուրեք առանց սիրոյ երջանկութիւն։
Զամենայն զոր 'ի մարմնիդ ըմբռնիս դու հեշտութիւն սուրբ,
Եւ դու սուրբ ըստեղծար, մեք վեհագոյնս յայն վայելեմք։
Թաղանթեցս չիք մեզ խափան, ոչ յօդուածոց կամ անդամոց
Որ կրրձին են անջրպետս. եթէ հոգիքն ոչնգաղուին,
Քան օդ ընդ օդ հեշտագոյն միաւորին գերկախառնեալ,
Զի սուրբն անձկայ զոգել 'ի սուրբ. չեն ինչ նոցա միջնորդի պէտք

Նուրբ անձուկ խառնըւածոյն, զոր մարմնոյ հարկ իսկ է ունել
Ի զուգել ընդ մարմին, եւ կամ ընչոյ՝ յայլ իմն շունչ։
« Բայց արդ այլ յամել չկարեմ. զի խնարհեալ արեգական
Ըստ կանաչ սարն երկրի՝ 'ստ երեկոյնեայ դալար կրզեն,
Մրտանէ աւագիկ եւ ինձ նըշան տայ մեկնելոյ։
Պինդ կաց, կեցցես կեանս երջանկաւէտ եւ սիրեսցես,
Այլ ընտ քան զամենայն՝ ում հնազանդելն է եւ սիրել։
Զպատուիրանսն մեծ պահեա, տես զերեսցեն մի զմիտսդ կիրք
Յայն ինչ զոր կամքդ անձնիշխան չառնու երբեք յանձն գործել։
Ի քեզ կայ քո եւ որդւոցդ երջանկութիւն կամ եղկութիւն.
Ըզգոյշ լեր անձին քում, ես եւ հոգիքն երանաւէտք
Ցընծասցուք ընդ քո տեւելդ եւ ժուժկալել, հաստատուն կաց։
Կալ կամ անկանել՝ է յինքնիշխան կամացդ 'ի ձեռս.
Կատարեալդ 'ի ներքոյ՝ մի զօրավիգն 'ի դրուստ խընդրեր,
Եւ զամենայն փորձութիւն անսասանութեան հեռի արա։»
Ասաց եւ յարեաւ, Ադամ ըզկնի գնայր օրհնութեամբք.
« Դանդի հարկ է քեզ մեկնել, երթ ասա՝ հիւրդ իմ երկնաւոր,
Արփիսաձեմ սրտագամաբեր եւ առաքեալդ այնորիկ՝
Որում երկիր սրգանեմ գերօրինակ բարեգթութեան։
Քաղցր եւ մարդասէր առ իս գըտաւ քո հեղութիւնդ,
Պատուէսցի անմոռաց յերախտապարտ մըտացս ուշի.
Լեր միշտ բարի, բարեկամ ազգի մարդկան, եւ եկ ըստէպ։»
Մեկնեալք այսպէս 'ի միմեանց, 'ի հովանեաց Թանձրամայրեաց
Հրեշտակն յերկինս արար դարձ եւ Ադամ յիւրըն տաղաւար։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Դարձ արարեալ Սատանայի յաներեւոյթս 'ի Դրախտն՝ մնանէ յօձն։ Ի յաձնել Ադամայ եւ Եւայի այգուց 'ի գործս իւրեանց՝ Եւա կամի առանձինն վաստակել 'ի պարտիզի անդ։ Ադամ՝ նախ հակառակեալ՝ ապա զիջանի 'ի խնդիր նորա, զոր մեկուսի յաձնէն գտեալ օձին՝ պէսպէս հրապուրանօք պատրէ զնա, եւ ածեալ 'ի ծառն գիտութեան՝ ջամբէ նմա զպտուղն, եւ նա տանի տայ առն իւրում։ Որոյ տեսեալ զի կորուսեալ է կինն իւր, կամի եւ ինքն կորնչել ընդ նմա, եւ ուտէ ընդ նմա ցայգ։ Զամենայն արդիւնս իրացն տեսեալ երկոցուն՝ տերեւապատ ծածկէն զառականս իւրեանց, եւ գրգռեալ ընդ միմեանս՝ զիրեարս բամբասեն։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

Ոչ եւս մարդ ընդ Աստուծոյ կամ հրեշտակի կենցաղակից՝
Ընդ հիւրս իւր, որ ընտանիք եւ մարդասէրք էին սովոր
Գալ բաղմել ընդ իւր հանգոյն ընդ մըտերիմ բարեկամի,
Եւ լինել վայրի Ճաշոյն իւրում հաղորդ սեղանակից,
Անպարսաւ շնորհելով անդէն նըմին խօսել անմեղս։
Հարկ է ինձ այսուհետեւ փոխել 'ի ձայն ողբերգական։
Ի մարդոյն կողմանէ՝ նախատակոծ խէթ եւ կասկած,
Հեստանք ուխտանենդ եւ խեռութիւն վըտարանչող։
Իսկ յերկնից 'ի կողմանէն՝ ասա առ տեղեաւս խորթացելոյ՝
Օտարութիւն, դառնութիւն, ցասումն արդար եւ պատուհաս,
Եւ դատակնիք՝ որ զաղետից խուռըն խուժան եմոյծ յաշխարհ,
ԸզՄեղս եւ զբարաշուք ըստուեր նորա մըթին՝ ըզՄահ,
Եւ զաղցաւոր տառապանս՝ ըզկարապետս Ժամու Մահուն։
Ասպարէզ տաժանաքայլ, այլ ոչ ընդհատ բարձր եղեալ կէտ,
Աւաւել դիւցազնական քան զանողոքն Աքիլլի քէն
Ընդ իւրումն ախոյենի՝ փախըստական հալածելոյ
Զոտանին տրոտադացուց երիցս շուրջ ըզպարիսպաքաղաք։
Կամ քան զմըրուցըս Ցուռնոսի 'ընդ զըրկանս հարսինն Լաւինեայ,
Կամ քան ըզվրէժ ոխութեան Պիսիդոնի եւ Հերայի,
Որ այնչափ վարանեաց զՀելլէնն եւ զուստրն Աստղկան։
Թէ գըտից միայն երգոյս սեփական ոՀ պատկանաւոր
Յերկնաւոր Բամբշանէս, որ հաՀեցեալ ինքնամատոյց
Այլ ինձ առնէ գիշերի, եւ թեւադրէ 'ինկնել քընոյս,
Կամ ազդէ յաչողապէս զանիսկ ըզտաղս եւ զանորոՀ։

Կամ քրովբէրամ պահնորդաց, գաղտագողի գիտ անց անկարծ։
Էր անդ տեղի, որ ոչ էաս է, — փոփոխութիւն՝ զոր գործեաց մեղք,
Ոչ ժամանակ, — ուր Տիգրիս 'ի ստորոտէ անտի գլխատին
Վազս առեալ անկանէր 'ի խորափիտ մի ստորերկրեայ,
Մինչեւ մասն ինչ ջրոյն ցայտեալ՝ բըղխէր յայրբիւր զկենաց ծառոյն։
Ընդ գետոյն սուզեալ Սատան եւ էլանէ 'նդ նրմին 'ի վեր՝
Պարուրեալ 'ի գոլորշին շոգիամէգ անդընդաբուխ։
Ապա նուր խընդրէ թաքուստ. հետազօտեալ էր եւ զընեալ
Ըզծով եւ ըզցամաք յԵդեմ վայրաց մինչ 'ի Պոնտոս
Եւ ցըծովակ Միոմոխս, անդր եւս յայնկոյս գետոյն Ովբեայ,
Հեռի յոյժ մինչ 'ի բեւեռն սուզական երթեալ ելեալ.
Ընդ երկայն 'ի մուտս կոյս յՊրոնտեսէ մինչ յՈվկիան,
Զոր փակէ Դարեան նեղուց. անտի առեալ մինչեւ յաշխարհն
Ուր Գանգէս եւ Ինդոս սահեալ գընան յորդախաղաց։
Այսպէս էր զգընտով շրջեալ մանրակերկիկ խուզողութեամբ,
Եւ զընեալ խորաքրնին զմին մի յանձնիւր արարածոց՝
Ի գտանել ըզգիպագոյնն 'ի գործ իւրումն դաւանաց.
Եւ զօձն եգիտ խորամանգ քան զամենայն վայրի գազանս։
Յետ երկար հարցափորձի՝ վարանամիտ եւ յողդողդեալ
Հուսկ ուրեմն զայն ընտրէ՝ զնաբէութեան պատշաճ պատուաստ,
Զպատկան դարանն 'ի մտանել թաքուցանել զնուր սեաւ հրապոյրս
Ի սրակնագոյն տեսանելեաց. զի ամենայն հնարիմաց գիւտ
Ոչ ումեք խէթ արկանէր՝ իբրեւ բընիկ հանճարոյ գործ.
Իսկ յայլս 'ի կենդանեաց տեսեալ՝ բերէր կասկած 'ի սիրտ
Դիւաբնակ ինչ զօրութեան աղդելոյ գեր զանբանի միտս։
Յայս խորհուրդ հաստատեցաւ նա, սակայն նախ յանձին կըրկոյ՝
Առ ջրժուժալ բարկութեանն՝ 'ի դառնաշունչս հատաւ տըրտունջ.
« Զի՛ նմանեսս երկնից, երկիր, թէ իրաւամբք չկոչես 'ի վեր,
Աստուածոց արժանագոյն դու բնակարան, իբր յօրինեալ
Երկրորդ խորհրդով որ զչինն 'ինոր ինչ յերիւրեն։
Զի յաստուածոց ո՞ւմ կամ ընդ կանգնել վատթար ինչ շինուած
Յետ ըզաւն հաստատելոյ։ Է՛ երկրաւորդ դու երկին,
Զորով շուրջ պարունակեալ կան այլ երկինք պայծառափայլ.
Եւ նոցին պաշտօնատար ջահք բերեն ընդ 'ի ընդս հոմեալ
Քեզ միայն, որպէս թըւի, միաժողով խմբեալ 'ի քեզ
Զամենայն աղնիւ նըշոյլս սըրբանըւէր ազդեցութեան։
Որպէս յերկինս Աստուած է մէջ, եւ համատիս ընդ ընդհանուրս,
Նոյն եւ դու 'ի մէջ կացեալ՝ 'ի բնաւ դընտից ընդունիս ինչ։
Ամենայն զօրութիւն նոցա 'ի քեզ, ոչ 'ի նոսին,
Երեւի արդասաւոր 'ի բոյս, 'ի տունկ եւ յաղնուագոյն
Ի ծընունդ շընչաւորաց կարդ ըստ կարգի կենաց իւրեանց.
Աճումն, ըզգայութիւն եւ բան 'ի մարդն միացեալ։

Կամ քրովբէրամ պահնորդաց, գաղտագողի գիտ անց անկարծ։
Էր անդ տեղի, որ ոչ էաս է, — փոփոխութիւն՝ զոր գործեաց մեղք,
Ոչ ժամանակ, — ուր Տիգրիս 'ի ստորոտն անտի գրախտին
Վազս առեալ անկանէր 'ի խորափիտ մի ստորերկրեայ,
Մինչեւ մասն ինչ ջրոյն ցայտեալ՝ բըղխէր յայրբիւր զկենաց ծառուին։
Ընդ գետոյն սուզեալ Սատան եւ ելանէ 'նդ նրմին 'ի վեր՝
Պարուրեալ 'ի գոլորշին շոգիամէգ անդընդաբուխ։
Ապա իւր խընդրէ Թաքուստ. հետազօտեալ էր եւ զընեալ
Ըզծով եւ ըզցամաք յԵդեմ վայրաց մինչ 'ի Պոնտոս
Եւ ցըծովակ Միոտիս, անդր եւս յայնկոյս գետոյն Ոլբեայ,
Հեռի յոյժ մինչ 'ի բեւեռն սուզական երթեալ ի՛ջեալ.
Ընդ երկայն՝ 'ի մուտս կոյս յՈրոնտեսէ մինչ յՈվկիան,
Զոր փակէ Դարեան նեղուց. անտի առեալ մինչեւ յաշխարհն
Ուր Գանգէս եւ Ինդոս սահեալ գընան յորդախաղաց։
Այսպէս էր զգընտով շրջեալ մանրակերկիտ խուզզուութեամբ,
Եւ զընեալ խորաքրնին զմէն մի յանձնիւր արարածոց՝
Ի գտանել ըզդիպադոյնն 'ի գործ իւրումն դաւանաց.
Եւ զօձն եգիտ խորամանգ քան զամենայն վայրի գազանս։
Յեւ երկար հարցափորձի՝ վարանամիտ եւ յողդողդեալ
Հուակ ուրեմն զայն ընտրէ՝ զնաբէութեան պատշաճ պատուաստ,
Զպատկան դարանն 'ի մտանել թաքուցանել զնւր սեաւ հրապոյրս
Ի սրակնագոյն տեսանելեաց. զի ամենայն հնարիմաց գիւտ
Ոչ ումեք խէթ արկանէր՝ իբրեւ բընիկ հանճարոյ գործ.
Իակ յայլս 'ի կենդանեաց տեսեալ՝ բերէր կասկած 'ի սիրտ
Դիւաբնակ ինչ զօրութեան աղդելոյ դեր զանբանի միտս։
Յայս խորհուրդ հաստատեցաւ նա, սակայն նախ յանձին կըրկոյ՝
Առ ջրժուժալ բարկութեանն՝ 'ի դառնաշունչս հատաւ տըրտունջ.
« Զի՛ նմանես երկնից, երկիր, թէ իրաւամբք չնցես 'ի վեր,
Աստուածոց արժանագոյն դու բնակարան, իբր յօրինեալ
Երկրորդ խորհրդով որ զհին 'ի նոր ինչ յերիւրէ։
Զի յաստուածոց ո՞ւմ կամ ընցն կանգնել վատթար ինչ շինուած
Յեւ ըզաւն հաստատելոյ։ Է՛ երկրաւորըդ դու երկին,
Զորով շուրջ պարունակեալ կան այլ երկինք պայծառափայլ.
Եւ նոցին պաշտօնատար ջահք բերեն ընդ 'ի ընդս հոմեալ
Քեզ միայն, որպէս թըւի, միաժողով խըմբեալ 'ի քեզ
Զամենայն ազնիւ նըշոյլս սրբբանըւէր ազդեցութեան։
Որպէս յերկինս Աստուած է մէջ, եւ համատիւ ընդ ընդհանուրս,
Նոյն եւ դու 'ի մէջ կացեալ՝ 'ի բնաւ գընտից ընդունիս ինչ։
Ամենայն զօրութիւն նոցա 'ի քեզ, ոչ 'ի նոսին,
Երեւի արդասաւոր 'ի բոյս, 'ի տունկ եւ յաղնուագոյն
Ի ծընունդ շընչաւորաց կարդ ըստ կարգի կենաց իւրեանց.
Աճումն, ըզգայութիւն եւ բան 'ի մարդն միացեալ։

« Որպիսի զուարճութեամբ շրջել էր ինձ յողբաս երկրի,
Եթէ գոյր ինձ երբեք 'ի հեշտութեան իմիք վայելք։
Ո՛վ քանի՛ ակնախիստիլ բերլոց, հովտաց, գետոց են շարք,
Անտառաց եւ մարգաց. է զի ցամաք եւ է զի ծով,
Եւ ոտունք մայրեօք պատեալ, ժայռիւք, այրիւք եւ անձաւօք։
Բայց ոչ գրտի ես ուրեք՝ ոչ բնակարան, ոչ ապաւէն.
Եւ զինեւ շուրջ պար առեալ որչափ հայիմ երջանկութիւնս,
Աւաւել քան զառաւել յանձն իմ հրոսեալ յորդէն տանջանք,
Որպէս այն թէ լցեմ ատելն որջ հակառակաց։
Ամենայն բարիք առ իս 'ի գառնութեան փոխին 'ի ժահր,
Իսկ յերկինս՝ դաժանագոյն ինձ հասանէր բախտի վիճակ։
« Այլ ինձ ծն անդրը, փարգատ, մընալ աստէն, եւ ոչ յերկինս,
Բայց միայն թէ Ցեառն երկնից վերհագուտին տիրանայցեմ։
Զիք ինձ ակն նուաղելոյ թշուառութեանս յոր ինչ խընդրեմս,
Եւ ոչ այլ ինչ խընդրեմ, բայց առնել զայրս իբրեւ զիս,
Թէ եւ ջարիք 'ի ջարիս իմ մանեսցին կերկնապատիկ.
Զի տիտուն՝ յապականել միայն դատանէ միտքս անանդորը։
Յեղծանել մարդոյն յոյր պէտս այս ամենայն է հաստատեալ,
Կամ դերդեալ 'ի գործել զոր ածցէ նոնս բնաջինջ կորուստ,
Ամենայն այս ընդ նրմա գնացէ 'ինոյն վաղվաղակի,
Իբրեւ կապեալ ընդ նրմին 'ի բաստ բարի կամ յեղկութիւն։...
Յեղկութիւն արդ ուրեմն. արձակ արձակ ելցէ կորուստ։
Ի դժոխական զօրութեանց միայնումս ինձ տացին պարծանք
Ի միում աւուր ազարտ վարելոյ զայն ամենայն ինչ՝
Զոր յանուան Ամենակալն յաւուրսս վեց եւ զվեց գիշերս
Անհանգիստ ջանացեալ ստեղծագործեաց, եւ ո՛ գիտէ
Ո՛ըչափ կանուխ եւս 'ի խորհուրդս իւր նրատեալ երկնեաց ըզնոյն։
Այլ թերեւս յորմէհետէ 'ի մի գիշեր ազատեցի
Ի նրատաստ գերութենէ գոգցես ըզկէս Զուարթնոց զարմին,
Թօթափեալ 'ինմանէն զերկրրպագուացն իւրոց ամբոխ։
« Նա 'ի վրէժ եւ 'ի լընուլ ըզթիւ իւրում նրատութեան,
Զօրութիւնն 'ի ստեղծանել այլ եւս հրեշտակս ըսպառեալ վաղ, —
Թէ միայն արարածք լցեն նորա, — կամ մանաւանդ
Մեզ հեռնակս առնելոյ՝ փոխանակիլ մեզ կամեցեալ
Արարած մի հողաստեղծ, ճոխացոյց զայն՝ ըզծնունդն անարգ՝
Երկնաւոր աւարաքն, որ են կապուտք մեր կողոպուտք։
Ըզհրաման իւր կատարեաց, արար ըզմարդն իւր ձեռակերտ,
Յօրինեաց հրաշակառոյց եւ զտիեզերս 'ի նորուն պէտս,
Եւ երկրի՝ տան իւրում՝ կարգաց ըզնա տէր եւ իշխան, —
Ո՛վ դըժընդակ յոռութիւն, — արկեալ ըզթեւս հրեշտակական
Ի սպաս նորա, եւ պաշտօնեայս հարկեալ նրմին բոցանիւթս՝
Ի հրսկել եւ զերկրաւոր ծառայութիւնսն հարկանել։

«Ի սոցա սրբութենէն երկրնչիմ ես եւ խոյս առեալ
Եւ պատեալ այսպէս 'ի մէջ եւ 'ի ջրոյ զմէջ գիշերաւս՝
Սրպրդեմ զանխուլ, յուզեմ զամենայն թուփ եւ ըզմացառ,
Ուր թերեւս ինձ դէպ տացէ գրտանել զօձն 'ի քնոյ թմբիր.
Զի մրտեալ 'ի պատուած քընթրոնոցաց նորա թաքեալց՝
Ծածկեալ զնս եւ ըզսեաւ խորհուրդ մրտացըս զոր երկնեմ։
Ամարդ նուաստութիւն. ես որ ինքնին սուղ ինչ յառաջ
Մարտ ընդ աստուածսն մրղեցի առ բարձերեց նոցա բազմել,
Յայս սահման այսօր անկեալ 'ի զուգութիւն գալ անասնոց,
Եւ խառնեալ 'ի ճրճնոց գայլ՝ մարմնաւորել զոյս էութիւն,
Եւ զանենչոն 'ի բարձրութիւն աստուածութեան՝ փոխել յանբան։
Բայց գահու եւ վերիժուց ցանկութիւն յինչ չիկանիցէ։
Որ կամիցին ամբառնալ՝ որչափ սլացաւերն սողացին,
Արկեալ՝ թէ վաղ թէ անագան՝ զանձն յամենայն անարգութիւն։...
Վերիժիընդրութիւն, քաղցրը նախ, դառնացեալ վաղ, յանձն իւր գրլի։
Թող լեցի, չէ ինչ ինձ փոյթ, թէ քաջ միայն կրշուի հարուածն։
Քանզի յոյժ 'ի բարձր եղեալ զնրպատակիս կէս՝ վերիպիմ.
Այնմ ուշ առնեմ՝ որ երկրորդ յուզեալ դերդէ յանձն իմ նախանձ,
Յայս 'ինոր գերդուեալս երկնից, 'ի սա 'ի մարդս հողազանգուած,
Յորդիս յայս հենդնութեան, զոր յառաւել մեզ թերշնամանս
Բարձ հաստիչ իւր 'ի փոշւոյն. ոչք ընդ ոսկց հատուցին քաջ։»

Ասէ, եւ ընդ մացառս գիձին կամ չոր՝ զերդ մառախուղ
Լերթագոյն եւ գետնասող՝ զհասարակաւ գիշերայնոց
Զհետ սլընդն որսոյն իւրում՝ հանդիպել խակ եւ խակ օձին։
Նոյն հետայն եգիտ ընդ թմբրեալ 'ի խոր քուն թանձրութեան,
Պատ ման 'ի ման զինքեամբ առեալ բաւղկանձեւ 'ի պարոյրս,
Գլուխն 'ի միջին՝ բարձրադէտ, լի խորամանդ խաբէութեամբ։
Շեւ եւս 'ի մուտ ահաւոր կամ 'ի խրշտիս զարհուրելի,
Դեռ եւս ոչ մեղանչական, ինքն աներկիւղ եւ չերկուցեալ,
Ի թաւուտս դալարեաց սիղաբուսոցն անկեալ նընջէր։
Եմուտ դեւն ընդ բերանն, եւ ըզքնութիւնն անասնեղէն
Որ 'ի գլուխ իւր կամ 'ի սիրտ՝ յինքեն նուաճեալ առեալ 'ի բուն,
Աջոդեաց խակոյն 'ինմին ազդեցութիւն խմաստութեան.
Սակայն ոչ ինչ ապմրկեալ վերդովեցոյց ըզքուն նորա,
Ըստասեալ 'ի դարանի անդ ծագելոյ վաղորդայնոյն։

Նուիրական ըզսն ընդ Եդեմ ըակրսանէր ծայրս արձակել
Ի ծաղկունսըն ցօղալիս՝ բուրեալս 'ի խունկ առաւօտին.
Ի պահուն՝ յոր ամենայն շունչ կենդանի առհասարակ
Ի մեծ բաղնի երկրիս բառնան ըստ օրհնութեանց ձայնս առ Հաստիչն,
Եւ բուրումն անուշից նրմին 'ի հոտ հաճոյական,
Մարդկութեան յայնժամ եւ զոյգ՝ եղեալ յիւրմէ հովանոցէն՝
Յանմրռունչ արարածոցն յաւել 'ի պար զպաշտօն շրթանց։

Զայն կատարեալ՝ վայելել ըսկրսանին ըզժամին զայն
Զառաջինն 'ի բոյր անոյշ եւ 'ի սրբոխրա քաղցրասիք ։
Եւ ընդ եւ խորհուրդ առնուն լաւ եւս բերել այն օր պարապ
Ի վաստակսն յոռացեալս որ զանցանէր ըզժբրութեամբ
Ստեղծուածոց զուրկց ձեռաց մշակելոց զերկիրն անբաւ ։
Նախ առ այր իւր Եւա բարբառեցաւ օրինակ զայս ։
« Ադամ, է մեզ տակաւին 'ի պարտիզս պատուղել զարդ,
Վայելուչ եւս յօրինել ըզտունկ, ըզբոյս եւ ըզծաղիկ,
Սակ արկեալ մեզ ըսպաս զբաւարձախառնն պաշտման ։
Բայց մինչ չեւ յոգնաթիւ եկեալ բաղկաց մեզ յօգնութիւն,
Ընդ մեր ձեռամբ ահեղ գործն զայրացեալ 'ի նեղելոյն ։
Զոր 'ի տուէ կոճոպեմք եւ կամ քըշտեմք ինչ աւէլորդ,
Կամ արկեալ խեչակ՝ յողոր կամ 'ի նեցուկ պատրաստարեմք,
Ի մի գիշեր կամ յերկուս մոլեալ շռայլեալ բարգաւաճանս՝
Ծիծաղին ըզմեզ եւ դէմ դընեն երթալ վայրենանալ ։
Առ տեղեաւս այսուհետեւ յայս խորհեսջիր, եւ կամ թէ լուր
Զառաջին մրտածութիւնս որ ուշ 'ի կուրծս ինձ անկանին ։
« Բաժանեացուք ըզվաստակս ։ երթ դու յոր կողմ եւ է հաճոյ,
Կամ յոր կոյս առաւել ելցեն ալիոց խընամք եւ փոյթ,
Ի բոլորել զպատատուկն հովանոցիս շուրջանակի,
Զսողկագնացն ուղղել բաղեղն յոր վայր առնել կամի վերելս ։
Իսկ ես անդ՝ 'ի մրրատախառնն վարդենեաց թըփաստանին՝
Մինչեւ յոր հասարակ գըլոց ելն ելն 'ի յարդարել ։
Զի յառնուլ այսպէս ըզգործս հուլ առ միմեանս զօրըն ցերեկ՝
Զինչ ելցեն զարմանալիք թէ այսպիսի մերձ եղելոցս
Ակնարկիք ինչ աչաց եւ ժըմիտ քաղցր անկցին 'ի մէջ ։
Կամ թէ նոր ինչ երեւեալ՝ նորոյ խօսից տայցէ պատճառս,
Հատանել զաշխատութիւն աւուրն եւ դոյն առնել արդիւնս,
Թէ եւ յայդուէ ցընդերեկս, եւ ժամ ընթրեաց ձըրի դայցէ ։ »
Եւ Ադամ զայս դարձոյց ոչք առ նա պատասխանի ։
« Իմ միակ Եւայս, միակ իմ զուգակից, սիրելիդ իմ
Ակնահամեմատ յամենայն կենդանակիր արարածոց,
Յոյժ 'ի դէպ արկեր խորհուրդ, քաջ իսկ 'ի ճահ ածեր զմրտաւ
Լաւ եւս յանդ հանել ըզգործն առ յԱստուծոյ մեզ աւանդեալ ։
Ոչ անդրդուաւ ելցես յինէն ։ զի չիք 'ի կին ինչ սիրելի
Քան խնամոց ուշ ունել տան, եւ զայրն 'ի գործ բարեաց շարժել ։
Սակայն Տէր մեր ոչ խըստիւ պատուէր եւ մեզ զաշխատութիւն,
Հատեալ 'ի մէջ զամենայն զբաւանս յորժամ ալիոց ելցէ
Թէ 'ի մնուանդ, թէ 'ի խօսից կըցորդութիւն մեզ ընդ միմեանս,
Որ այն ինքն է մնուանդ հոգւոյ, եւ թէ 'ի քաղցրը առ իրեարս
Դարձուած փոխարինի հայեցուածոց եւ խընդութեան ։
Զի ժըմիտ 'ի մտաց բըղխէ եւ անբանին ոչ է շնորհեալ,

Սիրոյն է նա Ճարակ, եւ սէր ընդհատ ինչ չէ համբուն
Յայլոց ազնըւական ինչ պիտոյից կենաց մարդոյ։
Ոչ ըստեղծ ըզմեզ Աստուած դառն 'ի զըմբաղ տաժանակոծ,
Այլ 'ի հեշտ զըւարճութիւն, 'ի զուարճութիւն ըզգօնական։
Մի կար շուշա՝ թէ միաբան ձեռք մեր յանկարծ ոչ բաւեսցեն
Սըրբել զաւիղս եւ զհովանոցս զայս զի մի վայրենասցեն՝
Յոր վայր մեզ 'ի Ճեմելիս առ 'ի զգընալ ելցէ պիտոյ,
Մինչեւ ձեռք առոյգադոյնք մեզ զօրավիգ գայցեն ընդ հուպ։
« Իսկ թէ քեզ երկարաձիգ խօսակցութիւն բերէ ձանձիր,
Յանձն առնուլ հաւանիմ ըզբաժանումն ինչ կարճառօտ.
Զի ուրեք միայնութիւն՝ ընկերութիւն է լաւագոյն,
Եւ սուղ ինչ անջատումն ածէ շտապաւ ըզքաղցրը դարձ։
Սակայն այլ խրն տագնապ տարակուսի նեղէ զոգիս,
Խէթ մըտացըս՝ գուցէ չար ինչ քեզ հասցէ յինէն մոցելդ։
Գիտես յինչ խրատեցաք, եւ որպիսի ոք ոմերիմ
Զարակնող երջանկութեանս, առ 'ի յիւրմէն յուսակորոյս,
Խորամանգ խարդաւանօք հնարի զամօթ մեր եւ զաղէտս։
Անշուշտ արթուն ասա ուրեք կայ, տըւրիեալ յուսով գըտանելոյ
Զոր խընդրէն յօգուտ իւր մեծ՝ 'ի բաժանել մեր 'ի միմեանց։
Ամն ինչ չեք նորա հնարից 'ի միասին պատրեալ ըզմեզ,
Զի անդէն եւ անդ միմեանց ձեռն 'ի կարիս տամք յօգնութիւն,
Թէ նախ զայն կամիցի՝ թիւրեալ ըզմեզ յէրին ուխտ,
Թէ խուռվել զամուսնական սէր մեր որ զինքն եւս առաւել
Ի քինալ քան զամենայն դըրդէ վայելը երջանկութեանս։
Եթէ այդ, եւ եթէ այլ ինչ չարագոյն քան զասացեալդ,
Աղէ մի զհաւատարիմ թոլուր ըզկողն որ զկեանսըդ եմ,
Որ ապաւէնդ է դեռ եւս, պատըսպարան եւ պահապան։
Յորժամ վըտանգ ինչ կընոջ եւ կամ գարշանք դարանիցի,
Առաւել յամրի մընայ եւ 'ի մեծի վայելչութեան
Այ առն իւրում որ զնա պահէ, եւ տանի 'ընդ իւր զանհընարինս։»
Կուսական շըքով Եւա, խրբեւ սիրող ոք վըշտակիր,
Եւ նրմա պատասխանի քաղցր եւ խոժոռ հանդարտութեամբ.
« Որդիդ երկրի եւ երկնից, եւ համօրէն երկրիս իշխան,
Զի է մեր թըշնամի առ 'ի կորուստ մեր դարանեալ՝
Ի քէն ուսայ եւ 'ի Զուարթնոցն, զորոյ ըլայ զբանն 'ի մեկնելն՝
Ուր մեկուսի եւ յեռոյ 'ի հովանուտ կայի զանխուլ
Ըզտեղեաքն՝ այն ինչ դարձեալ յերեկորին ծաղկանց փակել։
Իսկ թէ դու յերկբայս ելցես ընդ խորհրդոցս հաստատութիւն
Առ Աստուած կամ առ քեզ, զի է փորձիչ ոք այնմ ոսոխ,
Զայդ ահա բնաւ երբեք չունեի ակրն ըլսելոյ։
Դու ինքնին չըզանգիտես 'ի թըշնամանոյն բըռնութենէ.
Որպէս զի եմք իսկ ազատ 'ի մահուանէ եւ 'ի ցաւոց,

Կրեսցուք եւ ոչ ըզմին, նա՛ զերկուսեան իսկ վանեսցուք։
Ապա զնեղոյն է կասկածդ, յորմէ յառաջ գայ յայանապէս
Եւ երկիւղ քո նոյնպիսի, դուցէ լեցի՛ քեզ տեսանել
Զանցողողդ հաւատս եւ զսէր՝ խախտեալ կամ հալեալ ինչ ըմբռնեալ։
Զի՞արդ միտք այդպիսի տեղի գրեալն 'ի սիրտդ, Ադամ,
Զայսքանոյ քում սիրելւոյդ չարեա խորհել գրտա՞ր կարօղ։»

Ադամ փերկաւէտ բանիւքս անդրէն դարձուած արար.
« Դուստր Աստուծոյ եւ մարդոյն, անմահդ Եւա, զի եւ էս իսկ,
Ձեւ 'ի քեզ եղերանաց եւ յանցուածոց լեալ դատապիտ.
Քաւ թէ առ խէթ ինչ 'ի քէն արգելուցում մեկնել յաչացս,
Այլ միայն 'ի զգուշութիւն 'ի դըրժանաց ոխակալին։
Որ փորձէն, թէպէտ 'ի զուր, բիծ դէթ շրիկ զիսորձեցելոնն,
Ոչ աննենդ կարծել զհաւատն, ոչ մուխ եւ պինդ առ խարդաւանս։
Քեզ ինքնին գոյր խմանալ՝ թըշնամանոք եւ դառնութեամբ՝
Ըզլարեալ վարմից ծուղակսն՝ անդործ թէպէտ դերեւ եղեալք։
Արդ դու մի դանդաչէր՝ թէ դուն գործեմ ես փարատել
Ի քէն եւեթ զայսպիսի ծանականաց ծանրը փորձանս,
Զոր յանդուգն իսկ ոսոխս հաղիւ իշներ մեզ երկոցուն
Մատուցանել 'ի միասին. կամ թէ ժըլտէր ինչ եւս երբեք,
Յիս ինքն հարկ յառաջագոյն գալ անկանել էր իւր մարտին։
Մի յընչաց ըզարութիւն իւր եւ զդրուժան քերեր խաբկանս.
Ո՞չ ջարամանդ է ապաքէն որ ըզհրեշտակսըն հրապուրեաց։
Մի զայլում ուրուք նրպատա համարիցես ինչ աւելորդ։
Զիս յամենայն 'ի հաճոյս շարժէ ազգեցութիւն,
Առաւել զիս խնատուն, արթուն, արի զտանեմ ընդ քեզ։
Կորովդ թէ պէտք լցեն, ակնարկելովդ քով առ իս
Ամենի պարտութեան կամ պատրանացս հասեալ պընդէ
Ըզհոգւոյս համբրէն մասանց ոլորս ուժեղաբար։
Հիմ եւ դու ջրզգայցես ըզնոյն ազդումն յանձն առ ինեւ,
Եւ ջնարիցես ինեւ հանդերձ 'ի հանդիսիդ մըտանել փորձ,
Լաւագոյն վրկայիւս անդրդուելն քում արութեանդ։»

Զայս Ադամ ընտանեբար խնամովք ու՛ի սէր ամուսնական.
Իսկ Եւա՝ զոյն 'ի պատիւ անխոսք մրտացն ոչ գրրեալ շատ,
Քաղցրաձայն բարբառով կրկինեալ անդրէն յաւել 'ի նոյն.
« Թէ հասեալ այսպէս է մեզ վիճակ՝ բնակել յանձուկ ցանկիս,
Պաշարեալ 'ի խորամանդ եւ բրնաւոր վնրագէ,
Ոչ մեն մի առանձին միով ուժով հրզոր վառեալ
Պահպանել զանձինքս մեր յով եւ ուրեք ելցէ 'նդ առաջ,
Զի՞արդ լցեմք բարերջանիկ՝ ցանդ յերկիւղն չարին կրռփեալք։
Այլ քան զմեզ ոչ կանխէ չար. իսկ մատուցեալ ժանան 'ի թեթուա՝
Մեզ թըշնամանս առնիցէ լոկ՝ յանբրծութեանս անարդ խրծբիծ.
Անարդ խրծբիծ իւր ջրդրոշմէ ինչ նախատինս 'ի մեր ճակատ,

Այլ 'ի գլուխ իւր յառաւել դարձցին նրմին խայտառականս։
Արդ ընդէր ոչ խորշել եւ խուսափել մեզ 'ի նմանէ,
Որ շահիմք փառս կրկին՝ զկանխագէտ միտն հանեալ 'ի սուտ,
Եւ ստանամք 'ի հանդիպի անդ ընտրեալքն խաղաղութիւն
Եւ ըշնորհս մշտերմութեան երկնից՝ մերոյս վերկայի։
Եւ զինչ ոչ ոչն հաւատք եւ սէր եւ քաջութիւն առաքինոյ
Ոչ անցեալք 'ի հանդիպի մերկ յարտաքուստ ինչ նշպատոյց։
Մի անկցուք արդ 'ի կարծիս՝ թէ երանիկ կենացս բախտ
Ցիմաստուն Արարչէն թողեալ ոչ է թերակատար,
Մինչ ջրեալ յակատանի թէ բաժանիմք կամ միանամք։
Եթէ այսպէս ինչ ոչ է, երկանկութիւնս է զաղափարուն,
Այսպէս յար 'ի վտանգի՝ ոչ եւս Եդեմ լիցի Եդեմ։»

Ադամ եռանդնալից կրկնեալ անդրէն յաւել առ նա.
« Կին դու՝ լաւ է 'ի կամաց Հաստատչին կարգեալ ամենայն ինչ.
Ձեռքն իւր արարչագործ 'ի հանդերձն իւր դաստակերտս
Ոչ եթող ինչ պակաս կամ անկատար, թող թէ 'ի մարդ,
Կամ 'ի խնամն իւրում բաստին, ամրացուցեալ 'ի դրուստ բրառանց։
Մարդոյն յանձն իւր է վերատանդն, եւ զօրութիւն նոյնպէս 'ի նմա,
Յակամայ կամքս նորին չհասցէ նրմա եւ ոչ մի միտս.
Բայց ըղկամն անմեղչսան կամակարօղ եթող Աստուած,
Զի որ բանին հնազանդի՝ ազատ է նա եւ ինքնատէր։
Եւ ըղբանն ուղիղ հաստեալ, սակայն պատուէր ղգուշութեան եւ՝
Արթուն կալ, մի պատրանաց կերպարանաց գեղոյ բարւոյն
Վրիպակ ինչ ուսուցցէ եւ ջար խրատուս լիցի կամաց,
Տալ գործել ինչ յայնոցանէ զոր վերնարեաց արդեալ Աստուած։

« Արդ չէ կասկածանաց, այլ գրեթէն սերոյ հրաման
Առ իս՝ ըզքեզ խրատել ըստէպ, նոյն եւ առ քեզ՝ ինձ դրնել միտս։
Հաստատուն կամք ապաքէն, սակայն մեզ գոյ եւ տերիւրել.
Զի եւ չէ ինչ անհնարին՝ թէ հրապուրեալ բանն յոսոխէն
Եւ տեսեալ ինչ պաճուճանս՝ անկցի դաւով 'ի զանխուլ խաբս
Թերացեալ յարթնութենէն որում խրատեալ էր կալ պատկառ։
Ապա մի խընդրեր փորձանս՝ յորմէ 'ի գէպ եւս է խուսել,
Եւ գիւրագոյն յինէն չմեկնեալ. փորձն եւ առանց խընդրելոյ գայ։
Արութեանդ հանդէս կամիս, ցոյց նախ ըղքո հպատակութիւն։
Այլ մինչ չեւ 'ի փորձ մրտեալ՝ ոչ առաջնոյդ հաւատացցէ,
Եւ ոչ այն՝ որ վերկայէ. իսկ եթէ դու համարիցես
Թէ 'ի վտանգ յանկարծագէպ, ոչ որում եմքս դիմագրաւ,
Անդ առաւել 'ի միասին դրստանիցիմք յապահովի,
Քան զոր այժմըդ կարծես, յետ այսպիսում առ քեզ խրատու,
Երեթ ապա. զի թէ բրանի մնաս՝ առաւել մեկնիս յինէն։
Երեթ 'ի բնիկ անմեղութեանդ՝ յեցեալ 'ի քոյդ արիութիւն
Ոգեջոյն յանձնիրդ ժողովեալ. քանզի Աստուած արար ընդ քեզ

Զամենայն որ ինչ պարտէրն, խակ արդ ըզքոյդ արա եւ դու։»
Այսպէս զայս նահապետն ազգի մարդկան բարբառեցաւ.
Բայց յամառեալ ոչընդեալ Եւա, թէ եւ հպատակ, ինքն հուակ կըրկնեաց.
«Արդ 'ի քո ներելոյդ, եւ այսպէս խակ կանխաւ խրատեալ,
Մանաւանդ այնր ազագաւ՝ զոր յեռին բանքդ խմատաղեղ
Ազգեցին վեր 'ի վերոյ, զի փորձուԹիւն անակընկալ
Անպատրաստ Թերեւս ըզմեզ գըտանիցէ 'ի հանդիսի,
Սըմին սակս յօժարընԹաց եւ մըտադիւր եւրս գընամ։
Զէ 'ի դէպ ինձ ակն ունել՝ Թէ խրոխտապանծ հակառակորդն
Առ տրկարըն զառաջին արձակեսցէ զէն մարտացու.
Զոր Թէ 'նարեսցէ՝ առաւել ամՊԹապարտ ելցէ 'ի բաց։»
Զայս խօսեալ՝ եհան մեղմով 'ի ձեռանէ առն ըզձեռն իւր,
Եւ իբր Հարան յաւէրժական ԹեԹեւընԹաց եւ հովասուն,
Ի լերանց կամ 'ի մայրից, կամ 'ի Դելեան ատտուածուհւոյն
Յուղեկից պարաւորաց, սլացաւ 'ի Թիւռա անդր անտառակս։
Ակցանէր Ճեմիւք ոսկեն եւ գեւցական կերպարանօք
Զանցանէր քաջ 'ի բաց եւ ըզնովին խակ զԱրտեմաւ,
Թէպէտ չէր իբրեւ ըզնա զենեալ յաղեղն եւ 'ի կապարձն,
Այլ կահիւք պարտիզպանի՝ զոր պարզ արուեստն անփորձ 'ի հուր
Ճարտարեալ էր անդ առ ձեռն, եւ կամ բերեալ 'ի հրեշտակաց։
Զարդարեալ որպէս Պալէս կամ Պոմոնա՝ նոցա նմանէր.
Պոմոնայ՝ փախուցեալումն յերեսաց Վերտումնոսի,
Դեմետրի՝ մինչ 'ի ծաղկին էր դեռ կոյս յիւր Պերսեփոնեայ
Ի Դիայ սերմանելոյն։ Ադամ դիտէր եւ զուարճանայր,
Աչք իւր ձիգ հրաբորբոք հայեցուածով զհեռ ընԹացան,
Բայց առաւել կըզկաԹէր՝ զի անդ առ իւր կացցէ մնացէ։
Ըզպատուէր փուԹով դարձին ըստէպ առ նա կըրկնէր ըստէպ,
Խոստանայր ըստէպ եւ նա գալ 'ի խորանն ըզմիջաւուրբ,
Եւ 'ի կարգ վայելուչ զամենայն պէտսըն յօրինել,
Ի հրաւիրել զինքն 'ի ճաշ եւ 'ի հանդիստ անագանի։
Ո՛հ, իբրե՛ء զի խաբեցար, զի պատրեցար 'ի յոյս դարձիդ,
Է՛ Եւա Թըշուառական. ո՛վ դըժպըհի պատահարիս։
Ոչ եւս այլ դըտցես 'ի դրատադ՝ ոչ ճաշ համեղ, ոչ խոր հանդիստ.
ՈրոգայԹ կայ լարեալ 'ի մէջ ծաղկանցդ եւ հովանեաց,
Քէն եւ ոխք դըժոխային՝ դարանին քեզ եւ ըսպասման
Ակնանել քեզ խոչ ընդ ոան, եւ կամ անդրէն յըղել ըզքեզ
Մերկ կողոպուտ յանմեղ կենացդ, 'ի հաւատոց, յերանուԹեանց։
Զի այժմիկ յայգուէ հետէ Թըշնամին՝ օձ սոսկ երեւեալ՝
Էր եկեալ 'ի խընդիր վայրին ուր ակն ունէր դատանել
Զերկոսին եւեԹ զարմի մարդկան, սակայն եւ 'ինոսա
Համբրէն ըզսուհմ նոցին՝ ըմընկատեալն ինքեան աւար։
Որոնք յանտառակս եւ 'ի յեղուիւրս՝ յոր կոյս եւ Թուէր

Թրփուա ինչ եւ կամ մասին պարտիզին առաւելեալ
Ի խընամ, 'ի ձեռատունկ՝ ըզբօսանաց ինչ գրդարան։
Առ ափամբ աղբերաց, հովանաւոր կամ վրտակի,
Ջերկոսին իակ խընդրեր, սակայն 'ի սերտ սրբոյ ցանկայր
Թէ 'ստ բախտի առանձինն Եւա նրմին պատահեսցէ.
Ցանկանայր, այլ ոչ յուսով դրժուարադէպ իրին գիւտի։
Եւ յանյոյս աւասիկ՝ ըստ ցանկութեան սրբոյ իւրում՝
Տեսանէ զԵւա միայն անուշահոտ ամպով պրոլեալ,
Ուր կէս 'ի կէս երեւէր առ Թանձրախուռն եւ Թաւաթուփ
Վարդից զիւրեւ վառվառելոյ, եւ ստէպ ըստէպ կրքէր 'ի վայր
Ընդրբածիլ կանգնել ծաղկունս, որոց գրլուխք երփնանրկարք
Ծիրանի, կապուտակ կամ ոսկեխայտ՝ անմոյթ հակին,
Ջորբս նա մրբտեղի կապով ուղղեր վայելչապէս.
Ղածեալ զմրտաւ՝ զի եւ ինքն եւբս ծաղկին ամենագեղ
Անեցուկ կայր հեռացեալ 'ի լաւագոյն հաստարանէն,
Մինչդեռ անդ առ կռան հասեալ կայր փոթորիկ մրբրբկախառն։
Մերձենայր օձն անցեալ ընդ ձեմելիս բազմապատիկ,
Մեծաշուք հովանացեալս 'ի մայր, 'ի շոճ, յարմաւենիս.
Մերթ 'ի ճոճ ձեմեալ խրրոխտ, մերթ թաքթաքուր գաղտագողի,
Մերթ 'ի թուփան երեւեալ 'ի մանուածոյ գեղապարոյրս,
Եւ 'ի ծաղկունսն բակ առեալս ատսի անտի շուրջանակաւ.
Գործ ձեռացն Եւայի, միայնարան բերկրատատար
Քան զպարտէզս առատպելեալս Աղոնիսի յարուցելոյ,
Կամ ըզպերճն Ալկինոյեայ հիւրընկալն քաջն որդւոյն
Ծերունւոյն Լայերտեսի, եւ կամ քան զոչ խորհրդաւորն՝
Ուր արքայն Հանճարեղ ընդ գեղեցիկ Եգիպտուհւոյն՝
Ընդ իւրում հարսին գրդուեալ զուարճանային միմեանքբ 'ի սեր։
Զարմանայ նա յոյժ ընդ վայրսն, եւս առաւել ընդ Եւայի։
Որպէս ոք զի արդեալ յերկար յոստան ինչ բազմամարդ,
Այր խիտ առ խիտ առնեալ եւ առուք ալբանոցացն նեխեն զոդ,
Ընդ գարնայնն այդս եղեալ ոգի առնուլ 'ի հեշտ գիւղեանն
Եւ յառընթեր ագարակս՝ ընդ ամենայն ինչ հեշտանայ,
Ընդ բուրումն ցորենոյն կամ ընդ հընձեալ սրփաեալ խոտոց,
Կամ կովուց եւ կրթեղեաց, թէ շինական ուրբք տեսկ,
Թէ ձայնիկ մի գեղջայնն, պարարէ զսիրտն այդ ամենայն.
Բայց յանկարծ թէ գեղեցիկ, ձեմեալ զերդ Հարան յաւերժական,
Կոյս մի 'նդ այն անցանիցէ, որ ինչ նրմա քաղցր էր յառաջ՝
Առաւել քաղցրանայ նոքաւ որ գէն զբոլորեսին,
Եւ զամենայն հեշտութիւն յականողս իւր ժողովէ։
Այսպիսի բերկրեր օձն ընդ ծաղկաւէտն բուրաստան,
Քաղցր առանձնոց Եւայի, յոր միայնուկ առաւօտեալ։
Կերպարանք անձին իւրոյ հրեշտակագեղ եւ երկնաւոր,

Բայց փափկագոյն անուշակ եւ առաւել կանանցական,
Շնորհաշուք անմեղութիւնն եւ շարժուածոց ձեռացն օրէն
Կամ այլոց մանուանց շարժմանցն՝ ահ չարութեան իւրում լինէր,
Եւ տակաւ կապտեր գկորով բերեալ մտացըն բընութեան։
Յայնժամ չարըն միակ՝ անդատաւ յիւր չարութենէն,
Եւ ըստ ամն զայն եկաց ապուշ բարի, եւ զինաթափ
Յոխոցն, 'ի նենգութենէ, 'ի մահանաց քինու վրիժուց։
Բայց դրժոխք բոցավառ մըշտաբորբոք 'ի սիրտ նորա՝
Յերկնանման իսկ 'ի վայրին կարձեաց անդէն ըստ հեշտութիւն,
Զար եւս ասնջեալ՝ զի տեսանէր դրդանս ոչ իւր ինչ պատրաստեալ։
Զմոլեգին կոչեալ յայնժամ զատելութիւն, եւ խընդամիտ
Ի խորհուրդս չարութեան՝ ձայն բոլորից ասայ զայս գունակ.
« Խորհուրդք, յո՞ զիս տարայք, որո՞վ ամոք ինն յորդորմամբ
Գրաւեցայ 'ի մոռանալ զայն ինչ որ այսր եղեր ըստեղ։
Աստելութիւն, եւ ոչ սէր, ոչ յոյս դրախտի դժոխոց փոխան,
Եւ ոչ ակն երբեք ունել ասա հեշտութեան ինչ ճաշակաց,
Այլ ըստ հեշտութիւն զամենայն առհասարակ եղծանելոյ,
Բաց միայն՝ զոր ասայ եղծուն, այլ խնդագ յինեն կորեան 'ի սպառ։
Հաստա մի կորուսցուք զպատեհս որ արդ յիս ծիծաղի.
Աստսիկ կինն միայն, յամենայն ըստրս մատնեալ որս։
Այր նորա, շուրջ քաղ 'ի բաց տեսանեմ ես, չէ առ նրմա.
Ի նորա զօրութենէն եւ հանճարոյն յաւէտ խուսեմ.
Յոխորտ, արիասիրտ եւ անդամոքք գիւցազնացեալ,
Թէպէտ հոգաղանգուած, չէ թըշնամի ոք ապիկար։
Ինքն անվէր, իսկ ես ոչ. այնչափ դրժոխք նուաստացոյց զիս,
Այնչափ կիրք յերկնաւոր աշուճանէս զիս ընկեցին։
Գեղեցիկ է Եւա՝ գեղեցկութիւն ասատուածեղէն,
Յաստուածոց կարգեալ 'ի սէր, չիք ինչ 'ինձա երկիւղալի,
Թէպէտ եւ ըստուդիւ գուցէ երկիւղ 'ի սէր ու 'ի գեղ՝
Եթէ ոչ ուժգնագոյն ատելութեամբ ոք մերձեսցի,
Ուժգնագոյն ատելութեամբ՝ որչափ սիրոյ պատճառանօք։
Ընդ այս մընիսմ ես ճանապարհ 'ի կործանումն սորին։ »
Այսպէս զայս խօսեցեալ հակառակորդն ազգի մարդկան,
Զարարուեստս հիւր օձին՝ յորում թաքչէր դարանամուտ,
Հետեւէր յԵւա կոյս, ոչ գեսնաքարշ յայնժամ սողեալ
Ի գալարս ալեաղնեալս, որպէս ըստ կնին սովորեցաւ,
Այլ կանգնեալ 'ի յետոյն 'ի բոլորակ մանուածապատ՝
Որ զինքեամբ ոլորատպոյտ՝ 'ի բուրդն ատէր բաւականաձեւ։
Կատար ցըցունտարդ եղեալ ճօճէր 'ի գլուխ իւրում,
Աչքն էին կայծ կարկեհան, վիզն ոսկեղէն գորշականաչ։
Կայր կանգուն 'ի սպատ 'ի սպատ եւ ման 'ի ման պարոյրսն՝ 'ի մէջ՝
Որ ճօճ առեալ յորդորեալ ծածանէին վէտ վէտ 'ի սէզն։

Հաճոյ եւ գեղաւոր կերպարանացն էր իւր տեսիլ,
Որ երբեք այնուհետեւ չեղեւ օձից ազգի այն գեղ,
Ոչ յոր Կադմոս փոխեցաւ եւ Հերմիոն 'ի Լիբիկէ,
Եւ ոչ այն՝ որ եղեւ Եպիդաւրի յասատուած, ւոչ այնք՝
Յոր դէմս Ամենոն Արամազդ եւ կամ տեսաւ կապիտոլէանն,
Աւաջինն ընդ Ոլիմպեայ, երկրորդն ընդ այնրմ հռոմուհայ
Որ ծընաւ զբՍկիպիան՝ զհռոմէականն բարձրութիւն։

Խոտորընթաց, որպէս ոք՝ զի խընդրիցէ առ ոք մատչել,
Բայց երկիցէ լինել խափան, նախ կողմնակի պատի շաւղք,
Որպէս նաւ 'ի Ճարտար նաւապետէ ղեկավարեալ
Ի բերան ինչ գետոյ կամ առընթեր հրրուանդանի,
Ըստ հոլմոյն փոփոխել՝ յայսկոյս եւ յայն զթեւաքն շրջէ,
Նոյն նա զարտանն ալեաց շարժմունս յաչս Եւայի յեղյեղեալ՝
Ոլորեր պէսպէս անիւս՝ ըստ հայեցուածոյն զոշոտել։
Մինչ նա զբաղեալ կայր՝ ընաւ ընտրեալոց ջախջախ խարշապ,
Ա՛յլ անփոյթ արար՝ սովորն 'ի տեսանել միշտ 'ի դաշտին
Աւաջն իւր խաղացեալ զվայրի գազանն ամենեսեան,
Առաւել եւս հրրութեամբ հրպատակեալ ձայնին իւրում
Քան զնոցանն այլակերպեալ՝ ձայնին Կիրկեայ բարբառելոց։
Յայնժամ նա, յանդգնագոյն անկոչ անցեալ կաց առաջի,
Սակայն գոգցես իբրեւ այն թէ հիացեալ 'ի սքանչելեաց։
Էր ուրեք՝ զի քընքշանօք ետն ըզկատար իւր խրոխտ հակէր
Եւ զոտորկ ըզպարանոցն նրկարէն կիտուածազարդ,
Եւ ըստ ողն լիզանէր՝ զոր Եւայի կոխէին ոտք։
Վայելուչ անձայն խօսիցն հանգամանք յինք դարձուցին
Զաչքս նորա հուսկ ուրեմն 'ի նրկատել ըզնաղտս իւր։
Զուարթացեալ ընդ ուշ նորին՝ գործարանաւ օձին լեզուի
Կամ ձայնական օդոյն բախմամբ՝ զնենգող հրապոյրսն այսպէս սկըսաւ.

« Տիկին դու ամենեցուց, մի զարմանար. թէ ինչ մարթ
Ընդ զարմանս ինչ գալ քեզ՝ որ ես միայն զարմանուհիդ։
Մանաւանդ մի՛ աչս առ ես կառուցաներ արհամարհոտս, —
Աչք որ երկինք են քաղցրութեան, — յառ քեզ մատչելոս գըժգըմեալ
Եւ յանցագ 'ի քեզ պըշնուլս. ես աւասիկ այսպէս միայն
Ոչ շըրտեայ յերեսացդ՝ որ առանձինն ահեղ եւս է։
Ո՛վ գեղեցիկ Արարչիդ նրմանութիւն ամենագեղ,
Համբերէն շունչ կենդանի 'նդ քեզ պակշոտեալ ըսքանչանան.
Ամենայն, որ քեզ պարդեալք են սեփականք, երկրպագեն
Երկնապարծ քում գեղոյդ՝ հիանալեօք զայն զընտրելով։
Գեղ առաւել սրխրալն՝ թէ 'ի սքանչանս յոգուոնց կայցէ.
Սակայն ասա՝ 'ի վայրենի ցանկապատս, յանբանից ջրկս,
Որ տեսողքն են գրաստամիտ՝ անբաւականք 'ի նրշմարել
Եւ ոչ 'ի կէս այնորիկ որ ինչ յանձին քում փայլէ գեղ,

թող ըմբռդ մի եւեթ, ոմ այլ ըղքեզ ոք տեսանէ։
Եւ մին ըստ զինչ է 'ի տեսդ՝ որ արժանիդ ես երեւել
Յաստուածս անդ աստուածուրիւն՝ երկրպագեալ եւ պաշտեցեալ
Յանհամար հրեշտակաց հանապազորդ պաշտօնէից։»
Այս էին սուտակասպաս փորձիչն շողոմք, այս բանի սկիզբն։
Անցեն ձայնքն յԵւայի սիրտ, թէպէտ ափշեալ յոյժ ընդ բարբառն։
Ի սքանչիցն հուսկ ուրեմն յինքն եկեալ՝ արար դարձուած։
«Զինչ է այս։ մարդկեղէն խօսեալ բարբառ եւ միաք մարդոյ
Ազգեւոր յայտնաբանեալ յանանկեղէն լեզուէ ասոյ։
Կարծէի թէ պաճարացքս գոնէ խօսք չէն պարգեւեալ,
Եւ թէ Աստուած անդ յաւուր արարչութեան ազգի իւրեանց
Յօդաւոր բարբառոյ փոխան անմուռունչ եդ ընկնասս։
Ընդ ըստացն յերկրայս կայի, զի յանանոցն աչս եւ 'ի գործս
Բազում այն է ուր խնասս ինչ բանաւոր տեսանի յայս։
Ի վայրի գաղանս ըզքեզ խնասանագոյն գիտէի, օձ,
Բայց անդէտ էի թէ ձայն իսկ մարդաձայն շնորհեալ է քեզ։
Յաւել արդ 'ի սքանչելիսդ, ասա զնմանդ ցայժմ անբարբառդ
Եղեր խօսուն, եւ զնմանդ հանդիպեցար ինձ բարեկամ
Քան զոջոյն ստոյգ անբանից որ յարաժամ առաջիս կան։
Օ՜ն ասա, զի արժանի մեծարդրութեան է սքանչելիքդ։»
Փորձիչքն խորամանդ այսպէս յաւել կըրկնել անդրէն։
«Գեղեցիկ աշխարհիս բամբիշն Եւա ըստաստեսիլ,
Ինձ առնել դիւր է զհրամանդ, եւ հնազանդել արժան է քեզ։
Ես ինքնին յառաջագոյն հանդոյն էի այլ երէց,
Որ ըզնոսրն Ճարակեն ըզնոսանիխուռն ոտից կոխան։
Անարդ եւ նրկնախոհ խնասաքս էին ըստ Ճարակիս,
Այլ ինչ ոչ գիտելով քան զկերակրոյ եւ զեղէն պէտս,
Ի բարձանց եւ 'ի վեհից ինչ խնտալ անբաւական,
Մինչեւ յօրն յորում շրջեալ ընդ դաշտ տեսի 'սա զիպաց հեռուստ
Ծառ մի լի գունագեղեալ պըտղով յոսկի եւ ծիրանի։
Մատեայ հայէ, բուրեաց յոստոցն հոտ անուշից՝ քաղցր եւ 'ի քիմս,
Կախարդեաց զըզդայունս իմ քան ըզհոտ անոյշ սամթի,
Քան զըստենս մաքեաց եւ կամ զայծից որ ընդ երեկս
Ծորեն զկաթն իւրեանց 'ի շիթս՝ ըզեւ ծըծեալն 'ի գառանէն
Կամ յուլոյն՝ որ չպարապէն 'ի կայտառելոյ խաղուց իւրեանց։
«Ի ընտուլ զոյժ փափաքումիցս Ճաշակաց չբքնալ մըրդոցն
Ի մսի եդի չյապաղել, քաղցն եւ ծարաւ համոզակելոք
Ի հրապուրող պըտղոյն հոտոյ երկնեալք՝ կարի սակաւկին զնս։
Պատասխանեալ վաղվաղակի անդէն 'ի բունն մամռասպատ։
Զի առ. ժաման լինելոյ 'ի Ճիւղսն յերկրէ ամբարձուղէշ՝
Քոյինդ այդ պտոյ հասակ էր բարձրագեղ կամ Ադամայն։
Կայեն շուրջ ըզծառոնն հայեցեալք յիս միւս կենդանիք,

Կաթողնեալք 'ինքմին ցանկութենէ 'նդ իս խանդալով,
Բայց չէին ինչ ձեռընհաս անդր 'ի պրտուղսն ժամանել։
Իմ 'ի ջնոլս հասեալ տընկոյն՝ ուր հրապուրիչն այն մերձաւոր
Կայր 'ի կախս առատութիւն, չեղեւ դրչալ ինձ դադարել
Ի կթելոյ եւ յուտելոյ ցյադ կրշտապինդ. զի մինչ յայն ժամ
Ձեւ էր իմ զայն համ առեալ 'ի կերակուրս եւ յաղբերս ջուրց։
« Եւ յադեալ՝ իսկ եւ իսկ ծանեայ յանձին նոր փոփոխումն,
Ի նեղքին զորութեանցս 'ի բանաւոր հասանել չափ.
Եւ բարբառ ոչ յասպղեաց, թէ եւ իմ նոյն էր կերպարանք։
Յայնմհետէ միտք իմ դարձան 'ի բարձր խմաստ կամ խորագոյց,
Եւ լայն հանճարով նրկատէի զերեւելիս
Որ յերկինս, յերկրի կամ յօդս՝ ըղգեղեցիկս եւ ըղբարիս։
Այլ որ ինչ դամ մի աղնիւ ուրեք ելգէ ինչ եւ չըքնաղ՝
Զամենայն միահամուռ յաստուածային քում պատկերիդ
Եւ 'ինքշյնս երկնածաղիկ գեղեցկութեանդդ զլսանեմ։
Զեք ուրեք չեք գեղ քոյումդդ համեմատ եւ կամ երկրորդ.
Նա ստիպեաց զիս գալ, թերեւս եւ 'ի տաղտուկ քեզ դրժպրհի,
Տեսանել ըզքեզ, պաշտել ըզքեզ որ էադ իսկ իրաւամբք
Ծանուցեալ էից դրշնոյ եւ տիրուհի տիեզերաց։ »
Զայսոսիկ օձն խօսի ոգիաբնակ եւ խորամանդ,
Իսկ Եւա՝ Եւս հիացեալ՝ կըրկնեաց անդրէն անմըտութեամբ.
« Օձ, դոլեսադ 'ի վեր քան զչափ՝ 'ի տարակոյս զիս պաշարէ
Ընդ պրտղոյն զորութիւն որ զառաջինն 'ի քեզ տեսեալ։
Բայց ծառդ ո՞ւր տընկեալ իցէ, ասէ ասա, հեռի՞ ասուսա.
Զի բազում են Աստուծոյ ծառք աձեցեալք ասա 'ի դրախտիս,
Եւ շատ եւս այն են որ դեռ անծանօթ մեզ են տակաւին։
Այնչափ է առատութիւն պրտղոց յընտիր մեզ արարեալ,
Զի եւ ոչ ձեռն 'ի յոգունցըն կարկառեմք ճոխութիւն մեծ։
Կան կախեալ անապականք մինչեւ ծընցին մարդիկ քաղել,
Եւ ձեռաց յոլովագոյն յաճախութիւն մեզ օգնեսցէ
Փոքրագի գործել բնութեան ըզբեռն իւրոցըն ծընընդոց։ »
Ա՛ւ որ վիշապն դաւաճան բերկրասպատար եւ խրախամիտ.
« Դիւրին յոյժ է ճանապարհն, ով թագուհի, եւ ոչ երկայն։
Անդր յայնկոյս ճեմելեաց մըրտատանին 'ի մարդ գալար
Ա՛ւ աղբերն կայ նա, եւ 'ի սպառուած անտառակին
Որ ըղհոտ բուրէ զանոյշ զըմրնեենեաց եւ խընկենեաց։
Թէ առնուս զիս առաջնորդ՝ ածից ըզքեզ փուութանակի։ »
« Ե՛կ, ասէ Եւա, տար զիս »։ — Օձն առաջնորդ անդէն եւ անդ
Ըզմանեակսն պարզեալ, թէպէտ եւ դէռ եւս դալարուն,
Յուցանէ զայնս ուղղածիգ՝ կաղմ եւ պատրաստ 'ի չար ոճիրն։
Յոյս ըզնա քաջալերէ եւ խինդ վառէ զդրշնոյն ցրցունս։
Որպէս հուր ինչ մոլի՝ լուցեալ պարարտ թանձրը շոգեօք

Զոր գիշեր խրատացուցէ եւ ցըրտութիւն պատիցէ շուրջ,
Շարժմամբն 'ի բոլոր բորբոքեալ, — եւ բազում այն է զի ասեն,
Կայ 'ի նմին այս խիզն ջուր, — նենգոտ լուսով փայլեալ յածի,
Եւ զուգեւոր գիշերընթաց շուարեալ յուղոյ իւրմէ հանեալ
Ի ճախճախուտս եւ կարակուտս ածէ 'ի մօրս եւ 'ի ճահիճս,
Ուր անոք անօգնական խորասուզեալ գնայ 'ի կորուստ.
Այսպէս օձն մահաւիթ փայլեալ տանէր դաւով զԵւա՝
Զմայրըն մեր գիւրահաւան՝ առ մեծատատն արդելեալ ծառ,
Առ արմատն ամենայն չարեաց մերոց եւ աղետից,
Յոր դամ մի լեալ ակընկատոյց՝ ասէ անդէն ցառաջնորդ իւր.
« Մարթ էր, օձ, ինայել բընաւ զաշխատութիւն այսքր գալոյս
Զանպտուղն վասն իմ, թէ եւ առատ է ատա պտուղ.
Զօրութիւն նորին առ քեզ եւեթ ինչ լեալ բարերար,
Արդարեւ զարմանագործ, թէ արդասիքն են այդպիսի:
Սակայն մեզ 'ի տունկդ այդ չիք ոչ հուպ երթալ, ոչ ճաշակել,
Այսպէս զայս մեզ Աստուծոյ տալեալ պատուէր, եւ աւանդեալ
Զայս եւեթ մեզ հրաժեշտ՝ զիւրոյ ձայնին միակ ծընունդ.
Յայլ ամենայն՝ ազնկամի կամք, եւ մեր միտքս են մեզ օրէնք:»
Փորձիչքն նենգաժոտ կրկնեալ անդրէն յաւել առ նա.
« Եւ ինչ՞ ինչ ճշմարիտ. արդ պատուիրեաց ուրեմն Աստուած
Ի բնաւ արնկոց պարտիզիդ պտուղ երբեք մի ճաշակել
Զեզ տերանցդ անուանելոց որոց յերկրի եւ որ ընդ օդս:»
Իսկ Եւա՝ դեռ անմեղ. « Ըզպարտիզիս մէն մի փայտից
Եմք իշխան զնայրիսն ուտել, բայց 'ի մէջտեղ ջրքնաղ ծառոյդ
Որ 'ի մէջ պարտիզիս՝ ասաց Աստուած Մի ուտիցէք,
Եւ մի հուպ երթայցէք, զի մի գուցէ մեռանիցիք:»
Աստուեալ նորա զայս համառօտիւք, փորձիչն յայնժամ
Առաւել խիզախեալ, բայց խընամոց պատճառանօք
Եւ առ մտրզրն սիրոյ, եւ առ ցասման նորա ինասուն,
Նոր իմն առեալ կերպարանս եւ իբր 'ի գուռեթ խանդաղատեալ,
Ի ծուխս անկեալ տատանի վայելչապէս եւ կանգնի կայ,
Իբրեւ այն թէ զմեծէ եւ զկարեւոր խընդրոյ ճառել:
Առ հընով ժամանակօքն՝ յԱթենս եւ կամ յաղտան 'ի Հռոմ,
Ուր ճոխայր ճոռոմ եւ պերճ ճարտարաց ճառ, կարկեալն ըզկնի,
Քաջանուն ճարտարախօսն յանձն առեալ մեծ ինչ դատատատն՝
Կայր յոտին յինքն ամփոփեալ, մինչդեռ անձնիւր անդամք մարմնոյն,
Շարժմունք իւր ամենայն եւ ամենայն ձեռին ձրդուածք
Յառաջ քան ըզբարբառն յունկընդրութիւն ձգէին զատեանն:
Իր ուրեք՝ զի ապ յապոյ լեալ միջամուխ բարձրաձայնէր,
Առ նախանձուն արդարութեան խուսեալ յերկար նախաբանից:
Օրինակ զայս անդէն ըզկայ եւ զշարժ առեալ փորձիչն,
Եւ կանգնեալ յոլջոյն հատակն՝ ազազակեաց ձայն պակշտեալ.

« Ո՛վ տունկ նբւիրական, ով խնամատունդ խնամանարար,
Գիտութեան մոյր, այժմ ահա տեսանեմ՝ յիս ըզգօրութիւնդ
Որ զիս լուսաւորէ՝ ոչ յընտրութիւն եւեթ իրաց
Ի պատճառան, այլ եւ 'ի գիւտ ճանապարհաց անվրիպութեանց
Վերնական գործմնէից ամենիմաստ կարծեցեալց։
Տիեզերաց Թագուհիդ, մի դու սաստիկ ըսպառնալեաց
Հաւատար մահուն, դուք ոչ մեռանիցիք. եւ զի՞ հընար.
Ի պրոզիոն. նա ձեզ ըզկեանըս գիտութեան պարգեւեսցէ։
Ի սպառնողէն. աղէ յիս հայեցարուք, որ ոչ միայն
Հուպ երթեալ, այլ եւ կերեալ, սակայն ահա կենդանի կամ,
Նա եւ 'ի կեանս վերադոյն քան զվիճակեալն ինձ լեալ ժամն,
Ի վեր քան ըզբաշխից բաժինն իշխեալ զիս ամբառնալ։
Փակեացի՞ առ 'ի մարդոյդ՝ որ բաց եւ հորդն է անբանին,
Կամ վառեսցէ՞ զբարկութիւնն Աստուած 'ի գլուխ թեթեւ յանցմանս.
Նա՝ եւ ո՞չ իսկ գովեսցէ զարիութիւնդ անընկճելի
Որ ընդ մահու սպառնալեօքն, որ զնոչ եւ մահն այն գոտանիցի,
Ձեկաց յեռս՝ 'ի յանդ հանել զոր ինչ կարօղն էր միանգամ,
Յերանագոյն փոխել կեանս՝ 'ի գիտութիւն բարւոյ, չարի։
Բարւոյն, զնոչ ուղղագոյն. չարին, թէ չարն ևցէ ինչ իր,
Ընդէր չիցէ գիտել զայն առ դիւրագոյն ըզգուշութիւն։
Աստուծոյ չիք ինչ հընար՝ հարկանել զձեզ եւ արդար կալ.
Թէ չէ արդար, չէ եւ Աստուած. ոչ անդ երկիւղ, ոչ հըլութիւն.
Այդ իսկ ձեր երկիւղ մահու՝ ինքնին 'ի բաց հեռեալ զերկիւղ։
« Այդ առ ինչ արդեւզ՝ առ ինչ, բայց յահաբեկ առնել ըզձեզ.
Այ ինչ՝ թէ ոչ նրկուն ունել ահմարքս զիւր երկրրպագուսդ։
Քաջ գիտէ՝ զի յաւուր յորում զպրտուլս ուսիցէք զայս,
Աչք ձեր կարծեալ լուսաւոր՝ սակայն արդեամբք խեղ եւ շաղոյն,
Բանայցեն անպըղտոր յըստակութեամբ, եւ լինիջիք
Իբրեւ զաստուածս խմանալ զբարին եւ զչար հանգոյն նոցին։
Քանզի եմ ես իբր ըզմարդ, մարդ ըստ նեբբին հանդամանաց,
Ըստ նրմին արդար կըշռոյ մընայ լինել ձեզ իբր աստուածս,
Իմ եղեալ մարդ յանդանն, 'ի մարդկանէ դուք լեալ աստուածք։
Մեռանիցիք արդ թերեւս 'ի մերկանալ ըզմարդն 'ի ձէնջ,
Ի զգենուլ զաստուած. ով մահ փափաքելի, թէ եւ սպառնամբ.
Զի եւ չիք իսկ չիք նրմա՝ չար ինչ քան զայդ 'ի ձեզ ազդել։
« Եւ զնոչ աստուածքն ևցեն ինչ, զի չլինիցի մարդ ըստ նոցա՝
Բաժանարդ լինելով աստուածահլաչ կերակրանաց։
Նախագոյն գլուսն աստուածք, եւ խրախուսեն 'ինոյն պերճանս՝
Ի հաւան ըզմեզ ածել թէ ամենայն է 'ինոցունց։
Յերկուանամ. տեսանեմ զերկիրքս զայս ըզգեղեցիկ
Զի ջեռեալ յարեգանէ բուսուցանէ զամենայն ինչ,
Իսկ նոքա՝ բնաւ ինչ ոչ։ Թէ 'ինոցունց է ամենայն,

Ո՞վ ապա զգիտութիւն բարւոյ՝ չարի պնկեաց 'ի ծառդ,
Զի որ ուտէն զք 'ի մերդոյն՝ յիմաստութիւն դայ նոյնժամայն
Անհրաման 'ի նոցանէն. եւ յի՞մ լցէ յանցու�արդեօք,
Եթէ մարդն սովին 'ի գիտութիւն հասանիցէ:
Աստուծոյ զինչ վնաս առ 'ի ձերմէ գիտութենէդ,
Կամ զինչ տունկդ ընդդէմ կամաց իւրոց աղդել ինչ ունիցի,
Թէ նորա են ամենայն. առ չարակնի՞լ ինչ գործիցէ.
Եւ լցէ՞ չարակնութեան յերկնաւոր սիրոցս ունել մուտ:
Այս ահա իրաւունք, այս եւ բազում ինչ այլ եւ այլ
Յայտ առնեն թէ դեղաղէշ պրտղոյս այսմիկ պէտս ունիք դուք:
Մարդիօրէն աստուածութիւն, ՇՆ կրթեա կեր ազատաբար:»

Զայս ասաց, եւ բանք նորա խարդաւանող լի խաբկանօք
Խոր 'ի սիրտ Եւայի դիւրամուտ լեալ գամբս գրեին:
Պրշուցեալ հայէր 'ի միրգն որ լոկ տեսլեամբն եւեթ իւրով
Բաւական էր 'ի հրապոյրս, եւ գեռ 'ի լուր եւս ականջացն
Հընչէին տակաւին համոզակեր բարբառոյն ձայնք,
Որ նրմա հանձարիմաց ճշմարտութիւնքդն թրւեցեալք:
Գայր յայնժամ մերձենայր եւ ժամ աւուրն հասարակի,
Եւ շարժէր սովալըլուկ անտուաղութեան ախորժ Եւա,
Զոր եւ հոտ իսկ քաղցրահամ պրտղոյն յաւէտ եւքս գրգռէր:
Յօժարեալ նորա յայնժամ մատչէլ 'ի մօտ եւ ճաշակել,
Զաչն յառեալ փոփաքանօք էր նա 'ի նոյն ակնակրռիւ:
Սակայն կայ վայրկեկ մի եւս, եւ լինի յանձն իւր մրտախոհ.

«Մեծ իսկ քո՛ են զօրութիւնք անշուշտ, ով միրդ աղնրւական.
Թէպէտ մարդոյս արգելեալ, բայց արժանի ես զարմանաց,
Որոյ հիւթդ՝ յերկար անտես լեալ՝ յառաջին անդ 'ի ճաշակս
Անիսօսին շնորհեալ է բան, եւ անբարբառ անյօդ լեզուին
Ուսուցեալ քարոզել ըզմեծ պարծանս քում երախտեացդ:
Որ ըզպէտսդ արդել 'ի մէնջ՝ եւ նա զքո շնորհսդ ոչ թաքոյց՝
Անուանեալ ըզքեզ բարւոյ եւս եւ չարի գիտութեան ծառ:
Ըզմեզ հրաժարեցոյց 'ի ճաշակացդ, այլ՝ նոյն իսկ ստատն
Առաւել առնէ զպատիւդ՝ յայտ արարեալ զոր տաս բարիս,
Եւ ըզմեր իսկ պէտս. անշուշտ չիք զանծանօթ ունել բարին,
Եւ թէ զք ունիցի եւ տակաւին անյայտ մնայցէ,
Այնպէս է, որպէս զի ինաւ ամենեւին իսկ ինչ չունել:

«Պարզ ասել. արգելու 'ի մէնջ նա զինչ. ըզգիտութիւն.
Ըզբարին խափանէ, զնմաստութիւն կարձէ 'ի մէնջ.
Արդեւք այսպիսիք 'ի կապանաց չեն համարի: . . . .
Սակայն, եթէ մահ վերջին կապանս ըզմեզք արկցէ,
Զինչ շահ մեզ, զինչ օգուտ ազատութիւնդս մեր ներելին.
Որ օր զչքնաղս ուտեմք խայրի, այս է մեր դատ, մեռանիմք: . . .
Օձն լցէ՞ ինչ մեռեալ. եկեր եւ կեայ եւ խմանայ,

Խօսի, խորհի եւ դասի, այն որ անբանն էր մինչ ցայնժամ։
Մեզ միայն հնարեցաւ մահ, եւ կամ Ճաշակս այս մըտաւոր
Հատեալ առ 'ի մէնջ՝ անբան դասնն եւ եւ թ պահի։
Թըւի թէ անբանից. բայց մի պաՃարդ որ նախն եկեր՝
Ոչ միայն չապահէ, այլ խընդութեամբ առնէ հաղորդ
Վիճակեալ նըմա բարւոյն, խորհրդական անկեղակարծ,
Մարդասէր, զատեալ մեկնեալ 'ի պատարանաց եւ յարուեստից։
Արդ ուրեմն զի՞ խիթամ, կամ մանաւանդ գիտցեմ ինչ՝
Զինչ ինձ կայցէ խէթ 'ի բարւոյն կամ 'ի չարին անգիտութեանս։
ՑԱստուծոյն կամ 'ի մահուան, եւ յօրինաց կամ 'ի պատժոց։
Այս ամէն ամենայնի դարման՝ պըտուղս ասատուածեղէն,
Գեղեցիկ 'ի տեսանել, յիւր 'ի Ճաշական յորդորական,
Եւ զօրութիւնն անեղկմիտ՝ դընել զկերոյն խնասակիր։
Զի՞ եւս ինչ այսուհետեւ արգելուցու 'ի քաղելոյ,
Եւ զմարմին եւ զոգիս առհասարակ սընուցանել։»
Ասացեալ, եւ ձեռն յանդուգն 'ի չար ժամու ձգեալ 'ի պտուղն՝
Ա՛ռ կըթեաց եւ կերաւ. ըզգաց երկիր ըզվէրն ազգոյ.
Բնութիւնն 'ի հիմանց հեծեծելով ընդ սիրտ էից՝
Եւ նըշան չարաշըշուկ՝ եթէ կորեաւ ամենայն։
Վիշապն մեղապարտ 'ի թաւալթուփս ուրեք փախեաւ.
Եւ կարի քաջ. զի այժմ 'ի միրգն հարեալ Եւա բոլորովին՝
Ցայլ ինչ չհայէր, թըւեցեալ թէ չէր երբեք մինչեւ ցայնժամ
Ճաշակեալ համ այնպիսի անուշահամ յայլոց խայրեաց,
Կամ արդեամբք եւ կամ ցնորիւք մեծի յուսոյ նոր գիտութեան.
Զանկանէր 'ի մըտացն ասատուածութիւնն ակընկալեալ։
Անարգել անյագաբար 'ի պըտուղ անդրը շուայտեցաւ,
Ըզգիտէր՝ ջառնոյր 'ի միտ՝ թէ ահա զմահ ըմբոշխնէր։
Հուսկ ուրեմն ըզմայլեալ եւ գոգ ըմբռեալ յանապակաց,
Ցընծալով եւ խայտալով, ընդ անձն իւր հաՃ, ինք ցինքն ասէ.
«Ո՛վ համայն ծառոց դրախտիս իշխան զօրեղ եւ պատուական,
Որոյ գործ օրհնեալ է քոյ՝ խնասութիւն, ցայժմ անծանօթդ,
Անպատիւդ, որոյ պըտուղ քո վայելուչ կախեալ ճՃէր,
Որպէս ոչն թէ յումպէտս ելեալ 'ի գոյ վարկպարագն։
Ցայսմհետէ՝ այգուն այգուն՝ իմ վասն քո լիցին խընամք,
Ոչ առանց քեզ արժանի երգոց օրհնից առաւօտեալ,
Զբիւրաբեղուն բեռն ոստոցդ՝ առատաձիր ամենեցուն՝
Ես ինձէն ժողովեցից, մինչեւ 'ի քէն առեալ սընունդ՝
Հասից 'ի կատարեալ ըստ աստուածոցըն գիտութիւն,
Որ գիտեն զամենայն, բայց յաչաղեն զոր չկարեն տալ։
Թէ նոցուն ինչ էր պարգեւ՝ ապաքէն աստ ոչ բուսանէր։
Հընտութիւն, իմ իմիք չիցեմ ես քեզ երախտապարտ.
Ո՛վ անարիսալ առաջնորդ, 'ի քէն օգտեալ տրխմար մնայի.

Դու հորդես ըզՀանապարհ խնամատութեան, եւ դու շնորհես
Ա՛ռ նա մուտ՝ ուր եւ զանխոսել միայնացեալ կայ նա Թաքուն։
Եւ իսկ Թերեւս իցեմ ծածկեալ. բարձր են երկինք, բարձր, հեռաւոր,
Չիք անդուստ նըշմարել յըստակ յերկրի զամենայն ինչ.
Ա՛յլ ինչ հոգ Թերեւս յանդուն՛ տըքնութենէն զբօսուցանէ
Զմեր մեծասաստ հրամանատուն յամրի բոլոր շուրջ ըբոտեսքն։ . . .
« Ա՛յլ որո՞վ օրինակաւ երեսեցայց ես Ադամայ.
Յայտնեցից նըմա զարդի զեմ փոփոխումն, առ՚ի հաղորդ
Լիսաղատար երջանկութեանս, Թէ մանաւանդ բընաւ իսկ ոչ։
Պահեցից յիմում ձեռին ըզգիտութեան մեծամեծ շահս՝
Ոչ բաղորդ զոք ունելով, 'ի զկնոջ բնութեան Թերին ընդուլ,
Առաւել ածել զինեւ ըզսէր նորին, կալ նըմին զոյգ,
Ո՛ գիտէ եւ վեհագոյն նըմին երբեւմն, անձկալո՛ բախտ։
Զի ո՞ ստորին, եւ աղատ։ Ա՛յդըմ մարթի լինել. այլ զի՞նչ,
Թէ եռեւ Ատուած, եւ մահն եթէ արդեամբք հասանիցէ։ . . .
Յայնժամ ես ոչ եւս իցեմ, եւ յայլ Եւա զուգեալ Ադամ՝
Ընդ նըմին ուրախ 'ի կեանսս լինիցին, իսկ ես 'ի չիք։
Խորհել անդամ մահ է զայդ. խորհուրդ հաստատ կալեալ կընքեմ.
Բաժանորդ Ադամ ընդ իս լիցի բաստիս կամ եղկութեան։
Ի սէր իւր խանդակաթ՝ տարայց ընդ իւր զամենայն մահ.
Կենդանի առանց նորա լինել՝ չիցէ կենդանութիւն։ »
Զայս ասաց եւ 'ի ծառոյն զտան իւր դարձոյց պագեալ երկիր
Նախ նըմին 'ի խոնարհ իբրեւ հըզօր ինչ զօրութեան,
Որ 'ի ծառ անդըր բնակեալ՝ հեղեալ 'ի տունին առ 'ի յիւրմէ
Ըզբըղնեալն առ յատուածոց ընպելոյն հոյզ խնամատարել։
Ի պահուն սպասեալ Ադամ անժուժութեամբ դարձի նորա,
Էր հիւսեալ պըսակ ընտիր ընտիր ծաղկանցըն բոլորիւք՝
Պըճնել զհերն եւ պըսակել ըզդաշտային նորա վատակս,
Որպէս յաճախ ուստն արտունձք թագաւորդել զհընձոց դըշխոյն։
Ամն 'ի մտի իւրում ունէր զըսարձալից ուրախութեան
Եւ նոր խին ըսփոփանս 'ի յամրոյին երկար դարձին։
Բայց սակայն գուշակ խիք եղեալ ջարի՝ սիրան անկանէր,
Խառնիխուռն անհաւասար զնորա Թընդմունսըն խմանայր։
Ի հանդիպումըն նըմին յուղն անկաւ ընդ Հանապարհն
Ընդ որ նայն գընաց այդուց 'ի բաժանելն առ 'ի միմեանց։
Գոյր նըմին առ ծառոյն գիտութեան անցանել հուպ,
Անդ գիպաւ նըմա մինչ այն ինչ 'ի փայտէ անտի դառնայր,
Կողը 'ի ձեռին՝ աղուամազիւք գեղաձիծաղ ջըքնալ պըտղոյն,
Նորահատ՝ դալարաղուարճ, սրփռեալ բուրումն անմահութեան։
Փութացաւ ինքն առ Ադամ, աղերս 'ի դէմսըն նախ տեսաւ
Ի ջըքմեղս իւր՝ զերդ խօսիցն յառաջաբան՝ ժիր ջատագով։
Արկանէ յիւր ամուսին զրդուանաց ձայնս որ առ ձեռն էր.

« Զիցէս ինչ զարմացեալ, Ադամ, ընդ իմ անագանել.
Ցաւեաց ինձ ընդ զբրկումիրս առ 'ի քէն հարուստ մի ժամ,
Որ առանց քո ինձ կարի երկարաւէտ երեւեցաւ,
Սիրոյ մահուն տագնապ զոր ցայժմ ոչ գիտէի, մի այլ դարձցի :
Զի եւ ոչ եւս այլ 'ի սիրտս անկցի առնուլ զայնքար ըզփորձ
Որ ինձէն ըզհետ ելի յոխորտաբար անփորձութեամբ,
Տանջանաց տարագրութեան՝ 'ի բաց յաչաց քոց լինելոյ :
Բայց պատճառքն են նորատաքնչ եւ լքսելեաց զարմանալիք :
Ծառս այս չէ 'ստ որում ասին՝ ծառ բաղմամտանդ թէ ուտիցի,
Զածէ 'ի չար ինչ անծանօթ, աստուածազօր է բանալ զաչս,
Ըզկերոյն աստուածս առնէ, եւ ճաշակեալ գրտաւ նոյնպէս :
Օձն իմաստուն, չարդելեալ իբրեւ ըզմեզ, կամ ստունդանող,
Ի բերոյ իւրմէ կերեալ՝ չեռեւ ըզմահ ապառնացեալ մեզ.
Այլ անդրստին 'ի ժամէն ըզմարդկեղէն ստացաւ բարբառ,
Ըզմարդոյն ըզգայութիւնս, ճարտարմբռեալ պանչելապէս :
Եւ ուժգին ազդմամբ ածեալ զիս 'ի հաւան՝ եւ ես կերայ,
Եւ գրտի զարդիւնարն նոյն՝ որպէս եւ ակն իսկ ունէի :
Աչքս յառաջ բբլշակնեալ՝ սրբբատեսել եւրս բացան,
Միտքս եւս 'դարձակեցաւ եւ առաւել լայնեցաւ սիրտս :
Յաստուածութիւն անդր ամբառնամ՝ զոր մանաւանդ քեզ խընդրեցի,
Խոտան է յաչս առանց քո. զի բաստ յոր դուն ելես կը ցորդ՝
Այն է իմ երջանկութիւն, իսկ առանց քում հաղորդութեան
Ի տաղտուկ փոխի նա ինձ եւ իսկ եւ իսկ յատելութիւն :
Կեր արդ ուրեմն 'ի պրաղոյս. բախտ հաւասար ըծորդեսցէ
Զմեզ 'ինոյն ուրախութիւն որպէս 'ի մի եւ 'ինոյն սէր :
Գուցէ 'ի կալ քո յուրասստ՝ այլ ինն ազդ կարդ մեկնեսցէ զմեզ,
Եւ ես յոյժ անագանի հրաժարիցեմ յաղաղքս քո .
Ի բարձէ աստուածութեան՝ մինչ ոչ եւս այլ ներեսցեն բաշնք : »
Այսպիսի ածխուժիւք պատմեաց Եւա զանցրս անձինն,
Այլ եղ յայտս իւր ամբոխումն սրփռեցաւ, եւ շինեցան :
Իսկ Ադամ զԵւային իբրեւ ըլաւ զանցուցն ոճիր,
Պակուցեալ եւ թալացեալ 'ի մահագէմ հարաւ դալուկն,
Եւ յերակունսն ընթացեալ սարսուռ զսակերսրն քրտամնեցոյց :
Ի թօշնեալ ձեռացն անկաւ պրսակն հիւսեալ վասն Եւայի,
Եւ զնամրեալ վարդսրն ցրրուեաց, ինքն անմրնուն մինաց դունատ :
Ապա նախ յանձն իւր զնեղքինն այսպէս ելոյծ ըզլրութիւն.
« Ո՛վ չարքնաղդ 'ի ստեղծուածս, 'ի գործս Էին վերջինդ եւ վեհ,
Արարած՝ յոր վասն աչաց կամ մրտաց գոյր գեղրրինակ
Որ ինչ բարի, սուրբ, սիրուն, քաղցր, աստուածային գամ մի հաստեալ.
Ո՛վ, զնարդ կորեաւ դու, զնարդ յանկարծ եղեալ կորուստ,
Խանգարեալ թառամեալ եւ արդ մահուն անկեալ բաժին.
Մանաւանդ թէ զնարդ հրապուրանացն ետուր տեղի՝

Անասասել խիստ հրամանին՝ զմիրգն պղծել զատուցեալ սուրբ։
Անիծեալ պատիր արուեստ ինչ թշնամւոյ խաբեաց ըղքեզ՝
Դեռ եւրս քեզ անծանօթ, եւ զիս ինքնին ընդ քեզ կորոյս,
Զի անշուշտ հաստատութեամբ ինձ ընդ քեզ կամ է մեռանել։
Ի՞նչ առանց քո կեցեմ, ո՞ւրպէս թողում զքո զանուշակ
Կենակցութիւնդ, եւ ըզսէր մեր խանդակաթ ոգեխառնեալ,
Եւ երթամ անոք յանտառքս վայրենիս կենդանի կամ։
Թէ եւ միւս եւս այլ Եւա ստեղծցէ Աստուած եւ տաց միւս կող,
Ի սրբոյ աստի կորուստ քո տակաւին չելանիցէ։
Վա՛ւ, մի՛ լիցի. կապանօք բնութեան ձգեալ բերիմ անքակ.
Դու մարմին ես 'ի մարմնոյ իմմէ աստի, ոսկր յոսկերացս.
Ցինէն քո մի՛ բնաւ երբեք զստցի վիճակ, բաստ կամ աղէտ։»
Զայս ասէ, եւ իբրեւ այր մի յինքն եկեալ յահից ջարաց,
Եւ յեռ մրտացն ամբոխից յանհնարաւոր ինչ սրեալ ձեռն,
Յեւայն կողմէն դառնայ, եւ դաշն 'ի ձայն զայս բարբառի.
«Ձեռն 'ի գործ դիմադրաւեալ արկեր յոխորտ, յանդուգն Եւա.
Վ ըստանգ մեծ յանձրն դլեցեր, ոչ ակն եւ եւթ դընել իշնեալ
Նուիրական սրտոյն որ էր 'ի սրբութեան որոշեալ պահս,
Այլ՝ եւ եւրս ժըմերտեալ կերար յոր չէր հրաման հրսպել։
Բայց զանցեալն ո՞վ դարձուսցէ, եւ զոր եղեւ՝ դիցէ չեղեալ,
Ոչ Աստուածն ամենակալ եւ ոչ Հրամանք ինչ են կարօղ։
Այլ՝ թերեւս ոչ մեռցիս. ո՛ւ գիտէ չէ գործդ յոյժ դըժնեայ,
Որովհետեւ գամ մի յօձէն Ճաշակեալ միրգն պղծեցաւ,
Եւ եղեւ իբրեւ ըզմի յայլոց բերոց հասարակաց՝
Մերկացեալ ըզսրբութիւն՝ մինչ չեւ անտի մեր Ճաշակեալ։
Նա չեդիտ զայն մնհաբեր, դեռ կենդանի է, կեայ 'սա բանիդ,
Եւ մարդոյ կեանս ըստացեալ, կենդանութեան բարձրագոյն չափ։
Անպատիր ընծայութիւն՝ նոյնպէս եւ մեզ հասանելոյ
Ճաշակքն 'ի բարձրութիւն ըստ պատշաճի մերոյ կարդիս,
Որ չլցէ այլ՝ քան լինել աստուած, հրեշտակ կամ թէ դիւցազն։
«Ոչ կարեմ հաւանել թէ խնամտուն հաստիչն Աստուած,
Թէպէտ եւ սպառնական, այսպէս ըզմեզ սրբոյ կամաւ
Կամիցի եղծանել՝ զառաջնասեղծ իւր արարածս,
Զորս ամբարձ 'ի բարձ պատուոյ 'ի վեր քան զայլ գործս ամենայն,
Որ 'ի մեր սէտս արարեալ՝ ընդ մեր անկման անկցին անվրէպ,
Զի կարդեալ եդան ընդ մեզք. եւ հակառակ արարչութեան
Գործ գործէ յայնժամ Աստուած եւ 'ի գերեւ խակ ելանէ,
Ի սահմանել եւ վանդել, 'ի զուր վատնեալ զիւրն վաստակ։
Զէ՞ ինչ այս Էին ըմբռն, որոյ թէպէտ գոյ զօրութեան
Վերըստին ստեղծագործել, այլ՝ ջանցէ յանձն ըզմեզ բառնալ,
Զի մի՛ հակառակորդն յաղթանակեալ ձաղ առնիցէ,
Թէ զի յողդողդ է պայման աստուածութեանն սիրելեաց,

Ո՞վ կարէ նրմա հաճոյ լինել յերկար. նախ զնա ընկէց,
Այժմ աւագիկ զաղջ մարդկան. յետ այնորիկ ո՛ զիտէ զվ...
Պատճառք կատականաց՝ զոր չէ արժան տալ ոսոխի:
« Որպէս զնարդ ինչ եւ հացէ, իմ ընդ քո բախտ զնմբս կապեալ՝
Եղեալ է 'ի մրտի՝ դատաւորձիս ըստոյն կրբել.
Եթէ մահ զուրէ 'նդ քեզ զնս, կենդանութիւն է ինձ այն մահ:
Այնպէս իմն 'ի սրրտի դատեմ անրոյծ ըզբնութեան կապ,
Որ ձրդէ զօրեղապէս զնս 'ի բարին իմ սեփական,
Ցիմ բարին 'ի քում անձինդ, զի որ ինչ եսրդ դու՝ իմ է:
Վիճակս է մեր անխրզելի, մի եմք միայն, նոյն մի մարմին.
Ըզքեզ կորուսանել՝ կորուսանել է զանձն իմ: »
Զայդ Ադամ, առ որ անդրէն պատասխանի զայս ետ Եւա.
« Ո՛վ հանդէս պանծալի տարապայման անչափ սիրոյ,
Մեծաշուք վրկայութիւն, օրինակ վեհ՝ որ ստիպէ զնս
Նրմանող նրմին լինել. սակայն 'ի քո կատարմանդ
Ցեռնեալս ես հասանիցեմ յայն չափ, Ադամ, ես որ պարծիմ
Ի կողդ լինել ծընունդ. լսեմ 'ի քէն խրնդութեան ձայնս
Ըզմերմէ միութենէս՝ մի սիրտ մի շունչ 'ի մեզ յերկուս:
Զուգութեանս այսմիկ օրս այս անխարդախ տայ նրշանակ.
Զի դատանես թէ ոչ մահ, ոչ քան ըզմահ ինչ ահագին
Ի միմեանց ըզմեզ զատցէ զնանդաղականթ սիրով կապեալքս.
Այլ պատրաստ ես յանձն առնուլ ընդ իս մի մեղս, մի յանցանս,
Թէ ինչ ինչ, ուտելոյ զչքնաղ խայրին՝ ոյր զօրութիւն, —
Զի անդրստին միշտ 'ի բարւոյն բրղխէ բարին եւ կամ յիւր ձեռն, —
Առաջի մատոյց քեզ զհանդէս սիրոյդ զայդ բարեբաստ.
Այլ՝ եթէ ոչ, բնաւ երբեք այսպէս պայծառ չէր յայտ եկեալ:
« Թէ հաւատ ընծայեի սպառնացելոյ մահուն դալոյ
Ի վերայ գործոյս, միայն բառնայի զբախտին չարաշուք,
Եւ ոչ գուն ինչ գընեի ածել ըզմիտսդ 'ի հաւան:
Լաւ էր ինձ մեռանել ըքեալ թողեալ, քան քեզ 'ի գործ
Հարկ առնել 'ի վնասակար խաղաղաւէտ քում հանգստեանդ:
Մանաւանդ յորմէհետէ զանկեղծաւոր՝ զհաւատարիմ
Զանրման սիրոյդ տեսի ակնյանդիման ըզհաւատս:
Բայց զարդիւնս իրին այլազգ յանձին իմում իմանամ ես.
Ոչ թէ մահ, այլ ճոխաճան կենդանութիւն. աչք բացեալք,
Ցոյս նորոգ, նոր խրնդութիւն, ատուուածախառն իմն ճաշակ,
Առ որով դառն եւ անհամ թրբին համայն անուշութիւնք,
Որ երբեմն յառաջադոյն հեշտացուցին զճաշակելս:
Ի հրմնութեանս հայեցեալ փորձ՝ աղէ, Ադամ, կեր համարձակ,
Եւ հոգոյ տուր անվեհեր հոսել ցընդել զերկիւղ մահուն: »
Զայս ասէ, եւ գիրկս արկեալ առ խրնդին լայ գորովալի:
Այն իսկ մեծ էր յայլթանակ՝ Ադամայ յայնչափ բարձրութիւն

Տանել հանել զնորա սէր, մինչ գիմագրաւ վասն նորա
Ի ցասումն աստուածական եւ կամ 'ի մահ գնալ անկանել։
Ի արիասիրտ, — զի արժանի մեղանչականն էր հաճութիւն
Այսրմ մեծ փոխարինիս, — սուրատաձեռն եւ նա նրմին
Կարկառէ զգեղաղէշ եւ զցանկալի պըտուղ ոստոյն։
Ոչ ինչ խրդճեաց ուտել Ադամ՝ առ ոսն հարեալ զոր եւ գիտէրն·
Ոչ պատրեցաւ, այլ 'ի կընոջ շամբշեալ 'ի գեղ՝ պարտեցաւ։
Դողումն կալաւ մինչեւ 'ի խորս սըրտին զերկիր՝
Իբր 'ի կըրկին մահու տագնապ, կըրկին յոգւոց եհան բնութիւն։
Մըթացան երկինք եւ խուլ ինն որոտման հարեալ բոմբիւն՝
Թախծալից սըրտմրութեան կաթեցուցին ցօղս արտասուաց,
Երբ 'ի լսուն եկեալ եհաս սկզբնական մեղքն մահագոյժ։
Զեգ միտ Ադամ որ ցյադ ուտէր, զարհուրեցաւ ինչ ոչ Եւա
Զառաջինն երկրորդել յանցումն իւրոցն հետամանաց,
Ի բերկրել զիւրն ամուսին՝ սիրեցելոյն կըցորդութեամբ։
Երկոքեան արդ խաղմըզով իբրեւ արբեալ եւ ողողեալ
Հրճուանօք, կարծէն յանձինս տեսանել զաստուածութիւն՝
Որ թեւս ինքեանց բուսուցանէ 'մպահկել զերկիր եւ անկուշել։
Բայց պըտուղն ժանտաժուտ օտար եցոյց զիւր արդասիս,
Բորբոքեալ անդ զառաջինն ըզմարմնամոլ հեշտ ցանկութիւնն։
Սեւեռել ըսկիզբն արար աչս ըլկոս Ադամ յԵւա,
Զնոյն Եւա հատոյց անդրէն առ նա նոմին հեշտախտութեամբ։
Յայրատեալ ջերանին, եւ 'ի խենէշ սիրոյ գրգռանս
Լըպըրշեալ Ադամ գրգռէ զԵւա սովին օրինակաւ·
« Տեսանեմ, Եւա, զքոյին ճաշակելիդ ընտիր, անվրէպ,
Որ ոչ փոքր եւ դուշնաքեայ մասն ինչ է այդ խմաստութեան·
Զի յիմաստս ամենայն առնումք 'ի կիր ըզձայնրդ համ,
Եւ ըզքիմիս մեր կոչեմք ընտրողական եւ ուղղադատ·
Տամ քեզ զայդքիր պարծանս, զի այսօր քաջ ցուցար խնամով։
Ժուժկալեալ յանոյշ մրրդոյս՝ բազում հեշտից անբաժ մնացաք·
Ի ճաշակս՝ որ մինչեւ ցարդ՝ չէր ծանուցեալ մեր զըստոյգ համ։
Քաղցրութիւն թէ այսպիսի է յամենայն մեղ արդելեալս,
Ըզձալի էր ընդ միոյ ծառոյս տասանց լինել հրաժեշտ։
Այլ սակայն, այսպէս քաջիկ արծարծեալ եկ խաղացուք արդ,
Որպէս է խակ վայել յեւ այսքանոյ համեղ ճաշոյ։
Զի յօրէ յորմէ տեսի զքեզ նախ ու 'նդ քեզ ամուսնացայ՝
Ընդ պըճնեալդ համբրէն վայելչութեանց յօրինուածովք,
Ոչ երբեք հուր այսպիսի վառեաց լիս քոյդ սրտիելի գեղ՝
Վայելել 'ի քեզ սիրունդ այժմիկ 'ի վեր քան զայլ նըշագս։
Ո՛վ բարեաց սընկոյս այսմիկ՝ լի սրխրալի մեծ զօրութեամբ։ »
Ասաց, եւ չընայեաց ոչ ակն ոչ խաղ սիրայորդոր·
Առ 'ի միտ Եւա՝ յաչացն ցայտելով բոց ժանտագործ։

Բուռն եհար նա զձեռանէն, եւ 'ի պարիս մի դալարուա,
Զոր յարիկեալ հովանաւոր եւ թանձրախիտ զբաւարթ կողերք՝
Եւ պատեալ յօրինէին 'ի տաղաւար ամրածածուկ,
Ա՛ռ տարաւ եմոյծ ըստ զհրպատակեալսն մրտադիւր։
Անկողնին էր ծաղկաւէտ, յակինթ՝ հօրուա եւ մանիշակ,
Ծոց երկրի փափկադոյն եւ զովարար քան զամենայն։
Ցողփոցան անդ լիալիր 'ի սէր՝ 'ի խաղ սիրապատար,
Փոխադարձ մեղայրն կնիք, եւ յանցուածոյն իւրեանց ափոփանք,
Մինչեւ քուն ցօղատարափ ի՛ջեալ կալաւ եւ թըմբրեցոյց
Ըզլուծեալսն եւ պարտասեալս 'ի սիրայեղց ըղբօսանացն։
Իբրեւ ցընդեալ մաշեցաւ խաբէպատիր պլրտղին աղգուն,
Ոյր անոյշ սրարբեցուցիչ շրդին զրգուելք Ճախրեալ նոցին՝
Ընդերքին աղգելեաց նոցա թիւրեալ էր զօրութիւնս,
Յորժամ քունն այն թանձրամած 'ի գոլորշեաց հասեալ ժանտից
Եւ հոծեալ անբրջելք յիշատակաց՝ 'ի բաց թըռեաւ,
Յարեան իբր յանհանգիստ ինչ ներհմանէ տաժանալեաց։
Ակնարկեալ 'ի միմեանս եւ իսկ եւ իսկ առին 'ի միտ,
Զիարդ բացեալ աչքն էին, որպէս ոգիքն խաւարեալ։
Անմեղութիւն որ քողազարդ ըզգիտութիւն ծածկէր չարին՝
Վերացեալ էր, եւ արդար վըստահութիւնն որ առ իրեարս.
Ընդաբոյս ուղղութիւն եւ պատիւ ոչ եւս էր զնոքօք,
Մերկանդամ էին թողեալ զնոսա յամօթ մեղատատնամ՝
Որ զնոսա ծածկեաց, այլ ձորձք իւր առաւել հոլանեցին։
Դանեանն այսպէս հուժկուն յարեաւ Սամիսոն ըսկայազօր
Ի բոզացեալ գրրկաց անտի փրոնշուուհոյն Դալիլեայ,
Եւ զարթեաւ սարիրեալ յուժոյ. նոյնպէս հանդոյն իմն եւ սոքին
Զարթեան մերկ եւ կողոսուա 'ի լաւութեանց իւրեանց ողջոյն։
Լուա մուռ եւ պատկառանք յերեսս իւրեանց՝ կացին մեծ ժամս
Անդ 'ի նիսա իբր համրացեալք, մինչեւ Ադամ՝ ակընկորեալ
Ոչ ընդհատ ինչ յԵւայէ, բրանի բարբառ զայս արձակեաց.
« Ո՛վ Եւա, 'ի չար ժամու պատիր սոնոյն ունին եղիր դու.
Ուստի եւ ուսաւն 'ի մարդկեղէն պատճառիլ խօսս,
Արդար ասաց զանկմանէս, սուտ՝ զաւետեալ բարձրութենէն։
Զի աւասիկ զաչքս մեր բաց իսկ գրտանեմք եւ տեսանեմք
Ըզբարւոյն եւ ըզչարին 'ի մեզ բուսեալ ըզգիտութիւն,
Ըզբարին կորուսեալ եւ ըզչարին շահեալ արկած։
Գիտութեան արդասիք թըշուառ, թէ այս է գիտութիւն,
Ճանաչել իւ մերկացաքրս, թօթափեալ յանձանց ըզշուք,
Ըզհաւատ, զանմեղութիւն, ըզսրբութիւն՝ ըզբընիկ զարդս,
Որ այժմիկ ապականեալ եւ աղտեղեալ, նա եւ նըշանք
Ի մեր դէմս յայտանըկատ խայտառակեալ հեշտ ցանկութեան.
Ոյր պատուղ՝ չարեաց համբար, եւ որ յետին չարեաց՝ տոմար։

Արդ աներկմիտ լինիջիր ըղձած բարւոյն կորընտրենէ։ . . .
Յայսմհետէ թէր հայեցիս յերեսս Էին կամ իւր Զուարթնոյն,
Զորս յառաջ ցընծութեամբ եւ հիացմամբ տեսի յանձամբ։
Երկնային երեւութիւնք շնչացուցին այսուհետեւ
Զհողածին ընութիւնս՝ իւրեանց ակնախրտիղ ճառագայթիւք։
Ո՛հ, ո՛ տայր ինձ ասասնոր յամայութեան բնակել վայրագ
Ի մրթին ինչ առանձնոց՝ ուր տընկախիս ըստուար մայրիք
Անմուտք ասստեղ նրշուլից կամ արեւուն՝ տարածանեն
Զլայնատիս հովանիս իրրեւ զգիշեր թրխատեսակ։
Ծածկեցէք զիս՝ դուք սոնիք, դուք եղեւինք՝ ոստովքդ անթիւ,
Թաքուցէք ուր ոչ զԱստուած, ոչ ըղձրեշտակ նորա տեսից։
« Ա՛յլ յողորմ պայմանիս առցուք խորհուրդ առ Ժամն 'ի դէպ
Վերարկել յաչաց միմեանց զոր առաւել ամօթոյ թուի
Եւ կարի անվայելուչ 'ի հոլանի տեսիլ ական։
Սաղարթք լայն ւողորկասարը ոմանց ծառոց 'ի մի կարեալ
Եւ զմերով ածեալ միջովք՝ բաւէն ըղմեր ծածկել զամօթ՝
Զընկեր նոր, զի մի նրատեալ անդ դատեսցի զմեզ անմաքուրս։»
Զայս տրւեալ նորա խորհուրդ, մըտին յանտառ թաւ երկոքեան.
Զթըզենին ընտրեն անդէն, ոչ զանուանին պըտղոյն իւրով,
Ա՛յլ զոր այժմըս ճանաչեն մա՛լաբարեան հընգկատամեայք
Եւ աշխարհին Դեկանայ. զայն որ ձրգտեալ սրտիւէ բաղուիս,
Եւ ուղիչք շառաւիղեն լայնատարած երկայնաձիգ,
Մինչեւ ստեղունքն արձակեալ կըքեալ յերկիր առնուն արմատ,
Դըստերք ածեալք ըղմայր ծառոյ. սիւնակապեալ բարձրակամար
Հոլանոց մեծաշուք եւ ճեմարան բազմարձագանգ,
Ուր յանձամբ հովիւն հընդիկ զերծ 'ի տօթոյ՝ ծրմնկանիստ՝
Յարօտականն ըսկէ հօտ ընդ պատատուած թաւուտ կողերցն։
Ըզտերեւսն լայնածիրս իրրեւ զասպար ամազանեան՝
Քաղեալ նոցա երկոցուն եւ ժողովեալ կարկատեցին
Ըստ իւրեանց ճարտարութեան 'ի տիպածանել ընդ մէջ իւրեանց։
Ծածկոյթ զըրավաստակ, թէ 'ի սքողել էր ըղմեղանն
Եւ զամօթ ծանականացն յորմէ զահի հարեալ կային։
Ո՛վ, զնարդ էին անկեալ 'ի մերկամոդամ նախնի փառացն։
Այսպիսի զամերկեայսն յաւուրս յետինս եդիտ Կոլոմբ,
Առիգած մի փեարազարդ զնւրեանց միջով, մերկամարմնս,
Վայրենիս յանտառս՝ յափունիս պարկացիս եւ 'ի կըղզիս։
Այդուհանակ կային սիրածեալ նախածընօղք մեր առաջինք,
Զառականն ըստ կարծեացն թաքուցեալ մասամբ իւիք.
Ա՛յլ անդուր միտք անհանգիստ՝ նրատան յերկրի զալ հարկանել։
Ոչ միայն արտասուք անկան յաչացն յորդահեղեղ,
Ա՛յլ եւ մըրրիկք մեծամեծք յանձինս իւրեանց յառնել սկրսան.
Կարիք բըռնաւորք, սրրամրտութիւն, ատելութիւն,

Խէթ եւ կարծիք կասկածանաց եւ գրժտութեան գրգիռ եւ կապ,
Որ զոգիսն ողորմ ողորմ անդընդաքակ դրդրդեցին։
Որ երբեմն էին սահմանք հանգըստաւէտ խաղաղութեան,
Այժմ յուղեալ աղմկալից, զի ոչ եւս այլ իշխէին միտք,
Եւ խեռեալ կամքն ըստամբակ՝ ոչ եւս լըսէր նորա խրատուն։
Երկոքեան ընդ մարմնեղէն յօժարութեամբն էին անկեալ,
Որ ստորին իշխանութեամբն պետացեալ գոռոզանայր՝
Եւ նեղ Ճոխանալ 'ի տիրական բանին գրգռիս։
Սրբոյն խառվելով 'ի հայեցուածն օտարամիտ՝
Յառաջին խօսիցն Թեզ Ադամ կրցեաց զայլափոխ ձայնս.
« Զի՞ չլըսար խմուտ խրատուս դու եւ կացեր մնացեր ընդ խս,
Իբր ըզքեզն աղերսելի յեղեռնաւոր առաւօտուն՝
Ի մեղեդ օտար տրոփմամբ ինքնահրաման Թափառելոյ,
Որ 'ի քեզ յանկարծ բուսեալ երեւեցաւ ոչ գիտեմ ուստ։
Կացեալ մեր տապքէն մնացեալ էր դեռ երջանկաւէտ,
Եւ ոչ կապուտ կողոպուտ 'ի բնաւ բարեացս որպէս զարդիս,
Մերկ եւ խայտառակ եւ եղկելի Թշուառական։
Մի՞ եւ մի՞ ոք յայսմհետէ պատճառեսցի յիրաւունս ինչ՝
Ի ջըքմեղս խմբն լինել ըմբոստութեանն տալիրատի.
Ի փորձ այդմ հանդիսիդ յորժամ ուժգին մըխիցի ոք,
Ա՛ռ 'ի միտ եւ կընքեսջիր՝ Թէ անդ ըսկիզբն է յանցուածոց։»
Ի ձայնէ կըշտամբանացս անդէն շարժեալ ասէ Եւա.
« Զի՞ այդ բանք խրատութեան վիժեալք 'ի քո շրթանցդ, Ադամ։
Մի՞ղ դընես տըկարութեանս կամ շրջելոյ յօժարութեանն,
Որպէս դուդ անուանես՝ զայն ինչ ում մտրթ էր եւ առ քեւ
Դէպ լինել չարապատահ, ոչ իսկ գիտէ, կամ Թէ քեզ իսկ։
Թէպէտ եւ անդ էր քո գիտելոյ, կամ ատանօր մարմին մըրցանք,
Խորամանդ օձին նենգն ոչ կարէիր կալ 'ի վերայ՝
Ի խօսելն որպէս խօսէրն. այն զի նորա եւ 'ի մէջ մեր
Ոչ գոյին ինչ պատճառք 'ի վեր ելեալ Թըշնամութեան.
Եւ զի՞ էր չար ինձ նիստալ, եւ ջըրդել յիս անիրաւել։
Զէր օրէն ամենեւին բաժանել ինձ յանձնէ քումմէ.
Ո՞չ ապաքէն նոյն լինէր ազել այդրէն կող անկենդան։
Եմ որ ինչ եմն. իսկ դու գլուխդ առ ինչ 'ի սպառ բացէ 'ի բաց
Զարգելէր զնս մի մեկնել՝ զերթեալս 'ի վտանգ որպէս ասեդ։
Յայնժամ դու գիւրահաւան՝ ոչ շատ բանիւք ոսոխեցար,
Նա եւ Թոյլ իսկ արարեալ՝ հաճ եւ հաւան յուզարկեցեր։
Եթէ քո պինդ էր կացեալ եւ հաստատուն 'ի տալ հրաժեշտ,
Զէր իմ լեալ օրինազանց, ոչ ընդ խս դու իսկ գրլխովին։»
Սրբամրտեալ ընդ այն Ադամ զայս առաջին նըւազ՝ յաւել.
« Ա՞յս է քո սէր, այս խմումըս փոխարէն, անշնորհ Եւա,
Զոր ցուցի քեզ անփոփոխ՝ յորժամ էիր դու կորուսեալ

Եւ ես ոչ, եւ կարէի կեալ 'ի վայելս անանց բարեաց,
Եւ սակայն յօժարակամ ընդ քեզ ըղմահ խակ յանձն առի։
Եւ այժմ՝ ըստգրաւանեաս զիս լեալ պատճառ քում յանցութեանդ,
Բարբելով թէ 'սա արժանի ազդողաբար չարդելի զքեզ։
Զի՞նչ եւս այլ ինչ գոյր առնել. խրատ եռու, յորդորեցի՝
Գուշակեալ ըզվրանդն եւ զթշնամին դարանակալ։
Ապաւէլ ինչ քան զայդ՝ չգոյր ինչ այլ բայց բրնութիւն,
Իսկ բրնութեան չիք ինչ տեղի 'նդդէմ անձնիշխան աղատ կամաց։
Բայց քո սիրտ յանձնապաստան յափշտակեաց տարաւ ըզքեզ,
Ի վտանգից անխէթ, կամ ակն ունել փառաց 'ի հանդիսէն։
Սխալեցի թերեւս եւ ես՝ այնչափ անչափ 'ի շնորհսդ հարեալ,
Մինչ կարծէլ թէ չիք չարին իշխել 'ի քեզ ձեռըն մրխել։
Այլ նըզմոք արդ 'ի վրիպակս՝ ինձ յոճիր լեալ, եւ դու յոտիս։
Այս հասցէ որում վըստահ 'ի շնորհս կընոջ գեր քան ըզչափ՝
Ի նորա կամն ապաստան ըզաէրութիւն իւր թողուցու։
Ի ճընշելն՝ զամենայն խրզեալ կապանս զընկենու կին.
Իսկ 'ի կամըս մըտաց սրբոյն թողեալ, թէ չար դիպի՝
Իսկոյն զառն արդահատող մեղկութենէն դատախազէ։»

Այսպէս սոքա երկոքեան չարախօսեալ այր զընկերէն՝
Վատնէին ժամն 'ինանիր, այլ զանձն եւ ոչ միում դատեալ՝
Անբսպառ թշուէին ընդվայրախօս նոցին պայքարք։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

## ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ծանուցեալ զյանցումն մարդոյն՝ թողեալ զԴրախտն գնան յերկիրս հրեշտակք ցուցանել զարթուն պահպանութիւն իւրեանց, եւ արդարանան։ Առաքի Որդին Աստուծոյ եւ դատի զմեղուցեալսն, եւ զթացեալ զգեցուցանէ զնոսա եւ դառնայ առ Հայր։ Մեղք եւ Մահ իրազեկ լեալ յաջողուածոյ հօրն իւրեանց Սատանայի, արկանեն կամուրջ ընդ հեւոս նորա 'ի Դժոխոց յաշխարհ 'ի դիւր երթեւեկի իւրեանց։ Իջանէ նա ընդ այն 'ի դժոխս. եւ 'ի պատմելն պարծանօք զքաջութիւնսն առ իւրսն, ամենեցուն յօձ փոխեալ՝ չէին ընդ երեսս նորին փոխան գովութեանց, եւ նա ընդ նոսին. եւ ելեալ յառ աչօք ծառն արգելեալ՝ ուտեն զպտուղ նորա՝ փոշի եւ մխիթր դառնաթոյմ։ Մեղք եւ Մահ զօրանան. Աստուած յայտնէ զհուսկ վերջին պարտուն նոցա 'ի ձեռն Որդւոյն. հրաման տայ հրեշտակաց խառվել զերկիրս եւ զտարերս։ Սուգ Ադամայ ընդ եղկութիւն իւր, մխիթարութիւն եւ հնարք հաշտ առնելոյ զԱրարիչն ապաշխարութեամբ եւ աղօթիւք։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Զոր 'ի դրախտն արար Սատան գործ չարանիւթ քինախընդիր
Էր յայնժամ ծանօթ յերկինս, իբր օձախառն ազդեալ յԵւա
Եւ սա յայրն, 'ի մահաբեր պլտղոյն ուտել հրապուրեցոյց։
Զի ով փախչել կարիցէ յամենատես Էին աչաց,
Կամ պատրել զամենագէտ հոգին։ Արդար յամենայնի,
Ամենիմաստ՝ չարդել զՍատան 'ի փորձ մատչել մերոց մարդոյն,
Որ բոլոր զօրութեամբ եւ ինքնիշխան զենեալ կամօք՝
Բաւական էր յիմանալ եւ 'ի վանել զթշնամւոյն մարտ,
Կամ ըզսուտ բարեկամի. քանզի գիտակ էին նոքա
Եւ յուշի պարտ էր անպուրծ ունել ըզստատ պատուիրանին՝
Յայնմիկ պլտղոյ չըճաշակել սրոյ եւ է հրապուրանօք։
Սատանգանեալ՝ անկան 'ի պատժօք. եւ զի՞նչ քան զայն ակն ունել էր.
Ի մեղացըն հոյլս՝ անկումն արժանահաս էր պատուհաս։
Ճեղեցան ելին յերկինս հրեշտակագունդ դրախտին պահպանք,
Անշշունչք եւ տրխատեալք՝ ըզմարդոյն կիրս ածեալ զմրտաւ,
Եւ բախտին լեալ խեղճմուտ. յոյժ եւ ընդ այն խակ զարմացեալ՝
Ի՛բր ոտիսն չարարուեստ ելցէ սպլրդեալ անդր յարամբի։
Իբրեւ այս գոյժ դառնութեան եհաս յերկրէ 'ի դուռն երկնից,
Որ լըսանն 'ի սուգ ողբոմ համակեցան առհասարակ։
Թաղծագին մուտ տրտմութիւն կալաւ եւ զդէմն ատուածելէն
Աւ վայրկեանն. այլ զրթախառն էր՝ ոչ խամրեաց զերանութիւնն։
Ժողովուրդն արփիաբնակ հաս առ նորեկսըն խուռնընթաց՝
Լըսել եւ ուսանել զանցեալ երացն ըզհանգամանս։
Եւ զի էին երաշխաւորք՝ կանխեալ ելին 'ի վեհ աթոռն՝

Ի փուրսիշ իրաւախօս յայտնաբանել յատեանն արդար
Զալընդամէս պահպանութիւնն, որ լքեալի եղեւ հեշտեաւ։
Յայնժամ Բարձրեալն յաւիտենից Հայր 'ի խորհրդ զանխուլ մնայլին
Արար ըղձայն իւր լքեալի հընչեալ որոտ առ որոտ.
« Հրեշտակաց դումարք, եւ դուք յունայնավար պաշտամանէդ
Զօրութիւնք դարձեալք այսրէն, մի՛ վեհերիք, մի՛ ամբոխիք
Ի գուժից այսի երկրի զոր չէր կարձել ինամոցդ անենդ։
Դեռ եւս իմ նախապատում ըզհանդերձեալսն էր քարոզեալ,
Մինչ դեռ նախ զառաջինն 'ի դըժոխոց եղեալ փորձողն
Հատեալ զանդունդս անցանէր՝ զեկուցի ձեզ թէ ժիր 'ի սպան
Յաղթեսցէ, եւ թէ պատրեալ մարդն 'ի չոլոմանն կորիցէ,
Փոխանակ ընդ Արարչին իւրոյ՝ ստութեան հաւատալով։
Իմ եւ ոչ մի հրաման գրտաւ անկմանն հարկեցուցիչ,
Կամ թէ դոյզն ինչ գըրգռել զազատ ըղկամս իւր անձնիշխան՝
Ըզթողեալն յիւր ընտրութիւն արդարամէտ հարթհաւասար։
Սակայն մարդոյն գլորեցաւ. եւ այժըմ զի՞նչ առնել ինչ,
Բայց ածել ըզանցանացըն դատակիք մահահրաւէր՝
Ըզմահ, որ վասն աւուրս այսմիկ անդուստ սահմանեցաւ։
Զուր ինչ կարծէ նա եւ ոչ ինչ, չեւ ըմբռնեալ 'ի պատուհասն՝
Որպէս ինչ եւ խիթայրն՝ անդէն եւ անդ ընդոստ ճայթմամբ։
Բայց ընդ հուպ 'ի միտ առցէ, նախ քան զաւուրքս կատարած,
Թէ յամուրդ՝ չէ արձակուրդ. արդարութիւն իրաւադատ
Մի դարձցի յետս անդոնեալ ըստ բարութեան օրինակին։
« Սակայն զո՞ 'ի դատել ըզմեղուցեալսն առաքեցից.
Զի՞վ այլ, բայց ըզքեզ զաթոռակիցդ իմ՝ զիմ Որդի.
Քեզ զամենայն դատաստան եւտու յերկինս, յերկիր, 'ի դժոխս։
Յայտ ինքեին ելցի զի կամ է ինձ կարգել զՈղորմութիւն
Գործակից Արդարութեան՝ զքեզ յըղելով ըզմարդասէրդ,
Ըզմիշնորդ, զընտրեալ փրկանադ եւ ըզՓրկիչդ կամաւոր,
Զանահմանեալդ 'ի մարդ լինել՝ առ 'ի դատել զանկեալ ըզմարդն։ »
Ասաց Հայրն, եւ բացեալ պայծառ ըզփառն իւր յաջակողմն՝
Յիւր Որդին ճառագայթեաց զաստուածութիւն իւր հոլանեալ.
Որոյ յայտ ճաճանչաւէտ փայլեալ ըզհայրըն բոլանդակ՝
Եւ նրմա պատասխանի ասաստուածագուսթ քաղցրութեամբ զայս.
« Հայր յաւէրժ, քոյ է հրաման տալ ինձ առնել ըզկամքս քո
Յերկինս ուերկրի, զի՝նդ որդիդ քո սիրելի հաճեացիս մեշտ։
Դնամ դատել յերկրի զդոսա զքո մեղաւորսդ, այլ դիտես դու՝
Զի որ զինչ եւ դատն ելցէ, չարապատիժըն պատուհաս
Եղանեալոց է՝նդ իմ կառափն 'ի գալ ժամուն բովանդակել։
Զի քո խակ առաջն առեալ զայն յանձն՝ ոչ զըզջանամ,
Եւ սովին խակ իրաւունքս ժառանգեմ արդարապէս՝
Քաղցր առնել ըզդատաստանն որ կըրթեսցի յիմ պարանոց։

Մեղմեցից ողորմութեամբ զարդարութիւն, զի հաշտ համբոյր
Ա՛ռեացէ 'ի փառս, եւ դու 'ի ցատմանէդ քումմէ ցածցիս։
Զեն ինչ պէտք արքանեկաց կամ ուղեկցաց՝ ուր չէք ումեք
Մերձ յատեան անդր երեւել բայց յերկոցունց պատժապարանցն։
Ոճրագործն երրորդ ինքնին յիւրքն փախուստ կայ դատապարտ,
Նովին իսկ կըշտամբեալ եւ յամենայն օրինաց խեռ.
Օձին այլ ինչ կըշտամբանք ամենեւին իսկ պիտի ոչ։»

Բայց՝ յարեաւ յանթառոյն երկրորդ փառաքն ահեղ շողեալ։
Ա՛ծառք, Զօրութիւնք, Իշխանութիւնք եւ Տէրութիւնք
Պաշտօնեայք ընդ իւր յուղարկ մինչեւ յերկինից ջրգան 'ի դուռն՝
Ուստի Եդեմն երեւի եւ համբէն կոչին 'ի բացէ։
Էջ իսկոյն. զաստուածոց երգութիւն ոչ ջանին ժամք,
Թէպէտ եւ սրբաթռիչ թեւաբուսեալ են վայրկենիւք։

Արեգակն 'ի միջօրէ գնացիցն ելեալ էր յարեւմուտս.
Թեթեւ հողմիկք՝ 'ի կարգեալ պահուն իւրեանց շընչէլ յերկիր՝
Զարթուցեալք բերէին 'ինա զնաղաղ զով երեկուն։
Ցայն ժամուն հանդարտ ցատմամբ եկին Միջնորդն եւ հեզ դատող՝
Հատանել մարդոյն վրձիռ։ Զայն ըզգնալոյ Տեառն 'ի դրախտին
Քաղցրասիք օդոյն հասեալ եւ լու եղեւ յունկրն նոցա
Ցաւուրքն խոնարհել. լուեալ թաքեան ընդ թաւ ծառովք։
Բայց Ատուած մատուցեալ կոչեաց զԱդամ ձայնիւ մեծաւ.

«Ադամ, ո՞ւր ես որ սովորդ էիր հրճուիւք գալ ընդ առաջ
Իբրեւ այն ինչ 'ի հեռուստ նրշմարէիր զեկս իմ առ քեզ։
Ոչ գլատանեմ ըզքեզ ատա. միայնութեամբ հեշտանայցես՝
Որ երբեւին ինքնին քեզէն վաղվաղէիր գալ յանդիման։
Միթէ նուաղ տեսիլս ինչ. իսկ զի՞ եղեւ զի չերեւիս.
Չինչ արդեօք պատահար արդեւրս զքեզ. ե՞ն արի եկ։»

Եկըն նա եւ ընդ նրմին ինքն իսկ Եւա հաղիւ հազ,
Որ նա ինքն էր նախամեղ, եւ երկոքին յահ եւ 'ի շնչիս։
Ոչ գոյր սէր յաչքս նոցին՝ ոչ առ Ատուած, ոչ ընդ միմեանս,
Ա՛յլ կայր անդէն նրկարեալ մեղանք՝ ամօթ՝ պըղտորութիւն՝
Ա՛նյուսութիւն, զայրացուկք, յամառութիւն, քէն եւ խաբկանք։
Յետ երկար թոթովելոյ դարձուած արար Ադամ հակիրճ.

«Լըսայ զձայն ըզգընալոյ քո 'ի դրախտի ատա եւ երկեայ,
Քանզի մերկ էի՝ վասն այնորիկ նրստայ 'ի թաքստեան։»

Առ որ գրթած դատաւորն յաւել առանց պարսաւելոյ.

«Քո բաղում անդամ զիմ ձայն լըսեալ եւ չէ ինչ զարհուրեալ,
Ա՛յլ ուրախ լեալ համակ, զիմ՞ դ եղեւ արդ սոսկալն։
Մերկ ես. քեզ ո՞ պատմեաց. կերա՞ր արդեօք զվայտին պըտուղ՝
Յորմէ միոյ միայնոյ չհրամայեցի քեզ ճաշակել։»

Առ որ Ադամ պաշարեալ եւ վրատանգեալ կրկինեաց անդրէն.

«Ո՛հ երկինք, յո՞ր տագնապ՝ դատաւորիս կամ յանդիման

Ի սանկՃնել զոՃիրն ողջոյն եւ կամ 'ի կալ ինՃ դատախազ
Ըզմիւսմէ անՃնէս խմեմ զկենահաղորդ զիմ ամուսնոյս ։
Վայելէր ծածկել զյանցանսն՝ ուր ինՃ պահեալ կայ իւրն հաւատ,
Եւ մի քանքատելով մատնել ընկա 'ի դըսրովանս ։
Այլ հարկ բըռնաւոր եւ անՃկութիւն ալիսողրմ
Ըստիպեն զնա խօսել, զուցէ 'ի գլուխս անկցին ողջոյն
Եւ յանցուածն եւ պատուհասն համանգամայն գրժոխքմբելք ։
Զի թէպէտ եւ կարկեցեմ՝ հասցես դիւրաւ գաղտնեաց խնոյ ։ —
Կինա այս, զոր դու ստեղծեր ինՃ օգնական եւ եռուր ցիս
Իբր ըզպարգեւ քո կատարեալ, որ եւ բարին էր եւ պատշաՃ,
ՀաՃոյ եւ շնաշխարհիկ, յոյր ձեռն ինչ ոչ խիթայի չար,
Որ յոր ինչ եւ առնէրն՝ օրինակաւ իսկ գործելոյն
Թըւէր արդարանալ, սա 'ի ծառոյն ետ եւ կերայ ։ »
Աւ որ վեհէն կերպարանք կըրկնեաց անդրէն օրինակ զայս ։
« Մի՞ Աստուածդ էր նա՝ նըմա քան Արարչիդ ըսել ձայնի ։
Միթէ քեզ առաջնորդ էր նա ստեղծեալ, քո՞ գըլխաւոր,
Կամ թէ ընաւ իսկ հաւասար՞, զի՝ նորա ձեռս առեալ տացես
Զարութիւնդ եւ զկարգն յոր էն 'ի վեր քան զնա նըստոյց ըզքեզ,
Որ 'ի քէնդ հաստեցաւ եւ վասն քո, զի եւ քո շնորհք
Ճըշմարիտ պատուոյն անցեալ զանցանէին ըզնորայովքն ։
Արդարեւ զարդարուն եւ գեղապանծ նա սիրատարմ
Ի ձրգել ըզսէրդ եւ ոչ ըզտիրական իշխանութիւն ։
Լաւութիւնք իւր բարի էին 'ի կալ ընդ քո ձեռամբ,
Ոչ 'ի Ճահ Ճոխանալոյ ։ իշխանութիւն՝ քո էր բաՃին,
Քում անՃինըդ սեփական, թէ այնմ էիր քաջ խելամուտ ։ »
Զայդ խօսեալ Աստուծոյ՝ զայս առ Եւայն ասէ բան սուլ ։
« Ե՛կ ասա դու ինՃ, կին ։ առ ինչ արդեօք գործեցեր զայդ ։ »
Տառապեալն Եւա զոգցես անդընդասոյզ անկեալ յատեթ,
Փութացեալ խոստովանել դատաւորին իւրում հանդէպ՝
Ոչ խիզախ եւ ոչ Ճոռում պատասխանեաց պատկառանօք ։
« Օձն խաբեաց զնա եւ կերայ » ։ զոր ըսելով Տեառն Աստուծոյ՝
Անյապաղ անդէն 'ի դատ առենաքարշ օձին մատեաւ,
Թէպէտ եւ անասուն, անբաւական հանել յանՃնէն
Ցայն ոք ըզյանցանսն՝ որ սա ընկա գործի չարեաց,
Եւ թիւրեաց 'ի կարգէ արարածոյն իւրում ընկա,
Ցիրաւի նըզով յայնժամ՝ իբրեւ եղծեալ 'ի բնութենէն ։
Զեր ինչ փոյթ մարդոյն ընկաւ ինչ առաւել քան զայդ գիտել,
Զի չէր այլում խիք հրմուտ, եւ ոչ այնու նուազէր վընասն ։
Իսկ Աստուած զըսկըզբնամեղն արկ Սատանիւ ըզդատակնիքն,
Այլ սակայն պատ 'ի պատ խորհըրդաւոր զեղչեալ բանիւք,
Որ բարեաքն յայնժամ թուեցան, եւ յօձն անՃծս այսպէս կուտեաց ։
« Փոխանակ զի արարեր դու զայդ՝ ընկիր դու նըզովեալ

Յամենայն անասունս եւ 'ի գազանս երկրագնացս.
Ընդ որովայն սողացիս, հող կերիցես զաւուրս քո,
Եդից ոսոխութիւն ընդ քեզ ու՝ նդ կինդ, յազգ իւր ու՝ի քոյդ,
Նա զքո գլուխ ջաղխեսցէ, դու զգարշապար նորա հարցես։»
Այսպէս հատաւ վրէժիս պատգամն՝ Ճշմարտեալ յայնմ ժամու,
Յոր երկրորդին Եւայի՝ Մարիամու զաւակին Յիսուս՝
Զերդ փայլակն յերկնից անկեալ եռես զՍատան զնշխան օդոյս։
Ի շիրմէն ելեալ յայնժամ առ յաւարի զնշխանութիւնս
Եւ զզօրութիւնսդ գրժոխոց, ձաղեալ զնոսա յայտ յանդիման,
Եւ շքեալ ելիւք ընդ օդս ըզգերութիւն տարաւ գերի,
Զբազմամեան արքայութիւն զյաիբշտակեալն 'ի Սատանէն,
Զոր ապա խորտակեսցէ ինքնին ըստ 'նդ ոտիւք մերովք
Նոյն իսկ ինքն՝ որ զմահաբերս արդ գուշակէ զայս ջնխնջախանս։
Եւ 'ի կինքն կոյս դարձեալ ըզդատաստան իւր յայտ արար.
«Լրկեցից բազմապատիկ երկամիք ըզքեզ 'ի յղութեանդ,
Ցաւովք ծընցես, եւ 'նդ ձեռամբ առնդ կացեալ՝ տիրեսցէ քեզ։»
Եւ Ադամ՝ հուսկ յետինն՝ այսպէս եհատ դատավրէնս.
«Փոխանակ զի լսեար ձայնի կընոջդ եւ կերար դու
Ի պտղոյ ծառոյն այնմիկ զոր քեզ չուտել պատուիրեցի՝
Յայտ 'ի պատգամն արարեալ, եթէ Անտի մի ուտիցես,
Անիծեալ լեսցի երկիր վասն բանիդ զոր արարեր,
Տաժանեալ երկոքիք գրտցես անտի զսընունդդ 'ի կեանդդ քում,
Փուշ եւ տատասկ քեզ բուսուցէ եւ կերիցես զբանջար վայրի։
Հաց քո քրտամբք երեսաց քոց ուտիցես՝ մինչեւ դարձցիս
Յերկիր անդր ուստի առար, զի հող իսկ ես ու՝ի հող դարձջիր։»
Այսպէս դատեաց զմարդն առաքեալքն դատաւոր նոյն եւ փրկիչ.
Քանզ 'ի բաց հեռացոյց զանկարծութիւն մահուն հարուած
Զառօրին բարառնացեալն. ապա յողորմ 'ի գութ շարժեալ
Ոյց առաջին կային մերկք՝ մատնեալք 'ի վիշտ օդոյն վտանգի,
Ում յայնմհետէ մեծամեծք հանդերձէին յեղափոխմունք,
Ըսկիզբն առնել ոչ խորշեցաւ առնուլ ըզկերպ ծառայական,
Զծառայիցն որպէս յորժամ զոտս լուաց՝ նոյն եւ այժմիկ.
Իբրեւ հայր ոք ասնուտեր՝ ըզմերկութիւնն ըզգեցոյց մորթ՝
Զանասնոց բարանեալց, կամ որ ըզնորին կրր օձ նորեալ։
Ոչ յերկար յերկմիտս եղեւ ձորձասպառել զիւր թշնամին,
Ոչ եւեթ զարտաքին նոցա մերկոյթ ծածկեալ մաշկաք,
Այլ նա եւ ըզնեարքինն՝ առաւելեալ 'ի քարուսանս։
Պարուրեալ զայն իւրով արդարութեան պատմուճանաւ՝
Թաքոյց յաչաց Հօր իւրոյ, եւ համբարձաւ առ նա Ճեպով։
Գիրկընդխառն յերկանիկ ծոցն՝ եմուտ 'ի փառսն որպէս երբեմն.
Առ Հայրն ցածուցեալ, — թէպէտ գիտէր նա զամենայն, —
Մատուցեալ որ ինչ անցք ընդ մարդն էին անցեալ՝ պատմեաց,

Քաղցրախառն ամոքելով ըզՃառ բանիցն ընդ իւր ասէրս։
Իսկ մինչ չեւ էին յանցու�եւ դատաստանք եղեալ յերկրի՝
Մեղքն եւ Մահ հանդէպ միմեանց առ դրժոխոց նըստէին դրուանս,
Ի դրուանս անդ՝ որ մեծաբաց ըզդայուէին մրըրկաբեր բոց
Մինչեւ անդր 'ի սիրտ Վըրէին՝ յորմէհետէ եբաց զայն Մեղքն
Եւ ասէին անց ընդ նոսին։ Խօսել կալաւ Մեղքն ընդ Մահուն.
« Ո՛վ որդեակ, զի՞ կամք նըստեալ դատարկ հայել միմեանց յերեսս,
Ուր Սատան՝ հայրըն մեր մեծ՝ յաջողապէս յայլ տիեզերս
Հայթայթել խընդրէ մեզ երջանկագոյն իւն օթարան,
Մեզ իւրում զաւակին. հասցէ անշուշտ յամբոխ գործոյն։
Թէ ձախող ինչ իրքն էին՝ վաղուց էր նա դարձեալ այսրէն
Տարագիր 'ի զայրմանէ վանեալ իւրոցըն հալածչաց.
Զի եւ ոչ այլ ինչ տեղի գըտցի ուրեք իբրեւ ըզսա
Պատուհասին իւրում պատեհ եւ կամ նոցա վրէժխընդրութեան։
« Թըւիմ յանձն իմ իմանալ՝ զի զօրութիւն նոր զարթնու յիս,
Թեւաբոյս եղանիմ, եւ լայնատարածք տերութիւն
Պարգեւեալ եւ յաւելեալ է յիս յայնկոյս այսր անդընդոց։
Ոչ գիտեմ զինչ ձեպէ զնս, թէ համբուրիցս աղապատանք,
Թէ կորով բնակաւոր զօրեղ 'ի մեծ իսկ հեռատեսն՝
Ի խառնել եւ 'ի զօդել 'ի մտերմութեան գաղտնի անձուկ
Հոմատեռս ինչ համաբուռնս՝ դաղտնածածուկ երթեւեկք։
Դու ստուերդ իմ անբաժան՝ պարտիս դու զհետ իմ ելանել.
Զի չեք ինչ զօրութիւն որ մեկնեսցէ զՄահ 'ի Մեղայ։
« Բայց զի մի հօրըն մերում խափան 'ի գարձ ինչ լինիցին
Անդունդքս անհուն եւ անանց, եկ ձեռն արկցուք յոմորա վասակ,
Սակայն ոչ եւ անցեալ ըստ քո եւ իմ կար զօրութեան։
Ճանապարհ մ'ի վերայ խորոց ծովուս կառուցանել
Ի դժոխոց ցաշխարհըն նոր՝ ուր արդ Սատան կայ զօրացեալ,
Ցիշատակ օգտանատոյց գընդից համայն դրժոխազանց,
Որ գիւրանց գործիցէ զյաղութիւս իւրեանց կամ ներթեւեկ,
Որպէս զնարդ ինչ եւ դէպք իրացն ըստ պէտքս վարեսցեն։
Ոչ կարեմ վրիպել յուղղոյն, քանզի ձրգիմ ուժգին յայն կողմ
Յայսմ 'ինոր հաղթեպէրոյ ու'ինորահաս բնութեան բարուց։ »
Եւ որ ստուերքն ցամաքեալ արար անդէն պատասխանի.
« Զո՞ւ ուր բախտ եւ զօրութիւն յօժարութեանդ առաջնորդեն,
Ես ըզհետ քո յետնիմ ոչ, ոչ 'ի ցուցեալդ ուղղոյ սխալեմ,
Այնչափ հոտ ծրծեմ սպանդից, նեխաշաղիկ անթիւ ապուռ,
Այնչափ համ առնում մահու՝ զորոց անդէն կան կենդանիք։
Ի գործոյդ յոր դու բուռն հարիանիցես՝ ոչ կասեցայց,
Նա 'ւանիկ օժանդակեալ նըպաստ եղէց քեզ հաւատար։ »
Ընդ բանին եւ զմայլեալ հոտոտեցաւ ըզժահ նեխոյ
Մահաձին յեղափոխմանն որ հաս կալաւ զերեսս երկրի։

Զոր օրինակ տարմատարմ գիշակերոց հաւուցն երամ
Ի բաղում վրաւանաց հեռասատանէ գան թեւատարք՝
Յառաջեալ քան զոր մարդին 'ի դաշտ զօրուն բանակելոյ,
Ի կենդանի գիսականցն հրապուրեալ 'ի բուրմանէն
Նուիրելոց վաղիւ 'ի մահ յարիւնախանձ գուպարածի,
Ուրուականքն ժանտակերպ այսպէս ձրգէր զմահուց շոգին.
Զի զբընդանցն 'ի վեր պարզեալ ըզծուծսն լայն յօդն աղջամուղջ՝
Զհոտ իւրում կերակրոյն առնոյր յայնչափ 'ի տար կուսէ։
Սըլացան իսկ եւ իսկ ըստ գրժոխոց դրրունս արտաքս
Երկոքին ճիւաղ տեսիլքն 'ի հակառակ միմեանց կողմանս
Յունայն եւ լայն անտեղչութեան խաւարաբորբ եւ գէշ վրէն։
Եւ ուժով մեծաւ իւրեանց առ մրկանամիք ջուրցըն քերեալ՝
Որ ինչ սեղմ եւ մած գրան 'ի վեր 'ի վայր ծրփեալ տատան
Իբր 'ի ծով կոհակակոծ, ըզբնաւն 'ի մի գընդեալ վարեն՝
Ի կուսաց կուսաց մրդեալ 'ի գրժոխոց կուտեալ բերան։
Ի Սայլէն հողմունք կրրկին այսպէս միմեանց շընչեալ ընդդէմ՝
Ի Կրոնեան ծով կուտակեն կարկառակոյտ սառանց լերինս,
Երթալ խընուլ ըզկարծեալն ըստ Պեսսորա զանցս յարեւելս՝
Հուլ 'ի Ճոխ եւ յարգասու ծովեղերեայս Ճենաստանեայց։
Վխտառուիչ ցուրտ եւ ջոր լախտիւքն Մահ զնիւթն բարդեալ
Իբր 'ի հզօր երեքարձէն տոփեալ պընդէ զայն կարծրակուռ,
Հաստատուն քան ըզԴելոսն երբեմն ուրեմն ծովածուփ.
Այլք կառեան անդբրդուելի՝ Գորգոնեան բարկ ամնարկութեամբն։
Երկոքին ուրուականքն 'ինաւթեղէն կրպրաշաղախ
Մածուցին զափրն գիղեալ, լայն ըստ դբրանցըն դրժոխոց,
Եւ խոր անդընդալեր՝ հիմանց ընջոց նորին 'ի զդգ։
Ամբարտակն ահագին յառաջակողմ կոյս կարակնեալ՝
Ամբարձաւ կամարաձեւ զիբրրիբակուտակ խոր անդընդոքն,
Լայնալեռ կամուրջ ահեղ մինչ յաշխարհս անշարժ պարիսպ՝
Գրաւելոյն անպատրաստսոր յայնժամ յաւար Մահուն դրժնէ.
Ընդ այն 'ի դժոխս էջ Ճանապարհ լայն հարթ եւ հորդ եւ կուռ եւ կոկ։
Թէ զփոքունս ինչ օրէն համեմատել ընդ մեծամեծս,
Այսպէս Քսերքսէս յիւր 'ի մեծ 'ի մեմնոնեան ապարանիցն
Եղեալ եկն 'ի Շուշանայ՝ գերել զՅունայց աղատութիւնն,
Եւ կապեալ կամուրջ արար իւր Ճանապարհ Եղլէսպոնտոս,
Կըցեաց զԵւրոպ յԱսիա եւ զզայրացեալ ալիս ձաղկեաց։
Մեղք եւ Մահ զբանչէլարուեստ տարեալ Հին զդործ իւրեանց արդ, —
Գօտի Ժայռից կաւուցեալ 'ի խառվայրոյզ անդունդսն խոր՝
Ընդ շաւիղն հեստավարեալ յոր անց Սատան յառաջագոյն, —
Մինչ 'ի վայրն ուր ամիսիեալ նա զթեւերս իւր յելս անդ վրէին
Ի ցամաքուտ էջ յերեսս դընտաձեւ այսր աշխարհի։
Հեղուսիւք եւ շղթայիւք ադամանդեայ՝ կռեցին ըզբնաւն,

Ո՛հ, կարի հաստատեստ կառուցեալ զայն, տեւական յոյժ։
Անդ 'ի խուն վայրի դրսին ըղծագս արփւոյն եւ զանխարհիս.
Յահեկէն էին գրժոնք եւ 'ի միջին ձիգ խորխորատ։
Երրակի պողոտայք անկըրպտեալք ակնյանդիմեան՝
Ցանէին հանէին յիւրաքանչիւրս երրեակ վայրացն։
Եւ արդ նոքա զՃանապարհ կալան զերկրի զոր էր տեսեալ՝
Դիմեալք 'ի դրախան. եւ ահա Սատան 'ի կերպ լոյս հրեշտակի՝
Ընդ Կարիձն եւ ընդ նեռոյն Յուշկապարիկ ուղղեալ զգաղթն,
Ի ժամուն զի արեգակն յաստեղատան ծագէր Խոյին,
Խաղայր գայր նա ծրպտեալ. սակայն սոքա՝ սիրուն խոշտարքն՝
Իսկ եւ խակ ըղհայրն իւրեանց զայլակերպեալն անդամ ծանեան։
Սատանայ նենգեալ զԵւա, յանտառ մի մօտ անկեալ զանխուլ,
Եւ փոխեալ ըղկերպարանան՝ 'ինքեաւեալ զանցիցն էլս,
Եաեա՝ զի Եւա, թէպէտ եւ ոչ չար խորհրդով,
Աւանթեր առն իւրում կրկնեաց ըղգործ իւր զասպիրատ,
Եաեա՝ զի պատկառանք նոցին խընդրեաց քօղ անօգուտ։
Իսկ յոյժամ զԱստուածորդին եաեա ինքեալ 'ի դատաստան,
Զարհուրեալ երթ 'ի փախուստ, ոչ թէ յուսով ճողոպրելոյ,
Այլ խոյս եւ առժամայն՝ 'ի յանցանացն 'ի խեթի լեալ՝
Թէ Որդւոյն բարկութիւն ընդ իւր կառափն հանցէ յանկարծ։
Յետ այնորիկ անդրէն դարձ արարեալ 'ի գիշերին
Ի տեղին ուր երկոքեան թըշուառականքն էին նրստեալ,
Եւ լըւեալ ըզբրատուչ բանն եւ զվէսպէս նոցին տրրտունջ,
Ա՛ռ 'ի միտ անդուստ եւ զիւրըն դատակնիք՝ եղեալ հասու
Զի ոչ անդէն առ կուան կայր այն, այլ մինչ յատայս ինչ հանդերձեալ.
Ցընծալից աւետաւոր դարձաւ յայնժամ էին 'ի դրժոխս։
Առ եղերեք Վ ըհին 'ի խեղբս հրաշակերտ նոր կամրջին՝
Յանկարծոյն եդիտ զեկեալն յիւր հանդիպումն ըզքաղցր որդեական։
Ուրախութիւն մեծ եղեւ 'ի պատահել նոցա միմեանց.
Նորանըշան կամրջին տեսիլ յորդեաց զիւր խընդութիւն,
Ոչ սակաւ ինչ ժամանակ եկաց մընաց 'ի զարմացման,
Մինչեւ Մեղք, դուստր իւր կախարդ, ըզբրուութիւնն ելոյծ այսպէս.
« Ո՛վ հայր՝ քոյ են ձեռակերտքս այս հոյակապ, քո յաղթանակք,
Յորս ելբ յոչ քոյս հայիս՝ սոցին դու հայր եւ նախ Ճարտարապետ։
Զի անդէն մինչ սիրտ խմ դնաց, — սիրտ որ ծածուկ նեբբին դաշամբք
Ընդ քոյումդ շարժի միշտ՝ 'ի մտերմութիւն քաղցրը կապեալ, —
Թէ յերկրին յաջողեցար դու՝ զոր եւ աչքդ այժմ առնեն յայտ,
Թէպէտ բազում աշխարհօք մեկնեալ 'ի քէն՝ տեսի զանձն խմ
Այդր առ քեզ ձըգեալ ձեպեալ սովաւ հանդերձ քոյին որդւովդ.
Այսպիսի զմեզ զերեսեան միատարրին անխուզ կապանք։
Ոչ զբրեաց գրժոնք ունել յերկար ըզմեզ յիւրըն կոպար,
Եւ ոչ խորխորատս անՃանապարհ եւ խաւարչուտ

Խափանել զընթացքս մեր ըզկնի հեռոց շրջել շաւղացդ։
Յանդ հաներ զաղատութիւնս, ցարդ դրժոխոց դրամբք ալեհրոցս
Եռուր դու մեզ զօրութիւն կանգնել շինուած մինչ յայս սահմանս,
Եւ զկամուրջս ահագին կառուցանել 'ի մայր անդունդս։
Քո են յայսքմ հեռէ առհասարակ այս սեղեալքս,
Զօրութիւն քո նուաճեաց զոր ոչ ձեռին քում արարեալ.
Դարձոյց խնասութիւնդ առաւելով զմարտին կորուստ,
Եւ խընդրեաց ըզպարտութեան մերոյ յերկինս ըզվրէժ ըստրիւ։
Տիրեսցես ասա ինքնակալ՝ որ անդ չէիրդ ինչ թագաւոր.
Թող տիրէ դեռ անդանօր յաղթողն քո 'սա մարտին կամաց,
Յաշխարհէս նորոյ զատեալ իւրով վրճռաւ տարադրելոյ։
Թէպէտ ընդ քեզ այսուհետեւ բաժանեսցի զարքայութիւն
Ամենայնի որ մեկնեալ արփիահրատն են սահմանօք,
Իւր՝ քաղաքքն քառանկիւն, գընդատեսիլ աշխարհքն՝ քեզ,
Թէպէտ 'ի փորձ հանդիսի յանդրդնեսցի առ քեզ մատչել,
Որ զարդիս իւրում գահուն ես առաւել ահեղագոյն։»

Իշխանքն խաւարի պատասխանի ետ ցընդութեամբ.
«Դուստր իմ գեղապանծ, եւ ուստր իմ դու եւ թոռն համայն,
Ընշանակ մեծ կանգնեցէք այսօր զի էք Սատանիս սերմ.
Զի պանծամ անուամբս ոսոխ ամենազօր երկնից սեռին։
Երախտաւոր յիս եւ բընաւ իսկ դրժոխոց էք սիեռութեան՝
Որ առ դրամբք երկնից եղէք յաղթողական քաջարութեամբ
Աջակից յաղթանակիս, փառաց գործոյս՝ շրջել գործովդ,
Եւ զդրժոխս եւ զսիեղերս յօրինեցէք մի տերութիւն, —
Տէրութիւն մեր, — մի եւեթ աշխարհ յիրեարքս դիւրամուտ։

«Արդ մինչդեռ ես ընդ խաւար դընամ հեշտիս զձերդ արահետ,
Իջանեմ առ զօրութեանց խմոց բանակ նիզակակից՝
Աւետել զայս յաջողուածս եւ ընդ նոսին լինել խրախ,
Երկոքին դուք ընդ ուղիդ՝ ընդ յոգնաթիւ դընտիցդ մէջ՝
Որ ձեր են համբրէն՝ իջէք ուղիղ 'ի դրախտն Ադեն,
Անդ կալջիք բնակութիւն՝ թագաւորեալ յերանութեան։
Անտի զձեռքն ձեր արկէք յերկիր եւ յօդս առհասարակ,
Առաւել եւս 'ի մարդն 'ի հրդեհակեալ բոլորից տեր,
Նուաճեցէք նախ 'ի ծառայ հաւատարիմ, ապա սպանէք։
Ցընդեմ զձեզ իմ եռեղապահս, իշխանութիւն տամ անսահման
Անզուգական զօրութեամբս յինէն յառաջ խաղացելով։
Արդ 'ի ձեր ոյժ բաղկակից բոլորովին ապաստան կայ
Սատացուած նորոյ տերութեանս զոր Մեղք խնդիքքս քաջութեամբք
Ի ձեռս ետ մատնեաց Մահուն. թէ զօրութիւնք ձեր դաշնաւորք
Յաղթական հանդիսասցին, երբ դրժոխոց ոչ երկիցեն
Եւ ոչ 'ի մի եղեռանէ. արիք երթայք եւ քաջ լերուք։»

Ասացեալ զայս յուղարկեաց. նոքա յընթացս 'ի սուր դիմեն

Սըփռելով ըղթոյնս իւրեանց ընդ բազմաբոյլ աստեղատունս,
Յոր արփիցն թաթաւեալ՝ գունատեցան, եւ մոլորակք
Պղտորեալք՝ ըստուերումն ճշմարիտ խաւարեցան։
Ընդ միւս կողմ ընդ թուրքն 'ի դրունս դըժոխոց էջ Սատանայ։
Ցեղեալ Վիշն յաջ եւ յահեակ եւ գիղեալ յինքն ահագնագոչ՝
Ի կոհակ որոնընդոստ գէմ յամբարտակն յարձակեցաւ,
Որ զնուրով սըրամբտուութեամբ ծաղը արարեալ ծիծաղէին։
Անցեալ ընդ դուռն դըժոխոց անպահապան եւ մեծաբաց՝
Զամենայն ինչ գրասնեկ Սատան 'ի խոր ամայութեան.
Զի կարգեալքն անդէն 'ի պահ՝ թողեալ զտեղին իւրեանց թափուր՝
Եղեալ կայրն 'ի բացեայ թռուցեալ յաշխարհն վերագոյն։
Այլք յաղուցս էին մեկնեալ՝ զԱմենագիւց շինին որմովք,
Որ քաղաքն էր եւ գոռոզ արքայարանն Արուսեկի. —
Զայդ կոչումն առեալ Սատանն 'ի նեմանութիւն պայծառ աստեղն։ —
Եւ վայրոքն 'ի պահ կան գունդք, աւազորեարն յատեան ակումբ,
Վարանեալք՝ եւ ելցէ յամ ինքնակալս զոր յղարկեցաք։
Զայս արեալ նորա պատուէր 'ի գնալ իւրում, եւ պահէին։

Որպէս յորժամ Ապախտարք խուսեալ գընան ընդ տուն Մասքթայ
Եւ ընդ դաշտս ձիւնաթաղս 'ի յերեսաց Ռուս Թշնամւոյն,
Կամ արքայն բակարիացւոց 'ի տաճկատան մահիկեալքեց
Փախուցեալ յաւեր մնանէ զաշխարհն յայնկոյս Հայոց փոքունց՝
Ի խաղալ իւր եւ տեղն տալ 'ի Դավրէժ կամ 'ի Կասբին.
Նոյն սոքին՝ այն ինչ Նորոգ վրատանդի յերկնից բանակ
Անապատ ասպարէզս խաւարին Թողին յոլովս
Ի դժոխոց ալսն նեբքին, եւ հոյլ 'ի հոյլս խըմնեցան
Ի զուարթուն պահպանութիւն արքայանիստ քաղաքամէրն,
Ակն ժամ 'ի ժամ կալեալ դարձի մեծի նահատակին
Յարշաւանացն յոր ջոգաւ տարաշխարհաց խոյզ ու 'ի խընդիր։
Անց ընդ մէջ բազմամբոխին զանիրաւաբար եւ յանծանօթս
Ի տեսիլ հրեշտակաերզ ռամիկըսպաս զօրականի։
Ի դրաց Սամայելեան դահլիճին եկ յանեբեւոյթս
Ամբարձաւ յաթոռ իւր պերճ՝ որ Ճոխաճան պարզեալ կերպաս
Կայր 'ի բարձրր ծագ սրահին արքայապանծ շքեղութեամբ։
Եկաց ժամ մի բազմեալ՝ պարագիտեալ անտեսաբար.
Իբր յամպոյ խմբէ ապա գըլուխ իւր ճառանչեղ
Եւ գիտակ աստեղափայլ կերպարանացն երեւեցան,
Կամ թէ եւրս լուսալիր, գներոզութեան արկեալ ըզփառս,
Կամ զպիտակ ճառագայթից որ յետ անկման թողան 'ինա։
Հիացեալ գունդ դըժոխոց՝ աչս 'ի յանկարծ բարձին ծագումն,
Եւ ծանեան ըզյանկալին իւրեանց հասեալ ըզպետն հրզօր։
Աղաղակ ուժգին հընչեաց, ճեպ յատենէն եռուն աւագք,
Ի խաւարին ակըմբիցն յարուցեալ մնատեան առ. նա

հասարակ ուրախութեամբ 'ի խընդակից նրմա լինել։
Նա ձեռամբ լուսեցոյց յունկընդրութիւն սովին բանիւք.
« Աթոռք, Տէրութիւնք, Իշխանութիւնք, Զօրք զօրութեանց,
Աչսոկս իսկ կարդամ ըզձեզ եւ քարոզեմ այժմ այսպիսիս,
Ոչ եւեթ իրաւամբք, այլ եւ արդեամբք ժառանգութեան։
Ըզկրնի յաջողուածոյս քան զամենայն ըզյոյս 'ի վեր՝
Եկի հասի առնուլ հանել ըզձեզ ասսի յաղթանակաւ
Ի զաղիր եւ նրզովեալ սանդարամետ խոր վիրապէս,
Ի տանէ թշուառութեան՝ բրռնակալին մեր դրդեկէ։
Օն արքք ժառանգեցէք արդ տիրաբար զաշխարհ մի մեծ՝
Խուն մի 'նդհատ 'ի բնակաւոր եւ հայրենի երկնէ մերմէ,
Զոր ստացայ ձեզ ծանր 'ի վտանգ՝ տաժանաւոր ձեռնարկութեամբս։
« Երկայն են յոյժ Ճառք բանից գործոց խմոց եւ նեղութեանց
Եւ վրչատոյն որովք անցի 'նդ ահեղ յուզմանց վիհ խորափոր,
Որում ոչ սահմանք ինչ են, եւ ոչ բնութեան հաստատութիւն.
Զորով այժմ Մեղք եւ Մահ սաղայատակ են յօրինեալ
Ճանապարհ լայն 'ի դիւրել ըղքաջափառ ոտիցդ ընթացս։
Սակայն ես ուղղի անկոխ ինձ հորդեցի տառապանաց,
Բաստիպեալ ընդ սպառումս անդունդս 'ի վեր բարձրապարել,
Սուղիլ 'ի ծոց անբսկիզբն Գիշերոյ եւ բիրս Վրէին,
Որ զընդդայեալ ընդ ծածուկս խրեանց՝ յարեան բուռն ախոյեան
Մոլեգին գոչմամբ ջրտալ թոյլ նորագիւտ Ճանապարհիս,
Բողոք բարձեալ յատենի վեհագունի Ճակատագրին։
« Զեզ լցէ զրուցել եւ զգիւտ նորատեղծեալ այնր աշխարհի
Հրաշակերտին ընդ երկինս յառաջագոյն 'ի համբաւուց։
Դաստակերտ զարմանագործ ամենալից բարգաւաճեալ,
Ուր մերով հերքմամբս եդաւ մարդն 'ի դրախտի յերկնանկութիւն։
Իմ յիւրմէ Աւարչէն ուծացուցեալ ընկա նենգաւ՝
Որսացայ, եւ յառաւել 'ի ձեր զարմանս, պրտղով միով։
Ցասուցեալ ընդ այս նորա, — կարէք ունել ժոյժ 'ի ծաղուէ, —
Մասնեաց էտ ըզսիրելին իւր մարդ համայն եւ զայն աշխարհ
Ցաւար Մեղաց եւ Մահու, հարկաւ եւ մեղ միանդամայն,
Որ դիւրով եւ թեթեւով եւ անվրասանգ զայն ըստացաք,
Երթալ ընդ այն ընթանալ, բնակել անդէն, տիրել մարդում,
Փոխանակ՝ զի նա ինքն ամենայնի էր իշխելոց։
« Ապաքէն եւ զիս ինքնին դատեցաւ նա, նա մանաւանդ
Ոչ թէ զիս, այլ զօձն անդան՝ յոյր կերպարան խաբեցի զմարդն։
Իմ 'ի նմին դատաստանի բաժին է մերկ թշնամութիւն,
Զոր նա ինքն արկանելոց է 'ի մէջ իմ ուաղգի մարդկան.
Ես հարից զիւր գարշապար, տոհմ իւր ըզգլուխ իմ Ճնշեսցէ։
Սակայն ի՞նչ, ոչ ինչ է յայտ. եւ ո՞վ լցէ որ ընդ Ճնշման՝
Նա եւ ընդ մեծ եւրս պատժոց՝ ոչ գլնեսցէ զաշխարհ մի։

Ա՛յդ ահա գործոցս համար. զինչ այլ մինայ ձեզ առնել, դիք ...
Յառնել այժմէն մերանել 'ի ծայրալեր երանութիւն։»
Զայս խօսեալ՝ վայր մի եկաց, ապն 'ի պայթիս միահամուռ
Եւ 'ի բարձրը դըրուատիս կալեալ թէ դան յուսնին իւր ճայթել.
Բայց սակայն ընդ հակառակս 'ի բոլորից լըսէ գիմաց
Միախառնուն եւ դրժընդակ անթըւելի լեզուաց շըչիւն,
Հասարակ համաշխարհի դրսրոմանաց ձայնարկութիւնք։
Յապուշ միտքս զառածաւ, սակայն առ սուղ ինչ ժամանակ,
Զի անդէն առ նրմին յաւէտ ընդ անձն իւր զարմանայ,
Տեսեալ զի իւր իսկ երեսք ձրկտեալ ցրռկեալ ծիւրին ծընգին,
Բաղուկքն 'ի կողըն մածնուն, աղդերք յերեսաս առնուն ոլորս,
Մինչեւ յոտիցն իսկ անկեալ՝ գլորի վերջապ սոսկալիթիար
Ընդ պորտին սողալով. ընդդէմ մերցի, սակայն 'ի զուր.
Զօրութիւն մեծ զինքն ընկէզ 'ստ դատակընքին պատուհասեալ
Ընդ նովին կերպարանօք որով գործեալ իսկ զոնձրին էր։
Խօսել ճըզնի, այլ երկճիւղ լեզուաւ առ նոյն երկճիւղ լեզուս
Շըշիւն առ շըշիւն դարձուցանէ զարհուրագին.
Զի էին դեւք համօրէն առհասարակ այլանդակեալ,
Բընաւքն յօձ, իբրու զոլորք յանդըզնադործ դրժէնէ վիսասուն։
Սոսկալի էր շանչ շըշմանցն անդ 'ի սրտէին յոր զեռային
Հրեշից եռանդքն թանձրախիտ շաղապատեալ գլուխս եւ տրատունս,
Կարիճ, քարբ, իժ անողորմ, արքայիկ, ժանտ խարտանի,
Եղջերիկ եւ ծարաւ, որպիսի ոչ ուրեք երբեք
Սողնոց ջուլեր խառնափընդոր եռաց յերկիր անդր ոռոգեալ
Յարենէն Գորգոնական, կամ 'ի կըղզին Ոփիուսայ։
Էր եւ մեծն 'ինոսին ինքնին դարձեալ 'ի վերջապ օձ
ԱմՃոռնի եւ յաղթանդամ՝ քան զանհեղեղքն զայն Պիւթոն,
Զոր արեգակն 'ի պիւթեան ծընաւ հովտին 'ի մերատոց.
Եւ թըւէր ոչ ինչ պակաս իշխանութիւն դեւ յայլս ունել։
Զիւր ըղձեալ բոլորեքեան ելին 'ի դաշտ ազատ արձակ։
Ամ էր այլ գունդն ապըստամբ անկեալ յերկնից՝ եռեղակալ,
Կամ կարգեալ ռազմի ճակատ, ակն կալեալ զըւարթամիտ
Տեսանել զյաղթանակ դալուստ իւրեանց վերապէտին.
Բայց այլանդակ տեսին հանդէս՝ զաղբակերպեալ օձից խուժան։
Ահ կալաւ զնոսա եւ զոյդ քրստմընափուշ աղաղատանք.
Յոր հայէին՝ յանկարծուստ փոխակերպեալ դարձան 'ինոյն։
Ամենանին ծրղնք իւրեանց, ակդք եւ վահանքն թօթափին,
Եւ նոցին տապալեալ թաւալագլոր 'ինոյն ըշտապ՝
Սկըսանին եւ ինքեանք ըզնոյն շըշիւն զարհուրելի,
Ըզդեղեալք զահեղ տեսիլքն՝ ժանտագործ աղգմամբն առեալ,
Հաւասալք՝ որպէս 'ի մեղն՝ եւ 'ի սպասիժ պատուհասին։
Վասն որոյ՝ զոր միանդամ պատրաստէին օրհնից պայթիւն

Ի շառաչիւն փոխեցաւ շրջմանց՝ նրշան մեծ ձաղանաց
Ի շրջթանց իւրեանց ցայտեալ անդրէն յանձինքս իւրեանց։
Առ տեղեաւքն կայր մայրի մի ամբարձեալ յական քրթթել
Անդէն իսկ 'ի ժամու կերպարանացն այլափոխման՝
Ի կամացն ակնարկելոյ վերնախնամ Թագաւորին։
Ի վրիժուցքն ծանրութիւն՝ լի էր 'ինմա ջրքնալ պրտուղ
Ի տեսիլ նշմանութեան այնմ որ 'ի դրախտքն բողբոջէր,
Զոր 'ի կեր Եւայի ջամբեաց փորձիչքն հրապուրօղ։
Յայն 'ինոր երեւոյթ կառուցեալ դեւք զաչքն հրացայտ,
Թուեցաւ նոցա թէ միոյ ազնկոյն փոխան հրաժարելոյ
Բազմաբիւրք եղեն բղղեալ յամօթ իւրեանց կամ 'ի վրտանդ։
Բայց տապախարշ ծարաւով կիզեալ, տանջեալ սովալքուկ՝
Որ նոցին արկան 'ի խաբ, անժոյժ գլորեալ լեռնակուտակ՝
Սողեալ 'ի ծառուն ելանեն, յոյժ Թանձրախուռն անդէն մածեալք
Քան օձիցն ոլորք 'ի գլուխքն Մեղերայ դանդուր խոպոպք։
Կրթեն անյաղաբար զնայրիս նոցուն զեղեցկատեսս
Իբր առ նաւթի լճինն ասեալքն ուր հրատոչոր կորեաւ Սոդոմ։
Սա յաւէտ եւրս խաբու՝ զքիմնքն պատրէ, զղընեալս ոչ։
Ցիմարեալ նոքա 'ի յոյս տալոյ քաղցուն իւրեանց յաղուրդ՝
Փոխանակ ընդ մրրդոյ ծագքեն մոխիր դառնաձաչակ,
Զոր կոկորդքն նողկացեալ թրքնու ճրչիւ ցայտեալ ցընցուղս։
Առ սովոյն տաղնապի եւ ծարաւոյ՝ 'ինոյն դարձեալք՝
Միշտ 'ի ժահրը դառնանան, եւ զարշանաց զաղիր տապտուկ
Խեղաթիւրեալ զծամելիսն ըղյափրացեալսն յաճիւն ու 'ի ճալպ։
Ի նոյն խաբս անկան ըստէպ, եւ ոչ մարդոյն ինչ հանգուստակ
Զաղելոյն 'ինոցանէն, որ մի եւ ի թ անկաւ անգամ,
Տանջեալք այսպէս սովով, հաշեալք երկայն անհատ ըշջմամբ
Մինչեւ յառնուլ հրամանաւ ըղկերպարանն յորմէ անկան։
Աւանդի պատուէր եղեալ՝ ամի ամի մնանել նոցա
Ընդ աւուրս ինչ 'ի պատիժքս տարեւոր անարդանացն,
Ի հարթել զեղջիւր նոցին եւ զպատրանաց մարդոյն խընձոյս։
Բայց 'ի կռամոլ աշխարհն սրփուեցին զոյցս ինչ յաղթութեան՝
Բանկարկեալ թէ արպէս օձ, զոր Ոփիանն յորջորջեցին,
Հանդերձ Եւրինոմեաւ՝ որ առ կանուխ ժամանակաբ
Գողացեալ զԵւային յափրշտակեաց թերեւս անուն,
Առաջին Թագաւորեալք յոլիմպականն 'ի բարձունդակ,
Ի Կռոնեայ եւ յՈպեայ մերժեալք 'ի բաց հալածեցան,
Մինչ չեւ էր տակաւին Դիկտէականն ծընեալ ՀԷս։
Մինչ այս մինչ այն՝ դրժոխային ամոլքն ընդ փոյթ հասին 'ի դրախտն,
Ուր Մեղք յառաջագոյն ըստ կարուութեան էր երեւեալ,
Ըզկնի արդեամբք, խակ այժմիկ՝ անձամբ 'ինեալքս անդր անկանէր՝
Յանկորդել յաւէժաբար անդէն բընակ հանապազորդ։

Ըզկնի նորա մեա 'ի մեա հեռեւէր Մահն բան քայլ եւ քայլ՝
Զեւ հեծեալ 'ի դեղնաթոյր իւր երիվար։ Առէ 'նդ նա Մեղքն.
« Սատանին երկրորդ ծընունդ, Մահ՝ ում մընայ գրաւել զհանուրս,
Ըստորոյ տէրութենէ ասան մերմէ զնա խորհեցիս։
Զի թէպէտ գրժուարակիր ճրդամբք եղաք այսրմ հասու,
Այլ՝ ազէ ոչ ապաքէն ասաէն լինել լաւ եւս իցէ,
Քան նրատեալ տակաւին առ սեամս ըսկել սեաւ դրժոխոց
Անանուն, անհոյ, եւ դու ինքն 'ի սովոյ կիսակենդան։»
Մեղսածին ճիւաղն արար անդէն եւ անդ պատասխանի.
« Հիւծելոյս ինձ յարամիջս սովոմ էն զոյդ եւ հաւասար
Դրժոխք, երկիր կամ երկին. անդ լաւագոյն դիպեալ բախտի,
Ուր ուար ճոխ դրատանեմ, որ թէպէտ ասա լի յորդառատ,
Սուղ թրւի ամենեւիմբ առ 'ի խրծկել ըզպորտրս զայս,
Զարդընդեր շաղիոց այս մեծ՝ որ ընդ մորթով է անքանակ։»
Առ որ մայրն ազգաշաղաս եւ մրծընկեաց կրրկնեաց անդրէն.
« Արդ ճարակեա նախ լափեա զբանքարս՝ ըզմիրգս եւ ըզծաղկս,
Ապա զմէն մի անասուն, ձուէն եւ թրուչուն՝ անոյշ պատառս.
Անիրնայ կուլ զամենայն ինչ զոր հընձէ ժամուն մանգաղ,
Մինչեւ յօրն յորում բռունեալ իմ 'ի մարդում եւ 'ի զարմին,
Եւ պրղծեալ ըզնորհուրդս՝ զաչս՝ ըզբանս եւ զգործս իւր,
Համեմեալ ամոքեցից ըզնա վերջին քեզ քաղցր ապուան։»
Յետ խօսիցս երկոքին 'ի զանազան անկան ուղի
Յեղծանել, զանմահական կապտել ըզկեանս արարածոց,
Ի կորուստ՝ եթէ վաղ թէ անագան՝ հասուցանել։
Զոր տեսեալ Ամենակալն 'ի բարձրութեանց վերին դահուն
Բարձրելոյն 'ի մէջ արքոց՝ առ լուսեղէն դասս նոցա
Զայս անդէն օրինակ արար ըզձայն իւր ըսկզի.
« Ցեսէք ըզդրժոխոց շունդ զնարդ դիմեալ խաղան
Ժիրաժիր յապականել եւ յաւերել զաշխարհն զայն՝
Զոր բարի եւ գեղեցիկ ստեղծեալ եւ նոյն պահպանէի,
Թէ մարդոյն անմրտութեան չէր արեալ թոյլ դալ մրտանել
Եղծագործ կատաղեացդ որ յիս կրրթեն զայն խօրութիւն։
Զայդ առնեն սանդարապետն եւ արբանեակք իւր ձեռընտուք,
Ներելովս առնուլ ունել նոցա զտեղն զայն երկնային՝
Կամակից լինել թուեցեալ ուրախութեան ըստ ոսոխացս,
Որ ծաղր առնեն՝ իբր առ ցասման մատնեալ նոցա զամենայն ինչ,
Դիպուածոյն տրեալ 'ի ձեռս եւ 'ի նոցա ստամբակութեան։
Ոչ դիտեն՝ զի կոչեցեալ իմ եւ ձրգեալ այսր ըզնոսին՝
Զիմ շընուին դրժոխաղնեայ՝ լեզել ըզժահ եւ ըզնոհերս,
Զորոց մեղք մարդոյն բրծկանք՝ սրփռեցին զաղտ յոր ինչ սուրբն էր.
Մինչեւ շուայտեալ խրձողեալ եւ մերձ եղեալ 'ի պարպատիւն
Ծրծելով եւ լակելով ըզնրշխարացրն խերշեւտանս,

Մեռով պարսաքարիւ ամենայաղթ բազկի քոյին,
Ո՛վ որդեակ իմ սիրելի, Մեղք, Մահ, շերմի բերանաբաց
Հուսկ ուրեմն ընդ թոռն եւ բոռ Վրէին հոսեալ ընկրկնուցուն։
Դրժոխոց 'ի սպառըսպուռ խրցցի որկոր յաւէժաբար,
Եւ երախքն ամենածախ աղխեալ կընքեալ մատանեացին։
Երկիր եւ երկինք նորոգեացին յայնժամ սրբբեալ,
Սուրբ առնել զորս միանգամ ոչ բերիցին յանձն ինչ արատ։
Յայնժամ անէծքն ընթացցին կրուեալք զուգից մեղուցելոցն։»
Լրուեաց նա, եւ երկնաւորն տեսան նուագեաց ալէլուիա,
Որ զգոչման ծովուց բերեր նըմանութիւն. ժողովն երգեաց.
«Ճանապարհք ուղիղ են քո, եւ դատաստանք արդարադատ
Յամենայն արարածսդ բովանդակ. ով պարտէ զքեզ։»
Երգեցին ասա զՈրդի զկարգեալ Փրկիչն աղգի մարդկան,
Յորոյ ձեռքն նոր երկինք եւ նոր երկիր դայցեն 'ի լոյս
Յասա դարս հանդերձելոց եւ կամ յերկնուստ ի՛ջանիցեն։
Այս էր երգն, իսկ Արարիչքն յականէ եւ յանուանէ
Կոչեցեալ զհրեշտակս հրեշտակս իւր էտ 'ի ձեռս ըսպաս պէսպէս,
Որպէս անկ ինչ եւ 'ի դէպ էր առժամայն իրացն ոճոյ։
Արեգակն առ նախ հրաման՝ այնպէս գընալ, այնպէս ծագել՝
Զի արկցէ յերկիր ցուրտ եւ տօթ հաղիւ հանդուրժելի.
Զայնել 'ի հիւսիսոյ զզառամ ձրմեռն խրուռացեալ,
Եւ ածել 'ի հարաւոյ զամարայնոյն յեղյեղման տապ։
Նոքին եռուն արծաթափայլ լուանին պատուէր ըզգործս իւր,
Եւ հընգից մոլորակաց զիւրեանց շարժմունս եւ ըստեսիլս՝
Ըստ վեցիր մասին երկնից, ըստ քառորդին ուեռատորոհի,
Ըստ գիտակ հանդիպումութեան եղեռնաւոր աղդեցութեամբ։
Ուսուցին ըզժամանակ վատահատարակ ըզծակցութեան,
Եւ անխաղաց ասատեղաց ըզժանտաբեր հոսմունս իւրեանց,
Եւ թէ ո՛յք 'ի նոցանէ յելս եւ 'ի մուտս արեգական
Առ նըմին գրատանելով մըրբրկայոյզ փոթորկիցեն։
Հողմոց զաղուցսն ցուցին եւ զժամանակս դրդորդմանց՝
Ելանել հրոսող հինիւ խառվել ըզծով, զօդ եւ զսփունս։
Եւ զգումունսս կրթեցին զորոտագոչ փայլատականց՝
Պրատուտել ահեղապէս 'ի սրահս օդոց խաւարայինս։
Կէսք ասեն՝ եթէ հրաման էտ նա իւրոցն հրեշտակաց
Խոտորել զբեւեռս երկրի կրկին տատամիք աշխարհանոք,
Նա եւ էւս ինչ աւելի, զարեգականն զառանցիւք.
Եւ մղեցին ուժգին առ շեղ ըզգունտըս զայս ըզմիկնակայ։
Այլք հրաման առ արեւանն եղեալ կարծեն՝ զի շրջեսցէ
Զերասանական ընդ գօտի ըլյնակամար յայս կոյս եւ յայն
Ի շաւղէ հատարակած զուգօրութեան մի չափ 'ի տար,
Ընդ ցուն եւ ընդ քորան եօթանեսին առլանդականս

Ու 'նդ ըՍպարապայ երկուորեակս, յելն 'ի յեղուամբն խեցգեանին,
Անդուստ յելջն յԱյծեղջիւր ընդ Առիւծ, Կոյս եւ ընդ Կշիռ,
Յամենայն կողմանս ածել ըզմոխոխմունս յեղանակաց։
Զի թէ ոչ, յաւերժական գարուն ծաղկամբք գարնանայովք
Ծիծաղէր յերեսս երկրի զուգիւք տուընջեամբք եւ գիշերօք,
Բայց միայն 'ի բնակելոցն անդրը քան զծիր բեւեռական,
Որոց տիւ անգիշեր ծագէր, արեւ մինչգեռ խոնարհ՝
Հեռի կալոյն փոխարէն՝ զեղերքն առ աչս իւրեանց հիւ գայր,
Եւ անծանօթ արեւելք եւ արեւմուտք լինէր նոցա։
Հիւսիսեաւ գոյր 'ի բըբոց փարատ պաղեալն Նատոսի՛անդ,
Եւ ընդ կողմ հարաւոյ՝ մագնի՛լանեան կողմանց աշխարհք։
Ի ժամ պըտղոյն Ճաշակման՝ արեգակն յեռս ընդ կրուկ դարձոյց
Զգէմ եղեալ ուղղոյն ընթացս 'ի թիւեսեան իբր 'ի կոչնոց։
Զի զնա՞դ էր մարթելի՝ թէ տիեզերքս մարդաբնակ,
Թէ եւ անյանց, առաւել քան զոր յայժմուս լինէին զերծ
Ի խամրիչ սառամանեաց ու'ի տասպահասէն խորշակէ։
Այս երկնից այլայլութիւնք, թէպէտ յամով եւ մանրաքայլ,
Նըմանակս լինչ յերեւան հանին յերկրի եւ 'ի ծովու.
Աստղահար փրքոց մրռայլ, շոգիամէջ շամանդաղեալ,
Եւ գոլորշի փաղաղիչ՝ ժահահոտեալ եւ ժանտաբուխ։
Ի հիւսիսոյ Նորումբեկոյ եւ ծովափանց Սամոյեդաց
Այժմ ըզպլընձի բանս իւրեանց հատեալ՝ զնեալ սառամանեօք՝
Զեռամբ՝ կարկաւ եւ բըքայոյզ մրըրկեալ այսով եւ փոթորկաւ
Վրոմ եւ Կեկիաս եւ մեծագոչ Ժիրն Արգեստէս
Եւ Թրասկիաս պատառեն զմայրիս եւ զծովս ազմրկելով.
Ամբոխեն հակառակ շընչմամբք Նոտոս 'ի հարաւոյ
Եւ մրթիրն ամպոտոտիւք ի լիոն լեռնէն ի լեանատոս։
Ընդ սոսին խոտորնակի ոչ ինչ ընդհատ զայրագնութեամբ
Խոյանան արեւելից հողմք եւ մրտից՝ Եւր եւ Զեփիւռ,
Մեծաբարբառ եւ դրացեալք յելից Նոտոս եւ 'ի մրտից։
Արդ այսպէս բրանութեան սիլիզն յանշընչից առ լինելոյ.
Սակայն հեռ՝ անդրանկածնունդ դուստրը Մեղաց՝ եմոյծ ըզՄահ
Յեկից անմրտաւորսն մոլեգին ատելութեամբ։
Ամ մարտեաւ երէ 'նդ երէ, հաւ ընդ հաւաւ, ձուին ընդ ձրկան.
Ըզձարակ արօտոյն թողեալ հանուրց շընչաւորաց
Ծախեցին ըզմիմեանս, եւ 'ի մարդոյ չարատակառեցին,
Այլ սարտեան, կամ թէ յանցն խոթոտեցին ամենաբար։
Այսպիսի էին արտուստ թըշուառութիւնք բազմապատիկ,
Ոյց մասամբ խեղամուտ եղեւ Ադամ ըստուերանիստ
Թաքուցեալ խաւարասոյզ եւ արիրազգած թախանձալից։
Իսկ 'ի ներքս յանձին իւրում մեծ եւս չարի էր իրազգայ,
Աչէծուփ 'ի մրբրկածին ծով դառնութեան կըրից ատնջեալ՝

Խընդրէ սրբին ըստ ոտանաւոր կեղերգական քանքարտեղծոց.

« Ո՛հ, զինչպիսի չուառութիւն՝ յետ որպիսեաւ երջանկութեան.
Ա՞յս ինչ կատարած զբաղեալ եւ նոր այսր աշխարհիս.
Եւ ես այն ինչ դեռաբոյս պարծանք փառացս այս պարծանաց՝
Փոխանակ օրհնութեանցն ընդ անիծիւք անկեալ այժմիկ:
Թաքուցէք յերեսաց Աստուածութեան Թաքուցէք զիս,
Որոյ էր յայնժամ տեսին երանութեան ծագ եւ գրլուխ:
Եթէ այդու չափ եւեթ եղանիցեն աղէտքս յանդ,
Պարտաւոր եղեալ տարայց պատուհասս, այլ չօրնէ ինչ:
Զամենայն զոր ուտեմն եւ կամ ըմպեմ եւ զոր ծընայց՝
Սերունդ եւ ծաւալումն անիծաբեր է նրզուկց:
Ո՛վ երբեմն հեշտիւք լրեալ քանք՝ Ահեցէք, բազմացարուք,
Իսկ զարդիս մահաշրշուկ. զի զինչ ահել յորդել կարեմ
Բայց միայն նրզուկս հեղեալ յիմ գլուխ անիծապարտ:
Ո՞վ յապայս կրրեալ զարիսն յինէն հոսեալ՝ չանիծցէ զգլուխս. —
Կորիցէ պիղծ նախահայրս. այս քեզ, Ադամ, 'ի մեղ շընորհք. —
Եւ 'ի տեղի գոհութեան շնորհակալեաց՝ եղցեն նրզուք:

« Ա՜յսպէս բաց յանիծիցն յորոց յանձին խմում ընակին,
Խաղացեալքն յինէն համուռ գառնայցեն յիս բուրբն զեղմամբ
Ժողովեալ կուտակեալ եբրեւ 'ի բնիկ խըմբարան յիս,
Եւ որով ծանրութեամբ, թէպէտ յիւրեանց վայր սեփական:
Ո՛վ դրախտիս փախրստական եւ ցընդելն ուրախութիւնք
Ըստացեալք ծանրադնի յարամընայ թըշուառութեամբք:
Խընդրեցի՞ ես ինչ 'ի քէն յիմում կաւին, ով Արարիչ,
Զուլել զիս մարդ. ժըռեցի՞ ձրդել հանել 'ի խուաարէս,
Կամ դընել զիս ատանօր 'ի դրախտիս յայսըմ փափկութեան:
Քանզի չգըտայ կամակից հասանելոյ յայս էութիւն,
Արդար եւ իրաւունք դարձուցանել էր զիս յիմ հող,
Որ յօժարս եմ յանձն առնուլ, հատուցանել զոր ընկալայս:
Զի անզոր եմ կատարել զեղեալ պայմանաբդ դրժընդակս՝
Որովք յիս էին դալոց բարիք զոր իմ ոչ էր խընդրեալ:
Ի կորուստ անդըր բարեացն, որ բաւական էր պատուհաս,
Առ իմ՞ յաւելեր պատիժ զանծայր չըլաւութեան:
Ոչ Թըւի արդարութիւնդ խմում մրտաց Թարգմանելի: . . . .

« Բայց ուղիղ տեսութեամբ՝ բոզոքս է իմ յոյժ տարաժամ.
Մերժել պարտ էր ըզսահմանն յորժամ եդանն, որ զինչ եւ էրն:
Յանձին կալար զայնոսիկ, եւ 'ի բարիսըն վայելեալ՝
Արդ ճըղճիմ եւ կրցիր՝ ըզպայմանաց կրցես խրծբիծս:
Ահրաման 'ի քէն ըստեղծ ըզքեզ Աստուած. իսկ արդ զնա՞ր դ.
Թէ որդին քո ատահակեալ եւ կրշտամբեալ՝ ասիցէ 'նդ քեզ, —
Ընդէ՞ր բընաւ ծընար զիս, որ չէր ինչ իմ խընդրեալ 'ի քէն, —
Յանձն 'ի լայտրս քեզ առնո՞ւս զյախուռնախօս զայն բաղբաղայս:

Եւ՝ սակայն, ոչ թէ կամաց քոց ընտրութիւն ընդս ծնանէր,
Այլ բնութեան հարկ. Աստուծոյ ստեղծեալ ըզքեզ իւրով կամաւ
Եւ իւրով հաճութեամբ՝ մատուցանել նմա պաշտօն.
Վարձքդ յիւրմէ ընտրեցն էին, պատիժքդ արդար է յիւր կամացն։...
Այդպէս իցէ, հպատակեմ. ուղիղ նորա են դատաստանք,
Ես հող եմ եւ փոշի, եւ 'ինոյն հող անդրէն դարձայց։
« Ո՛վ ժամ բարեդէպ՝ յորում պահու եւ եկեսցէ։
Ըզմէ՞ ձեռն ամենակալ յամէ ընդուլ զաւուրս հրաման,
Զի՞ է զի կեամ տակաւին, առ իմ՞ զիս խաղ առնէ մահ,
Եւ վասն էր յերկարեմ յանմահական 'ի խոշտանգանս։
Քանիցն զըւարճութեամբ յանձն առնուի զմահուս բաժին՝
Ցոր եւ կամ դատապարտեալ՝ եւ լինէի հող անըզգայ։
Որպիսեաւ խընդութեամբ 'ի մօրըս ծոց տաւաղէի,
Դառնայի անդ 'ի հանդիստ եւ նընջէի յապահովեալ։
Ահաւոր ձայնն Աստուծոյ յականջս իմ ոչ եւս որոտայր,
Դրժընդակ եւրս չարեաց կասկած զինէն եւ զորդեկացս
Ոչ եւս այլ զիս տագնապէր անագորոյն ակընկալեօք։...
« Սակայն դեռ եւս տարակոյս մի տակաւին զիս պաշարէ.
Թէ հնար չիցէ ինձ մեռանել, թէ պարզական կենացս շուրջ,
Հոգի մարդոյն՝ զոր Աստուած փըչեաց 'ի նա կենդանութեան,
Ընդ տարրեղէնս կաւոյ համբուն չիցէ ինչ քակտելի,
Ի շիրմին յայնժամ 'ի ծոց, կամ այլ ուրեք մահահրաւէր
Ո՛ զիտէ թէ չմեռանիմ ըզկենդանի մահն անմահ։
Ո՛վ խոկումքն սոսկալի, թէ սոյդ իցէ. այլ հիմ իցէ.
Շունչ կենացըն մեզաւ. եւ ո՞ւմ իցէ մեռանել անկ,
Բայց յում կեանք գըտաւ եւ մեղք. 'ի կեանս ո՞'ի մեզս ոչ տիրապէս
Հաղորդեալ գըտաւ մարմինն. ապա մեռցի յիս ամենայն.
Այդ զերկեւանս հանգուցցէ, զի 'սա այդ անբաւ է կար մարդոյ։
« Եւ զի Տէրն ամենայնի անչափակալ է անսահման,
Իցէ՞ ինչ այնպիսի եւ բարկութիւն սրբամըտելոյն։
Ե՛հ լեցի. բայց մարդն չէ, այլ առ 'ի մահ դատապարտեալ.
Իսկ զնա՞ղ Բարձրեալն 'ի գործ արկանիցէ ցասումն անզգաւ
Ի մարդ զոր մահ վախճանէ. կարէ՞ առնել ըզմահն անմահ,
Եւ չիցէ՞ այդ անդէպս ըզհրամանն յեսս ընդդէմ շըրջել,
Ցանհնարին Էին՝ զի ցոյց է ակարութեան, ոչ զօրութեան։
Առ բարկութեանն իւրոյ սէր՝ ձրկանցէ՞ զհունդն մինչ յանհուն
Ի յաղուրդ խըստութեանն՝ որ ոչ երբեք յադիցի բնաւ։
Այդ լեցի յարաձգել ըզդատակինքն անդրը քան զհող
Եւ քան զօրինքս բնութեան՝ որով գործեն բոլոր պատճառք
Ըստ էիցն տանելոյ յորս աղդէ տարրքն հիւթանիւթ,
Եւ ոչ ըստ ընդարձակ մեծ զօրութեանն յաջողելոյ։
Իսկ թէ ասեմ զի չէ մահն, որպէս եղի, վերք այնպիսի

Որ հանցէ զըզգայութիւնս 'ի մէնջ, բայց է յայտմ իսկ օրէ
Անվախճան թշուառութիւն՝ զորոյ սկզբնաւոր առնուլ ըզլիսրձ
Եւ յիս եւ իմ արտաքոյ, եւ եւ ընդ եւ միշտ յաւիտեան . . . .
« Ո՛հ, արհաւիրքդ 'ի շանթ ճայթեն ահեղ դարձիւ յանդէն գըլուխս։
Մահն եւ ես եմք մըշտընջեան եւ 'ի մի անձն յիրեարս յօդեալ,
Զիք իմ մասն առանձին, յիս նըզովեալ են բնաւ յեռինքս.
Դեղեցիկ հայրենիք՝ զոր, ով որդեակք իմ, թողում ձեզ։
Ո՛հ, առ իմՀ ոչ կարեմ ծախել սպառել զայն բովանդակ,
Եւ զձեզ չառնել մասընմուտ. զի անժառանգ թէ մնայք այսպէս՝
Քանիցն զիս օրհնիցէք՝ զիս զանիծեալըդ ձեզ այսօր։
Ո՛հ, միոյ մարդոյն յանցմամբ անմեղ զաւակքն մարդկային
Դատապարտ եղիցի. թէ արդարեւ է անյանց ինչ։
Զի զինչ յենէն եղանիցէ՝ որ եւ չիցէ ապականեալ.
Միաք եւ կամք խոտորասէր՝ ոչ 'ի գործել միայն պատրաստ,
Այլ 'ի կամել եւս առնել զոր ինչ ես գամ մի արարի։
Արդ առաջի Աստուծոյ զնաՀդ կայցեն անպարտականք։
« Յետ պայքարացս ամենայնի՝ հարկ երաւունս է տալ նրմին.
Ամենայն խուսխուսելըս վայրապար, եւ բանքս ողջոյն
Տարեալ զիս ընդ բաւիղս իւրեանց հանեն յիմ պարտութիւն։
Առաջին եւ վերջին՝ արժանապէս յիս՝ յիս եւեթ
Իբր 'ի սկիզբն եւ յաղբերակն զեղծագործ պըղտորութեան՝
Ցիս ամենայն դըսրոմանք հոլովս առեալ գան անկանին.
Ո՞ տայր՝ թէ եւ զայրուցք ցասմանն ողջոյն յիմ գլուխ կըրթէր։
Ի՛զձ անմիտ. կարիցեա բառնալ միայն ըզբեռնըն զայն
Ծանրակիր քան զերկիր, քան զոսկեզերբս ծանրագոյն,
Թէպէտ ընդ իս եւ ընդ կինս այս անըզգամ բաժանեցի։
Արդ քո տենչ եւ ահք ըզոյս ապաւինի խրզեն 'ի սպառ,
Եւ 'ի վեր քան զօրինակ համայն զանցեալ եւ զհանդերձեալ՝
Յայտ առնեն ըզքեզ չըւառ եւ Աստանին եւեթ նրման
Ի մեղանս եւ 'ի բախտի. ով գիտութիւն խրզեն մըտացս՝
Յո՞ր անդունդս արհաւրաց եւ դողութեան զիս ընկեցեր.
Զըգտանեմ շաւիղ ելից՝ խորոց 'ի խորս սուզեալ նեղքինս։ »
Բարձրաձայն հեծէր Ադամ զայս 'ի լուութեան անդ գիշերոյն
Որ չէր՝ որպէս յառաջ քան ըզմարդոյն անկանելոյ՝
Առոյշ, հով եւ քաղցրախառն, այլ տրիտրագին եւ միգամած
Գէշ եւ ահեղ խաւարաւ, որ նախահօրն 'ի չար խրճին
Զամենայն ինչ նըկարէր կըրկնատատիկ զարհուրանօք։
Անկեալ կայր տարածեալ գետնաթաւալ ընդ ցուրտ երկիր,
Եւ հաստ ըստէպ անիծիւք զարարչութիւն իւր նըզովէր։
Տըրտնջէր եւ յաճախ զլասպաղելոյ մահուն 'ի գործ
Որ յաւուր անդ յանցանացն յայտ յանդիման էր քարոզեալ։
« Զի՞ է զի չգայ մահ, ասէր, 'ի մի հարուած գերերջանիկ

Զիս վըՀարել. դըրժեսցէ՞ Հըշմարտութիւն խոստման իւրում,
Արդարութիւն ասուածեղէն ո՞չ փութացցի լինել արդար։
Սակայն մահ ոչ դայ 'ի կոչ, արդարութիւնն ասուածային
Յաղաչանս կամ 'ի կական չերպագէ զքայլս իւր յամրաշարժ։
Իլուրք՝ անտառք՝ աղբերք՝ հովիտք՝ մայրիք՝ այլով արձագանգօք
Զհովանիս ձեր վարժէի երբեմն՝ անդրէն կըրկնել առ իս,
Ցայլ իմն երգ նըւագաց մինչ 'ի հեռուստ տեղիս հընչել։»
Իբրեւ հէքն Եւա ետես՝ ուստի նըստեալ կայր Թաղծալից՝
Ըզնա յայս սուգ կարեւոր, մատուցեալ գուն գործէր հնարէր
Անուշակ բանիւք յօՀան անհընարին բուրն ցաւոյն։
Ա՛յլ մերժեաց նա 'ի բաց ահագնացայտ ակնարկելով.
«Երթ յաչացս 'ի բաց, օՀ դու. քեզ այս անուն է յանկ եւ հուպ,
Քեզ՝ ընդ իւր դաշնաւորիդ, հանգոյն սըտոյդ եւ ատելոյդ։
Ո՛չ ինչ այլ քեզ պակասէ՝ բայց կերպարանք նըմին հանգէտ
Եւ թոյր իմն օՀային՝ 'ի դէմս ածել ըզսըրտիդ նենգ,
Զի արարածք ամենայն ըզգոյշ յապայս 'ի քէն կացցեն,
Գուցէ 'նդ դեղոյգ երկնային 'ի գրժոխոց անկցին կափուլ։
Առանց քո՝ յաւէժաբար երջանկաւէտ լինէի ես,
Եթէ քո յաւակնութիւն եւ շըրջմոլիկ նաղանաց միտք,
Մինչ չէիրն իակ յապահով, չէին ըղնարատս իմ զընկեցեալ,
Եւ ոչ հատեալ 'ի զայրուկս՝ որ զ'ինոսին չեղէ վըստահ։
Տապէիր դիւին անգամ յանն անկանել շշականօք,
Զոր ակն իակ ունէիր խաբել, շորիկ ամբարհաւաճ.
Բայց օՀին պատահեալ՝ ծաղըր կացեր եւ պատրեցար,
Դու 'ինմանէ, ես 'ի քէն՝ հաւասալով կողաշինիս։
Կարծեցի զքեզ խմաստուն, անդըրդուելի, հաստն մըտօք,
Յամենայն մարտ անվրկանդ, ջառեալ 'ի միտ եթէ 'ի քեզ
Ամենայն ինչ երեւոյթ էր՝ ոչ արդեամբք ինչ լաւութիւն,
Եւ զի կոյ մի կամակոր էիր 'ի բնէ քո ստեղծուածիդ,
Խոտոր, մէտ եւ յօժար, որպէս եւ այժմ իակ տեսանեմ,
Առաւել յահեկակողմ՝ ուստի առաւ հանաւն յինէն։
Յանկարծ 'ի բաց էր արկեալ՝ իբր աւելորդ 'ի թիւն իմ ողջ։
«Ո՛հ, ընդէ՞ր բնաւ Աստուած, ամենիմաստ արարչապետ,
Որ զերկնից բարձունս ելից արուատեսակ հոգեղինօք,
Հուսկ ուրեմն եկն 'ի հատեալ ըզնորատեւրս զայս յերկրի,
Զգեղեցիկ արատ բնութեան. ըզմի՞ յական մի թօթափել
Ձելից զաշխարհ մարդկաւ զօրէն Զուարթնոցք զերկինս առանց խզի.
Է՞ր չեգիտ այլ իմն օՀաւ պահել 'ի տեւ ըզմարդկան զարմ։
Այս աղէտք եւ որ ըզկնին են մըթերեալ՝ դիպէին ոչ,
Խըռով անթըւելի յերկրի գործեալ կանանց մանկաւ
Եւ անՀուկ կապանօք կենակցութեանն ընդ այսմ ազգի։
Քանզի ոչ գըտցէ երբէք այր զամուսին իւր պատշաՃեալ,

Ա՛յլ կալցի զոր պատահար ինչ մատուցցէ կամ թէ վրիպակ,
Եւ կամ զոյժ տարփեալն հաղիւ սասցի լիւրմէ չարութենէն,
Ա՛յլ տեսցէ զայն ժառանգեալ յեւրս քան զինքն անարժանէ։
Կամ թէ կոյսն սիրէ զնա, խափանեսցի առ 'ի ծնողաց,
Կամ լաւն ընտրութիւն տարաժամ յոյժ եղցէ 'նդ առաջ,
Հարանեացն սամեալք մինչդէռ կապեալ է ըծակից
Յանցաւէր ոք տիրիմ՝ յատելութիւն իւր կամ յամօթ։
Ամի չարիք անբարոյ առ 'ի մարդկան կեանքս խաղացեալք՝
Վէր 'ի վայր ըստուն հարեալ՝ վերդովել զիւր խաղաղութիւն։»
Ոչ ինչ այլ յաւել սա, եւ 'ի նմանէ դարձոյց զերեսս.
Իսկ Եւա չհարթուցեալ եւ արտասուօք անհատահոս
Հերարձակ անկաւ խոնարհ յոտսն նորա եւ փարեցաւ,
Աղերսեաց 'ի հաշտութիւն եւ զայս ողբոց արձակեաց ձայնս.
«Մի զիս այսպէս թողուր, Ադամ, զերկինս ունիմ վրկայ
Սեռն եւ սերա սիրոյ սրտիս եւ պատկառոտ մեծարանաց։
Յանկամն ես դառնացուցի զքեզ՝ հիքաբար լարեալս 'ի վարմ.
Քեզ յաղերս անկեալ խընդրեմ ողորմութիւն, փարիմ ծընկոքդ,
Մի զերկեր զիս յորմէ կեամս, 'ի քաղցր աչացդ, 'ի նըպաստակդ,
Ի խորհրդոց՝ որ 'ի սմին յեռին տագնապ տարակուսի
Են միայն իմ զօրութիւն եւ միայն մոյթ հաստատութեան։
Առ 'ի քէն ընդ վայր հարեալ՝ յոմ մեկնեցայց, ուր ապրիցիմ.
Ցորչափ կեամքդս տակաւին՝ ո դիտէ ժամ մի ոուլ հաղիւ,
Տընկեսցի հաշտութիւն աղէ 'ի մէջ մեր երկոցունց։
Զոյգք 'ի մեղս՝ միասցուք եւ յոսոխին թըշնամութիւն
Որ ցուցաւ մեզ յայտնապէս դատաւորձեալ՝ օձն անողորմ։
Մի յիս զոխսրդ թափեր վասն աղէտիցս հասելոյ՝
Ցիս արդէն իսկ կորուսեալս, յիս 'ի թըշուառս քան ըզքեզ։
Երկոքեանքս մեղաք, դու Տեառն եւեթ, ես Տեառն եւ քեզ.
Երթամ անդրէն ես 'ի տեղն անդրը դառնամ դատաստանին,
Եւ կական բարձեալ 'ի ձայն մեծ թախանձեմ զերեսս երկնից,
Զի անցցէ դատակնիքն 'ի քոյ գլխոյդ՝ յիս ինքն անկցի
Ի միայն եւեթ պատճառ եղեալքս քեզ այսր հիքութեան,
Ցիս յիս միայն՝ 'ի բուն ժառանգքս բարկութեան ատուածայնոյն։»
Վախճանեաց հեկեկալով, եւ կայր մինայր խոնարհ, անշարժ,
Մինչ 'ի հաշտ մեղայն ածել զոր խոստովան եղեալ ելայ,
Որ եւ այս յողորմ 'ի գութ յարգահատել դարձոյց զԱդամ։
Խորովին աղիքն անդէն ընդ այն որ էրն յառաջագոյն
Միայն կեանք իւր եւ գըրգանք, այժմ առ վըշտին առ ոստն անկեալ,
Արարած ջըքնաղագեղ, ըզհաշտութիւն պաղատելով,
Ըզխորհուրդ եւ զոգնութիւն՝ անտի որ լեալն էր գըժկամակ։
Որպէս այր մի զինաղերծ՝ մերկացեալ նա զոյրատմբուտութենն,
Յարուցանէ անյաստաղ ըզհարան համբոյր եւ հեշտ բանիւքս.

« Ինքարհնարդ, վառեալդ 'ի տենչ, այժմ թէր յառաջ, ում չէիր
Իշ ելեիս զի պատուհասն ողջոյն 'ի քեզ եւեթ անկցի : [հրմուա,
Աւաղ, տար նախ քոյումդ. ելցես զիարդ դու բաւական
Բառնալոյ 'ի սպառիսպուռ ըղբարկութիւնն տատուածեղէն,
Զորոյ զդոյզն ինչ եւեթ կրրես ըղմասն տակաւին,
Որ հաղիւ թէ գրժուարաւ ժուժեսդ խմում նեղսրրատութեան :
Թէ կարօղ ինչ էր ազերս ըղբարձրելոյն փոխել հրամանս,
Փութայի կանխել քան զքեզ անդր 'ի տեղի դատաստանին
Եւ ուժգնագոյն գոչէի՝ կանգնել զիմ գլուխս եւեթ թիրախ,
Ներել քում սրկարութեանդ, եւ ապիկար ազգիդ քոյոյ՝
Որում յիսն հաւատացաւ եւ մատն եւ տուր ես ինքն եղէ :
« Ա՛յլ արի կաց. մի վիճեացուք այլ եւ մի ստգիւտ լեցուք միմեանց,
Շատ են մեզ այլուստ բասրանք. գուն գործեացուք խնամոտ սիրով
Փոփոգել ըղվրանդիս բեռն յիրերաց ախտակցաբար :
Զի սպառնացեալ մահուն օր, ըստ որում ասրս նշանարեմ,
Ոչ առ ոտս եղջ ասաէն, այլ յամրաքայլ ընթացցեալ ջար,
Երկայնօրեայ մեռելութիւն, 'ի յաճախել զաղէտս մեր
Եւ զճարակեալն 'ի մեր զարմ. եղուկ քեզ, զարմ թշուառական : »
Քաջալերեալ Եւայի յաւել անդէն կը ասէր առ նա.
« Ձարահաւ փորձիս զիտեմ, Ադամ, զի յաչքս քո չօդնեն
Իմ խորհուրդք՝ թիւր եւ արդեամբք մահաժառանգ յանդիմանեալք :
Եւ թէ եւ բնաւ իսկ անարժան, այլ զի անդրէն ընդդրրկես զիս
Եւ շնորհես ինձ զիմ տեղին, յուսով 'ի սէր քո դառնալոյ՝
Որ միայն է խընդութիւն սրրտիս կենաց ջուր եւ մահու,
Ոչ թաքուցից 'ի քէն զիմաստս որ ուշ 'ի կուրծս անկան հիքիս՝
Փոքրոգի առնել զաղէտքս կամ բնաջինջ իսկ տակիսիկ :
Թէպէտ խիստ են եւ դրժնիկ, համայն եւ այնպէս հէշտակիր
Առ այժմու տառապանօքս, եւ ընտրութիւնքն դիւրադէպ :
« Ձաւակաց եթէ են հոգք՝ որ առաւել ըղմեզ հաշեն,
Զի ծնանիցին 'ի ստոյգ եղեռն եւ հուսկ ապա Մահուն ճարակ,
Դասն ինչ ջարեացապարա այլոց լինել, որդւոց մերոց,
Ի միջոց մերմէ սերել ընտուլ յաշխարհս այս անիծիլ
Ցոհմ եւ գրոհ վատաբախտիկ, որ եւ 'ի կէտ ողորմ կենաց
Դէշ անկեալ ձրրձեացի յամենագարշ ճիւաղանէ :
Ի քո ձեռս է դէթ մինչ չեւ յրլսցեալ՝ կարճել զազգն չօրհնեալ,
Զեւ յառաջ եկեալ 'ի ծնունդ. որ անզաւակդ ես, կաց անճառ.
Պայմանաւս այսու յիւրում անյադութեան վրիպեսցէ Մահ,
Եւ պորան ամենածախս մեօք երկոքումբքս ուսցի շատել :
« Իսկ թէ ծանր եւ գրժուարին թըւիցի քեզ, ընտանութեամբս՝
Հայեցիւքս եւ սիրովս հանդերձ՝ կրսնկց սիրոյն հրաժեշտ,
Փարելի քաղցրը գրրկաց հարսանեկան ամուսնութեան,
Եւ անձկաւ հաշիլ անյոյս առ հաշելում նովին անձկաւ,

Որ ոչ փոքր է հիքութիւն եւ տառապանք քան զկատածեալս,
Յայնժամ, 'ի փրկել միանգամայն զաղգս եւ զամենայն
Ի չարեացն երկիւղէ երկուց կողմանց, մնա կըսարեցուք,
Խընդրեսցուք ըզմահ, թէ ոչ գըտցուք՝ անձանցս արասցեն ձեռքս։
Զի՞ եւս կամք յարհաւրաց ասսի հարեալ ըզդողանի,
Որ այլ ոչ ինչ կատարած քան եթէ զմահ մեզ ակնարկեն,
Ուր 'ի մեր ձեռս է զկորուստն կորընտրեսցուք կորուսանել,
Յայլ եւ այլ մեռանելոյն ճանապարհաց ըզկարճն ընտրեալ...»

Ասա ըզքանն հանդոյց կամ զթէքն եհատ ասասիկ անցուսութիւն։
Ա՛նպէս իմն թաթաւեալ էին խորհուրդք նորա մահուամբ,
Զի եւ զայսոսն այլագունեալ 'ի մահատիպ նեղկին երանգ։
Իսկ Ադամ՝ որ այսպիսեաց խորհրդոց չէտ սիրել անձին՝
Միտ եդեալ ուշի ուշով դեր 'ի վերոյ էր ամբարձեալ
Ի յոյս լուսագունաց, եւ զայս արար պատասխանի.

«Այդ կենաց եւ հաճոյից՝ քո քամահանքդ, ո՛վ Եւա,
Յայտ իմն այնպէս առնեն՝ եթէ 'ի քեզ դըտանեցի
Բարձրագոյն ինչ եւ արդոյ քան զոր քո միտքդ արհամարհեն։
Բայց անձին կամակար ըսպանութիւն կորուսանել
Զկարծեցեալն 'ի քեզ վըսեմ, ոչ քամահանս ակնարկելով,
Ա՛յլ տագնապ, ցաւ ընդ կենաց տոյժ եւ հեշտից յոյժ տրտփելոց։
Իսկ թէ դու մահու ցանկաս իբր աղետից հուսկ վախճանի,
Ճոլոսպրիկ կարծելով այնու յեղեալ պատուհասէն,
Անշուշտ լեր, զի Աստուծոյ խմոստութեամբ վառեալ ըզվրէժն՝
Ոչ վրեպէ. խիթամ յոյժ՝ գուցէ այդ մահ 'ի մէնչ շորթեալ՝
Զթափեսցէ զմեզ 'ի պատժոյն զոր դատակնիքըս պահանջէ,
Եւ խեռեալ գործ այդպիսի՝ զայրացուցցէ զԲարձրեալն յաւէտ
Ի հնարել կենդանի պահել 'ի մեզ զինքնին ըզմահ։
Աւցուք արդ խորհուրդ առաջ՝ զոր իմանալ թըւիմ ես ինձ,
Իբրեւ միտ եդեալ ըզմտանէն յուշ ածեմ զդատավրճռին,
Որ զի քո զարմիդ զաւակ ըզգըլուխ օձին ջախջախեսցէ։
Զընչէն տուգանք, թէ չառցի՝ որպէս հաշուիմն՝ ըզվերագէս,
Որ յօձի անդ մեզ թակարդ հնարաւորեաց զայս՝ Սատանայ։
Խորտակել ըզգլուխ նորին՝ վրէժխընդրութիւն է ապաքէն,
Որ դերեւ լինիցի՝ թէ զնւրովին երթայցեմք մեք,
Կամ անձեռ զաւուրս հանցուք՝ որպէս զընես դու ինձ 'ի մտի.
Զի ոսոխն 'ի սպառնացեալքն զերծանի պատուհասէն,
Իսկ մեք՝ կըրկնապատիկ կուտեմք ըզմերն 'ի դլուխս մեր։

«Մի՛ եւս արդ բանք լինիցին՝ մեզ բըռնամահ վըճարելոյ,
Եւ մի՛ կամաւ ամլութեան որ յուսակտուր առնէ 'ի սպառ,
Եւ ոչ այլ ինչ 'ի մեզ յարուցանէ՝ բայց հեռ, խրոխտութիւն,
Անժուժութիւն, զայրացուկս, ըմբոստանալ առ յԱստուծոյ
Եւ յարդար ըզծոյ իւրմէ զոր առ կախեաց 'ի վերոյս մեր։

Յուշ քեզ Իբբը քաղցրութեամբ եւ բարերար խնամովք լուսաւ
Երկոցուն մեզ, եւ առանց ցասման դատեաց եւ լուսանաց։
Մէջ անդէն 'ի կողն ունէաք ակն սատակման,
Զոր մահուն անուամբ յայտնեալ մեզ հաշուէաք յաւուր յայնմիկ։
Եւ սակայն, քեզ յղութեան սահմանեցան եւ ծնընդեան ցաւք,
Զոր փութով փոխարինէ ուրախութեամբ ծոցոյդ պտղոուղ։
Իսկ զնեաւ շրփեալ եւ Էթ անէծքն երթեալ եհար զերկիր։
Ինձ ըղձաց իմ վաստակովք կայ գրտանել։ այս զի առ խ։
Զարագոյն էր կեանք դատարկ, արդ երկք իմ զնս կերակրեսցեն։
Եւ զի մի ցրտահար կամ տօթակէզ վրատնդիցիմք,
Հոգ խնամոյ տարեալ ինքնին՝ յիւրում ժամուն հայթայթեաց մեզ։
Իւրովն ձեռք նորուն ըզգեցուցին զմեզ զանարժանքս՝
Գորովեալ առ մեզ անդէն իսկ յատենի դատաստանին։
Ո՞ւչափ եւս առաւել՝ եթէ յաղերս անկեալ հայցեմք՝
Բանայցեն ականջք նորա, եւ սիրոն 'ի գութ խոնարհեսցի։
Ուսուցէ եւ զդուշութիւնս յանհարթութեանց ժամանակաց,
Յանձրեւոյ եւ յեղեմանց, 'ի կարկտէ եւ 'ի բքոյ,
Զոր երկինք այլազունեալ այժմ երեսօքն ըսկրսանին
Ի լերին ասա ցուցանել, մինչ մերերկին բարկ եւ գէշ հողմք
Ի խամրել զբստեղնաձիդ ջրքնաղ ծառոց վայելուչ վարս։
Ի խընդիր լինել անքոյթ ապաստանի աղդէ մեզ այս՝
Եւ ջերոյ քաղցրախառնի՝ զկարկամ անդամքս արծարծանել,
Մինչ չեւ ականն տուրնջեան ցրտասառոյց թողեալ զգիշեր։
Եւ թէ ի ժողովեալ հատեալ 'ի ցոլս ըզճաճանչս իւր՝
Լուցանել կարիցեմք եւ բորբոքել զուցկի ցանք,
Կամ զիարդ ըզվիմեամբքք արագ շրփմամբ երկուց նիւթոց
Վառիցի օդն, որպէս այժմ իսկ ամպաշուի բախեալ ամպրոպք
Կամ հողմավարք՝ 'ի հարուած ուժգնադղրդիր ցայտեցուցին
Ըզփայլակնն խոտորնակ, որոյ շանթեալ բոց օձաձեւ
Էջ հրդեհեաց ըզխիժայնն կեղեւ սոճւոյ եւ զեղեւնի,
Եւ սրփռեաց գոլ ինն ախորժ որ զարեւուն տեղն ընու։
Զհուրքն զայն յիր արկանել, եւ որ ինչ այլ ըսփոփիցէ
Կամ դարման լցցի վասնդիցս որ 'ի մեզաց մերոց ելնն՝
Դատաւոր մեր ուսուցէ թէ պաղատիմք, խընդրեմք ողորմ։
Ապա չէք մեզ երկիւղ տաժանաբար վարել ըզկեանս,
Ի նմանէ խրախուսեալ աղդի աղդի հեթեթանօք,
Մինչեւ երթեալ հուսկ ուրեմն 'ի փոշն անդրը յանգիցիմք՝
Ի վերջին մեր հանգիստ եւ 'ի բընիկ մայրենի ծոց։

« Զինչ ունիմք լաւ ինչ ասնել՝ բայց 'ի տեղն դառնալ դատին,
Ակնանել իւր առաջի պատկառանօք յերեսս 'ի վայր,
Խոստովան լինել անդ ըզմեղս մեր խոնարհութեամբ,
Խընդրել մեզ թողութիւն թացեալ զերկիր յորդ արտասուօք,

Եւ լցեալ զոգս 'ի թառանչ հեծեծելով բեկեալ սրտիւ՝
Յերաշխիս անկեղծաւոր զղջման եւ խոր տառապանաց.
Ողբեսցի յաներկիւղս, դարձցի յիւրմէ բարկութենէն։
Մինչ թըւէրըն զայրագին եւ անաչառ անկարեկիր՝
Զ'ինչ 'ի զուարթ աչքն փայլէր՝ քան սէր, ջնորհ եւ գրթութիւն։»

Զայս մերն ասաց հայր զնոջ 'ի սիրտ, հարաւ յԵւա նոյն խէթ խրոշի.
Եւ ընդ եւ զոգան 'ի վայրն ուր ըզնոսին դատեցաւ նա,
Եւ անկան իւր առաջի պատկառանաք յերեսս 'ի վայր,
Եւ եղեալ խոստովան ըզմեղս իւրեանց խոնարհութեամբ՝
Խընդրեցին թողութիւն՝ թացեալ զերկիր յորդ արտասուաք,
Եւ լցեալ զոգս 'ի թառանչ հեծեծելով բեկեալ սրտիւ՝
Յերաշխիս անկեղծաւոր զղջման եւ խոր տառապանաց։

1002

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

ԳԻՐՔ ՄԵՏԱՄԱՆԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Որդին Աստուծոյ մատուցանէ առ Հայր զաղօթս ապաշխարութեան նախանձողացս, եւ բարեխօս լինի. լսէ նա, բայց տարապրութիւն հրաման տայ 'ի վերայ նոցա 'ի Դրախտէն։ Առ որ առաքի Միքայէլ գնդաւ քերովբէից հանել անտի զնոսա, յայտնելով նախ Ադամայ զհանդերձեալն 'ի խրատ եւ 'ի մխիթարութիւն։ Իջանէ հրեշտակապետն եւ տուեալ զպատգամն՝ հանէ զԱդամ 'ի գլուխ լերին, եւ ցուցանէ անտի նմա 'ի տեսլեան զամենայն երկրալն մինչեւ 'ի ջրհեղեղ։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այսպէս սոքա տառապեալ՝ կային յաղօթիս զըջնականք,
Զի կանխեալ ի՛ջեալ չընորհն յողորմութեան նախաթոռոց՝
Զ.քարեղէն սըրտիցն հանեալ՝ ստեղծեալ ընդ այնր էր մարմին նոր,
Որ նորոգ ծընեալ ծըխէր արդ հեծութիւնս 'ի վեր քան զբան,
Յաղօթից հոգւոյն չընչեալ վերատեւեալ սլացեալ յերկինս
Ի սրաթռիչ թեւըս թեթեւս քան զուժգնագոյն Հռոմ բարբառ։
Կերպարանք իւրեանց սակայն չէին անարդ ապերասարկուի,
Խընդրըրուածք նոցին թուէցան ոչինչ պակաս արժանահայց
Քան զվաղընջուց ամոլեցըն պառաւեալ առասպելեաց, —
Որ չէին իսկ առաւել քան ըզսոսին երիցագոյնք, —
Զդեւկալ՝էայ եւ զպարկեշտին Պիրրայ, մինչդեռ 'ի նորոգել
Ըզջրողող զանդընդասոյզ մարդկան գըրոհ՝ անցեալ կային
Երկիւղած պաշտամամբք Թեմեայ մեհենին դէմ յանդիման։
Թըռեան սոցա պաղատանք ուղիղ յերկինս անընատերիւր,
Ամոռալաք յընթացից, ոչ յաչալուսս հողմովք օցտեալք.
Համակ հոգեշունչք՝ անցին ընդ դուռն ատտուածային,
Պատեալ 'ի մեծ Միջնորդէն 'ի խուռնին՝ յոսկի ծըխեալ սեղանն՝
Հասին հոր զառաջեաւ հանդէպ իւրոց բարձրագահից։
Յուղերձելըն զայն բերկրեալ Որդին սկըսաւ բարեխօսել.
« Տէս, Հայր, զինչ ինչ յերկրի բաղբաջեցին երախայրիք
Ի շնորհացըն ալնկելոց 'ի մարդն՝ աղերսքս այս եւ հառաչք,
Զոր խառնեալ 'ի կընդրուկ բուրուառիս այսմ ոսկեղինի
Ես քո քահանայս մատուցանեմ առաջի քո։
Նորիք բուսեալք 'ի սերմանց զըզջիւ 'ի սիրտ իւր արկելոց,

Համեղահամք քան զոր — ինքն ձեռատուն կ թէ մնչակեր —
Գիտէին պրտղաբերել ծառքն դրախտին առհասարակ,
Մինչ չեւ էր տակաւին յանմեղութեան կենացն անկեալ:
Խոնարհեցո զունկն արդ յաղերս իւր՝ զանմեղուն չուր հառաչանս.
Զանհրմուտն աղաչանաց ձայնից՝ արա յիս ապաստան՝
Ի բարեխօսս ուր՝ի քաւութեան իւր զոհ՝ խօսել իւր փոխանակ:
Պատուաստեա յիս զամենայն գործս իւր բարիս կամ անբարիս,
Զառաջինսն լցցէ ինորհս, զերկրորդսն մահրս քաւեսցէ:
Ընկալ զիս եւ ինեւ առ՝ի սոցունց զհաշտութեան հոտ
Ի նպաստս մարդկան ազգի. զի հաշտ եղեալ կեցցէ գոնեայ
Առաջի քո զթութով աւուրսն իւր թէպէտ եւ ցաւագինս,
Մինչեւ մահ, դատակնիք իւր, զոր ամոքել միայն խընդրեմ
Եւ ոչ թէ խափանել, 'ի լաւագոյն ածցէ զնա կեանս,
Ուր փրկեալս իմ ժողովուրդ բնակեսցէ 'նդ իս յուրախութեան
Եւ 'ի կեանս երանաւէտ, մի լեալ ընդ իս՝ իբր ես ընդ քեզ:»

Առ որ Հայրն անրատուէր զուարթահայեաց լըրմնութեամբ.
« Համբրէն վասն մարդոյն հայցուածքդ, Որդեակ իմ սիրելի,
Կատարեալ են, ամենայն աղերսքդ էին իմ իսկ հրամանք:
Այլ բնակել 'ի դրախտին՝ բնութեանն յինէն եղեալ օրէնք
Ոչ եւս այլ ներեն մարդոյն. մեքուր տարերքն անմահական՝
Որ չգիտեն ինչ թանձրանիլթ եւ ոչ խառնուրդ անձահ եւ փիծ՝
Մերժեն արդ զապականեալն, իբրեւ 'ի ծանր ախտէ սրբիլ
Եւ քերքել կամին զայն արտաքս յայլ օդ ինչ յախընթոր,
Ի ճարակ մահկանացու՝ իբր 'ի պատշաճ մահուն լուծման՝
Զոր մուծին մեղքն կանխեալ յեղաշրջեալ զամենայն ինչ,
Եւ զանեղծ զանապական բնութիւնն յեղծումն դարձուցեալ:
Իմ ստեղծեալ խակղբանէ զմարդն 'ի կրկին ջրքնալ օժիտս՝
Յերջանկութիւն ուր՝ի կեանս անմահ, ցնորեալ կորոյս նա զառաջինն,
Երկրորդն յայլ ինչ ջրկայր՝ բայց յանվախճան զաղէտսն ածել.
Յայնժամ մահ եղի նրմա, եւ մահն եղեւ վերջին դարման:
Փորձ 'ի կեանս իւր գրտեալ տարժանաւոր տառապանաց,
Հաւատով եւ հաւատոյն գործովք սրբեալ 'ի հանդիսին,
Զարթուցեալ յերկրորդ 'ի կեանսս յարդարոյն նորոգութեան,
Ակնարձցէ զնա մահ առ իս նորով երկնիւք ուերկրաւ հանդերձ:

« Այլ յատեան կոչեսցուք զԵրանելեան ողջոյն այժմիկ
Ընդ լայնածիր ծագս երկնից. ծածկել չկամիմ 'ի նոցանէ
Զգատաստանս իմ զի տեսցեն՝ իբր ընդ մարդկան գինամ զարմի,
Որպէս տեսին դեռ իսկ ըզգնացս իմ ընդ հրեշտակսն յանցուցեալս.
Անսասանք 'ի կայս իւրեանց՝ եւս առաւել հատատեցան:»

Ասաց նա, եւ էտ Որդին ընդրշանակն մեծազօր
Լուսափայլ պաշտօնէին՝ Զուարթնոյն որ կայր անդ 'ի սպասու:
Եհար նա զփող իւր անդէն, փող լսելի թերեւս եղեալ

Յիշեալն Աստուծոյ 'ի Քորեբ առ 'ի յապայս Ժամանակաց,
Եւ ո՛ վիսէ՝ յաւուր անդ կատարածին դարձցի հընչել։
Հրամանքն գաւառս երկնից հրեշտակագոչն ելից հագագ.
Յերկնանիկ եւ յանդիմառամ հովանացեալ ծաղիկք մայրեացն,
Յաղբերց, յաղբերականց, 'ի վտակաց ջուրց կենդանութեան,
Յամենուսան ուր 'ի խընձոյս խրախճանութեան գուշ առնուին՝
Փութացեալ լուսոյն որդիք 'ի մեծասասա հրամանին կոչ,
Ի տեղիսն ակումբ առին, մինչեւ 'ի վերհ գահոն բարձանց
Քարոզեաց Ամենակալն այսպէս ըզկամն իշխանական.

« Մանկունք, մարդն աւանիկ իբրեւ ըզմի եղեւ 'ի մէնջ.
Յարգելեալ պարտոյն Ճաշակ՝ բարւոյ չարի է խեղամուտ.
Թող գովի Ճանաչել զկորուստ բարւոյն եւ զչարին գիւտ։
Երանելի եւս էր զբարւոյն եւեթ ունել ըզգիտութիւն,
Իսկ չարի՝ բնաւ եւ ոչ ինչ. զարդիս 'ի վերջ եւ յապաշաւ
Պատուի զընջութեամբ շարժեալ յիմոց ազդեցութեանց՝
Որ ուժգին քան զնա զորեն. քանզի գիտեմ ըզսիրտ նորա՝
Զի՝ յողդոյդ եւ ընդունայն է ինքն յինքեան միայն թողեալ։
Զի մի ձեռն իւր առաւել խիզախեալ այժմ յանդգնեսցի
Եւ 'ի ծառոյն կենաց, եւ Ճաշակեալ կեցցէ յաւէժ,
Կամ զի մի յերազեսցի անդամ լինել յաւէժակայ,
Սահմանեալ եմ տարաղիր հանել ըզնա 'ի պարտիզէն՝
Երթալ վարել եւ գործել ըզհող երկրին յորմէ առաւն,
Առժամայս առաւել ինն յանկագոյն նրմա գեանն։

« Միթայէլ, հրամանիս ըզքեզ կարգեալ պատգամաւոր,
Ա՛ռ ընտրեալս 'ի քրովբէից քեզ զօրական բացեղէն գունդ.
Գուցէ 'ի շնորհս մարդոյն, կամ 'ի գրաւել զսեղին Թափուր,
Նոր ինն այլ ազմուկ եւ խռով հակառակորդն հարկանիցէ։
Զմեզաւոր փութա զամոլն հան յԱստուծոյ դրախտէն անխնէթ,
Ըզսրբեալսն 'ի յերկրէն սրբութենէ. ծանո նոցա
Եւ բոլոր զարմին զանդարձն 'ի տեղւոջէ անտի զաքսորս։
Այլ զի մի Թալասցին 'ի լուր դրժնէ խիստ պատգամիս,
Զի նկատեմ զնոսա 'ի զեղջ առ յանցանացն եւ յարատասուս,
Զամենայն ահատիւս 'ինոցանէն զեղջեալ Թաքո։
Թէ 'նդ հրամանիդ զինջեալ անսան, մի արձակեր անմբիսիթար.
Յայտնեսջիր Ադամայ զհանդերձելոցն առ յապա իրս
Ըստ ծադելոցս քեզ լոյս յինէն. եւ խառնեսջիր 'ի Ճառսըն անդ
Զուխտեցս որ ընդ կընոջն զաւակի զհաստատութիւն.
Վերջապահարս այսպէս հանցես, ասեայն 'ի հաշտ խաղաղութեան։

« Յարեւելից պարտիզին, ուր գիւրին ելք են յԵդեմայ,
Կացս պահ 'ի քրովբէիցդ եւ ըզսրոյ բոց լայնածաւալ
Անընկէց շուրջանակի որոց մերձիլքն ժըպտիցին,
Եւ բնաւին անցից 'ի ծառ անդրը կենաց արկեալ կըրձիմ.

Մի գուցէ ոչ-ոչ պըղծոց լինիցի դրախտն որջ եւ կաղաղ,
Եւ ծառքս իմ ամենայն մատնեսցին յառ յաւար նոցուն՝
Գողանալ ըղնայրիսն եւ միւսանգամ պատրել ըղմարդն։ »
Նա լըռեաց, հրեշտակապետ զօրութիւնն յէջս երագ կազմի,
Եւ ընդ իւր լուսակարկաջ արթուն զուարթուն քրովբէախսուն։
Մէն միւսմ, գոգ թէ նցէն կըրկին Յանոսք, էին ջորք դէմք,
Բոլանդակ իրան նոցուն ոսկեձամուկ էր բաղմաչէայ
Առաւել քան զԱրդոսեանս, եւ քան զսորայսն էին անքուն՝
Ոըք դիւթեալ նիրհեցին Արկադիանսն սրընդաւ,
Հովուական փողոնք հերմեայ եւ կամ ցրպով թրմբրողական։
Ի ժամուն առ ողջունել դարձեալ զաշխարհ լուսովքն սուրբ՝
Զարթուցեալ ի Եւկոթէա խընկէր զերկիր 'ի ցօղ զբաւթ։
Մինչ Ադամ եւ սկըզբնամայրն Եւա զաղօթս հանէին յանդ,
Եւ կաղդուրեալ 'ի բարձանց ըզզօրութիւնսն գտանէին,
Յանցուսից իւրեանց ծագեալ տեսանէին յոյս խնդն նոր,
Նոր խընդութիւն, սակայն խառնն տակաւին ընդ արտասուիս։
Երկրորդեաց անդ Ադամ զհամբուրելն բանքս առ Եւա.
« Հաւատարիմ թըւի ընտէն բարեացս, Եւա, յերկնուստ դալ մեզ,
Իսկ 'ի մէնջ եթէ յերկինս ելանիցէ ինչ ազդեցիկ
Ի գերել զամենեսեան միտս Աստուծոյ կամ զկամսն հակել,
Դըժուարին թուի հաւատալ. բայց սըրտագին այս պաղատանք,
Հեծութիւնք, 'ի յոգոց մարդոյն ալանան յէրն աթոռ։
Զի խընդրեալ ցածուցանել ըզցաստուցեալն աստուածութիւն
Աղօթիւք 'ի գուշն անկեալ խոնարհ սրտիւս իւր առաջն,
Ցեսանել թըւիմ ընտ հաշտ եւ համբոյր եւ հեշտալուր,
Հաւանեալ եմ 'ի մրսի թէ ըսելն եղէ սիրով։
Ի խորքս սրտիս խաղաղութիւն մնաս տարրացաւ,
Եւ յուշս, աւեսիք խորտակելոյ զարմիդ զսոսոխս,
Որ յառաջ ջանկաւ 'ի միտս իմ 'ի սկըզբան զարհուրանացս,
Արդ նա կայ երաշխաւոր՝ զի գտնութիւն մահուն էանց,
Եւ կեցցուք. արդ խընդա մայր ազգի մարդկան կոչեալդ ըստոյգ,
Եւա, մայր կենդանեաց հանուրց՝ զի քեւ իսկ կեցցէ մարդն,
Եւ ամենայն ինչ 'ի կեանքս վայելեն վասն մարդոյ։ »
Եւա քաղցր եւ տըրտմագին կերպարանօք ասէ ցընա.
« Ադամ անուան՝ չեմ արժանի ես մեղաւորս ում կայր լինել
Օգնական քո՝ եւ եղէ քեզ որդայթ գայթագղութեան։
Ինձ ըստգիւտ, խէթ եւ բընաւ իսկ կըշտամբանք են վայելուչ,
Ալ՝ անբաւ յողորմութեան իւրում ցուցաւ յիս դատաւորս,
Զի որ նախս ածի հանուրց մահ՝ անուանիմ կենաց աղբիւր։
Դու եւս ես նեղողամիտ առ իս՝ դատեալ զիս արժանի
Յայդ անունդ կարգալոյ զիս ում կոչումն այլ վայելէ։
Բայց այժմ՝ անդք ձայնեն ըզմեզ 'ի քըրանաթոր կարգեալ վաստակ,

Եւս եւ յետ անքուն ցայգդր. տես աւադիկ զի վաղորդայն
Զանհանդիստ տրքնութենէս ամենեւին չարարեալ փոյթ՝
Սկիզբն առնէ գեղածիծաղ՝ վարդայատակ Ճանապարհին։
Արի երթամք. ոչ եւս այլ մեկուսեցայց ես առ 'ի քէն՝
Յորմէ կողման եւ վասատակ գրտանիցի մեր առօրեայ,
Թէ եւ այժմ դառնաշնատ սահմանեցաւ ցրմուտս արփւոյն։
Մինչեւ իցեմք 'ի զբօսալի ատտ Ճեմելիս՝ զի՞նչ դառն իցէ.
Կեցցուք արդ ատտ գոհութեամբ՝ Թէպէտ կործան յայս կարգ անկած։»

Զայս ասաց, այսմ ըղձացաւ Եւա 'ի կոր խոնարհեալ յոյժ,
Այլ հրամանք ոչ յանձն առին զուրատս եւ զանձուկ սրբոյ իւրոյ։
Նախ բնութիւն էտ նշան 'ի հաւ թրուչուն, յերկ եւ յօդս.
Օդք յանկարծ՝ յետ սուղ վարդից առաւօտուն՝ խաւարեցան։
Ամներեւ խակ նորուն խոյացեալ հաւն Արամազդայ
Ի բարձանց սաւառնմանցն յերկուս թրուչունս պայծառաթեւս՝
Վարեաց տարաւ ըստուտս հարածականս առաջի իւր։
Ի լեռնէն ելեալ գազանն որ 'ի մայրիս թագաւորէ,
Առաջինն յայնժամ որսորդ, յարձակեցաւ 'ի չրքնաղ զոյգս՝
Յանտառին գեղեցկագոյնս 'ի յեղջերուն եւ յեղնին իւր։
Փախչէին ընդ արեւելս դէմ յարեգ դուռն, ետես Ադամ,
Եւ զակն յորս անդրը յառեալ՝ ոչ անիսրատ ասէ ցԵւա.

«Այլ ինչ նոր յեղափոխումն, ով Եւա, հա՛ հասեալ կայ մեզ.
Բնութեան անիսօս ցուցիւքս Երկինք ըզնորհրդոցդն կարասցես
Ցրդէ մեզ, կամ ազդ առնէ մի՞ տալ անձանց ինչ փարաւազս
Ի վերիժուցըս թողութիւն՝ զի հեռացաւ աւուրս ինչ մահ։
Ալէ՞ քանի՞ տապարեա, եւ զի՞նչ ցայն վայր իցեն մեր կեանք,
Ո՞վ գիտէ. գիտիցեմք ինչ այլ քան զայս՝ Թէ զի հող եմք,
Եւ 'ի հող եմք դառնալոց եւ 'ի միջի այլ ոչ լինել։
Զի Թէ ոչ, առ ի՞նչ է մեզ կըրկին տեսիլդ ակն յանդիման,
Հէնդ այդ ընդ օդ, ընդ երկիր 'ինմին կուսէ, 'ինմին ժամու.
Աւ իմի՞ խաւարանալդ արեւելից նախ քան զմէջ օր։
Ընդէ՞ր լոյս այդուն ծագէ առաւել յամպ արեւմտեայ՝
Որ սրփռէ 'ի կապուտակ երեսս երկնից շող ամպագոյն,
Եւ տակաւ գայ ելանէ բարձեալ յինքեան երկնային ելն։»

Ոչ վրիպեր նա, քանզի գունդ հրեշտակերամ անդ 'ի պահուն
Իջանէր յասպիս ամպով 'ի դրախտն, եւ առ ըզկայ 'ի բերբեր.
Տեսի՞լ մեծաշուք, Թէ տարակոյս ուներկիւղ մարմնոյ
Հէր աչացն Ադամայ ստուերածս ածեալ յաւուրն այնմիկ։
Ոչ քան զայս ինչ վեհափառ միւս յայտնութիւնն էր հրեշտակաց՝
Յակոբայ 'ի Բանական յորժամ եկին 'ի հանդիպումն,
Եւ ըզաստեղեւ պահապանն ետես բանակ հարեալ 'ի դաշտ.
Կամ տեսին 'ի Դովթայիմ 'ի լեռնակին բորբոքելոյ,
Զոր ծածկէր հրեղէն Ճամբար ընդ Աստուծոյ արքային դէմ.

Զի առ այր մի ձերբակալ առնել եւ ելեալ՝ տայր պատերազմ,
Պատերազմ անդադարաստ անազգ զօրէն աւազակի։
Իշխանքն դասապետս Թագեալ 'ի բլուրն ըզզօրականն
Ի պայծառ իւրեանց կայանս՝ եղանել պահ ոմանել դրախտին,
Ինքն եւ ելեալ՝ 'ի գլխանել զվայրն ուր Ադամ տպաստան կայր՝
Խաղաց գընաց ոչ զանխուլ ինչ 'ի մերմէ նախահօրէն,
Որ մինչդեռ տեսին ահեղ գայր մերձենայր՝ ասէ ցԵւա.
« Պատրաստ լեր, Եւա, 'ի մեծամեծ պատգամանի,
Որ՝ ո գիտէ՝ տաս առ ոարս վասրն մեր վըճարեսցեն,
Կամ տայցեն մեզ պատուէր պահպանութեան նոր օրինաց։
Զի նըշմարեմ անդ յայն կողմ՝ 'ի լեռնափակ ամպոյն լուսոյ
Իջեալ զոմն յերկնից զօրուէն, եւ ըստ ձեւոյն՝ չէ կըրասեր ոք,
Ի մեծացն է իշխանաց կամ 'ի վերին ոք Աթոռոց.
Ամպիսի շուրջ բակ ունի զնուրբ շուք մեծ վայելչութեան։
Բայց եւ ոչ ահեղակերպ ահաղնացայտ եւ պակուցիչ,
Եւ ոչ հեզ եւ մարդասէր Ռափայելեանն օրինակաւ՝
Մինչ իշնել ինձ վրատահել, սակայն շըքեղ եւ վեհագոյ։
Զի մի գնա զայրացուսցուք՝ երկոցունց մեզ հասանէ հարկ,
Ինձ մատչել պատկառութեամբ առ ինքն եւ քեզ ասել խուսել։»
Զայդ բանին վաղվաղակի հրեշտակապետն եհաս առ նա,
Ոչ երկնից կերպարանօքն, այլ ըզգեցեալ առին հանդոյն
Որ ընդ առաջ ուստք գնայցէ. զրոցանըշոյլ իւրով զրահիւք
Ծածաներ տատատոկ ծիրանափայլ տիպ վառ 'ի վառ
Քան զծովու ծիրանին ըզՄելիքեայ կամ ըզԾուրայ,
Զոր նախնի դիւցազունք ըզգենուին եւ թագաւորք
Ի դէրգիս աւուրց դըլալ. ներկեալ զմեզանն էր Ծիածան։
Սաղաւարտ իւր ասեղեայ՝ բացաւ իւրովքն դիմակաւ
Յուցանէր զինքն յառաջին առուգութեան տիս հասակի՝
Ուր յանդի պատանութիւն եւ սկրսանին արութեան ջուիք։
Յաղագէր իւրում կայր 'ի կախ՝ իբր արփաձեմ կենդանաբեր՝
Սուրբն սոսկումին Սատանին, եւ 'ի ձեռին իւրում գեղարդն։
Ի խոնարհ երկիր եպագ Ադամ, իսկ ինքն ալքայարար
Ոչ զինչոց ըզմեծութիւնն, այլ ըզգալուսան յայտնեաց այսպէս.
« Երկնից բարձրը հրամանաց պատգամք, Ադամ, չեն ինչ կարօտ
Նախագրանց բանի սկըզբանց. շատ է զի լուան քո պաղատանք,
Եւ Մահն՝ ում պարտական էիր վըճռաւ ընդ յանցանեղ՝
Արդեաւ յերաւանց զաւարն 'ի բուռն արկանելոյ
Ընդ երկայն շնորհաց աւուրս, որ պարգեւեալ են քեզ ահա,
Զի յապաշաւ եկեալ լուսացես գործոքք բարեաց զոճիրքն ջար։
Յայնժամ Ցեռաբն քո հաշտեալ՝ Թափեսցէ զքեզ 'ի սպառըսպուռ
Պահանջող Մահուն յապահ յափրշտակիչ 'ի ժիտ ժանեաց։
Սակայն ոչ եւս այլ ներէ քեզ բնականալ 'ի դրախտի սատ.

Իմ իսկ եկեալ է հանել եւ արձակել ըզքեզ ասսի,
Արտաքոյ պարտիզս այսմիկ երթալ գործել զերկիր՝
Յորմէ քո իսկ է առեալ, հող եւ դեռին քեզ յանկագոյն։»
Զայս ասացեալ՝ չյաւել ինչ. զի սրբատաբախ լրբովքս Ադամ
Առ ցաւոցն 'ի պաղ մածեալ քրքմնասարսուռ կայր անրդդայ.
Իսկ Եւա զանիրլաբար լրեալ ըզքնաւն՝ յոգւոյ եհան
Եւ զթաքուստ իւր յայտնի արար ուժգին հառաչանօքս.
«Ո՛վ հարուածդ յանկարծահաս՝ չար քան ըզմահ. այսպէս ուրեմն
Ըզքեզ, դրախտ, Թողուցուամբ, Թողցիցք ըզքեզ՝ բընակ երկիր,
Զձեզ՝ ձեմարանք գեղաղուարդ եւ հովանիք ստուեածարժանք,
Յորս ակն ունէի խաղաղութեամբ, Թէպէտ 'ի սուգ,
Կեալ մինչեւ ցրժամադիր աւուր մահուան մեր երկոցուն։
Ո՛վ ծաղիկք, ոյց ընդ այլով երկնաւ ուրեք չիք բուսանել,
Որ զայդոյ զիմ նախաոջոյնս ընդունիցիք, զվերջինս յերեկ,
Զոր մնուցի քընքուշ ձեռօքս 'ի փրթթելոյ նախ բոլորիցդ,
Եւ միւսմ միւսմ 'ի ձէնջ եդի անուանելս սիրալիս։
Ո՞ դարձուսցէ այժմ յարեգջեր ըզձեզ եւ զցեղաբդ ջոկեսցէ,
Արբուսցէ ջուր առոգիչ յանմահութեան ձեզ յաղբերէն։
Հուսկ ուրեմն եւ դու ինքնին, հարսանեկանդ հովանոցակ,
Զարդարեալդ յենէն յոր ինչ անուշահոտ եւ զուարթատես,
Ի՞բր 'ի քէն անջատիցիմ, յո՞վ յածեցայց յաշխարհ ստորին,
Որ ելցէ իսկ առ սովաւ խաւարային եւ վայրենի։
Զի՞արդ շընչել կարիցեմք յանմաքրադոյն սրտիս օդոց
Մեք ասէն սովորեալքս յանմահական մշրդոց ճաշակ։»
Հատակարձեաց հրեշտակն ըզբանսն քաղցրութեամբ հեզահամբոյր.
«Մի լար, Եւա. եւ արդար տուժիցդ համբեր յօժարութեամբ.
Մի այդպէս դիցես ըզսիրտ քո կաթոգի յոր չէն ինչ քո։
Ոչ ելցես դու մինաւոր, ընդ քեզ եւ այր քո երթիցէ.
Զհետ նորա գընալ պարտիս, եւ յուշ լցի քեզ հանապազ,
Զի ուր նայն բնակացի, անդ հայրենին է քո երկիր։»
Ադամայ 'ի սարսռաբեր յանկարծ ցնորիցն անձին զգայեալ,
Զարթուցեալ զթրմբրեալ ոգիսն՝ ասէ ցածուն առ Միքայէլ.
«Երկնաւորդ էութիւն, Թէպէտ յԱթոռան անցեալ բազմիս,
Թէպէտ եւ գերադոյն անուանիցիս 'ի մէջ նոցա,
Զի Թըւին կերպարանքդդ քան զնշխանս իշխանական,
Մեղմով ետուր ըզսպատգամսդդ որոց էր 'ի պատմելն անդ
Դընել մեզ վերս 'ի հոգիս, եւ ատատակել 'ի վճար գործոյն։
Որ ինչ այլ քան ըզթախիծ, զանյուսութիւն եւ ըզտագնապ
Բառնալ բաւէ տկարութիւնս՝ ածէ զայն քո հրեշտակութիւնդ.
Ցերանեալ տեղւոյս մերժուին՝ յանդորրաւէտ առանձնոցէս,
Որ միայն ըսփոփութիւն մընայր՝ աչացս ընդելական։
Ամենայն այլ վայրք Թըւին անհամբոյր մեզ եւ ամայի։

Անծանօթ մեք նոցուն, եւ ոչ նոքին մեզ ծանուցեալք։
« Մըշտամռունչ աղերսանօք թէ կայր ինձ ակն փոխելոյ
Ըզկամս ամենակալ իշխեցողին, ոչ լըսէի
Թախանձել ըզնա խոռվ անհատական աղաղակաւ։
Այլ մաղթանք զօրեն ինչ ոչ ընդ անհրաժեշտ հրամանաց դէմ
Քան ըզբունչ ընդդէմ հողմոյ հեղձամըղձուկ վարեալ անդրէն
Յետըս կոյս առ նոյն ինքն՝ որ զայն արտաքըս փըշելոյէ։
Հնազանդ այսուհետեւ եմ հրամանին իւրում մեծի.
Վիշտ մեծ այն է զի ասի հեռքեալ անկայց ես յերեսացն,
Եւ 'ի սուրբ հովանւոյ իւրմէ անմասն ելից թափուր։
Ասանօր դոյր ինձ ըստէպ վայր 'ի վայրէ երկրպագել
Ի տեղան ուր հաճեցաւ յայտնել տեսին աստուածեղէն։
Գոյր ասել առ իմ որդեակս. Երեւեցաւ ինձ յայս ելրին,
Եցոյց զանձն իւր ընդ ծառովս, ասա 'ի սոճիս զձայնն լըսայ,
Ասա առ աղբերս այս ափամբ եղէ նըմին ես խօսակից։
« Գոհութեան բաղում սեղանս ամբառնայի դալար հողով,
Եւ կարկառ կանգնէի զոզորկ եւ ջինջ քարինս ուղղեց
Յիշատակ կամ արձան դարուց 'ի դարս յազգըս ազգաց։
Նուիրէի անդ 'ի բագինսն ըղնըսնկահատ անուշից բոյրս,
Ըզնայրիս եւ ըզծաղկունս. ո՞ւր 'ի ներքին յայնմ աշխարհի՝
Ո՞ւր խընդրեցից ըզպայծառ երեսըս իւր եւ զհետս ոտից։
Զի թէպէտ եւ խուսիցեմ առ 'ի յիւրմէ բարկութենէն,
Բայց յերկար պահեալ 'ի կեանս եւ 'ի սերունդ ինձ աւետեալ,
Խընդութեամբ արդ նըկատեմ զծայրըս քանցից փառաց իւրոց,
Եւ երկիր 'ի հեռուստ ոտնատեղեացըն պագանեմ։ »
Մինքայէ գորովալիր քաղցրահայեաց աչօք առ նա.
« Երկինք եւ երկիր առհասարակ են Աստուծոյ,
Ոչ թէ միայն քարալեառնըս այս եւ թէ, դիտես Ադամ.
Ամենայն ուրեք մերձ՝ ընու զերկիր, ըզծով եւ զոդս,
Որ ինչ կեայ ստածեալ ջեռեալ յազգեցական զօրութենէն։
Զամենայն երկիր շնորհեաց քեզ 'ի ստացուած ժառանգութեան՝
Պետ ըզքեզ կարգեալ 'ի նմա. պարգեւ ըզքեզ եւ պանծալի։
Արդ մի ցնորիր թէ ասա եւ թէ երեսք նորա պարագրիցին,
Յայս 'ի նեղ յանձուկ սահման գարաստանիս կամ Եդեմայ,
Որում դոյր լինել թերեւըս քո նըստոց նախամեծար,
Ուստի եղեալ սըփռէին ուայսրէն դային ազգք եւ ազինք
Յամենայն ծագաց երկրէ գովել ըզքեզ եւ մեծարել՝
Զհայր իւրեանց մեծ, բայց անկար այժմիկ 'ի ստուոյ, զի սահեցար
Վայրաբնակ լինել յերկիր հարթհաւասար ընդ որդիս քո։
Այլ մի շուշտ լինիցիս՝ զի է Աստուած որպէս ասէն
Նոյն 'ի գոչս եւ 'ի հովիս, յամենայնի միշտ մերձակայ։
Առընթեր քեզ հուպ կալցն զհետ եկեսցեն քո եւ նըշանք,

Բարութիւն իւր փարեսցի զքեզ եւ գորով իւր հայրախնամ,
Կերպարանքն յայտնատեսիլ եւ հետք ոտիցն ասուածեղէն։
« Եւ զի չեւ ասսի մեկնեալ հաւատարիմ լիցին քեզ բանքս,
Գիտասջիր զի առաքեալ եմ ցուցանել քեզ զամենայն
Որ ինչ անցք ընդ քեզ ունդ ազգդ անցցեն յապս ժամանակի։
Պատրաստ լեր 'ի լսել զբարի եւ զչար, առնուլ 'ի միտ
Ըստ նորհսն առ 'ի վերուստ՝ զի մաքառի 'նդ չարիս մարդկան։
Եւ անդուստ ուսանիցիս ըստ ճշմարիտն համբերութիւն,
Եւ խառնել յուրախութիւնդ ըստ ըստ ամենայնի սրբանալի,
Հրահանգ համեստութեամբ գրեալ՝ տանել միօրինակ
Երկոցուն դիպուածոց՝ աջողակին եւ ձախողին։
Այսպէս 'ի կեանդ անվրատանդ վարեալ կենցալ՝ գրատնիցիս
Եւս առաւել կիրթ եւ կազմ 'ի չուս մահուն՝ յորժամ գայցէ։
Արի արդ 'ի լեառնդ եկ, թող զամուսինդ ասս 'ի խոնարհ,
Զորոյ զաչքն թրմբրեցի, զի նընջեսցէ յարթնութեան քում՝
Մինչ կայցես 'ի զընին կանխանրկատ հանդերձելոց,
Որպէս դու նիրհեր երբեմն՝ յորժամ Եւա ստեղծաւ 'ի կեանս։»
Եւ որ եւ շնորհակալու մրոջ Ադամ պատասխանի.
« Աւաչնորդդ անմոլար, եկ եղ դու նախ, ես գամ ըզհետ
Ի շաւիղս յոր ցուցանես. եւ ընդ աջոնն Երինեկ ահա
Գրգնարկեալ խոնարհիմ եւս եւ 'ի մեծ պատուհասիս։
Աւաջն արկանեմ թրշուառութեան ըզլանջս իմ,
Վառեալ զայն արութեամբ 'ի յաղթութիւն եւ 'ի չահել
Վաստակոց պլտուղ զհանդիսաս, թէ այսպէս այնմ հասանիցեմ։»
Ամբառնան երկոքին 'ի տեսիլս անդր ասուածեղէնս։
Լեառն էր նա բարձրադոյն քան զամենայն 'ի դրախտի անդ,
Յորոյ գագաթն կէս երկրիս երեւէր գունտ յայտ յանդիման
Տարածեալ որչափ աչքն բաւիցէ ժամն լինել։
Չէր ինչ բարձրը քան ըզսոյն, ոչ քաջ 'ի բաց շուրջանակի
Ծաւալէր զաչաց տեսիլ լեառնն յոր յայլ դէմն առ Եհան
Փորձապետն յանապատին ըզմերոյենն երկրորդ Ադամ՝
Ցուցանել զարքայութիւնս երկրի եւ զփառս իւրեանց նըմա։
Ադամայ ձրկտէին անդանօր աչք մինչ 'ի քաղաքս
Հին եւ նոր համբաւուց՝ յորում կողման եւ գտանիցին,
Ի հրաշք տերութեանց ոստանս՝ անդուստ 'ի պարբսպացն
Որոշելոց Կամբալուայ, յոր Խութային նըստաւ խաքանն,
Ի Սմրրզանտէ՝ 'ի գահէն Լէնկ-Թիմուրի առ Ռքսոսիւ՝
Ցրպեքին՝ տուն բնակութեան Թագաւորաց Ճենաստանեայց.
Եւ անդուստ մինչեւ յԱդրա եւ 'ի Լաշոր Մեծ Մողոլն,
Իջեալ մինչ 'ի Ցամաք կրզլին Ոսկւոյ եւ կամ 'ի մարգն՝
Ուր բնակէր Պարսիկն երբեմն յԵկբատանս կամ 'ի Սպահան,
Կամ 'ի կոյս Մոսկուացւոց՝ որ է Ցարին Ռուսաստանի,

Կամ 'ի նուաճեալքն Թրլքասերմին Սուլթանի՝ Բիւզանդիոն։
Աչք նորա նշմարէին եւ եւ զաշխարհն Նեգոսայ՝
Մինչ յԵրիկոն՝ 'ի նորա նաւահանգիստն բացագոյն,
Եւ զիրբրիկ Թագակալքն Ծովեզերեայս Մոնքաղայի,
Կուիլովայ, Մելինդայ եւ Սոփալայ՝ Սովփեր Թուելոյ,
Մինչեւ անդր յալքայութիւնքն Կոնդուայ եւ Անգոլայ՝
Որ 'ի կայս հարաւոյ քան զամենայն է հեռաւոր։
Եւ անդուստ 'ի Նիզեր գետոյ մինչեւ 'ի լեառն Աղլաս՝
Զպետութիւնս Ալմանզորայ, Փեսի, Սուսայ, Մարոքանի,
Ալգերեայ եւ Տենիսայ, եւ ըստ ինչ ապա յԵրուսալ
Ըզտեղեան ուստի Հռոմ տիեզերայս էր տիրելոց։
Ո՛ դիտէ նրկատեայ հոգւոյն եւ զՄոխքն Մէքսիկոն՝
Զսթոռ Մոնտեզումայ, եւ ըզԿուսկով յերկիր Պերու՝
Ճոխագոյն գահ զոր կալաւ Առաբալիպ, եւ զԳուիանա
Զանկապուտքն տակաւին՝ զորոյ եւ զմայրքն քաղաքաց
Մանկունք Գիրիսոնի Էլդորադով յորջորջեցին։

Բայց Մնքայէլ 'ի տեսիլս ազնիւագոյնս կեղեւեաց առ
Ըզլուսն յաչացն Ադամայ զ'ի պատարանաց պրոզոյն մածեալ,
Որոյ էր կորովաբիբ եւս աւետեալ տեսողութիւն։
Ի հօրուտ եւ փեղանայ զտեսանելեացդն ջընջեաց ջկ՝,
Զի բազում ինչ 'ի զընին կայր առաջի նրկատելի,
Եւ երիս շնթս 'ի ջերոյ կենաց աղբերքն կաթեցոյց։
Տարրեալոց մասանցն աղգուն անց խորամուխ մինչ 'ի ստորմիս
Իմանալի տեսութեանն, յորմէ ստիպեալ յայնժամ Ադամ
Խընուլ զաչքն՝ դլորեցաւ, եւ թրմբրութիւն անկաւ յոգիսն։
Այլ հրեշտակն ազնիւագոյնն ձեռն ձրգեալ փութանակի
Յարոյց ընտ եւ զարթոյց յունկընդրութիւն բանիցն այսպէս.

« Բաց արդ զաչդ, Ադամ, եւ տես նախ զառաջնոյ մեղացդ արդիւնս
Յոմանս 'ի հանդերձեալ ծնընդոցդ քոց՝ որոց չնք բնաւ
Ոչ բազուկ երբեք 'ի ծառն կարկառեալ հրաժարելի,
Ոչ մրտեալ յուխտ ընդ օձին, ոչ ըզյանցանսդ յանցուցեալ.
Եւ սակայն 'ի մեղաց այսի բըղխէ ժանտաբեր ժահ
Բուսուցանել արդասիս դաժանագոյն գործոց յապայս։ »

Բացեալ զաչքն ետես դաշտագետին՝ յորոյ մի կողմ
Ի վարուն եւ յարօրեալ՝ կային որայք դեռ եւս հընձեալք.
Ի միւսում կողման փարախք, արօտք հօտից, եւ 'ի մէջն
Զերդ սահման կանգնեալ բաժնից դեղջուկ բազին դալար հողոյ։
Անդր արտունձ ոք քըրտնաղանդ եբեր զհերկոցն երախայրիս,
Հասկ կանաչ, որոյ դեղին, ոչ ընտրանաւ կապեալ խրձունք,
Այլ որպէս եւ զկարդ վարկպարազն գայն 'ի ձեռն։
Յետ նորին անուշակ հովիւ մի եկն հեզ եւ համբոյր
Անդրանկաց խաչն իւրոյ եւ հաստնտիր լաւագունիւք.

Զոր զենեալ՝ տարածեաց զընդերան եւ զՃարպէն խընկախաւն
Ի փայտն պատառեալ, եւ զբնաւն ելից օրէնս հարկին։
Իսկ եւ իսկ հուր հաշտական յերկնից լափեաց ըզպատարագն
Ի բոց շառաւինաթափ եւ 'ի ՃենՃեր անուշահոտ։
Միւս նըւէրն ոչ ծախեցաւ, քանզի եւ չէր 'ի սերտ սրբոյ.
Մոլեցաւ յերկիրամուն հողագործին սրբամըտութիւն,
Եւ 'ի խօսելն ընդ հովուին՝ ընդ ընկնն եհար ըզնա քարամբ,
Որ ըզշունչ նորա քաղեաց. տապալեցաւ 'ի գոյն մահու,
Հան զոգին հեծեծագին՝ վրտակահոս արեամբ թափեալ։
Յայն տեսիլ զարհուրեալ քըստմընեցաւ սիրտ Ադամայ,
Եւ անդէն տաղնապաւ աղաղակեաց առ Զըւարթունն.
« Ո՛հ, դատաւորակ, մեծ իմն աղէտք պատահեցին
Քաղցրահեղ պատանւոյն որ գեղեցիկ մատոյց ըզզոհն։
Ա՞յս ինչ ատտուածասէր սուրբ պաշտաման փոխան տրիտուր։»
Ինքնին Միքայէլ խանդաղատեալ կըրկնեաց անդրէն.
« Երկոքին դոքա եղբարք են, յերանացդ եղեալք, Ադամ,
Անօրէնն ըսպան զարդարն առ նախանձուն չարակնեալն՝
Զի եղբօրըն պատարագք ընդունելի եղեն երկնից։
Այլ՝ արեանն անկանելոյ խընդրեացին վրէժք, եւ անմեղին
Հաւատք հաճոյ վրկայեալ՝ ըզփոխարէնն ոչ կորուսցեն,
Թէպէտ եւ տեսանես զենքն ասատանօր մատնեալ 'ի մահ,
Ընդ փոշի թաւալեալ եւ 'ի դատաժոյժ մածեալ արեան։»
Նախահայրն. « Եւ վասն էր գոլծոյ եւ յոյր սակրս, աւաղ։
Իսկ արդ տեսի՞ ես այժմ ըզմահ. այս է ուրեմն ինձ ճանապարհ
Դառնալոյ 'ի բնին իմ հող. ա՛, ա՛ տեսիլ սարսափելի.
Մահ վայրենիերես, զարհուրագին 'ի տեսանել,
Ի խորհել քըստմընելի, ապա 'ի կրել քանի՛ ահեղ։»
Միքայէլ. « Ցեսեր ըզմահ ընդ առաջնով կերպարանաւն
Որով ցուցաւ նա մարդոյն. բազմադիմի է սակայն մահ,
Եւ յոլով են ճանապարհք 'ի սոսկալի նորայն քարայր։
Ամենայնն է արիսրալից, սակայն անձաւն 'ի մուտքս իւր
Առաւել է ահաւոր ըզդայութեանց քան 'ի նեերքս անդ։
Ոմանք, որպէս տեսերդ, 'ի բընամահ անկցին հարուած,
Կէսք 'ի հուր, 'ի ջուր, 'ի սով, եւ բազմադոյնք շըւայտութեամբ՝
Որ ըզլեալ եռացուցեալ յերկիր ըզժանտս յախտից ցաւոց.
Որոց հոյլ իմն այլանդակ երեւեցին քեզ յանդիման,
Զի կարող լիցես առնուլ 'ի միտ քանի՞ քանի՞ եղուկս
Եւայնն 'ի մարդիկ արկանիցէ տենչումն անժոյժ։»
Նոյնհետայն երեւեցաւ յաչքս նորուն տեղն դըժնեայ,
Գարշահոտ եւ խաւարչտին՝ երբ արդեան իմն ախտին ժանտ,
Յորում էին բազմամբոխք ախտաժետաց, ցաւք ամենայն,
Որ ածեն ահակոտոր սընդալ, տանջանքս ցաւատիչ,

Թալուկ 'ի սիրտ անկանել յոգեպահանջ մահուն ատգնաղ,
Ի ջնչաց գալ եւ 'ի լորցս, 'ի լուանաժէտ Թալթալ խաղալ,
Ի խարբուխ՝ դուռ դրժընդակ, 'ի կեղեքիչ ընդերաց քար,
Ի կեղ, 'ի խիթ սայրասուր, 'ի դիւաբախ բանդագուշանս,
Ի մաղձ սեաւ ընդմիրատատաք եւ 'ի վերնոտ խելացընորս,
Ի հիւծումն ծիւրական, 'ի հալ եւ մաշ, 'ի սրածութիւն՝
Որ յամբայրն կոտորէ, եւ 'ի ջրդող ախտին ըլկանս,
Ի հենիւմն յոգւոց Թասել, 'ի յոգուածոց խորատակիչ ցաւս։
Ամոլորմ հասեալ երեր եւ 'ի խորոց սրտէ Թառանչք.
Ի մահճաց 'ի մահիճս ճեպ տրւեալ անյուսութիւն
Ըզլսութիւքն ջերջէր, եւ ըզբլաքն յաղթօղն Մահ
Ի վերայ ճօճէր նոցին, այլ յապաղէր 'ի հարկանել,
Թէպէտ եւ կոչեցեալ ուխտիւք ըստէպ 'ի նոցանէ՝
Առաջին կրրեւ իւրեանց բարին եւ յոյս վախճանական։
Ո՞ր սիրտ ապառաժ հայել կարէր յերկար նուագօք
Ամարտօսր արտեւանամբք ընդ սոսկալի տեսիլն ընդ այն։
Ազիժուժեալ եղոյց Ադամ՝ Թէպէտ եւ չէր կանանցածին.
Յաղթահարեաց գրեթուիթիւն ըղլաւագոյն մասն 'ի մարդում,
Եւ վայրկեան ժամանակի մատնեաց ըղնա յարտօսր 'ի դէր,
Մինչեւ խորհուրդք պղնդագոյնք զանչափութիւնքն կարճեցին։
Հաղիւ գրտեալ ըզբարբառն՝ յաւել անդրէն յաշխարանս իւր.
« Ո՛վ Թշուառ ազգ մարդկային, յոր գլորեցար անարգութիւն,
Յոր ողորմ պահիս վիճակ. լաւ եւս էր ընաւ չըգալ 'ի ծնունդ։
Ա՛ء խմ՞ տրւեալ մեզ կեանս՝ եթէ խլելոց ինչ այսպէս.
Մանաւանդ թէ առ ինչ եղեալ մեզ հարկս այս 'ի վերայ։
Թէ գիտէաք զոր առնումք՝ ոչ ըզկենաց տուրսն ընդունէր,
Կամ չէայցէր Թողուլ անդէն եւ գնալ 'ի բաց խաղաղութեամբ։
Պատկեր Էին նախ ըստեղծեալ 'ի մարդն ուղղոյ եւ գեղեցիկ,
Թէպէտ եւ զկնի յանցաւոր, նրբատատասցի այսչափ ուրեմն
Ի տրգեղծ չարչարանս եւ յերաշխէպս անագորոյն։
Ընդէր մարդն՝ յոր կայ գեռ մասն ատատուածեղէն նրմանութեան,
Ոչ ազատ լինիցի յամոթալի տրգեղութեանցս,
Եւ 'ի նշորհս արարչականն պատկերի չիցէ քաւեալ։»
« Արարչին իւրեանց պատկեր, պատատխանի եռ Միքայէլ,
Մեկնեցաւ 'ի նոցանէ, յորժամ անձամբ զանձինս իւրեանց՝
Ի ընտրեալ զանառակ յօժարութիւնն՝ անարգեցին.
Ըզնորա զոր պաշտէինն առին յայնժամ ըզկերպարանս
Ջանասեղէն յոռութեան՝ որ ինքն իսկ ած զԸՆՏԱՅՆ 'ի մեզ։
Վասն այսորիկ նոցին եւ պատուհասն է չարաշուք,
Որ ոչ զԸՆՏԻՆ՝ այլ զնւրեանցն խանդարէ զնրմանութիւն.
Կամ թէ իւրն եղծանիցի նրմանութիւն առ 'ի նոցունց՝
Յախտ գարշութեան թիւրելով զուղղոյ օրէնքս սուրբ բնութեան,

Ըստ նրմին արժանի եւ 'ի պատիժս մըտանեն,
Զի զպատակերն աստուածադրոշմ ոչ պատուէցին յանձինս իւրեանց։»
« Վրկայեմ արդարութեանդ եւ հնազանդիմ, ասէ Ադամ.
Իսկ չիցե՞ն այլ Ճանապարհք քան զդառնաբերս 'ի մահ գնալոյ
Եւ ըստ ել 'ի բնակակիրսս խառնելոյ հող եւ մոխիր։»
« Է, ասէ Միքայէլ, միւս եւս թէ զայս պահեա օրէնս.
Մի՛ 'նչ ԱՆՁԱՓ. զոր խրատէ ժուժկալութիւնն 'ի կեր ուլ 'ի խում.
Մի գրգռանս որկորբստեան խընդրել՝ այլ զզկտոս պարենի։
Մինչեւ ամք յամերամք եկեալ հասցեն 'ի քոյդ գերեզման,
Կեցցես զայս օրինակ, ապա յետոյ եթէ հասուն միրգ
Ի գոգ մորդ անկանիցես, կամ քաղեսցիս մեղմով հեշտեաւ,
Ոչ բրունի շոպեալ ժամանդ 'ի մահ, եւ այս է ծեր հասակ։
Այլ յայնժամ յերկարակեաց քան զծաղկի տես, քան զարութիւն,
Քան ըզգեղ, լցես խամրեալ անաւագեալ եւ ալէբեկ։
Բրթեալ յայնժամ ըզգայունքդ՝ անհամեցին առ բնաւ Ճաշակս.
Ընդ շոգւոյ մանկութեան՝ կայտառութեան եւ խրախուսից՝
Խաղացեալ փոխանակ ընդ ուրդս արեանդ մեգ մաղձայոյզ
Ցուրտ եւ ամուլ՝ որ զզգիսդ կրքեսցէ ծանրատաղտուկ,
Եւ ըզհիւթ անուշակ կենդանութեանդդ ծախեսցէ։»
Առ այս մերդն նախահայր. « Ի մահուանէ ոչ եւս խուսեմ,
Եւ ոչ շատ ինչ ըզկեանս յերկարաձգել յօժարեցայց։
Նա՛ ցանկամ մանաւանդ 'ի հարցուփորձ մատչել ոՀոյն
Ի դիւրեաւ եւ հեշտաբար ըզքեռնդս ծանր եղից յանձնէ,
Զոր կայ մնայ ինձ բառնալ մինչ 'ի նկատեալն օր աւանդման,
Եւ սպասել համբերատար ժուժկալութեամբ լուծմանս խմում։»
Միքայէլ կրկինեաց անդրէն. « Մի սիրեր զկեանսդ եւ մի ատեար,
Այլ զոր կեասցդ՝ կեաց բարեաբար. յերկար թէ սուղ կենդանութիւն,
Զայն երկնից թողցես հոգ. պատրաստ լեր արդ յայլ ինչ տեսիլ։»
Ամբարձ զաչս իւր Ադամ, եռեսս անդորոր ինչ դաշտավայր,
Յոր խորանք գոյնագոյն սըփռեալ կային եւ բանակեալ։
Առ կիսովք 'ինոցանէ Ճարակէին հօտք եւ անդեայք,
Ի յոգունց այլոց հընչէր նուագարանաց արուեստականք
Որ զտաւղն՝ զերգեոնի յօրինէին ըզքաղցրաձայնս։
Էր իսկ անդ զոք տեսանել որ տայր ստեղանց թինդս եւ աղեաց,
Մատունք նորա թեթեւաթռիչք ընդ խառնըլաածս համօրէն,
Սլանայր հոգւով 'ի վեր 'ի վայր, յաջ յահեկէ շարժէր գեղգեղ։
Այլ զք կայր յայլում կողման՝ որ 'ի տաժանքս դարբնոցին
Էր պղընձոյ եւ երկաթոյ կըրկին քրծուարս ըստուար ձուլեալ։
Կամ զի գիտ ըզնոսին՝ ուր հուր անկեալ յանկարծաթափ
Ծախեալ էր ըզմայրիս 'ի լեառն ուրեք կամ 'ի հովիտ,
Եւ սողոսկեալ հըրդեհին ընդ երակունս ալից երկրի՝
Եւ անդուստ հոսեցուցեալ ըզշանթեռանդրն հիւթանիւթն

Ընդ բերանը խոռոչաց, եւ կամ ասել թէ հեղեղատ
Հան գերփեայ ըղձոյլսն զայն առ 'ի ներքուստ երկրին խորոց։
Ըղձրահալն եհեղ նա ցոյծ 'ի կաղապարսն պատրաստեալ,
Եւ ըստեղծ նախ անոի զճարտարութեան անձինն օճառս,
Ապա զոր գոյր արուեստել 'ի քրայական ձոյլ եւ 'ի քանդ։
Յետ սոցա, 'ի հուպ դեհէ, 'ի մերձակայ լերանց սարոց
Յընդելական ընակութեանցն ելին 'ի դաշտ արք այլասեռք։
Արդարոց էին գընացքն եւ ջան պաշտել զԷն Ճըշմարիտ,
Ճանաչել զանեթաքուստ գործս նորա, եւ զայլ ինչ եւս՝
Որ տածէն 'ի մարդիկ զաղտութիւն եւ զխաղաղ կեանս։
Իբրեւ սուլ ինչ սոքա յառաջեցին 'ի դաշտի անդ,
Ի վրանաց անոի գայլն ջրքնաղադեղ կուսից երամ
Ճոխաբար պըճնեալ 'ի զարդս ցանկասէրս եւ 'ի գոհարս։
Երդէին տաւղաբ դեղանս սիրաշարժ եւ քաղցրանուագ,
Եւ յառաջ խաղային 'ի գեղատաբ ոսկից կաքաւս։
Արքըն թէպէտ եւ ըզգոնք, արիեալ անսանձ աչս 'ի նոսա,
Ցանցեալ նախ 'ի վարմ սիրոյն, անկաւ նոցա գուռ ընդ նոսին,
Եւ այր այր յոր ցանկացանն առեալ անկան զբանիւք տարփից,
Մինչեւ սիրոյն կարապետ երեկորին ասաղն ծագեաց։
Յայնժամ եռանդնալեցք վառեն ըղձահն հարսանեկան,
Եւ հրաման տան կարդալ ըղձիմէն՝ նախ անդ զառաջինն
Ըսկիզբն ընդա ձայնելոյ 'ի հարսանեաց օրէնս եղեալ։
Ի տօն, 'ի ձայն գուսանական հընչեն խորանք առհասարակ։
Տեսութիւնս այս բարեբաստ եւ հանդիսաւորն գեղեցիկ
Սիրոյ եւ մանկութեան՝ ջերեալք ապախտ, այս երգաձայնք,
Բոլորեալ պըսակք, ծաղիկք, քաղցրաբարբառ արուեստականք
Յանկուցին զսիրտն Ադամայ զարագամէան 'ի հեշտութիւն՝
Ի բնութեանն յօժարախորժ, զոր օրինակ զայս առնէ յայտ։
« Ո՛վ որ սաղդ բացեր զաչս, յառաջադաս օրհնեալ հրեշտակ,
Այս տեսել՝ ինձ գերադոյն երեւի յոյժ, եւ աւետիք
Յուսաբեր անդորր աւուրց քան զառաջինսն զերկոսին։
Այնք հեռոյ տիպք եւ մահու, կամ դառնագոյն եւս արկածից,
Ասա բնութիւն 'ի բոլանդակ կամն յօրացեալ ըզցեալ թըւի։ »
Մեկայեալ։ « Մի դու զլուն եւ ըզբնութեան թուեցեալն 'ի դէպ՝
Հեշտութեամբըն ջափեսցես։ 'ի վերհագոյն ստեղծար դու կէտ,
Ի սուրբ եւ 'ի մաքուր, 'ինմանութիւնն աստուածեղէն։
Զոր հայես զըսարթ վրանս՝ եղեռնութեան են այն խորանք,
Բանակեալ ազգի նորուն որ զհարաղատն խոշոշեաց։
Հանճարեղք 'ի կենաղարդ ճարտարութիւն ջրքնաղադիւտ,
Մոռացեալք զՀաստատչն իւրեանց, թէպէտ Հոգւոյն իւրով խրատեալք,
Այլ սակայն ապախտաւորք առ երախտիս շնորհաց իւրոց։
Բայց ծընցեն ազգն մի խրոխտ։ զի գեղաւոր կուսիցն պար

Զոր տեսերդ՝ աստուածուհեաց 'ի տիպ կայտառ, փափուկ, զբաղթ,
Թափուր են 'ի բարեացն՝ որ ընտանի փառքն են կընոջ
Եւ պարծանք առաջին. սոքա սընեալք եւ զարդացեալք
Ի ճաշակ ախորժակաց ցանկականի, յերդ, 'ի խաղալ,
Ընդ զարդարանս եղանել, յածել լեզուի, յաչաց կաքաւս։
Ըզգաստից արանցըդ առհմ, որոց կենցաղ աստուածապաշտ
Զորդւոց Աստուծոյ զպատիւ անուանն էր ժառանգեալ,
Մասնեացեն անարդաբար ըզպատուութիւն եւ զփառս անձանց
Ի հրապոյրս եւ 'ի ժրմիտ գեղագունիցդ ամպարշտաց։
Ողողեալ ընկրկմեալ են առժամայս յուրախութիւնս,
Ընկրկեցին հուպ ընդ հուպ յեւս ահագին անդունդս 'ի խոր.
Հեղուն 'ի ծաղր, այլ հապ ընդ այնր հեգեցեալ աշխարհ արտասուաց ծովս։»

Ադամայն 'ի դերեւ եղեալ հակիրճ ուրախութիւն,
«Ո՛վ դուք, ասէ, եւ ամենք. որ բուսն հարին զանբիծ վարուցն՝
Արդ օգտեալ մեղրահեռ կան կամ լքեալք 'ի կէս ուղղոյն։
Բայց մարդոյ զհիքութիւն տեսանեմ միշտ եւ հանապազ
Ի նրմին աղբերակեալ բուղխ՝ 'ի կնոջէ առեալ ըսկիզբն։»

«Ի հնամարդ մեղկութենէ մանաւանդ առն ըսկիսն ունի,
Աստ հրեշտակքն, փոխանակ զի նա պահել պարտէր զնուր կարգ
Զգօնութեամբն եւ զերունակ պարգեւելով նրմա շնորհիւն։
Այլ արդ դու պատրաստեաց 'ի նոր ինն այլ իրաց տեսիլ։»

Հայեցեալ եռես Ադամ լայնածաւալ առաջի իւր
Երկիր մի ամառ անդ գեղիք, զերդաստանաք ագարակի.
Մարդախիտ քաղաքք՝ դըրամբք, դրունափակօք, բերդամբք բարձու,
Խուռնընթաց աղգք զենուորեալք, երեսք յահուր՝ մարտից 'ի դուռս,
Յաղթանդամ ոակրուս ըսկայք եւ խիզախեալք յանդգնութեամբ.
Կէսք զէն շարժեն, փրփրեալս սանձակոծեն այլք զերիվար.
Արձակք կամ յօրինեալք 'ի ռազմ՝ հեծեալք եւ հետեւակք՝
Ոչ 'ի զուր ինչ յընդունայն ցոյց հանդիսի կան անդանօր։
Ի միոյ կուսէ ջղեր մի այրընտիր՝ խոռ համբարեալ,
Ի պարարտ արօտից առեալ աւար ջոկս անդէոց
Գեղազէշ եղանց, կովուց, կամ դեղմնաւոր խաշին հօրանս
Ոչխարաց եւ բառաչոտ նոցին գառանց՝ վարեն ընդ դաշտ։
Հաղիւ հազ մաղասպուր շընչոքն եւեթ փախչի հովիւն,
Այլ կոչէ յօգնութիւն, անտի խառնուրդք արիւնահեղ։
Դոռոթ տրւեալ յանընդէր գուպար կըռուոյ բախին ջոկատք.
Ուր վայրիկ մի յառաջ արածէին անասնոց բոյլքն,
Արդ տապաստ անկեալ ցըրուեալ դընին ընդ զէնս, ընդ դիակունս
Ի գետինն արիւնոռոգ ամայացեալ եւ անմարդի։
Այլ վաշտիկք բանակ հարեալ կան պաշարեն զքաղաք ամուր,
Պատերազմ տան անօթովք մարտի, սանդխօք եւ ականաւ.
Պաշարեալքն 'ի պարըսպէն պահել ճըգնին յարդն եւ 'ինեռ,

Ի վերջ, 'ի գլ՝ եւ 'ի հուր ծրծրմբախաւուն բոցավառ.
Ասի անսի կոտորած, նախճիրք, հանդէսք ըսկայամարտք։
Այլուր քարոզք մականակիրք ատեան խրմբեն յոստանին դուրս,
Իսկոյն արք մեծարոյք եւ ալեխառն ըզգօն դիրլուիք,
Միախուռն ըսպայակոյտ, դան ժողովին, ըսին անդ Ճառք՝
Որ փուլթով Ճայթեն ապա 'ի խազմարար հերձուած կողմանց։
Յարուցեալ ոմն հուսկ ուրեմն, այր հոյակապ միջահասակ,
Իմաստուն գնացիւք շրքեղ, Ճոխաբանէ ատենախօս
Զիրաւանց, զանիրաւէ, զուղղութենէ եւ ըզկրօնից,
Զարդարոյ, զհաշտից դաշանց եւ ըզվերին դատաստանաց։
Անկուշեն երիտասարդք ըզնա եւ ծերք, եւ բրբընխեթ
Մրիսեին իսկ ձեռս 'ինա, եթէ ի՞էաղ ամդ 'ի վերուստ
Զեր յամբոխէ անսի զինքն յաներեւոյթս յափրշտակեալ։
Արդ այսպէս քաջարշաւ գնայր բրանութիւն, խրատ, զըզուել
Եւ օրէնք սրոյ 'ի դաշտին, եւ չէր ումեք ինչ ապաւէն։
Ադամ՝ յարտասր համակեալ՝ դառնայ 'ի ատեան հեծմամբ տրխուր.
« Ո՛հ, ո՞վ են սոքա, դահիճք՝ ոչ մարդք, որ մահ սրտիւն
Ի մարդիկ վայրենաբար, եւ յանձխեն բիւրատատիկ
Զապիրատ ղանձիր ըզմեղս եղբայրադաւ մարդասպանին։
Զի զոյս ոմանս, եթէ ոչ զեղբարս իւրեանց սատակիցեն.
Խոշխոշեն մարդիկ զմարդիկ. իսկ ո՞վ էր այրն արդարաձոն՝
Զոր թէ չէր փրրկեալ երկնից՝ յիւր ուղղութիւնսն կորընչէր։»
Մրիսայէ՝. « Սոքա զաւակք են անկողնոցն անօրինաց
Զոր տեսեր, յոր զուդեցաւ բարին ընդ չարն՝ ինքնին անխառն,
Եւ խառնեալ ընդ խոլ ծընան եւ սերեցին ըզզարմիդ տոհմ՝
Այլանդակ եւ խառնախորթ յոգիս իւրեանց կամ՝ 'ի մարմինս։
Այսպիսիք ելեն ըսկայքն յաւիտենից արք անուանիք.
Զի յաւուրսն յայնոսիկ ուժոյ եւ էթ տացին պարծանք՝
Զօրութիւն կոչելով եւ արութիւն դիւցազնական.
Գուտարայաղթ տիրել ազանց, առնուլ կապուտ անթիւ արեամբք
Փառացըն մարդկայնոյ համարեսցի ծագ եւ աւարտ։
Եւ 'ի փառս յաղթանակի ձեմեալ՝ գրեսցին աշխարհակալք,
Տեարք ազգի մարդկան, աստուածք, աստուածորդիք, արք այնպիսիք
Որոց դահիճ եւ հարուած մարդկան իրաւ էր անուանիլ։
Այսպէս անուն կապեսցի եւ պարծանաց յերկրի հրուշակ,
Իսկ փառաց արժանին 'ի լրութեան կացցէ թագուն։
Բայց սակայն եօթնեւորդն այն առ 'ի քէն, զոր եւ տեսերդ,
Ի խոտորեալ աշխարհին միայն ուղիղ արդարադնոց,
Եւ վասն այն իսկ ատեցեալ եւ պաշարեալ յոստիսեալոց,
Զի միայն խրախուսեաց արդար լինել, եւ քարոզել
Զատելի ճշմարտութիւնն՝ եթէ Աստուած սրբրեալք իւրովք
Եկեսցէ դատել զնոսա, եւ զայն Բարձրեալն յափրշտակել

Թեւազգեաց երիվարաց ընդ ամպս երկնից խընկասատարս,
Ընկալեալ, որպէս տեսերդ, ընդս զգենալ ընդ Աստուծոյ
Ի վերին վեհնաձեմ բարձրագաւառս փրկութեան,
Ի խորանն երանութեանց, ազատացեալ 'ի մահուանէ։
Եւ զի ցուցից քեզ ըզվարձս որ կան պահեալ առաքինեաց,
Եւ զպատիժս ապիրատից, յայսկոյս դէտակն արդ դիր եւ տես։»
Հայեցաւ Եսեա Ադամ այլակերպեալ զամենայն ինչ.
Պղընձէ կոկորդ մարտին անշընչացեալ՝ ոչ եւս գոչէր.
Փոխոխեալ անդ ամենայն 'ի ցընծութիւն էր եւ 'ի խաղ,
Շոյլել, զեղխել, ծոնք, պարանցիկք եւ հարսանիք կամ հոմանիք՝
Որպէս զիարդ եւ դէպ տայր, կամ ընտութիւն եւ կամ հափտի
Ո՛ւր եւ ոք մի գեղանի անցեալ ընդ այն զոշտեր զաչս.
Եւ անդուստ 'ի բաժակացն հոսին 'ի կոխս քաղաքական։
Հուսկ ուրեմն 'ի մէջ նոցա երեւեալ այր մի մեծարոյ՝
Յայտ եցոյց զատերութիւն իւր մեծապէս ընդ գործս իւրեանց,
Եւ բոլոր հար ըզդնացիցն։ Յերատաս նոցին երթայր ըստեպ,
Ուր ոչ այլ ինչ դրատանէր՝ բայց յաղթանակս կամ ծոնախուռմս.
Եւ քարոզ կարդայր նոցա՝ դառնալ առ Տէր, ապաշխարել,
Իբր անձանց բանտականաց՝ այց մատալուտ ըստառնայ դատ։
Այլ 'ի զուր ամենայն. զոր եւ տեսեալ՝ ըստեաց 'ի սպառ
Յամենայն կրչատմբանացն, եւ սուտ ըզվրանն 'ի բաց տարաւ։
Յայնժամ հարեալ 'ի լերինն ամբարձամիտ դերանս յատաղձ,
Ըսկրսաւ կառուցանել նաւ մի ահեղ մեծայաղթ՝
Զափեալ զայն կանգնովք յերկար, 'ի լայնութիւն եւ բարձրութիւն.
Եւ ծեփեաց ըստս նաւթիս եւ շինեաց դուռն 'ի կողմանէ,
Եւ համբարս արար նրմա՝ մարդկան 'ի պէտս եւ անասնոց։
Եւ ահա նոր սքանչելիք. ամենախուռմբ կենդանեաց սեռք
Եւ թրռչնոց եւ մտերիկ ճրճեաց զոյզ զոյզ մէն եօթնաթիւ,
Եկին մրտին 'ի տապանն որպէս հրամանն էին առեալ։
Հայրն եւ ուստերքն երեքին եւ չորեքեան նոցա կանայք
Մրտին յետ ամենեցուն, եւ զդուրան Աստուած տուականեաց։
Յարուցեալ նոյնժամայն մրթին թեւօքն հարաւահողմ,
Թափէս առեալ մեծատարած՝ գումարեաց զամպս որ ընդ երկնիւք։
Ուժընդակ նրպատս լինին նոցա լերինք ըզդալորչս,
Ըզջրդիսն մատախլուտս եւ բարձրիդ խնուտական,
Եւ երկինք թաղուն եւ հոծ՝ խրբեւ ձեղուն ձրգի նրսեմ,
Հուսկ սատանկ տեղատարափ մինչեւ երկրի լինել անցայտ։
Տատանեալ տապանն 'ի ծուփս՝ 'ի մրկանուտս լողացաւ ջուրց,
Եւ ցրռկաւ գրլխոյն խեթիկեաց գրնաց յանհոգս ալեացն ընդդէմ։
Ջուրցն հեղեղ էլ ամբարձաւ քան զբնակարանս հանուր 'ի վեր,
Որ ամենայն ճոխութեամբքն յատակըս ջուրց թաւալեցան։
Ծով ըզծով ծածկեաց ընկղցդ, անեղբր ծով անդընդակուլ։

Յապարանս՝ ուր խուն մի եւս յառաջագոյն շղայը պերճանք,
Նշխանդք ծովայինք ցընկնեցան անդ եւ դայլեցին։
Որ երբեմն բազմաթիւ՝ զարմի մարդկան ոչնչոյն մնացորդ,
Ի նաւակ մի փոքրիկ օժանդակեալ ծրփայ յալիս։
Զինչ յայնժամ ոչ կրբեցեր, Ադամ, տեսեալ զորդւոց վախճան,
Կատարած թախանձալից, ամայութիւն անմարդաբնակ։
Դու ինքնին՝ միւս ջրրհեղեղ, ցաւոց հեղեղ եւ արտասուաց,
Եւ դու ինքն իբրեւ զորդիսդ ընկղմեցար անդընդասոյզ,
Մինչեւ առ մեղմով հրեշտակն յարոյց ըզքեզ եւ կանգնեցար,
Ցառապեալ, իբրեւ զի հայր ոք ըզմանկունսն աշխարհիցէ՝
Զբոպանեալսն եւ զստակեալս առհասարակ իւր առաջի։
Հաղիւ գրտար բաւական Զուարթնոյն զողբումդ յայտնել այսպէս.
« Ո՛վ տեսիք, ինձ թշուառիս նախանձկար տրտաւորեալք.
Ո՞չ լաւ էր ինձ անհրմուտ հանդերձելոցն վարել կեանս,
Եւ զիմ մասն բաժնի սահմանել եւեթ ջարշարանաց.
Շատ իցէ ապաքէն զաւուր աւուր բառնալ վիճակ։
Իսկ այժմիկ՝ վիշտք բաժանեալք բազմադարեան ամաց 'ի բեռն՝
Ցիմ վերայ լեռնեան կուտակադէզ՝ նախդիտութեամբ։
Տարաժամ, մինչ չեւ եղեալ, գան յերբեւան՝ 'ի տանջել զիս
Ապառնեացքն պատկերաւ՝ որ ինչ յապայս են լինելոց։
Մի յայսմհետէ տենչասցի գիտել ինչ ոք յառաջագոյն
Որ նրմա ինչ կամ որդւոցն պատահել հասանիցէ.
Աներկիմիտ լեցի զարբեացն՝ ում գիտութիւն օգնէ ինչ ոչ.
Եւ զաղետս ապագայիցն գոտանիցէ ոչ ինչ նրւազ
Դրժոխրմէբ 'ի կարծիս քան յիսկութեան արդեանց իրացն։
Այլ նանիր է այժմ այս հոգ, զի չէք ոք մարդ առ 'ի խրատել։
Զերծեալքս այս սակաւաւորք, մոլորք 'ի լոյծ յայս անապատս,
Սպառեսցին ուրեմն 'ի սով եւ 'ի տագնապ տարակուսի։
Բրնութիւն եւ պատերազմ յորժամ յերկրէ տեղի եղուն,
Ակն ունէի թէ բարւոք ընթանայցէ ամենայն ինչ,
Եւ բերցէ խաղաղութիւն աղգի մարդկան պրսակ 'ի գլուխս
Երանական երկայնաւուրքք, այլ 'ի պատրանս էի համակ։
Զի ահա տեսանեմ զնաղաղութիւն արդ աւասիկ
Քան զաւեր պատերազմաց ոչ ինչ պակաս ապականիչ։
Զիա՞րդ իցէ այս՝ ծն ուստ ինձ առաջնորդդ իմ երկնաւոր,
Ա՛ռ ասա, իցէ՞ բնաջինջ այս սատակումն աղգի մարդկան։»
Միքայէլ. « Զորս արդ տեսերդ 'ի յաղթանակ ու՝ 'ի յընդիմութիւն,
Են նոքա՝ զոր նախ տեսեր յարութեան գործ մեծահանդէս.
Բայց ունայն էին նոքին 'ի ճշմարիտ քաջութենէն։
Յորդ արեանց գործեալ նախճիրս եւ աւերածս յիշեալ ազանց,
Առեալ անուն մեծ յաշխարհ, պատիւ եւ փառս եւ ճոխ կապուտ,
Փոխեցին ըզկեանս իւրեանց 'ի հեշտութիւն եւ 'ի հանդիսաս,

Ի յողալ, 'ի շուայտել եւ յանառակ աղակատանս։
Հուակ ուրեմն, անխառնութիւն եւ փրքացումն խրոխտապանծ՝
Ի սիրոյ զվերագութիւն ծընան յանխառով խաղաղութեան։
Մատնեալքն 'ի պարտութիւն եւ գերեվարք պատերազմաց՝
Ընդ կորուստ աղատութեան եւ զամենայն ինչ կորուսցեն
Զանձանց ըղաւութիւն, զահ եւ զերկիւղ տեառն Աստուծոյ,
Առ որում պատիր պաշտօն իւրեանց յանուէր մարտից դրդիսս
Ոչ գրացեալ ինչ օգնութիւն ընդդէմ հինիցն արշաւանաց։
Նըմին երի Թուլացեալք 'ինախանձուէն՝ ոչ եւս ինչ այլ
Ածիցեն ըմբռնաւ բայց կեալ միայն 'ի հանգըստեան՝
Երկրաքարշ կամ անառակ յոր ինչ թողցեն տեարքն 'ի վայելս։
Զի բըղխեսցէ միշտ երկիր քան զբաւականն առատութեամբ
Առ 'ի փորձ հանդիսի ժուժկալութեան առաքինեաց։
Այսգունակ ամենայն ինչ յոռացեալ խանգարեսցի։
Մոռացօնք եղցին արդարութիւն եւ իրաւունք,
Հաւատք, Ճշմարտութիւն եւ զգաստութիւն համեստութեան,
Քաւ յառնէ միոջէ՝ որ ընդ աւուրսն խաւարի
Մէն որդի լեցի լուսոյ 'ի խռան չարեացն օրինակաց,
Ի հրապոյրս, յօրէնս կրօնից եւ 'ի կըռղանս յաւիտենին։
Անվեհեր 'ի բասրանաց, յայպանելոյ կամ զըղուելոյ՝
Զանօրէն գնացից իւրեանց կըշտամբեսցէ զորեարսն զայն։
Ցուցցէ նոցա զուղղութեան շաւիղս անքոյթ եւ անվըրդով,
Սպառնացեալ ըղբարկութիւն հուպ առ կրռան անեղեալ սըրտից։
Եւ ելցէ 'ի միջոյ նոցա 'ի բաց Թըշնամանեալ,
Բայց առաջի Աստուծոյ՝ միայն արդար 'ի կենդանիս։
« Ի Նորա հրամանէն, որպէս տեսերդ իսկ, կառուցէ
Տապան մի հրաշակերտ 'ի փրքրկութիւն իւր եւ տոհմին
Յաշխարհին Նուիրելոյ 'ի համաջնունչ նաւակոծումն։
Ընդ առնուլ զեաղ 'ի տապանն եւ ընդ յարկաւ պատրաստարել
Որեբոյն եւ անասնոց՝ հրաւիրելոյն յարեւ կենաց,
Համբէն սահանք երկնից բացեալ հեղցեն անձրեւ յերկիր
Ցայդ եւ ցերեկ, եւ աղբիւրք անդընդահերձք առհասարակ
Պատառեալ ուռուցեն ըղծով յառնել կլանել զամենս,
Մինչ բարձրանալ հեղեղն քան զամենայն բարձունս երկրի։
Ցայնժամ լեառնքս այս դրախտիդ գլեսցի ալեացքն սաստկութեամբ
Ի կայից իւրոց խախտեալ խեթկեալ եղջերքք ջուրցն յորձանաց,
Կողոպտեալ 'ի դալարեացն եւ 'ի ծառոց յուղն հոտմաւոր,
Եւ ինքեալ ընդ գետն մեծ 'ի ծովային ծոցոյն բերան՝
Անդ տակ առեալ վակժոյժ լեցի, կըղզի աղտաղտ եւ երկզուտ,
Որոյ որթուց ծովու, նհանգաց եւ որորաց կըռչաձայնից։
Ուստիս ատի՝ զի Աստուած ըղսրբութիւն ոչ եդ ուրեք,
Եթէ չարացի յայնցանէ որ ցանկորդեն կամ բնակեսն անդ։

Արդ հայեաց յոր միանգամ ըղհեան ինչ գալ է հանդերձեալ։»
Ամն արկեալ Ադամ եռեռ ծրփեալ զուսանն 'ի ջուրց կուսակս
Որ երթայր այժմ եւ ցածնոյր, փախրստական եղեալ ամպոց
Հալածեալ բարկ հիւսիսիւ՝ որ ջրանուտ շընչով դանդրեր
Մէտ 'ի մէտ ըզմրկանուն ողողոյ ջրոցն ըստ թուլանալն։
Արեգանրն լուսափայլ 'ի հայելին իւր լուծական
Արձակեալ զաչքն հրաւառ՝ ըմպէր ըզցուրտ ալեան 'ի լի,
Որպէս այն թէ պապակեալ, որով եւ ջուրք անշարժ լըճին
Անիսպիսեալ ըղհեղեղն արագ արագ վերջոանեցան,
Եւ թեթեւ ընթացեալք իջին սուզան 'ի խոր անդունդս,
Որ խրցին զաղբերսն յայնժամ, որպէս փակեաց երկին զսահման։
Ոչ եւս այլ ծրփի տապանն, այլ երեւի անկեալ 'ի խրուտս
Եւ ուժգին հարըստեալ 'ի գլուխս լերին միոյ բարձու։
Արդ բըլրոց սեպք երեւոյթս խմբն բերեն պնրթիցն 'ի ծովս,
Սըրարշաւ յորձանք տանին որոտընդոստ խոխոջանօք
Զմոլեգին ուղեցին հոսանս 'ի ծոց ծովուն ընկըրկելոց։
Նայնժամայն 'ի տապանէն ագռաւ մի թռիչս առեալ սլանայ,
Աղաւնի մի յետ նորուն՝ հաւատարիմ եւրս հրեշտակ՝
Արձակեալ մի եւ կըրկին անգամ 'ի գիւտ կանաչ ծառոյ
Կամ ցամաքի յոր կարօղ լցէ դընել ըզդարշապարսն.
Յերկրորդում նըւադին՝ եկեալ բերէ 'ի բերանի
Տերեւեալ շիղ ձիթենւոյ, նըշանակ հաշտ խաղաղութեան։
Վաղ ընդ փոյթ ցամաքեալ թըւի երկիր, եւ ելանէ
Հինաւուրց հայրն ալեւոր իւրովքն հանդերձ յիւր տապանէն։
Շնորհապարտ դոհութեամբ յայնժամ ըզձեռս իւր համբարձեալ,
Եւ զաչսն սիրասուրբս կառուցեալ յերկնից բարձունս,
Ըզդրլսոնէն իւրով եռեռ ամպ ցօղագին, եւ յամպն 'ի նոյն
Աղեղն ըսքանչելի՝ յերեքկարգեան ծիր երփնափայլ,
Աւետաւոր հաշտութեան ասուուածայնոյն եւ նոր ուխտի։
Յայն տեսիլ՝ բաղմաբլսուր սիրտ Ադամայ զուարթանայ յոյժ,
Եւ այսպիսի արձակէ 'ի ցընծութեան իւրում բարբառ.
«Ո՛վ կարօղդ 'ի ցուցանել ըղհանդերձեալսն ակն յանդիման,
Վարդապետդ երկնաւոր, կըրկին ծնանիմ յայս նոր տեսիլ՝
Խրախուսեալ թէ կեցցէ մարդն հանդերձ բոլոր արարածովք,
Եւ զի զարմ եւ զաւակ պահպանեսցի նոցա յաւէժ։
Ո՛չ այնչափ հեծեմ այժմիկ ընդ աշխարհի բնաջինջ կորուստ՝
Որդւոց մեղաւորաց, քան թէ Ճոխամ վասն գիւտի
Աւրն միում արդարոյ՝ կատարելոյ յաչս Արարչին,
Մինչեւ հաճել՝ նոր միւսանգամ առ 'ինմանէ հանել աշխարհ
Եւ զցասումնն մոռանալ. սակայն աղէ ասա դու ինձ,
Զի՞նչ արդեօք նըշանակեն երփնանըկար կամարքն յերկինս՝
Իբրեւ հաշտ եղելոյ կարակնակերսք Աստուծոյ յունք։

Մինթէ նարօնք ծաղկերանդ լցեն ծրպնել զծուպրն խոնաւ
Զամպոցդ տարափոյ՝ զի մի լուծցին յերկրիս ողող։ »
Առ այս հրեշտակապետն. « Հանճարաբար կողմեցեր.
Հաճեցաւ Էնն արդարեւ ցածուցանել ըզբարկութիւնն,
Թէպէտ եւ տարրջացեալ ընդ արարած զեղծեալ մարդոյն։
Սրբատառուչ կայր մինչդեռ զաչքն խոնարհեալ եռես զերկիր
Համբրէն լի բընութեամբ, բոլոր մարմնոց գընացք պըղծեալ։
Այլ 'ի հեքեալ այսոցիկ՝ եդիտ շընորհս առաջի իւր
Այր մի արդար, մինչ հաշտեալ, չբառնալ յերկրէ զմարդկան զաւակ։
Աւեսէ՝ մի եւս այլ ջըրհեղեղաւ ջընջել զաշխարհ,
Զրտալ թոյլ ծովածփանաց անդր ըստ սահմանն ասպատակել,
Ոչ անձրեւաց տարափոց՝ ընկլուզանել ըզտիեզերս՝
Ըզմարդ եւ զանասուն միահամուռ 'ի խորս իւրեանց։
Այլ յածելն ամպրոպ յերկիր՝ գլցէ զերբերսն աղեղն իւր անդ՝
Ամնարկել եւ յուշ ածել իւր ըզդաշինս ուխտին նորոյ։
Այնուհետեւ տիւ եւ գիշեր եւ հարաւունք եւ հընձոց ժամք,
Տօթ եւ ցուրտ եղեւնարկու դադարեսցեն մի յընթացից,
Մինչեւ հուրըն զամենայն ինչ սրբբեսցէ նոր եւ ջքնաղ,
Զերկինս եւ զերկիր, ուր բնակեսցէ արդարն յայնժամ։ »

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

---

## ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Մէքայէլ հրեշտակապետն ինքն առնու այնուհետեւ պատմել զայլ անցս աշխարհի 'ի ջրհեղեղէ եւ անդր, զիրս Աբրահամու, ընդ որս զխոստումն զաւակի նորա՝ որ խորտակէլոցն է զգլուխ դատաճանող վիշապին, զմարմնաւիկ մնօրէնութիւն Աստուածորդւոյն, զմահն, զյարութիւնն եւ զհամբարձումն, եւ զեկեղեցւոյ հանգամանս մինչեւ 'ի միւսանգամ գալուստն։ Ադամ սիրեալ ի-ջանէ 'ի լեռնէն ընդ հրեշտակապետին, որոյ առեալ ընդ նմա եւ զԵւա՝ հանէ 'ի Դրախտէն, եւ բոցեղէն սուրն պատէ զտեղին շուրջանակի։

# ԿՈՐՈՒՍՏ

# ԴՐԱԽՏԻՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Որպէս յընթացս ուղեւորս, 'ի ժամանել թէպէտ փութկոտ,
Դադարէ զմիջաւուրբ, հրեշտակապէտն օրինակ զայս
Ընդ աշխարհն ապականեալ եւ 'նդ նորոգեալն արար հանդիստ,
Հաշուելով եթէ գուցէ ինչ Ադամայ 'ի բան բերել։
Քաղցրանոյշ խառնըւածով յարեալ ապա 'ի խօսան ասէ.
« Այսպէս ահա զաշխարհի տեսեր զըսկիզբն եւ զկատարած,
Եւ ըզմարդն իբրեւ 'ինոր իմն բնոջէ շառաւիղեալ։
Շատ եւս ինչ կայ քեզ տեսանել, այլ հայեցեալ 'ի միտ առնուսմ՝
Զի քո բիբք մահկանացուք ոչ ունին ժոյժ աստուածայնոց,
Առ որս հարկաւ բըլանան, եւ մարդկեղէն յոգնին զգայունք։
Ցայսմհետէ ես պատմեցից ըզլինելոցսն. արդ լուր ուրեմն
Ըստ արժանի մըտադիւր, եւ ուշակալ առ իս ընկիր։
« Մինչեւ մարդկանդ ազգ երկրորդ սակաւաւոր իցէ յերկրի
Եւ երկիւղ յետին վըիժուց կացցէ 'ի միտսըն անաղօտ,
Էին ահիւ խնամ տարեալ արդարութեան եւ իրաւանց՝
Ուղղեցեն զնւրեանց ըզկեանս եւ բաղմացին վաղվաղակի։
Հերկս յերկիր հարեալ արդիւնս ամբարեցեն տոհմականօք՝
Ցորենոյ՝ գինւոյ՝ ձիթոյ, եւ ստէպ զենեալ զոհ 'ի հօտից՝
Զբաւարակ, գառն եւ ամիկ առատ նուիրօք անառակաց,
Եւ տօնիւք սըրբովք զաւուրս հանցեն անմեղ ուրախութեամբ։
Բնակեցեն 'ի բաղմամեայ խաղաղութեան տամբք եւ ազգօք
Ընդ ցըստոնն հայրական, մինչեւ եկեալ յարիցէ այր
Փառամոլ, գաղանամիտ, որ զգեղեցիկըն զուգութիւն՝
Ըզկարգն եղբայրական՝ անկուշելով յանդգնեսցի

Յանկարաւ 'ի բրնտակալ իշխողութիւն իւրոցն եղբարց,
Եւ յընջոմին բրբեալ յերկրէ զքնութեան օրէնս եւ զմիութիւն։
Շահատակ՝ ոչ յերէոց որս, այլ մարդկան յառ եւ յապուռ,
Մարտիւ պատերազմաց, ակնապէս լարեալ որոգայթիւք՝
Առ որս յանձին ջառնուցուն ըզբրնտագատ տէրութեան լուծ։
Եւ դամին անուանեսցի որսորդ հրաշք առաջի Տեառն,
Յերկնուստ ունել խրոխտացեալ ըշնոխութիւնքս զայս երկրորդ,
Կամ ընդ հենդն եղեալ երկնից։ յընդվզելոյն առեալ զանունն՝
Ինքքն զայլս ըստամբակս եւ ապըստամբքս բասրեսցէ։
« Այս այր զօրաց ամբոխիւ՝ զորքս հանդոյն ախտ փառամոլ
Գուսարտակ ածէ զիւրեւ կամ ընդ իւրեւ 'ի բրնտանալ,
Արշաւեալ յԵգեմ մարզէ դէպ յարեւմուտսն՝ գրտցէ անդ
Դաշտավայր մի յոր վիրապ սեաւ կըպրաշնց՝ վիշ գրժոխոց՝
Կայ յեռանդքն հարեալ 'ի զգայուել անդ յալից երկրին։
Աղիւսով եւ սմին նիւթով կազմին քաղաք կառուցանել
Կամ աշտարակ երկնաբերձ, զի արասցէն իւրեանց անուն,
Գուցէ 'ի տար ցըրուեալ աշխարհս՝ եւ յիշատակ իւրեանց բարձցի։
Թէ բարի կամ չար իւրեանցն ի՞նչ համբաւ՝ չարարեալ փոյթ։
Իսկ Աստուած, որ ի՞նանէ ստէպ յայց մարդկան անտեսաբար,
Եւ շըրջի 'նդ հանգրուանս իւրեանց քննել ըզգործ նոցա,
Ըզդաստ լեալ՝ դիմէ 'ի տարս հայել զընել զքաղաքն իւրեանց,
Մինչ չէւ ամբարտակին եղեալ խրթեալ յերկնից բրրգունն։
Առ 'ի ծաղր՝ ասատանդութեան տայ 'ի լեզուս նոցին ոգի,
Հեռախոսաղալ կորուսանել ըզտրնկակից իւրեանց բարբառն,
Եւ փոխան բաշխել անլուր խմբն ձայնից դուժ խրշուրրտիւն։
Իսկ եւ իսկ անդ 'ի Հարտարան յառնէ բարբանջ ինչ անհեղեղ։
Առ միմեանս աղաղակեն եւ այր զընկեր ոչ խմանայ,
Մինչ կերկերեալ կոկորդիւ եւ փարինչելով գազանաբար՝
Որպէս թէ այսն առնիցին՝ մարտիւ զիրեարս հարկանեն։
Ի տեսիլ նոր ամբոխից եւ 'ի զզրրգմանցըն լու լինել
Քրրքիջ մեծ բարձաւ յերկինս։ այնպէս շնորհածն այն ծաղրալից
Խափան եկաց, եւ անուն եդաւ գործոյն խառնակութիւն։ »
Հայրագութ յայնժամ աղեօք սրրտաւութեամբ ասէ Ադամ։
« Ո՛վ զաւակ անիծից, տապեալ տենչիւ գրլեալ զեղբարսն,
Իշխանութիւն շորթեալ բրնի, ոչ յԱստուծոյ պարգեւեալ։
Երէոց եւեթ արձակ տիրեալ եւ մեզ Յաւէժականն,
Եւ ձրկանց եւ թրուշնոց։ յիւրմէ շնորհէն են իրաւունքս։
Այլ բրնաւ ուրեք երբեք մարդկան ըզմարդ չարաբ նա տէր,
Զայս ինքեան պահեալ պատիւ՝ զմարդ 'ի մարդոյ եթող ազատ։
Իսկ գուռզդ՝ 'ի բրնաբար տիրել մարդոյն ըզկայ չառնու,
Ամբարտակն իւր թուի խրոխտել եւ պաշարել զԱստուած ինքնին։
Այ մարդ չուառական։ զի՞նչ յայն բարձունս տարցի պարէն

Ի ռոճիկ իւր եւ ժրպիրհ զօրուն անդէն 'ի վեր քան զամպս,
Ուր օդոյն անօրութիւն տուայտեսցէ զնա իւր փոր թանձրապորա,
Եւ թէ ոչ 'ի հացէն, այլ 'ի շնչոյն սովեցուսցէ։»

Մինքայէլ. «Ցիրաւի ատեաս զորդիդ զայդ խաղմարար,
Զայնպիսի վերդովիչ անդորրաւէտ կարգաց մարդկան
Ի բրնանալ եւ գերել ըզբանաւորն ազատութիւն։
Այլ ծանիր, զի անդրստին 'ի սկզբնական մեղաց անտի
Ի կորուստ մատնեցաւ ազատութիւնդն Ճշմարիտ՝
Երկուորեակն ուղիղ բանի եւ բնակակիցն իւր միշտ անքակ,
Որում որիշ 'ինմանէ՝ չիք ինչ իւր չիք էութիւն այլ։
Բանն 'ի մարդ թէ խաւարի կամ եթէ բնաւ անի ապախտ,
Անառակ ցանկութիւնք եւ բրնաւոր ախտից կարիք
Զտէրութիւն բանին գրաւեալ՝ գերի տանին զմարդն անձնիշխան։
Վասն որոյ՝ 'ի տալ մարդոյ յանձին տեղի անարդ տերանց
Ցիրանալ ազատ բանին, իրաւապէս յայնժամ Աստուած
Արտաքին բուռնն տերանց ըզնա 'նդ ոտիք առնէ նրկուն,
Որ յաճախ եւ զարտաքինն ազատութիւն կոխեն յանպարտ։
Հարկ է լինել բրնութեան, այլ բրնաւոր՝ չէ անպաղայ։
Բայց երբեմն՝ այնչափ յետնեալ 'ի լաւութեանց անկցին ազնիք,
Զբանէն ասեմ, որպէս զի ոչ անիրաւաց, այլ իրաւանց
Եւ մածեալ աստուածասատ իմն անիծիկ կապտել զնոցա
Զարտաքին ազատութիւնն՝ յետ կորբատեան բընիկ նեռքնոյն։
Վրկայ զաւակն անպատկառ՝ արկղակերտին, որ զհայրն հենդնեալ՝
Փոխարէն զխստաւոր եւ զմոլեկան իւրմէ զարմէն
Լրաւ նրզոնս անիծակուռ։ Լիցես ծառայ ծառայից։

«Այսպէս այս յետինս աշխարհ ըստ առաջնոյն օրինակի
Գնասցէ չարեաց 'ի չարիս, մինչեւ տաղտկալ Տեառն Աստուծոյ
Յոճիր նոցուն եղերանց, ծածկել զերեսս 'ինոցանէ,
Եւ սուրբ զաչս իւր 'ի բաց դարձուցանել այնուհետեւ,
Եդեալ 'ի մոռ ըզբանեալ զնոսին 'ի թիւր շաւիղս իւրեանց,
Եւ ընտրել իւր ժողովուրդ մի յամենայն ազգաց երկրի,
Որ առ նա կարդասցեն։ Եւ հայր լեցի ժողովրդեանն
Այր մի լի հաւատով, որ զԵփրատայ մինչդեռ զգափամբք
Տակաւին նրստեալ բնակէ, 'ի կոց եւ նա մնանի պաշտօն։

«Ո՛հ, կարիցես հաւատալ՝ եթէ մարդկան, առ կենդանեաւ
Ապրելոյ հայրապետին 'ի հեղեղէ ջրոյոյ սատից,
Յայն շամբել խօլութիւն՝ զի զկենդանին թողեալ զԱստուած
Նուաստանալ անարդաբար երթալ պաշտել աստուածօրէն
Զիւրեանց իսկ ձեռագործս ըզփայտեղէն եւ քարեղէնս։
Այլ հաճեացի կոչել Բարձրեալըն տեսլեամբ զայրն 'ի տանէ հօրն,
Ի միջոց տոհմին իւրոյ եւ աստուածոց դից սընոտեաց՝
Ի ցուցեալ նրմին երկիրն, եւ յարուցէ առ 'ինմանէ

Աղդ հրզօր, եւ զօրհնութիւնս իւր սրխռեսցէ 'ի գլուխ նորին,
Եւ 'ի նորա զաւակէն համաբոլոր օրհնեսցին ազգք։
« Ունկընդիր լեալ անվրդով, ոչ գիտելով զերկիրն յո գնայր,
Հաւատայ հասատատուն, եւ տեսանէմ իսկ ես ընդա, —
Իսկ դու ջնարթեա, — որպիսի սերտ հաւատով լքեալ թողու
Ըղդիս իւր, ըզսիրելեան եւ զհայրենի բընիկ յատակ՝
Ըղհուր քաղդէացւոց։ արդ անցանէ 'նդ հունն 'ի խառան,
Դասյթ տայ զհետ խուռըն ջոլիր անդուց՝ հօտի՝ գերդասանկաց։
Ոչ տընանկ սահի, այլ զինն առնէ համակ իւր մեծութիւն,
Որ հրաւէրն առ նա կարդայ յերկիր օտար եւ անծանօթ։
Այժմ ունի զքանանասան, եւ տեսանէմ զխորանսն հարեալ
Շուրջանակի զՍիւքեմաւ ու 'ի դաշտն 'ի Բարձրը Կաղնեն հուպ։
Անդ առնու զաւետիսն իւրում զարմին պարդեւելոց
Համօրէն երկրին այնմիկ, 'ի յԵմմաթայ հիւսիսական
Ցանապատն ընդ հարաւ, — ըզվայրսն անուամբք կոչեմ իւրեանց,
Թէպէտ եւ զարդիս առանց անուան են տակաւին, —
Ցարեդ կուսէ՝ 'ի Հերմոնէ ցըծովըն մեծ արեւմտից։
Ասա Հերմոն լեառն, անդ ծով, հայեաց 'ի վայրսն իւրաքանչիւր
Ի հեռի աչաց տեսիլ ընդ որ առնեմըս մնասնացոյց։
Զեղերբ ծովուն լեառնն Քերմէչ, ասա կըրկինաբուղեն գետն Յորդանան,
Բուն սահման զարեւելիւք։ սակայն որդիք առն այնորիկ
Բնակեսցեն 'ի Սանիր՝ յերկայն դասի անդր 'ի բըլրոցդ։
« Ա՛ռ 'ի միտ՝ քընեա զբանս։ ազգք ամենայն ծագաց երկրի
Օրհնութեան լեցին Ժառանգ 'ի զաւակի առնըդ այդմիկ։
Ի նըմին ազգատոհմիկ կայ պատրաստեալ Փըրկիչ քո մեծ,
Այն որ զվիշապ օձին կառափըն խորտակել է հանդերձեալ։
Հուպ ընդ հուպ եւս անաղօտ այս քեզ յայտնեալ լրստակեսցի։
« Կահապետն այն օրհնեալ՝ որ 'ինկատեալ Ժամանակին
Աբրահամն կոչեսցի հաւատարիմ, թողցէ որդի,
Եւ յորդւոյ իւրմէ անտի թոռըն մի իւր համանման
Հաւատովք, խմաստութեամբ եւ 'ի համբաւ հրաշականուն։
Թոռն ուստերքք երկոտասան առնեալ ելեալ 'ի Քանանէ՝
Գնայ յաշխարհն՝ Եգիպտոս ձայնեալ յապա Ժամանակի,
Զոր Նիլոս գետ բաժանէ։ տես աւադիկ յով ընթանայ
Եւ երթեալ թափի խառնի 'նդ եօթնահոսան բերանս 'ի ծով։
Գայ բնակել նա յայս երկիր յամրս սովոյ հրաւիրեալ անդր
Ի կըրտսերոյն յուստերս իւր։ որդի՝ զոր գործք առաքինիք
Ամբառնան 'ի բարձ երկրորդ Փարաւոնի արքայութեան։
« Մեռանի անդ նա թողեալ իւր ազգատոհմ, որ սերեալ յազգ՝
Խէթ լինի բազմութեամբն այլում նորոյ թագաւորի,
Որ հնարի զտարապայման առնուն առնել տակակոտոր
Իբր ըշխիւրոց պանդխտաց յամբոխութիւն ստուարացելոց։

Ուստի 'նդդէմ հիւրամեծարն իրաւանց զհիւրսն առնէ ծառայս,
Եւ զնոցուն զքաւանահ կորուսանէ զարու մանկանն.
Մինչեւ կրկին հարաղատս՝ անուն Մոլսէս եւ Ահարոնն, —
Այս կոչումն երկոցունցն ի նոցէ եղբարց, — յարուցցէ Տէր,
Գերեթափ ըզժողովուրդն առնել՝ տանել մեծաւ փառաք
Եւ ըզեալ աւարաւ՝ յերկիրն իւրեանց յաւէտաւոր:
« Բայց բընաւորն անօրէն, որ յԱստուծոյ նոցա յուրատա
Կայ եւ զհրամանն առնէ ապախտ, տարնապէսցի ստիպեսցի նախ
Նըշանաք եւ արուեստիւք եւ ահագին դատաստանաք:
Գեռք յարիւն եւ յապաժոյժ դարձցին որ ոչ ուստէք հեղեալ,
Գորտ եւ մուն եւ շանաճանճ ըզցցեն ողջոյն զարքունիս իւր
Եւ զաշխարհն առհասարակ՝ հրոսեալ զաղիրն ասպատակաւ:
Ախտ մի ժանտ զանդեայսն եւ զհօտսըն խաշնամահ սատակեսցէ,
Ըզմարմինսն իւր եւ զգրոհին այուուսցեն կեղք եւ խաղաւարաք:
Որոտք խառն ընդ կարկտի, կարկուտ ընդ հուրըն շանթակէզ
Զերկինն եգիպտական պատառեսցեն, եւ մրրրկեսցին
Ընդ երկիր՝ լափելիզ ծախեալ յոր փոթորկինն յամենայն ինչ:
Զոր ոչ նոքա սպառեսցեն բանջար խոտոյ, պլտուզ կամ ունդ,
Թանձրախիտ ամպ մարախոյ՝ մրրկմանց հինի հանդունատիպ՝
Անդր ի՛ջեալ փաղաղեսցէ զԹողուզ յերկրին գեղ ինչ դալար:
Զամենայն սահման խաւար կրցցէ, խաւար շօշափելի,
Եւ տիւս երիս ջընջեսցէ. հուսկ 'ի մի զարկ մէջ գիշերոյ
Անդրանիկք եգիպտացւոց միահաղոյն անկցին տապաստ:
« Այսպէս տասամբք հարուածով Վիշապ գեռոյն եղեալ նրկուն՝
Ըզնրժգեհսն արձակել ըզկնի ուրեմն ունի յանձին,
Եւ բաղում անգամ ըզսիրա իւր խոնարհէ զյամառ եւ զբիրտ,
Բայց հանդոյն տաւին ըզկնի լուծանելոյ դարձեալ ձուլեալ:
Զհետ պընդեալ մոլեգնաբար որոց յառաջն ետ արձակուրդ,
Ծով ըզնա զօրօքն հանդերձ կլանէ, եւ անցքս տայ հիւրոցն
Իբր ընդ ցամաք 'ի մէջ կրկին սառնատեսակ պարըսպաց:
Պատկառեալ 'ի մոլսէսեան գաւազանէն ալեաց կոհակք՝
Կան մընան պատատեալ նոյնօրինակ կարկառակոյտ,
Մինչեւ եկցեն գերեզարձքըն յեզր իւրեանց յաղատութիւն:
« Այսպիսի առ յԱստուծոյ պարգեւեսցի իւրում սրբոյն
Զօրութիւն նրշանագործ, թէպէտ ցանգ մերձ է առ նոսա
Ի ձեռն իւրոյ հրեշտակին՝ որ առաջն նոցա գնասցէ
Յամպ եւ 'ի սիւն հրատեսիլ, ըզսիւ ամպով, զգիշեր սեամբ հրոյ,
Առաջնորդել 'ի ճանապարհն եւ 'ի թիկանց նոցա մերժել
Զխրատասիրա արքայն որ զհետ մրտեալ պընդեալ վանէ զնոսա:
Վանեսցէ զգիշերն 'ի բուն, սակայն ընդ մէջ անկեալ խաւար՝
Ոչ տայ թոյլ մերձենալ մինչեւ 'ի պահ առաւօտին:
Ակն յայնժամ ընդ մէջ հրոյ սեամն եւ ամպոյն արկեալ Աստուած՝

Խռովեցէք զոխորիմն եւ ըղկառայն անիւս բեկցէք։
Կարկառէ միւսանգամ յայնժամ Մովսէս ըստ հրամանին
Աջդը 'ի ծոցն ըզցուպն հրզօր, եւ մահանին հնազանդի ծով.
Դասնան ալիք 'ի ռազմաւոր դոյզթոսն, թաղեն ըզնոցն խաղմ։
« Աղքն ընտրեալ եւ աղատեալ՝ 'ի ծովադինէ անտի խաղայ
Ընդ անապատն անբնակ դիմեալ յերկիրըն Քանանու,
Ոչ ընդ կարճոյ ճանապարհ, զի մի գուցէ՝ մինչ մրխեսցի
Յաղմրկեալ քանանացիսն՝ ահացուսցէ զանփորձըն մարտ,
Եւ անդրէն խէթ երկիւղն դարձուսցէ զինքն յեռս յԵգիպտոս,
Զանփառն 'ի սարկուութեան նախամեծար ընտրեալ ըզկեանս։
Քանզի կեանք՝ խամ 'ի զենուց՝ քաղցր է կամակ եւ ախորժակ
Աղատի եւ ռամկի, եթէ չմրզէ յանդգնութիւն։
« Շահեսցի նա եւ զայս՝ յամեալ 'ի մեծ անապատին,
Զի զրկուութեանն հիմնեսցէ կարգ, եւ 'ի ցեղին երկոտասան
Ընտրեսցէ իւր ատեան մեծ՝ իշխել հրաման տալ ըստ օրէնս։
Ինքն Աստուած, 'ի Սինա լեռնէն ոյր գլուխ մառախլապատ
Ցիջանել նորին անդր ըզդողանի հարկանիցի,
Ի միջի որոտաձայն փայլատականց, գոչման փողոց,
Օրէնս եւ պատուիրանս ինքնին անձամբ տացէ նոցա.
Է ինչ՝ յարդարութիւն քաղաքավար, եւ է դարձեալ
Որ 'ի կրօնս հաւատոց եւ 'ի պաշտօն պատարագաց,
Ուսանել առնուլ 'ի միտ օրինակօք եւ ըստուերօք
Ըզզաւակըն նրկատեալ 'ի խորտակել զօձն վիշտ,
Եւ զհընարսն՝ որով 'ի գլուխ ըզփրկութիւն տարցի զմարդկան։
« Բայց բարբառն ատուածեղէն ահեղ է յոտնկրն մահացու.
Աղաչեն ըզնա յայտնել ըզկամն 'ի ձեռըն Մովսիսի,
Եւ վախճան առնել ահիցն, եւ նա շնորհէ նոցա զխընդիրն,
Որ ուստ՝ թէ չիք առանց ինչ միջնորդի մատչել առ Էն.
Զորոյ զմեծ ընդոյր պաշտօնն յայնժամ Մովսէս օրինակաւ,
Պատրաստել ըզճանապարհս հանդերձելոյ վեհագունին
Զորոյ նա յառաջագոյն գուշակելով պատմեսցէ զորն,
Եւ ամենայն մարգարէք իւրաքանչիւր 'ի դարս իւրեանց
Երգեսցեն ըզժամանակ Մեսիային մեծի այնմիկ։
« Իբրեւ օրէնքս այս եւ կարգք հաստատեսցին, հաճեսցի Տէր
Ընդ կամարարս իւր մարդիկ, եւ արժանի համարեսցի
Կանգնել 'ի միջի նոցա խորան ըզվրան ժամուն,
Զի Միայն Սուրբն ընդ մարդկան մահկանացուաց բընակեսցէ։
Ի ձեւ օրինակին՝ զոր նայն ցոյց՝ կառուցանի
Նըւիրան մի եղեւնեայ եւ ոսկեզօծ, ուր տապանակ,
Եւ յարկեղն անդ ուխտին իւրոյ կրսակ՝ Վրկայութիւնն։
Ի վերայ նորին 'ի թեւս երկուց հրեշտակք քերովբէից
Ոսկեղէն ամբառնան գահոյք՝ աթոռ ողորմութեան։

Առաջն նորա վառեալ եօթնանդամեայ բորբոքեն ջահք՝
Իբր 'ի կամար կենդանաբեր օրինակեալ երկնից լամբարս։
Ի վերայ խորանին ըղձուն ոգեղոյն հանդիպեցէ ամպ,
Եւ ըզցայգ՝ ճաճանչ հրաձեւ, բայց 'ի ջրոյ ճանապարհայն։
Եւ Տէրունեայն հրեշտակաւ առաջնորդեալ գնան հասանեն
Յերկիրն 'ի խոստացեալն Աբրահամու եւ զաւակին։
« Երկար յոյժ լինիցի պատմել քեզ զայն եւս ամենայն.
Ճակատք պատերազմաց, արքայք նուաճեալ, ոսկեալ աշխարհք,
Արեգակն ոտնակոխեալ 'ի մէջ երկնից ըղձուն ոգեղոյն,
Եւ յամեալ կարգ ընթացից գիշերայնոյն 'ի ձայն մարգոյ
Որ գոչէ. — Արեգակըն, կաց հանդէպ Գաբաւոնի,
Եւ դու եւրս, Լուսին, հանդէպ ձորոյն Եղնոյ,
Մինչեւ հանցէ Իսրայէլ ըզյաղթութիւն մարտին 'ի գլուխս։ —
Յայդ կոչեցեալ անուն Թուն Աբրահամեան, Սահակայն ձեռ,
Յիւրմէ յազգ իւր կարգեցի՝ այսպէս յաղթօղ լեալ Քանանու։ »
Ադամ յայսմ վայրի եհատ ըղխօսքս հրեշտակին.
« Ո՛վ երկնից պատգամաւորդ, խնամ մերթոյս ջահ լուսատու,
Աքանչելիս ինձ յայտնեցեր, եւ մանաւանդ զերս արդարոյն,
Զ Աբրահամուն եւ զզարմին. դեռ եւս այժմիկ նախ գրատանեմ
Արդարեւ զաչս իմ բացեալ եւ ըստիպեալ ըզսիրս իմ յոյժ։
Ի խորհուրդս յառաջագոյն զհանդերձելոյն էի խուսեալ
Որ ինչ անցք ընդ իս եւ 'նդ տոհմ մարդկան ի ցեղն անցանելոյ.
Իսկ արդ զօրն հայիմ զնորա՝ յոր օրհնեսցին հանուր ազգք։
Շնորհ ուստ չեմ արժանի, որ արդեալեալն գիտութեան
Զհետս անկայ 'ի խընդիր ընդ ասկիրատ Թիւր Ճանապարհ։
Զիմանամ սակայն ընդէր յորս հաճի Տէր բնակել յերկրի՝
Ա՛յնչափ օրէնք եւ պատուէրքս տացին նոցա զանազանեալք.
Ա՛յն օրէնք եւ պատուիրանք՝ չհաշուին նոցա նոյնչափ 'ի մեզս.
Եւ զնո՞ր ուրեմն Աստուած ընդ այնպիսեացն բնակիցէ։ »
Միքայէլ. « Մի երկմտեր թէ 'ինոսա տիրեսցին մեզք՝
Իբր 'ի սերունդս քոյին. ուստի տան օրէնք նոցա՝
Յայտ առնել զընդաբոյս ապականեալ նոցին խանգար,
Որ զմեղանս անդուլ շարժէ պատերազմել ընդ օրինաց։
Ուստի տեսեալ թէ օրէնքն յայտնեն ըզմեզս, այլ ոչ սրբեն,
Բայց քաւութեան դոյն ըստուերօք, ցըլուց արեամբ եւ նոխազաց,
Ուսցին զի զպարտսն հատուցցէ զմարդոյն արիւն մի պատուական,
Արդարոյն՝ փոխանակ անարդարոյ եղեալ վրէժար։
Զի հաւատոյք ժառանգեալ զարդարութիւն՝ գրացեն զնիւրեանցն
Արդարութիւն առ Աստուծոյ եւ ըզնորզմն մրատցն անդորր,
Զոր օրէնքն հանդարտել պաշտամամբք չեն ինչ բաւական։
Զի չեք մարդոյ զբարեկրօնից վարուց ըզնուլ զմասն օրինաց,
Եւ մինչ չեւ բովանդակ կատարեալ զայն՝ ոչ կարէ կեալ։

« Անկատար երեւին այսպէս օրէնքն եւ սրբեալ լոկ
Առ 'ի զմարդիկ 'ի լրումն ժամանակաց դարձուցանել
Յուխտ այլ լաւագոյն, անցուցանել կերթս ըստ սոսին
Ի սուրբերն օրինակաց 'ի բուն 'ի սոյդ Ճշմարտութիւնն,
Ի մարմնոյ 'ի հոգի, յանձուկ կապից օրէնդրութեան՝
Յինքնակամ յանձնառութիւն առատաձիր մեծի շնորհաց,
Ի սրբոյ ահափեռից՝ յորդիսանն երկիւղ ըզգոն,
Ի գործոցն օրինաց՝ 'ի հաւատոց արդեանցն հանդէս :

« Վասն որոյ, Մովսէս անգամ սերտ սիրեցեալն առ յԱստուծոյ,
Օրինացըն պաշտօնեայ եւ եթ գլուեալ եւ ոչ այլ ինչ,
Ոչ տարեալ ըզժողովուրդն յերկիր մուծցէ քանանացոյն,
Այլ Յիշով զոր Յիսուս անուանեն ազգք հեթանոսաց,
Անուանակիրն եւ գործակալ այնմ որ վերագ օձին յալթող՝
Աներկիւղ տարեալ ածցէ 'ի հանգըստեան դրախտն անկորուստ
Ըզմարդն յերկար մոլորեալ յանապատի յուխտենիս :

« Այլ դամ մի յերկրաւորն իւրեանց Քանան եղեալ ժամն,
Անդ զեղջ առեալ բնակեսցեն եւ ընդ երկար աջողեսցին :
Իսկ վերդովեալ՝ ազգին մեղք՝ հասարակաց խաղաղութիւնն,
Ի ցասումն ածցեն զԱստուած՝ յարուցանել իւրեանց ոսոխս,
Յորոց եւ ստէպ փերկեսցէ՝ յորժամ դարձցեն յապաշաւել,
Նախ բազկաւ դատաւորաց, յետ այնորիկ թագաւորաց :
Յոյց երկրորդն հրաչակաւոր յԷլն պաշտօն եւ յարութիւնս՝
Ընկալցի զուխտն անդարձ՝ անշարժ կալոյ իւրում գահուն :
Զուգաշուրթն համբրէն մարգարէիցն երգեսցեն ձայնք,
Թէ յարքունի զարմէն Դաւթի, — այսպէս կոչեմ զայս թագաւոր, —
Բղխեսցէ զաւակ տոհմի կընոջն քեզ կանխագուշակ,
Գուշակեալն Աբրահամու իբրեւ ազանց ակընկալեալք,
Արքայից նախապատում, թագաւորացըն հուակ վերջին,
Զի իւրումն կատարած ոչ եղիցի արքայութեան :

« Բայց յառաջ անցցեն երկայն արքայից կարգք պայազատաց •
Առաջինն՝ յորդւոց Դաւթի, մեծն հանճարով եւ Ճոխութեամբ,
Հանդուսցէ 'ի շքեղ տաճար ըզտապանակն աստուածային
Զամպարարին, որ մինչեւ ցայն ժամ ընդ վերան ժամուն շրջէր :
Յաջորդք սորին՝ է որ բարի եւ է որ չար անցցեն 'ի դիր •
Զարացն երկարագոյնքս տողեսցի շար եւ համար,
Ոյց քարուսակ կռապաշտութիւնք եւ այլ ազգի ազգի ոճիրք
Յաւելեալ բարդեալ 'ի կոյսս եղեռնութեանց ժողովրդեանն՝
Ի բարկութիւն բերդեսցեն զԱստուած մեկին 'ի նոցանէ •
Եւ ըզքցէ զերկիր նոցա եւ ըզքաղաքն եւ ըզտաճար,
Զիւր ըզսուրբ տապանակն եւ զսրբութիւնսն համանգամայն՝
Նախատ եղեալս եւ յաւար ամբարտաւան այնմ ոստանին
Զորոյ զպարիսպսն բարձրաբերձ տեսեր մատնեալ 'ի ժքիսոր •

Ուստի եւ շնորհութեան իսկ յորջորջումն իւր Բաբելոնն։
« Այդ թողու զնոսա պանդուխտս յեօթանասուն ամ գերութեան,
Ապա հանէ՝ յիշելով զողորմութիւն իւր եւ զկրսակ
Զոր ուխտեաց Դաւթի երդմամբ իբրեւ զաւուրս երկնից անշարժ։
Յակնարկելոյն Աստուծոյ գրաւեալ շնորհս յաչս արքայից
Տեարց իւրեանց, հաճութեամբ նոցին ելեալ 'ի Բաբելէ
Եւ այսրէն դարձ արարեալ՝ շինեսցեն նախ զքաղաքն Տեառն։
Վարեսցին առ ժամանակ մի մեղմական զրգռն կարգաւք,
Ապեցեալք ապա 'ի թիւս եւ մեծութիւն՝ պառակտեսցին,
Եւ խրատով բաժանեսցեն ըստ կրկին յիւրեանց առցէ քահանայից՝
Պաշտօնէից սեղանոյն, որոց արժանն էր մանաւանդ
Փոյթ առնել խաղաղութեան. իսկ նոցուն հետ ձեռնեցուսցէ
Ի նոյն իսկ 'ի տաճարն զգալոյն ծանութիւն աւերածին։
Խրլեն ապա զգաւազանն՝ ոչ ածեալ ակն որդւոյ Դաւթի,
Եւ ապա կորուսանեն, եւ անցանէ յայլազգի ոք,
Որպէս զի բուն ճշմարիտ արքայն օծեալքն Մեսիա
Յիւրոյին իրաւանց ծընանիցի մերկ կողոպուտ։
« Ի ծնընդեան իւրում սակայն՝ ասաղ ինչ յերկինս նորատեսիլ
Քարոզէ զգալուստ նորա, կարապետեալ առաջնորդէ
Իմաստնոցն արեւելից, որ զօթեւան նորա խնդրեն՝
Երթալ ասնել պատարագս՝ ոսկի կընդրուկ եւ զմիւռս յընծայ։
Հրեշտակ մի փառացի պատմէ զտեղի ծնընդեան իւրոյ
Պարզամիտ խաշնարածաց 'ի տրքնութեան ցայգապահուց։
Բերկրալից խնդութեամբ փութանակի անդր ընթացեալ,
Լսեն 'ի հրեշտակաց պարս ըստորս ծնընդեան նուագս։
Մայրն կոյս, սակայն նորա հայր զօրութիւնն է Բարձրելոյն։
Եղեալ յաթոռն հայրենի, արքայութեան իւրոյ սահմանք
Ձրգեսցին ծայրածաւալ 'ի ծագս երկրի, փառք իւր յերկինս։ »
Ա՛ռ ըզկայ Միքայէլ, տեսեալ զԱդամ առ յոյժ խընդին
Տաղնապեալ եւ իբր առ ցաւս յարտօսր համակ անշունչ՝ անմռունչ,
Որ հուսկ ուրեմն 'ի խորոց սրտին ըստոյն արձակեաց ձայն.
« Ո՛վ գուշակդ աւետաւոր, կատարիչ բարձր ակնկալեաց,
Իմանամ այժմ անբաստուէր՝ զոր ինչ խորհուրդք մշտացս յաշխարհ
Խընդրեցին ուշիւ ընդ վայր. զայն ինչ ասեմ թէ հիմ արդեաք
Ըստասեալս յուսով մեծաւ՝ կընոջն ազգի կոչեսցի զարմ։
Կոյս մայր, ողջոյն ընդ քեզ, ո՛վ դերագոյնդ 'ի սէր երկնից.
Բայց եւ դու յերանաց խնոց սերունդ ելանիցես,
Եւ Աստուծոյ բարձրելոյն 'ի քոյ ծոցդդ ելցէ որդին.
Ընդ մարդոյն այսպէս Աստուած միաւորեալ ընդելուզի։
Արդ օձն ակն գրկնոյն կալցի չարաւ խորտակելոյ։
Ո՞ւր եւ երբ նոցին գուսպար, ծն առ աղէ պատմեա դու ինձ,
Ո՞ր այն հարուած որ յաղթողին գարշապարի վերքս դիցէ։ »

Մեքայեվ. « Մի դու նոցա յերաղեր մարտ ինչ մենակիս,
Եւ մի զմրտաւ ինչ ածեր հարուած 'ի գլուխ կամ 'ի ներքան։
Ոչ առ ուժով բրոնագունիս ըղթըշնամիդ պարտեալ
Պատշաճէ Որդին 'ի մի զաստուածութիւն ընդ մարդկութեան,
Եւ ոչ այսպէս ինչ Սատանին վատթարեալ նրաճեսցի,
Զոր անկումն յերկնից, — հարուած մեծ եւս ահեղ եւ մահասաստ, —
Ոչ ինչ բընաւ ջըլատեաց ջրտալ քեզ վեր ըզմահացուն։
Որ Փըրկիչըն դոյ քեզ՝ ողջացուցցէ զքեզ կենդարարն,
Ըստանեալ՝ ոչ ըզՍատան, այլ զգործս իւր 'ի քեզ եւ յազգդ,
Որ էջ հնար՝ բայց թէ ընդլով, — յորմէ յեանեալ գրաբար դու վրէպ, —
Զօրինացն Աստուծոյ զունկընդրութիւն՝ ըզպատուիրեալ
Մահուանէ պատուհասիս, եւ կրրելով զմահուն պատիժ՝
Որ արժանն է հեստութեան քում եւ ծնընդոց քոց համօրէն։
« Հատուցումն այսպէս միայն լեցի վերինն արդարութեան.
Կեցուցիչըն քո զօրէնն աստուածեղէն կատարեսցէ
Լիով եւ բովանդակ հնազանդութեամբ՝ սիրով հանդերձ,
Թէպէտ եւ սէր բաւական է ինքն եւեթ ընդուել զօրէնն։
Յանձն ըզքո տուգանս առցէ՝ դիմագրաւեալ յիւրում մարմնին
Կեալ ըզկեանս անարգանաց եւ զանիծից մեռանել մահ,
Ամենեցուն կեանս աւետեալ որ հաւատանն յիւր փրկանակ,
Եւ թէ իւր հնազանդութիւն՝ նոցուն ինքեանց համարեսցի,
Իւրեանց լեցի հաւատովք, եւ ապրեսցին նորին շնորհիւ,
Ոչ յիւրեանցըն գործոց, թէ եւ իցեն ըստ օրինաց։
Յայս աղագս առեցեալ եւ հայհոյեալ վարեալ 'ի դատ՝
Դատապարտ 'ի մահ լեցի նախատանաց եւ նըզովից,
Բեւեռեալ 'ի խաչ յազգէն, սպանեալ փոխան կենացն որ էս։
Այլ յիւրում խաչափայտին բեւեռեսցէ զքո թըշնամիս,
Դատակնիք պատուհասիդ եւ մեղք հանուր ազգի մարդկան
Խաչեսցին ընդ նրմա, եւ ոչ եւս ինչ ըսանանիցեն
Ոյց յուսանն իրաւապէս 'ի փրկանացն իւր հատուցումն։
« Մեռանի, սակայն անդէն եւ անդ ընդ փոյթ կենդանանայ.
Ոչ յերկար ինչ նրմա խլանութեամբ սիրեսցէ մահ։
Մինչ չեւ երրորդին վաղորդայնոյ ծագեալ աւուր,
Ատեղք առաւօտեալք տեսցեն եղեալ զնիքն 'ի շիրմէն
Զուարթերես եւ կայտառ իբրեւ ըզլոյսըն նորածին,
Հատուցեալ ըզմարդոյն փրկանաց գինս 'ի մահուանէ։
Մահ նորա բաւական լեցի մարդոյն յամենայն ժամ,
Թէ ապախտ ինչ չառնիցէ զանձնանուէր ըզկեանսըն զայն,
Ապաստան եղեալ 'ի շնորհս իւր հաւատովք՝ գործովք հանդերձ։
Այս վճռար աստուածեղէն ջնջէ բառնայ զքո ձեռագիր՝
Ըզմահուն դատակնիք որով էիր մեռանելոց
Ի մեղս քո՝ կորուսեալ զանդիւտ կորուստն յաւիտենից։

Եւ սոյն այս խակ վըՃար ըՂՄատանին փըշրեսցէ գլուխ,
Խորտակեսցէ զբընութիւն նորա պարտեալ ըՂՄեղս եւ ՂՄահ՝
Ըզմեծ զէնս իւր զերկոսին. զնայթոց նոցա հարըստեսցէ
Խորագոյնս 'ի գլուխ նորուն, որպէս ոչ մահ Ժամանակեան
Գիտասցէ հարկանել ըզգարշապար յաղթականին
Կամ զնուրոցն փըրկելոց. որ զի է մահ քընոյ հանգոյն,
Ներհումըն քաղցրանինՂ եւ յանմահից փոխումն 'ի կեանս:
« Ըզկընի յարութեանն այնչափ եւեթ կացցէ յերկրի,
Յերեւեալ որչափ պիտոյ էցէ իւրոց աշակերտացն,
Ապք որ ցանգ ընդ նըմա կացին յիւրում կենդանութեան:
Եւ տացէ նոցա պատուէր՝ աշակերտել զազգս եւ զազգս
Յոր ինչ ուսանն ըզնըմանէ եւ զփրկագործ իւրն հանդիսից.
Մըկըրտել 'ի Ջուրց հոսանս որ միանգամ հաւատասցեն,
Ի խորհուրդ՝ զի լուացեալ յաղտոյ մեղաց 'ի կեանսս սուրբ՝
Կազմեսցէ զնոսա Հոգւով, թէ այնպէս ինչ դէպքն տայցէ,
Ի մահ այնըմ հանգուցեալ զոր Կենարարըն Ճաշակեաց:
Ուսուցցեն զազգս ամենայն, զի յայնմ օրէ եւ առ յապա
Ոչ միայն զաւակի աբրահամեան հօր երանաց
Քարոզեսցի փրկութիւնն, այլ ընդհանուր ընդ տիեզերս
Ողջեկաց հաւատոցն Աբրահամու բոլորեցուն,
Եւ յազգի անդ նորին օրհնեսցին ազգք ամենեքեան:
« Յետ այսորիկ Փըրկիչըն համբարձցի յերկինս երկնից
Յաղթանակաւ ձաղեալ ընդ օդս ըղթըշնամիս իւր եւ ըզքոյս.
Ըմբռնեալ անդ ըզվերասն էշխան օդոյս ընդ քարշ ածցէ
Կապանօք ընդ տերութիւն իւր եւ թողցէ անդ ակընկոր:
Յայնժամ 'ի փառսըն մըտեալ՝ Էին 'դաջմէ կալցի զնւր բարձ
Բարձրացեալ գեր 'ի վերոյ քան զամենայն անուն յերկինս:
Անդուստ, աշխարհիս մինչ կատարած հասանիցէ,
Եկեսցէ շքով փառաց եւ զօրութեամբ 'ի դատաստան
Կենդանեաց եւ մեռելոց, դատել զմեռեալսըն անհաւատ,
Պրսակել զհաւատացեալս եւ ժողովել յերանութիւն,
Յերկինս եւ կամ յերկրի, զի դրախտ յայնժամ լցցի երկիր,
Երջանիկ տուն քան զԱդին, երանաւէտ եւ այն աւուրք:»
Զայս Ճառեալ հրեշտակապետըն Միքայէլ եւ դուլ էառ,
Իրրեւ այն թէ Ժամանեալ 'ի մեծ շըրջան տիեզերաց.
Հայրըն մեր խընդալից եւ սքանչացեալ՝ ամբարձ ըզձայն.
« Ո՛վ անսահման բարութիւն, ո՛վ բարութիւն անբաւելի,
Որ զբարիս զայս ամենայն առ 'ի չարէ անտի հանցէ.
Աքանչելիք զարմանագործ քան զ'ի սկզբանն արարչութեան
Որ 'ի խորոց խաւարին կորզեալ 'ի վեր եհան ըզլոյս:
Յերկրայս կամ՝ թէ այժմիկ արժա՞ն ի՞նչ սարքանալ ինձ
Ընդ յանցանս որ յանցեայ եւ որոց եսն եռուռ պատճառս,

Եթէ ցընծալ մանաւանդ, զի առաւել բըղխեն բարիք։
Ճոխագոյն փառք առ Աստուած, մարդկան յԻէն հաճութիւն մեծ,
Եւ շընորհք աղբերացեալ՝ ուր առաւել էր բարկութիւնն։
Այլ ապէ ասա ինձ։ զի թէ Փըրկիչն յերկինս էցէ,
Զինչ լիցին հաւատացեալք իւր մընացեալ սակաւաւորք
Ի Ճահուկ անդ անհաւատ՝ Ճըշմարտութեանն հակառակորդ։
Առաջնորդ յայնժամ ոմ ժողովրդեան կացցէ իւրում,
Ո՞ զնոսին պահպանեսցէ։ ոչ ապաքէն չար էաս ինչ անցս
Ընդ աշակերտսն անցուսցին քան ընդ իւր անձն առաւել յոյժ։»
«Ներկիմս լեր զի զդոյն զայդ իսկ արասցին, ասէ հրեշտակն։
Այլ նա իւրոցն 'ի յերկնից առաքեսցէ Մըխիթարիչ
Զաւետիսն հօր զիւր հոգին, որ 'ի նոսա բնակեսցէ ցանդ,
Եւ 'ի սիրտս նոցուն ըզհաւատոց դրեսցէ զօրէնս,
Աջողեալ սիրով վարել զնոսա բնաւիմբ Ճըշմարտութեամբ։
Վառեսցէ էաս ըզնոսին զնեռորութեամբ խմանալեաւ
ԸզԱստուծին վանել մարտ, շինուցանել զնեռոսն հրեղէն։
Ոչ 'ի մարդկան զարհուրեսցին հնարից եւ ոչ 'ի մահուանէ։
Փոխանակ անգըթութեանցն ըսփոփեսցին յոգիս իւրեանց,
Եւ յաՃախ մինչ 'ի զարմանս հատու դահՃացըն զօրասցին։
Զի հոգին 'ի վերայ ելցեալ կանխաւ Առաքելոց՝
Զոր նա ինքն յըղեաց պատմել ազանց զաւետարանն,
Եւ ապա 'ի վերայ մըկրտելոցն առհասարակ,
Նորանըշան պարգեւօք լըցցէ զնոսա սքանչելապէս՝
Զամենայն խօսել լեզուս եւ զհամբրէն արուեստս առնել
Զոր եւ Տէրըն նոցա գործէր նոցին յայտ յանդիման։
Ցանկուսցին այսպէս ժողով բազում յաղգաց ազգաց բնաւից
Ընդունել ուրախութեամբ զերկնապարգեւ նոր աւետիսն։
Հուսկ ապա՝ ըլցեալ զպաշտօն իւրեանց, զընթացսըն կատարեալ,
Աւանդեալ 'ի գիր զուսումն իւրեանց եւ զանցըս՝ մեռանին։
«Բայց 'ինոցա տեղն 'սա նոցին յաջորդոյն գուշակելոյ՝
Գայլք յաջորդեսցին զհովիւսըն՝ գայլք յափըշտակօղք,
Որ զերկնից խորհուրդսըն սուրբ զօշաքաղեալ արկցին 'ի շահ
Ի պէտս ցանկութեան եւ գահասէր իւրեանց ախտին,
Եւ մնասեօք մարդկեղէն նանրահաւատ աւանդութեանց
Պըղծեսցին ՃշՃմարտութիւնն՝ 'ի գիրս եւեթ նուիրեալ պահեսցէ։
Խմանալ սակայն ումեք չիք զայն՝ թէ ոչ հոգւով միայն։
«Հնարեսցին զօրաւոր լինել անուամբ, բարձիւ, պատուով,
Եւ յաւելուլ 'ի դոսին զնշանութիւն աշխարհական,
ՊաՃուՃեալ կերպարանօք հոգեւորաւէն վարելոց,

---

481. Ամենայն՝ հին եւ ծրդեալ բիծ՝ յոմանց ոմանց եղեալ զահասէր դէմաւորաց Եկեղեցւոյ։

Ըզհոգին ասուածեղէն անձանց եւեթ սեփականեալ՝
Ըզնօթձեալն անխրտիր, զտրեւեալն 'ի բնաւ հաւատացեալս։
Յայս կարծիս անձնահաճոյ՝ միում միում խըղճի մըտաց
Բըռնուեթեամբ մարմնականաւ դիցին օրէնք հոգեանեթ,
Օրէնք զոր ոչ ոք գըտցէ 'ի տրւեալսն անդ համարի,
Ոչ յորս Հոգին 'ի ներքուստ 'ի տախտակի սրտին գրէ։
« Իսկ արդ յինչ կըրթիցին, քան թէ զՀոգին Ճշնչել շնորհաց,
Եւ 'ի կապանս արկանել զաղատութիւն՝ զնորին ընկեր.
Զինչ այլ թէ ոչ զԱստուծոյ զկենդանակիր քակել սահմանս
Կառուցեալս ամրակուռ եւ հաստահիմն հաւատովք.
Հաւատովք իւրաքանչիւր եւ ոչ այլում. զի ոմ յերկրի
Անարխալ վարդապետ ընդդէմ մըտաց եւ հաւատոց։
Այլ բաղումք եղիցին որ զայնպիսեաց թեկին ածիցեն,
Յորմէ ծանրը հալածումն յամենեսին շարժեալ հասցէ՝
Որ ցանգ կայցեն 'ի պաշտօն Էին հոգւով, Ճշմարտութեամբ։
Իսկ այլքն՝ բաղմագոյնք՝ համարեսցին բարեպաշտել
Վէր 'ի վերոյ ինչ կրօնիւք եւ յարդարուն կերպարանօք։
Խոյս տացէ Ճշմարտութիւն՝ զըրպարտութեան հարեալ նեռիւք,
Եւ արդիւնք հաւատոց հաղիւ ուրեք թէ գտանիցին։
« Զայս օրինակ գնասցէ աշխարհ՝ բարեգործացն թըշնամի,
Բարեկամ ապիրատից, եւ ընդ բեռամբ իւրով հեծեալ,
Մինչեւ յօրն որ արդարոյն սուրբ հանդըստեան երեւեսցի,
Եւ ջարին վրէժխընդրութեան, եւ դալըստեանըն միւսանգամ
Այնմ որ դեռ քեզ զօրավիգըն խոստացեալ՝ Որդին կընոջ,
Ընդ աղօտ ակնարկեալ երբեմն, իսկ այժըմ Ճոխաբար
Եկեալ քեզ 'ի ծանօթութիւն Աղատարար քոյին եւ Տէր։
« Ծագեսցէ հուսկ ուրեմն ընդ ամպս երկնից Հօրըն փառաք
Աւերել ըզԱտանայ եւ զանօրէն աշխարհ նորին։
Ի սրբեալ եւ 'ի զըտեալ հըրդեհակեզ շեղջակուտէն
Յարուսցէ յայնժամ երկին նոր եւ երկիր նորանորոգ,
Յաւիտեանս անզրաւ ամոց, հաստակառոյցս յարդարութիւն,
Ի հաշտութիւն եւ 'ի սէր, որ եւ արդիւնս ընծայեսցեն
Զխընդութիւն պըտղաբերեալ եւ զանթառամ երջանկութիւն։ »
Վահանեալ հրեշտակին՝ կըրկնեաց Ադամ զյետին նըւազ.
« Ո՞ղբէս զի քո կանխահաճոգդ, ոմ տեսանողդ երանաշնորհ,
Ձափեցին երագապէս ըզյաւիտեանս առուղեկան,
Զարշաւան ժամանակին ցօրն յոր առեալ ըզկայ՝ կացցէ։
Ըստ այն անդըր՝ ամենայն ինչ է անդունդք, յաւերժութիւն,
Յոյր 'ի ծայր ըսպառուածին ոչ բաւէ ակն ժամանել։
Լի եւ լի հրահանգեալ ելից ասի ես մեկնեցայց
Խորհըրդոցս 'ի մեծ անդորր, եւ պատարուն գոլ գիտութեամբ։
Ըստ անօթոյս տանելոյ. յառաւելն խղճ խօլացայ։

Խեղամուտ ասումս լինիմ՝ զի լուագոյն է հնազանդել,
ԶԱստուած միայն սիրել ահիւ, եթէ առաջի նորա գընալ,
Խոստովան լինել անդուլ ըղձեսչութիւն խնամոց նորին,
Ի նա ինքն եւեթ կախիլ՝ 'ի սահեղծուածոցն ամենայնոցմ,
Միշտ յարին՝ բարեաւն յաղթող, փոքրումբք յանդգեալ ըղմեծամեծս,
Եւ զաշխարհի բրոնութիւն պարտեալ տրկար կարծեցեալք,
Եւ զնմանատունն աշխարհի՝ խոնարհասիրտ պարզմտութեամբ։
Գիտեմ արդ՝ թէ 'ի վերայ Ճշմարտութեանցն չարչարել
Ամբառնալ է զօրութեամբ 'ի յաղթութիւն բարձրահրոչակ,
Եւ զի զմահ՝ հաւատացեալն առ դուրս կենացըն նըշմարէ։
Զայս 'ի միտ յօրինակէ անտի նորա խրատեալ առնում՝
Զոր Փրկիչ իմ դաւանեմ այժմիկ՝ օրհնեալ միշտ յաւիտեան։»
Հրեշտակն առ Ադամ կըրկնեաց եւ նա զգեսին նըւադ.
«Ուսեալ քո զայդոսիկ՝ յիմաստութեան հասեր 'ի ծայր.
Ա՛յլ խիք բարձրադունի մի կացցես ակն ամենեւին,
Թ՝եւ յանկնէ յանուանէ Ճանաչիցես զաստեղս ոզնոյն,
Զզօրութիւնսն արփայնի եւ զանդրնդոցըն թաքնութիւնս,
Զգործս բնութեան կամ զԱստուծոյն յերկինս,'ի յօդս,յերկիր,'ի ծով.
Թ՝եւ յամենայն մեծութիւնս վայելիցես այսր աշխարհիս
Եւ եթէ մի տէրութիւն տանիցես զայն եւ բերիցես։
Ըստ քում գիտութեանդ յաւել միայն գործս արժանի,
Զհաւատս յաւել, յաւել վարս առաքինի արիութեան,
Զգաստութիւն, համբերութիւն ժուժկալութեան, յաւել ըզգութ՝
Որ յապայս սէր կոչեսցի, բնաւիցն հոգի կենդանարար։
Յայնժամ ոչ ըստբրջասցիս ընդ եղանել քո 'ի դրախտս,
Զի սատասցես 'ի քեզ ինքեան դրախտ առաւել երջանկաւէտ։
«Իջցուք արդ 'ի բարձանց աստի գընասց գիտանոցիս,
Քանզի ժամն եկեալ հասեալ ըստիպէ զմեզ գընալ աստի։
Տես ահա պարեկապանք կարգեալ յինեն բանակ 'ի բըսրդ՝
Ըսպասեալ գէտակն ունեն ակնարկութեան՝ խաղալ գընալ։
Առաջի նոցա սատիկ ՃՕՃԿ սուսեր մի բոցավառ
Ի նշան տարագրութեան. չեք մեզ հընար այլ եւս յամել։
Երթ աղէ զարթո զնչա. իմ հանդարտեալ եւ զնա ինքնին
Քաղցրաքուն բարեգուշակ ինն անբրջով եւ պատրաստեալ
Զոգիսն իւր զամենայն 'ի ցածնագոյն հնազանդութիւն։
Ի պատեհ ժամու գիցես 'ի մտի իւրում զոր ինչ ըսարդ,
Մանաւանդ որ ինչ արժանն է հաւատոց նորա գիտել,
Ըզմեծըն փրկութիւն մարդկան ազգին՝ ըզհանդերձեալն
Ի նորա գալ զաւակէն, 'ի զաւակէ անտի կընոջ։
Կեցջիք կեցջիք, 'ի հաւասարս համամիտք, երկայնաւուրս,
Թէպէտ եւ տրիրազգածք վասն առաջին չարեացն անցից,
Սակայն մեծ եւս ըսփոփեալք 'ի յոյս երկնայն երանական։»

Լքեաց նա, եւ երկոցուն 'ի ստորոտ անդր ի՛ջեալ բնակեցին,
Ընդ հասանելն ընթացաւ Ադամ յառաջ 'ի հովանոցն
Ուր 'ի քուն կայր Եւա, սակայն արթուն գրտաւ անդէն,
Եւ ընկալաւ զինքն բանիւքս որ այլ չէին ինչ տրտմալեաց.
« Ուստի դասդ եւ ուր էիր երթեալ՝ գիտեմ ես զամենայն,
Զի է Աստուած եւ 'ի քուն, եւ երազով ուսուցանէ.
Բարեշնորհս ինձ առաքեաց զնոսա դուշակ մեծ բարութեան՝
Այն ինչ տրխրեալ եւ յոգւոց նեղութենէս անկայ 'ենիրհ :
Այլ այժմիկ՝ առաջնորդեա ինձ, ոչ եւս այլ յիս դանդաղանք.
Ընդ քեզ գընալ՝ է մնալ աստէն, իսկ աստանօր առանց քո մնալ՝
Եղանել է աստի յակամայ կամքս բընաբար :
Դու վասն իմ ես ամենայն ինչ ընդ երկնիւք, դու բնաւ տեղի,
Որ վասն իմոյ կամաւոր մեղացս աստի գնաս տարագիր :
Բայց աստուած բարձեալ բերեմ ինձ մշխիթար զվերջին զայս յոյս,
Զի թէպէտ եւ ամենայն ինեւ կորեաւ, այլ շընորհ մեծ
Ըստ ոչ իմում արժանի պարգեւեցաւ ինձ Ճոխաբար.
Ինեւ զաւակն աւետեաց նորոգելոց է զամենայն : »
Զայս ասաց մայր մեր Եւա, լքաւ Ադամ ուրախութեամբ,
Սակայն չէտ պատասխանի, հրեշտակապետն մերձ կայր յոյժ,
Եւ 'ի միւսմէ լեռնակէն քրովբէախումբն լուսադունդ
Գայթն ի՛ջանէին 'ի սահմանեալ տեղին իւրեանց,
Զեռային հրաբերձական ի՛սն երեւոյթ յերեսս երկրին,
Իբր 'ի գետոյ ցոլեալ մեզ երեկորին՝ սողեալ յեղուիւր
Սուրայ գնայ, գրաւէ զգետինն՝ հողագործին հետոցն ըզկնի
Ի դառնալ նորին 'ի հիւղ : Գայթն ռազմեալ ահեղ Ճակատ,
Յառաջոյ սուր Տեառն 'ի ՀՕՀ փայլատակեալ բոց զայրագին
Զօրէն վարսամ, եւ 'ի շրջելնն իւր տապալսան
Եւ 'ի շրջին հանգունակից լիբեական հրակէզ օդոյն՝
Սկրսանէր ազազել ըզհեշտասուն երկիր դրախտին :
Զուարթնոցն յայնժամ Ճեղեալ ըզծնողս մեր տարտամն՝ սու ըզձե-
Եւ տարեալ ուղղել յարեգ դուռն եւ անտի եւս հետ ընդ հետ [ռացն,
Ցըլեռնոտն՝ 'ի ստորակայ դաշտն, եւ եղեւ անեբեւոյթ :
Ի թիկունս հայեցեալ կոյս, յարեւելից կողմն դրախտին՝
Որ երբեմն երանաւէտն էր գըրգարան եւ հանգըստոց,
Տեսին զայն վէտ վէտ շողեալ 'ի շանթեռանդրն սուսերին.
Դուռն էր խըռնեալ ահագնացայտ կերպարանօք եւ հրազենուք :
Արտասուս ինչ բնակակիցս հեղեալ նոցա՝ ջընջեցին փոյթ.
Տիեզերք համբրէն աչաց իւրեանց կայր առաջի՝
Ընտրել տեղի հանգըստեան, եւ Տեսչութիւնն էր առաջնորդ :
Զեռն 'ի ձեռն՝ հանդարտընթաց եւ դանդաչուն 'ի քայլս ոտին՝
Զամայի Ճանապարհն իւրեանց կալան գնալ ընդ Եդեմ :



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/II 1922
ԱՄԵՆԻԱ, ՄԱՏԵՆԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

892

2013